ՆԻՒԹԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԸՆԴԽՈՒՏԱՍՏԻՐՈՒԹԵԱՄԲ

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆԻ

ՊՍԱԿԵԱԼ

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ մրցանակաւ ի դարձադիր մեծայուն Յանձնաժողովոյն Կոստան դնուպոլսոյ, բաց կոտակի թարգմանչատակ Յովսէփայ Իզմիրեանց։

ԹՈՒՍՏՈՎ (ԴՈՆԻ ՎԻՐՈՅ)

ՏՊԱՐԱՆ Ե. ՅԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1891.

9(3)
Շ-51

9(3)
Շ-51

ՆԻՒԹԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆԻ·

Պատկեալ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ մրցանակաւ ի գործադիր մը-նայուն Յանձնաժողովոյն կաստանդնուպոլսոյ, ըստ կտակի բարեշիշատակ Յովսէփայ Խզմիրեանց·

«Ճշմարիտ ազգասիրին Հ՝օրինակաւ քաջի գործոց Նախահարց՝ զոյժ տրդւոց զարթուցանել ։»

Մ· Դ· ԹԱՂԻԱԴԵՆԱՆ·

Ա 11
67676

ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՅՊՐԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅԵՐԸԱՐՈՒՀԱՄԵԱՆ
1890=ԹՎԻ·

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ԹՈՒՅԼԱՏՐՅԱԼ ԳՐՈՒԹԻՒՆ

ՍՍՌՄ ԳԱ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 5 Апрѣля 1890 года.

18795

5672

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

«ԱՐԵՒԵԼՔ» ԼՐԱԳՐԻՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ·

Նիւթեր Ազգային Պատմութեան համար գործը յանձնուեցաւ Գեր. Տ. Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանցի միայն, որովհետև գործն ինքնին գնահատելի էր, ինչպէս կը վկայէ և քննիչ Սրբազանն այսու գրութեամբ.

«Ազնուաշուք Գաբրիէլ էֆէնտի Նորատունկեան, Ատենապետ գործադիր-մնայուն Յանձնաժողովոյ Յ. Իզմիրեանց կտակին,

Է Կ. Պոլիս·

Վսեմափայլ Տէր·

«Նիւթեր Ազգային Պատմութեան համար՝ այնքատասիրութեամբ Գալուստ Շերմազանեանի» ընթերցայ ուշի ուշով և ախորժանաք·

Արդիւնաւոր երկասիրողին համբաւը մեծ գրաւական մի է արդէն այդ գրական թանկագին գործոյն· Ո՞վ է այն գրագէտ և գրասէր հայը, որ լսած չլինի Գ. Շերմազանեանի անունը, հանդիպած չլինի նորա զանազան ճաշակով և պիտանի նիւթերով գրած բանաստեղծական, պատմական, նկարագրական, թարգմանական, քննադատական և այլ բազմապիսի երկասիրութեանց, զորս ի լոյս հանած է Ռուսահայոց պարբերական հանդէսներու և լրագիրներու միջոցաւ· Նա քաջածանօթ է նաև Տաճկահայոցս «Արշալոյս Արարատեան» և «Մասիս» լրագրոց վերածնողաց և այլն·

Կէս դարէն աւելի է որ սկսած է նա գրիչ գործածել· և այսօր իւր պատկառելի և լիացեալ աւուրց մէջ կընծայէ Ազգին մի գործ, որ նշանաւոր է ամենայն հանգամանաք·

Իւր այս գործոյն հիմն գրած է 1832 ամին, և ի գլուխ հանած 1863-րդ ամին· իսկ 1865 յունիսի 28 և 29-ին, երբ Թիֆլիսի մէջ տեղական-քաղաքական փոթորիկ մը ծագեցաւ, այդ արկածին զոհ գնաց Գ. Շերմազանեանի ամբողջ գրատունն·—Աւաղ այնքան անգին կորուստեան·

Գ. Շերմազանեանի գրքատունը ոչնչանալուն հետ՝ անհետ եղած է իւր այս պատրաստած գործը, զոր դառնութեամբ սրտի ստէպ կը յիշատակէ, որ կը պարունակէր վաթսունէն աւելի հայ անուանց կենսագրութիւնը բազմակողմանի և ճոխ նկարագրուած։ Յետ այնորիկ վերտին ի Պարսկաստան գնալով, ի նորոյ կը ձեռնարկէ գրել իւր սիրելի նիւթերը, զոր բաժանած է երեսունեւութ գլխոյ, բայց անձինք՝ որոց կենսագրութիւնը կրնէ, երեսունեւութէն շատ աւելի են, յորս կը փայլին իրրև գոհարք փոզփոզուն ազնուութեամբ, առաքինութեամբ և իմաստութեամբ, տիկնայք և դստերք Հայոց՝ Ոսկում խանումն, Սանամ խաթուն, Համատանցի հայուհին, և ՆաղուլՋան՝ մականուանեալն «Տիլ-Ֆրուշ» (բերկրանք սրտի) գեղանին ու խելանին, և այլն, և այլն։

«Ազգային պատմութեան նիւթերը» կսկսի 1779 թուականի դէպքերէն, նկարագրելով կենսագրութիւն Նշանաւոր Հայոց ի Պարսկաստան, և կը հասնի կը դադարի մինչև այն հոյակապ անձնաւորութիւններն, որ կապրին մեր օրով և փառաւոր ասպարէզներ գրաւած են քաղաքականութեան մէջ, որպէս է Մէլքում խան, Ջէնկիր և Նարիման խաներ, և այլն։ Կենսագրեալ անձնաւորութեանց չատերը գերի վարուելով, յորոց ոմանց քրիստոնէութիւնն ուրանալ տուած են և ոմանք նեղքինացուցած, ու այնպէս յառաջ մատուցած են մեծամեծ ասպարէզներ. բայց չատ ևս են, որ իրենց ազգութիւնը և հաւատքը պահպանելով հանդերձ՝ բարձրագոյն աստիճանի և պաշտօնի հասած են ձեռնտու և օգտակար հանդիսանալով իրենց ազգակցաց և եկեղեցւոյն։ Անոնցմէ ոմանք ականաւոր նախարարներ են, ոմանք պալատական խոշոր դասակարգ, զանազան տեսուչ, գնդապետ, զօրապետ, բարեկարգիչ, կուսակալ, ոմանք արհեստով և ճարտարութեամբ փայլեալ։ Անոնց աշխարհն և Իրանի շահին փառքն են եղած պետութեան սիւն և սուր, մի և նոյն ժամանակ և հայ անուան պարիս։

Ներքինի Աղա Մահմմատ խանն՝ որ կամբարց ցեղի պետութեան հիմնադիրն է, և նոյն ցեղի սերունդն է արգի վեհ. Շահն Նասրէտտին, զինու զօրութեամբ հնազանդեցոյց պարսից գաւառներն և գաւառապետներն, ուստի և յառաջ եկաւ ուժ, սուր, գերութիւն և արիւնհեղութիւն։ Նոյն ազգէն մատուեցան և հայազգակ գաւառները Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսն՝ որ հայերով լի ծաղկեալ քաղաք մի էր, 1795-ին աւերեցաւ և անթիւ գերիներ տուաւ։ Ղարադաղ, Ղարաբաղ, Դանդամ, Շամքոր, Նախչևան, Երևան իրենց գիւղերով քանդեցան և գերի վարեցան։ Նոյնպէս և

Ֆաթ Ալի Շահին և գահաժառանգ Աբբաս Միրզայի օրով թէ Օսմ. Պետութեան և թէ Ռուսաց հետ եղած պարսկական պատերազմի միջոցին՝ իրենց բազմաթիւ և ընդարձակ աւաններով, գիւղերով և քաղաքներով, որոց կարգին և Ս. Էջմիածին և այլ վանօրայք, Բագրեւանդ գաւառը՝ Ս. Յովհաննէս կամ Իւչ Քիլիսէի վանք, Վասպուրականի և Ցարօնոյ կողմանքը մեծամեծ անցքեր կրեցին։ Պարսկահայոց գաղթականութիւն, և պատճէնք զանազան կենդանաց կաթողիկոսաց և կարեւոր թղթոց, և այլն, և այլն։

Սոքա ամենն ազգային պատմութեան զուտ նիւթեր կը պարունակեն և նորա լրացուցիչ մասը կը կազմեն։ Արդարև, եղեր են բանասէրք ոմանք, որ գրած են այն յիշատակեալ նիւթերի վրայ, բայց Գ. Շերմազանեանինը յայտնի առաւելութիւն ունի, աւելի մանրամասն, աւելի հիմնաւոր, ուստի և աւելի կատարեալ և ճշմարիտ։

Իւր գրածներուն մեծ մասին ականատես է Գ. Շերմազանեանն և կենսագրած անձանց ոմանց հետ բերան առ բերան խօսած է, այդ անձանց ժամանակակից և գործակից ծերունիներէ լսած է, այլոցմէ ևս հարցուցած՝ քննած. Մ. Թաղիադեանցի «Պատմութիւն Պարսից» գրքէն և Կալկաթայի «Ազգասէր» լրագրէն, Խաչիկեան Տ. Յոհ. աւագ քահանայի «Գաւառանագրքէն», և պարսկերէն «Կռաճարների պատմութիւն» անունով գրքէն, Նոր Ջուղայի Ամենափրկիչ Ս. Վանուց մատենադարանը գտնուած կոնդակներէ, և զանազան թղթակցութիւններէ ու հրովարտակներէ, Ռուսաց օրագրերէ և պաշտօնական գրութիւններէ քաղած է, որ գրուած եղեր են Պարսից և Ռուսաց պատերազմներու, և այլ դէպքերու առթիւ։

«Նիւթեր Ազգային պատմութեան» այնպիսի մասեր ևս ունի հետաքրքրութեամբ լի, որ ի հանդէս կածէ պարսիկ արքունեաց և պալատան ներքին և արտաքին արարողութեանց և կենցաղավարութեանց նկարագիրը, գաւառաց և ցեղերու վրայ այնպիսի տեղեկութիւններ կընծայէ, որ բազմաց անծանօթ են։ Դէնի, ընտանեկանութեան, ծիսից, սովորութեանց, անտեսութեան, վաճառականութեան, ռազմի և կառավարութեան, իսկատիպ պատկերներ կը գծէ, և ժամանակակից մեծամեծ դէպքերը կը պարզէ, որք Ազգային Պատմութեան հետ՝ նաև Պարսից կամ քաղաքական պատմութեան առատ և ընտիր նիւթեր են։

Եթէ հարկ լինէր սոյն գործոյն գնահատումն ցոյց տալու համար ի մէջ բերել քանի մը հատուածները, կարելի չէր հատուածել, կարելի չէր ընտրել, զի բովանդակապէս ընտիր է

թէ նիւթով և թէ ոգով, միայն ուրեք ուրեք գրչի կորովը թուլացած ինկած է և այդ՝ ծերութեան արգասիքն է. իսկ ընդհանրապէս աննման յաջողութեամբ գրուած է, պայծառ, կենդանի, նօսր, որ կը յուզէ, կը լացնէ, կը ծիծաղեցնէ, կը հիացնէ, կը կատղեցնէ, և կը դառնայ կը մնդմացնէ. Առաւել հմտալից են քննադատութիւնները։

Կը տեսնուի ահա թէ բազմաբիրան աշխատութեանց և թանգագնի գործ մի է «Նիւթեր Ազգային պատմութեան համար՝ աշխատասիրութեամբ Գալուստ Շերմազանեանի». և ըստ իմ կարծեաց՝ բարեյիշատակ Ազա Յ. Իզմիրեանցի կտակած Սահակ-Մեսրոպի մրցանակին իսկապէս արժանի։

Ընդունեցէք, Վսեմափայլ տէր, իմ խորին յարգանաց հետ և սրտագին ողջոյնս հանդերձ օրհնութեամբ, զոր կը նուիրեմ Պատ. Ցանձնաժողովդ։

ՍՐՈՒԱՆԶՏԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ·

1889 Մայիսի 30

ի Բերա.

Արդ՝ գործադիր Ցանձնաժողովս՝ իւր վերջին նստին, որ ընդ նախագահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր գումարեցաւ, մի առ մի նկատողութեան առնլով կատարուած քննութեանց գրութիւնքը, ըստ ամենայն մասանց արժանի դատեց Սահակ-Մեսրոպեան մրցանակին Նիւթեր Ազգային Պատմութեան ստուար գործը, և որոշեց կտակեալ պարգեւ նուիրել հեղինակին Պարոն Գալուստ Շերմազանեանին, ի պըսակ իւր բազմամեայ աշխատութեանց այս կարեւոր գործոյն, որ 453 մեծադիր երեսներէ կը բաղկանայ, և է, արգարև, մի ամբողջացուցիչ մասն մեր Ազգային Պատմութեան անցեալ և ներկայ դարուց, որ մինչև ցայժմ թերի մնացած էր։ Ցանձնաժողովս բանակցութեան պիտի մտնէ Մեծարգոյ Հեղինակին հետ, որ այս խիստ հետաքրքրական, բազմապատում և օգտակար երկասիրութիւնն անմիջապէս տպագրութեան յանձնէ։

«ԱՐԵՒԵԼՔ» 1889, Յունիսի 30.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մտադիր չեմ ես պատմութիւն գրել, այլ համազգային պատմութեան համար ինչ ինչ նիւթեր պատրաստել, զորս երկար միջոց Պարսկաստան մնալով և ճանապարհորդելով հայխայթած եմ—նիւթեր՝ որոնք վերաբերում են մեր համարիւն անձնաւորութիւններին, որոնց անուններն անծանօթ են մեր պատմութեան։

Եթէ Պարսից պատմութիւնները ներում են ինքեանց այն Հայերի սխրագործութիւններով զուարթել, զարդարել իրանց պատմութեան էջերն, այն Հայերի համար եմ ասում, որոնք իրանց հայրենիքի հորիզոնից դուրս,—Պարսկաստան—ինչպէս աստղեր փայլեցան,—ապաքէն ընդէջ մեք ափիերան և անտարբեր մնանք, և զլանանք ես նրանց անուններն և երեսի գործերը գնել կարճ ի կարճոյ աւանդել մեր ապագայ սերունդին։

Ահա այս էական պակասութիւնը լրացնելու համար՝ ձեռնամուխ եղայ ներկայացնել պատմական ասխարէին այն Հայ անձնաւորութիւնների կենսագրութիւններն, որոնք մեր ժամանակին, և կամ մէկ քանի տարի մեզանից առաջ իւրանց քաջագործութիւններով և հանճարով քաղաքական, պատերազմական և անտնական վարչութիւնների մէջ առաջնացան։ Ուրեմն մնաց ինձ ասել թէ՝ այստեղ բոլոնզակուած նիւթերն ինչ միջոցով ժողոված եմ, և թէ նրանք արդեօք արժանահաւատ և վաւերականներ են։

1832 թուին, երբ առաջին անգամ ժամանեցայ Թաւրիզ, լսում էի ստէպ ստէպ Պարսիկներից ինչ ինչ ականաւոր մարդկանց անուններ յիշելիս՝ երբեմն անզանազանաբար Էրմէնի (Հայ), և երբեմն Գիւրջի (Վրացի) բառերը կցում էին նրանց անուններին։ Երբ ես հարցնում էի նրանցից թէ՝ այդ յիշեալ անձն ինչ ազգից է, նրանք չէին կարողանում վճռաբար պատասխանել ինձ, այս միայն էին առաջ բերում թէ՝ Երասխի այն կողմից գերի բերած են, և կամ իւր կամքով եկած են, ինչ ազգից որ լինի, մեք այստեղ նրան Հայ էլ կասենք, Վրացի էլ։

Պարսիկների այս տարտամ և անհամոզիչ պատասխանը ստիպեց ինձ վերահասու լինել և իմանալ Ատրպատական գտնուած գերիների և իրենց կամքով եկած և անդ ծառայողների անունները, և թէ՝ ոյք են նոցանից հայ և ոյք վրացի։

Փոքր միջոցից յետոյ՝ հայ եղողների անունների ցուցակը լրացրի, և ապա մտքումս ծագեց հետաքրքիր լինել և գրել նրանց ինչ պաշտօն, ինչ ատիճան ունենալը զինուորական և քաղաքական տեսչութիւնների մէջ։

Ցեռայ լսեցի, որ նրանցից աւելի երեւելի և պատկառելի հայ անձնաւորութիւններ կան Թէհրան, Ասպահան, Խորասան, Շիրազ և իրանի միւս հեռաւոր գաւառներում և նահանգներում, որոնք մեծամեծ քաղաքական և զինուորական պաշտօններ վարել են և վարում են. ուստի նրանց անունները և նրանց ինչ ինչ կենսագրութիւնից, ինչ ծնողից լինելն, կամ ինչ էին նրանց ծնողների անունները, ի հարկէ Թէվրիզ գտնուած, նրանց ծառայակիցներից և գերեկիցներից լսելով փոքր առ փոքր ժողովում էի։

Բայց 1852 ամն երբ ուղեորեցայ Թէհրան, ուր առաւել ևս յաջողութեամբ որպէս յիշեալ անձանց, նոյնպէս ուրիշներին վերաբերեալ ծանօթութիւններ ժողովեցի. որովհետև գերի ընկածներից և կամաւոր ծառայողներից շատերը դեռ ևս կենդանի էին. որոնք ոչ միայն իրանց վիճակակիցների կենսագրութիւններին տեղեակ և ականատես ևս զոլով առաւել ևս ճշդութեամբ ծանօթութիւններ էին հաղորդում ինձ, այլև շատերի և արքայազունների ընորհած նրանց ծառայութիւնների մասին. իսկական հրովարտակներ և հրամանագիրներ և կամ նրանց պատճէններն անխնայ հայթայթում էին ինձ, և շատերի ժառանգներին և ազգականներին ևս խնդրում էին, սարսրում էին որ իրանց բացակայ կամ թէ մէկ քանի տարի առաջ վախճանուած ազգականների քաջագործութիւններին վերաբերեալ հրովարտակներ կամ նրանց պատճէները տային ինձ։ Աւելորդ է ասել թէ՝ այսպիսի գրաւոր յիշատակարաններն ինչ ատիճանի անհերքելի ապացուցութիւններ էին իմ ձեռնարկութեան համար։

1853 թուին գարնանը գնացի Ասպահան։ Այնտեղ ևս զիմեցի ականատես ծերունի հայերին և պարսիկներին, որոնք շատ տեղեկութիւններ հաղորդեցին ինձ՝ իրենց երկրի վերայ ազգով հայ մարզպանների կենսագրութիւններից։ Նոյնպէս օժանդակեցին ինձ Ասպահանի—Նոր-Ջուղայի վանքի գրատանը գտնուած մեր երջանկայիշատակ կաթողիկոսների կոն-

դակներն, եպիսկոպոսների, վարդապետների և երևելի աշխարհականների ողջունագիրներն և Կալկաթա տպուած օրագիրներն, և այլն, և այլն։

1863 թուին վերադարձայ Թիֆլիս, ուր օգնեցին ինձ ռուսերէն տպեալ պաշտօնական թղթակցութիւններն և եւրոպացի ճանապարհորդների հեղինակութիւններն և այլն։ Այն ինչ ձեռնամուխ եղայ կարգի բերել ժողոված նիւթերն, և ահա 1865 ամի Յունիսի ամսոյ 28—29, օրը կէսօրին մէկ անակնկալելի արկածից իմ հարուստ գրչագիր և տպեալ գրքատունս և երեսունամեայ աշխատութիւնս և օրագրութիւններս, բացի քանի մի տետրակներից և յիշատակարաններից, զոհ եղան ոմանց անբարեմիտ մարդկանց անզուսպ կրից։

Ձեռագիրը 1873 ամի սկզբներում դարձեալ մղեց ինձ թէվրիզ, ուր հետամուտ եղայ կրկին անգամ ժողովել ձեռնարկութեանս վերաբերեալ և արդէն ոչնչացրած ինչ ինչ նիւթեր, բայց աւաղելով ասեմ, որ այս անգամ չկարողացայ առաջուայ նման կատարելագործել, քանզի հին և ծերունի մարդկանց շատերն այնտեղ արդէն կամ մեռած էին և կամ բացակայ նահանգներում էին գտնվում։ Ի վերջոյ լսեցի թէ «Թարիզ Կաճարիէ», այսինքն «Կաջարական կամ Կաճարների պատմութիւն» ասացեալն, արդէն լոյս է ընծայուած Թէհրան, որի մէջ գիտէի, որ իմ խնդրած անձանց շատերի քաղաքական և պատերազմական կեանքի համառօտաբար, բայց ճիշտ տարեթիւներով տեղեկութիւններ կային։

Ահա այս պարսկերէն պատմութիւնից ես՝ բառական ծանօթութիւններ քաղած եմ, ոչ թէ բառ առ բառ, այլ ազատ թարգմանութեամբ. ըստ որում Պարսից լեզուի յատկութիւններն են ճոխ և ճոռոմ այլաբանական նկարագրութիւններ, իմաստից երկարութիւններ, միանչան, միայանգ բառերի յորդութիւններ, որ և թարգմանուած ժամանակը՝ կը ձանձրացնէին ընթերցողները։

Ուշիմ ընթերցողների ուշադրութիւններն այստեղ դարձնենք մէկ ուրիշ կէտի վրայ։ Թէհրան ես ծանօթացայ վերոյիշեալ «Կաջարների պատմութեան» հեղինակ «Լբան-Ալ-Մուլք» Միրզայ Թաղիի հետ, որ իւր ձեռագիր երկասիրութիւններից շատ յօդուածներ և պարբերութիւններ կարդաց մօտս։ Զարմացայ, որ նա ես հայ և վրացի կոչումներն անզանազանաբար էր գործածած, այսինքն, շատ անձնաւորութիւնների անուններ յիշելիս, ուր ուրեք հայ և ուր ուրեք վրացի էր անուանում, վասնորոյ և ես այս խոշոր արտուղութիւնների համար նկատողութիւններ էի անում նրան. իսկ նա կարի սառնու-

թեամբ էր իւր ուշադրութիւնը դարձնում իմ նկատողութիւնների վրայ, ի վերջոյ մէկ օր ասաց թէ «Ինչ զանազանութիւն ունի հայ գրած կամ վրացի [1]), այն ինչ երկուսն էլ խաչապաշտ են (իսկ ի՞նչ փերեսաս) և մէկ երկրում, միասին խառն բնակվում են, և թէ՝ պատմարանի համար ոչ թէ հաւատ և ազգութիւն է հարկաւոր, այլ պէտք է նա աշխատէ, որ գործի էութիւնը պարզ և ճշմարտութեամբ նկարագրէ։» Իսկ երբ առաջարկեցի ես, որ գտնէ նա նրանց տոհմանունները յիշէ, տեսայ որ նա տոհմանուններից (Ֆամիլիա) բնաւ հասկացողութիւն չունի։ Զիմբրդ և իցէ, խոստացաւ նա իւր երկասիրութիւնը տպագրելու ժամանակը այն թերութիւններն ուղղել։ Բայց երբ նրա երկասիրութիւնը, ինչպէս յիշեցի, ձեռքս անցաւ, նկատեցի որ նա՝ շատ փոքր է կատարած իւր խոստումն։ ուստի մեք ես հարկաւոր ենք համարում այժմ յայտնել, որպէս զի Պարսից պատմութիւն կարդացողները զգուշանան, որ նրանց պատմիչները որ և իցէ իսկական պարսկի անուն յիշեվս, միշտ կը կցեն կամ նրա ինչ ցեղից (իլաթից) լինելն, զորօրինակ, Մահամմէդ-խան Կաջար, Զէնի, Օվշար, Շաքաղի և այլն, և կամ թէ որ քաղաքի բնակիչ է, զորօրինակ Մահամմէդ-խան Ասպահանցի, Թէհրանցի, Շիրազցի, Թէվրիզցի և այլն. բայց եթէ մէկն Երասխի ձախ կողմից է եկած, կամ գերի վարուած և կամ հայ է, կամ թէ վրացի, այն ժամանակը նրան անզանազանաբար այդ երկու կոչուածների մէկը կասն, և կամ թէ կասեն Վրաստանի, Ղարաբաղի, Երևանի մարդկանցից է։ Իսկ եթէ Երասխի աջակողմի բնակիչներից է, այսինքն Ցաճկաստանի հայերից է, այն ժամանակը կամ նրա անուանը կը յարեն բառս հայ և կամ թէ յիշելով նրա սուսկ անունը՝ կը բաւականանան, և այս կարգը կը պահեն ինչպէս տղամարդկանց, նոյնպէս և կանանց անունները յիշելու ժամանակ։

Մէկ ուրիշ ծանօթութիւն ես աւելացնենք։ Պարսից թագաժառանգ Աբբաս Միրզան՝ որպէս Ատրպատականի փոխարքայ, առանց ումէք հաշիւ տալու, ունէր առանձին անտեսական և զինուորական վարչութիւններ, որոնց մէջ կային շատ երեսէի հայ պաշտօնատարներ։ Հայերինների պատմութիւնը՝ որպէս նոցա, նոյնպէս անդ ծառայողների իսկական պարսկի-

[1]) Մէկ զառաքալ երեսէի գրագէտ պարսիկ, որ Ներկայ էր այս մեր խօսակցութիւններին՝ աւելացրեց թէ, մեր մէջ պատերազմական մարդն (ասկար չմէիր—սրի, թրի տէր) կոչուանները ֆէտրլի։ Իսկ զվճառականն, արհեստաւորն և երկրագործն—երդեն։

ների համար խորին լռութիւն է պահպանում, և կամ թէ նրանց անուններն այն ժամանակն է յիշում, երբ նրանք առաքիչանում են արտաքոյ Ատրպատականի ուր ուրիշ ճակատամարտի տապարիզում, առանց յիշելու թէ նրանից առաջ այն անձնաւորութիւններն ինչպէս էին արժանացած Ատրպատականում այն աւազ ատոմներին և պաչտոններին, որոնք հետեւեալ ինչպէս յիշեցինք, Աբրամ Միրզան հաղիւ երբէք կհաղորդէր արքունիքին իւր տարապրելոց իրագործութիւնները կամ նրանց պաչտոններ և ատոմներ շնորհելը։ Վանտորոյ և «Պաչտարների պատմութիւնը» յանկարծ հանդէս դուրս բերելով Ատրպատականում ծառայող մէկ երեսի պաչտոնատարի անուն կամ նրա քաջութիւնն, աւելի ևս բթացնում է ընթերցողի միտքը։ Բայց ևս այնպիսի հայ անձանց վերաբերեալ նախկին կենսագրութիւններին վերադառնալ ընելով մասնաւոր թղթակցութիւններից, հրամանագրերից, ժամանակակիցներից և մարտական ականատեսներից պատրաստած եմ, և երբ հասած եմ այն կէտին, ուր «Պաչտարների պատմութիւնը» յիշում է այն անձանց անունները, այնուհետև ձեռնամուխ եմ եղած յիշեալ պատմութիւնից քաղուածք անելով առաջ խաղալ։

Ընչացրած օրագրութիւններիս մէջ բովանդակուած էին վաթսունից աւելի հայ-անուններ. բայց այժմ ներկայացնում եմ ազգային պատմութեան միւռ քաղաքացի անձանց կենսագրութիւններն, ըստ որում մոռացած եմ միւսների ընչացրած անունները և նրանց իրագործութիւնները։

Այսպէս ոչ միայն մեզ ելոյց իրագործութիւնները և անուններն են պակաս, այլ և այժմ ներկայացրած մարդկանց կենսագրութիւնների մէջ ևս, համեմատելով նախկին հաւաքածներիս, ինչպէս զգում եմ, դարձեալ չնչ և չատ պակասութիւններ կան։ Այսու ամենայնիւ թէև այս երկասիրութիւնը դոյզն աշխատանաց արդիւնք չնչաս, բայց անկեղծօրէն խոստովանում եմ, որ լրութեան և կատարելութեան մասնակներն ևս չեն բովանդակում իր մէջ, և յոյս ևս չունեմ, որ սպասելով կարողանայի այսուհետև լրացնել այն թերութիւնները. ուստի չտապում եմ հրատարակել, թողնելով մեզ ելոյցները Պարսկաստանի մէջ եղած մեր ուսումնական երիտասարդներին, որոնք աւելի յաջող առիթներ և միջոցներ ունին այս թերութիւնները լրացնելու, որով մեծ արդիւնք նուիրած կլինին ազգային պատմութեան։

Թնդրեմ պատմութիւն սիրողներից, որ իրանց ուշադրութիւնը դարձնեն «Արարատ» ամսագրի, 1876 թուականի Ապրիլ ամսի «Բանի մի խօսք Ցամ-Ալի շահի վերայ» և 1877 ամի

Բուսնվար ամսի «Հանապարհորդութիւն Հայաստանում» վերնագրով յօդուածներիս և նրանց շարունակութիւնների վրայ, որոնցից ընթերցողները կարող են փոքր ի շատէ գաղափար ունենալ, թէ մեր հայուհիներն անգամ Պարսկաստանի կանանոցներում երեսի դերեր են խաղացել։ Արդէն ժողոված եմ մէկ քանի երեսի տիկինների կենսագրութիւններ, և թէ ժամանակը օժանդակէ, կամ թէ այս ճանապարհորդութիւնս սիրով ընդունելութիւն գտնի մեր ազգայնոց կողմանէ, խոստանում եմ, նրանք ևս հրատարակել։ Քաջայոյս լինելով, որ նրանք ևս մեր հայուհի գաղտրիկ սեռին աւելի հետաքրքրական կլինին։

Ի վերջոյ այս ևս աւելացնենք, որ ես գրեցի այս ճանապարհորդութիւնն օրչափ կարելի է պարզ աշխարհիկ լեզուով, առանց աւելորդաբանութեան, ինչպէս լսած էի պատմողներից, և կամ քաղուածք էի արել ինչ ինչ եղբակացութիւններից և պատմութիւններից, որպէս զի ամենայն հայ մարդ, թէ ուսումնական և թէ անուսումնական հեշտութեամբ կարդալոյ հասկանալ։

Դեկտեմբեր, 1882 թվին.
Ի Թիֆլիս.

ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԵԶԱՆԵԱՆ.

Ա·

ԻՈՒՍՈՒՖ ԽԱՆ ՍԵՓԱՀԴԱՐ ԱՐԱՂՍՏԱՆԻ·

Քեարիմ խան Զէնդ վերակոչեալ Վէքիլ, բոլոր Պարսկաստանի վերայ [1]) տասնվեց տարի միահեծան թագաւորելէն յետոյ, 1193 Հիջրի, 13 Սկիզբ լուսնի (1779 ամի Յեսուն, 1 Մարտի) մեռնում է իւր աթոռանիստ Շիրազ քաղաքում, երբ և կայսրների ցեղապետ Մահամմէտ-Հասան խանի որդի Ներքինի Աղա-Մահամմէդ խանը, որ Շիրազում պատանդ էր, նոյն գիշերը փախչում է բանտից, չտալ տագնապով հասնում է Աստարաբադ, միանում է իր եղբայրների և եղբօրորդիների հետ, զօրաժողով է լինում իւրեանց ցեղից, և մերձ տաս տարի անընդհատ գոռ կատաղի պատերազմներ է մղում Քեարիմ խանի ժառանգների և զօրավարների հետ, հետզհետէ նրանց ջարդում է, ընկնում է և հնազանդացնում է Խորասանի, Քիրմանի, Եզդի, Ֆարսստանի և Արաբստանի երկիրները և նոցանից վինչում է մէկ միահեծան թագաւորութիւն, և զինքն հրատարակում է Շահ, հետևաբար 1791 ամի Յեսուն, ստուար բանակով չուում է գալիս է Ատրպատական, որպէս զի հնազանդացնէ ինքեան այն կողմերի խաներն ևս, քանզի նոքա յամառուած չէին համաձայնում ընդունել նորա շահութիւնը։

Նորա և նորա զօրավարների արշաւանքներից Ատրպատականը, արևելեան Հայաստանը, Վրաստանը և Կասպից ծովի արևմտեան երկիրները ենթարկուեցան սոսկալի ասպատակութիւնների և գերեվարութիւնների, որոց մասին Ղուկաս կաթողիկոսը համառօտաբար գրում է Ռուսաստանի վիճակաւոր Արզուրեան Յովսէփ արքեպիսկոպոսին այսպէս.

«Եւ զորպիսութեանց մերոց այսպէս գիտասցիս, զի ի վերայ զանազան պատահմանց մերոց նոր իմն մրրիկ զար-

---

[1]) Որպէս զի իւրաքանչիւր անձի կենսագրութեան մէջ չլինեցեղեմ անցեալ դարի վերջին քառասդի մէջտեղում Պարսկաստանի մէջ պատահած նեբուռային շլոթութիւններն, ուրեմն համարեցի այստեղ հարկանցուցեն ծանոթութիւն տալ ընթերցողներին։

թեաւ, զի Մահամմէդ-Հասան խանի որդի ներքինի Աղա-Մահամմէդ խանն ի յԱսպահանս մինչև ցթաւրէզ տիրեալ և թաւրիզու քիւրդ [1]) բռնակալն փախուցեալ ի Շուշի, այժմ նա յայնկոյս Թոյու բանակեալ ծանր զօրաւ՝ իբր ութսուն հազարիւ, հրաւիրէ առ ինքն զիւխոզս կողմանցս, յորոց Թոյուն և Ղարադաղուն և Ղափիչեանուն և այլք գնացեալ են. իսկ տեղւոյս իշխողն զեղջայրն իւր և զԱխունդն յղեաց ընծայիւք, և կասկածելով ի վերայ իւր, զարմտիս երկրին ժողովէ ի բերդն և ամրանայ, պատրաստութիւն տեսանէ... ՌՄԽ (1791) ամի և յՕգոստոսի մուտն, ի Ս. Էջմիածին»։

Այն ինչ նոր չէն աւարելով, աւերելով հասնում է Արդավիլ, յանկարծ լուր է ստանում թէ գեարիմ խանի վերջին չառաւիղ Լութֆ-Ալի խանն, որ արդէն նուաճուած էր համարւում, վերստին զօրաժողով եղած՝ արշաւում է Ասպահանի վերայ. վանտարոյ և նա թողնելով Ատրպատականում իւր զօրավարներն՝ անապարտնօք վերադառնում է Ասպահան։ Ահա այդ մասին տեսնենք ինչ է գրում Ղուկաս կաթողիկոսն Թոյ վերարտնակալ վանեցի Խաչատուր աղային.

«Որովհետև յառաջմէ մտադիր էաք՝ որ չքեղապանծ չէն՝ թէ այս կողմն մտելոյ լիցի գնայցեմք ի տեսութիւն, և յաշխն ոչ եկն, մեր ևս տկարութիւնն ոչ զօրեաց ի ցուրտ ժամանակին գնալ, վանտարոյ անա զնոգեալ որդիսն մեր... [2]) հանճարաւնակ վարդապետան յղեցաք զընծայս տանիլ, վէճ և նազդ (նիւթեղէն և պատրաստի դրամ)։ Որ վէճն է փոքր մաթահ (նորագիւտ իրեղէն) ճոխք և կտորեղէնք, զորս պատրաստեալ ատա յանձնեցաք ինքեանց. իսկ նազդ չորս հարիւր թուման եմք գրեալ՝ որ ի տեղիդ պարտի հոգացեալ լինի և տարուի, քանզի գիտես ի ջորւոց և ի ձիոց պակասեալ եմք. և եկողքն՝ վարդապետք, ճանապարհն կասկածելի, վասն որոյ յայդ տեղ հոգացումն պատչաճ համարեցաք, գիտելով որ ըստ հաւատարմութեանդ ջանաս ի գլուխ տանիլ։ Բայց ես խորհելով մի գուցէ սիրելւոյդ միայնակ «սբ խլաթ» (նեղութիւն) լիցի, վասն որոյ Համադանցի պարսն Քալորն ի տանի Ղենդեան և Ցայանութեան Քրիստոսի ատա պատահելով, ընդ նմա խո-

---

[1]) Պարսկաստանի հայերը մինչև ցայսօր Ատրպատականի մահմեդականները քիւրդ կանուանեն. իսկ Հայաստանցիք և Վրաստանցիք—թուրք։ Քիւրդ անուանելոյ պատճառն հաւանական է, որ մեռցած լինի նոցա վերջին դարերում Ատրպատականի վրայ տիրապետելոյ ժամանակից։

[2]) Օրինակելով կնդակների պատճէնագրից, այնտեղ անունները թողուած են, վասն որոյ և ես կետագրութեամբ անցայ։

սեցաք, և 1500 ռիալ [1]) եռուբ, ինքն պօլիցիական (փոխանակագիր) գրեաց եղբօրն, որ ի տեղդ չանի ոսկի տացէ. նախ՝ վասն թեհեռուտեան, որ ասանեն գլուխն է, և երկրորդ՝ զի գլուխն մնայ և օգուտ ինչ լինի սրբոյ Աթոռոյս.

«Թուղթ մի ևս առ Մելիք Մարգարն գրեցաք [2]), որ հազար ռիալ ևս ոսկի նա չինեալ տացէ վարդապետացն, և քեզ սիրելւոյդ ևս գրեմք, որ հազար հինգ հարիւր դանայ Սուլթան-Համիդի ռիալ ևս դու, օրինեալդ, չանի ոսկի չինեսցես՝ և տացես վարդապետացդ, որ իցէ թէ գլուխն ևս իբրանց խարճարարութեան օգնութիւն լիցի՝ և տուելոյդ ազգաս, ձեռագիր առցես ի վարդապետացդ, որ մեզ ընդունելի է, և գրեսցես մեզ։ Աստուծով ի փոքր միջոցի ևս 1500 դանայ Սուլթան-Համիդ ռիալն հատուցանելոց ենք քեզ Տնորհակալութեամբ... Դարձեալ զօվլաթլու [3]) Մարդար Ջաֆար-Կուլի խանին ևս պատշաճ համարեցաք զնծնայս յղել, բայց ի վէճ իրաց պակասեալ էաք, վասն որոյ ահա երեսուն թուման ռիալ ևս յանձնեցաք վարդապետաց ի տեղի ընծայի, զոր ժամուցանեն ձեռամբ քոյ։ Եւ թուղթ ևս գրեցաք, յորում խնդրեալ ենք, որ յիւր կողմանէ մէկ մարդ դնէ վարդապետաց հետ, զի օրովհետև անծանօթ են ճանապարհին և ընակչացն. մուտայէթ լինելով, հասուցէ մինչև ի դուռն Շաքի Իբրահիմ խանի [4]), ըստ օրում այժմ նա թուղթ էր գրեալ մեզ... ՌՄԽԱ (1792) ամի...»։

Այսպէս ահա, Արտրատականի իշխողներն և ազգապետները լսելով չանի յարձակումը իրանց վերայ, նրա երեսը հաւատացնելոյ համար, պատգամաւորներ էին առաքում ընծաներով, որոնք բաղկանում էին բաց ի դրամից, նորագիւտ նիւթեղէններից և ընտանի անասուններից, նաև ասուն բուսական ընծաներից, այսինքն քրիստոնեայ գերիներից և գերուհիներից։ Երևանի իշխող խանի առաքած ընծաների մէջ լինում են երկու չքնաղագեղ մատղաշ օրիորդներ և երկու մանուկներ.

---

[1]) Ռեթ ռիալն ՁԿ թուման էր, այսինքն իւրաքանչիւր ռիալն 25 շահի էր պարսից։

[2]) Ընդ ժամանակն երկու երեսնի Մարգար անունով անձինք կային Խոյ. ՁԿն Եպիսկոպոսն, որ Լուսաց և Պարսից պատերազմի վերջնաձայնս, այսինքն 1827—1828 թուականին գաղթուց Երևան իսկ մնաց էր և Ալաշկերտցի։ Այս գիւղս հարիւր թվ կամ ժամ հեռի է Խոյից։ Սոցանից որն էր արքեպս Գ. ուկասի յիշածը՝ չը կարողացայ իմանալ։

[3]) Իշխանութեան, հարստութեան, կարողութեան տէր։

[4]) Ընդարձակ վէպերն շահի պատմութիւն պարսից, Մ. Թաղիադեանցի հատոր Ա, երես 219, Կալկաթա, 1846.

վերջիններից մէկը վրացի Խվան անուն, իսկ միւսը՝ հայ—Գասուր անուն։ Այս լինում է Կոդեցի [1]), տասը, տասնմեկ տարեկան, մականունը Մոյինեանց կամ Մայինեանց Մինաս։ Այս երեխայի քնքուշ և անմեղ դէմքը, նրա հասակին համեմատ վայելուչ բարեկազմութիւնը՝ գրաւում են շատի ուշադրութիւնը։ Վանորայ Նրան ընծայելով Յովսէփ Գեղեցկի անուանը վերակոչում է Իւսուֆ։ և հրամայում այդ չորս գերիները, որպէս արմազան պարգևներ, առաջին իւր եղբօրորդի և թագաժառանգ Ֆաթ-Ալի խանին։

Ճանապարհին Խվանէն հիւանդանում է և մեռնում. իսկ Գասուր՝ վերակոչեալն Իւսուֆ, գերուհիների հետ հասնում է Շիրազ. ուր մէկ քանի անգամ Նրան բաղնիք են տանում, գլխին, ձեռներին և ոտներին հինայ դնում, մաքուր հագցնում, յետոյ ներկայացնում Ֆաթ-Ալի խանին, որ ինքն գոլով 20-ամեայ կարի գեղեցկադէմ, հեռամուտ էր գեղեցկատեսիլ սպասաւորներ և ստորադրեալներ պահելոյ. վասն որոյ հրամայում է ներքինապետին, որ զԻւսուֆն իբրև պարգև առաջէ իւր սիրելի Զիբա-Զէհր խանումն տիկնոջն, որ նոյնպէս Վրաստանից բերած հայ գերուհի էր։ Իւսուֆին ուրիշ բաղդ, ուրիշ հանդէս էր պատուած. Նորա մատաղաչ հասակն և ոսկեհատիկ կերպարանքը պատճառ են լինում նորա մնալոյ և զարգանալոյ մուսուլմանութեան կենդրոնի և արքունիքի մէջ։

Իւսուֆի ժամանակակիցներն և նորա երեց որդի Կուլամ-Հիսէյն խանը պատմում էին, թէ նա Իւսուֆը, սիրում էր երբեմն երբեմն հառել իւր երեխայութեան և պատանեկութեան անցքերից. մանաւանդ իւր բարերարուհի Զիբա-Զէհր խանումից։ Դա ասում է լինում թէ՝ տերը ինձ ներկայացրին նոյն պարթև և սէգ բամբէն, նախ՝ նա սկսեց հետս հայերէն խօսել. բայց երբ տեսաւ որ կսկիծում եմ, զզուարանում եմ պատասխանել, շուտ տուեց վրացերէն հարցեր առաջարկել, և երբ հաւատի եղաւ Նրան հայրենակից և հաւատակից լինելս, կախեցին զրկից դէպ ու մէկ քանի անգամ համբուրեց. և ես զգացի նրա ջերմ արտասուքը, որ երեսս թաց արեց։ Յետոյ ձեռնոցս բռնեց առաջնորդեց մէկ ուրիշ սենեակ, ուր էր տասը, տասներկու ամսական նորա որդի Մահամմէդ-Ալի մերդան, և ասեց թէ, դու այսուհետև այս տեղաց պիտի դուրս չերթաս, ահա սա է քո արքայորդի տէրն, և դու նրա ստրուկն (զուլ), և անմիջապէս հրամայեց ասնտուին և աղախիններին, որ հոկեն իմ վերայ։

[1]) Թիֆլիսի հարաւային կողմամ գիւղ է, որ 28 վերստ հեռի է Թիֆլիսից։

Եւ այսպէս մանուկ Իւսուֆն իւր երեխայութեան օրերը անց է կացուցած կանանոցի մէջ Մահամմէդ-Ալի Միրզայի հետ, որ գոլով Ֆաթ-Ալիի երկրորդ որդին՝ պէտք էր թագաժառանգ լինէր. բայց որովհետև նրա մայրը կաջարուհի չէր, վանորոյ Ֆաթ-Ալին թագաժառանգէն յետոյ, թագաժառանգ է նշանակում Կաջարուհի մօրից ծնած զՈրբաս Միրզան, որ տարիքապէ կրտսեր էր Մահամմէդ-Ալի Միրզայից։ Զիբա-Զէհր խանումից ծնում է նա և մէկ դուստր Ամնա-Պարսէ անուն [1]) վերակոչեալ Գեաւլեթ խանում, այսինքն տիկին հարս. որ իւր շքեղ և գեղեցիկ Ղէսիս ասած վայելչագրութեամբ՝ երեսի եղաւ Պարսկաստան։ Սա մէկ կուրան է գրել և նուէր առաքել Քեաբրայայի ուխտատեղի Մէսջիտին, ուր, ինչպէս ականատեսները պատմում էին, մինչև ցայսօր կայ. այդ երկու հարազատների հետ մեր Իւսուֆը սովորում է պարսկերէն կարդալ-գրելը։

Զիբա-Զէհր խանումի բարոյական խստութիւնը և խելացիութիւնը ոչ միայն չաւելի, այլ և նրանի բոլոր երեսիլների կանանոցի մէջ յայտնի էր, և համարեա նոցա կենդանի օրինակն է եղած. վանորոյ նրա չատ ժամանակակիցները վկայում էին թէ՝ Մահամմէդ-Ալի Միրզան Քերմանչահ կուսակալութեան ժամանակը՝ դատաստան անելիս՝ չատ անգամ հրապարակաւ պարծենում է լինում իւր մօր համբաւովն ու անուանովը՝ ասելով թէ «Շահզադի (այսինքն իւր) մայրն այսպէս է խրատել, այսպէս է ուսուցել, կոտակել կամ սովորցրել ինձ երեխայութեան ժամանակին»։

Զիբա-Զէհր խանումը տեսնելով Իւսուֆի խելացիութիւնը և հանճարութիւնը, նրա մանդաան և զարգացման վերայ այնուհետև ինքն էլ է հսկում. նրան աչքից չէ հեռացնում, թոյլ չէ տալիս որ յարաբերութիւն ունենայ կանանոցի խանաշակերտների, այսինքն երեխայ աշակերտների հետ, երբ նա հիւանդանում է, չատ անգամ ինքն է նրան դեղ խմացնում. նրան քրտնացնում, չորերը փոխել տալիս, անպակաս մրգեղէն և քաղցրեղէն հայթայթում. նա չէ զատում Իւսուֆն իւր զաւակներից, վանորոյ Իւսուֆն այդ ամենը յիշելից յետոյ ասում է լինում թէ «Էնա յարգում և սիրում էի Զիբա-Զէհր խանումն իբրև ծնող մայր, վասն զի նորա մօտ մտած օրից մոռացայ դերութեան որբութիւնս և ստրկութիւնս։

[1]) Ափսոս, այդ երեսի օրիորդի համար չկարողացայ որ և իցէ տեղեկութիւն ժողովել, որպէս զի նորան նուիրեի ՀԿ գլուխ են կենսագրութիւնների ՀԷ, զորս ժողոված եմ պարսկաստանի ՀԷ գիրի ընկած հայոց հիշերի մասին։

ԱՐՄԱՏԱՍԻՐ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

Կանանոցի մէջ լուն միայնակեցութիւնն՝ առանց յարաբերութեան ապականուած խանաչակերտների հետ, մեծ ազդեցութիւն է ունեցել Իսուփի զարգացման վերայ, ուստի ինչպէս նրա մօտիկ ծանօթները վկայում էին թէ, նա շատ քիչ-քուչ վարուել ունէր, նորա նստիլ-վերկենալը կանանց նման նազելի, քաղցրաբարոյ և քաղաքավարի էր. մեծի և փոքրի, հարուստի և աղքատի, իւր սիրելի ծանօթի և թշնամւոյ հետ միակերպ կը վարուէր, աւելացնում էին թէ, նա երբէք չէր զայրանալ. եթէ մէկի հետ հեռ, նախանձ ունենար՝ այնպէս փափուկ փուշի պէս կը ծակէր, որ զգալի չէր լինիր, ծածկաբար որոգայթներ կլարէր, և ծածկաբար կը կատարէր, մէկ բառով ասած, խորամանկ պալատական (զզլբաշ) էր։

Աղմորութիւն է Պարսկաստան, որ ինչպէս շատը, շատ զատները, այնպէս էլ աւագանին, թողնում են խանաչակերտները իւրեանց կանանոցի մէջ մինչև որ նոքա չափահաս են լինում, այնուհետև՝ եթէ նոքա բարոյական, խորհրդապահ և հաւատարիմ են, հանում են կանանոցից և դուրս են տանում իւրեանց մօտ՝ որպէս սպասաւոր պահում. և եթէ այստեղ ևս հաւատարիմ են լինում. այնուհետև չը նայելով նրանց ծագումին, պաշտօն և աստիճան են տալիս, և յառաջադիմութեան ասպարէզ հայթհայթում։ Մի և նոյն ճակատագրին ենթարկուել է և մեր Իսուփը։

Ցաթ-Ալի շահն իւր գահակալութիւնից մէկ քանի տարի յետոյ՝ հանում է զԻսուփն կանանոցից և նշանակում ազնուատոհմ պատանիների շարքում իրան սենեկապան։ Այնուհետև Իսուփն՝ ինչպէս քաղաքում, նոյնպէս էլ քաղաքից դուրս անանցանելի է լինում շահից։ Եթէ հաւատանք նորա ժամանակակիցներին, իբր թէ շահը յետոյ, շատ յետոյ, երբ Իսուփը սպասարկութեան աստիճան էր ստացել. ասենում ասած լինի թէ, «Այս իմ արքունիքում միմիայն տեսայ Իսուփ խանը, որ ճանապարհորդութեանս ժամանակ ցուրտը, անձրևն ու շոգը նա չէր զգալ. գիշերները մինչև ես չէի ննջել, նա չէր քնում, շատ անգամ նա արթուն կը հսկէր սենեակիս կամ վրանիս դրանը, քանզի երբէք երկիցս նրան յանուանէ չեմ ձայնած. այլ երբ անունը կը տայի, նա իսկ և իսկ կը պատասխանէր ու անմիջապէս կը ներկայանար. մէկ բառով, որպէս թէ քունը նրա արտանուանքներից հայածուած էին». որպէս թէ Իսուփն էլ պատասխանած լինի թէ «տիեզերքի աղօթարան (Ղմրլէի-Ալէմ) ես ծնած էի քրիստոնեայ, երեխայութեանս ժամանակը լսած էի, որ Աստուած Աւետարանում հրամայել է թէ, ձեր մեծերին հաւատարիմ կացէք՝ ինչ-

պէս չուն, ապաքէն ես նա այն պատուիրանն էի կատարում և կատարելոց եմ օրքան կենդանի եմ։

Զիարդ և իցէ ձիգ միջոց չէ տևում՝ Իսուֆը սատանում է խաստիչխդմէթութեան աստիճան, և յետոյ խանութեան տիտղոս։

Նա այնուհետև համարվում է ի թիւս արքունականների ու պալատականների, և հետզհետէ յառաջանում է, մանաւանդ որ իւր պաշտօնով մերձ էր շահին, վասնորոյ շատերի համար բարեխօսելով և միջնորդելով բարեկամներ և ծանօթներ է վաստակում։ Միևնոյն ժամանակ նա չէ մոռանում զիւր բարերարուհի Զիբա-Զէհր խանումը և նրա զաւակները, այսինքն նրանց տնտեսական կառավարութեան վրայ հսկում է, թոյլ չէ տալիս նրանց, որ իւրեանց ռոճկից աւելորդ մսխեն և չռայլութեամբ ապրին միւս տիկինների և արքայազունների նման. որոնք և մեծամեծ գումարներ պարտք անելոյ համար՝ յումպէտս մեծամեծ տոկոսիք էին վճարում. ուստի և շահն միշտ անբաւական էր լինում այնպիսիներից։ Իսուֆ խանը մինչև իւր մահը անձնանուէր էր իւր բարերարուհուն և նրա զաւակներին կամ թոռներին, որով աւելի ևս գովասանքների էր արժանանում։ Մուհամմէդ-Ալի Միրզան նրան բարալրդ, այսինքն հայրացու էր անուանում։

Այդ միջոցում Զիբա-Զէհր խանումն որոնում է գտնում մէկ հայուհի գերի՝ Ցանկաստանից բերած օրիորդ, և ամուսնացնում Իսուֆ խանի հետ, պայմանով որ եթէ այս ամուսնութիւնից զաւակ ծնի, նա ուրիշ կին չառնէ։ Զիբա-Զէհր խանումը պարգևում է հարսնացուի օժիտը, և շահն էլ շնորհում է մէկ մեծ և ընդարձակ տուն։ Այդ ամուսնութիւնից ծնում են մէկ դուստր և երկու ուստր. այսինքն Կուլամ-Հիւսէյն խան և Բզա-Կուլի խան անուն։ Այդ զաւակները սրնվում—զարգանում են և կրթվում շահի կանանոցում գրեթէ Զիբա-Զէհր խանումի խնամատարութեան ներքոյ, քանզի մինչ նրանց չափահաս լինելը, արձակ—համարձակ տուն ու դուս են անում շահի կանանոցի մէջ իւրեանց բարերարուհոյ մօտ, վասնորոյ Զիբա-Զէհրն ընտրում է շահի դուստրներից համեստագոյնը և ամուսնացնում Կուլամ-Հիւսէյն խանի հետ, որի մասին իւր կենսագրութեան մէջ կխօսինք։

Պարսկաստանը ներկայ դարի սկզբից սկսած՝ յաճախ անգամ պատերազմական յարաբերութիւններ ունենալով ռուսների հետ, իւր անկանոն զօրքովը՝ չէր կարողանում դիմադրել ինքնակոչ հիւրերին, վասնորոյ Ֆաթ-Ալի շահը, մանաւանդ նրա թագաժառանգ Աբբաս Միրզան՝ հետամուտ էին

մուծանել իւրանց զօրքին մէջ եւրոպական կրթութիւն, և մտադիր էին Եւրոպայից մարդիչ սպաներ բերել տալ։ 1805—1806 թուականներին յանկարծ յայտնու

երեխայութիւնից և պատանեկութիւնից մնուած և կրթուած գոլով շահի ձեռի տակին, ականատես էր եղած ամեն լաւ և վատ անցած գնացած անցքերին, և իւր մտերմութեամբ և խոհեմութեամբ՝ արդէն յայտնի էր շահին. վասնորոյ և շահը նշանակեց զՍրփահդարն և մարզպան Արաղստանի, որի աղագաւ նորա համբաւը տարածուեցաւ բոլոր Իրանի մէջ։

Արդիւնարեր, արդաւանդ և բազմամարդ Արաղստանը եօթանասուն տարի հետ՝ գոլով բռնաւորների անընդհատ պատերազմների կենդրոն և ասպարէզ, նրա շատ ճոխ գիւղաքաղաքները, աւաններն ու գիւղերը եղած էին անմարդաբնակ, աւերակ և կիսաւեր. ուստի Իւսուֆ խան Սրփահդարն իւր առաջին ուշադրութիւնը դարձնում է այնտեղները մնացած բնակիչների վերայ՝ նրանց կեանքն ու կայքը ապահովացնելոյ համար, վասնորոյ ամենայն ուրեք կասկածելի ճանապարհների վերայ պահանոր զօրականներ է կարգում, որպէս զի կարաւանների երթևեկութեան վերայ հսկեն, որսան զթափառիկ, ասպատակող և թալանող անցուդարձ անողներն, և թոյլ չտան նոցա յածել յումպէտս արահետ ճանապարհների վերայ։

Նա, Սրփահդարը, խնդրեց շահից, որ հրամայէ այն գաղթած բնակիչներն, որոնք այժմ կամենում են վերադառնալ Արաղստան իւրեանց տեղերը, երեք տարի գլխահարկ չտան, քանզի նոքա ուր որ գնացել էին, անդ ևս ոչինչ չէին վճարում արքունի գանձարանին։ Յետոյ առաջարկում է կալուածատէրներին իւրեանց լքեալ և աւերակ կալուածները վերանորոգեն, և եթէ նոքա կարևորութիւն ունենան դրամի, ինքն, Սրփահդարը, չափաւոր տոկոսիքով փոխ կը տայ, և անմիջապէս հրատարակում է, որ եթէ ոք վերագաղթուի, նրան սերմացու և ընտանի չորքոտանի անասուններ կը հայթհայթէ նա, այն պայմանաւ, որ երեք տարուան մէջ կալերի վերայ փոխ առած սերմնացուն վերադարձնեն, իսկ՝ անասունների գինը դրամով վճարեն, և ով որ կամենայ իւր հետ կիսովի երկրագործութիւն անել, ինքը պատրաստ է ամենայն ինչ մատակարարելու։

Այս կարգադրութիւնների վերայ փոքր միջոցում Արաղստանի գիւղերն սկսում են բազմամարդանալ և չէնանալ. երկրագործութիւնը, այգեգործութիւնը և անասնարուծութիւնը վերակենդանանալ, ձեռագործութիւնն ու վաճառականութիւնը ծաղկիլ. և ինքն՝ Իւսուֆ խանն էլ՝ բնակիչները խրախուսելոյ համար՝ այն տեղրանք գիւղեր, աւաններ, ագարակներ, այգիներ, աղբիւրներ և ջաղացներ է գնում։ Ի վերջոյ դրամներ է փոխ տալիս վաճառականների և հմուտ արհեստաւորների, մա-

նաև մեզ գոգ և կարգեր ստանձնողներին, որ գործատունները բանան և առևտրական յարաբերութիւններ սկսին իրանի միւս քաղաքների հետ։

Աւելորդ չէ այստեղ յիշել, որ նրա պարզ տուած գրամի տակոսքը նշանակուած է վերում տարին տասնին մէկով, այսինքն, հարիւրին տասնով, որ այդ ժամանակի և երկրի հանգամանքներին նայելով կարի չափաւոր է եղած. ինչպէս նորա մահուանից մերձ երեսուն տարի անցկացած, երբ ես Պարսկաստանի մէջտեղը ճանապարհորդում էի, ամէն տեղ հարց ու փորձ անելիս, որպէս պարսիկները, նոյնպէս Փեմարայի և Փեազազի հայ ծերերը միաբերան գոհունակութեամբ և ողորմի տալով յիշում էին մեծ Սրփանդարի (ըստ որում փոքր Սրփանդար ասելով հասկանում էին նրա որդի Կուլամ-Հիւսէյն խանը) անունը և ժամանակը։ Հայերը նրա ժամանակի համար ասում էին թէ բաղդաւոր ժամանակ էր մեզ համար, ոսկի ժամանակ էր հայերիս համար, նա ամենից հայրն էր և ոչ թէ մարդպան, նրա ժամանակն ով կը համարձակէր ասել հային թէ աչքիդ վերը յոնք կայ և այլն, և այլն։

«Կաջարների պատմութիւնը» ասում է թէ, Պարսկաստան և Ջաճկաստան դաշն էին կռած, որ մէկն առանց միւսի համաձայնութեան չհաշտուի Թուրքստանի հետ, բայց 1227 Հիջրին (1812 ամին) Ֆաթհ-Ալի շահն իմանալով, որ Ջաճկաստանը գաղտնի բանակցութիւն է սկսել և մտադիր է Թուրքստանի հետ հաշտուիլ, հրամայեց բանակ կազմել զորավարութեամբ Կաջար Կասում խանի, Աբփազար Իւսուֆ խանի, և Ալիքար Ֆարաջուլլահ խանի, որ խաղան գնան յարձակուին Ջաճկաստանի վրայ։ Այդ երեք զորավարներն իւրեանց բանակներով գնացին հասան Քիրմանշահ, միացան այնտեղի մարզպան շահզադայ Մահամմէդ-Ալի Միրզայի բանակի հետ (Իւսուֆ խանի բարերարութիւնից ծնած). այնտեղից երեքը միասին Զօհհաբի վրայով արշաւեցին Ջաճկաստանի վերայ, աւարելով հասին Թանրկին, Գարա-Թէփէ և Դերզել-Ուրաֆ։ Բաղդատի կուսակալ Աբդուլլահ փաշան տեսնելով որ թշնամիները մտնում են Բաղդատին, և ինքն անկարող է նրանց դիմադրել, կատարեց Պարսկաստանի պահանջները, և մեծամեծ ընծաներով հաշտացրեց Մահամմէդ-Ալի Միրզայի երեսը և Պարսից զորքը վերադարձրեց։

Ինչ զարմանալի պատմութիւն։ Ինչ էին արդեաք Պարսից պահանջները, որոնք կատարուեցան, պատմութիւնը չէ յիշում, այդ իւր բարի կամքն է. բայց աններելի է նրան, որ չէ յիշում թէ, վերոգրեալ երեք երեսի զորավարներից, որն,

մինչև ուր արշաւեց իւր բանակով, և ինչ ճակատամարտներ մղեց, ինչ աւերումներ արեց, որպէս զի մարդ կարողանար Իւսուֆ խանի արածները զատէր ու յիշէր այստեղ նրա կենսագրութեան մէջ, այլ թէ մէկ բառով այդ պատմութիւնն, ամեն ներգործութիւնը նուիրում է իւր հերոս Մահամմէդ-Ալի Միրզային, այն էլ կիսատ թերատ։

Ֆաթ-Ալի շահը նայում է, որ ռուսների հետ պատերազմը երկար է տևում, և Աբբաս Միրզայն օր ըստ օրէ տկարանում է, վասնորոյ 1812—1813 թուին գարնան կէսին թէհրանից դուրս է գալիս գնում Սուլթանիոյ ամարանոցում բանակում, ուր ժողովվում են Իրանի բոլոր երևելի զօրավարները, որոնց հետ խորհելէն յետոյ, հրամայում է հզօր բանակներ կազմել և յանձնել Մահամմէդ-Թաղի Միրզային ու քաջասիրտ Սրփահղար Իւսուֆ խանին, ասում է «Կաջարների պատմութիւնն» որ խաղան գնան հասնին Ատրպատական, միանան Աբբաս Միրզայի զօրքի հետ ու չորս տեղից յարձակուին ռուսների վերայ։

Իսկ Ռուստամանը այն ժամանակը ճնշուած գոլով Նապալէօնի յարձակմունքից, և լսելով Իրանի զօրքի կուռ պատրաստութեամբ Ատրպատական արշաւելը, սկսում է հաշտութեան պայմանները, որ և լրացաւ Գիւլստանի դաշնագրութեամբ։

1229 Հիջրին (1814 ամին) Խորասանը ապստամբվում է և յարձնում Իրանի զօրքի վերայ. շատ բերդեր է խլում, յետոյ արշաւում մարզպան Դամղանցի Իսմայիլ խանի վերայ ու նեղը ձգում։ Թէհրանի արքունիքը լսելով այդ տխուր անցքը, առաքում է զկաջար Ամիր Մահամմէդ-Կասում խան, Սրփահղար Իւսուֆ խան, Աֆշար Ֆարաջուլլահ խանն և Կազվինցի Հասան խան սարդարն (Երևանի) ստուար և բազմաթիւ զօրքով. նուաճել և խաղացնել Խորասանը։ Խորասան երբէք այնպէս սաստիկ հարուած չէր կրած, ինչպէս այդ անգամն, աւելացնում է նոյն պատմութիւնը, և թէ, քաջ Իրանի զօրքն անխնայ կոտորեցին, ջարդեցին և ջնջեցին այնտեղի բնակիչները, շատ աւաններ, գիւղեր, ամրոցներ և բերդեր աւերեցին և վեր ի վայր կործանեցին և մեծ հարստութիւն ձեռք բերին, շատ գլխաւոր ապստամբներ կալանաւորեցին, չարաչար խոշտանգեցին, կախեցին, գլխատեցին, զինու զօրութեամբ խոնարհեցրին և բարեկարգեցին բոլոր Խորասանը։

Եւ ահա այդ երևելի անցքում ըստ նոյն պատմագրի, որն բացի նցին, նցիներից, դարձեալ չէ յիշվում վերոգրեալ զօրավարների՝ իրաքանչիւրի մղած պատերազմը, քաջագործութիւնը կամ հարստահարութիւնը։

Մինչ այս՝ մինչ այն, ապստամբվում են և Եամութի, Լոկլանի և Թոջէ-Գեաչվարի վայրերի և ասպատակող Թուրքմէնների ցեղերը, վանորոյ չակը հրամայում է, որ Մահամմէդ-կասում, Աբփահդար խասուի և Ֆարաջուլլահ խանները իրենց զօրքով Գեաբուչ արօտատեղից, ուր բանակած էին, խաղան՝ գնան միանան Թէհրանից նոր առաքած զօրքի հետ, և միասին արշաւեն այն ապստամբ ցեղերի վերայ։

Թուրքմէնները լսելով Իրանի զօրքի գալը և տեսնելով որ չեն կարող դիմադրել նոցա, ընտանիքով, ընդոծինով, ադխով և չորքոտանի անասուններով շվում, փախչում, գնում, անց են կենում Դէշտ ասացեալ խոպան, անջրդի, աղտոտ և անբնակ լայնածաւալ անապատի միւս կողմն, ուր Իրանի զօրքը չէր կարող արշաւել։ ուստի և Իրանի զօրավարները սահմանագլխում թողնելով մէկ հատուած զօրք, ինքեանք մնացեալ զօրքով վերադառնում են Թէհրան։

Այստեղ չէ կարելի լռութեամբ անց կենալ նոցա մասին, ինչ որ Իւսուֆ խանի ծերունի պատերազմակիցները պատմում էին։ Իբր թէ այդ երկար արշաւանքների ժամանակը, Աբփահդարի զօրագունդները բարեկարգութեամբ՝ միւսներից միշտ գերազանց էին. որովհետև նա, ինչպէս միւս զօրավարները իւր գունդերի ռոճկի համար մարդ չէր ուղարկում գիւղերից և քաղաքներից, բռնութեամբ դրամ և կամ հացաբար և պաչար ժողովել ու ստացական տալ, որ յետոյ ժամանակաւ, ով գիտէ, արքունական գանձարանը այդ ստացականներն արդեօք կընդունէր, այլ՝ ինքն՝ հարուստ գոլով, իւր գանձարանից ճշգութեամբ ժամանակին վճարում էր զօրքին, որ յետոյ ստանայ իւր հրամանատարութեան նեբքոյ եղած Արազստանի վիճակների հարկիցն, և կամ թէ նրա տեղապահներն՝ թերևս արդէն ժողոված ևս էին։ Եւ որովհետև նա ճշգութեամբ էր ռոճիկն ու պաչարը վճարում զօրականներին, նորա համար և խստութեամբ արգելում էր, որ զօրքը ճանապարհների վերայ չը նեղացնէ գիւղաղ գեղացիները, նրանց կայքը կամ անասունները չը յափշտակէ, ինչպէս այն ժամանակը Պարսկաստան այդ մէկ հատարակաց սովորութիւն էր. վանորոյ գեղացիները լսելով ուրիշ մէկ բանակի գալն ու անցկենալը, ինքեանք 4—5 օր առաջ չվում, հեռանում, գնում էին սարերի մէջ կամ բացակայ տեղերքը, այնքան ապատում էին, մինչև բանակի հեռանալն. ուստի պատահել էր յաճախ անգամ, որ զօրքը քաղցած էր մնացել։ Աբփահդարը ըստ մեծի մասին քաղաքից կամ գիւղից բացակայ կը բանակէր, և թոյլ չէր տալ զօրքին մտնել նոցա մէջ, այլ գունդերի մատակա-

բարները կերթային, ինչքան պաշար էր հարկաւոր կամ կը գնէին, դրամը կը վճարէին և կամ քաղաքների կառավարիչներից պաշար ստանալով՝ ստացական կտային, կբերէին, կը-բաշխէին զօրքին։ Սորա համար Սրփահդարը՝ զատված միւս զօրավարներից, իւր գունդերով միայնակ կշուէր, որպէս զի իւր բանակը պակասութիւն չըզգայ։ Արդարև, այսպէս էր, քանզի նորա համբաւը տարածուելով՝ երբէք գիւղացիք իւրեանց տեղից չէին շարժիլ. ընդ հակառակն շատ պաշարեղէն կը բերէին բանակի մէջ վաճառելու, որոնց պաշտպանութեան համար ոստիկաններ էին նշանակուած՝ հսկել բարեկարգութեան վերայ։ Այս պատմողներն աւելացնում էին՝ թէ այդ բարեկարգութիւնները Սրփահդարը սովորած էր եւրոպացի մարդիչներից։

Ֆարհանի մօտ Զօլֆաբադ անուն և փոքրիկ քաղաքի բնակիչները իւրեանց տների տակին դարաններ կամ նկուղներ էին փորած, այնպէս՝ որ մէկը միւսի հետ յարակցութիւն ունենայ, և վանորոյ կարավաններից բեռներ էին զարկում, մերձակայ գեղացիների կայքերը գողանում էին, բերում ածում այդ նկուղների մէջ և գաղում, ու գիշերները լռելեայն առաքում էին հեռի քաղաքներում սպառում։

Կառավարչութիւնը որքան հետամուտ էր լինում, չէր կարողանում այդ աւազակութիւնների կամ կողոպուտների հետքը գտնել, ընդհակառակն այդ չարագործութիւնն օր ըստ օրէ առաւելանում էր։ Սրփահդարը լսելով, որ Զօլֆաբադցիք ոչ թէ որ և իցէ արհեստով, այլ և երկրագործութեամբ անգամ չեն պարապում, այլ շռայլութեամբ ապրում են, և չորս կողմի բնակիչները նոցա վերայ կասկածանք ունին. վանորոյ մէկ գունդ զօրք է առաքում Զօլֆաբաթ, որ այնտեղ մնան, և հսկեն որ ոչ ցերեկ և ոչ գիշեր այնտեղից բեռնով կամ չալակով բան դուրս չը տանին։ Բնակիչները տեսնելով որ չեն կարողանում իրանց չարագործութիւնները գործ դնել, մէկ օր մէկ ընչին անցք պատճառ բերելով, յանկարծ միաւորվում են ու քարկոծում նորա զօրքը և քաղաքից արտաքսում (քանզի վերջիններս հրաման չեն ունենում ղէնք գործ ածելու), և այնուհետև սկսում են իրանց փոքրիկ բերդը վերանորոգել և ամրացնել։ Սրփահդարի հրամանաւ երկու Զօլֆաբադցի են բերում Սրփահդարի մօտ, որ որքան խրատում է և յորդորում, նրանք չեն խոստովանում, ուստի հրամայում է խոշտանգել, որով և խոստովանում են իւրեանց աւազակութիւնները։ Այն ժամանակը Սրփահդարը դաղտնի գրում է շահին, որ և նշանակում է զվրացի Արդուլլան խանը՝ գնալ, մտնել Զօլֆաբադ,

քններ, վերահասու լինել գործի էությանը և նրան, չահին հաղորդել։ Քաղաքացիները թույլ չեն տալիս նրան։ Արդուլլահին, որ մանկ բերդի մէջ, ուստի թէհրանից հրաման է գալիս Աբիսմաղաբի վերայ զօրք առաքել և գինու զօրությամբ տիրել բերդին, և եթէ, արդարև, զորուին կան գաղած, դուրս բերել և բերդը հիմնայատակ անել։ Աբիսմաղաբը ոմբակոծելով տիրում է բերդին, դարաններից անչափ կողոպուտներ է հանում. գաղթում է բնակիչները այլևայլ քաղաքների և գեղերի մէջ, և բերդապարիսպն ու նրա մէջի տները գետնի հետ հաւասարում, իսկ զգլխաւոր ապստամբները արահետ ճանապարհների վերայ կախել է տալիս։

Ասպահանի մարզպան Միրզայ Ալի-Մահամմէդ խանը, որ երևելի Արդուլլահ խան Էմին-Ուդ-Դովլէի որդին էր (զոր մէկ ուրիշ անգիր համար Ասպահանի գանձապետ Զօհրաբ խանի կենսագրութեան մէջ յիշելոց ենք), և ամուսնացած էր բախտիարցի Հաջի-Հաշիմ խանի քրոջ հետ [1]։ Հաշիմ խանը յենլով իւր քրոջ որդի մարզպանի իշխանութեանը՝ ժողովել էր գլխին զող, աւազակ, մարդասպան և սրիկայ բախտիարցիներ, որոնք նախ ճանապարհների վերայ կարավաններ էին զարկում, և լբրեանց պաշտպանի ուժովը՝ մարսում էին ու մնում անպատիժ։ Քաջալերուելով էս չարագործութիւններից, յետոյ սկսեցին գիւղերները Ասպահանի մէջ տներ, խանութներ կողել. բայց տեսնելով որ սրանք ես անպատիժ անցկացան, այնուհետև մէկ օր և իցէ չնչին պատրուակ բերելով, օրը կէսօրին մտնում էին հարուստ վաճառականների, աշխատասէր արհեստաւորների և խաղաղասէր բնակիչների տները. նրանց կայքը յափշտակում, բռնութեամբ նրանց տղան ու աղջիկները քաշում տանում, լկիում և կամ կաչառք ստանալն յետոյ վերադարձնում էին ծնողացը։ Շատ անգամ բողոքարարները դիմել էին մարզպանին, բայց ոչ թէ ոչինչ էին շահուել, այլ ընդհակառակն՝ Հաշիմ խանի ուժովը սրիկաներից առաւել ես չարաչար վնասներ էին կրել, մինչև անգամ իրանց կեանքն էին կորցրել. ուստի ողորմելիները երկիւղից լռել էին։ Վերջոյ մէկ օր յիշեալ Հաշիմը գնում է Նոր-Ջուղայ սուրբ Ամենափրկիչ վանքի առաջնորդարանում արբենում, և յետոյ մտնում վանքն ու

---

[1]) «Պատմութիւն Պարսից Մ. Քաղդեացոյ», Պալկոթա, երես 225» ուր փոքր մի այլայլութիւնամբ է պատմում. իսկ ես հետեւեցայ ակնատես հայերի և Պաղարների պատմութեան։ «Ցեռ նոյնպէս Դաղկաց». 1826. երես 64—74, Պալկոթա։ Գաւառագիր Ցեր Յովհաննէս Խալիեանի, 1876 թվ. երես 14, Պալկոթա։

հրամայում է լկտի պարող պատանիներին սուրբ սեղանի առաջը պարել և երգել [1]։ Փերիոյ վիճակի հայերի Քեալանթար պարոն Սիմոն Հայրապետեանն՝ որ էն ժամանակը Ասպահան էր, լսելով էս տարաղէպ անցքը, շտապ տաղնապով գնում է վանքը, խնդրում է և յորդորում է զՀաշիմը, որ այն սրբապղծութիւնը չանէ։ Հաշիմը արբած լինելով՝ անդէն ատրճանակի գնդակով սպանում է զպարոն Սիմոնը [2]։

Հայերը գոլով երբեմն պարթաւորեալ Էմին-Ուզ-Դօվլէին, կամ չեն ուզում երախտամոռ հանդիսանալ նորա առջեւն, և կամ նրա ահիցը չեն համարձակում յայտնի բողոքել ունէք, այլ մէկ երկու անգամ դիմում են մարզպանին, տեսնում են, որ նա ուշադրութիւն չէ դարձնում իւրեանց բողոքին, թէև անճարութենէ լռում են, բայց մէկ հայ՝ գոլով Ասպահանի գլխաւոր Աուշիկիդի հետ ծանօթ, լռելեայն հաղորդում է նրան, որ և ծածկաբար ոչ միայն Սիմոնի սպանութիւնը, այլ և Հաշիմի միւս չարաչար արարմունքները ծանուցանում է շահին։ Շահն էս նամակը կարդալով՝ հետեւեալ օրը առենում յայտնում է որ մտադիր է օդափոխութեան համար Ասպահանի վրայով ուղեորիլ Շիրազ, ոչինչ նշան տալով թէ գնում է պատժել զՀաշիմն։

1240 հիջրին (1824 ամին) գարնան ժամանակ, շահը ստուար բանակով և երեսի մեծամեծներով թէհրանից դուրս է գալիս հասնում Քաշան, ուսկից խիլաներ է առաքում Ասպահանի մարզպանին, Հաշիմ խանին և նրանց միւս երեսի արքունեակներին, որպէս զի նոքա միամտանան, չփախչին և ուր ուրեք մէսջիտում բէստ [3]) չնստին։ Ասպահան մտնելու օրն էլ՝ շահը մեծ շնորհ է ցոյց տալիս նրանց։ Իսկ երրորդ օրը՝ շահը պահանջում է զՀաշիմն, և երբ իմանում է Հաշիմի պատրաստ լինելը՝ շահը հրամայում է որ նա սպասէ արարողապետի սենեակում, մինչև կրկին զնա պահանջելը։ Շահն անմիջապէս հրամայում է մարդիկ ուղարկել, որ կալանաւորեն նրա գլխաւոր արքունեակները, էնպէս արագութեամբ, որ մէկը մէկից լուր չունենան և չը փախչին։ Թէև պարսից պատմու-

---

[1]) Ֆրանսիացի Լազարեան ֆան Բօրէ (Լօժէն-Բօրէ) որպէս ականատես, էս անցքը մանրամասնաբար նկարագրել էր իւր փոքրիկ տետրակի մէջ և հրատարակել ու նրա մէկ օրինակն էլ ինձ էր ուղարկել, որը կորաւ իմ գրատան հետ։

[2]) 1853 ամին, երբ ես Ջուղայ գնացի, իմացանեցայ նրա հոյակապ տան մէջ. որն իմ ժամանակը պատկանում էր վանքին։

[3]) Ցեղի ապաստանարանի։

թիմը լռում է այս մասին, բայց ականատեսները վկայում էին, որ Հաշիմ խանի պալատից մինչև տասը հազար մարդոց զենքեր և զրահներ դուրս բերին, վասն զի նա մատաղի է եղած տասնալ բախտիար ցեղի ցեղապետությունը և ապրստամբել ընդդէմ օրինաւոր սէրութեան։ Ցիմարդ և իցէ, երբ չահի կարգադրութիւնները լուսեմամբ կատարվում են, էն ժամանակը չարը պահանջում է զՀաշիմն, և իւր առենում հրամայում որ իւր ներկայութեամբ նորա աչքերը հանեն։ Հաշիմը խոստանում է տասը հազար թուման ընծայել չահին, եթէ զինքը չկուրացնեն. բայց չահն ասում է։ Հաշի-Հաշիմ խան, ես քեզ սպանել կասի որ մի անգամ ազատուէիր աչխարհս ցաւերից և չարութիւններդ փոխարէնը անսահման ժամանակն ապրագ կեանքումը չկրէիր. բայց աւելի լաւ է աչքերդ բրել տամ, որ մնացեալ օրերդ աչխարհիս վերայ վշտով, դառնութեամբ և ապիւրարութեամբ անցկացնես և մեղքերդ քաւես, որ էլ այն կեանքում դժոխքը չերթաս։ Շանը կամենում է որ մարդպանը ևս պատժուի, բայց մեր Սրփահդար խանը բարեխօսում է ի պատիւ նորա հայր Էմին-Ուդ-Դովլէի, և չահն ընդունում է նրա միջնորդութիւնը, եթէ մարդպանը յիսուն հազար թուման տուղանք կվճարէ։ Էս դատարին երաշխաւոր է լինում Սրփահդարն։ Այսու ամենայնիւ ճիշդ և ուիչտ չարը չէ տուանում Հաշիմի խոստացած տասը հազար թուումանը, և հրամայում է նրանից պահանջել, այն պայմանաւ, որ եթէ յամառի չվճարէ, նրան չարաչար խոշտանգեն։ Այստեղ էլ Սրփահդարը հանդէս է դուրս գալիս, մէկ ամսով երաշխաւոր լինում ու զՀաշիմը խոշտանգելէն ազատում։

Այնուհետև չարը նշանակում է Ասպահանի մարզպան պարսանի Սուլթան-Մահամմէդ Միրզան և Խասրէվ խան Սրփահդարը Նրան հոգաբարձու և վէզիր, որը զիշեր ցերեկ անխոնջ փութեռանդութեամբ աշխատելով վերջացնում է արդարև քաղաքի մէջ պատահած ուաղակութիւնները և ճանապարհների վերայ կարավանները զարկելը, և չատ յանցաւորներ ձերբակալելով ու կամ Ասպահան, կամ արտաքոյ Ասպահանի խեղդել և գլխատել է տալիս, և կամ չղեայակապ ուղարկում է թէհրան. բայց և ինքն տաժանելի նեղտակրութիւններին չտակալով, նոյն ամին հիւանդանում և մեռնում է Ասպահան։

Սրփահդարի ծանօթները պատմում են թէ նա երկու անգամ քանակով արշաւել է Բախտիարի և մէկ անգամ էլ Խուզստանի ապստամբ ցեղերի վերայ. բայց որովհետև նոքա այսինքն էս պատմողները չէին յիշում էն արշաւանքների տա-

բնիթիններին, մանաւանդ և «Այաջարների պատմութիւնն» էլ լսում էր, վանորոյ և եւ զանց արի, թերևս ժամանակաւ ուրիշ պարսից պատմութեան մէջ ի լոյս ընկնին։

Լուսոյի խանի անձնական յատկութիւնների համար նրա մօտիկ ծանօթները և ծառայակիցները ասում էին թէ նա պարթև, բարձրահասակ, բարեկազմ ու գեղեցկադէմ էր, մեծ և հանդարտ աչքեր ունէր, լէն սև ու յօրքեր ու փառաւոր լէն ու երկար մօրուք։ Ծանր էր բնութեամբ և պատկառելի պետականներին։ Ֆաթ-Ալի շահը մեծ համարումն է ունեցած նրա վերայ, և շատ անգամ խորհուրդ հարցնում է լինում նրանից։ և երբ մէկ օր և իցէ յանձնարարութիւն տար նրան, ասում է լինում՝ թէ գնա այս գործը կատարէ ինչպէս հանճարդ քեզ կազդէ ու ցոյց կուայ։

Ասում էին թէ երբ շահը լսում է նրա անակնուելի մահը՝ շատ ափսոսում է և ուսուցանում է թէ, երանի կը լինէր, եթէ Խրանի մէջ նրա նման գտնէ մէկ երկու ժողովրդասէր և աշխարհաշէն պաշտօնատէր ունենայի։

Այն ժամանակը բոլոր Խրանի մէջ Լուսոյի խանը առաջին անձն էր հարստութեամբ, վանորոյ առակ էր եղած ամենի բերանում կրկնել թէ «Ես Արփաղաղ չեմ, որ քեզ գիւղ կամ այգի պարգևեմ», կամ թէ «չլինի Արփաղաղի մէկ գիւղը կամ այգին»։ Չնպէսով նորա ներքնային կրօնական զգացմունքներին, նորա ունեցած բազմաթիւ մէկտիներ, աղօթատեղիներ, թէքեանեներ (մատուռ), Արարատեան ճանապարհների վերայ կարավանատեղիներ, Սուլթանաբադում իւր պալատին կից ընդարձակ հիւրանոցը, որի մէջ կում, Մէկէնի և Քեսարբալայ կամ Մէքքէ յաճախող ուխտաւորները, մէկ գիշեր կիլնանէին ու ձրիաբար կը կերակրուէին, էս ամենը՝ ապացոյց էին նորա մարդասիրութեանն ու առատաձեռնութեանը։

Այսն սոցա համար էր որ «Երբ նորա մահուան լուրը տարածուեց, ասում է «Այաջարների պատմութիւնը», Խրանի բոլոր բնակիչների սիրար խորին տրամութեան համակուեց»,

Ամենք գաղտնի քրիստոնեայ գերիներ ուզում էին հաստատցնել ինձ թէ, Արփաղաղը իւր սրտով չէր հակուած մահմեդականութեան կրօնին։ Իսկ նրա ժամանակակից հայերն էս կարծիքը մերժում էին թէ, ոչ մի այդպիսի նշան չէին տեսել նրա մէջ։ մինոյն ժամանակը վերջիններս հաստատում էին, թէ նրա կինը (ափսոս որ սուրբ անունը ևս անցյայտ եղաւ) ծածկաբար շատ անգամ դրամ կուղարկէր իւր աղախին համանցացի պառաւ Գիւլումի ձեռամբ Հայ-հոգեորականներին և աղքատներին բաժանել և թէ Գիւլումը յայտնի և համարձակ

կը յանձնէր եկեղեցի, և ամէն անգամ էլ նշխարք կտանէր իւր տիկնոջ համար։ Կուլամ-Հիւսէյն խանը ասում էր ինձ, թէ յիշում եմ որ, Գիւլումն կամ մայրս ինձ երբեմն երբեմն սպիտակ հացի կտոր կուտային ուտելու։ բայց թէ ինչ էր այն, չէի իմանում, և այժմ երբ նշանով հարցուցիք, միտքս եկաւ։

Բ.

ՄՈՒՍԻՍ ԿԱՄ ՄՈՍԷՍ ԽԱՆ ԹՈՓՉԻ-ԲԱՇԻ.

Մուսիս կամ Մովսէս խանը Թիֆլիս էր ծնած, և ծառայում էր վրաց տիրապետողների թնդանօթաձիգ զօրքի մէջ։ Ինչպէս ասում էին, նա վրաց տիրապետողից խռովելով գընում է Պարսկաստան, և մտնում Զէքի խանի մօտ ծառայութիւն։ Սրանից յետոյ գլխին հաւաքելով մերձ քսան հայ թընդանօթաձիգ երիտասարդներ, մտնում է Ալի-Մուրադ խանի զօրքի մէջ։ Իսկ երբ ներքինի Աղա-Մահամմէդ խանը, զսպելով իւր ոստիները՝ թագաւորում է, էն ժամանակը նրա հակառակորդների զօրավարները իրենց գունդերով հնազանդում են ներքինուին, այն ինչ Մուսիսը էլ իւր զինուորակիցներով լինում է նոցա մէջն։ և այնուհետև ներքինուց հետ շատ մեծամեծ ճակատամարտների մէջ ներկայ է լինում, և իւր քաջութեան համար ստանում է թօփչի-բաշիութեան աստիճանը։ Ներքինին սպանուելէն յետոյ՝ Մուսիսը ծառայում է նրա յաջորդ Ֆաթ-Ալի շահին, յորմէ և ստանում է խանութեան տիտղոսը, որ այն ժամանակը մեծ նշանակութիւն ունէր։

Մուսիս խանի ծանօթ և կամ մարտակից զառամեալ հայ և պարսիկ թնդանօթաձիգները՝ չկարողացան նրա քաջութեամբ պատերազմելոյ անցքերը մանրամասնաբար և տեղեկութեամբ պատմել ինձ. բայց նորա անսերիւզ գրոյցներից՝ ոչ միայն արիւնարբու և անարկու ներքինի Աղա-Մահամմէդ շահին, այլ և նրա յաջորդի և նրանց նախարարների երեսին ասելը, երկարօրէն էին ճառում. սրանցից մէկ քանիսը այստեղ առաջ բերենք։

Ադա-Մահամմեդ շահն երբեմն մեկ ճակատամարտի ջերմ միջոցին չտապով մտանում է թնդանոթներին և հրամայում Մուսխին որ նրանց բերանները բարձրացնել թէ վայր իջեցնել տայ, և կամ աջ ու ահեակ կողմը շրջել տայ, Մուսխը պատասխանում է թէ «ողջ լինի շահը, ինդրեմ իմ գործում չխառնուի, այլ գնա իւր հետեւակ—հեծեալ զորքի բերանը փոփոխել տայ»։ Արիւնարբուշտ շահը լուռ և մունջ նրա մտից հեռանում է։ Երբ թնդանոթների ուժով յաղթութիւնը լրմեռամբ կատարվում է, և թշնամիները ցիր ու ցան են լինում, շահը մոտենում է Մուսխին և ասում. «Մուսխ, ես զարմանում եմ թէ ինչպէս քո յանդուգն պատասխանելու համար, էն րոպէին երբ հանած թուրս ձեռիս էր, քեզ կտոր կտոր չարի»։ Մուսխը պատասխանում է. «Ցիրեզերի աղօթարանը ինձ կտոր կտոր կանէր, բայց թշնամին էլ նրան յօշ յօշ կանէր»։ Բոլոր ներկայ եղողները սարսափում են Մուսխի այնպէս համարձակ և աներկիւղ պատասխանին վերայ։

Մէկ անգամ ևս Ֆաթ-Ալի խանը (որ յետոյ շահ եղաւ) գոռ ճակատամարտի ժամանակը մոտենում է և հրամայում Մուսխին որ մէկ տարաղէպ կերպով թնդանոթները կարգադրէ։ Նա պատասխանում է. «Խան, դու ինչ ես հասկանում թնդանոթների ձգելն ու նպատակին զարկելը. հրամցէք, գնացէք, հեռի կանգնեցէք, ու ինձանից թշնամիները ջարդելն ուզեցէք»։ Ցաղթութիւնից յետոյ Ֆաթ-Ալին ասում է. «Մուսխ, գնա իմ ախոռիցը բաց ի այս ինչ իմ սիրելի նժոյգից, որ նժոյգը կը հաւանես, քաշէ, տար, քեզ եմ պարգևում»։

Ուրիշ անգամ ճակատամարտի ժամանակ մէկ քանի թնդանոթ մէկ բլուրի վերայ չտապով բարձրացնելոյ համար՝ ձիերը յոգնած լինելով չեն կարողանում բարձրացնել. վասն որոյ Մուսխը հրամայում է իւր զինուորականներից մէկ քանիսին, որ գնան Ֆաթ-Ալի խանի թիկնապահները երիվարներից վայր թռնեցնեն, չորս կամ հինգ ձի բերեն, և եթէ թիկնապահները յամառին և չտան, ուժով խլեն։ Ադդարն, թիկնապահները չեն համաձայնում, միւս կողմից Ֆաթ-Ալին լսելով նրանց ազմուկը, ասում է «չուտ, չուտ արէք, իջէք երիվարներից և տուէք տանին, ապա եթէ ոչ՝ Մուսխը կը հրամայէ իմ տակի երիվարն ու հետակները ես տանին լծեն»։

Միւս անգամ մէկ մեծ պարսի որ առաւօտեան յարձակվում են մէկ բերդի վերայ և սկսում են չարունակ ռմբակոծել, մինչև որ երեկոյին մէկ ժամ անցած հազիւ հազ տիրում են բերդին, Ֆաթ-Ալին ներկայ լինելով տեսնում է, որ Մուսխին ողջ օրը անսուաղ չը հեռացաւ իւր թնդանոթներից,

վանորայ երբ վերադառնում է իւր վրանները, հրամայում է իւր խոնարհներից երկու ափսէ (մէջմէջի) ընթրիք տանին Մուսիսի և ընկերակիցների համար, որն իրանում մեծ հնարն էր։ Ապաստարանները ընթրիքը տանում են Մուսիսի վրանը, երբ նրանք բոլորած նստած սատանա հաց, տոխ և ընկոյզ էին ուտում։ Մովսէսը բարկանալով ասում է ապաստարաններին, վեր առէք, վեր առէք, տեսա տարէք։ Ապաստարաններն առանց իմացումն տալոյ խանի մատակարարին, չեն համարձակում վերադարձնելու, վանորայ և նոցանից մէկն երբ ուզում է գնա մատակարարից հարցնէ, Մովսէսն ասում է, ասա մատակարարին հարցնէ խանից թէ, ինչ ենն է որ խանը չատ լաւ է իմանում թէ, իւր երիվարներին, ջորիներին և ուղտերին երբ գարի, երբ խոտ, երբ յարդ և երբ առանց պէտք է տան, բայց չէ իմանում, որ իւր թնդանօթաձիգները պատ օրերը այն էլ մեծ պասին մս և իւղալի բան կամ միաւ չենն ուտել, այլ չոր մրգեղէն կամ մեղր կուտեն։» Ապաստարանները վերադարձնում են ընթրիքը, և վերադառնում մէկ մեծ ափսէ չորմրգեղէններով, և աւելացնում թէ՝ խանը հրամայեց որ վաղը անպատճառ մէկ բեռը մրգեղէն և մէկ բեռը մեղր կը ստանաք, որ բոլոր մեծ պասին ուտէք, և եթէ պակասի կարող էք մատակարարից ևս ստանալ։

Պատմում էին թէ, երբևին Ֆաթ-Ալի շահի ժամանակը մեծ բանակ էր արշաւել Բիրմանի կողմը, Մուսիս խանն էլ պէտք էր նրան ուղեկից լինէր իւր թնդանօթաձիգներովը, վանորայ նա դիմում է առաջին նախարարին և ցուցակ ներկայացնում թնդանօթների և նրանց սայլերի պակաս պատը վերանորոգելոյ, և որքան վառօտ և գնդակներ և այլն ստանալու համար։ Նախարարը ասում է, Մուսիս խան, չէ կարելի արդեօք որ էս ցուցակից մէկ բան պակասցնես։ Նա պատասխանում է թէ՝ էս քո թանաքանը չէ, որ երբ ցամաքած լինի, մէջը ջուր ածես, խառնես՝ խառնրսանես ու գրիչդ մէջը թաթախես, հանես, գրես. իսկ մենք պատերազմի ժամանակ՝ երիվարի տեղ մարդ կամ ուտակ չենք կարող լծել, և վառօտի տեղ հող ածել ու գնդակի տեղ քար ձգել թընդանօթի մէջ։

1233 հիջրին (1817—1818 ամի ցեռան) շահզադայ Հասան-Ալի Միրզայ Սուլթան-Ալի-Աբդիանդ մէկ մեծ բանակով արշաւում է դէպի Խորասան, և անտի Հերատ։ Պուրեան ընդդի մտա, Բուսիրի տեղում, Աֆղանների հետ մարտնչելիս, Հասան-Ալին իւր բոլոր բանակով անխնայափելի վտանգի է ենթարկվում։ Բայց Մուսիս խանը իւր հրազէններով երկար

մինչև դիմադրում է բազմաթիվ թշնամիներին, և անվեհեր ուժամարտությունով անասան իւր տեղիցը թշնամիների վերայ կրակի կարկտա է թափում [1]. մինչև որ, ինչպէս Հասան-Ալին, նոյնպէս և բանակը կարողանում են ազատուիլ. մասնորոյ և Հասան-Ալին նշանակում է Մուսխս խանին թոչակ տարեկան հարիւր թուման, զոր կատանար մինչև իւր մահը նրա կալուածներին. իսկ չանն առաքում է նրան պարգև երկու հարիւր թուման դրամ.

Արդեաք Մովսէսը Թիֆլիս ամուսնացած էր՝ չկարողացայ իմանալ, բայց Պարսկաստան չէր ամուսնացել. Նրա եղբայր Դաւաթը (թէպէտ էր սրանց ազգականներ, ոչ ոք չը կարողացաւ ասել) երկու անգամ Թիֆլիսից գնացել է եղբօր մօտ, և բանականին հարստութեամբ վերադարձել է Թիֆլիս. Մովսէսը մնացել է Թէհրան, 1820 թէ 1821 թուերին խորին ծերութեան մէջ, և թաղուել է Ղազվինի սասած բերդի Հայոց եկեղեցու հիւսիսային դրան առջեւ, որովհետև նա էր Ֆաթ-Ալի շահից գիտման առած, որ Հայերը այս եկեղեցին հիմնարկել են, և մինչև այն ժամանակը նոքա եկեղեցի չեն ունեցել Թէհրան.

Գ.

ԻՍՈՒԹ-ԽԱՆ ԹՕՓՉԻ-ԲԱՇԻ ԵՒ ԹՆԴԱՆՕԹՆԵՐԻ ՁՈՒԼԻՋ ԵՒ ՆՈՐԱ ՁԻՆՈՒՈՐԱԿՈՑՆԵՐԸ.

Ագա-Մահամմէդ խանը (ներքինի) յարձակվում է Թիֆլիսի վերայ 1795 թուին, վրացիները դիմադրում են նրա զօրքին, Սողանլուզ գիւղի քարիւղներից սկսած մինչև սուրբ Սարգսի Հայոց եկեղեցի նեղ փողոցը վրացիները յարդիուելով, քարակապերում փարը առ փարը խուսափելով, հասնում են Լրծանիսի այգիների տակի ընդարձակ դաշտը, ուր այժմ բանտ է շինուած և այգիներ տնկուած. իսկ քաղաքի

[1] Հետաքրքրութեան արժանի է կարդալ «Կաչաքների պատմութիւնը» և տեսնել թէ ինչ ասեր է ըրդում նա էս մարդի համար։

կողմից՝ այժմ մաքառումն, իւր ամբարներով, այգիներով ու աներով։ Այստեղ Վրաց տիրապետող Հերակլը տեսնելով, որ այլ ևս չէ կարող ընդերկար դիմադրել թշնամիներին, հրամայում է թնդանօթաձիգների գլխաւոր Իւսուֆին կամ Ցովսէփին [1]), որ մէկ հնարքով զրաղեցնէ թշնամիները, թոյլ չտայ մտնեն Թիֆլիս, մինչև ինքը գնա, յորդորէ և շտապցնէ մնացեալ ժողովուրդը, որպէս զի չմնան քաղաքում, այլ փախչին գնան և ազատուին։ Այս պատրուակ էր ի հարկէ, իսկ յետոյ երևում էր, որ իւր փախստեան համար էին այն զրոյցները։

Ցովսէփը Հերակլի հրամանին համեմատ՝ մէկ կողմից ռումբեր է արձակում, և միւս կողմից համբաւայլ նահանջում է, մինչև որ հասնում է սուրբ Սարգիս եկեղեցիի նեղ և անձուկ փողոցը [2]), որ հարաւային կողմից պատած էր Կօրչակէ ասուած լեռնովն, և հիւսիսային կողմից Սէյդաբադի այգիներով։ Շահը տեսնելով որ թշնամին անձուկ փողոցում յամառուած կեցած է և ամրակոծութիւնը չէ դադարեցնում, հրամայում է երկու խումբ զօրքից անջատուին, մէկը Կօրչակալէի կողմից, և միւսը այգիների միջից, գնան ու քամակից պաշարեն զվրացիները, միայն թէ զգուշանան թնդանօթաձիգները, մանաւանդ նոցա գլխաւորը՝ ձերբակալեն, բայց չսպաննեն։ Ճշմարիտութեամբ կատարվում է շահի հրամանը։ Ցովսէփը հաւատալով պարսիկների խոստմունքներին և երդումներին, անձնատուր է լինում իւր զինուորակից թնդանօթաձիգներով։

Հետևեալ օրը մինչդեռ շահը Հերակլի պաշատում (որ այժմ Իրատաց էկզարխի բնակարանի հարաւային կողմումն է) ատեան է կազմում, ուր ժողովում են բոլոր պաշտօնատարները՝ շնորհաւորելու նոր յաղթութիւնը, շահը հրամայում է ներկայել ինքեան զՑովսէփն իւր ընկերակիցներով։ Շահն իւրեան սեփական դժնեայ և ահարկու դէմքով գահի վերայ բազմած՝ հարցնում է «ով է ձեր գլխաւորը»։ ուխտադրուժ վրացիներն ու մահմեդականները ցոյց են տալիս զՑովսէփը։ Շահը խոր խոր նայելից յետոյ, հարցնում է Ցովսէփից՝ թուրքերէն գիտես։ Ցովսէփը խոնարհութեամբ մինչև ցգօտիկը գըլուխ է խլեցնում, որ արևելեան սովորութեամբ կը նշանակէր «այո»։

---

[1]) Սուտ էին սրա հայրը Ղարաբաղից էր գաղթուած և Թիֆլիս ամուսնացած. Ցովսէփ՝ էլ Թիֆլիս էր ծնած։

[2]) Սուրբ Սարգիս եկեղեցի և կուր գետի ՄԷՋ նոր փողոց է այժմ բացուած, որի անունն է «Աղօթոցաւոր փողոց»։

—Ի՞նչ է անունդ, կրկնում է շահը։

—Յովսէփ... Իսուֆ, ոտքիդ հողին մատաղ լինիմ։

—Իսուֆ, դու իմ զօրքից շատ մարդ փչացրիր, զինուորական կանոնով պէտք էր քեզ թրու�ա սպանէի, կամ կապել տայի թնդանօթիդ բերանում, որ ձգէին ու մարմինդ յօշ յօշ լինէր. բայց որովհետև ես պատուում եմ քաջ ոգամարդը, վասնորոյ կը ներեմ քեզ, եթէ դու երդումով հաւատացնես, որ այսուհետև հաւատարմութեամբ իմ զօրքի մէջ կծառայես։ Իսուֆ, միամիտ կացիր, որ տիեզերքի աղօթարարի [1]) շնորհը քեզանից անպակաս կը լինի։

Յովսէփն առանց ոտ և իցէ բան արտասանելոյ, կրկնում է իւր երկրպագութիւնը, վասնորոյ և շահը հարցնում է «ուրեմն համաձայնում ես տիեզերքի աղօթարանի հրամանին»։ Յովսէփն իւր կոչտ ու կոպիտ թուրքերէն արտասանութիւնով պատասխանում է թէ «ողջ լինի շահը, ես իմ ընտանիքն էստեղ թողած, ինչպէս կարող եմ գնալ հեռի և օտար երկրում ծառայել շահի ոտի հողին»։

—«Եթէ ընտանիքդ հետդ լինի, կը գնա՞ս»։

—«Անշուշտ, միայն էս գլխից յայտնում եմ (արդ եմ անում) շահի ոտի հողին, որ հաւատս չեմ փոխիլ, հա՛»։

Շահը նայում է ներկայ եղողներին ու քմծիծաղ պարսկերէն ասում է (շատ դժուար էր տեսնել նրա ծիծաղը) «էս կաւատը (գուրումատ) դաշն է կռում տիեզերքի աղօթարանի հետ». ուստի և վերադառնում է Յովսէփին ու ասում. «քեզ հրամայում եմ, Իսուֆ, որ եթէ մէկը քեզ հաւատափոխութիւն առաջարկէ, խիզէ, սպանէ, նրա արիւնի պատասխանատուն շահն է։ Գիտես որ շահի հրամանն անդառնալի է։ Է՛հ, հիմի կը գնա՞ս»։

—«Այո՛, ողջ կենայ շահը... յետոյ աւելացնում է «հապա իմ ընտանիքն ինչ անեմ»։

—«Ո՞ւր են նոքա, Իսուֆ»։

—«Ո՞վ գիտէ, գերի են ընկած, սպանուել են, կամ ինչ սարի, ձորի մէջ են այժմ նոքա»։

—«Մարդիկ կը ղրկենք, կպտրտեն, կը գտնեն, կը բերեն. թէ գերի են ընկած՝ աւելի շուտով կը գտնուին»։

---

[1]) Ռայա զրոյցը պատմեց ինձ Երևանի Սարգիս խանի եղբայր Ծերունի Հաջի-Մահամադ-Ալի-խանը, որ գլխաւոր էր Իւրեանց Շաղաղի ցեղի հեծելազօրքի վերայ, և այն օրը առնում ներկայ էր եղած։ Նա աւելացնում էր թէ, շահը նոր էր շահացած. վասնորոյ և երբեմն մտանում էր զինքը՝ այս տիտղոսով չէր անուանում, այլ գերանուններ էր գործածում։

Ցովսէփը կուչումուչ է գալիս, գլուխը խոնարհեցնում, ի վերջոյ կմկմալով արտասանում է. «Էսպէս խառն ժամանակ որտեղ կարող են նրանց գտնել»։

—«Լուսուֆ, ինչ ես կմկմում, մի վախիր, ասա, ինչ որ մտքումդ է. դու մէկ մարդ տուր, որ ճանաչէ քո ընտանիքը, թէ գնանի տակին լինին՝ թէ երկնքումը, ես բերել կը տամ»։

—«Շատը ողջ լինի, վախող մարդը թնդանօթաձիգ չէր կարող լինիլ»։ պատասխանում է Ցովսէփը։

Վերջապէս մի ասիլ, Հերակլի մարդի ասպարէզից հեռանալէն յառաջ, Ցովսէփն ուղարկում է զիւր անեղբՈ որդի Մելքու

ն, որ գնա նրա ընտանիքը ճանապարհ ձգէ Դամասկոսի կողմը իւր ծանօթի տունը ու ինքը վերադառնայ։ Վանտորդ չարը վերոյիշեալները զրուցելու ժամանակը՝ Ցովսէփն էլ պատմում էր չարին՝ Մելքուսի գնալն ու վերադառնալը, և վերջնոյս արդէն առնում ներկայ լինելը։ Շարը հրամայում է մէկ քանի երիվար տան Մելքուսին, որ գնայ Ցովսէփի ընտանիքը վերադարձնէ։

Այս զրոյցներից յետոյ՝ չարն անմիջապէս առաջարկում է և Ցովսէփի զինուորակիցներին թէ, արդեօք նոքա ևս կամենում են Ցովսէփի հետ գնալ և ծառայել իւր զօրքի մէջ։ Նոցանից ոմանք երկիւղից, ոմանք ուղիղ սրտով ընդունում են չարի առաջարկութիւնը. ուստի և չարն էլ խոստանում է նրանց խիլայել և պարգևել մէկ մէկ երիվար, և տան տան թուման պարսից դրամ, ճանապարհի ծախսի համար. և յանձնում է նրանց իւր թնդանօթաձիգների գլխաւորին որպէս հիւբ, բայց ծածկաբար ապպարում է զգոյշ կենայ, որ նոքա չը փախչին։

Եւ այսպէս Ցովսէփն ընտանիքով (որք էին կինը, երեք տարեկան որդին, զրանչը, աւագ և կրտսեր անեղբայրները՝ որ 12, 13 տարեկան էին) իւր զինուորակիցներով չարի բանակի հետ (Զաւադի կողմով) հասնում են Կրասիս գեղը, որի աջակողմում բանակում են։ Մեր հայ թնդանօթաձիգներից ոմանք կէս գիշերից քիչ թէ յառ անցած, գաղտուկ հանում են չարերը, փախցնում են գլխներնուն կամ կապում իրանց ուսերի վերայ, ընկնում են Կրասիս, լոյ տալով անցնում են մէս կողմը ու վերստին չարերը հագնում, փախչում, գնում, անեղուսիանում։ Հետևեալ օրը չարը լսում է նրանց փախչելը, պահանջում է գլուսուֆը և կէս բարկացած, կէս քաղցրութեամբ հարցնում է՝ «Լուսուֆ, պռանկորդի. քո ընկերներից մէկ քանիսը գիշերը փախչելիս, ինչպէս դու լսիցարս»։ Լուսուֆը սառն դէմքով պատասխանում է թէ՝ «ողջ լինի

տիեզերքի աղօթարանը, էն չան որդիքն ինձանից գաղտնի են փախած, եթէ ես իմանայի նրանց կոչս կատ կանէի, նրանց հերը կերէի. չարի երեսը սեւանայ, ինչպէս նրանք իմ երեսը սևացրին։» Արիւնարբու չարն իսկ և իսկ հասկանում է որ Լուսոփն ահից էնպիսի կոչտութեամբ սխալուեց, վասնզոյ ասում է թէ Լուսոփ, սրմինդ ինձ, լեզուինդ էն պռունկը դիներին գնայ. գլուխները քարը թէ գնացին, դու էիր ինձ հարկաւոր և ոչ թէ նրանք։

Բանակի հետ լինում են շատ գերիներ և գերուհիներ, որոց թիւը Կայծաների պատմութիւնը հաստատում է մինչև տասնեհինգ հազար հոգւոյ [1]), որոնք իրր թէ խոշտոան էին լինում բանակի չուելոյն, վասնզոյ չարը հրամայում է անջատեն գերիները բանակից, և մէկ քանի օր առաջ ճանապարհ ձգեն դէպի Թէհրան։ Սորա վերայ և մեր Լուսոփն էլ կամենալով ապացուցանել իւր հաւատարմութիւնը, ներկայանում է չարին և խնդրում, որ իւր ընտանիքն էլ յառաջնթաց կարավանի հետ լաւ կը լինի գնան, որի մասին հրաման տայ մէկ քանի պահանպղների, որ ուղևորեն մինչև Թէհրան։ Չարն էլ նրա խնդիրը կատարում է։ Մէլքումն էլ նոցա հետ է լինում ճանապարհորդելու։

Սորանից մէկ քանի օր յետոյ՝ չարը բանակում է Մուզան, ուր հրաշէնները և թնդանօթաձիգ զրքը նայելոյ և զինելոյ ժամանակ՝ հրամայում է Լուսոփին, որ նրանց պահապառատներն ուղղէ և թնդանօթաձիգ զօրականներն էլ կրթէ, մարզէ։ Երբ չարը հասնում է Թէհրան, թնդանօթներ ձուլելու գործարանն ևս յանձնում է նորա վերատեսչութեան։

Շահի եղբօրորդի Ֆաթ-Ալի խանը, որ էն ժամանակը Շիրազի հրամանատար էր, լսելով Լուսոփի հանրաբը, մէկ քանի չիրագեցի հայ-երիտասարդներ ուղարկում է նորա մօտ, որ կրթուին Ալաչիկայ տարին Աղա-Մահամմէդ չարն ազատվում է Շուշի բերդում, ու յիշեալ Ֆաթ-Ալին թագաւորում է, որ և առաջել ևս շնորհք է ուղարկում Լուսոփի վերայ, հետևաբար շնորհում է նրան խանութիւնն տիզաս, և հարիւրաւոր հայ և պարսիկ երիտասարդներ է յանձնում, որ նրանց ևս մարզէ, որոնց մէջ անուանի եղան Երևանցի Ալարդան-բէկ, որ և Պարսկաստան և Ֆառանսիս ըկը. Ղարաբաղցիք՝ Ստեփան

[1]) թիֆլիսի էս ժամանակը տասնեհինգ հազար հոգի հոգու թէ բանակիշներ ունէր։ Կարելի է թերևս Ղարաբաղցի, Գանձակցի, Նուխիցի 15 հազար գերի վարած լինէին, թէև էս գումարն էս շատ է։ Պարսիկների պատմութիւնը միշտ չափազանցութիւնամբ է գրում այսպիսի անցքերը։

խան, Ալլահվերդի-բէկ, Խոսրով-բէկ (Աղաթիր), Ջավադ-բէկ և Ջանի-բէկ և այլք։ Էս նոր կրթուած երիտասարդները ցրուեցան Իրանի թնդանօթաձիգ զօրագունդերի մէջ որպէս մարգիչներ, մինչդէռ ժամանակ անցնելու տեղ պաշտպանում էին իրանց ազգայիններին, և թոյլ չէին տալիս որ պարսիկները նոցա նեղացնեն. մանաւանդ ուժով թուլացնեն, և պատասխանել էր որ մահմէդականների անէրից հայ օրիորդներ և մանուկներ էին հանել, եթէ նոքա թրքացած չէին եղած։ Ժամանակով Իրանի մէջ թօփչիք, այսինքն թնդանօթաձիգ զորք, այնպէս զօրացել էր, ինչպէս Ջանկատանի Եէնիչէրիքը և տէրթիպնը նոցանից վախենում էր։ բայց ներկայ Նասր-Էդդին շահն իւր գահակալութեան օրից՝ սկսեց փոքր առ փոքր թուլացնել նրանց դէմ։ Այն ժամանակը հայ-թօփչին իրենց ստորադրեալ մահմէդականներով, կարողանում էին օգնել և պաշտպան հանդիսանալ իրենց ազգակից ժողովրդին։

1846 թէ 1847 թուականում մէկ օր շատ զօրագունդներ և գնդապետներ ժողովուած խօսում էին թնդանօթաձիգների վերայ, ուր և ես ներկայ էի։ Որմնցի երեսելի իւր տղամարդութեամբ Ասադ-Ուլլահ խան սարթիպը (զօրապետ) պարծանք ասաց տարրոներ, ով կայ այժմ հայ-իւսուփ խանի ազգակիցներից կենդանի՝ բացի Ինձանից և Ալլահվերդի խանից, այժմեան թնդանօթաձիգ սպաները բոլորն էլ ինձնակոչ (օգիզէլդի) մարդիկ են, եթէ չէք հաւատում, դուրս գան փորձենք։» Ահա ինչպէս մեծ համբաւ էր թողել Իրանի մէջ մեր իւսուփ խանը։

Աղալար-խան Էնիկօլօփիանցն ասում էր թէ «Իւսուփ խանը օրքան հմուտ էր թնդանօթաձգութեան, այնքան գիժ ու խելառ ումն էր. եթէ էն ժամանակ նրա տեղը մէկ ուրիշը լինէր, մեծամեծ պաշտօններ կը գրաւէր, բայց նա ոչ թէ փառասէր չէր, այլ և փողասէր, աչքածակ և ընչաքաղց ես չէր, նա վաղուան համար երբէք չէր մտածում. երբ նրան կիրաւոր էին որ շատ ծախքեր չանէ, փող ժողովէ սև օրուայ համար, նա զրեթէ միշտ կը կրկնէր՝ թէ Աստուած ողորմած է, էն ժամանակն էլ նա, Աստուած կհասցնէ ինձ, ինչպէս մինչև այս օրս հասցրել է։» Ասելացնում էր թէ «Ֆաթ-Ալի շահի ժամանակ եւրոպացի թնդանօթաձիգներ եկան թէհրան, փորձեցին, իւսուփ խանի հետ թնդանօթ ձգեցին, որ տեսնեն որը նրանին լաւ կգարիկ. իւսուփը գերազանց հանդիսացաւ, ուստի և շահը խրախուցեց նրան մէկ քսանմիրի շալ վերարկուով։»

1229 Հիջրի Մոհառամ լուսնին (Յունվար 1814 ամի) Աշուրէ ասած օրը, որ պարսիկների համար նուիրական օր է,

թվհրան Մոլլայ Մահամմեդ-Ալի Զեանդեանցին մեծ բաղմութեամբ դուրս է գալիս Մէսոպոտիմիայ, որ գնայ իւր տուն. փողոցումը նա պատահում է մէկ զողոզոնչն ոտերով, տատանուած մարմնով արբած մուսուլմանի, հարցնում է, էսպիսի նուիրական օրը, այս անիծեալը որտեղ է արդեօք գինի գտել խմելու, Դրա ուղեկիցները պատասխանում են թէ «հայերի տներումն», Մոլլան կցում է տուրմն ալէոք է հայերի գինի կարաները խորտակեն, որ չհամարձակուին այսուհետև այսպիսի նուիրեալ օրում խլամի երկրում գինի վաճառել. Մոլլայի ուղեկիցները (որոնք բան մեծի մասին սրիկաներ, մարդասպաններ կը մնին և մոլլաների քամակին կը շրջին, որ վերջինները պաշտպանեն գինեքանս) լսելով Մոլլայ Մահամմեդ-Ալիի բերանից այդպիսի մէկ վճիռ, յարձակվում են հայերի թաղի վերայ, ոչ միայն կարաներն են խորտակում, այլ և նոցա կեանքն էլ են յափշտակում և գիմադրողներն էլ վիրաւորում են. Մինչ այս մինչ այն՝ մեր խլուսէֆ խանը չասպով չորս թնդանօթներ քաշել տալով, տանում հասցնում է հայերի թաղը, զրաւում է անձուկ փողոցների բերանները և պատգամաւորներ է առաքում ասել խանդիճաղանցին՝ որ չը չարունակին իւրեանց անզգամութիւնը, այլ եթէ դնան թնդանօթների մօտից ցասարկ՝ առանց հայերից յափշտակած կայքերի, ապա թէ ոչ պատրաստ է գնդակոծ անել, անզգաստարար կոտորել թէ մուսուլմանները և թէ հայերը. Այդ միջոցին հասնում է Բեյանթարը մէկ քանի հարիւր զօրականներով և շրջապատում հայերի թաղը. Այսուամենայնիւ կարանների մեծ մասը խորտակուած են լինում, մէկ քանի հայ վիրաւորուած, նոյնպէս բաւականին տան կայքեր թալանուած, եթէ խլուսէֆ խանը չէր վերայ հասած՝ անպատճառ բոլոր հայերի տները թալանուած կը լինէին, և հարիւրաւոր մարդիկ վիրաւորուած և սպանուած.

Հետեւեալ օրը չաւի հրամանով Մոլլայ Մահամմեդ-Ալիի ձեռները կապում կաչկանդում են քամակին. նրա երկար միրուքը գաճով ծեփում են արքունիքի առջեի հրապարակի պաթի վերայ, որ այնքան մնայ այնպէս, մինչև սատակի.

Մոլլաները այսպիսի պատիժը մեծ անպատուութիւն համարելով իւրեանց կոչման և պաշտօնին, համագումարվում են և հրաւիրում մէկ քանի հայեր ևս (ուրա չէին կարող մերժել նրանց առաջարկութիւնը, քանզի փոքրած էին և գիտէին թէ ինչ նշանակութիւն ունի մօլլայական օրս և վրէժխնդրութիւն բառերը). գնում են չաւի մօտ խնդրում և միջնորդում, որ ներէ յանցաւորին. Շահը ներում է այս պայմանաւ, որ հետեւեալ

օրը Մօլլայ Մահամմէդ-Ալին տարագիր լինի Թէհրանից և անտեսուն չմնայ այն քաղաքը. իսկ Իսուֆ խանը արժանանում է չարի ընդհանուր և պարզև է ստանում արաբի մէկ նժոյգ։

Պատմում էին թէ, Իսուֆն այնքան զառամել էր, որ հինգ վեց տարի չէր կարողանում տանից դուրս գալ, մանաւանդ որ խլացել էր։ Թէ Թիֆլիսից բերած զաւակը և թէ Թէհրան ծնածները, ինչպէս նաև նրա կինը՝ առաջ էին վախճանուած, և Թէհրանի երկրորդ ամուսնութիւնից էլ զաւակ չէր ունեցած։

Այստեղ առաջ բերենք մէկ հետաքրքրական նամակի պատէն, զոր Դուլասպանց Զաքարիա վարդապետը գրում է Եփրեմ կաթողիկոսին.

«Գերապատիւ և Սրբազնագոյն Վեհապետ,
Գթառատ Հայր և Տէր.

«Ի 24 Յուլիսի... անվնաս հասաք ի Թէհրան, ուր մեծազօր Ֆաթ-Ալի շահ թագաւորն մեր ունէր ժամանել ի 27 նոյն ամսոյ, որպէս և եղեւ. զորոյ փառաւոր մտանելոյց գնանդամանս ի դէպ համարիմ Ձեզ առում Վեհութեան պատմաբանել համառօտապարս։ Այն ինչ հանդերձեալ էր զալ մեծազօր նորին թագաւորութիւնն, հրամայեցաւ ի քաղաքապետէ տեղւոյս ամենայն ազգաց, որք աստ, ընդառաջ ելանել արքային, ելեկոյեան, որ 26 նոյն ամսոյ, քանզի նախ քան զծագումն արեւգական հրամայելոց էր (այսինքն գալոց էր)։ ուստի գնացեալ էր մեր անդր քան զպարիսպ քաղաքին ի վրան Սանիսան խան սիրելւոյ մերոյ և ուրախութեամբ անցուցեալ զայն գիշեր [1]։ Եւ ընդ լուսանալ առաւօտուն, նուաստութիւն իմ վերադարձ և փիլնաւ և գաւազանաւ, և երկու քահանայք չուրջառաւ և Աւետարանիւ, բաց գլխով, և ամենայն կղերք եկեղեցւոյ, սարկաւագ այլով հանդերձ, ըստ իւրաքանչիւր ասոյիանի հանդերձեալք, Ջանազդեստեալ, պայծառութեամբ գնացեալ կացաք ի տեղւոյն, զոր եցոյց մեզ քաղաքապետն, և այն էր յայսկոյսն մեծի արքային եկաւորելոյց։ Իսկ յահեակ կողմն կացեալ կային բազմութիւնք ասէնցայ [2]։ Հրէայք ևս եկեալ՝ կամէին գնալ անցանել յայսկոյսն ի վեր քան զմեզ, զայս

---

[1]) Շահերը ճանապարհորդութիւնից սր և իցկ քաղաք մտնելիս, նրանց առաջնեը փիլ մէկ քանի թնդանօթներ կերթան, որա համար էլ Սանիսանը գնացել էր, որ առաւօտեան շուտով ուղեկից լինէր շահին։

[2]) Սովորութիւն է պարսկաստանի հայերի մէջ, զմահկանացուներն ան զանազանաբար տանել կ, քուրդ և կամ թուրք անուանելը։

տեսեալ քաղաքապետին՝ հրամայեաց իւրայնոց վանել զնոսա անտի բուքով դանից, և նոքա այնպէս խայտառակեալ անցեալ ի ձախակողմն՝ կային յետուստ տաճկաց զկտակարանն ընդ ինքեանս բարձեալ ունելով։ Իսկ մեզ այսպէս հանդերձեցաւ, սկսաւ դալ յառաջ քան զարքայն՝ փառք իւր մեծութեան դասուք դասուք և դրօշիւք դրօշիւք, և սոցին աչք ամենեցուն աբանչանի պչուցմամբ ի մեզ հայէին, և բազումք ևս մերձենալով՝ իբր ի աբանչելի ինչ տեսարան ի ձիգ ժամս բացարերան կալով՝ ակամայ ի բաց գնային, քանզի տակաւ առ տակաւ մերձենայր արքայն։

«Ապա՝ մինչ կարի յոյժ մօտեցաւ առ մեզ, և հեռի էր ի մէնջ իբր հնգետասան քայլիւ, սկսայ ըստ իմ բարուցն՝ բարձր ձայնիւ [1]) վստահաբար օրհնել զանգին կեանս նորին ի լեզու տաճկաց, և հետևարար երգել «զթաղաւոր գոլոմն», որոյ զթածագոյն աչօք ի մեզ հայեցեալ՝ ասաց բարձր ձայնիւ. «Խալիֆայ խօշամարդի» (այսինքն, բարի եկիր), քանզի սովորութիւն է տեղւոյս կոչել զվարդապետն՝ ոչ «մահրասայ», ըստ որում այդր, այլ «խալիֆայ». իսկ զՁեր վեհափառութիւնն անուանեն «Խալիֆայի բուզուրկ», այսինքն է մեծ։ Հուսկ ապա հրամայեաց զմուրախանն, և ինքն գնացեալ նստաւ ի դահոյս իւր, որ ի Ներգարստան կոչեցեալ տեղւոջ, այսինքն է տեղի զուարճութեան, որ, արդարև, ըստ անուանն և տուգութիւն իւր, զոր տեսեալ իսկ էմ։ և այս է տեղի հեռի ի քաղաքիս պարսպէ՝ իբր քառորդաւ միով ժամու։

Յարդ ևս ոչ է իմ տեսեալ զՄանուչար և խոսրով խանս [2]), ըստ որում վտանգ մեծ է, զի երկնչին նոքա և ես. բայց թղթագրութիւնք ընդ իրեարս ի լեզու վրաց է անպակաս, և միջնորդք բազումք անվթարք, մանաւանդ օրհնեալ Խոջայ Միքայէլ սիրելին մեր, և սպասեմք դիպող ժամու տեսանել զմիմիանս։ Աստուծով յուսամք փութով տեսանել զկատարունութիւն գործոց գլխեալ ի բարին։ եթէ այսպէս և եթէ այնպէս՝ լինելոց է բարեգոյն, և այնպիսի եղանակաւ, որ զմէնջ գոն լիցի շահզաղայն և սարդարն մեր [3]) ... Յէր իմ վեհա-

---

[1]) Արդարև, բարձր և քաջդր ձայն ունէր և մեր ժամանակում երևելի ժամասաց էր. ըստ որում նա երկար ժամանակ Ջաձկասատանում ծառայել էր, ուստի և տաճկերեն էլ լաւ կխօսէր։

[2]) Մանուչար խան Էնիկոլոփեան, և խոսրով խան Կայիմազեան թիֆլիսեցիք էին։

[3]) Երբա Միրզայ թագաժառանգն Պարսից, և «Սարդար մեր» ասելով զԵրևանցին հասկանայ։

փառ՝ որովհետև նուաստութիւն իմ ունէր ասա անագանել, սմին իրի յղեցի ի Շօշ [1]) զմեռոնն սրբալոյս և զկենդանն օրհնալիր ի ձեռն սարկաւագի մերում առ Կարապետ արք. եպիսկոպոսն, զի նուիրեսցէ... նուաստագոյն ծառայ Ձեր... Զաքարիա վարդապետ Գուլասպանց [2]) Բէհրութեանց ի 1821, 6 Օգոստոսի, ի Թէհրան»։

«3։ Դ։ Շնորհաձիր սրբոյ Աչոյդ համբոյր մատուցանեն ի ներքոյ կնքոյ իշխանէն, զամենեցուն վերոյիշեալս հաստատելով և խնդրեն առաքել վասն եկեղեցւոյ և ինքեանց, որպէս յառաջ խնդրեալ են զմի ձայնց գիրք, մէկ Աստենի Ժամագիրք, մէկ Ձայնքաղ Շարական և երկու Ցօնացոյց, մէկն վասն եկեղեցւոյ և միւսն վասն պատերազմական ինքեանց կացութեան, ըստ որում յաճախ գտանին անդր»։

«Անդի տեղն. Ցէր Յօհաննէս աւագ քահանայ։

- Թոփչի-բաշի [3]) Իւսուփ խան։
- Թոփչի-բաշի Ստեփան խան։
- Թոփչի-բաշի Թաւադ Միսայէլ։
- Թոփչի Մելքոն [4])։
- Թոփչի Թունի։
- Ստեփան խան Բալեանց։

Ստեփան խանը Ղարաբաղցի է լինում, Թէհրան ամուսնացած՝ ունէր մէկ ամենագեղեցիկ զուսար Թագուհի անուն՝ ծնած էս ամուսնութիւնից (ես սրան 1845—1846 թուերին տեսայ Թավրիզ, դարձեալ գեղեցիկ էր), զոր բաղդատեցի գոհարաավաճառ պապաղաւան Գաբրիէլը, երբ Թագուհին 10—11 տարեկան է լինում, տեսնելով սիրահարվում է նրան, վասն որոյ և ծանօթանում է Ստեփան խանի հետ, և ապա նրա հետ, և յետոյ՝ որպէս ընտանի յաճախում է նոցա տունը։ Երբ օրիորդը 13—14 տարեկան է դառնում, Գաբրիէլը յանկարծ լսում է, որ ծնողները կամենում են նրան ամուսնացնել մէկ ուրիշ երիտասարդի հետ։ վասնորոյ իսկ և իսկ խնամախօս է ուղարկում Ստեփանի մօտ ասել նրան թէ ես այսքան

---

[1]) Ասպահան։

[2]) Զաքարիա վարդապետն էր եղբայր Թրթնաջի երևելի Գրիգոր Աբելի։ Որպա ծնած էին Ս Ծ՝ Ն՝ ուն զբաղաբ իշխան Յովսեփ Բէհրութեանցի քուսրքն, վասնորոյ և լաւ մարդ նրանց Բէհրութեանց կանանչներ, ինչպես որ ինքն էրն։

[3]) Իւրաքանչիւր նահանգի թնդանոթաձիգների գլխաւորի պաշտօնական տիտղոսն էր Թոփչի բաշի։

[4]) Յովսեփի անէրոջ որդին էր, որի ազգաւ վերը խօսեցինք։

տարի է քեզ և քո ընտանեաց ինչպէս հարազատ որդի ժամանակ առ ժամանակ դրամով և անձամբ հարկատոր եմ եղած և ծառայած, որպէս զի փեսանայի քեզ, և այժմ պատճառն ինչ է որ ուրիշի ես տալիս քո դուստրն և ոչ թէ ինձ։ Ստեփանը պատասխանում է թէ՝ ես պապաղաւանի աղջիկ չեմ տալ, եթէ նա արդարն սիրում է զԹագուհին, թող ընդունի Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը, էն ժամանակը ես պատրաստ եմ աղջիկս նրան տալու։ Դարբիկը չէ համաձայնում կրօնափոխ լինել, այլ ընկնում է մեծամեծների զոնները, որ նոցա ուժովն թերևս հանի իւր նպատակին. բայց երբ տեսնում է, որ նրա չեն կարողանում ինքեան օգնել, էն ժամանակը դիմում է Շահին (գոնարեղէն վաճառելով էլ եկ և մուտ էր գալ մեծամեծների և Շահի մօտ), և բողքում է թէ էսպան տարի մերձ հինգ հարիւր թուման դրամ եմ ծախս արել Ստեփան խանի և նրա ընտանեաց վերայ, որպէս զի նրա իրանց դուստրն ինձ էին տուել, այժմ չեն տալիս, վասնորոյ խնդրում հրամայէք ծախս արած դրամս կամ վերադարձնեն, կամ իւրանց դուստրը տան ինձ։ Շահի հրամանաւ Ստեփանը Իւսուֆ խանի հետ ներկայանում է Շահին, ինչպէս զինուորականից և զվնաւոր Ստեփան խանի, կամ թէ որպէս ծեր և արդիւնաւոր աւագ ծառայող։

Շահի ներկայութեան երկարօրէն ասուլից յետոյ, Իւսուֆն ասում է նախ՝ որ «Դարբիկը այլակրօն է, որի մասին Աղա-Մահամմադ Շահից բերանացի, և Շահն, փեղանից էլ հրովարտակ ունենք, որ ոչ ոք չհամարձակուի ստիպել գնայ ծառայողները կամ նրանց ընտանիքը հաւատափոխ անելու։ Երկրորդ՝ Դարբիկը ոչ թէ 500, այլ հազիւ 200 թուման ծախած լինի, և այն էլ միասին են կերած, միասին խմած, քանզի Դարբիկը երկու անգամ ծանր հիւանդացել է և Ստեփան խանի տանն է պառկել, մանաւանդ որ էսպան տարի է Ստեփան խանի ընտանիքն են Դարբիկի չորերը կարել, կարկատել, լուացել և այլն, և այլն»։ Շահը վճռում է, թէ որովհետև Ստեփան խանը երկու հարիւր թուման է ընդունում, վասնորոյ կամ էս դուստրի կէսը վճարէ Դարբիկին, և կամ իւր դուստրն ամուսնացնէ նրա հետ։

Որովհետև Ստեփանն այնպան դրամ չէ ունենում վճարել Դարբիկին, վասնորոյ նրա բոլոր զինուորականից հայերը հաւաքվում են, որ էն դուստրն իւրանց մէջ բաժին բաժին անեն, հանդանակեն ու վճարեն։ Քանկարծ էս ժողովատեղում ներկայանում է մէկ խնամախօս հայ և յայտնում է թէ թնդանօթաձիգ անգրիացի Շիլ կամ Շի ասոիճանաւորն առաքել է

ինձ ասել ձեզ թէ, նա պատրաստ է 100 թուման վճարել Գարրիէլին, և 100 թուման էլ Ստեփան խանին բաշկը, որ Հայոց եկեղեցուն պատկան Հայոց ծէսով նորա գտեր հետ, և որդին էլ հայ մկրտուին. արդեաք Ստեփան խանը և դուք, պարոններ, որ ասա էք, կը համաձայնիք զթագուհին տալ նրան։ Բոլոր հանդիսականներն ընդունում են, և թագուհին ամուսնանում է Շիրի հետ։

Ստեփան խանը մնաւ Թէհրան և թողեց մէկ որդի Մանուչար խան անուն, որ նոյնպէս մնաւ առանց ամուսնանալոյ [1]։

Դ.

ՁՕՀՐԱԲ-ԽԱՆ ԽԱԶՆ ՇԱՀՐԻԱՐ ԵՒ ԿԱՄ ՆԱՂԴԻ։

Թէպէտ արդէն համառօտաբար ասած ենք Թիֆլիսի աւերման մասին, բայց սորա կենսագրութիւնը աւելի ևս լրութեամբ պատմելու աղագաւ, ասա ևս մէկ քանի խօսք աւելացնենք։ Վրաց զօրքը Խրամ գետի մօտը դիմադրում է ներքինի չանին, գոռ. պատերազմ մղում, յաղթվում ու նահանջում, չտաղ տաղնապով հասնում Թիֆլիս և պաշտպանողական փորձ փորձում, իսկ ներքինին իւր չուն չարունակում է։ Արանից յետոյ երկրորդ օրը յանկարծ չորս հարիւր մարդ Չէրքեզի նման զինաւորուած [2]՝ վրաց զօրքից զատուած, ճեղքում են Պարսից բանակը և յարձակվում չանի վրանի վրայ, և այնքան մօտենում են, որ վրանների առասանները սկսում են կարտել։ այստեղ ամենայնիւ, ասում է «Վաչխանների պատմութիւնը» թէ, չանը նոցա յանդգնութիւնից ոչ թէ երկիւղ կրեց, այլ տեղիցն ևս չը շարժեց, և հրամայեց իւր անձնապահներին,

---

[1] Ներբիշեալ թնդանօթագիրների կենսագրութիւններն առանձին առանձին ժողված էի, բայց մոռացա որ ամենը կորան։

[2] Ներբիշներ լինելն այն պատերազմի մէջ անշիտ է։ Ցնա Մելիք-Մելիքովի կենսագրութեան մէջ Շամի Մելիքյանի երդն Թիֆլիսը աւերելոյ համար, որ յայտնի ասում է թէ չէրքեզ չէ եղած։

որ նրանց սրով մորթեն, և մաչեցին։ Չորրորդ օրը չարը յարձակուեց Թիֆլիսի վերայ և տիրեց, և վրացիների մեծամեծներից եօթանասուն քաջ ազատազրիվ իւր սրովն սպանեց (որպէս թէ ճանճեր էին)։ Նոյնպէս զօրքը աւերեցին, աւարեցին քաղաքը, վեր ի վայր տապալեցին, տանձենից հազար չքնաղագեղ օրիորդներ, հարսներ և մանուկներ գերի վարեցին, զչափահասները և ծերերը սրախողխող արին, նրանց քահանաների ձեռները կապեցին՝ ձգեցին երասխ (փոխանակ սատլոյ կոնը) գետը և խեղդեցին։ եկեղեցիներն ու մեծամեծների տները այրեցին, և չարը ինն օր այնտեղ մնալէն յետոյ՝ դուրս եկաւ գնաց Դեանջայի վրայով։

Այս գերիների մէջ լինում է և Զօհրաբը, որ բատ ասութեան Միրզայ Գուրգէն խան Լեխիզօտիեանցի և Իշխան Գասիթի Մելիքեանցի, էն ժամանակը նա լինում է 11—12 տարեկան, Ամիրջանանց գերդաստանից, և հօր անունը Գասպար, որ բնակվում էր Բեթղեհէմ եկեղեցի արևելեան կողմը՝ կից կը գտնուեր։

Զօհրաբը նիհար և քիչուչ կազմուածք է ունենում, վանսորոյ և գերեվարները նրան չէն ներքինացնում, այլ ընծայում են Ֆաթ-Ալի շահին, որ և նոյնպէս առանց ներքինացնելու. թլփատել է տալիս և պահում իւր կանանոցում, որպէս խանաչակերտ, և յետոյ դուրս բերում կանանոցէն, որ դուրսը սենեկապանութեան պաշտօնիս սպասաւորէ նրան, և քիչ ժամանակէն նորոգում է սենեկապանութեան ասպիճան, և ապա խանութեան տիրոջս, երբ և զիւր ութներորդ դուստրը՝ Փաշայ-խանում անուն, որ համամայր էր Մահամմադ-Մելիքի-Միրզայ չանդագէի, ամուսնացնում է Զօհրաբ խանի հետ։ Այս ամուսնութիւնից ծնում են մէկ դուստր և երկու ուստրներ, վերջնոյս երէցի անունն էր Հերակլ, զոր և փառաշաւաբ կանուանէին Վալի. իսկ երկրորդինը՝ Մահամմադ-Ալի խան անուն։ Շարը լաւ փորձելէն յետոյ զՀօրաբ խանը, նշանակում է նրան զանձապահ ինքեան, վանսորոյ և ժողովուրդի մէջ նա յայտնի էր տիրոջոսոյս «Զօհրաբ խան Նազդի» այսինքն պատրաստի դրամ (պահող) իսկ պատմութիւնը նրան անուանում է «Զօհրաբ-խան Խազն-Շահրիարի», այսինքն շահի անձնական գանձապետ։

Զօհրաբ խանը երեխայութիւնից սկսեալ միչև մահը ծառայեց արքունիքի մէջ, և երբէք չիասնուեց քաղաքական կամ պատերազմական և զինուորական գործերի, վանսորոյ և մեծ վարկ ունէր ինչպէս շահի, նոյնպէս և պետականների առաջը։ Նրա ծանրաբարոյութիւնը, ողջ, համեստ

և բարեհամբոյր վարվողութիւնը տալիս էին նրա կերպարանքին մէկ առանձին ազնուութիւն, ինչպէս ականատեսները պատմում էին, և թէ նրա հաշիւները չատ ճիշտ կը լինէր և միշտ կաշխատէր, որ իւր գործերն արդարութեամբ լինէին, եթէ նա օր և իցէ մէկի հետ տարակուսական հաշիւ կամ վէճ ունենար, մինչև անգամ իւր գիւղացիների հետ ևս, միջնորդներ կընտրէր, որպէս զի վերահասու լինին և վերջացնէին հաշիւը կամ վէճը և յայտնի ասում է լինում թէ ես չահի գանձապետ, չահի փեսայ, իրաւունքի և իշխանութեան տէր, թերևս իմ հակառակորդները վախենան իմ մօտ համարձակ խօսել իրենց իրաւունքն ապացուցանելու համար, և կամ թէ կարելի է ես ինքս ուրիշ այլոք եմ նայում այն գործին, վանորոյ թող միջնորդները վճռեն, և ես մնամ առանց բամբասանաց և զրպարտութեան»։

Թէհրանի հայերից մէկ քանիսը պատմում էին թէ Զօհրաբ խանը երբ չափահաս եղաւ և դուրս եկաւ կանանոցից, սովորութիւն էր արել հետամուտ լինել և իմանալ սուրբ Ծննդեան և Մկրտութեան օրը, յորում հինգ թուման դրամ և երկու ոչխար կը դրկէր, որ Հայոց եկեղեցիի դրանը մատաղ անեն ու բաշխեն աղքատներին, և թէ չատ ուշ իմացանք, որ նրա հօր անունը Գասպար է եղած, վասնորոյ և այն օրը նա իւր հօր հոգւոյ համար մատաղ զոհել կտար և ողորմութիւն կը բաշխէր աղքատներին։

Զօհրաբը ներկայ չահ Նասր-Էդդինի թագաւորութեան հինգերորդ տարին վախճանուեց։ Ես նրան մէկ անգամ թէհրան չահի դրանը տեսայ, տարիքով բաւականին ծեր, բայց կերպարանքով առոյգ ու գեղեցկագէմ։

Ե·

ԶՕՀՐԱԲ-ԽԱՆ ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿԵԱՆՑ ԵՒ ԿԱՄ ՊԱՐ-ՎԱՐԴԵԱՆՑ ԴԱՆԶԱՊԵՏ ԱՍՊԱՀԱՆԻ [1]·

Թիֆլիսից վարած գերիներից մէկը լինում է այդ Զօհրաբը, Չկարողացայ իմանալ թէ, ինչպէս է սա ընկած Ասպահանցի Հաջի Մահամմէդ-Լիւսէյն խան Լ՝մին-Ռ՝ուդ-Դ՝օվլէի ձեռքը, բայց այսքան տեղեկացայ որ Զօհրաբը երեխայ հասակին ընկնում է յիշեալ խանի գերդաստանի մէջ, և նրա կամ նորա եղբօրների հետ կրթվում Պարսկական և արաբական գրականութեամբ, մինչև որ պարսկերէն չատ բանաստեղծութիւններ է գրում, և ի վերջոյ իւր բարերարների գերդաստանի պատմութիւնն է հիւսում, որպէս հին և երեսի ոսոմ խրանի մէջ, և ինչպէս որդէց որդի պաչտօնատարներ են լինում Ասպահան և ալքունկրում կամ այլ ուրեք։

Այն ինչ յիշեալ Լ՝մին-Ռ՝ուդ-Դ՝օվլէէն Ասպահանի հրամանատար է լինում, Զօհրաբ խանն էլ նրա գանձապետը, որ Իրանում չատ արդիւնաւոր պաչտօն էր. ուստի և Զօհրաբի եղբայր Կարապետը մէկ քանի անգամ Թիֆլիսից գնում է Ասպահան, և բաւականին կարողութեամբ վերադառնում, իսկ վերջին անգամ որ ուղղորդում է (1818—1819 թուերին) Ասպահան, և մեծ հարստութեամբ Ռաչտի ճանապարհով գնում է Սանկտ-Պետերբուրգ, և անդ մնում մինչև իւր մահը, և չատ անգամ նա եղբօրիցն էլի մեծամեծ գումարներով դրամ է ստանում և անդ միչտ ճոխութեամբ ապրում. Նոր-Ջուղայեցի ծեր հայերը պատմում էին, թէ «Զօհրաբ խանը չամուսնացաւ, ասելով թէ, բաւական է որ գիս ուժով թլփատեցին և ուժով կրօնափոխ արին մարմնով, բայց ոչ հոգւով, եթէ ես ամուս-

---

[1] Ասպահանի մէջ Զօհրաբին ճանաչողներն ու ծանօթները ասում էին, թէ նա Վարդ-Պարսիկեանց ազգատոհմից է, իսկ Թիֆլիսցիք, որոնք չատ մտ էին ճանաչում, նա և նրա եղբայրը, ասում էին՝ թէ Պար-Վարդեանց է։

նանամ. իմ զաւակներս պէտք է հոգով էլ՝ մարմնով էլ կոր-չին. ուրեմն չեմ ամուսնանալու և չամուսնացաւ էլ։

1812 թուին (1227 Հիջրին) Ֆաթ-Ալի շահը իւր կանանոցով [1]) Սուլթանիա ամարանոցը գնալիս, հրամայում է Ազա Մանուչար Էնիկէօլիանց ներքինին, որ ըստ կարգադրութեան ներքինապետ Քոթուլիի՝ կանանոցի և արքունիքի ինչ ինչ տեղերը փոփոխէ և վերանորոգէ։ Իրանի սովորութիւնն է, սենեակների առաստաղների և որմերի վերայ կտոր կտոր հայելիներ կպցնել, և լուսամուտները բաղկացած է լինում զանազան մեծութեամբ գոյնզգոյն մանր մանր ապակիներից, Ապակեառատութեան արհեստը էն ժամանակը բոլորովին, և այժմ մասամբ, հայ վարպետների ձեռին էր. որովհետև ոչ ոք չէր հաւատալ մուսուլմանին, որ ժամանակ առ ժամանակ մէկ ապակի ձգելու համար՝ նոքա մանէին կանանոցը. ինչ հանգամանք՝ հայերին կը հաւատային։ Ազա Մանուչարն էլ արքունիքի հայելիների կամ լուսամուտների ապակիներ ձգելը՝ յանձնում է Նոր-Ջուղայեցի հայերին։

Շահը Թէհրանից գուրս չգնացած՝ թագաժառանգ Աբբաս Միրզան Ատրպատականից գալիս է հօրիցը դրամ խնդրելու Ռուսաց հետ պատերազմը չարունակելու համար։ Դիւրա շահը նրա խնդիրը մերժում է և չահի Սուլթանիա չուելից յետոյ՝ թագաժառանգը ամաչափ մնում է Թէհրան, և ապա ուղևորում ամարանոց չահի մօտ։ Դա Թէհրան գալոյ ժամանակ Թավրիզից հետը բերած է լինում չորս իւրանց յաջողակութեամբ և արագաշարժութեամբ գողութեան մէջ յայտնի աւազակներ, և երբ վերադառնում համնում է Սուլթանիա, մէկ քանի օրից յետոյ լուր է տարածվում, թէ այն գողերը գիշերը մէկ մէկ ձի են գողացել թագաժառանգի ախոռից. հեծել, փախել և գնացել են Քեսաբրալայ ուխտատեղին։

Աչնան՝ շահը վերադառնում է Թէհրան։ Նրան լուր են տալիս, թէ գանձարանի մէկ լուսամուտը ձեռնհարած է։ Փոքով բանում են գանձարանի դուռը, վերհանում են լինում, որ հինգ տոպրակ ոսկի, այսինքն 30 հազար թուման դրամ պակաս է։ Կարի սասկութեամբ և խառութեամբ խուզարկութիւններ են լինում, չատ մարդիկ կալանաւորվում են, չարչարվում, պատժվում և խոշտանգվում, երեսի մարդկանց տներն են ենթարկվում հետազօտութեանց, մինչև անգամ շահ-

---

[1]) Պատ. Պարսից Մ. Թագիոգեանց, 1846, Կալկաթա. երես 279, տասամ է, նա անցքը պատահած է 1818 ամին։ Նա հետևեցի Կանչարների պատմութեան։

զաղաներէն կասկածանքի ենթարկվում, լրտես հրէաներ են ուղարկվում զանազան քաղաքներ. բայց ոչ մէկ տեղ նոցա հետքը չեն կարողանում գտնել։ Թիշեալ թագաժառանգի հետը բերած չորս զորքերի փախչելու լուրը, որ տարածվում է (քանզի ձայն է լինում թէ, իբր թագաժառանգը ինքն է գիտութիւնամբ նրանց փախցրած), ամենայն բերան սկսում է նրան ևս բամբասել, միևնոյն ժամանակն Աղա-Մամուչայն էլ է բամբասվում. թագաժառանգն էս վատ չլուծէի վերայ մէկ պատրուակ բերելով թագրիզից վերադառնում է թէհրան՝ իբր գինին արգարացնելու։ Կազմվում է մանուժողով գահակալութիւնամբ Աղըլ-Շահ չահզադայի։ Նիստերի ժամանակը թագաժառանգն աղխաստում է յանցաւոր ցուցանել զԱմանուչայն, որ և (ինչպէս վերջոյս կենսագրութիւնն մէջ ուրիշ մանրամասնաբար գրելոց ենք) կարի խստութիւնամբ և հիմնաւոր կերպով է ջրում նորա առաջ բերածները։ Մանուժողովն ևս չէ կարողանում մէկ եզրակացութիւն տալ, վանտորդ և լուծվում է։

Մէկ մէջոց անց է կենում, թէհրան մէկ հայի տան հացկերութիւնն հրաւէր է լինում։ Սեղանի վրայ հիւրերը բառկանին գինի են խմում։ Երկու ապարհասների մէջ մէկ ընչին բանի վերայ հակաճառութիւն է ծագում։ Նոցանից մէկը՝ Սարգիս անուն, որ չուայլութիւնամբ սկսել էր ապրիլ, ասում է միւսին «Պետիա, իսկը ունիա՝ ձայնդ կարէ, ապա թէ ոչ՝ հէնց էս օր գլուխդ թռցնել կուտամ»։ Վերջինս նախ լռում է, բայց երբ Սարգիսը կրկնում ու երկրկնում է իւր սպառնալիքը, նա էլ պատասխանում է թէ «եթէ իմ գլուխը թռցնել կտաս, քոնը սեղումը չի մնայ»։ Հանդիսականներն այդ զրոյցներից կասկածանց մէջ են ընկնում, քանզի Սարգսի յանկարծ չուայլութիւնամբ ապրելու համար, արդէն չունէր կար հայերի մէջ, ուստի նոքա էլ մէկ մէկ, երկու երկու հոգի փոփոխվով դուրս են գնում, Պետիանը իւր ահից իսկ և իսկ գնում է Աղա Մամուչայի պալատը և յայտնում, թէ ինչպէս է գանձարանի մէկ քսակ դրամն իւրեանց ձեռքն ընկած, և ուսլայցնում թէ, իմ բաժին դրամն ամբողջութիւնամբ խորած եմ, եթէ կամենաս, իսկ և իսկ կերթամ բերեմ. ի վերջոյ, թէ իմ մէկ ընկերս այժմ թէհրան է՝ Սարգիս անուն. իսկ միւս երկու ընկերներս Աղաման Նոր-Ջուղայումն են Մամուչայն ուրախութիւնից չհամբերելով զորձի հանգամանքը մանրամասնաբար տեղեկանալու, հրամայում է որ Սարգիսը բերեն, բանտարկեն և թոյլ չտան Պետիանը այնտեղից դուրս գայ։ Իսկ ինքը չտալ տարեալով գնում է շահին իմացնում տալիս։ Վերջինս հրամայում է իմանալ Նոր-Ջուղայ եղողների անուն-

ները, և հրամարտակ է գրում մի ենոյն օրը Հաջի-Մահամմեդ Հիւսէյն խան Լմին-Ռէզ-Դովլէին, որ հրամանատար է Ասպահանի, որպէս զի բանտարկէ այն երկու հայերը և պահանջէ նոցանից գոյնին։

Սուրհանդակ առաքելէն յետոյ, գործը քննվում է և յայտնվում է այսպէս. Պարսկաստանի պարտաների մէջ մէկմէկի վերայ երկու կարգ են լինում լուսամուտները, Հայերը երբ սանդուղք են դնում, որ վերի լուսամուտների կտրած ապակիներ ձգեն, մէկի մէջ գտնում են մէկ տոպրակ կամ քսակ ոսկի, իւրանց մէջ խօսում, խորհում և դատում են, թէ թագաւորական դրամն՝ այնտեղ չէին դնիլ. երևի մէկ տիկնի, ներքինիի կամ աղախնի է պատկանում, որի տէրը կամ մեռել է, կամ մոռացել է և այնտեղ մնացել է։ Այսպէս ասնպէս, հայ արհեստաւորները երեկոյեան դուրս գնալու ժամանակը, քսակը իւրանց գործիքների հետ խուրջինի մէջ են ձգում, դուրս ասնում, իւրանց մէջ հաւասար բաժանում, այսինքն իւրաքանչիւրն 1250 թումանոց ոսկի է ստանում։ Աղքունիքը չհաւատալով Սաեֆիանի և Սարգսի ցոյց տուածին, հրամայում է նրանց շարչարել և խոշտանգել. մինչև անգամ նրանց տանել Հայոց թաղում ևս խարել և այլն և այլն։ Գերուտնի հայերը պատմում էին թէ՝ էս միջոցում ոչ մէկ հայ ահից չէր կարողանում ցերեկով դուրս գալ տանից։

Ասպահան Լմին-Ռէզ-Դովլէն հրամարտակը ստանալով, բերել է տալիս այն հայերը բանտարկում, և գոգնոնը՝ որ նոցա բաժնից ընդ բան պակաս է լինում, առնում է պահում և սպասում երկրորդ հրամարտակին, ինչպէս որ թէհրանից հրամայած էր։ Մէկ քանի օրից յետոյ ստանում է երկրորդ հրամարտակը, որով չարը հրամայում է Նոր-Ջուղայի հայերից 30 հազար թումանը առնել, և սրով կոտորել նրանց։ Այդ սարսափելի վճիռը նա իսկ և իսկ յայտնում է մեր Զօրաթ խանին, որը տարածվում է նրա ոտների տակին և արտասուաթաց պաղատանօք խնդրում կարելիկ լինիլ էն ժողովուրդին, որ մանկանից չէ այդ գոզութիւնն։ Հաւանական է որ Լմին-Ռէզ-Դովլէն գոլով դատակից և հաւասակից Զօրաթին, տեղեակ էր նրա համակրութիւնն դէպի իւր ազգակիցները, թէ էս բօթը գաղտնի են պահում նրանք. այսու ամենայնիւ Լմին-Ռէզ-Դովլէն փութով կարգադրում է, որ մէկ քանի հարիւր զինուորականներ գնան Նոր-Ջուղայ՝ հսկեն Հայոց թաղերի վերայ, քանզի գիտէր, որ եթէ սրիկաները լսէին՝ որ հայերն այն գումարը չէին կարող վճարել, ուստի իսկ և իսկ կը յարձակուէին ու քարուքանդ կանէին զՋուղայն։ Լմին-

Ա ւ դ Դ օ վ լ է Ն քաջ գիտէր, որ հայերը չէին կարող վճարել, իսկ անարի չանն էլ հեշտ կերպով յետ չէր կենար իւր վճռից, վասնորոյ Զօհրաբ-խանի հետ շատ խորհրդածելից յետոյ, վերջինս խոստանում է որ ինչ զուսարով նա էս գործը վերջացնէ արքունիքում, այն զուսարն ինքը վճարէ մէկ տարուայ միջոցում, միայն թէ զնայերն ազատէ էդ տարափելի պատժից։ Լ մ ի ն-Ա ւ դ Դ օ վ լ է Ն զոլով բարեխնդէ մէկը, ասում է, թէ էս գործը դրամով վճարելը՝ կը նշանակէ գողութեան դրշմը դնել հայերի ճակատի վերայ, և ապացուցանել որ նոքա կարողութեան տէր են, այն ինչ մինք միշտ աչքատած ենք՝ նոքանց չքաւոր ներկայացնել. իսկ քո անունովը վերջացնելը՝ քեզ համար ես վատթար է, ուրեմն յարմար եմ տեսնում զրենք հօրս, որ երկրորդ անգամ է արքունիքում, բարեխօսէ և հանպցնէ չանին թէ չորս յանցաւորների համար մէկ անպարտ ժողովուրդ պատժել, կաղաստէ չանի համբաւը, և պատժիչ էն ժողովուրդը, որ միշտ տէրութեան երեսը պարգացրել է, քանզի ամենայն եւրոպայի գեսպաններ, ճանապարհորդներ և պաշտօնատարներ անցուդարձ անելիս, Հայերն են նրանց հիւրընկալում, պատվում և Հայոց վանքն է նրանց ասպնջական լինում. և այժմ այն եւրոպայիները երբ լսեն էս անցքը, ինչ կասեն և այլն, և այլն։ Մի ևոնոյն ժամանակ Լ մ ի ն-Ա ւ դ Դ օ վ լ է Ն տրամայում է կարարեա Գիւլզադեանցին (որ այդ անցքն ինձ պատմեց, որպէս, ականատես), որ մէկ քանի քահանաներով գնան երեսել մօլլաների և վանաւորականների մոտ, խնդրեն, աղաչեն, որպէս զի նոքա մէկ մի ջնորդութեան աղերսագիր գրեն չանին։ Հայերն էլ իւրեանց կողմից են աղերսագիր գրում։

Լ մ ի ն-Ա ւ դ Դ օ վ լ է Ն այդ ամենը զրկում է իւր հօրը թէ՝ Տրան, որն որ տեսնում է չանը զրամից ձեռն չէ վեր առնում, վասնորոյ պարտաւորվում է ընծայել չանին մէկ թանկագին ապամանդ, զոր ինքն գնած էր 22 հազար թուականով, և արդէն չանին էլ յայտնի էր էն թանկագին քարի գինը, և այնուհետև Հայերի համար ազատութեան թուղթ կամ բարեխաղիր է առնում [1]։

---

[1]) Ըստ ասութեան Կ. Գիւլզադեանի, էս գումարն Զօհրաբ-խանը վճարում է Լ մ ի ն-Ա ւ դ Դ օ վ լ է Ն, բայց բարեխաղիրը ձեռագրած է լինում նրա հօր մոտ, զոր և տալիս է Հայերին, երբ նա, այսինքն Լ մ ի ն Ա ւ դ Դ օ վ լ է Ն հայրը վերադառնում է Ղարսաստան, և որի անունը Ի. Թադիսեանցը Պարսից պատմութեան մէջ գրում է «Մագալա խան Սարբ Ղարսանցայ»։ Իսկ Տէր-Գրիգորեանցը խալիֆայը իւր «Գեաւազանագիր» ասացեալ հնգիմակութեան մէջ, տպեալ Կալկաթա, 1876 ամի, երես 14, կոչում է Ամանաղան Ալի-խան։ Կ-Ը-ը-ի

Զոհրաբ-խանը մեռած է իբր պատանեաց նեռն Իւսուֆ-խան Աբդանդարի և Մահմէտ-Ալի-Դուզի Մանուչյար խանի հրամանատարութեան ժամանակ, և մեռած է 1850 թուականի սկիզբներում.

Զ.

ՄԵԼԻՔ-ՄԱՋՆՈՒՆ (ՄԷՋԼՈՒՄ)· ՄԵԼԻՔ-ԿՈՒԼԻ ԵՒ ՄԵԼԻՔ-ԻՍՄԱՑԻԼ·

Պարսիրների պատմութիւնն ասում է թվ. 1209 Հիջրին (1795 ամի) գրուած. Ագա-Մահմէտը չանը ծանր բանտից խորին Գարսկասանից վերտին խազաց գնաց Աստրատան, պատմել այնտեղի հնասեալ և անհնազանդ խաներին. մնալանց Աստրաբադի Իբրահիմ-խալիլ-խանը [1]) և վրաստանի վալի Հերակլ խանը, որանք գրգռում էին զմիւսներին նշիկանել նրա չահութիւնը.

Շատ Աստուրի հասնելից յետոյ առաջում է գլուխը Մահմէտ-Հասան-խանը զորախումբով, որ Իրտոխ գետի վերայ գտնուած խուզափերին ասած կամուրջի վերայ հանէ, որպէս զի Իբրահիմ-խալիլը խորտակել չտայ զայն, մի ենոթի ժամանակն էլ հրամայում է Մուստաֆա խանին մէկ զորագունդով յարձակուի Կապանի (Սիսնեանց, Ղափանի) հայ բնակիչների վերայ, որ և նրանց տուներ տեղերը քանդում, կոխտանում է, ասպատակում է նրանց հօտերը նախիրներն ու ցանկերը, սուրի բերանով մաղում է այնտեղի բնակիչների մեծ մասն ու հարիւր ու վեց գլուխ ցցում նիզակների վերայ՝ բազմաթիւ մնացած

պատմութիւնը մի քանի լեզուով բարգմանուելով գրել ոչ ոք անգրի մասն է լինում է Ալիքն Ա-ի Դուզլի անունը, որին և ես հնարեցի Ցնորագոյ Մահմէտ-Ալի-Դուզլու Մանուչար խանի ֆիզուրիմեան մէջ գանուածին դրամ գրաքանչյ մասն մանրամասնորոյ կրկնած մեր գլուխ Լ.Ե. տես տեղ.

[1]) Սրան մեր մէջ անուանում են Իբրահիմ խան. ասանց Իբրահիմ բառի

գեղջիների և գեղուհիների հետ ընթանալ է ուզարքաւոր չարին, գինի տրալ չարը չարամտ գնում է Շուշի բերդը պարս

անունները ինչ են եղած. իսկ Աղաբեկ Մելիք-Բեգլարեանցը կարծիքով ասում էր, թէ դոցա մէկը պէտք է լինի Աղուանից Յովհաննէս կաթողիկոսի եղբայրը։ Բայց Մելիք-Մէջլումը պատմական անձն լինելով արքան և տեղկալներ սորա մասին ստացայ, հետեւեալներն են։

Ազգային մասնաւոր թղթակցութիւններից, աւանդութիւններից և Թուլայ պաշտօնական ծանօթութիւններից յայտնի երեւում է որ Ղարաբաղի, այսինքն փոքր Սիւնեաց հինգ մելիքների մէջ որդեց որդի երիցագոյն-երէց և հզօրագոյն-երէց եղած են Ջրաբերդ (Ջրաբերդ), Ջիւլարտերթ (Ջարաբերթ) իշխանները, այսինքն Մէջլումի պապերը։ Վերջնոցս հայրն էր [1]) Մելիք-Խարայէլի որդի Մելիք-Ադամ (Հաթամ), որ մեռել է 1781—1782 թուերին, և նրան յաջորդել է մեր առարկայ Մելիք-Մէջլումը կամ Մէջլնումը։

Վերոյիշեալ հինգ մելիքներից՝ Մելիք-Շահնազարը թրքնամի զոլով երբեմն չորսին, և երբեմն երկուսին, միշտ աշխատում է լինում կործանել զիւր ասոյները, և իրրև լրտես և աջակից Իբրահիմ-խանին՝ հաղորդում է վերջնոցս, թէ Թուլայ զօրավար կենաց Պատեմկինը գրել է Աղուանից Յովհաննէս կաթողիկոսին և չորս մելիքներին պատրաստ կենան, որ երբ իւր առաքած զօրքը դուրս գայ Բագու, նրանք էլ հասնեն ու ոչնչացնեն զիբրահիմ-խանը։ Վասնորոյ և վերջինս խորհուրդի պատրուակաւ հրաւիրում է իւր մօտ զկաթողիկոսն, զՄելիք-Մէջլումն, զՄելիք-Ադամն (Աբոյ), զՄելիք-Իսահակն և զՄելիք-Բողդանն։ Այն ինչ սոքա հասնում են Շուշի, գիշերը գնում են նրա պալատը, նա՝ Իբրահիմը, հրամայում է նրանց բանտարկել։ Մէջլումը, Աբամն ու Իսահակը բանտից փախչում են։ Երկրորդ թէ երրորդ օրը՝ 15 Յունիսի 1784 ամի, խանը հրամայում է և զկաթողիկոսն ու զԽոզդանը խեղդում են բանտի մէջ [2])։

Փախած մելիքները հասնում են Գանձակ (Գեանջայ), ուր Ջավադ-խանը նրանց կարի մարդասիրութիւնամբ ընդունելով, հրաւիրում է մնան իւր հողումն, և խոստանում է նոցա դաշտեր, հողեր, ընդարձակ գեղեր բաշխել, որպէս զի նոցա հպատակները զիւրութիւնամբ գաղթուին այն տեղերի վերայ, և միշտ

---

[1]) Խարայէլը գնաց Պետերբուրգ Մեծն Պետրոս կայսեր ժամանակ։ Թուլայ պատմութիւնը չատ գովասանութիւնամբ է խօսում Խարայէլի մասին։

[2]) Ամանք ասում են որ էս անցքն եղած է 5 Յունիսի։ Митер. для Новой Исторіи Кавказа. II. Г. Бутова. т. II. стр. 194—195, թէպէտ ամանք հաստատում են, որ նա—կաթողիկոսը, ահիցն է մեռնում։

իրանից անկախ՝ նոքա հպատակին նոցա, մելիքներին, ինչպէս Ղարաբաղ էին։ Բայց մելիքները նախագասելով զբրիստոնեայ տիրապետողն՝ քան թէ զմահմեդականը, թողնում են Գանձակը՝ գնում են Թիֆլիս։ Էս անցքին Ռուսաց պատմութիւնը ուրիշ կերպարանք է տալիս, բայց մենք այստեղ հետևենք մեր ազգային գրաւոր վկայութիւններին և ժամանակակից ականատեսների պատմածներին։

Հերակլը խնդրած է լինում Ռուսաց կայսրէն որ օգնութեան համար մէկ զօրախումբ ուղարկէ, որն էս ժամանակը հասնում է Թիֆլիս գնդապետ Բուլդակովի հրամանատարութեամբ։ Հերակլն 1787 ամին մէկ քանի հազար զօրք է պատրաստում և հրաւիրում է զՄեկլիք-Մէկլումն և զՄբոմն, որ իրենց զօրքով միանան Ռուսաց զօրքի հետ, և խաղան գնան դէպի Ղարաբաղ, և այնտեղաց գաղթեն իր հպատակ 200 տուն Բորչալուի գիւղի մուքին, որոնք խռովել գնացել էին Ղարաբաղ, և այժմ փոխանած կամենում էին վերադառնալ իրենց տեղը, բայց Իբրահիմ-խալիլ-խանը խոչընդոտն էր լինում։ Երբ էս բանները հասնում է Վրաստանի և Գանձակի սահմանագլուխը, գնդապետ Բուլդակովն նոր ի նորոյ խելքի է գալիս, թէ ոտնակոխ անել բարեկամ տիրապետողն, այսինքն, Գանձակի խանն հողն, և անցնիլ գնալ Ղարաբաղ, ընդդէմ է միջազգային օրինաց, վասնորոյ յայտնում է Հերակլին թէ «ես չեմ կարող առանց հրամանի կամ թոյլտուութեան Ջավադ-խանի՝ կատարել քո ցանկութիւնը»։ Հերակլը՝ մանաւանդ մելիքները մնում են շուարած։ Նոքա իրենց մէջ խորհուրդ են տեսնում և մտածում, որ Մէկլումը գնա Ջավադից խնդրէ, որ հրաման տայ Ռուսաց և վրաց զօրքին և Մէկլումն ու Աբովի ձիաւորներին, որպէս զի նոքա հողոմն անց կենան գնան Ղարաբաղի հողը [1]։ քանզի Ջավադն չէր ուզում ռուսների ոչ անուներ լսել և ոչ նրանց իւր հողը ներս թողնել, քանզի սասաիկ վախենում էր ռուսներից։

Ջավադ-խանը որքան առում էր զԻբրահիմ-խալիլն, այնքան սիրում էր զՄէկլումը, ուստի և շատ ցանկանում էր, որ վերջինս իւր հպատակներով գաղթուի Գանձակի հողը, ու

[1]) Էս ժամանակը Մեկիք-Խաչատուրը հաշտուել էր Իբրահիմ-խալիլի հետ, թէև էս հաշտութիւնն ես երկար չտևեց։ Մեկիքների փախչելից յետոյ, նրանց հպատակներից շատերը գերդաստաններով փախել էին և գնացել կամ Շամքոր, որ Գանձակի հոգն էր, և կամ մինս գեղերը, որոնք մնա էին Շամքորն, այսու ամենայնիւ, գարձեալ, հնազանդվում էին իւրանց մելիքներին և հարկաւոր ժամանակին ձեռաւոր զօրք էին տալիս նրանց։

ինքեան օգնական լինի իւր թշնամիների հետ պատերազմի ժամանակ. վասն զի Մէջլումի քաջ անուանը միայն բաւական էր սարսափեցնելու իւր թշնամիները. Այսու ամենայնիւ, Ջավադը երկու կրակի մէջ էր մնացել, որովհետև ոչ կարողանում էր յայտնի թշնամանալ իւր կրօնակից և իւր վերայ հզոր Իրբահիմ-խալիլի հետ, և ոչ էլ չկամենալ Հերակլի ինքնիրը, որ մէկ քանի հազար զօրքով բանակուած էր սահմանագլխում.

Եւ այսպէս, Մելիք-Մէջլումն գնաց Ջավադ-խանի մօտ, երկար խօսակցութիւնից յետոյ զորձին էապէս ընթացք տուեց. նախ Մէջլումն երաշխաւոր եղաւ, որ վրաց զօրքը, ինչպէս անցեալում՝ նոյնպէս և վերադառնալիս մեաս չտայ Ջավադ-խանի գիւղացիներին, և ամենայն ինչ գրաւով գնէ. Երկրորդ Մէջլումի և Աբովի հպատակներից օրքան տուն և ժողովուրդ գաղթեն, պարտաւորվին բնակացնել Գանձակի հողում, և այնուհետև մելիքները Ջավադ-խանից անկախ իշխեն նրանց վերայ, բայց պատերազմի ժամանակ իւրեանց զօրքովը մասակից լինին Ջավադ-խանին։ Երրորդ՝ Ջավադ-խանը, որպէս բարեկամ Իրբահիմ-խալիլ-խանին, հաղորդէ նրան, որ վրաց և Ռուսաց զօրախումբն ընդդէմ իւր կամաց՝ իւր հողովն յարձակվում են Ղարաբաղ, որպէս զի գաղթեցնեն զԲօրչալուցիները և տանին վրաստան։

Իրբահիմ-խալիլ-խանին արդէն յայտնին էին Ռուսաց զօրքի ժամանելը Թիֆլիս, Նրանց այնտեղից դուրս գալը Վրացիների հետ, և արշաւելը դէպի Գանձակ, նոյնպէս մելիքների առաջնորդելը նրանց. քանզի Մելիք-Շահնազարը ինքը վասականալով, վատացնում էր և իւր ստորադրեալ հայերն ևս, լրտեսել Մէջլումի և Աբովի չարժողութիւնները։

Հերակլ վերոյիշեալ պայմանները լսելէն յետոյ տեսաւ, որ Բուրնայնին զարձեալ չէ համաձայնում առաջ խաղալ Գանձակի վրայումը. վասնորոյ երկու հազարչափ մարդից զօրախումբ կազմեց [1]), յանձնեց իւր որդի Խլինին, որպէս զի Սարդար Օրբելեան Խլինի զօրավարութեամբ, գնան խաղան Ղարաբաղ՝ մելիքների առաջնորդութեամբ, և այնտեղ 200 տուն Բօրչալուցիները գաղթական բերին վրաստան, նոյնպէս, եթէ երկու մելիքների հպատակներն ևս կամենան՝ նրանց հետ միասին գաղթելու Գանձակ։

Իւ զօրախումբը երբ մէկ քանի ժամանակի բացակայութեամբ Գանձակից բանակած էր, իւրանը նամակ է ստանում

---

[1]) Ոմանք ասում էին թէ չորս հազար մարդ էր. բայց ականատեսները պատմում էին թէ հազիւ երկու հազար լինէր էս զօրախումբը։

իւր հօրիցը՝ թէ որովհետեւ Թուրքերի և Օսմանցիների մէջ պատերազմ է ծագել, և Բուրնաշովը հրաման է ստացել Պոռտեսմիկինից, որ չուտով վերադառնայ Թուրաստան, ուստի և Բուրնաշովն չէ համաձայնում մնալ Վրաստան կամ յառաջ խաղալ, վասնորոյ և զու չուտով վերադարձիր քո զօրախումբովը։

Դիմոաբին չէ երեւակայել՝ թէ էս վերջին լուրը ինչ հարուած էր Մէջլումին, մանաւանդ յոխորտ Աբովին, որ զոլով բնական զայրացող և չուտով բորբքւող, երբ լսում է էս լուրը, կրակ է կարվում և սկսում հայհոյել ոչ միայն գէնրալին, այլ և զրոլոր վրացիները, երիչա և կնամարդիկ անուանելով նոցա. իսկ Օրբելեան տեղեակ զոլով Մեվիք-Աբովի կրակոտ բնութեանը, ընդհատում է նրա զրոյցը, յորդորում է փաքր ինչ համբերել, խորհել և ապա բորբքուել։ Մինս կողմից էլ Մեվիք-Մէջլումն է նրան խրատում, յորդորում, որ նա համբերի։

Մեվիք-Մէջլումի նպատակն այն չէր, որ գնան միայն Թօրչալուի ժողովուրդը գաղթեն բերեն. այլ թէ էս պատճառով Հերակլի և Իրբարիմ-Խալիլի մէջ թշնամութեան որոմն սերմանուի, որպէս զի այնուհետեւ նրանք չհաշտուին և չմիանան։ Մի և նոյնն էլ կրկնում էր Ջանդաղ խանը. վասնորոյ և սա չուտով համաձայնուեց ճանապարհ տալ Վրաց զօրքին իւր հողումն անց կենալու։ Ի հարկէ Լեւոնը և Օրբելեանը մտադիր չէին նրանց նպատակին։ Զիմարդ և իգէ. Լեւոնը, Օրբելեանը, Մէջլումն ու Աբովը նատեցին, խօսեցին, խորհեցին և վերջը վճռեցին, թէ բան որում էստեղից գնալը մինչեւ Թօրչալուի ժողովուրդի բնակութեան տեղը, նրանց գաղթելն ու վերադառնալը, չորս կամ հինգ օր կամ աւելի ևս պիտի չարաչարկուի. իսկ Իրբարիմն այժմ Կարադաղի խանի հետ պատերազմ ունենալով, չէ կարող զօրախումբ կազմել՝ որ մեզ արգելաւորի վնաս, ուրեմն մենք խաղանք, գնանք նրանց գաղթենք, բերենք, այնուհետեւ իմացուեն տանք Հերակլին։ Իսկ Բուրնաշովն կուզի գնա, կուզի մնայ։ Երիտասարդ Լեւոնը աւելի ևս փութով է համաձայնում մելիքների կարծիքին։ Իսկ Օրբելեանը մնալով միայնակ, պարտաւորվում է համաձայնել նրանի կարծիքին։ վասնորոյ հրամայում են զօրքին, հետեւեալ օրը պատրաստ կենան, որ խաղան գնան ու Թօրչալուի ժողովուրդը գաղթեն բերեն։

Եւ ահա էլ գիշեր չեղած հանում է մէկ վրացի ազնուական Գօրջասպ անուն, որ Լեւոնի վերայ նամակ էր բերած Հերակլիցն, որում գրում էր թէ, հէնց նամակս

ստանաս, իսկ և իսկ քո զօրախումբովը անպատճառ վերադառնաս. քանզի գնդապետ Բուրնաբովն կրկին անգամ նամակ ստացաւ իւր տէրութիւնից, որ փութայ յետ գնայ, եւ չատ ազատեցի և խնդրեցի որ գոնէ երեք օր սպասէ մինչև քո վերադառնալը. վասնորոյ այժմ գրում եմ, որ եթէ նշանակեալ օրը չհասնիս մեզ և էս ձայնը հասնի քո չորս կողմն թուրքերին, որ Ռուսները մեզ լքեցին, վերադարձան, էն ժամանակը նրանք ինչպէս մէկ ձու կը փշրեն քեզ ու քո զօրախումբը և այնու նէ այսպէս իւլմնը իւր զօրախումբովը վերադառնում է Թիֆլիս, մելիքներն էլ հետեւում են նրան.

Փոքր ժամանակից յետոյ մելիքները նշմարում են, որ Հերակլը չատ սառնութեամբ և անտարբերութեամբ է կառավարվում նրանց հետ, մանաւանդ որ լուր է տարածվում Թիֆլիսի մէջ, թէ իբր Իրրահիմ-խանը խոստացել է 200 տուն Բօրչալուի ժողովուրդը վերադարձնէ Հերակլին, եթէ սա ձերբակալէ մելիքները և առաքէ Շուշի. ուստի մելիքները վերադառնում են Ղանձակ, առանց մնաս—բարև անելոյ Հերակլի հետ։ իսկ Ջավադ-խանը չատ մարդասիրութեամբ ընդունելով նրանց, ոռճիկ նշանակեց. բնակութեան տեղ տուեց և մէկ աւերակ ընդարձակ գեղ էլ պարգևեց Մելիք-Մէջլումին, ուր պիտի բնակուէին Ղարաբաղից փախած նրա հպատակները. իսկ Մելիք-Աբովին հարկաւոր չէր գեղ. վասն զի արդէն նրա հպատակները տեղաւորուած էին Շաքօռում կամ նրա չորս կողմումը.

Մէկ քանի տարիէ հետէ Ջավադ-խանը խաղալիք էր եղած Վրաստանի տէրապետողի և Իրրահիմ-խանի ձեռքին, երբեմն սա երբեմն նա ապօրինաւոր պահանջմունքներ էին առաջարկում, և Ջավադը չէր կարողանում կամ չէր ուզում կատարել, այլ ցանկանում էր խաղաղութեամբ վարուել նրանց հետ, մինչև տեսնէր իւր ցեղակից կայսր Ներքինի Աղա-Մահամմէդ-խանը ինչպէս է վերջացնում իւր չահութեան յանուզն ձեռներեցութիւնը. Այսու ամենայնիւ Իրրահիմը միշտ հետամուտ էր հեռացնել տկարացնելու և ապիրատացնելու Ջավադ-խանը, որպէս զի տիրէ Ղանձակին և կամ թէ անպայման հնազանդացնէ նրան ինքեան։ Ի հարկէ ծածուծ չէր Իրրահիմի էս նպատակը և Ջավադ-խանից. ուստի և վերջինս ամենատում էր գոնէ հաչա պահել զմելիքներն իրան հետ, մի և նոյն ժամանակ և Իրրահիմի զլուխը խաղել էր նրա ներքնային երկպառակութիւններով, այսինքն միւս մելիքների անհաւատարմութիւններովը, վասնորոյ և դրդում էր ծածկաբար զՄելիք-Մէջլումը և յոխորտա Մելիք-Աբովը, որպէս զի սոցա

հպատակները չկամէին հուղկահարութիւնից և ասպատակութիւնից։

Իբրահիմ-խալիլը տեսնելով, որ Ղարաբաղցիները (որ Գանձակի հողումն էին և համարվում էին մելիքների հպատակներ) անդադար յարձակվում են նորա թուրք հպատակների գլուխների և անասունների վերայ, վանորոյ և բարեկամական նամակ գրեց Ջաւադին, որ արգիլէ, թոյլ չտայ Հայերին խլդպտեն նրա հպատակ թուրքերի վերայ։ Ջավադ-խանը ի հարկէ խոստացաւ կատարել նրա խնդիրը, բայց ծածկաբար դարձեալ զրգռում էր զմելիքները։ Էս ժամանակն ուելի ևս խոցուեցաւ Իբրահիմ-խանը, երբ Մելիք-Իւսուփը դարձեալ խռովեցաւ նրանից, եկաւ Գանձակ, հետը մօտ 400 տուն գաղթականներ բերելով։ Մինչ այս՝ մինչ այն, Իբրահիմը պատգամաւոր ուղարկեց Ջավադի մօտ, որ գոնէ զմելիքը հաշտեցնէ մելիքների հետ, խոստանալով որ կազատէ և կը վերադարձնէ մելիքների ազգականները, որոնք Շուշի բերուում, որպէս պատանդներ պահուած էին։ Ջավադին օրքան և օգտաւէտ չէր այս հաշտութիւնը, այնքան էլ միամիտ էր մելիքների վերայ, որոնք քաջ ճանաչելով Իբրահիմի ուխտադրուժ լինելը, չէին համաձայնիլ և հաւատալ անձնատուր լինել իւրեանց արիւնարբու թշնամին։ վանորոյ իսկ և իսկ պատգամաւորի ներկայութեանը կանչում է զմելիքները, և առաջարկում Իբրահիմի խնդիրը։ բայց մելիքները մերժում են այն պատգամաւորութիւնը և արհամարհում Իբրահիմ-խանի խոստումները։

Իբրահիմ-խալիլը տեսնելով, որ էսպէս էլ չկարողացաւ խաբել զմելիքները, վանորոյ կեղծաւորութեամբ պատուական թուրք գրեց Ջավադ-խանին, որպէս զի կալանաւորէ այն երեք մելիքները և կապանք Շուշի յուղարկէ, ըստ որում նրանք հեւսողներ և գաւաճաններ են տէրութեան։ իսկ ինքը կը յարձակուի Գանձակի վերայ և ինքնագլուխ, առանց նրան, Ջաւադ-խանին, կը կալանաւորէ նրանց կը տանէ Շուշի։ Ջավադ-խանը կպատասխանէ թէ, զու գիտես որ Մելիք-Մէջլումը և Մելիք-Ասլանը ինչպէս Հերակլի հիւրեր՝ առ ժամանակ եկած են, կենում են Գանձակումը, ուրեմն ինչպէս կարելի է, որ առանց իմացում տալոյ Հերակլին, ես նրանց կալանաւորեմ, ուղարկեմ քեզ, որ ընդդէմ է մարդկային հիւրընկալութեան։ ուստի ես գրեցի Հերակլին, և սպասում եմ նրա պատասխանին։ [1]։ Ի հարկէ այս մէկ պատրուակ էր, որ Ջա-

[1]) Матеріалы для Исторіи Кавказа, Буткова, томъ II, страница 181. Էս ամբողջը գրած եմ ակնարկելս և ժամանակից Մելիք-Իւսուֆի (որ

վագը առաջ էր բերում, որպէս զի զրաղեցնէր Իբրահիմ-Խալիլը և ժամանակ վաստակէր։

Հերակլը, անմարդասէր Հերակլը, պատասխանում է Զավագ-խանին, որ եթէ Իբրահիմ-խանը կը վերադարձնէ 200 տուն Բօրչալուների իմ ժողովուրդը, դու ես տուր մեր մեկնելն Իբրահիմ-խանին։ Հերակլի էս պատասխանի վերայ որպէս Զավագ-խանը, նոյնպէս և մեկնելները ամենևին չեն զարմանում. վասն զի գիտէին և կը ճանաչէին նրա անհաստատ բնաւորութիւնը։ Հերակլը սորանով չբաւականացաւ, մի ևնոյն ոճով գրում է և Իբրահիմ-Խալիլին, թէ ես գրեցի Զավագ-խանին, որ եթէ դու իմ 200 տուն ժողովուրդը կտաս ինձ, նա ես կը վերադարձնէ քեզ մեկնելները։ Բայց Իբրահիմ-Խալիլ ոչ միայն իւր ներքնային երկպառակութիւնները, այլ և Գարադաղի խանի հետ պատերազմը, և Նախիջևանի խանի հետ անհաշտ թշնամութիւնը, խոչընդոտ էին լինում, որ երեսը չուռ տար Գանձակի վերայ. ուստի զինից իւր աներջ օրդի (Օսման-խանին (Աւարայի տիրապետողին), որպէս զի սա մէկ հազար ձիաւոր ժողովել գլխին, անանձնական և չանկարծ յարձակուի Գանձակի հոգի վերայ, և կալանաւորէ մեկնելները կամ որքան ձեռնտա լինի նրանց հպատակներից, գաղթել Ղարաբաղ, բայց աչառաւել որ Զավագ-խանին, կամ նրա հպատակներին վնաս չտայ։ Էս մէկ սատրկ հարուած էր որպէս Զավագին, նոյնպէս մեկնելներին, և առաջինը որքան ուշանում էր չեզոքութիւն պահպանել, բայց նայում էր, որ անկարելի էր լինում. վասն զի ինչպէս նա կարող էր այժմ անտարբեր մնալ, եթէ Ալման-խանը յարձակուէր նրա (Զավագի) հիւրերի վերայ, որոնք ապաստանած էին նրան։

Զավագ-խանը լսում է լրտեսներից, որ Ալման-խանը պատրաստութիւն է տեսնում, ուստի և կանչում է մեկնելները և հաղորդում նրանց, աւելացնելով թէ, «այժմ դուք ձեր գլխի ճարը տեսէք, և ինչ հնարք ունիք զարձ դրէք։ Էս այժմ այսքան կարող եմ ձեզ օգնել, որ խրախուսեմ իմ հպատակ հայ՝ ձեր կրօնակից մեկնելները, որպէս զի նրանք ես ձեզ օգնեն։ Մեկնիք-Մէջլումը, պատմում էին թէ, էս սարսափելի լուրի վերայ, ժողովուրդի ունեցած ի հնուց մնացած աւանդութիւնն թէ, Զարարերդի (Զորարերդի) մեկնելներն էն ժամանակ կը լինին խեղացի, երբ նեղութիւնն ամէջ կընկնին։ Վասնորոյ նա հրաւիրում է իւր և Մեկնիք-Աբրոմի հպատակների ծերերը, մին-

մեռաւ 1837 ամին), Ըղարբէկ և Մուռատ-բէկ Մեկնիք-Բէգլարեանների, Սպանդեարբէկ Խղրշանի և Մեկնիք-Ցակրէնի Մեկնիք-Մէնդրեանի պատմածներից։

սին խորհուրդ են տեսնում, որ իբրեւ ընտանիքն ու անասունները տանեն Վեղամի տարերի անմատչելի լեռնները տեղաւորեն, ամրացնեն, և ինքներնք, այսինքն օվ որ կարող է զրաւ, գէնք գործ ածել, դան ժողովեն, էն լեռների տակին սպասեն. երբ Լէզգիքը գան, նրանց տեսա կռուեն Նոցա օգնական են հանդիսանում և բռնել երկրացի հայ երիտասարդներ։ Այսու ամենայնիւ չորս կողմի [1] թուրքերը երեսակայում էին, որ Օսման-խանը և նրա անցուսպ վարիների լեռնականները չարաչար կը կոտորեն զինւորները և նրանց ընտանիքը գերի կը վարեն։ Մերժ մէկ ամիս էր, որ Մելիք-Մէջլումի լրտեսները ճանապարհների վերայ հսկում էին, որպէս զի թշնամիները դուրս գան Աւարայիցն, լուր տան նրանս թայց Աստուածային նախախնամութիւնը էապէս տնօրինեց, որ առանց արիւնհեղութեան ամենայն ինչ խաղաղութեամբ անցաւ. քանզի Օսմանխանը մէկ օր սաստիկ արբնում է Բօզաչ ասած ցրիով, հիւանդանում է, նրա զօրքը ցրվում են, և հարիւ թէ նա կարողանում է ձմեռուայ կիսումն վեր կենալ անկողնից։

Լա ժամանակները Հերակլը մէկ ուրիշ խորամանկ հնարք մտածեց, որ էր երկպառակութիւն և անհաւատամտութիւն սերմանել Չավազ-խանի և մելիքների միջև. թայց կրը տեսաւ, որ էս հնարքն էլ չյաջողեց, սկսեց ծանրաբար բանախօսութիւններ անել Իբրահիմ-խալիլի հետ, որպէս զի միանան և յանձնեն Չավազի վերայ, և զուգէ ոչնչացնեն նրա խանութիւնը, և իբրեւանց մէջը բաժանեն. քանզի որպէս մելիքները, նոյնպէս էլ չատ Ղազախեցի թուրք բէգեր, Ղրասաանից փախչում էին, գնում Չանձակ և մնում Չավազի հոմանաւորներ ներքոյ, և նշանում զՀերակլը ինչպէս մելիքները զԻբրահիմ-խալիլը։

---

[1] 1831 թուին թուականում Զաֆերաբ ազգի որդին, Հարան ու խանիքը Ղաբաբաղից գալիս կին թիֆլիս, երբ և նա գործերը վերջացրած՝ ուզեկից եղաւ նրանց Հասանը Զէյվա գիւղը, որ էր Մելիք-Իկզարեանների գաղտնի տեղը, ուր տիկին թաւուսումն հիւանդացաւ. վատթարել պարտաւորեցնելը 6 թէ 7 օր մնալ հիւր Մելիք-Իկզարեանների մօտ, երբ և մէջտ ազգա անհանների հետ փոխին էնքար լինում գրեթէ։ Դէպքս ծերունի Մեսրոպ Աստուածատուրեանն, որ էր տիկին թաւուսումնի հարազատ, հնարաւոր էր լսել Զաֆերաբի մելիքների անցեալ գնացեալ պատերազմների պատմութիւններն սկսանում վկաներից, նոյնպէս և Մելիք-Իւսուֆն կամ նրա մտերիմ ազգական մարտիկները, սիրում էին ի լուչ բերել և պատմել։ Իսկ մեր երիտասարդներս էլ ուրախութեամբ էնքար լսում նրանց ասածները, թայց ափսոս որ մեր մէջը ոչ ոք չեղաւ, որ էն կենդանի պատմութիւնները գրել էր, և այժմ էս լսածերը յիշում եմ, թայց ինչ որան, որ ոչ տարեթիւներ, ոչ տեղեր և ոչ անունները ճշգրիտութեամբ փոքր չեն գալիս, թէ ով ինչ էր արել և ինչ քաջագործութիւններ գործել։

Ինչպէս պատմեցինք, վերջինս միշտ պատերազմներ ունէր կամ Դաղիստանի կամ Դարաղաղի խաների հետ, և միայնակ չէր համարձակվում յանձնել Ջավադի վերայ, նոյնպէս էլ Հերակլն իւր ընտանեկան երկպառակութիւնների մէջ այնպէս ընկղմած էր, որ չէր կարողանում աչք բանալ. ուստի կամենում էին որ միասին երկու կողմից յարձակուին Գանձակի վերայ, բայց չէին կարողանում յաջող ժամանակ գտնել. Մինչ այս՝ մինչ այն, Աղա-Մահամմէդ-խանի ինքնակոչ զօրավարները յայտնուեցան Աւարպատականի մէջ, և պահանջում էին այդ ինքնակոչ տիրապետողներից անպայման հնազանդութիւն և հարկատուութիւն։ Ի հարկէ Դարաղաղի, Գանձակի, Վրաստանի և այլոց ինքնակոչ տիրապետողները չէին ուզում մանել նոր չահի լուծի տակ, այն ինչ 1795 թուին ամառը, ինքը, Աղա-Մահամմէդ-չահը յայտնուեցաւ Արդաւիլ, և իւր զօրքի գլխին կանգնելով՝ սկսեց յառաջ խաղալ դէպի Դարաքաղ և Վրաստան, որոց տիրապետողները նչկահում էին նրան։

Իսրահիմ-խանն ու Հերակլը սկսեցին պատգամաւորների բերանով յորդորել զՋավադը միանալ նրանց հետ և դիմադրել հասարակաց թշնամի Ներքինի Աղա-Մահամմէդ չահացեղին։ Պատում էին թէ Ջավադը՝ գուցէ երկիւղից, հակում էր նրանց առաջարկութեանը, բայց հետատես Մելիք-Մէջլումը քաջալերելով և խրախուսելով զՋավադը՝ խորհուրդ է տալիս նրան, որ ինքը որպէս Կաջար, ցեղակից նոր չահի, վեր կենան միասին գնան նրան ընդառաջ, ընդունին չահի չահութիւնը, և յորդորեն ու առաջնորդեն նրան իւրեանց մահացու թշնամիների երկիրները, որպէս զի աւարէ, աւերէ և ապիկարացնէ նրանց։ Եւ այսպէս Ջավադ-խանը, Մելիք-Մէջլումը, Մելիք-Կուլին և Մելիք-Իսմայիլը մէկ քանի տարիւ թուրք և հայ ձիաւորներով և ընծաներով գնում են չահի բանակը, որ Երասխի ափում բանակած էր, ներկայանում և յայտնում են նրան իւրեանց հպատակութիւնը. վանորոյ և չահն ընդունում է նրանց պատիւով և խիստ է, Ահա սոքա էլ առաջնորդում են զչահը մինչև Թիֆլիս։

Լաստեղ առաջ բերնէք Թիֆլիսի աւերման ականատես Շամշի Մելքոյի երեսի երգիցն երկու տուն միայն։

. . . . . .

Մելիք-Մէջլումն չուն գառնայ, Ջաւադ-խանը պատի քուշի (լակոտ),
Քաղաքը վերանայ արին, տեղը չմնեցին բայգուշի
Մելիք-Մէջլումի ազդիցը, մէկ չուն էլ չհայի Շուշի,

Էրմակ զոչուն էինք մեռ արի, խկվուսը, փշաւ, չէրքեզ [1]),
թուշի,
Ի հարկէ, չալիշ կուգայինք, կեսնէինք մէկ բան քաղաքիս,

Հազար երկու հարիւր քառասունչորս թուին ընկան գերի.
Վարդապետներին կոտրեցին, լէշ էր ածած տէրտէրների,
Ազգանք գալիաթ մալը տարան, էրմակ տներ չէին էրի,
Քաղքիս աւերելու օրը, տասնըմէկին էր սեպտեմբերի,
Բրոնիկում նստած էր ուռնը, պարն ու գան քաղաքին. . [2])

Մեկիք-Մէջլումը, Թիֆլիսը աւերելից յետոյ երկար չէ ապրում, ինչպէս երևում է էն հրավարտակից, որ 1799 թուին Ռուսաց կայսրը շնորհում է Հայոց հինգ մելիքներին. բայց նրա մէջը Մէջլումի անունը չէ յիշուած [3]).

Մէջլումը թողնում է մէկ արու զաւակ Ագամ [4]) անուն տասնչորս տարեկան. վանտորոյ միւս մելիքները ժողովում են, խորհում, և ընտրում այն երեխային հոգաբարձու զՌուստամն, որ իւրաքաջ Ալլահվերդիի որդին էր.

Մեկիք-Մէջլումների նախահանների հարստութիւնը, որ կայացած է լինում խաշնարածութեան և ձկանց ջոկերի վերայ, անպատմելի էր ցայն ատենան, որ կիսան կովերի, գոմէշների, ոչխարների և էշերի կաթը չկարողանալով կրել բերել կիսատեղից իւրեանց տունը, ստորերկրեայ խողովակներ էին շինել տուել, որպէս զի կաթը կիսատեղում ածէին խողովակների մէջ, հասկը ու գար հանէր նրանց գլուխ. Ականատեսները ասում էին թէ էն խողովակների հետքերը մինչև ցայսօր երևում էին.

---

[1]) Ազգասէրութիւնն է այս, որ չէրքեզ գորը չէ եղած, ինչպէս Գալիաթների պատմութիւնն է ասում.

[2]) Ուռն, դար և գան. վրացիների տարեմիջ տասերն են.

[3]) Ռուսերէն «Կովկաս» օրագրում տպած 1855 թուի համար 61—69, ականատես էս անդքերի Միրզայ Ջամալն ասում է թէ 1796 տարի երբ Իրքահիմ Խալիլն ու Հերակլը պաշարեցին Գանձակի բերդը, իրանց վրէժը ջավագ-խանից առնելու մտքով տպանեցին զՄեկիք-Մէջլումը նոյն բերդի մէջ.

[4]) Այս ամենանցաւ Թիֆլիս, հին քաղաքի ուսում Իսանից (որ այժմ սանն Նազարով) ազգկոյ հնա 1804 թուին, երբ Ռուսները յարձակուեցան Գանձակի վերայ և տիրեցին ու սպանեցին զՋավագ-խանը։ Այս կինը սարդենչման եղաւ Ջավագ-խանի ընտանեաց, որոնք շատ էին երկնչում Ռուսներից։ Իսանէք վրայ իշխանների դրամ հատանելոյ վարպետներն էին։ Նրանց տանը են երբեմն Մնացականովն. իսկ այժմ Համբարձում Էնթիխանեանցի տանը կից՝ վերևի կողմից անկիւնաւոր տունը։

Է

ԱՂԱ ԵԱՂՈՒԲ ՆԵՐՔԻՆԱՊԵՏ՝ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱԼ ՔՈՒԹՈՒԼԻ·

Կաջար Սուլէյման-խանը (որ յետոյ Սարդար) անցեալ դարու վերջերում ծանր զօրքով արշաւում է Արտրպատական, որի բանակումն լինում է դարձեալ Կաջար Հասան-Ալի-խանը, որ Երեւանի կողմերը ասպատակ սփռող զօրականների մէկից՝ ընծայ է ստանում, մօրից ներքինի ծնած մէկ Հայ-դերի երեխայ Յակոբ կամ Եաղուբ անուն, 15 կամ 16 տարեկան։ Ամենք ասում էին, թէ իբր նրան գերի են վարել Ալհաթփասում, իսկ այլք թէ Երեւանի բերդից մէկ կամ մէկուկէս ժամ հեռի տեղում։ Այսպէս այնպէս, նա ծնունդ էր Երեւանի նահանգի։

Ցիշեալ Հասան-Ալին՝ Աղա-Մահամմէդ-շահի ժամանակը անզանազանարար խառնվում է լինում տէրութեան գործերին, բայց նրանից յետոյ երկնչելով Ֆաթ-Ալի-շահից, հրաժարվում է ծառայութիւնից, մեկուսանում, օրերով, տարիներով դուրս չէ գալիս իւր պալատից, և զոչ էք էլ նա չէ ընդունում, պատրուակ բերելով թէ իւրանց Մարգարէն երազում հրամայեց նրան, որ չխառնուի պետական գործերի։ և թէ, նա պէտք է երեսունեւերեք կին պահէ իւր կանանոցում, ընդհանրապէս կենթարկուի չարաչար տարաբաղդութեան։ վանորոյ և նա այնքան երգեցող, պարեցող և նուագածու գեղահաս և գեղեցիկ կանայք կը պահէր իւր կանանոցում։ և միւս նրանցից չրջապատած, յարիած Հարէմախանի զուարճութիւններով իւր օրերը անց էր կացնում։

Մինչ թագաւորութեան գահ համբառնալը՝ Ֆաթ-Ալի-շահը յաճախ անգամ հրապարակաւ և իր կանանոցի մէջ ևս, ներքոյած է լինում Հասան-Ալի-խանի կանանոցի բարեկարգութիւնը, որի յանցաւորն էր համարվում երիտասարդ ներքինի [1]) Աղա-Եաղուբ Քութուլին։ Փաղաքշական բառս

---

[1]) «Кавказъ» 1876 г. № 48—52. Взятъ на Востокѣ «Ներքինին յարեալս» իմ ազիտասէրութիւնն, բայց ստորագրեալ Փ. Փ. տառերով։

Քոսթանդին նոմբրել էին նրան, նորա չափազանց փափկասուն, նազելի բնութիւնն, սակաւախօսութիւնն, վայելուչ և ճաշակով հագնելոյց, քառնելոյ և նստելոյ համար։ Դա իւր հանգամանք և քաղցր կենցաղավարութիւնն և անսպասելի անձնական յատկութիւնների համար՝ պատկառելի և սիրելի էր մեծամեծներին, մանաւանդ երեւելի տիկիններին, որոց մօտ ինչպէս ներքինի՝ արձակ-հանդարտակ և անխոչընդոտ ել և մտաւ կանէր։ Մինչև ցայսօր նրա խմաստալից զրոյցները, հանճարեղ առածներն ու հրաշանգիւղ խրատները, ծեր պալատականները՝ մանաւանդ զառամեալ ներքինիները յիշում էին, երբ ես թէՀրան էի, և սրտցիկ բաւական ժողոված էի, բայց ոչնչացան, թէև մէկ քանիսը մոռս է՝ ասեմ։ Դա ասում է լինում. տիրանում առած է, թէ խրնմանքը հաւատի կէան է, բայց ես ասում եմ՝ հաւատը խրնմանքի կէան է։ Եթէ ցանկանում ես մեծ ումն լինես, պատուէ փոքր մարդիկը։ Ուրիշների հրամանները կատարել, որ դու ես հրամայող դառնաս։ Ցանկանում ես մէկը ճանաչես ինչպէս մարդ լիներ, հետաքրքրուր եղիր, թէ ինչ բնութիւն մարդիկ են նրա ծանօթները։ Պատուէ թշնամիդ, որ նա ես մոռանայ քէն և ոխն, որ տաժում է դէպի քեզ։ Գովելի տղամարդը նա է, որ չէ ոտնակոխում իւր թշնամին, երբ վերջինս ապիկարուած է, և այլն։

Այն ինչ Ֆաթ-Ալին զարգանում է չոնութիւնն գահի վերայ, մեզ ծանօթ Հասան-Ալի-խանը՝ որպէս ընտրաւորութիւնն և անձնանուիրութիւնն առհաւատչեայ, ընծայ է առաքում երկու չքնաղագեղ Ցանկաստանից բերած հայուհի օրիորդներ և երեք ներքինիներ, որոց մէկը լինում է մեր առարկայ Աղա Լաղուբ-Քուիթուին, մէսաբ — Աղա Բանրամ Մելիք-Շահնազարեան (ներքինի)։ Իսկ երրորդը Աղա Իբրահիմ-Խանի, այսինքն երկրորդ կամ կրտսեր ասացեալ հայ ներքինին։

Շատ ժամանակ չէ անց կենում, Քոսթանդին սասնալով գահի կանանոցի ներքինապետութիւնն պաշտօնը, հետզհետէ մեծ յեղափոխութիւններ է անում երիտասարդ գահի կանանոցի մէջ։ Ընդարձակացնում է Հարեմ-խանէն, մեծացնում է գաւիթները և նրանց մէջ պարտէզներ, հատացնում է սենեակները, բաժանելով տիկինները մէկ քանի դասակարգեր. սահմանում է նոցա ուռնիկ, իրաքանչիւրին՝ իւր ինչ սերուն. գից ծառան և սրժանաւորութեան համեմատ։ Բաշխում է նրանց առանձին առանձին ազատիներ, խ ա ն ա ջ ա կ ի ր տ ն ե ր ը և զառամեալ դռնապաններ նշանակելով։ Չէ մոռանում ներքինիները, որոնց ուռնիկ և բոլոր սրժանաւորութեան տիրոջներ բաշխելով, զորօրինակ Թ օ ջ է Ա ղ ա, Թ օ ջ է-Ի մ ա շ ի,

Դայիբը-թօջէ-Բաշի. Ի՛նչ-Ազատ. Դայիբ-Ի՛նչ-Ազատ. երկար միջոց չանցած՝ նա մնալն էն ասոնցման դիւթական ազդեցութիւն է ստանում չահի և նորա տիկինների վերայ, որ վերջիններին համար ես հնարում է տիտղոսներ, իւրաքանչիւրի անձի գեղեցկութեան, հանճարին, շնորհքին և ձիրքին համեմատ։

Մելիք-Ղասում-Միրզան պատմում էր, թէ Ազա-Եաղուբը ժողովում էր անչափաւոր չահզադաները մէկ մեծ դահլիճում, նրանց կրթում էր, խրատում էր, թէ ինչպէս հագնուին, ինչպէս բազմին և յառնին կանանոցում կամ արտաքոյ կանանոցի, պետականների կամ իւրանց ստորադրեալների հետ ինչպէս խօսակցին, նրանց փաղաքշին կամ նոցա վերայ զայրանան. ինչպէս անցնին փողոցների կամ հրապարակների միջով, ուր խուռն բազմութիւն լինի և այլն, և այլն։ Դա սահմանում է արքունիքի մէջ խանչակերտների և անչափաւոր ներքինիների համար ուսումնարան, որպէս զի նոքա ես այնտեղ կարդալ գրել սովորին և կրթուին բարոյականութեամբ։ Պարոյ, երգեցող և նուագածու կանանց համար կազմել է տալիս թանկագին, ականակուռ նուագարաններ և զանազան երաժշտական և պարելու գործիքներ։ Հետևաբար կանանոցի համար նշանակում է զանձապետ, և թանկագին զարդերի և պաճուճանքների համար առանձնապատ, որպէս զի տիկինները հարկաւոր ժամանակը նրանցից ստանային իւրանց կերպով և վերադարձնէին։

Եաղուբի ձեռնասուն ներքինիներից երեքը կարողանում են փութով նմանել նորա ինչ ինչ բարոյական յատկութիւններին. վատաբոյ և շատ առաջանում են։ Առաջինն էր դարձեալ Երևանցի Ազա Եաղուբ կամ Միրզայ-Եաղուբ Մարգարեանը, որ երեսի է Ռուսաց դեսպան Գրիբոյեդովի սպանուելոյ ժամանակ։ Երկրորդը՝ Մանուչար-խան Նիկոլօթիանցը, և երրորդը՝ Խոսրով-խան Կայթմազանցը, որոց կենսագրութեանց մէջ խօսելոց ենք։

Քանի՛ անգամ, ինչպէս որ նրա ժամանակակից գերի ներքինի հայերը պատմում էին, թէ և արտաքուստ գինքը մուսուլման էր ձևացնում, բայց ի ներքուստ ջերմեռանդ հայ էր և քրիստոնեայ. և թէ նրա խրախուսելով և յորդորելով Երևանից բերած գերիներն ու գերուհիները ամենի հաստատ էին մնում իւրանց կրօնի վերայ, քան թէ այլևայլ կողմերից բերածները, և թէ, եթէ մէկը մուսուլման չլինէր գերիների մէջ, նա կը տարիէր հայերին խօսելու Մանուչար-խանը նորա խորհուրդով է Թիֆլիսից թէչրան բերել տալիս իւր մայրը,

որպէս զի հայ գերուհիներն ու գերիները կարողանային երբեմն երբեմն այցելութեան պատուական Ասկուտ-խանումի սենեակում ժամերգութիւններ լսել, և կամ հաղորդվիլ Քրիստոսի սուրբ մարմին և արիւնից։

Արդարև, ցաւալի է որ այսպիսի հնոյնուսակ անձանց կենսագրութիւնները մուրալով ժողովել և ապա կորցնել յուսալով, այսու ամենայնիվ այսուհետ պատմիւք մէկ անգամ, որի մէկ մասը վերաբերում է Քուիտուլիին և որը ապացուցութիւն է վերոյիշածներիս։

Թիֆլիսի Մօղնի եկեղեցւոյ միաբան և յետոյ աւագ քահանայ Տէր Աւետիք Պապոսիր, և Ռեթիզնէմ եկեղեցւոյ աւագ քահանայ Տէր Յովհաննէս Դաւիթեանը, որ լսած էր իւր հայր Մէլիքսէթից [1]) պատմեցին ինձ այսպէս։ Տէր Աւետիքն ասաց ինձ թէ «ես Մօղնում դեռ ես տիրացու էի, քսան տարեկան կլինէի, որ երկար ժամանակ լսում էինք՝ թէ Ախտայ (Ներքինի Ագա-Մահմատի) խանը հոս գալիս է, գալիս է, բայց հաւատ չէինք ընծայում այդ եկաւ-եկաւին։ Մէկ օր առաւօտեան ժամերգութիւնն աւարտեցինք դուրս եկինք, յանկարծ լսեցինք թէ Ախտայ խանը հասել է Սղաղլուղի [2]) քարկապները։ Միաբաններս բոլորուեցանք եկեղեցիի պատում, ասեցինք, խօսեցինք, լսեցինք, խորհուրդ տեսանք, ի վերջոյ ընդունեցինք ծերունի և փոքրուած աւագ քահանայ Տէր Գէորգի կարծիքը. այսինքն, գնանք, ժողովենք մեր ընտանիքը բերենք ածենք նոյն եկեղեցիի հրապարակի հիւսիսային արևմուտեան կողմն՝ այժմ կորիզենց տան մէջ, որ ամրացուն էր և պատսպարուելու համար աւելի յարմար. քանզի համոզուած էինք, որ թուրքերը անպատճառ կը մտնեն քաղաք. որովհետև Հերակլ Պարսին, ինքն իւր ընտանիքը փախցրել էր, և տնային երկպառակութեան համար մէկ երեսի զօրք չէր պատրաստել, ինչպէս ծերերը պատմում էին։ Ջիմրդ և իցէ բոլոր միաբանները գնացին, իւրաքանչիւրն իւր ընտանիքը բերեց, ածեց այն

---

[1]) Նա Տէր Մելիքսէթի բերանից պատահի ժամանակս լսած էի, Դեռ երբ մեր տանը հօրս էր պատմում, և նա հետաքրքրութեամբ լսում էի, և նա յաճախ պատմելիս էր խառնում, կարծեմ նրա համար, որ թերևս անվայելուչ ինչ ինչ անցքեր էր պատմում, և չէր ուզում որ ես լսեի։ Երկրորդ անգամը Պոլսոյ վարդապետ Դարապղլեանի էր նա ճառում պատահանը, ինչ վարկի դատապարտելի էինք կարդում։ Ահա սա էր պատճառը, որ ես դիմեցի Տէր Աւետիքին և Տէր Յովհաննէսին, որպէս զի մատնացուցեն նրանք յուշ բերեին ինձ, ինչ որ լսած եմ վերջինս-ս հօրից։

[2]) Նա Սղաղլուղը Ռէկ գիւղ է, Թիֆլիսից 7—8 վերստ հեռաւորութեամբ։

տան մէջ և մնաք երիտասարդներս էլ կուռ զինուորու

տեսնում էին որ էս միջոցով չեն կարողանում ասել տալ, այնուհետև սկսում էին դաշտումով և թրով ծակծկել. ուստի և չատերն արիւնքամ էին լինում ու գետնի վերայ թաւալելով անշնչանում. Երբ էս հնարքով ևս չեն արդիւնաւորվում, կրակ էին վառում հրապարակի մէջտեղը, տակի տակ տալով տանում էին կրակի մօտ զՏէր Գէորգն ու Ծերունի Տէր Պետիքանը, կէմ կէմ կախաներ էին դնում նրանց գլխին, որից նոքա շուտով մեռնում էին։ Էս խոշտանգանքը նրա համար էր, որ միւսները տեսնելով երկիւղից դարձներ ցոյց տային։ Դաշնցին Պարսիկները, շարունակում էր Տէր Աւետիքը, որ էս անիրաւութեամբ ևս չվատաչեցան ինչ, քանզի աղքատ հոգեւորականներին ով էր տուել թանկագին բաներ որ գարանի մէջ էին ածել, մանաւանդ մեզանից ոչ ոք իւր տանը չէր, օտարի տանն էինք ժողովուած։ Վերջապէս երեխաների, պատանիների և օրիորդների և մէկ քանի նորահարսների ձեռները կաչկանդեցին, և մէկդմէկի հետ կուռ ու կապ տուին, որ չփախչին (և մէջ սրաց և ևս էին) ինչպէս ոչխար։ շրջապատեցին, քշեցին տարան մեզ Սօղանլուղ գեղը, ուր երեք օր պահեցին։ Հայրս վախճանած էր, եղբայր և քոյր չունէի, մնացի մէկ մայր ունէի 60—65 տարեկան, նրան էլ ինքան աքացիով զարկեցին, որ կիսակենդան լինելով չկարողացաւ քայլել, վանտրոյ մնաց քաղաքումը։ Զորբորդ օրն էր, էկաւ գիշէր կը լինէր, երբ նկատեցի որ պահապանները խոր քնած են, վեր կացայ. կամաց կամաց հեռացայ, գնացի մայ կուր գետը (որ այնտեղից 20—30 քայլ հեռու էր) լողալով անցայ միւս կողմը, փախայ գնացի Կախէթ։ Երբ իմացայ որ թուրքերը դարդակել են քաղաքը, գնացել են, վերադարձայ, մօրս կենդանի, բայց ինչպէս կենդանի՝ ասա, ծեծելիցը կիսակենդան գտի, մինոյն ժամանակ եկեղեցիներն էրած, աւերած, սուրբերը քանդուած և բրիչակ արած էին։ Մէկ քանի շաբաթ անցաւ թէ չէ, տեսայ ինձ հետ գերի ընկած Նորընծայ Տէր Ցակոբն (քօռայ) որ թուրքերի ձեռից փախել էր. պատմեց այսպէս թէ՝ «որ տեղացը՝ սիրացու. Մելքիսէթն էլ գերի էր ընկել. բերեցին նրան էլ խառնեցին մեր խումբի մէջ։ Գնանչայ չհասած՝ մեր կարաւանն իջևանեցաւ։ Կուր գետի ափից փոքր ինչ հեռու Երեկոյեան պահին ինձ ու Մելքիսէթին մէկ մէկ թիֆլիսից կողոպտած պղնձէ կուժ տուին, որ երկու պահապանի հետ գնանք ջուր բերենք գետից։ Ճանապարհին հարցրի. «տիրացու Մելքիսէթ լոգալ գիտես։ Դա ասաց. ինչի համար ես հարցնում։ Ասացի ես լոգալ գիտեմ և մտադիր եմ մտնել կուրը՝ որ լոգալով անց կենամ, փախչիմ. եթէ փախայ ազատուեցայ, կերթամ

քաղաք, ազգականներիդ կասեմ, որ փող զրկեն քեզ էլ ազատեն։ Վանդոյ խնդրում եմ փախչիս Էնքան չը յայտնես պահապաններին. մինչև որ լողալով գեսի կէսը հասնիս։ Դա պատասխանեց, թէ Աստուած խորհուրդ կատարէ։ Փոքր ինչ մնացել էր հասնէինք գեսի ափը, ես չեղուեցայ, որպէս թէ հարկաւորութեան եմ գնում։ Փաչուեցայ մէկ փոս տեղ, պպզեցի կուժի պնդանը պինդ պինդ խցկեցի բերանը, որ ջուրը անց չկենայ, և ապա վազվազ գնացի ու չորերովս ընկայ գեսը, որ բաւականին վարար էր, երբեմն կուժը տակիս, երբեմն կողքիս տակում բռնելով և երբեմն յենլով նրա վերայ, գեսի կէսը կարելի էր անց էի կացել, և ահա պահապանները տեսան, սկսեցին ատրճանակ ձգել, ինձ բարձր ձայնով սպառնալ, հայհոյել, բայց ոչ էր նրանց ականջ դնողը. ես լողալով անցայ գեսը, միւս ափումը կանգնեցի ու սկսեցի նրանց էլ ես հայհոյանքներ ուղղել ու հանեցի շորերս քամեցի որ հագնեմ գնամ. Ցեսնում էի որ թուրքերը իմ վրէժը խեղճ Մելքիսէթիցն էին հանում՝ սատակի գանակոծելով։ Եւ այսպէս կուժն ուսումն քաշուեցայ գնացի ամնտեղի գեղերի մէկում ծախեցի վեց մնալթունով (6 ռուբլի), երեքը մսեցի, և մնացեալը բերի Թիֆլիս, որ տասը մնալթունի գործ տեսաւ քաղաքի էն դառն աղքատացած ժամանակին։

Պարսիկները տանում են Մելքիսէթը Գանձակ, ուր վերջինս մէկ հայից վեց թուման (60 ռուբլի) փոխ է առնում վճարում գերեվարներին, ազատվում վերադառնում Թիֆլիս. իմանում է որ գերի են ընկած իւր կինն ու աներոջ որդի Աւետիքը և աներն էլ խոշտանգելից մեռած է. վանդոյ ինքը գնում է երկու անգամ Թաւրիզ, Համադան և Քիրմանշահ, որտեղում չէ կարողանում գտնել իւր կինը. վերադառնում է Թիֆլիս, ուր լսում է ազատված, վերադարձած գերիներից, որ նրա կինը Թէհրան է գտնվում՝ այս ինչ խանի կանանոցում. վանդոյ երրորդ անգամն է գնում Պարսկաստան։ Այս անգամ նա ճանապարհին ուր և ինչ եղիսկոպոսից (որպէս Ցէր-Յովհաննէսը, նոյնպէս և ես մոռացել էինք նրա ձեռնադրողի անունը) քահանայ ձեռնադրուած հանում է Թէհրան, և հարցնելով իմանում է որ նրա կինը գտնվում է չահի հարեմը որդի մէկ խանի կանանոցում. վանդոյ դիմում է չահ երեսի մարդկանց, բայց ոչ ոք յանձնառու չէ լինում միջամուխ լինել այս վտանգաւոր գործին. ի վերջոյ գնում է մեր Աղա Կազալ Բուխուլի մօտ, որ և յայտնի ասում է, տէր-տէր, ես չատ անգամ եղած եմ այդ խանի կանանոցում և տեսած եմ, որ այնտեղ քո կնկայ վերայ շնորհալի և գեղեցիկ կին

չկայ. վանորոյ խանն էլ այնքան վստահ է քո հնկայ վերայ, որ իւր կանանոցի ամենայն անտեսական կառավարութիւնն ու բանալիները յանձնած է նրան. ուրեմն անկարելի է որ նա քեզ կլնդ վերադարձնէ։ Այս ես խոստիս, որ խանն այնքան մոլեկրծն, բարբարոս և չար մարդ է, որ եթէ նա լսէ թէ դու թէհրանումն ես, քեզ տանել կը տայ կսպանէ, այնուհետև ով կարող է նրան ասել թէ ինչի սպանեցիր. խելք ունիս՝ փաստաթուղթ հաւաքէ, ինչպէս եկած ես, այնպէս էլ գնա քո երկիրը։

Յետոյ Հայերը խորհուրդ են տալիս Տէր-Մելիքսէթին դիմել խանի մէկ սիրելի ազդականին, որ թերևս նա օգնէ նրան։ Քահանան դիմում է յորդ արտասուքով խանի ազդականին, աղերսում է և յայտնում թէ քրիստոնէից մէջ քահանան կարող չէ երկրորդ անգամ ամուսնանալ, ուստի Աստուծոյ համար դու ինձ օգնէ։ Խանը իւր ազդականից երբ լսում է որ քահանան թէհրան է, մարդիկ է ուղարկում, որք որոնում գտնում են նրան և բերում, և հրամայում է իսկ և իսկ նրա տաները ֆալակայ ձգեն ու այնքան ծեծեն որ մեռնի։ Քահանան երբ հնչասպառ է դառնում խանը կարծելով թէ մեռել է, հրամայում է մէկ հին ճղճղած կապերտի մէջ դնեն տանեն ձգեն Հայերի թաղը, որ վերջիններս տանեն թաղեն։ Հայերը տեսնում են որ նա չէ մեռած, վանորոյ ղրկում են մէկ աղքատ հայի տուն, ուր դեղ ու դարման են անում, որ առողջանայ։ Զարմանալին այն է, որ այդ խանն այդ անցքից երեք կամ չորս օր անցած յանկարծակի է դալիս և մնում։ թէհրանի հայ բնակիչները, մանաւանդ դերիները, այդ անցքը համարում են Աստուածային պատիժ, որովհետև նա, խանը, իզուր պատժեց դքահանան. վանորոյ հրամայեց Տէր-Մելիքսէթին առողջանում է, մի՛ վախենան ինդրում են, որ նա պատարագէ ի փառս Աստուծոյ (որպէս այնտեղի ականերտես ծերերն ևս այս անցքը պատմում էին ինձ), իբրև երկնային մէկ աքանչելի հրաշք։

Այնուհետև քահանան դարձեալ դիմում է Քութուլին, և աղերսագին աղաչում, որ գոնէ հիմի մէկ եղանակաւ օգնութիւն մատուցանէ նրանս։ Քութուլին այս անգամ խոստանում է մէկ հնարք մտածել, հետևաբար հրամայում է որ նա չյաճախէ իւր տան, այլ ինքը մէկ հայ ներքինի կուղարկէ քահանային և պէտք եղածը կիմացնէ նորան։

Շիայ պարսիկ մահմեդականների օրէնքով մեծ վարձք է որ և իցէ մուսուլմանի դիակն ուղարկելու գերեզմանում թաղել։ վանորոյ Քութուլին, որպէս բարի մուսուլման և

անմնանուէր մեռած խանին, աշխատում է չարիք հրամայում է հանում, որ էն մեռածի դին տանին Քեաբրալայ և նրա կանանոցից ինչ կին ուզենայ դիակի հետ ուխտ գնայ այնտեղ։ Այդ ժամանակ խանի չորս երեսի սիկինները ու քահանայի կինը ևս յորդորմամբ Քեաթուլին պատրաստում են գնալ. վանորայ վերջինս նշանակում է մէկ հայ գերի ներքինի նոցա առաջնորդ և ուղեկից. մինչև ժամանակ ծածկաբար ապապարում է հայ ներքինին, որ օգնէ քահանային, որպէս զի ճանապարհներին կամ ուր ուրէք և իցէ, նա փախցնէ իւր կինը։ Հետևաբար Քութուլին, ապապարում է ասել քահանային, որ դիմէ նա գոնարավաճառ պարոն Մխոյելին, որպէս զի նամակներ տայ Բիքմանչոյ և Բաղդադ իւր ազգականներին, որոնք կարեոր ժամանակին օգնեն նրան՝ իւր կինը փախցնելու ժամանակ։

Տէր-Մելքիսէթը ծպտեալ աշխարհականի հագուստով, որպէս կասեն, հետևում է ուխտաւոր կարավանին, բայց ոչ մի տեղ յարմար միջոց չէ գտնում փախչել, մինչև հասնում են Բաղդադ։ Այդտեղ նա հետևում է կարավանին, և նշանակում է ուխտաւորների ուր իջևանիլը, այն տեղաց վերադառնում է, որտեղում, գտնում պարոն Մխոյելի եղբայրը, որի վերաց Մելքիսէթը նամակ տուած էր նրան։ Այդ պարոնը բարի ոմն գտնելով, կարի մարդասիրութեամբ ընդունում է իւր տանը գաքահանայն և պատուիրում այն տեղից դուրս չգայ, մինչև որ մէկ հնարք գտնի իրիցկինը փախցնելու։ Բարի ասպնջականը գտնում է մէկ հրէուհի և մէկ հայուհի, և ուղարկում է կարավանատեղը զանազան կանանց պատկանելի մանր մունր ապրանք ներով։ Հայուհին ծածկաբար հասկացնում է ներքինի առաջնորդին իւր գալստեան պատճառը, ուստի և նա առաջնորդում է նրանց կանանց մէջ։ Այստեղ բաղդադեցի հայուհին միջոց է գտնում ասել իրիցկինին՝ թէ ինչի համար է նա եկել, մինչև միջոցին՝ ժամ և ժամանակ են նշանակում, որ հետևեալ օրը հայուհին և հրէուհին գան ու իրիցկինը և մէկ էլ կօգնէի հայուհի գերի, նրանց հետ միասին գնան չուկաներ, ինչ ինչ ապրանք գնեն մեզ տիկինների համար։ Այսն այդ պատրաստվով բաղդադեցի կանայքը նոցա հանում, առաջնորդում են քահանայի ասպնջականի տունը։ Նրանք մնում են այնտեղ, մինչև որ ուխտաւորները չատ որսնելն և չգտնելն յետոյ ճարահատած ճանապարհ են ընկնում դէպի Քեաբրալայ։ Այնուհետև Տէր-Մելքիսէթը մէկ քանի օրից յետոյ որպէս ինքը, նոյնպէս և գերուհիները ծպտեալ օսմանցի կանանց չարերով, դուրս են գալիս Բաղդադից՝ ուղևորվում են գարասարի

ճանապարհներով, հասնում են Մուսուլ, Որմի, Խոյ, Երևան և ապա Թիֆլիս։

Իսկ Աղա Բաղաբ Բութուլին մնում է Թէհրան, Մանուչար-խանի մայր՝ Ակում-խանումի գալէն երկու տարի յետոյ։

Բ.

ԱՂԱ ԲԱՀՐԱՄ ՆԵՐՔԻՆԻ ԱՄԻՐԸ ԴԻՎԱՆԽԱՆԷ [1] ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ։

Արդէն տեսանք Բութուլիի կենսագրութեան մէջ, որ Հասան-Ալի-խան Կաջարն ընծայեց Ֆաթհ-Ալի-շահին զնելքինի Աղա Բահրամը միւս գերիների հետ. բայց ուր և երբ էր սա գերի ընկած կամ նեղքինացրած, և կամ ինչ է եղած սորա աւագանի անունը, չկարողացայ իմանալ, այլպան միայն տեղեկացայ՝ թէ նա Ղարաբաղցի էր և Մելիք-Շահնազարեան սերունդից։ Նա ոչ միայն Ֆաթհ-Ալի-շահի, այլ և նորա յաջորդների Մահամմէդ և Նասր-Էդդին շահերի ժամանակ ես երևելի անձն էր, մանաւանդ Մահամմէդ-շահի, երբ նա ի սկզբան անդամ, և ապա նախագահ նշանակուեցաւ զերագոյն ատենին։ Այսու ամենայնիւ, Բահրամի կենսագրութիւնից շատ քիչ բան կարող եմ հաղորդել ընթերցողներին։

Նրան ճանաչողները ասում էին թէ նա ճշմարտութիւն սիրող և անաչառ մէկն էր մինչ այն ատենն, որ հասնում էր կոստութեան, բայց հանելստ վարք և բնաւորութիւն ունէր, թէև ներքինի էր. սակայն երբէք չէր խառնուիլ կանանոցի գործերին, և անտանելի էր նրան զուարթկ սեռը, բայց շատ սիրում էր լաւ հրացան, ատրճանակ, զանազան տեսակ սուրեր՝ յստակ, մաքուր պահել ու գնալ օրստրդութեան. վանողոյ իւր ժամանակը կանցնէր շահի օրստրդութեան գործիքները մաքուր պահելով, նրանց պակաս-պատառը վերանորոգելով, թրատշումներ կլցնելով, և նրանց սիրատաքութիւնը բուժելով,

---

[1] Նախագահ դիւանի։

սորա համար ինքզինքը կանուանէր թռչունների բժիշկ։ Նա զարմանալի ճշտութեամբ հրացան և ատրճանակ կը ձգէր և նետ ու անեղ կը լարէր. ուստի և միշտ չանձն որսորդակից էր, որ նրա խորհրդով կերթար՝ ուր և երբ որսորդութեան համար, Ո՛ւրքան Բահրամն իւր երիտասարդութեան ժամանակ որսորդութեան եռանդ է ունեցել, այնքան զանազակոտ է եղել Ֆաթ-Ալի-շահի մանուանից յետոյ։

Բահրամը սատակի կոչտ գոռոզ մուսուլման լինելով երբէք գինի և ցքի կամ օր և իցէ խմիչք չէր խմում, և հայ գերիներից ևս կը զարչէր. Կայթմազանց խոսրով-խանը ասում էր թէ նա մէկ զզուելու, այսինքն վատասիրութեան կամ ֆէսֆէսութեան հիւանդութիւն ունէր, նա մուսուլմաններիցն ևս կը զարչէր, չատ անգամ Բահրամն իրանից էլ կը զարչէր ինքն իրան չէր հաւատում [1]). Բահրամն իւր գործերի մէջ վերջին ասաիճանի ճիշտ և արդարակորով է եղած, հաշվում իւր մէկ գնտարը չէր տալ ուրիշին. ուրիշինն էլ իրան չէր քաշիլ վերայ այսր ամենայնի առատաձեռն, հիւրասէր էր, և կը սիրէր, ասում էին, երեսի երեսի գերդաստաններից խոնարհած, մնանկացած և պաշտօնից հրամարուած մարդկանց օգնել, մխիթարել, ասպնջական լինել, պատուով ընդունել իւր սեղանի վերայ. ընդհակառակն նա սատակի ասում է լինում դատարկակեաց, չրջմոլիկ, վայրապար դէվրիշները, մանաւանդ պորտաբոյծ մոլլաներն ու սէիդները։

Վարդարեանի պատմութիւնը ասում է, թէ 1250 Հիջրին (1834 ամին) Ֆաթ-Ալի-շահը գնաց Աստպահան, և 4-ին Ջէմատ-Ուլ-Էվվէլի հասաւ և իջևանեցաւ Սասադղարաղ՝ Հէֆթ-դէստ արքունիքում. Նոյն լուսնի 15-ին փոքր ինչ տկարութիւն զգաց և 19-ին, հինգշաբթի օրը, արևմտեան երեք ժամ մնացած [2]) ուսի վերայ կանգնեց, սկսեց հազնուիլ, դուրս գալ

---

[1]) Վ...ուած ասածը Աչկ տխա է, որով վարակածներն ուրիշի բերան ապրիլելից կամ գեռից ջուրը չեն խմիլ, ուրիշի ձեռքից ջուր չեն առնիլ խմիլ. Ասում՝ ցամ խմողից հացը ուրիշի ճաշակ կերակուրը չեն ուտիլ. Աչկի ասուրը որ գնան, ոչնահգից դուրս եկան թէ չէ, եթէ գուլպաներով են պէտք է փոխեն. եթէ կօշկով կօշկները կը փոխեն. քանի քանի անգամ կը լուանան, որ փա անգամ հագնեն. Շատ ուրիշին չեն տալ, երբ ասած պէտք է լուանան Այս տասն ասելի հանեց Աչկի եմ անելս, ինչպէս էր Ղերանս կամ Ղազիկոսի քոյր Հռիփսիմէն, և Լորիս-Մելիքանց Դանիէլի կինը և այլն։

[2]) Պատմութիւն պարսից Մ. Թաղիադեանց, էջ Ա, երես 231, ասում է «Ֆաթ-Ալի-շահը, յետ երկուսուան աւուրց ի ժամանելոյն այսր (Աստպահան) թեմեն ի՞նչ հիւանդութեամբ վճարել զկնեան» 2—9 հոկտեմբերի, թարգմանեալ ընդ ամենայն ամս երեսունեակոթեն, յամի 1834 ։

լուսամուտից երեխէ մոդովուրդին. որովհետև լուր էր տարածուած թէ չէն արդէն վախճանուել է. բայց պալատականները ծածկում են. Նա դեռ ես կապայի կռնակները չը կռնկած՝ ուժաթափ եղաւ, կամենցաւ նստել՝ չը կարողացաւ, այլ թեկն ընկաւ զարաքացի ներքինի Ազա Բաշրամի կուրծքի վերայ, և ասաց. «Ազա Բաշրամ, օգնի ինձ» և երեք անդամ յունչ քաշեց ու հոգին աւանդեց՝ 67 տարեկան հասակում, 38 տարի թագաւորելից յետոյ.

Հենց չահի մահուան լուրը տարածվում է, Իրանում չորս տեղ՝ չորս ինքնակոչ չահեր են յայտնվում, այսինքն թէհրան, Շիրազ, Աստարաբադ և Թաւրիզ. ուստի ամենայն տեղ մեծ խռովութիւններ և յուզմունքներ են ծագում Աղաքահանի մեծամեծներն էլ չորս կուսակցութիւններ են բաժանվում, բայց Ազա Բաշրամը ոչ մէկին չէ թեքվում, այլ իւր տիրոջ դիակից անբաժան գնում է ուխտատեղի կում քաղաքը. այնտեղի զլխաւոր մէչիթի կից մատուռում նրան արքայավայել թաղելից յետոյ, նա Բաշրամը, 40 օր մնալով այնտեղ, ամենայն օր երեք անդամ գնում է դամբարանի մօտ՝ ծունկ չոքում, յորդ արտասուքով աղօթում և յետոյ վերադառնում իւր օթեւանը։ Բայց յայտնվում նա մինչև իւր մահը մնում է թխադեպաց։

Քառասունքը լրանալէն յետոյ Բաշրամը կումից գնում է թէհրան, ուր փոքր մէչեթից յետոյ հանվում է և Մահամմէդ-շահը, որի գահակալութեան օրը ներկայանում է մուս մեծամեծների հետ. և այնուհետև նա՝ մինչև երեք տարի, միմայն Ղօմբուզին, այսինքն մահէդականների տաբեմանն է գնում չահի ասեանը, այնտեղից վերադառնում է իւր տանը նստում, ոչ մէկ տեղ չէ գնում, բայց այցելուներ սիրով ընդունում է։

1838 թուին չահը նշանակում է Ազա Բաշրամն անդամ գեղապոյն դիւանի, և յետոյ դահերէց, այսինքն Ամիրը դիւանխանէ. Նրա փայլուն անձնական յատկութիւնները, որ վերեր յիշեցինք, այս գահերիցութեան ժամանակում աւելի ես է յայտնվում. Նրանից մէկ անցք պատմենք ասա, որ նրա անզուշաքաղաքութեան ապացուցութիւնն է։ Երեւելի Մելիք-

չասայ են ապրում. իսկ ես զոցանից ոչ մէկը չեմ, ուրեմն ինչի՞ ընդունիմ քո կաշառքը. այսու ամենայնիւ մեր հիմնաւորց ծանօթութեան համար, որ քեզ չվնասացնեմ՝ միմիայն մէկ թուման կառնեմ կպարգևեմ ծառայիս (վեր առեց և իսկոյն կանչեց զծառայն և այն թումանը տուեց նրան), որպէս զի համոզուիս որ ես ինչպէս չնեղացայ քեզանից, այնպէս դու ես ինձանից չնեղանաս. այլ իմանաս որ իմ կաշառքն արդարութիւն է, որ կողմը արդարութիւնը ծանր լինի, ես նրա պաշտպանը կլինիմ. Արդարև, աւելացնում է Աղա Մէհտին, վճռեց նա արդարութեամբ, թէև ինձ մեծ վնաս եղաւ.»

1264 Հիւրին 6 Շաւվալի (1847 ամի Յեսուն) Թէհրան մեռնում է Մահամմէդ-շահը, այն ինչ նրա թագաժառանգ Նասր-էդդին-Միրզան Արաբատական էր կայծակների պատմութիւնն ասում է թէ մնալարարներն ու պետականները կազմեցին խորհրդարան, բաղկացած երկոտասան առաջնակարգ մեծամեծներից (որոց անունները թուելիս, ծօթներորդ անձն Աղա Բահրամն է), որ թագաւորանիստ քաղաքի խաղաղութիւնն ու բարեկարգութիւնը պահպանեն. քանզի զօրականների և ժողովուրդի անզուսպ ատելութիւնն ընդդէմ Հայրի-Միրզայ-Աղասի սաղրազէմի՝ օր ըստ օրէ սատկանում էր խորհրդարանը խորհելից յետոյ, վճռեց և հրաժարացրեց զՀայրին իւր պաշտօնից և նրա տեղը նշանակեց Միրզայ Նասրուլլէ-Սադրաղ-Մուլքը ժամանակաւոր Սադրազէմ. Բայց այդ միջոցով գործեալ խռովութիւնը չհանդարտուեց. վասնզորոյ թագի տուին որ Հայրին փախչի գնայ մտնէ Շահ-Աբդուլ-Ազիմ ուխտատեղին. ուր միմիայն կարող էր խռովարարների վրէժխնդրութիւններից ազատուիլ. Այնուհետև և խորհրդարանը նշանակում է Էշիկ Աղասի Խայ-խան, և Ամիրը Դիվանխանէ Աղա Բահրամն, որպէս զի գնան Հայրի կայքի ցուցակը կազմեն և վրան պահապաններ գնեն, քանզի խռովարարներն սպառնում էին ասելով նրա պալատը և կողոպտել նրա միջի կայքը։ Նասր-էդդինը բազմելով գահի վերայ, տեսնում է որ իւր հօր և սուրա պապի ժամանակից մնացած ծառայողներից՝ միմիայն մէկ քանի անձինք են կենդանի մնացած. վասնզորոյ առի ապացուցանել նոցա վերայ ունեցած իւր համակրութիւնը. յայտնում է ասելով՝ թէ ձեզանից ով որ բաւական չէ իւր ներկայ պաշտօնից, թող յայտնէ թէ արտաքոյ քաղաքիս ինչ պաշտօն կը կամենայ, ընտրէ և սիրելիների աղօթարանը պատրաստ է նրան տնորհել։ Աղա Բահրամն ասելոյն յետոյ՝ յայտնում թէ Դիվանխանում չարուշակ նստիլը վնաս է ծերութեանս, վասնզորոյ խնդրում եմ որ չարը տնորհէ

Նրան Քիրմանչահի հրամանատարությունը։ Շահը կատարում է նրա խնդիրը, ուղարկելով որ նա, մինչև իր մահը կրկ պատուանունս Ամիրբ-Վիզանդ է։

Բահրամը մնանում է Քիրմանչահի մեջ և կտակում է իր անմոռանալի կայքը Նասրելդդինշահին։

Թ.

ՄԻՐՋԱՅ ԵԱՂՈՒԲ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՆԵՐԲԻՆԻ [1]։

Այս տաղանդաւոր և պատմական անձն ծնած էր Երևան՝ համեստ և իր քաղաքի բնակիչների մէջ յայտնի ծնողներից։ Նա Հայոց հին լեզուն նախ սկսել է սովորել Երևան և յետոյ գնացել է սուրբ Էջմիածնի ուսումնարանում կատարելագործել զայն Երևելի Բերթուումեանի աշակերտների մէկի մօտ։

1804 թուականին երբ Երևանի բերդը պաշարելոյ ժամանակ, Վրաստանցի կամաւոր ձիաւորների խումբը խուսափելով կնիազ Ցիցիանովից, վերադառնում է լինում իբրեանց հայրենիքը, ուր յատ հայ վաճառականներ և տեղացի բնակիչներ ևս իրեանց ընտանիքով միաւորվում են էն խումբի հետ. և երբ գալով ուզում են Ս. Էջմիածնի մօտովն անցնելու, մեր Յաղուբն (Յակոբը) այդ լսելով առանց իր վարժապետին, դասակիցներին ասելոյ, առանց պաշարեղէնի, մինչև անգամ առանց որ և իցէ փոխնորդ չորերի, միմիայն իր գրքերը շալակած դուրս է գալիս Ս. Էջմիածնից՝ դնում խառնվում այդ կարավանին, որպէս զի գնայ Թիֆլիս, նոր եկած Կ. Պոլսից երևելի ամի վարժապետի մօտ (կարծեմ Սերովբէ Պատկանեանը լինէր սա) և առաւել ևս կատարելագործէ իր ուսումը։

Յակոբը երկու օր հետևակ ընթանալով կարաւանի հետ և անծանօթ ուղեկիցներից հաց մուրալով հասնում է Բամբա-

---

[1]) Տես «Кавказъ» 1876 г. № 51—52. Евнухъ на Востокѣ. Իմ աշխատասիրությունն, բայց տարբերալ Փ. Փ. տարերով։

կանոր, ուր Պարսից զորքը յանկարծ յարձակվում է և պաշարում կարավանը, որի մեծ մասին սպանում են և գերի վարում. նրանց մեջ լինում է և Ցակորը, (տես Խոսրով-խանի և Մանուչար-խանի կենսագրությունների մեջ), որ հաղիւ թէ 18—19 տարեկան լինէր։ Սրան և մէկ քանի գերիներ ներքին-նացնում են Թավրիզ և առաքում Թէհրան շահի կանանոցի համար, ուր կրթվում է Բուիթուլի Աղա-Եաղուբ ներքինապետի, իւր հայրենակցի և անուանակցի ձեռի տակին։

Ինչպէս շատ երեսի անձանց մնունդը, երեխայութեան օրերն ու զարգացումը մթութեան մէջ են մնում, նոյնպէս և Ցակորի մանկութեան պատմութիւնը անյայտ է մեզ. ուստի այսքանը միայն գիտենք, որ նա տեղակ էր հայերէն հին լեզուին և անսխալ կը գրէր, ինչպէս նրա նամակներից մէկ քանիսը ես կարդացած եմ։ Նա երբ մտնում է կանանոցը, սկսում է հոգատարութեամբ Աղա Եաղուբ Բուիթուլի՝ սովորել պարսկերէն և արաբերէն ես, և առ ի կատարելագործել այդ լեզուները, վարձում է ռոճկով մէկ ուրիշ երեսի ուսուցնական վարժապետ, որ բացի այդ լեզուներից, սովորցնում է և պարսկերէն հաշուարարական արհեստը, այսինքն, մրսթոֆիթիւն, որ պարսիկներն 10—15 տարուայ մէջ հազիւ են կարողանում այդ ամենաղժուարին և խառնիխուռն հաշուարարութիւնը սովորել և ստանալ Մրսթոֆի՝ կոչումը։ Ցակորը իւր գիտութեան և ուսումնասիրութեան համար՝ ստանում է պատուանունս Միրզայ, զոր կտան այն անձին, որ գրչի տէր է։ Թէև շատ անգամ թղթակցութեանց մէջ կամ կայարանների պատմութեան մէջ «աղա» մականունն ես տալիս են նրան, որը պատուանուն կամ ասոյեան է ներքինիների մէջ։

Այդ ժամանակները պատահմամբ գալիս է Թէհրան Ղորչուղայեցի պարոն Ստեփան անունով մէկը, որ հայերէն և անգլիերէն կրկնատուար համարակալութեան արհեստին քաջ տեղակ է լինում, քանզի շատ տարիներ Մադրաս անգլիացիի գրատենեակում կատարած է լինում համարակալի պաշտօն, որ Միրզայ-Եաղուբին նախ այն արհեստն է սովորացնում, և ապա մտնում է նոյն Եաղուբի, Մանուչար և Խոսրով խանների առևտրական ընկերութեան մէջ՝ որպէս համարակալ։

Միրզայ-Եաղուբի յառաջադիմութեան առաջին պատճառը լինում է համարակալութեան արհեստը. քանզի ըստ ասուելեան Խոսրով-խանի, այն ժամանակները շահի կանանոցի տարեկան ծախքը մտրձ երեք հարիւր հազար թումանի դրամի էր հասնում։ Որպա կնճռեալ հաշիւները կարգի բերելոյ և շահին համառօտաբար ներկայացնելոյ համար՝ չորս հինգ

ամիս էր տևում, ուստի երկու երեք մշտական ֆիներ պէտք էր նստեին և զրաղուէին. բայց երբ Քուիթլին այս գործը յանձնեց Միրզայ-Եաղուբին, նա 20 օր, չատ չատ մէկ ամսուամբ կարգի բերեց և մէկ թերթի վերայ ներկայացրեց չահին, որ չատ զարմացաւ. վանտոյ պարդև չնորհեց նրան և հրամայեց Քուիթլիին, որ առաջին հոգացողութիւն ունենայ Միրզայ-Եաղուբի վերայ. Այնուհետև նա Եաղուբը, չահ-ճանաչ եղաւ. Չկիր սորա չահն Իրանի տարեկան եկամուտն ևս յանձնեց Միրզայ-Եաղուբին, որ քննէ, զատ զատ յօդուածների մէջ պարունակ զումարները և ներկայացնէ նրան. Այդ ամէն հաշուատեսութիւններն այնքան գիւրացրել էր Միրզայ-Եաղուբը, որ էլ հարկաւոր չէր, որ մէկ մշտական զար և կարգար չահի համար. այլ ինքն չահը կը կարդար, զումարները կտար, կարտանուներ, կը բաղմապատկէր և շուտով կը հասկանար. քանզի Միրզայ-Եաղուբը փոխանակ հին պարսկական թուանշանների հինդուսի թուանշանները կը գրէր դրամի զումարները, ինչպէս ևրոպացիք արաբական թուանշանները գրում, զոր պարսիկները հինդուսի են անուանում. Նա չատ աշխատեց որ հինդուսի, այսինքն արաբական թուանշանները մուծանէին Իրանի դիւանական թղթակցութեանց և հաշիւների մէջ, և լքանէին ամենաղժուար, ինճեալ պարսկականը. բայց հնամոյ մշտական ֆիներն իւրանց օգտի համար արգելարիթ եղան. քանզի այս արհեստաբ, ըստ մեծի մասին, նոցա մէջ ժառանգական է, և ուրիշի չեին սովորեցնում. Խորովիանը ինձ ցոյց տուեց մէկ պարսկերէն տետրակ. Միրզայ-Եաղուբի ձեռագիրն, որի մէջ պարունակուած էին հինդուսի թուանշաններով թուաբանութեան չորս դուռն, նոյնպէս գրամների, քաչերի և չափերի զումարներ, հարցերով և պատասխաններով, որն ինչ դռնով պէտք էր բազմապատկէր, արտահանէր, գումարէր և այլն, և այլն.

Եւ այսպէս Միրզայ-Եաղուբը իւր աչխատասիրութեամբ և բնական ընդունակութեամբ առաջանում է և գասում առաջնակարգ որերի դասում. Ասում էին, որ եթէ նա մինչև իւր մահը մնար մանկական կրօնով մանկական տարերքի մէջ, նա անչուչտ իւր գերեկիցներից չատ յառաջադէմ կը լինէր և մեծամեծ պաչտօններ, և ուրիշ վսեմ տիտղոսներ ձեռք կը բերէր. բայց նա իսլամութեան պատուանուն անգամ չուզեց ստանալ, քանզի նա պնդց, ուրիշ ևս լաւ է ասել, կոչտ ու կոխչտ քրիստոնեայ էր, տիս և գիշեր երազում էր մի որ և իցէ եռանդակաւ դուրս գալ Պարսկաստանից գնալ, կենալ քրիստոնեայ տէրութեան մէջ և իւր քրիստոնէական կրօնը

ազատագրեցին, պարզեցին նրա թերությունները, ուժեղացրին նրա ամրությունը, ուժգին ու լայն է ասել, հանձնաժողովներից երեք լայնությամբ տարբերվում էր ֆրանսիական տարբերվելուց, և ասում էին թե բանվորական հանձնաժողովը բաղկացած էր ամբողջ Նոր Հարավային Վալեսի բանվորներից, բայց մոտավորապես չէ ցանկալի, ֆանտաստիկ մեկ գերի վարձատրությունը ասում սպասում է պատասխան իր մասին, որպես դի նրանից ասուցանելն թույլ տալով սա մասնակցել մեծի վարձատրությանը գանձերը. Նշանակությունն են թե, թեպետև է նա վաղագույնում պարզեցնում վերանորոգել նրան, նա ասում է թե, նա մեկ գրանցանի եմ ցանկ դարձնում հանձնաժողովը, պատերազմի հետ 400—500 բանվոր դրամով եմ ես տեղադրում տեղերը անում, և բնական վարդապետ եմ տարվում. և չատ էլ գերեզ եմ վարդապետ ասի լիքանում, թեպ լիքանում որ ազատում եմ տարվում.

Ինչպես կարդալ-գրելուցին, որպես ներքինությունը վատ թե իրենան վանականներին չէր վարդապետում կամենալ մեկ լայնությամբ գործադրությունն, որ ի վարդեց մեկ ասպետությունի էր վանականների մեջ. մանավանդ լսելի վանականությունում. պատերազմ. մեկ քանի ձեռքերի ներքինիներ և պատանու վիճակը, որոնք երբեմն մեջտեղ վանականությունում վարդեց էին, գնում էին լուսանկարում թանկ գնով և ազատվի մանավանդ, բանավարան էին և անպարտան մանր մունչ վանական. գոյություն վատ հանդիպեն, թեպետև երբեմն երբեմն անիծվածներ ու ասում ասում թեպետ էին, ու ասելի թանկ գնդերով վանականում անիծվածներին. հարկավոր ազատվի. մանավանդ. և մանավանդը լրտեսներ, որպես վանականությունը լրտեսով մի մեկտեղ գնանելիքը. հարկավոր վերջիններում բանալիներ. և ուրիշ լիքատարանական վիճակ. մեծամասն բարդություն էին ունենում ու գրքասիրությունն ասելու վարդապետներ. Ասում վերջինս սատանայական լսելն. որ հանդի ինքնան մեկ քանի ներքինիներից գրամատիկի ուրիշ մեկնում և ինքնությունն կարդալ ասել. որ անիծվածներն ասեմանդ հարկավորում ասպարանքների գլխը գնանասարին հնարավոր վանականներից և ինքնությունները մեկ գնով վանական անիծվածներին. հարկավոր և անիծվածները իրար. վարձատրելն. ներքինությունում գնանասարին հանձնասարում անիծանդարձներից. որպես դի իրարգանությունն լսելն. ասիանական բարդ անիծվածները մեկ գնով գնան. և այ թե ասում մեկը թանկ. վարդ մեկ ասպետն գնով գնան. Շատ վարձատրելի ասա սատանայությունն. թեպետև էր բարդ ոչ որ ներքինի չէր հանդիպանում այդ պարտական թեպետև. որի համար մեծ դրամագրություն էր հարկավոր.

Ամենքանի Ալբերտանցուց. Լիմիտացվածանցն սատանայությամբ է իրա գերեզմից Ալբերտ խոսքով կարդմանանցներն և Մերկուսը.

նոցոցքին. որ իւր գրասենեակին մեջ բնակեալ գիւղացի
մի գրագիրներ ունէր, որոնց մեջ մի գեղեցիկ տղայ
գրասենեակին սանդուղքի մոտերը մեռաւ. և մեծարգոյ նիզակ
մի մի քաղաքի ի նոցանէ. գնեցի զարմանալոյ հանգամանքներ
գրասենեակին սանդուղքի էր, թէ երբ Պանուլյանն այս մեռաւ
ինքը. ես մեծաւ մեծի մտածեցի. թէ սանդուղքներուն
թէ գրասենեակի մեջ մեռ է գնում պարտք. ինչ է գնում թէ
բրենեան. եթէ մեռաւ անմեջ. մեռաւ է սանդուղքս. գանգրոյ և նա
մանանոցեցաց. բայց ինչ նոցանց. որ Պանուլյանի երբ
մեռաւ էր կրում մեռանեցի և մանանոց Մերոյ նոցանցի. որ
նոցանանեն էր կանանցի. ինչ սանդուղքի մեռելներուն նա
մեռաւ գրասենեակ մեռելներուն նոցանանցի ի մանանցի որ
գրեալ էն մեռելներուն յոյսանանցի.

Ինչ երբեք անմեռանալներին գոյանանցի նանանոյ
նանանցեր անելին. թարգմանչ սերում էր յան յան երբեմանցեր
գրանց. գանանցան գրանցեր անեցաց. նոցանան կանանցանի
բրով գոյացանցի իւր ասանց և գեղեցիկներին ասցին. Մերոյ
նոցանցին իւր գասանանցան գրանց գնում էր ասանան. նոր
գրասենեակ. գրագրանցեր գրանցեր և ցոյանցի. ասեցաց գանան
անցեցնան ասցանցի նրանան իւր Մերոյ ասցանանցեր նա
մեռաւ. իսկ Պանուլյանի մեռելներն էլ գանան մեռաց
գրեց ու գնցեր.

Շատի կանանցանցին ասց մեռելներին բացանանում է.
և մեռան ասցում ասեցանան էր. ասեցան յանում նոցանում
մեռանանցանում. ասանանան մեռելներին գրանանցանցեր է
ասցանում կամ թանանցեր է գանում էին. Նոցանանցի
նոցանանում գասանցեր. Բացցաս. Բանցեր. և գրեր և
ան ասեցանցի գանանցան նոցանցաս մեռանցեր. բանանցեր.
բրցեր էր նոցին նոցանց և թանանցան ասեցանցեր [բերել ասա-
նան. ոչ մեռան նանանցեր է գանանում. ասց և գանանում է
նոցն թանց յանեցեր. որը գոյացանցեր իւր ասցանցեր և գասանցեր
ասեցանանցանցեր մանանցան. բանցեր ասցանցեր մեռելներին
կանանցեր և ասեր ասցասցասցեր և մանցասանցեր. ասեցեր
նոցի նանանցանցեր նոցանցի մանանցան էր գասցեր նոցասցասցեր
գանանցեր գասցասցասցեր գասցասցեր գասցասցեր գասցասցեր
գասցասցեր գ

կամ Պարսկաստանի զանազան ձեռագործներ, որպէս զի անդ վաճառուի և այնտեղից Ռուսաստանի ձեռագործներ բերուի Թէհրան։ Այդ ընկերութիւնը տևում է մինչև 1819 թիւը և յետոյ բաժանվում է. քանզի այդ ժամանակ ընկերութեան իւրաքանչիւր անդամը մէկ մէկ պաշտօն է ձեռք բերում։

Մեր Միրզայ-Եաղուբն ստանում է չորի կանանոցի զանձապետութիւնն ու հազարապետութիւնը, այսինքն ինչքան ծախք ունէր կանանոցը, նա կխմբէր, և նրանց փողերը զանձատանից կատանար ամսէ ամիս։ Մինչև նորա սպանուիլը չորն երեք անգամ այդ պաշտօնը չնորհում է նրան և հրաժարացնում, քանզի մէկ անգամ նա գնում է Խորասան, որի մարզպանը քաղաքական գործերի համար չէր կարողանում Նօվրուզին գալ և իւր հաշիւները ներկայացնել չորին, վասնորոյ և Միրզայ-Եաղուբը չորի հրամանաւ գնում է այնտեղ հաշիւներին վերջանաւոր լինում և ստանում մեացեալ հարկերից դրամը, բերում Թէհրան, նոյնպէս էլ մէկ անգամ գնում է Շիրազի մարզպանի վերայ հաչուատու։

Որովհետև Ռուսաց դեսպան Դրիբօեդօվի և նորա ատրաբրեալների տարաձգ սպանելոյ գլխաւոր պատճառը Միրզայ-Եաղուբն էր, վասնորոյ ուզողդ չէ այս յօդուածը փոքր ինչ երկարացնել, որպէս զի ընթերցողները ոչ միայն այդ անցքին խելամուտ լինին, այլ և Եաղուբի կենսագրութիւնը լրութեամբ լինի։ Ես արդէն խոստովանում եմ, որ չեմ դիմելու պաշտօնական թղթակցութիւններին և նոյն իսկ Պարսից պատմութեանը, որն միւտ զինքն արդարացնելու նպատակաւ իւր կողմն է տարում, իսկ Ռուսաց պատմիչներն էլ ինչ լսել են այն ժամանակը Պարսից պաշտօնական թղթակցութիւններից, այն են փչում. այլ ես առաջ եմ բերելու ներկայ եղողներից և ականատեսներից լսածներս, որոնք թէև մեծ հակասութիւններ ևս ունենան վերոյիշեալ երկու տեսութիւնների պաշտօնական թղթակցութիւնին, այսու ամենայնիւ թողնում եմ ընթերցողների դատողութեանը՝ ընտրել ճշմարիտը [1]։

Մամուչար-խանի մայր Ասկում-խանումը Թիֆլիսից Թէհրան գնալիս, նրա հետ գնում է և իշխանազն (կնեազ) Դաւիթ

[1] Ակնառատեսներն են Համերգեանց, որ և Երբրսիեմբրեկ Ռուսաց դեսպանատան Ղ. ս. լամ, այսինքն սուրհանդակը, որ այն օրը դեսպանատունը լինելով չարաչար վիրաւորվում է և մեռնում կնեազնդան սպանանների գիսակների ձեռ. բայց կնս գիշերի մտ գալում է, որ գնա կնեազնդի է, ձեռքը գրում է սատակ վիրաւորած պարանոցի վերայ, ուզում գլուխը, երբեմն սոպալով, երբեմն կուզկուզ. գնում հասնում է մեկ ծանօթ հայի տուն, որ և մեռած է մինչև ասուղջանալը։ Սա մինչև իւր մահը թոշակ էր ստանում

Մելիքանցը, որ նրա աղջկայ օրդին, այսինքն թոռն էր։ 1828 թուին, վերջնոյս եղբայր Սօլոմոն Մելիքանցն էլ դնում է դեսպան Գրիբոյեդովի հետ։—Որովհետև դեսպանը ուշանում է Թավրիզ, վասնորոյ Սօլոմոնը առաջ է գնում Թէհրան և իջևանում իւր քեռի Մանուչար-խանի պալատում, որ է մինչև ներդում, արքունիքի քսանակում. Շիմարանի առաջեալ բերդի դրան մօտ։

Գերիների տէրերը լսելով, որ դեսպանը Թիֆլիսից դուրս գնաց, իրանք էլ Ղարաբաղից, Գանձակից, Շիրուանից եկան, և այլն, չսպասով գնում են հասնում Թէհրան. բայց դեսպանը, ինչպէս յիշեցինք, Թավրիզ առ ժամանակ ուշանում է. ուստի և նոքա սկսում են հետամուտ լինել, որոնել ու գտնել իւրեանց գերիները. բայց թէպէտ անձն, որ Պարսիկները գլանում էին, ուրանում էին և չէին վերադարձնում նոցա գերիները (ըստ որում սկանտանումներից չլսեցի, թէև պաշտօնական թղթերի մէջ գտնվում են պատմել ասա այն անցքն, որ Մարեանֆիլլդցի գերմանացին Կաղբին գտնելով գերի տարած իւր դուստրը և ամուսնացած մէկ սէիդի հետ, վերադառնալով Թավրիզ, յայտնում է Գրիբոյեդովին և բողոքում, թէ պարսիկ գերիի տէրը գլացաւ վերադարձնել ինքեան զիւր դուստրը։ Գրիբոյեդովը Կաղբին հանձնում է թէ չէ, բերել է տալիս զգերմանուհին և գերմաներէն ևս անդամ տրախրում է վերադառնալ Թուստասան իւր հօր հետ. բայց նա, գերմանուհին չէ համաձայնում)։

Այդ լուրը հասնում է Թավրիզ դեսպանին, որի սոսկալով Աբբաս-Միրզան գրում է հօրը, չահին, դեսպանի անբաւականութիւնը, վասնորոյ և չահը նշանակում է զՄանուչար-խանն ու Թէհրանի փեսաներին, որ եթէ Թուստաց հպատակները ցոյց տան իւրեանց գերիների տեղը, նոքա իւրեանց մարդիկը ուղարկեն գերիները բերել տան, և տրապարակաւ հարցնեն, և թէպէտ գերի, որ իւր վերադառնալու բաղձանքը յայտնէ, նրանց իսկեիսկ յանձնեն գերին տիրոջը։—Այդ

Թուստասանից՝ Թավրիզի հիւպատոսի ֆէնոթրութեամբ 120 հոլանդիոյ ոսկի։ Հայ Եղբայր Սուլթանը, որ այն օրն իւր սատրգրեալ գինուորականներով պահպանած էր դեսպանատունը,—Շահ Աբբաս Ալիի բերդի դրան Հայոց եկեղեցիի գանձապահ Պարսն խաչգրաբը։—Թավրիզեցի Պարսն Մելքումը, որ Միրզայ-Լեղատորի գործակատարն էր և գնացել էր Թէհրան իւր հաշիւները յանձնելու նոցանից։—Դեսպանատան գրագիր Խաչատուր, այսինքն մայիսը, փաստաբերգ։—Թիֆլիսցիք Յովհաննես Մանթաշանց՝ և Պահանսի Եղբայ Պարգարեանն և այլք, որոնցից շատերն կենդանի են այժմ ևս։

լուրի վերայ չատ պարսիկներ ծածկարար թէհրանից դուրս են ուղարկում իւրեանց գերիները, կամ հէնց թէհրանում ուրիշ թաղում պահ էին տալիս գերիները, որ նրանց հետքը կորցնեն և չատերն էլ ուրանում են, և կամ երկիւղ են տալիս գերիներին, որպէս զի հարցնելիս պատասխանեն թէ մենք չենք կամենում վերադառնալ մեր հայրենիքը, և այլ այսպիսի հարիւրաւոր հնարքներ են գործ դնում, որ չվերադարձնեն զգերիները. վանորայ Մանուչարն ու Փեալանթարը չեն կարողանում կատարել իւրեանց պարտաւորութիւնը. ըստ որում գերիները մեծ մարդանց ձեռքն էին. Մանուչարը տեսնելով այդ դժուարութիւնները, պաչտօնական կերպով չահի առնում հրաժարվում է այս պաչտօնից և խնդրում, որ ուրիշին յանձնեն այդ գործը կատարելու.

Դեսպան Դրիբօեդովը՝ թէհրան մտնելիս, Պարսից տէրութիւնն ընդունում է նրան ամենաչքեղ հանդէսով, և ինչպէս չատ ծերեր պատմում էին թէ՝ երբէք չէինք տեսած այնպիսի ընդունելութիւն և իջեցնում են Շահ-Աբբաս-Ազիմ ասած բերդի դրան մօտ մէկ հոյակապ և ընդարձակ պալատում, որ պատկանում էր մէկ չահզադայի. Այդ պալատը իւր ծուռումուռ փողոցներով, ի հարկէ, մէկուկէս վերստից աւելի հեռի է արքունիքից.

Պատմում էին, թէ չահն առաջին անգամ, ընդունելութեան ժամանակը, չատ զուարթ և ուրախ դէմքով, և մարդելոյզ խօսակցութեամբ է ընդունում զԴրիբօեդովը և բաւականին երկար միջոց էլ մօտն է պահում. Երբ դեսպանը չահի առանից դուրս է գալիս, մէկ քանի պետականներ առաջնորդում են նրան մէկ մեծ դահլիճ, ուր բոլոր աւագանին սպասում են լինում նրան (որոց մէջ լինում է և Միրզայ-Եաղուբը). Այստեղ մատուցանում են դեսպանին չաքարաջուր, քաղցրաւենիք, թէյ, սուրճ և խոռխոռակ.—Բոլոր ափսէները, գաւաթները, բաժակներն ու խոռխոռակները լինում են ականակուռ ոսկեայ և մնայած.

Միմեանց կերպով մեծարում են դեսպանի ստորադրեալներն ու սպասաւորները այլևայլ սենեակներում՝ բաժանուած հանմատ նոցա ասաՀանին, միայն թէ փոխանակ ոսկեայ սաքերի՝ լինում են արծաթեայ. Այդ ամենի կարգադրողը լինում է Մանուչար-խանը.

Մինչև դեսպանի դուրս գալը չահի առանից, նրա մարդիկներից ոմանք դուրս չրջում են լինում առ ի նայել արքունիքի ինչ ինչ հետաքրքրական տեղերը. Նրանց մէջ լինում են և երեք վրացիներ, որոց հագուստին թիֆլիսեցի

Մանթաչանց Յովհաննէսը՝ ճանաչելով (սա իւր մօրքեռի Խոսրով-խանի հետ գնացած է լինում արքունիքն, այն օրը հանդիսատես լինելու այդ չքեղ ընդունելութիւնը), մօտենում է նոցա, ծանօթանում և սկսում թիֆլիսից ինչ ինչ հարցեր հարցնել։ Այդ հանդէսը վերջանալէն յետոյ՝ Խոսրովը վերադառնում է իւր պալատը, ուր Մանթաչանը պատմում է նրան վրացիների հետ խօսակցիլը։ Խոսրովը սաստիկ զայրանալով նրա վերայ հրամայում է, որ այնուհետև ամենեին առնչութիւն չունենայ նոցա հետ։ «Սա մէկ ինչին ինձ անիմանալի անցք էր, ասում էր Մանթաչանը, բայց նրա հետևանքը չատ փառաւոր եղաւ»։

Սոցա երկրորդ թէ երրորդ օրը՝ Մանուչար-խանը գալիս է Խոսրով-խանին այցելութիւն։ Վերջինս հարցնում է Մանուչարից, թէ «մինթէ չես վախենում, որ թոյլ ես տալիս Սօլոմոնին (Մելիքանցին) գնալ զալ դեսպանի մօտ»։ Դա պատասխանում է՝ «ինչպէս արգելեմ, երբ նոքա հին ծանօթներ են և թիֆլիսից մինչև Թավրիզ միասին ճանապարհորդել են»։ Սրանից յետոյ Խոսրովը հրամայում է Մանթաչանին՝ դուրս գալ սենեակից։ Փոքր ինչ անցկացած, գալիս է և Միրզայ-Եաղուբը, և այդ երեքը միասին առանձնանում են և երկար ժամանակ խօսակցում։ Այնուհետև դարձեալ մէկ քանի անգամ կամ Մանուչարի կամ Խոսրովի պալատում այդ երեք անձինքը միանում, առանձնանում և ձիր ձիր ժամանակ զրուցում։ Մանթաչանը ասելացնում էր, թէ «ես նշմարում էի, որ նոցա մէջ մէկ տարաբդէպ անցք կայ, բայց ինչ էր, չէի կարողանում նախագուշակել, և յետոյ երբ լսեցի Միրզայ-Եաղուբի դեսպանատուն մտնելու լուրը, իսկոյն հասկացայ, որ նոցա առանձնանալոյ և զաղանի զրուցելոյ պատճառն այն է եղած։ Այսինքն, սրանից եղբակացրի, որ կարելի է, և հաւանական է՝ թէ Մանուչարն ու Խոսրովը ևս մտադիր են եղած հետևել Եաղուբի օրինակին, եթէ դեսպանը կարողանար օգնել Եաղուբին»։

Այժմ ստորագրենք այդ պատմը կամ դեսպանատուն ասացեալը, թէ այն միջոցին ինչ տխուր վիճակի մէջ էր, ուր առաջնորդեց ինձ հայազգի Եաղուբ սուլթանը 1852 թուին, երբ ես թէհրան էի, երբ ցոյց տուեց գաւիթները, սենեակները, մէկ մէկ մանրամասնաբար պատմելով ինչ անցք, որտեղ է պատահել, քանզի և այն օրը դեսպանատանն էր եղած, որպէս յիշեցի վերը։

Այդ դեսպանատունը բերդապարսպի խրամի մօտն էր, նրա դլխաւոր դուռն էլ բացվում է դէպի արևմուտք՝ խրամի վերայ։ Դլխաւոր դրան առջևը շինուած է կկաբարդրակ, այս-

ինքն լուսնածև հրապարակին, որպես զի փոգոցումն հրապարակ ձևանայ, որ գրան և խրամի մէջը ընդարձակ լինի բազմութիւն ժողովուրդ կամ ձիեր կանգնեցնելոց համար։ Կըլխաւոր բարձր և լայն գոնիքը ներս է մտնում, մէկ յիսուն քայլաչափ երկարութեամբ, կէս մայլ, գաչ և սնարակ որմով նախագաւիթ։ Սոքա աջակողմն ազիւսեայ սրմն այն անկարգութեան ժամանակ, ինչ ինչ տեղ ծակեցուած են, և նոյնպէս ազիւսեայ կամարակապ առաստաղի վերայ չատ հերթիկների նման՝ ծակեր են բացուած, ուստից արեգակի ճառագայթները ներս մտնելով աւելի տխուր տեսարան էին ներկայացնում նայողին։ Նախագաւիթիցը դուրս ես գալիս մտնում մէկ չորսանկիւնեայ ընդարձակ բակ կամ գաւիթ, որի կենդրոնում կար մէկ մեծ կիսակործան, քարքարուած, սրբատաշ քարից չոր ու ցամաք աւազան, որի չորս կողմն նոյնը ուղիները (ալէ, խիտրան)՝ ապացուցանում են, որ ժամանակաւ այն բակը չորս մասն, այսինքն չորս ծաղկանոցներ բաժանուած են եղած, որոց մէջը մոլի և վայրենի խոտեր էին բուսած։ Այդ բակի չորս կողմում եղած նեղբսաների վերայ չինուած են միայարկ մեծ և փոքր սենեակներ, որոց գոնները անփեղկի, լուսամուտները անշրջանակ, առաստաղների գաւերը այստեղ այնտեղ փլուած, ուր ուրեք գերանները բոլորովին փտած խոնարհուած, խանգարուած և կամ կախ ընկած, սենեակների մէջ գունդ գունդ հող և կոչտեր կիտուած, նրանց վերայ վայրենի, սպատերև, ծորած, մոլորած խոտեր են բուսած և չորացած, կրկին բուսած և կրկին չորացած։ Այդ ամենը մէկ սարսափելի արտաքին էին ազդում նայողի հոգեոյ և սրտի վերայ։ Այդ բակի հարաւային կողմն մէկ սենեակում օթևանած է լինում մեր Միրզայ-Նազար Մարգարեանը։

Այս բակից ընթանում ես դէպի արևելք, մէկ փոքրիկ գոնիկով դուրս ես գալիս երկրորդ բակը, այսինքն կանանոցը, որ մնացոյն կերպով է չինուած չորսանկիւնեայ և չորս կողմն միայարկ սենեակներով, բայց առաջինից փոքրագոյն և նոյնպէս քանդուած, ուտիրուած։ Այստեղ մէկ քանի սենեակների սրմերի վերայ դեռ ես մնացել էին յեռուած հայելիի կոտրատանք և զոյնզգոյն նկարուած ծաղիկներ և գանազան թռչունների և անասունների պատկերներ, բոլորը՝ ձէթով ներկուած, որոնք ցոյց էին տալիս, թէ այն բակը երբեմն եղել է փառաւոր և չքեղ կանանոց ուրումն երևելի մարդոյ։ Բակի կենդրոնում բուսած մէկ ծառ կարամախ, անշրջագիծիցից տերևները գեղնացած և դալարած, չատ ոտեր չորացած՝ ինչպէս սգազգեաց և անբարբառ վկայ, մտաբերում էր մարդոյ

այն անցած դնացած սարսափելի մարդասպանութեան տեսարանը։ Այստեղից անձուկ և ցածր դռնով անցնում ես երրորդ բակը, որ երկու տեսածներդդ խիստ փոքր է։ Նրա հարաւային կողմում միայն չինոթիւն կայ, որ բակիանում է վեց սենեակից, երեքը ներքին և երեքը նոցա վերայ երկրորդ յարկում, ուր Գրիբոյեդովը կնանդստանար, կը քնանար և կը գրաղէր թղթակցութեամբ կամ ընթերցանութեամբ։ Բակի մէջից մէկ նեղ, բարձր բարձր աստիճաններով անձուկ սանդուխ էր չինուած, վերի սենեակները բարձրանալոյ համար։

Խառնիճաղանեը գիւական կառաղութեամբ բորբոքուած՝ վերի սենեակների առաստաղների գերանները ջախջախում կոտրում են և կամ նոցա մէջերը ծակծկում, ներս մտնում, խոշնոցում գեսպանը, նրա զլուխն ու կռնները հատանում են և ձգում, փրթափում բակը ու նրա սենեակների կայքը կողոպտում։ Մենք կամեցանք այդ սանդուխովը գնալ վերև, մտնել սենեակները՝ տեսնել, բայց անկարելի եղաւ. սանդուխների սանդերը լցուած էին խիճով և մեր ոտները սողոսկվում էին և սահվում, մանաւանդ որ առաստաղի գերանները խառնիխուռն խոնարհուած, չկարողացանք նրանց սակիցն ես անց կենալ, վանորայ վերադարձանք։—Այս բակի մէջտեղը ձիգ ձիգ մէջոց արձանացած, աչքերս յառեցի այն քարայրակալ տեղը չինոթիւնն վերայ, և ապա լռիկ մէջերդ դուրս եկի, թէև դուրս գալիս Եաղուբ-Սուլթանը պատմում էր զանազան անցքեր, գեսպանի և նրա քաջ կողակների վերայ, բայց իմ ուշքս ու միտքս չիսթուած՝ գրեթէ բան չէի հասկանում։

Երբ գեսպանը հասնում է Թէհրան, գերեսէրեն հարիւրաւոր բոզքաշիներ են տալիս նրան, բայց նրան աւելի նեղացնում էր Մազանդարանի գերիների գոյժը, որովհետև ամենից աւելի այնտեղ էին շատ գերիներ գտնվում, քանզի պանտարգը պատուական կերպով չյայտնուած, Մազանդարանի հեծելազօրը, որ Կասպի, այսինքն չասի ցեղիցն էր, անակընկալ յարձակվում է Ռուսաց սահմանապահների վերայ, աւարում, սպասատակում և անթիւ գերիներ է վարում և ուղղակում Մազանդարան, ուր Ռուսաց հիւպատոս կամ զորձակալ չկար, և այժմ անկարելի էր համարվում այնտեղից գերի դուրս բերելը, ուստի և գեսպանը կամենում է կամ այնտեղ և կամ Ռաշտ հիւպատոս առաքել։ Իսկ Պարսից տէրութիւնը խոշնդոտ էր լինում, ասելով թէ զաշնագրութեան մէջ այդպիսի պայման չէ յիշուած։ Թէև չատ չեղուեցանք մեր նպատակից, այսու ամենայնիւ յիշենք այստեղ մէկ եղերերգական

անցք, որ վերաբերվում է դարձեալ ազգային պատմութեանս նիւթերին։

Մազանդարանից մէկ երեւելի խան նամակ է գրում Խոսրով-խանին, թէ արդարև շատ գերիներ և գերուհիներ ունիմ կանանոցումս, կամ արտաքոյ կանանոցիս, և կամենալով առաքել քեզ մէկ գերուհի ընծայ, որպ ողջախոհութեան երաշխաւոր լինէի, ընտրեցի այս եօթը—ութը տարեկան գերուհին Դիլ-Ֆրուշը անուն, որն որ առաքում եմ ձեզ ընծայ և այլն։ Այս գերուհին, լինելով գեղանի, ուշիմ և լեզուանի, փոքր մի-ջոցում զարմանալի համակրութիւն է ստեղծում դէպի Խոսրով-խանը, նոյնպէս վերջինս էլ դէպի նա, զոր ինչպէս իւր զաւակ, սիրում է։ Մանթաշեանցը պատմում էր, թէ «Խոսրով-խանը տանը լինելիս, Դիլ-Ֆրուշը (այսինքն ուրախութիւն սրտի) նրանից չէր հեռանում և խանն էլ սիրում էր նրան խօսացնել և հետը հանգիստ անել, նրա սրտմտա խօսքերը լսել. ուստի շատ զանազան ձեռք չորեր կարել տուց նրա համար, և 20 ոսկի ծախն չարուք և 20 էլ արաբչիի վերայ ճակատից քաշ անելու պարգևեց։ Միրզայ-Նաղուրն էլ մէկ քանի թանկագին քարերով մատանիներ բաշխեց. և վերջինս ամէն անգամ, մեզ մօտ եկած միջոցին, որ և իցէ պարգև կրերէր նրա համար, և հայերէն երեք բառ կը սովորցնէր, որպէս զի նա իւր լեզուն խպառ չմոռանայ, քանզի արդէն սկսել էր մոռանալ։ Դիլ-Ֆրուշը երբէք մէկ մահմէդականի չէր մերձենար, ասում էր Մանթաշեանցը, նոցանից ոչ միրգ, ոչ քաղցրեղէն անգամ չէր ընդունիլ, նրանց տեսնելիս մռութը քաշ կանէր, կայծակի նման կփախչէր կերթար կամ խանին կը կըպչէր և կամ ինձ, ու տաղ կանէր կը մնջուէր, որքան կը խօսացնէիք. կը ստիպէիք մեր հարցին զոնէ պատասխանել, նա չտմառուած պատասխան չէր տար. ընդ հակառակն երբ Մանուչար-խանը, Ջօհրաբ-խանը և ուրիշ հայ կամ վրացի գերիներ գային մեզ մօտ, չկանչած նա կը վազէր, կմօտեներ նրանց, հետերնին կխօսակցէր, իւր միամտա, բայց սուր և խելացի զրուցներով կծիծաղացնէր և կզարմացնէր։ Մէկ քանի անգամ էնպիսի պարսիկներ եկան, զոր Դիլ-Ֆրուշը չէր տեսած, նրանցից ևս քաշուելով փախաւ։ Խոսրով-խանը ծիծաղելով հարցնում է, «Դիլ-Ֆրուշ, ինչից ես դու ճանաչում, թէ սա թուրք է, միւսը քրիստոնեայ, այն ինչ մենք չենք կարողանում չգիտէր։ Պատասխանում է նա թէ «երեսի որ ոչ ձեր աչքումը լոյս կայ և ոչ ձեր քիթը հոտառութիւն ունիր։

Մէկ օր մէկ Շամքօրեցի հայ եկաւ խանի պալատը և առաջ ինձ պատահեց, ասում էր Մանթաշեանը. նա հարցրեց,

թէ լսել եմ, որ այստեղ մէկ հայ աղջիկ կայ, կարելի է որ նա իմ ազգականս լինի, խնդրեմ ցոյց տաք։ Ես ես գնացի, իմացում տուի խանին, որ Դիլ-Ֆրուշը հետը դուրս եկաւ։ Ներսիցը Դիլ-Ֆրուշը տեսաւ, զնամբուեցին, սիրտնեց, դեղնեցաւ, թմնեցաւ, պուշացած — պելացած տեղն է տեղն արձանացաւ, մնաց սառած, յօնքերը կիտեց ժողովեց, աչքերը փոքրացան և խոր խոր սկսեց նայել նայեր երեսին։ Շամքուանցին մօտեցաւ Դիլ-Ֆրուշին ու լացով ասաց։ Նազլու ջան, Նազլու ջան... իսկ նա անարեկ մէկ քանի քայլ յետ յետ քաշուեց, անց կացաւ խանի միւս կողմը, բայց չարուկակ աչքերը չու

ջուսայ պարգևած զարդերից՝ աւելացրեց մէկ հատ քիչմիրի չալ, մէկ քանի ակնեղէն մատանիներ, ականջի օղեր, քարացներ և այլն. յետո մեատաքեղէն և բամբակեղէն ճոճիներ, զոլերեր, թաղիքներ, ասելով Շամբօռեցիին, թէ Դիլ-Ֆրուշի օժիտ համար պահեն, և մէկ բեռը չոր մրգեղէն ու մէկ ձի նրա հեծնելոյ և 50 թուման դրամ. Միրզայ-Եաղուբը պարգևեց մէկ լաւ բեռան տակի ձի և 10 թուման դրամ. Միւսներն էլ նոյնպէս չալեր, մեատաքեղէն և բամբակեղէն կարօտանք պարգևեցին, որոնք լաւ մտիս չէ—ով ինչ տուեց. Եաղլուն գուրս գալու բոպէին տխուր, բայց համեստ դէմքով նախ մերձեցաւ բոլոր ներկայ եղող հիւրերին ձեռը համբուրեց և ապա մտեցաւ թուրով-խանին, որ կանգնած էր, հեկեկալով՝ արտասուելով ծնկեց նրա ոտների առաջին, փոխոխակի համբուրում էր նրա ոտները և բղաւում, «խան ջան, խան ջան», թուրով-խանը նրան ուժով կանգնեցրեց և լալով սկսեց նրա երեսը պաչել, երբ և Եաղլուն նրա ձեռներն էր արտասուքով թաց անում, և յետոյ յանկարծ կրկին տարածուեց նրա ոտների տակը, գրկեց և սկսեց համբոյր համբուրի քամակից կրկնել». Այստեղ Մանթաշեանցը պատմելիս աւելի բուռն արտասուքով սկսեց հեկեկալ և ապա բոպէ՝ ապափ անցաւ, չարունակեց. «Հանդիսականներից ոչ ոք չմնաց առանց արտասուելու. Շամբօռեցին և ես հազիւ հազ կարողացանք պոկել (խլել) Եաղլուն խանի ոտներից և ուժով տանել հասցնել այն փողոցը, ուր ձիանքը պատրաստ սպասում էին. երբ ուզեցինք ձիու վրայ նստեցնել, նա ուրիշորդ արտասուքով ազատում էր — «Եաեեան-ԲԷԿ (Յոհաննէս Մանթաշեանցի անունը այդպէս կասէին նշանեզ), ամոչ ջան, խնդրում եմ, մէկ էլ թոյլ տաք գնամ վերջին համբոյրս մատուցանեմ խանի ոտներին, և ապա գամ Ճանապարհ ընկնիմ. Այդ աւելի զգալի և սարսափելի եղաւ հանդիսականներին. նա լացով վազով վազվազ գնաց փաթաթուեցաւ խանի ոտներին բըզզալով ազատակում էր, խան ջան, ինձ չմոռանաս, ես քո ոտից փոշին եմ... Հազիւ հազ երեք մարդով կարողացանք նրան խրտարել և տանել հեծցնել ձիու վրայ. և այսպէս Դիլ-Ֆրուշի սրտի սարսուռիներն այն օրը բոլորիս համար եղաւ սրտի սրսուռիներ».

«Խաներ հրամայեց ինձ, ասում էր Եաեեան-ԲԷԿը, մէկ քանի Ֆառաշներ (սպասաւորներ) ուղեկից անեմ Եաղլու-Դիլ-Ֆրուշին, որ տանեն հասցնեն կարասանին, որ մէկ ժամից աւելի էլ՝ զուրս էր գնացել. ես Ճանապարհում Ֆառաշների բնութիւնը, հաւատացի նոցա, այլ հրամայեցի հինգ ձի չուսով թամբեն, ինքս չորս սպասաւորների հետ տարայ

հաստրի կարավանին և ուղեկից եղայ անմոռանալի հարթ ուրախութեանը՝ մինչև Քիթաբաջ կայանն, յանձնելոյ կարավանապետին, որ զգոյշ կենայ ճանապարհներին և ապա վերադարձայ։

Այժմ վերադառնանք մեր Միրզայ-Եղուբին։

Միրզայ Եղուբը, ինչպես արդէն ասել ենք, լինելով մոգեանց քրիստոնեայ, նրա փայլուն վարքն ու պատիւը չէին կարողանում երչանկացնել Նրան, այլ միշտ մտածում է լինում թողնել այն խարուսիկ և խաուտիկ բաղդը և դնալ խաչաբակեաց մնալ իւր հայրենիքում, որ այժմ ընկած էր քրիստոնեայ թագաւորի ձեռը, ուր և կարող էր իւր հաւատն ազատորէն պաշտել. ուստի այն օրից, որ դեսպանը հասել էր Թէհրան, նա մէկ առիթ էր որոնում նրա հետ ծանօթանալ, օրպէս զի յայտնէր Նրան իւր սրտի ծածուկ խորհուրդը։ Նրա ծանօթները և նոյն իսկ խոսրով-խանը չատ լեալ պատմում էին, թէ երբ Ալլահեար-խանին (որ այդ ժամանակը Կաղաւազէմի պաշտօն էր կատարում) կանանոցում գտնուած երկու հայ-գերուհիների խնդիրը ծագեց. չատն առաջում է պատուելի Միրզայ-Եղուբը Դիլիջանովի մօտ, երբ և նա կարողանում է յայտնել դեսպանին իւր ներքին համոզմունքն ու նպատակը։ Երեսի ենչ ինչ անձինք, անդէպ այդ պատգամաւորութեան, պարսկական հոգւով զրպարտելով Միրզայ-Եղուբը, պնդում էին, թէ իբր նա գնացել էր դեսպանի մօտ և մատնել էր յիշեալ գերուհիների գտնուելն Ալլահեար-խանի կանանոցում, որ ըստ ամենայնի սուտ էր այդ լուրը։

Այդ պատգամաւորութիւնից մէկ քանի օր անցած Եղուբը գնում է գիշերով դեսպանատունը այն նպատակաւ, որ մնայ այնտեղ. իսկ դեսպանն ասում է նրան չէմ կարող ընդունել քեզ ծածկաբար գիշերով, մինչդեռ իմ ամենայն գործողութիւնները պէտք է լինեն յայտնի և օրը կէս օրով. ուրեմն այժմ գնա, լաւ մտածէ՝ և եթէ, արդարև, կամենում ես վերադառնալ հայրենիքդ, ուրիշ անգամ օրը կէս օրով արի դեսպանատուն, որ ես այն ժամանակը կարգանամ քեզ ընդունել և պատասխանել։» Եղուբը վերադառնում է, ու հետևեալ օրը, առաւօտից մէկ երկու ժամ անցած՝ իւր եղբօր և երկու հայ գերիների հետ գնում է մտնում դեսպանատունը։ Այն օրը Թէհրանի մէջ խոսակցութեանց գլխաւոր նիւթը լինում է Եղուբի գնալ մտնելն Դուստաց զրոյցի ասել, որին չատ մարդ չէ հաւատում ասելով թէ ինչպես կլինի, որ Նա այն փարքն ու պատիւը թողու և գնայ մտնի այնտեղ։ Երկրորդ օրը դեսպանը դեսպանատան սպասաւորներից մէկը գնում է

Լաղուբի ծառաների հետ, որ գնան վերջնոյս տան կայքը, որտեղ տեղաւորուած են լինում եօթը բեռան մէջ, բերեն գեղապատուոյն. եօթն ջրի բարձած ուղում են դուրս բերել Լաղուբի պալատից, և ահա Մանուչար-խանի մարդիկը գալիս են արգելում և գրաւում տանում. Հետեւեալ օրը դեսպանը առաքում է դեսպանատան թարգման Միրզայ-Նարիման Մելիք-Շահնազարեանը պաշտօնական կերպով Մանուչար-խանի մօտ հարցնել արգելելու և գրաւելու պատճառը։ Վերջինս պատասխանում է, թէ ես արքունիքի հրամանով արգելեցի և եօթն բեռները ջրիներով ուղարկեցի Լաղուբ-ազէմի մօտ։ Թարգմանը դիմում է Լաղուբ-ազէմին, որ պատասխանում է, թէ Լաղուբը, որովհետև չարի կանոնցի գանձապետ և մատակարար էր, այն ժամանակուանից պարտք ունի գանձարանին, բացի նրանից՝ կանոնցին պատկանեալ շատ ամրեղէններ և զարդեր կան նրա մօտ, որոց համար չարի հրամանաւ գրաւել ենք նրա կայքը։

Դեսպանն այս լուրը հաղորդում է Լաղուբին, և վերջինս պատասխանում է՝ թէ «այդ ամենը պատրաստեցեր և դրպարտութիւններ են. քանզի, նախ՝ մերթ մէկ տարի է, որ ես այդ պաշտօնից հրաժարուած եմ, ապաքէն եթէ հարիւր ունէին հետս, ինչի մինչև ցայսօր լռել էին. յիրաւի, պաշտօնատար ժամանակս ստացել եմ գանձարանից զանազան ժամանակ գրամներ, բայց պաշտօնից հրաժարուելիս յետոյ հաշիւներս վերջացրած՝ անգրաղրագիր ունիմ, որ գանձում է արկղներիս մէջ և կարող եմ ցոյց տալ ում որ կամենաք։ Երկրորդ՝ կանոնցի ամրեղէն և թանկագին զարդերը՝ հանդերձապետը կամ գանձապետն ուանդելիս, ստացողից ստացական կստանայ, ապաքէն եթէ ինձնից մէկ այդպիսի ձեռագիր ունին, թող յայտնեն և ես պատասխանատու լինիմ։ Նա մանաւանդ, որ զարդ կամ ամրեղէն ասած բաները, ամեն օր կանոնցին հարկաւոր են լինում, մինչ մէկ տարուայ միջոցում նրանք մէկ անգամ գոնէ չհարկաւորեցան, որ ինձանից վերստացել էին։

Հետեւեալ օրը դեսպանը նշանակում է դեսպանատան թարգման Միրզայ-Նարիմանը, որ Միրզայ-Լաղուբի հետ գրում է Մանուչար-խանի պալատը, ուր լինում են և արքունիքից նշանակուած մէկ քանի պետական անձինք, որպէս զի այս գործը քննեն։ Այստեղ յայտնվում է, որ Միրզայ-Լաղուբից գրաւած բեռներն, արդարև, իսկեիսկ Մանուչարը ուղարկում է արքունիք, ուր լցցրել են մէկ սենեակ և դուռը կնքել վերջնոյս կնքովը։ բայց յետոյ մինչև օրն արքունիքը դիտերով հրամայել է սենեակի դռան կնիքը՝ առանց Մանուչարին խա-

ցում տալը, խորտակել, որով և բնակիչից ուզեցածները հանել են։ Նարիմանը տարակուսած վերադառնում է Լազարի հետ, քանզի սա մի փասա էր, որ այն ինչ որբուհիքը լսում է անդրբլուգիր և կամ սառցական լինելը Լազարի արկղների մէջ. վաղուցուց առանց Մանուչարին իմացնելու տալով է կատարվում այդ կինը խորտակելը, որպէս զի անդրբլուգիր կամ սառցական հանելէն յետոյ, ուրիշ վատերական Թղթեր եա՞ եթէ լինեն. Նրանք էլ հանեն։ Այդպէս և լինում է, քանզի նրա կայրի կէսը համարեա չէր մնացել արկղների մէջ։

Դեսպանը տեսնելով որ այս գործ. ինեռաւսած է, ուստի այս անգամը գեսպանատան ուսդ առնելացիր Մալցովը, Թարգման Միրզայ-Նարիմանը և Միրզայ-Լազարը միասին զարկում է Լազր-ազէմի առանը։ Լյսարուսն պաշտամանական զրոյցներից՝ յուզումն և խռովութիւն է ծագում երկու կողմի պատուիրակների մէջ. քանզի Լազարի կայրը բանալ և ամենեցից բաներ հանելը՝ Մալցովն անուանում է նախ ապատակութիւն և ուսրաուութիւն և ապա—զգոյութիւն, որ այդ ամենը վերաբերում էին որբուհիներին, և որոնք, ի հարկէ, վնասացուցիչ էին ներկայ եղող պարսիկների համար։ Այսուհետ Մանուչար-խանը հրաժարվում է այդ մասնաժողովի անդամակցութիւնից, որպէս զի ամենեան լիանալուի այդ գործի մէջ։

Միևնոյն օրը Մանուչար-խանը գնում է խորտով-խանի պալատը։ Մանթաչեանը պատմում էր, որ թէ նոքա առանձնացած, ես գրան քանակից կանգնեցի, որ լսեմ թէ նոքա ինչ են խօսում, որովհետև Լազարի գեսպանատան մարդերն ինձ շատ հետաքրքրական էր եղած. ուստի ցանկանում էի որ և իցէ լսել այդ անցքի մասին։ Մանուչար-խանն ասաց խորտով-խանին, թէ «Լաւ իմ հրաժարելու պատճառը դոյց տուի, որ իրր թէ նեզացայ Մալցովի արտասանած անպատիւ բառերի համար։ Բայց այդ չէր, այլ թէ նկատեցի, որ Դուսի գեսպանատունն այնպէս հատատա մէկ ապացուցութիւն ունի այժմ, որով կարգարանայ, և մի որ մեզանից նրա արդարութեան կամակից լինի, գոնէ, մէկ բառով, անուշտ խրատի թշնամի կնշանակուի. վասնզոյ ես չեմ ուզում այդ անունը վատանել։ Այսու ամենայնիւ, եթէ Մալցովի տեղն էի եղած, կասէի, թէ ես այդ ձեր արարմունքի անունը չեմ իմանում, զուք սովորեցրէք ինձ այնպէս մէկ բառ, որ այնուհետև ձեր սովորցրած բառովն անուանեմ ու ես ես նեռուն խնդրեմ ձեզանից։

Զիարդ և իցէ, այդ անցքում ոչ թէ չարը, այլ երեսի պաշտամանաարներն էին մեղաւոր, որոնք ոչ միայն չէին արգե-

լում անհիմն զանազան լուրեր տարածուէին քաղաքի մէջ, կամ թէ գործի էութիւնը ճշմարտութեամբ հրատարակէին ժողովրդի մէջ, որից նոցա միայն ու հոգին հանգստանար, այլ ընդհակառակն ինքնանք էին տարօրինակ զրոյցներ տարածում, զրօրինակ, իբր թէ Կաղզուն առանձնաժողովի մէջ հայտնել է մուսուլմանների կրօնը, որով ամենայն ոք, երբ էս բառերը լսում էր, աւելի ևս զայրանում ու զզրդվում էր Ի հարկէ այսպիսի զրպարտութիւններ և անհիմն լուրեր հրատարակողները իբրեանց շարժարիթներն ունէին, այսինքն մէկ ազգակցի արտադրել, գերիներ չվերադարձնել և դեսպանին աչքը վախցնել, որ աւելի հնազանդ չլինի Շատերի նպատակն այս վերջինն է եղած և ոչ թէ անկարգութիւն, որ հանէր ցմարդասպանութիւն և այն էլ դեսպան խորհրդոյ, որ միայ—Մահմեդական կրօնին անտանելի է և մահացու մեղք է համարվում

Եւ այսպէս այդ անցքին վերաբերեալ բանակցութիւնն Իրանի և դեսպանատան մէջ շարունակվում էր մէկ շաբաթ, բայց ոչինչ չէր զրանում, քանզի Պարսից տէրութեան պահանջներն Կաղզուից բոլորովին անհիմն էին, զրոս արքունիքը չէր ուզում խոստովանել, իսկ դեսպանատունը տատակութեամբ պահանջում էր, որ ոչ միայն Կաղզուի կայքը լիովին վերադարձնեն, այլ և այն պակասորդները, այսինքն անդորրագիրները, հաշուեմատեանները, քարեղէն, չարեղէն և մանաւանդ հազուագիւտ ձեռագիրները ևս, ուստից և իցէ ժողովեն. բայց արքունիքն ամենաղժուար վիճակումն էր, քանզի արկղներ բանալու համար իրեանից նշանակուած մարդիկը շատ բաներ վեր էին առած իրանց համար. աւելի պարզն ասած՝ զողացած տարած էին, և այժմ կամ չարի երկիւղից ուրանում էին, և անկարելի էր լինում համաձայնվել և ապացուցանել թէ ով, ինչ է տարել, և կամ արքունիքը չէր ուզում ժողովել և գոյութեան անուն վատանել։

Մինչ այս մնաց այն, հասնում է 29 Յունվարի (1829 ամի) օրը կիրակի, այն ինչ դատարիչոջիկ կատարած և յուզուած ամբոխը, առաջնորդութեամբ, թերես և դրդմամբ, մէկ քանի վարպետած և պարտարոյծ մոլլաների ու սէիդների, ներկայանում են խամ-Ջուսէ Մոլլայ-Մահմին մէչիթումն և առաջարկում այս հարցը. «Արդեօք մէկը, որ մուսուլմանացած լինի ու կրկին վերադառնայ իւր առաջուան կրօնին, նրա հետ, համնմատ չարեսաթի, ինչպէս պէտք է վարուած»։ Մոլլայ-Մահմն պատասխանում է. թէ «Հարան պէտք է սպանած»։ Ահա այս երեք բառը լինում է այդ երեկի զզրգութեան առիթը. Ամենք ասում էին, թէ իբր խամ-Ջուսէն հարցրել է, թէ ով է

այդ հաւատարիմ մարդը։ Ամբոխի միջից պատասխանել են, թէ Միրզայ-Եաղուբ ներքինին է։ Խան-Ջուսէն հարցը կրկնում է. թէ «գուշ նորա բերանից լսած էք մուսուլմանութիւն ուրանալը»։ Ամբոխը հաստատում է ասելս։ «Երբեմն նախ» ասում է Խան-Ջուսէն, «կամ էր նրանից ձեր ականջով լսէք և կամ երեք արժանահաւատ մարդիկ լսէին, վկայէին, յետոյ այդ հարցն առաջարկէիք ինձ»։ Կայմէ ունար, ասում էին, թէ իբր ամբոխի միջից մէկ քանի մարդ է գուրս գալիս և վկայում, որ նոքա լսեցին իւրեանց ականջովը, երբ Եաղուբը պատասանեց այդ ուրացութիւնը։ Եւ այլք ասում էին, թէ իսկ և իսկ գրգռող մոլլաները գնացել են տարբերութիւնց մարդիկ են բերել մոլլայ Մանէի մօտ, և նոքա վկայել են, թէ առանձնամոզովի օրն ինքեանք ներկայ էին, երբ Եաղուբը հայհոյեց զմուսուլմանութիւնը ասելով թէ «ես ընդունել եմ քրիստոնէութիւնը»։ Ամենք էլ հաւատացնում էին թէ ամբոխն առաջնորդող մոլլաներին կամ սէիդերին ապտրած էին գունից, որ ամբոխն առաջնորդեն մինչև դեսպանատուն և այնտեղ սովորեցնեն, որ գուշն գոռան, բայց ներս չմտնեն դեսպանատուն և ոչ որի վնաս չտան, մինչև որ արքունիքից պատգամաւորներ դան, գրուեն ամբոխը, որպէս զի դեսպանը վախենայ և այնուհետև խաղաղութիւնը չվարուի գերիների մասին, բայց քաջը գուռը չկարողացաւ. ժամանակին պատգամաւորներ յուզարկել. ուստի հակառակ նրա նպատակին, ծագից այդ տխուր անցքն ու կոտորածը։ Չլինէր և չլինէր այս ապացուցուած է, որ ամբոխը, մոլլայ Մաէնից վերոյգրեալ վերհիշը լսելով, առաջնորդող մոլլաների հրահանգութեամբ, այն օրը գրվում են, որ հետևեալ օրը ժողովուին Խան-Ջուսէի մեսջիթի գաւիթը, և ինքեանք, գրգռողներն էլ գնում են չուկաները, խանութից խանութ և քարվանսարէ քարվանսարէ չրջում, ասպարում, որպէս զի հետևեալ օրը ոչ խանութ և ոչ քարվանսարայ բանան, այլ ժողովուին Խան-Ջուսէի մեսջիթի գաւիթը. սրա հակառակ եթէ մէկը խանութ կամ քարվանսարայ բանայ, նրա միջի ապրանքն ու եղած վեղարը թալանեն։

Յունվարի 30-ին, օրը երկուշաբաթ, լուսը նոր-նոր բացուած բալէին լուր են տալիս Մանուչար-խանի տանը, թէ մէկ քանի մոլլայ ու սէիդներ բազարում չրջում են և արգելում խանութների դռները բաց անելը, ասելով թէ «այսօր պէտք է գնալ դեսպանատունը, այնտեղէն հանենք ու կոտրենք անենք Միրզայ-Եաղուբ հաւատացող»։ Մանուչարը քնից զարթնցնել է տալիս Սէյֆուլա Մելիքովանցը և առաջում դեսպանատունը, որ ասեն դեսպանին թէ քանի որ բազարը

բոլորովին բաց չէ եղած և ամբոխը չէ համագումարուած, ուզարկէ Միրզայ-Եաղուբը մէկ քանի մարդով Շահ-Աղդուլ-Ազիմ ուխտատեղին, ուսկից ոչ ոք չի համարձակուիլ հանել, կամ նրան այնտեղ ձեռնամուխ վնել։ Բայց երբ ամբոխը համագումարուեց և երեսը դէպի դեսպանատուն չուռ տուեց, այն ժամանակ մեր տէրութիւնը ոչ թէ չէ կարող արգիլել ամբոխը և նրա յախուռն յարձակմանը դիմադրել, այլ և դեսպանատունն էլ. թերևս, ենթարկուի վտանգի։ Սօլօմոնը հասնում է դեսպանատունը, լսում է, որ դեսպանը դեռ ևս քնած է, և ոչ ոք էլ չէ համարձակում նրան զարթեցնել։ Սօլօմոնը չատ որ սպասում է նրա սպասաւորներին, երկար միջոց անցնելէն յետոյ, հազիւ զարթեցնում են դեսպանը. վերջինս ասում է նրան թէ «մէկ մարդ, մանաւանդ Ռուսաց հպատակ, որ եկած, ապաւինած Ռուսաց կայսերական դրօշակին և նրա տակը նստած լինի, ես չեմ կարող դուրս հանել նրան դեսպանատանից, բայց, եթէ Եաղուբն իւր կամքով դուրս գնայ, ես արգելաւոր չեմ լինիլ»։ Սօլօմոնը գնում է Միրզայ-Եաղուբի մօտ և յորդորում, որ կատարի Մանուչարի ապապարածը, բայց նա պատասխանում է, թէ «ես եկած, ապաւինած եմ Ռուսաց հզօր կայսեր դրօշակին, ուրեմն, եթէ նրա դեսպանը կարտաքսէ զիս դեսպանատանից, կերթամ Շահ-Աբդլ-Ազիմ. ընդհակառակն, ես իմ կամքը դուրս չեմ գալ այստեղից, թէև զիս այստեղ կոտոր անեն, ես ուրախութեամբ կը մեռնիմ»։

Սօլօմոնը վերադառնում է Մանուչարին լուր տալիս ինչ հարց ու պատասխանի էր եղած դեսպանատանը։ Մանուչարը կրկին անգամ առաքում է Սօլօմոնը ասել դեսպանին, թէ Մանուչար-խանը երաշխաւոր է լինում, որ Շահ-Աբդլ-Ազիմ ուխտատեղից մէկ քանի օրից յետոյ նա հանէ զՄիրզայ-Եաղուբն ողջութեամբ, կուզես այստեղ քեզ, թէ կամենաս Թարիզ յանձնէ ձեր հիւպատոսին, միայն թէ լսէ խօսքիս և առաքէ զԵաղուբը ուխտատեղին, քանի որ ամբոխն երեսը դէպի դեսպանատուն չէ դարձուցած։ Դեսպանը այդ ապապարանքն ևս չէ ընդունում։ Սօլօմոնը այնուհետև կրկին գնում է Եաղուբի մօտ, որ սա, գոնէ, դուրս գայ իւր կամքով դեսպանատանից, ուր նրա, Սօլօմոնի հետ գնա ուխտատեղին։ բայց Եաղուբը հանդարտ, անխռով և անահ հոգով նստած, կրկնում է այն, ինչ որ առաջ պատասխանել էր։

Սօլօմոնը սրտաբեկ ուղում է գնայ Մանուչար-խանին լուր տանել, և ահա նախագաւթումն տեսնում է Աբրահամ Դաղաչեան Հայտարխանցիին, որ գիշերն էր եկած։ Այս անձը երկար ժամանակ ծառայելով Պարսկաստան՝ Ռուսաց դեսպա-

նատան մէջ, քաջ տեղեակ էր Պարսից սովորութիւններին և բնաւորութեանը, և յետ էր մնացել Թավրիզ, որ դեսպանատան ծանրութեան հետ գայ, և, այն անցեալ դիւերէն երկու ժամ անցած, հասել էր Թէհրան. վասնորոյ Սօլոմոնը, նրան տեսնելով չատ ուրախանում է և, գործի էութիւնը համառօտաբար պատմելով խնդրում է, որ նա գնայ, յորդորէ զդեսպանը, որ ունկնդիր լինի Մանուչար-խանի առաջարկութեանը։ Դաղաչեանը գնում է դեսպանին խնդրում, բայց նա դայրանում է նրա վրայ և ասում թէ «այդպիսի բանում քո խառնուին աւելորդ է, հրամայում եմ, որ ինչպէս իմ նախորդների ժամանակ խառնուել ես այդպիսի գործերի, այսուհետև չը խառնուիս»։ Սօլոմոնը Դաղաչեանից այդ յիշեալ խօսքերը լսելէն յետոյ, վերադառնում է ու Մանուչարին իմացնում։

Հազիւ թէ կէս ժամ էր, որ Մելիքեանցն այնտեղէն հեռացած էր, և ահա խառնիճաղանճ ամբոխը գոռում-գոչումով հասնում է դեսպանատան մօտ ու չէ համարձակում ներս մտնել դեսպանատուն. իսկ դեսպանը եղածը տեսնելով հրամայում է կօզակներին և վրացի ձիաւոր զօրականներին, որ կուռ զինաւորուին, մէկ մասը մնայ նախագաւթի մէջ և միւս մասը գնայ նախագաւթի կորի վրայ կանգնի [1]։ Այնուհետև դեսպանը պատուիրում է, որ գլխաւոր դուռը գոցեն. վասն զի ամբոխը, հետզհետէ չատանում, խիտանում և երբեմն երբեմն կատաղաբար աղաղակներ էր հանում, «հայլայ», «հայլայ» գոչելով, բայց ոչ ոքի չէր վնասում. Այդպարն, ամբոխը, ինչպէս ասացինք, զրդռուած էր մօլլաներից և սէիդներից՝ վախացնել զդեսպանը. ուստի և յանկարծ այն ամբոխի սրիկաներն ու անառակները պատգամաւորի բերնով կպահանջեն, որ դուրս հանեն դեսպանատանից Միրզայ-Յաղուբը, ապա թէ ոչ՝ դեսպանատան դուռը կը կոտրեն, ներս կը մտնեն ու Յաղուբը խլելով նոցա ձեռքից դուրս կբերեն. բայց մօլլաներն ու սէիդները սաստում են նոցա և արգելում։

Արքունիքը լսելով ամբոխի տրածը՝ կարգադրում է, որ մէկ քանի չարագաներ գնան, համոզեն նոցա և ցիրուցան անեն. բայց մինչև այդ չարագաների լուացուիլը, նամաստ անելը, հագնուիլը, ձի թամբելն ու ծառաներ ժողուելը երկար միջոց է անցնում, և գալիս հասնում են այն ժամանակ՝ երբ բանը բանից անցել էր [2]։

---

[1]) Սոցա հետ լինում են և մէկ քանի գերիների տէր հայեր։

[2]) կամարների պատմութիւնը ասում է թէ «Շահզադէքը գնացին չատ խնդրեցին, որ ամբոխը ցրուի, բայց ամբոխը նրանց ունկնդիր չէ։

Այստեղ փոքր ինչ կանգ առնենք։ Այդ տխուր անցքին ներկայ և ականատես եղողները [1]) պատմում էին թէ՝ նախա. գահի կարի վերայ զրահաւորուած Ռուսաց զինուորական. ները ոտքի վերայ կանգնած նախաձայիկ էին անում, գինի բերել տուին, խմելիս՝ բաժակները բարձրացնում էին այնպէս էին խմում, իբր թէ մէկ մէկի կենաց էին խմում. նոցանից մէկը յայտնի համարձակ բաժակը ձեռին բռնած նչանագի արաւ ամբոխին, իբրև հրաւիրման նչանակ, օրպէս զի ամբոխն ևս գնայ և խմէ։ Նրա այդ յանդգնութեան վերայ խառնիճա. զանձը կատաղեց, և ուզից դեսպանատան սենեակ կողմից (որ ցածր էր) բարձրանալ կսուրն ու նրանց տեղնիտեղը մնացրնել, բայց մօլլաներն ու սէիդները դարձեալ հայհոյելով և դատա. փետելով զամբոխը, թոյլ չտուին նրան դէպի այն նկրտել։ Հաւանական է այն լուրը, թէ իբր այդ մօլլաները համախմբել էին զամբոխն ազբունքի հրամանաւ, և տեղեակ էին, որ Շահ. զադաներ պիտի գային, ուստի թերևս նրանց սպասելով թոյլ չէին տալիս։ Ռուս զրահաւորները վերջացրել էին իւրեանց նախաձայիկն, այն ինչ յանկարծ կարիցը մէկ հրացանի թէ տարձանակի ձայն զուրս եկաւ, և պայթեցաւ թէ չէ, նրա գնդակից ամբոխի մէջ. գլխաւոր դռնից 20, 25 քայլ հեռի, դէպի հիւսիս, մէկ 15—16 տարեկան պատանի վիրաւորուեցաւ։ Սորա համար սրիկաներ և անատակներ դեսպանատան գլխաւոր դուռը թողին, և զայրագին, մոլեգին և վայրագ գոչումով և ազազակով խառնուեցան պատանիի չորս կողմը, և մէկ քանի րոպէից յետոյ՝ լուր տարածուեցաւ թէ՝ վիրաւորեալ նաՀա. տակը հոգին փչեց. մինոսն վայրկեանին գժբաղդաբար Սալ. մոն Մելիքեանցը հեծած և Մանուչար-խանի պարսիկ սպասա. տորներով և ծառաներով շրջապատուած, յայտնուեցաւ հիւսի. սային կողմից, ուր և պատանին վիրաւորուած էր և փչել էր հոգին։ Նա գալիս էր Մանուչար-խանի կողմից ասել դեսպա. նին թէ՝ Շահզադէքը գալիս են ցրուել ամբոխը, ուրեմն և դեսպանը լաւ կանէր որ յանձնէր զնացուցն շահզադանեին,

---

զաս և այլն, և այլն։ Ներկայ եղողներից մէջ որ այդ չհաստատեց, ուրեմն և անհիմն է Կանգնաթների պատմութեան դրածը։

[1]) Թէհրան շատ պարսիկներ ներկայ և ականատես մարդիկ, մէջ միայն այդ անցքը պատմում էին պարծենալով, այլև չէին երկնչում ասել թէ՝ և ինքեանք մասնակից են եղած այդ եղեռնագործութեանը, մանաւանդ և անուն յանուն յիշում էին թէ՝ ով ինչ էր կատարել այն օրը, և ով ինչ էր տարել, և կամ ոչք էին մօլլաներն ու սէիդները, գլխաւորապէս Աղա Միր-Աստղ կոչ. վեցեալ Սէիդ-Մուրթազա Ջնանդեանի, Մուլլա-Մահմատ Թալանգրեչ և Մուլ. լա-Սամանդ Մարդխան և ուրիշները։

որպէս զի այս միջոցով ամբոխը հանդարտուի և ունկնդիր լինի նրանց, կամ թէ այնուհետև ինչ որ պատահի Եաղուբին, թող արտաքոյ դեսպանատանը լինի։

Բորբոքուած ամբոխը կարծելով թէ Պօլսոմնը դեսպանատան ատենիմանատար է, որովհետև նրանց համադեստովն էր, պարիսնուշա կրքով չորս կողմից թափիւեան նրա վերայ, երիվարից վայր տապալում, նախ աքացիով և ապա քաշ տալով տանում են այնտեղ, ուր վիրաւորուել էր պատանին և հոգին փչել. բռնցով և ցուպերով նրան չարաչար սպանում են։ Այնուհետև առաջնորդող մոլլաներն ու ոէիֆները կորցնելով իւրեանց ազդեցութիւնը՝ չէին կարողանում զսպել ամբոխը. և ոչ որ չհանկացաւ, սատամ էլին թէ՝ դեսպանատանն ինչ անցք էր անցկացել, որ ասին թոթափել գլխաւոր մեծ դուռը բաց էին արել, ներսն եղած պարսկի պահապաններն իւրեանց սուլթանի հետ, որ հայ էր, արտաքսել էին և դուռը կրկին գոցել [1]։

Ամբոխն գՊօլսոմնը չարաչար սպանելէն յետոյ, չարաշրջուկ դռռում-գռռումով և չռմնդով թէ՝ ՀՕՐՀՆԱԼ-ՋԼՀԱԲ (կրօնական պատերազմ) անհաւատ հները պիտի սատակին և չան պէս ջարդուին. երեսը դարձնում է դէպի դեսպանատունը։ Բաւական միջոց փորձում են գլխաւոր դռան փեղկերը խորտակել, բայց չեն կարողանում. վատնորոյ քամակում կանգնած խաժամուժն սկսում է քարէ կարկուտ տեղալ դեսպանատան վրայ։ Մինչ այս՝ մինչ այն, չուկայից թէ՝ որտեղից հասցնում են մեծ մուրճեր, կամաններ ու բրիչներ, և անհաղաւաջ ճռնչմամբ դուռը ջարդուրբրի են անում։ Այդ ճռնչումի հետ միանում է և ամբոխի անեղ աղաղակը, որից քաղաքը գարշուրում էր։ Ամբոխն անդիմադրելի հեղեղի պէս լցվում է դեսպանատան նախադուխիը, բայց կոզակները, հայերն ու վրացիները անվեներ քաջութեամբ բաւական ժամանակ դիմադրում են, որով ամենք սոցանից վիրաւորվում են և ամենք էլ սպանվում, թէ և հակառակորդներից ևս սպանվում են, այսու ամենայնիւ դարձեալ դեսպանատան զինուորականները թոյլ չեն տալիս ամբոխին, որ ոտք կոխէ առաջնորդող բակը։ բայց երբ տեսնում են, որ առաջնորդող բակի կուսերի պատերից

---

[1] Եղբարութիւնը ասում էր թէ դեսպանատունը կախարում էր պահապան զինուորներից, բայց եթէ իրէր, չէի խմնում։ Դուռները մեզ բաց տալով դուրս կանչեին դեսպանատանից, եթէ դուռը բանալէն զլխեիներին, և երբ ամբոխը հասարակից վիրաւորեան վերայ, Դուռները յանկարծ ժամանակ գտան, շտապ տարեալով բաց արին դուռը և մեզ դուրս թողին։ Ասանք թէ պահապանները պարսիկներ էին, Դուռանից կախած ունէին. իսկ ես խոշ քրիստոնեայ էի և նրանց խիստ մտերիմ։...

ամբոխը փայր իջաւ, այն ժամանակը նոքա՝ դեսպանատան մարդիկը, նահանջում են, չտալով տագնապով գնում են երկրորդ բակի նախագահի դուռը տիրում, որպէս զի նոքա չմտնեն երկրորդ բակը։ Քանզի դուրսը փողոցում մնացած անգուսպ ամբոխի մեծ մասը տեսնելով, որ ռուսները նեղ նախագահում կանգնած՝ թոյլ չեն տալիս որ առաջնթաց խառնիճաղանջը դեսպանատունը մտնէ, վանողաց և սխոտի խնամքն պատերի վրայով բարձրանում է կտուրի վերայ, և այնտեղից անց կենում դեսպանատան կտուրը, մինչդեռ այնտեղ եղած Ռուսաց զինուորուած պահապանները իջած են լինում նախագահում եղած զինուորականներին օգնելու համար. քանզի ոչա բարձր կտուրից՝ դեսպանատունը ապահովուած էին կարծում։

Համարձուտերէզը, որ հարուստով և դէմքով շատ նման էր պարսկի, նրան ձեռնամուխ չէին եղած. նա ասում էր թէ՝ Միրզայ-Եաղուբը մինչև այն վայրկեանը հանդարտ և խաղաղ ոգով նստած էր իւր սենեակում. բայց երբ տեսաւ ամբոխի ծէրը մտաւ ներս նրա սենեակը (աւելացնում էր նա, թէ կարծեմ մեր պարսիկ պահապանները, որոնք զինուորականներ էին, դեսպանատանից արտաքսուելէն յետոյ, դուրսը՝ ասած լինէին ամբոխին թէ՝ ուր է Եաղուբը օթեանած, քանզի ամբոխը ուզղակի դիմեց նրա բնակարանը), նա, Եաղուբը, կանգնեց, մէկ քանի քայլ առաջ գնաց ու ասեց թէ՝ վնձ է ուզում, ինն անգէն ձեր առջեր կանգնած եմ, չուտ արէք նահատակեցէք ինձ (Շանիտ քանիդ), որ իմ պատճառաւ ուրիշները չը սպանուին։ Եւ իբր թէ մինչ հոգին ուտնդելը՝ նա կրկնում է լինում, բը զ ա ն ի դ, բ ը զ ա ն ի դ, այսինքն զարկէք, զարկէք։ Ինչպէս և լինէր. նրա մա ամբոխը կատր կատր է անում և ոտնակոխում. ու յետոյ յարձակվում երկրորդ բակի վերայ, որի դուռը սպառազինուած ռուսները բռնած էին։ Այդտեղ են լինում երկու կողմից էլ՝ և ես չարաչար և սաստիկ մարդասպանութիւններ, և Ռուսաց զինուորեալները կարի յամառութեամբ և քաջութեամբ կռուելով ու հետզհետէ սակաւանալով էլ չեն կարողանում դիմադրել, ուստի և պարտուորվում են լքանել իւրանց դիրքը և մտնել երրորդ բակը։

Դեսպան Դրիբօեդովը՝ որ այս միջոցին իւր սենեակի լուսամուտներից նայում էր այդ սարսափելի տեսարանին, հրամայում է մնացեալ սպառազինուածներին, որ դան ժողովուին իւր գտնուած վերնայարկի սանդուխների վերայ և առջեր թրով, հրացանով և կամ ատրճանակով կանգնին ու թոյլ չտան ամբոխին բարձրանալ վերը և մտնել իւր սենեակ-

ները, մինչև որ բարձրագոյն գոնից օգուտներն համար. իսկ ինքն սկսում է իր պաշտօնական զգեստները հագնել ու չքանչանների զարդարուել, որպէս զի ամբոխը գինը ճանաչելով պատուէ և ձեռնամուխ չլինի նրա անձնատուրութեանը. բայց իզուր էր նրա երևակայական կարծիքը. կատաղի ամբոխը ոչ մէկ բանի չէր նայում և ոչոքից չէր երկնչում. Դրգռող և գրգռող մոլլաներն ու սէիդները՝ Միրզայ-Կազուքը սպանել տալէն յետոյ՝ արդէն անհանգիստացած էին. Նոյնպէս փոքրաքան մտքեանց ծերերն՝ Կազուքը սպանելից յետոյ՝ համոզուած մուսուլմանի չարաբարոյ կատաղել համբերելով իրենց սրբազան պարտաւորութիւնը, կամ փոքրացներում կամ նրանք բակերի անկիւններում արձանացած՝ կանգնած հանդիսատես էին և սպասում էին վերջաւորութեանը. իսկ սրիկաներն ու անասունները, որոնք չդիտէին առ ինչ նկրտէին, անում էին ինչ որ կամենում էին. Գեսպանն այն գրութեամբ, երկար միջոց պաշարուած վերնայարկում, պաշտպանվում է մէկ բանի արի և քաջասիրտ կոզակներից, խառնիճաղանջը անձամբ և նրա բակի մէջ խանդաւած՝ տեսնում է որ չէ կարողանում իսպառ. Ինչել իր ախոյեաններին, սկսում է կարից յարձակուել. փորում քանդում է դեսպանի կացած սենեակի կուռը, գերանները ջախջախում է. Ջարդում, փշրում պաշարեալի գլխին ու բացուած ծակերից ներս թափվում սենեակների մէջ քարով, փայտով, թրով, ատրճանակով և հրացանով սպանում են դեսպանը, պլոկում են նրա չքանչաններ, հագած շորերը և նրա եռանկիւնի խոյրը, ու գուրս ձգում լուսամուտից, որպէս զի ցոյց տան ամբոխին թէ իւրանց յաղթութիւնը լրացաւ, և յետոյ սենեակներից ու բակից թափվում են քաջ կոզակների վերայ ու սրախողխող են անում, մինչև որ վերջապէս հանում են շահզադէրը, ու ամբոխը ցիրուցան է լինում.

Դեսպանատան մէջ ծառայողներից միմիայն Մալլոմին է ազատվում իւր սպասաւորի հետ, և վերադիրնալ Հարաբաքամ բէգը, թէև վերջինս չարաչար վիրաւորուած, երբ սրիկաները նրան ճանաչում են [1]).

Մանուչար-խանը միևնոյն օրը երեկոյեան մարդիկ է ու-

[1]) Մէկ տառեղ տարբերութեան Նամակի մէջ, որ գրուած էր Թէհրանից Ռաշտարեցի Ներսես արքեպիսկոպոսի վերայ (որ յետոյ կաթողիկոս) տարբերվում այս տեսակ տեղը, գրած էր թէ՝ բոլոր ազանատների թիւը 54 էր. իսկ Պատմագրութիւնը գերիների մասին ասում տարեգրների թիւը պակասացնելով առում է 48 անձինք էին.

դարկում և Սօլոմոն Մելիքանցի դիակը տանել է տալիս իւր պալատը. Ոսկում-խանումը տեսնելով իւր թոռան դիակը, խակեխակ կաթուածահար է լինում և հետեւեալ օրը վախճանվում է. Մանուչարը այդ երկու դիակը ուղարկում է որ Հայոց եկեղեցիի գաւթումն աւանդեն հողին, որպէս զի մէկ քանի օրից յետոյ Ս. Էջմիածին փոխադրել տայ, որ այնտեղ թաղուին.

Այսպէս ահա սպանուածների դիակները ամբողջ երեք օր մնում են դեսպանատան մէջ և չորրորդ օրը թեհրանի Քեալանթարը շահի հրամանով գիշերը ծածկաբար մարդիկ է վեր առնում, գնում դեսպանատան առջեւը բերդի խրամի մէջ փոս է փորել տալիս և ժողովել տալիս բոլոր դիակները ու միասին խառն ի խառն ածել տալիս այդ փոսի մէջ ու հողով ծածկում. Վեց թէ եօթն օր այդ անցքից յետոյ, արքունիքը լսելով, որ Մանուչարը կամենում է իւր մօր և քրոջ որդի Սօլոմոնի դիակները յուղարկել Ս. Էջմիածին, նա, արքունիքը, չգիտեմ ում թելադրութեամբ, մարդիկ է ուղարկում փոսը բանան, դեսպանի դիակը զատեն, տանին Հայոց եկեղեցիի գաւթումը նոյնպէս աւանդեն հողին, որպէս զի եթէ Թուսաց տէրութիւնը պահանջէ, աւանդեն նրան. Ուղարկած մարդիկը չեն կարողանում ճանաչել՝ որոշել դեսպանի դիակը, վասնզորդ հրաւիրում են մահտեսի Եղոն—Աւետիք Կուզինեանը և այլ առևտրական Թուսաց հպատակներ, որ թերեւս նրա կարողանան զատել. բայց ոչ ոք չէ կարողանում ճանաչել. Ով է լինում, ասում է թէ, բանը նրա, այսինքն դեսպանի իսկական դիակի վրայ չէ, այլ թէ նրա անուան վրայ է. վասնզորդ մէս օրը մէկ դիակ, որ միւսներից քիչ էր վիրաւորուած լինում, զատում են տանում եկեղեցիի գաւթումը թաղում. Երկու շաբաթից յետոյ՝ երբ Մանուչար-խանն իւր մօր և Սօլոմոնի դիակները մէկ թախթ-բէվանի, այսինքն պատգարակի մէջ է դնում և ուղարկում Ս. Էջմիածին մէկ քանի ձիաւորներով, արքունիքն էլ, Դրիբոեդովի կարգեցեալ դիակն այսպէս է առաքում, այսինքն երկու խարար լքցնում են յարդով, բարձել են տալիս մէկ ձիու վերայ և Դրիբոեդովի դիակն էլ մէկ զագազում ամփոփուած՝ դնում են երկու խարարի մէջտեղը, վասն զի մնաց մէկ դիակն առանձին՝ չէր կարելի բառնալ ձիու վերայ.

Այս տխուր անցքից ամսաչափ անցած, մէկ պարսիկ վաճառական ներկայանում է Մանուչար-խանին և յայտնում, թէ Միրզայ-Եաղուբն այդ անցքից մէկ քանի օր առաջ, որպէս աւանդ, յանձնեց ինձ մէկ կապոց քիշմիրի շալեր իւր կնքովը կնքած. որպէս զի յետոյ գրէ ում պէտք է կամ թէ

ցոյց տայ, նրան յանձնեմ. իսկ այժմ նա սպանուել է և չգիտեմ թէ անեմ կամ ում յանձնեմ. Մանուչարը հրամայում է նրան տանիլ յանձնել ծայրագոյն դիվանին, որը կրկին իւր հերթով կիսելով յանձնում է Մանուչար-խանին պահել իրրև առանդ. Ասում էին թէ Եաղուբը դարձեալ շատ թանկագին իրեղէններ է ունեցել ու զանազան անձանց աւանդել, բայց ոչ ոք չյայտնեց ու այնպէսով պարակուսեցաւ.

Թէպէ ժամանակից յետոյ, այսինքն 1832—1833 թուին Եաղուբից մնացեալ կայքը Թաւրիզի Ռուսաց հիւպատոսարանը յանձնեց Եաղուբի եղբօր (որ նրա հետ սպանուած էր, դեսպանատանը) աղջկայ ամուսին Սկրտիչ Քարտաշեանին, որը Ս. Էջմիածնի Սինոդին ատենադպիր էր. Սա Թաւրիզից Ս. Էջմիածին վերադառնալիս, ես ևս ուղեկից էի նրան մինչև Հին-Նախիջևան.

Ժ.

ԱՂԱ ԻԲՐԱՀԻՄ ՍԱՆԻ, ԱՑՍԻՆԵՌՆ, ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄ ԿՐՏՍԵՐ.

Սարպատականի տիրապետողները մէկ կողմից չէին կամենում ուղղակի կամ անուղղակի ճանաչել հասարակաց թշնամի ներքինի Աղա-Մահամմէդ-խանի միահեծան շահութիւնը, որն անընդհատ սպառնում էր նուազել, խաղալ դնալ և պատժել նրանց. իսկ միւս կողմից իւրեանք իւրեանց մէջ երկպառակ գոլով զօրաժողով էին լինում, մէկ մէկի վերայ յարձակում, մէկը միւսի երկիրը ասպատակում, գերիներ վարում, վասնորոյ և ինքեանք օր ըստ օրէ վատթարանում էին և ապիկարանում. Դարաբաղի Իբրահիմ-խալիլ-խանը և Նախիջևանի Քեալբալի-խանը (զոր յետոյ Աղա-Մահամմէդ-շահը կուրացրեց) մէկ քանի անգամ արշէն միմեանց վերայ յարձակուած էին, ի վերջոյ Իբրահիմն գոլով տկարագոյն քան զիւր ոսոխը, հրաւիրում է իւր անեղբօջ որդի Աւարայի տիրապետող Ռէհան-խանը, որ իւր լեզուի զօրքով գայ իրեն աջակից լինի, և միասին արշաւեն

Նախիջևանի խանի վերայ։ Այնուհետև 1791 թուին նրանք միասին յարձակվում են Նախիջևանի Քեպրալի-խանի վերայ, երբ Երևանի և և թոյի խաները՝ իւրեանց զօրքով գալիս են օգնել Քեպրալիին, ուստի և Իբրահիմ-խալլին ու Ալամանը երկիւղից յետ են դառնում։ բայց Օմանի լեզգիները, որպէս զի զատարկաձեռն չվերադառնան իւրեանց տեղերը ոչ միայն Նախիջևանի, այլ և իրենց բարեկամ Իբրահիմի գիւղերն ասպատակում են և գերիներ տանում։ Մինոնցն ժամանակ Գարադաղի տիրապետող խանը լսելով իւր թշնամի Իբրահիմի կրազուլուն յետ դառնալը, ինքն էլ զօրքով անցնում է Նրասխ գետը, յարձակում է Ղարաբաղի գիւղերի վերայ, ասպատակում և անթիւ հայ գերիներ վարում, որոց մէջ լինում է մեր առարկայ Աղա-Իբրահիմ անի ասացեալը։

Այստեղ առաջ բերենք Ղուկաս կաթողիկոսի կոնդակների պատէհները, որք վերաբերում են վերը յիշածներիս, ի հարկէ ուշիմ ընթերցողներն ուշադրութեամբ կը կարդան և ի միտ կառնուն թէ այդ անցքերի մասին ինչպէս է կաթողիկոսական քաղաքականութեամբ արտայայտած ոճով համառօտ և առանց անուններ յիշելոյ գրում Հերակլէսին, և ինչպէս է արձակ համարձակ նկարագրում իւր վիճակաւոր առաջնորդներին։

«✠ Մեծի արքայիդ Հերակլեայ [1])։

«Քրիստոսի Քրիստոսի . . . . յորմէ ժամանեսցէ թուղթ ճշմարիտ սիրոյ և կարօտոյ հանդերձ խաղաղաբար սուրբ ողջունիւ. Քրիստոսի և նորաձիր օրհնութեամբ և հոգետած շնորհաբ սրբոյ իշման տեղւոյս Նորին և պահպանողական զօրութեամբ հրաշազարդ սրբոյ Գնդարդեան և համայն պանչելաբար սրբութեանց և մասանց սրբոյ Աթոռոյս, Աստուածասէր զօրացեալ խնամատիպյլ և բարեխորհուրդ՝ յոգնանանցաբ և քաջազէն խաչապատակ ✠ և ամենայն քոյայնոցն և ընդ ձեռամբ քով հովանաւորելոց ի Տէր խնդալ։

«Շնորհիւ . . . . . .»

«Եւ ընդ օրհնութեանց Աստուածայնոյ ծանուցումն լիցի

---

[1]) Կաթողիկոսները իւրեանց կոնդակների մէջ քրիստոնեայ թագաւորների վերայ գրելիս, նոցա անունները, ինչպէս այստեղ օրինակուած է, չակոսում կարմրագիրով կը նշանակէին. իսկ վայրը՝ ուր որ յիշուելու լիներ նրանց անունները, դարձեալ այնտեղ կարմրագիրով խաչանիշ դնելին, որպէս զի կարդալիս թագաւորների անունները յիշելին։ Իսկ մահմեդականների վերայ կոնդակ գրելիս խաչանիշի տեղ հետևեալ նշանները կը գրէին ؛؛؛ Այսպիսի կոնդակների պատճէններ յատաջ բերելոյ պատճառն այն է, որ նրանք ես միասների նման անհերելի չլինին գրատանս հետ։

բարեպաշտութեան Զերումն Զի ընկալաք զարդաշահական և սփոփարար թուղթ յարգութեանդ Զերոյ և իմացաք զիմաստալից բանս և զխորհուրդս զերիմաստ տէրութեանդ և զկամակար բարեջանութիւն առ սուրբ Աթոռս և առ ազգաբարբարս քո։ Եւ յաղագս այդպիսի ցանկալարար հոգացողութեանդ վասն մեր, յոյժ և յոյժ շնորհակալ եղաք, զբարեպաշտ և զմարդասէր մեծ է ։, առաւել ևս եղաք զմեզ պարտական յարաժամ ազօթելոյ վասն հաստատակացուստ կենաց և յաջողութեան Զերոյ։ Զոր ամենակալ Տէրն օրհնեսցէ։ ։ Արդ՝ այժմ ի վերնախնամ տեսչութենէն որպէս և իցէ՝ թշնամիքն այնոքիկ դարձ արարին ի Դախիջանու։ մեք ի կասկածանաց, զոր ունէաք՝ զերծաք ներկայապէս, զկնի և Աստուծոյ եմք ապատան։ Իսկ խորհրդական բան մեծութեանդ, զոր գրեալ էիր, ոչ սակաւ յուսադրութիւն է մեզ առ յապայն, եթէ և ևս այնպիսի նեղութիւն ինչ պատահելոց իցէ, զոր մի արասցէ Տէր։ Այլ նաբդենիս այսպէս էանց, զորոց ընդ երկար պատմութիւնս յայլոց լաւապէս ևս իմացեալ ես։ ։ ։ ։ Ա՛ղՁ լեր ի Տէր։ ։ Գրեցաւ յամի 1791 և ի Դեկտեմբերի ԻԱ (21) ի Աշնապատն մեր յԵրեան։։

«Թուղթ առ Զմիւռնիոյ նուիրակ և առաջնորդ Իսահակ վարդապետն ի պատասխանի ի Նոյեմբերի ԻԱ (21) գրեալ թղթոյն, և ծանուցումն որպէսութեանց երկրի։»

«Յարմէ հայրական օրհնութեամբ։ ։ ։ ։ ։

«Գրեցաք քեզ որքան ինչ գոյր յայնժամ ազդ առնելի, ընդ որ և յառնելն Իբրահիմ-խանի լեզգի Ռուսան-խանին ի վերայ Դախիջանու։ և պաշարելն զքերդն և զմեր խանի գնալն յօգնութիւն Դախիջանի խանին և այլն։ Այժմ զայս իմա, զի մինչ թշնամիքն այնոքիկ ի նեղ արկեալ զամրոցն մերձ էին առնուլ, խանն մեր աստուստ, և Թոյու խանն անդուստ ի մի վայր եկեալ և միաբանեալ հասին ի Դախիջան։ և Քեալբալի-խանն ևս եկեալ ի բերդէն և եկեալ ի մէջ նոցա յաւուր չաբաթու, տօնին սրբոյ Յակոբայ հարթապետին ի յարձակել զընդին թշնամեաց ի վերայ սոցա, և սոքա պատերազմեցան ընդ նոսա, և ի յաջողելոյ վերին տեսչութեան կոտորեցին ի նոցանէ զքանի մի հարիւր անձինս և մնացեալքն երկիւղածակ եղեալ ի միում աւուր խոյս եռան անտի և դարձան ի Շուշի։ Եւ սոքա դարձան յիւրաքանչիւր տեղիս։ Յայսմ եղելութենէ Ղարադաղու խանն ևս ապատամբեցաւ յԻբրահիմէն և ստուար զունդ մի լեկդեաց եկեալ ի Վրաց երկիրն վասն աւարին։ և նոքա ևս անդէն պարտեցեալ ի տեղականացն և զաստիկ հարուածս կրեալ։ ի թշնամեաց այսպէս ապահովութիւն եղաւ

երկրին, վանորայ փառք և գոհութիւն Աստուծոյ, զի յայս նուազ ևս զերծաք ի վանդէն։ Այլ Ալիման-խանն դեռ ևս ի Շուշի մնալով և զնարս վրիժառութեան խորհելով կասկածանք մեր ոչ սպառին։ Ջաղա-Մամադ-խանէն երբեմն հաճախ ուղղեցին հիւանդացեալ զոլ մերձ ի մահ, բայց այժմ ասեն թէ առողջացեալ է, և ըստ ժամադրութեան գալոց է, տեսցուք թէ յառաջիկայ գարնան զինչ ծնանիցի մեզ . . . Գրեցաս ի ՌՄԹԱ թուոջ (1792) և ի փետրուարի . . . ի սուրբ Էջմիածնէն,

Նրան ևս՝

. . . . Հակ զորպիսութեանց երկրիս, և ի կողմանցս այսպէս գիտեմ, զի յառաջ որ ի լեզկեանցն զկասկածանս կրէաք, որոմտութեամբն Աստուծոյ զերծաք. զի յամենայն Մայիսի զարձ արարին նոքա ընդ Գեանջայ ի յերկիրս իւրեանց՝ ի Գեանջայու իշխողէն զինչ ինչ առնելով և ոչ մնաս տալով։ Այլ քանի մի հարիւր ի նոցանէ բաժանեալք յԱլիման-խանէ ի յԱկրցախու զերիս գիւղս էին ասպատակեալ և գերեալ, զոր իմացեալ Իբրահիմ-խանին և զօրս յղեալ զկին նոցա, հասեալ էին և կոտորեալ զնոսա և զաւարն և զգերիսն դարձուցեալ։ Ազա-Մամադ-խանի ձայնն հնչէ, բայց ինքն դեռ ևս ընդ Շիրազու մարտնչի, և յայս կողմն գայ չերեի։ Աստի ի խնամոցն Աստուծոյ՝ կերպիւ ինչ յապահովութեան եմք, ի չնութիւնս աշխատասիրելով թէև ի մերոցն չեմք հանդիստ ի նեղութեանց, և վասն այսմ դոհարանեմք զԱստուծոյ և աղօթող եմք փրկել յայլեայլ փորձանաց . . . գրեցաս ի ՌՄԹԱ թուոջ (1792) և ի ցուխիսի ԺԲ ի սուրբ Աթոռս։

Ահա այս բառն և խօսվեալ ժամանակները Դարաղաղի խանն Ակրցախի կամ Սիւնեաց վերայ ասպատակներ սկսելիս գերիներ է վարում, որոց մէջ լինում է և մեր Ազա-Իբրահիմ կրտսերն։ վանորայ և նա զինքն Սիսիանի, այսինքն Սիսականցի կանուանէր։ Դա այն ժամանակը 8 կամ 9 տարեկան լինելով չէր յիշում, ասում էին, ոչ իւրեանց գիւղն անունը, և ոչ իւր հօր կամ մօր անունները. ասում է լինում թէ՝ այս քան միայն մախ էր, որ մեր գիւղի մօտերը մի կ՝ անդ անուանով ուխտատեղի կար, ուր ամենայն տարի գիւղատատով ուխտ կերթայինք։ Ինչպէս Խոսրով-խանը պատանում էր իրր Իբրահիմ երէցն ևս սորա, այսինքն Իբրահիմ երկրորդի կամ կրտսերի գիւղացի է հղած, զոր Ֆաթ-Ալի-շահը պարգևել էր իւր որդի Մահամմադ-Ալի-Միրզային։ և սա մնալ է Դեսափուլ Սորա մասին ժողոված տեղեկութիւններս կրան։

Ազա-Եաղուբ-Քոսթուլի կենսագրութեան մէջ յիշեցինք, որ Հասան-Ալի-խանը սորան էլ Քոսթուլի տեսն ընծայել էր

Ֆաթհ-Ալի-շահին։ Իբրահիմը գերեվարը կարծելով թէ նրա հայրը կամ ազգականները կգան կազատեն իւրեանց երեխային, վասնորոյ և երկար ժամանակ նրան չէ ներքինացնում։ Իսկ Իբրահիմ ծնանելով իւր թշուառ վիճակին սաստիկ սառնակ, անհանգիստ, կռուարար և անամ տղայ է լինում, որքան և վախցնում են, ծեծում և խրատում, նա չէ զսպվում։ Իբրահիմն իւր երեխայական հատակով անթամբ ամենի ձի էր հեծնում և աներկիւղ վազեցնում։ Նա չատ անգամ իւր տիրոջ հրացանն ու սարքաճանակը ծածկարար տանում է լինում իւր վայելչութեան համար դաչտումն ձգում, և մէկ անգամ էլ իւր աջի ձեռը վիրաւորում, որի նշանը մինչև իւր մահն երևում է լինում։ Նա երկու անգամ ձի է հեծնում, որ փախչի, բայց ուր—ինչպէս ինքը յետոյ խոստովանում է,—չէ իմանում. և փախչում էր նրա համար, ասում էր նա, որովհետև ինձ չատ էին պատժում իմ ստահակութիւնների համար։ Մէկ անգամ էլ նա իւր հասակակից երեխաների հետ խաղալիս դաչտումն է մէկի վրայ, նրան դաչտնով զարկում է, և մինչ ի մահ վիրաւորում. և եթէ ներկայ եղողները դաչտից նրա ձեռքիցը չը խլէին, կխողխողէր գերեվարն։ Գերեվար պարսիկը տեսնելով անճարա և անզգուշ բնաւորութիւնը, մէկ անգամ ինքը դաչտնով խփում է և մինչև ի մահ վիրաւորում նրան, որոյ վերայ և Իբրահիմը երեք ամիս անկողնից չէր կարողանում դուրս գալ։ Այսու ամենայնիւ, վերջինս դարձեալ չէ խրատվում, ուստի նրա տէրը ներքինացնում է նրան, որ գուցէ նրա ըմբոստ բնութիւնը մեղմանայ։ Սակայն ինչպէս երևում է նրա ապագայ կեանքից, այդ բարբարոս գործողութիւնն ևս ազդեցութիւն չէ անում նորա վերայ։

Պատմում էին թէ՝ Իբրահիմն իւր անսանձ, ապերասան և անտանելի բնաւորութեամբ, որ և իրէ հանդիպից առանց անբաւականութեան դուրս չէր գնար։ Նա երկու անգամ մարդ էր սպանել, մէկ քանի անգամ էլ իւր պաչտօնակիցներից մէկը վիրաւորել էր և ուրիշներից էլ ինքն էր վիրաւորվել, ինչպէս իւր երկրորդ տիրոջից Հասան-Ալի-խանից, նոյնպէս և Ֆաթհ-Ալի-շահից չատ անգամ փալաղայով պատժուած էր սաստկապէս. վասնորոյ և նրա ազգերի վերայ եղուկներ չէին մնացել, և երկու մասնին էլ փայտից մաչուած էին։ Հաւանական է, որ նրա առաջին տէրը չկարողանալով նրան զսպել, անճարութիւնից իւրեանց գլխից հեռացրել էին վաճառելով կամ ուրիշ պայմաններով։

Ի վերայ այսր ամենայնի Իբրահիմն ունեցել է և գովելի յատկութիւններ, այսինքն նա եղել է իւր բարեկամների հետ

անկեղծ և անխարդախ. Նա կարի մտերիմ և անձնամուէր էր չահին. ասում էին թէ՝ Նա չահից աւելի նախանձայոյզ էր՝ նրա կանանոցի տիկինների մասին. և չահի բացակայութեան ժամանակ՝ Նա անքուն կը հսկէր կանանց և ներքինիների բարոյականութեան վերայ, և եթէ նշմարէր՝ որ նոցանից մէկը կդարտուղի հաւատարմութեան շաւղից, անչուշտ կը պատժէր, ինչպէս որ մէկ անգամ կանանոցում մէկ արաբ ներքինի՝ սոիպամբ ուզում է լինում մէկ տիկինի երեսից համբուրել, և վերջինս թոյլ չէ տալիս, Իբրահիմն խկեխակ սրախողխող է անում արաբ ներքինին. ուստի և կանանոցում բոլորեքեան նրանից կը զզային. Պատմում էին թէ Իբրահիմն իրանից ստորին մարդոց շատ ներողամիտ էր և երբէք նրա վերայ ուշադրութիւն չէր դարձնում, թէև չօշափէր նրա պատուին և արժանաւորութեանը. բայց ՏԷր մի արասցէ, թէ որ մէկը նրանից պատուաւոր, բարձր պաշտօնատէր և հաւասար ևս լինէր, նրա զէնին դիպել էր, այն ժամանակ նա անզուսպ էր և յանդուգն. Նա աղքատասէր էր և բարեպաշտ մուսուլման, որը հինգ անգամ նամազ (աղօթք) կը կատարէր. այսու ամենայնիւ քրիստոնեաներից չէր խոկալ. ինքը թէև գինի չէր խմում, բայց նրա մօտ թէ որ մէկը խմէր, նա չէր արգելիլ։

Նորա ծանօթները խորհուրդ էին տալիս նրան՝ թէ քանի որ ժամանակը ձեռքդ է, հարստութիւն ժողովէ։ Բայց նա պատասխանում էր, թէ «իմ հաւատարմութիւնը դէպի իմ տէրը (չահը) արդէն ինձ համար հարստութիւն է»։

Նրա ամբարիշտ բնաւորութեան համար, բացի ինձանից, ոչ մէկ գերի նրա հետ յարաբերութիւն չունէր, ասում էր խոսրով-խանը, ու իմ մօտ յաճախ երթևեկութիւն ունենալով միշտ բարեհամբոյր էր, ինձանից կը վախենար, քանզի գիտէր, որ եթէ մեղանչէր մօտս, նրան մէջից կը ճղէի։

Ֆաթ-Ալի-չահից յետոյ, Իբրահիմը քաշվում գնում է իւր գեղի մէջ հինգ տարի առանձնական կեանք վարում, այնտեղ էլ մնալում է, և իւր հարստութիւնը կտակով աւանդում խոսրով-խանին։

ԺԱ.

ԽՈՒԴԱԴԱՏ-ԽԱՆ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ.

Մարդկային ազգի ապականանար ժամանակս ներքինի Աղա-Մահամմէդ-խանը՝ դեռ ես կատարելապէս չհասած իւր նպատակին, այսինքն չահութեան գահին, 1205 Հիջրին (1791 ամի Ցեռան) ստուար բանակով կուգար, խաղում գալիս հասնում է Ատրպատական և բանակելով Թարում ասած արուստեղում, ուղարկում է Սիւլէյման-խան կաղբը՝ ասպատակել Թալիշի գաւառը. և այնտեղից գաղթել մեծամեծներն իւրանց ընտանիքով Ջեանզեան. իսկ ինքը գնում պաշարում է Պարար քաղաքը. ուր որջացել էր Նորա զոռ ախոյեան Սաղդ-խան Շաղաղին, որ և դուրս է գալիս, սաստիկ պատերազմ մղում, բայց ի վերջոյ յաղթուելով փախչում գնում է Ղարադաղ և ապաստանվում Իբրահիմ-Խալիլ-խանին, որ ևս չէր ուզում ճանաչել ներքինիի չահութիւնը, իսկ ներքինին անագորոյն դժնդակութեամբ կեղեքում է, կոտորում է Պարարի բնակիչները, որոց մէջ լինելով մօտ երեք հարիւր հայ գերդաստաններ, ըստ մեծի մասին գերի են ընկնում, նրա զօրքի ձեռքը կամ սրախողխող լինում. Այստեղից ներքինին անցնում է Արդաբիլ, որի տարաբաղդ Հայ և մուսուլման բնակիչները անխտրաբար ճաչակելով նրա դառնութեան մրուրը, սրով, հրով մաչվում են ու գերի վարվում. Այնտեղից էլ թողում է գնում բանակում Իշկեմբար վիճակում, ուր հինգ հարիւրաչափ հայ գերդաստաններ էին բնակվում, նրանց մեծ մասն էլ ասնակոխ են լինում ներքինիի անզուսպ զօրքից։ Այստեղ ժամանում է թոյլ տրրապետող Գումբուլի Հիւսէյն-Կուլի-խանը, որ մեծամեծ ընծաներ բերելով նրա երեսը հաչտեցնում է. Արանց մէջ լինում են հայ-մասաղ գերիներ և գեբուհիներ՝ Օսմանցուց կողմերից բերած. Ներքինին ի նչան հնորհաց ընծայում է Հիւսէյն-Կուլի-խանին Թավրիզի հրամանատարութիւնը. Որմոյ Մահամմէդ-Կուլի-խանը լսելով իւր արիւնարբու թշնամի Հիւսէյն-Կուլիի Թաւրիզ հրամանատար

նշանակությունը ոչ միայն չէ գալիս ներքինիին իր երկրպագությունը մատուցանել, այլ և երկիզից փախչում գնում է Ալիների անմատչելի լեռների մէջ ամրանում. ուստի և ներքինին հրամայում է Մահամմէդ-խան կաղաբին գնալ նրան կալանաւորել, և անմիջապէս ապատակել Որմից չորքակայ գիւղերը, թօսք չկայ թէ վերջինս ինչպէս անիծդաբար կասպատակէր և ինչպէս անողորմաբար գերիներ կը վարէր. Բայց նա չկարողանալով կալանաւորել զՄահամմէդ-Կուլին, վանորոյ և ներքինին զայրանալով Մահամմէդ-խանի վերայ, իրր թէ նա կաշառք է ստացել առ աջմէնից չկալանաւորել նրան, ուղարկում է գվալի Աղան և զՄահամմէդ-խան-Զօջուզն՝ գնալ կալանաւորել զՄահամմէդ-խանը և կուրացնել, նոյնպէս և ևս ապատակել Որմից չորս կողմերը և ջանալ որսալ Որմից խանը.

Ակնայտնի է որ այդ ժամանակ Ատրպատականի մէջ Որմի, Սալմաստ, մեծ և փոքր Աղրակ և Սուլդուզն՝ Հայերի և Ասորիների ամենախիտ բնակեալ տեղերն էին. Ահա այդպէս երկու անգամ մի զէնի միոյ խաժամուժ զօրքի ապատակութիւններն ու գերեվարութիւնները ինչ թշուառ անպատում վիճակի կը հասցնէին այնտեղի ժողովուրդը. Զառամեալ ակնատես մուսուլմաններն ու հայերը, նոյն իսկ թուղդատ-խանն անգամ, որ այդ գերեվարութեան ժամանակ գերի էին ընկած, չատ զգալի կերպով էին պատմում՝ թէ երեխաներ, համբակներ, պատանիներ, աղջիկներ, նորահարսներ, անչափահաս տղամարդ և կին անխտրաբար՝ ինչպէս օխարի հօտ, հետևակ, գլխակոր, աչքերնին դառն արտասուքով ողողուած՝ գերի էին վարվում. Ինոզները երկիզից չէին համարձակվում իբրևանց զաւակների, փեսաների՝ իբրևանց նորահարսների, քոյրերն՝ իբրևանց եղբայրների, եղբայրներն՝ իբրևանց քոյրերի հետ խօսել կամ յարաբերութիւն ունենալ. այլ պէտք էր լռիկ, մնջիկ իրանց ճանապարհը շարունակէին, վասն զի վայրագ զինուորականները կարծում էին՝ թէ նրանք իբրևանց մէջ ժամ և ժամանակ կը նշանակէին կամ կախէին կամ կապստամբվէին, և սորա համար այն ջնջին սիրտումն ևս զլանում էին նրանց. Ողորմելի գերիները քաղցածութիւնից, անձնական տկարութիւնից կամ պարտաւորութիւնից ստիպուած զանդաղաքայլ քայլելու ժամանակ՝ գերեվարները զանազան երկաթեայ և փայտեայ զէնքերով զարնում ու վիրաւորում էին նրանց, որ նոքա շուտով երթան. Այդ անտանելի ճանապարհորդութեան ժամանակ քանի քանի հարիւրներ, մանաւանդ ծծկեր երեխաներ, մնացել են դաշտերի երեսին. որոց դիակները թռչունների և գազանների բաժին դարձած են. Անգութ գերեվարները թա-

բանած ընտանի անասունները մորթում, եփում, խորովում ուտում էին, իսկ նրանց տերերը քաղցած՝ չոր հացի անգամ կարօտ գայլերի նման՝ հեռանց նայում էին և տխուր-տխուր քաշում. Ձոլքը մակաղելով իրանց ուտած անասունները խոտուտէա արտատեղերում հսկում էին, որ նրանք չնիհարանան. բայց երբէք չէին մտածում ասուն մատաղ գերիների և գոզարիկ գերուհիների համար։ Մէկ բառով անազորոյն գերիներին անողորմագոյն էին նայում իրենց գերիների վերայ՝ քանթէ յարիչտակած անասունների վերայ։ Բաբէ, ինչ անգայ սիրտ պիտի ունենար մարդս, որ իր աչքովը տեսածներդ պատմելիս անգամ չարտասուէր։ Աղմարե, անլուր խժութիւն. վասն զի մարդս երևակայած ժամանակն անգամ, մնաքը բոլորովին խռովում է։

Թուղդաստ-խանը պատմում էր թէ, երբ բանակն եկաւ Թաւրիզի հարաւային կողմում Լանդ ասած գաշտի վերայ բանակեց, սկսեցին բաժանել գերիները դաս դաս, այսինքն զատում էին գեղեցկագէմներն ու բարեկազմները և ուղարկում օրպէս ընծայ ներքինի չաՀին, նրա ազգականներին և երևելի պաշտօնատարներին. իսկ մնացեալները փուչքի էին ձգում և նոյնպէս բաժանում։ Այնուհետև իւրաքանչիւր ոք՝ փուչքով ստացած իւր մասը կամ վաճառում էր, կամ հաւատոփոխ անում ու իւր մօտ պահում։ Բոլոր գերիների, թէ արականի և թէ իգականի գուսանը մերձ հինգ հարիւր հոգի կը լինէր։

Այդ աղետալի անցքը թէև մասամբ արտաքոյ էր իմ նպատակից, բայց ականատեսներից լսելով չկարողացայ զանց առնել, և հանառօտաբար այստեղ չգրել, որպէս զի մեր ներկայ և ապագայ սերունդը փաբբ ի չատէ գաղափար ունենայ իւր ազգի անցած գնացած տխուր վիճակի վերայ, և չզարմանայ ու չմեղադրէ իւր նախնիքը, ասելով այժմեան սերունդի պէս՝ թէ ինչի՞ նոքա լքեցին, թողեցին հրեանց հոն ու աչխարհը և գաղթեցին գնացին օտար և հեռի երկիրները։

Թուղդաստ-խանն ասում էր թէ՝ «ես այն ժամանակ 10—11 տարեկան կը լինէի, երբ յանդուգն ապանեցին Լյվազ անուն հայրս։ Մայրս վաղուց վախճանուած էր, քոյրս իւր ամուսնոյ հետ գերի ընկած, Ասիական վարդապետ քեռիս՝ սուրբ Բարթողիմէոս առաքելոյ վանքի միաբան՝ սպանուած էր այն օրերը՝ ինքն իրեն պաշտպանելոյ համար. իսկ ես բոլորովին որբ և անտէրունչ էի մնացել։» Թուղդաստի առանձին անունը լինում է Աստուածատուր, որ միմնոյնն է պարսկերէն լեզվում. ուստի անփոփոխ է մնում և նրա անունը։

Խուդադատը առանց փուչքի ենթարկվելոյ՝ ուղարկում են մէկ քանի ընտիր պատանիների ու օրիորդների հետ ընծայ Ֆաթ-Ալի-խանին (որ յետոյ չահ), որ և նրանց պարգևում է իւր որդի Թագաժառանգ Աբբաս-Միրզային։ Վերջնոյս 6—7 տարի Խուդադատը ծառայում է իրրև խանաչակերտ, և յետոյ Կուլամի (ձիաւոր անձնապահի) պաշտօն կատարելով տանում է իշխանութեան, այսինքն հարիւրապետութեան, նոյն անձնապահ ձիաւորների վերայ՝ պաշտօնը և անուանվում է Խուդադատ-բէկ։

Այն ինչ Վրաց արքայորդի Աղեքսանդրն այս դարի սկզբներումն Վրաստանից փախչում գնում է Պարսկաստան, Աբբաս-Միրզան տալիս է նրան մէկ քանի հարիւր ձիաւոր, որ միասին գնան յարձակուին Ռուսների տիրապետած կողմերի և կամ նրանց զօրքերի վերայ, և կամ ապստամբեցնեն նրանց նոր հպատակները։ Խուդադատ-բէգն էլ լինում է էս հեծելազօրքի գլխաւորը։ Այդ ապաբախտ Աղեքսանդրը տարարուած իւր հայրենիքից, որպէս զի կարողանայ հալածել Ռուսները Վրաստանից, ոչ միայն երբեմն երբեմն արշաւեց իւր հայրենիքին կից՝ զանազան գիւղերի վերայ և ոչինչ չահեցաւ, այլև շատ հնարքներ գործ ածեց, որ գոնէ ապստամբեցնէ Կովկասեան ցեղերն ընդդէմ Ռուսաց։ Այս գործին մէջ նրա գլխաւոր գործակատարն էր Խուդադատ-բէգը, որ մինչև Ռուսաց և Պարսից վերջին պատերազմի աւարտվիլը, այսինքն 1827—1828 թիւը, երբեմն Աղեքսանդրի հետ և երբեմն առանձին տեսնում ենք նրան Ղարաբաղի, Ղանձակի, Շամախիի, Բաքուի, Սաւիանի, Դերբէնտի և Կովկասի տարերի մէջ զանազան ցեղերի հետ յարձակուելիս ու յարաբերութիւն ունենալը, և կամ նրանց յուղելիս ու տարի վերայ կանգնեցնելը։ Շատ անգամ Անդր-Կովկասեան կուսակալները հետամուտ եղան, որ ուր ուրէք կալանաւորէին Խուդադատը, բայց անհնար եղաւ։ Վերջոյ քանի քանի անգամ Ցօրմուսով, Բոիշչէվ և Երմոլով կուսակալները պաշտօնական թղթակցութիւններով բողոքեցին Պարսից տէրութեան, որ արգելեն Խուդադատ-բէգը, ընդդէմ դաշնագրութեան երկու տէրութեանց ձեռնամուխ չլինի պայմաններն եղծելոյ [1]։ Ռուսաց հնագիտական արձանագրութեանց մէջ շատ տեղ յիշուած է Խուդադատ-բէգի անունը.

---

[1]) Акты Арх. Ком. т. II. ст. 563, 564. т. V. ст. 358, 361, 278, 467, 758, 766. т. VI. ч. I. ст.281, 293, 296, 297, 305, 308, 309. ч. II ст. 137. VII ст. 676. т. III ст. 70. Ի՛ բաց գրութեան Գէորգ Բասանովոնցի Խուդադատ-բէգը Աղեքսանդրի Վէզիր էր։

բայց ինչպէս պաշտօնական թղթակցութիւններ, միշտ կարճաւօտ, մութ և մեայլ լինելով դժուարին էր նրանցից օր և իցէ պատմութեան առարկայ արտատանել։

Խուդադատն ասում էր, թէ չատ անգամ ես միայնակ, և երկու անգամ էլ Աւերսանդրի հետ գնացել ենք Թիֆլէ և անտի Ղէնթա, և այստեղից էլ գիշերը դուրս գալով մտեցած ենք Թիֆլիսին, կէս գիշերին հետևակ քայլելով հասել ենք Մախաթի սարի վերայ կանգնել, կամ Հաւլաբարի այն ժայռերի վերայ, որ նայում է Թիֆլիս քաղաքին, երկար միջոց կանգնած նայել ենք—նայել ու վերադարձել.... հեծել մեր երիվարները, առաւօտեան լուսածագին Սօղանլուղ գիւղի մօտից՝ անց կացել Կուր գետը. Բօրչալուի, Կազախի մօտերքով զարտուղի ճանապարհներով քերել ենք դուրս եկել Սեանայ ծովակի մօտ։

Խուդադատ-բէգը՝ ղեղերէն և վրացերէն, յաճախ անգամ նրանց հետ յարաբերութիւններ ունենալով սովորել էր, վրացերէն կարդալ և գրել ես գիտէր. իսկ հայերէն և սասրէրէնը չէր մառացած. ինչպէս տեսանք Ռուսաց պաշտօնական թղթակցութիւնները չատ են յիշում Խուդադատ-բէգի անունը. իսկ Կէֆարների պատմութիւնը ոչ միայն նրա գործունեայ ծառայութիւնների մէկը չէ յիշում, այլև նրա անունն էլ անծանօթ է այդ պատմութեան։ Արդէն յառաջաբանութեան մէջ առած ենք, որ Պարսից պատմութիւնը հիմնուելով Թէհրանի արքունիքում գտնուած թղթակցութիւններին, կարի մեայլ և չատ անգամ ոչինչ տեղեկութիւններ չունի Ատրպատականի մէջ պատահած անցքերին։

1831 թուին Խուդադատը հաղիւ ստանալով խանութեան տիտղոս, թօյի հրամանատար Մահմմէդ-Բաշիմ-Միրզայի փոխհրամանատարն էր։ Այնուհետև նա ստացաւ նոյն նահանգի հրամանատարութիւնը, և ապա Արտավիլի, ու Որմու։ Յետոյ Մահմմէդ-շահի հետ գնաց Թէհրան, որում նշանակուեցաւ Քիրմանշահի, և Ատրպատականի հրամանատար. 1844 թուին եկաւ Թաւրիզ՝ կուսակալ Շահզադային արարողապետի (Էշիկ-Ադասի) պաշտօնով։

Նա չատ անցքեր էր գրել տուել ինձ, բոլորն էլ քաղաքական և արժանի հետաքրքրութեան, մանաւանդ անհերքելի նիշեր վերաբերեալ Անդրկովկասի պատմութեանը, որոնք պատահել էին Ռուսաց տիրապետութիւնից յետոյ։ Բայց առանձին ասեմ կարմն, անվերադառնալի կարմն։

Խուդադատ-խան՝ մանաւանդ Ղարմնին, իւր սուր կատակախօսութեամբ և ծաղրածու առակախօսութեամբ երեսի

էր։ Բոլոր մեծամեծների, սկսած Աբբաս-Միրզայից անգամ, մինչև վերջին ուսանողի վերաբերմամբ կատակներ կը հնարէր և հրապարակաւ կծաղրէր, մինչդեռ ժամանակն էլ հանդիսաւոր խօսող էր, և ոչ օրից էլ չէր քաշվում, չէր էլ ուրանում իւր ասած կատակները։ Միանգամ մէկտեղ կատակել էր Աբբաս-Միրզայի վեզիր Միրզայ-Աբդլ-Կասում-Կայիմմըդամը։ Վանաորոյ վերջինս էլ երկու տարի էր ինչ ինչ պատրուակներ բերելով չէր հրամայում նրա ռոճիկը վճարել։ Խուդադատ-խանը մէկ անգամ Աբբաս-Միրզայի ատեանումը նշմարում է որ թագաժառանգը շատ ուրախ է. ուստի երկու քայլ յառաջ է ընթանում և ասում. «Ողջ լինի թագաժառանգը, մէկ հանելուկ ունիմ, ինդրում եմ հրամայէք ասեմ, և եթէ ներկայ եղող ուսանողին լուծէ, այն ժամանակն ես նրանց մէկ երեսի հացկերութիւն կտամ, եթէ ոչ՝ թագաժառանգն ինձ մէկ Քիշմիրի չալ պարգև չտրէ։ Աբբաս-Միրզան քաջ ճանաչելով Խուդադատ-խանի բնաւորութիւնը, պատասխանում է, խանս, այսքան բարձրեթեան հացկերութիւն տալը դժուարին է և մեծածախս, մէկ պատրուակ կխնայես ու չես կատարիլ խոստումդ. ուրեմն խոստացիր որ ով լուծէ, եղածէ հանելուկդ, այնուհետև չկատակես նրան։ Խուդադատ-խանը պատասխանում է թէ «այդ խօ անլաբարելի է, ինչպէս մարդս առանց օդ ծը-ծելոյ չէ կարող ապրիլ. այնպէս էլ քո խանարէ ծառայ Խուդադատն առանց զո՛ր ա՛ր և իցէ կատակելոյ՝ չէ կարող ապրիլ»։ Աբբաս-Միրզան ասում է «ուրեմն քո ասածը լինի։ Դէ՛, ասա՛ հիմի հանելուկդ լսենք»։ «Այն ինչ է, ասում է Խուդադատը, որ աշխարհիս վերայ անունը կայ, բայց ինքը չկայ և էութիւն չունի»։ Ներկայ եղողներից մէկին ասում է հրեշտանին է, միւսն թէ սատանէն է, երրորդը թէ դժոխքն է և այլն, և այլն։ Իսկ Խուդադատը բոլորին էլ մերժում է. ուստի և թագաժառանգը հրամայում է «Է՛հ, Խուդադատ-խանն, հիմի դու լուծէ քո հանելուկը, տեսնենք արժանի է մէկ չալ պարգևի»։ Խուդադատն ասում է. «Շահզադան ողջ կենայ, այն իմ ռոճիկն է, որի անունը կայ, բայց երկու տարի է ինքը չկայ և էութիւն էլ չունի»։ Աբբաս-Միրզան հանկանալով զրպարտ էութիւնը, հրամայում է իսկեյսկ Քիշմիրի չալն ու ռոճիկը վճարել նրան՝ իւր սեպհական գանձարանից։

Խուդադատ-խանը պատմում էր թէ «մէկ պաշտօնական գործի համար մինչ երթասարդ էի՝ գնացի Սամարա Խորոմայ ասացեալ գիւղը։ Ցանուցանէին ինձ իջեցրեց պապադաւանների պատրիարք Պատրի Իզայիի տանը, ըստ որում վերջինս հոն չէր։ Ամառն էր, եղանակը տաք, կէս օրից յետ

տոյ քունս կտրուեց, չապկանց և գլխաբաց դուրս եկի ընդարձակ զանազան ծաղիկներով լիքը և խիտ ծառազարդ պարտէզում զբօսնում էի, և անմ մէկ գեղանի երիտասարդուհի երեսը բաց մտաւ պարտէզ ու համարձակ դէս ու դէն նայելով դիմեց դէպի ինձ. հասկացայ որ խնդրը նմանացրեց ինձ Պատրի Լեզային, որն, արդարև, մէկ կերպով նման էր ինձ, քանզի նա ևս ինձ նման հատտափոր, բարձրահասակ, սև, թաւ և երկար մօրուս ունէր։ Երիտասարդուհին, որպէս ասացի, այս կողմն այն կողմն տնտղելով, արագաքայլ առաջացաւ, մերձեցաւ, գլուխը խոնարհեցրեց ինձ, քմծիծաղ աչս համբուրեց, վանտրոյ և ես, երեսս փէքր ինչ ծռեցի մէս կողմը, որ չճանաչէ, ապա ասուրէն ասաց «Հայր սուրբ, եկել եմ խնդրել, կրկին նեղութիւն կրես, և մէկ նամակ գրես ամուսնոցս, որ ծախսիս համար փող ուղարկէ»։ Ես ևս քիթս տակովը պատասխանեցի «չատ բարի, գնանք սենեակումը կը գրեմ»։ Ես առաջ ընկայ ծանրաքայլ դէպի սենեակ երթալու։ Նա էլ հետևում էր ինձ։ Ես բարձրացայ սանդուխները զգուշութեամբ մտայ նախասենեակը, ուր քնած էին պարսիկ սպասաւորները, և երբ կամեցայ այնտեղից ներս մտնել մեծ սենեակը, իմ անուշադրութիւնից կուռս դիպաւ դրան փեղկին, որ թիզիւն հանեց, ծառաներիս մէկ (նրանք հինգ հոգի էին) զարթեց, նստեց (ինձ չտեսաւ), աչքերը չռեց դէպի երիտասարդուհին (որ նոր էր սկսել բարձրանալ սանդուխները), թուրքերէն հարցրեց. քոյր, ումն ես ուզում։ Դեղուհին տեսաւ որ բոլոր ծառաները թուրքեր են, բանի որպիսութիւնը հասկացաւ, սթափեցաւ, յետ դառաւ, փախաւ ու կայծակի նման անհետացաւ։

Դարձեալ թուղաղատ-խանը պատմում էր թէ Պատրի Լեզային երկրացի ասորի գոլով, քաղցրութեամբ և սիրով կառավարում էր բուն ասորիների և հաւատափոխ (պապադասեան) ասորիների հետ։ Արան պատրիարքութիւնից արտաքսեցին, նրա տեղը նշանակեցին Ֆէրիէ անունով մէկը, որ Ֆրանսիացի էր, և ստիպում էր, որ իրան Մ օ ն տ ի ն է օ ր անուանեն։ Որա և բուն ասորիների մէջ մեծ տարաձայնութիւն ծագեց վերաբերեալ մէկ եկեղեցւոյ, որ Ֆէրիէն պնդում էր թէ 400—500 տարի առաջ այն եկեղեցին քեսթէօլիկի պէտք էր լինէր, ըստ որում նրա չինութիւնը թէ գրքից և թէ ներսից նման է քեսթէօլիկի (այսպէս կարտասանեն պարսիկները) եկեղեցու, Թաւրիզի դուռը նշանակեց դիս, որպէս տեղական քրիստոնեաների կրօնին, գնամ և քննեմ այդ վէճը։ Ֆէրիէն կը յաճախէր քովս, պատմում էր թուղաղատ-խանը, և այնքան ծուռ ու մուռ կխօսէր տաճկերէն, որ կը զզուացնէր ինձ։

Մէկ օր Նա սկսեց պատմել Հռոմի բարի (պապ, փափ բառն պարսիկներն այսպէս կարտասանեն) ազգեցութիւնը Երուսալեմի թագաւորների և ժողովուրդի վերայ, Նորա անսահման իշխանութիւնը բոլոր աշխարհի մէջ, Նորա փոխանորդ լինելն Աստուծոյ, և ապա, ոչ բարով խիստ երկար կերպով նկարագրեց Հռոմի մէջ եղած հոյակապ շինութիւնները, եկեղեցիքն ու նոցա անունները յիշելով իւրանց լեզուով, մանաւանդ հրաշակերտ և աքանչելի մէկ եկեղեցու հոյակապութիւնը և այլն։ Ի վերջոյ կցեց՝ թէ այդ ամենը Աստուածային մէկ առանձին նախախնամութեամբն է գոյացել, կերտուել։ Ես հարցուցի թէ ո՞վ է շինել այդ քո ասած շինութիւններն ու եկեղեցիքը։ — Բաբերը, պատասխանեց Նա — ուրեմն, ասացի, այդ բաբերն անհուն հարստութեան տէր են եղած։

—Ո՛չ, ոչ, ասաց Նա։

—Ի՞նչ, անդրամ այդպիսի հրաշալի շինութիւններ չէին շինուիլ, ուրեմն, երկնքից Աստուած իւր հրեշտակների ձեռքով գցած է զրկել իւր փոխանորդներին, բաբերին, կամ ինքն Աստուած երկնքից իջել է, դրամ աւանդել է բաբերին, զարմանք էլ չէ, որ Աստուած հաւատացած չլինէր հրեշտակներին այդպիսի մեծ գումարները, վասնզոյ ինքն Աստուած բերած լինէր։

—Չէ, չէ, քա՛ լիցի, այլ թէ աշխարհս չորս կողմի բարեպաշտ քրիստոնեաներն ինձ նման մեղաւոր մուսիսնարների, քարոզիչների ձեռքով նուէրներ են առաքած բաբերին, և վերջիններն էլ այն գումարներով այդ հոյակապ շինութիւնները կանգնացրել են։

—Ի՞նչ, հիմի հասկացայ, ուրեմն քեզ նման մեղաւոր քարոզիչները շրջել են աշխարհը, խաբել են բարեպաշտները ու նրանցից փոգեր են պոկել։

—Չէ, չէ, լա՛ չհասկացար, պատասխանեց Ֆերիէն, բայց միւա հանդարտ և քաղցր կեղծաւորութեամբ։

—Չէ, չէ, և էլի չէ, ես լա՛ հասկացայ, ասացի ու ոտքի վերայ կանգնեցի, որ Նա հեռանայ ու գնայ։

«Ֆերիէն մէկ օր ասում էր Թուրդաղա-խանը թէ չատ երկար մէջտեղ քալս նստեց, և երբ միայնակ մնացինք, Նա դարձեալ երկար-բարակ քնաթոլիկութեան վերայ սկսեց զրոյցներ բանալ և յանդգնիլ առաջարկել ինձ, որ ընդունիմ քնաթոլիկութեան կրօնը։ Մինչև այն ասաիձան նրա լրբութիւնն ինձ զարմացրեց, որ ես էլ բերանս բաց արի ու ասացի նրան թէ՝ որովհետև քրիստոնեաներդ մէկ քանի աղանդների էք բաժանուած, և մէկ մէկի հաւատում չէք ու

անուանում էք հերձուածողներ և հերետիկոսներ ու նզովում ես, վասնորոյ մեք ոչ մէկիդ չենք հաւատում. ուստի նախ՝ զուք ժողովուեցէք, ու ձեր մէջը համաձայնեցէք, թէ ձեր կրօնների որն է ճշմարիտ, և բոլորդքեանդ էլ այն ճշմարիտ ճանաչած կրօնը ընդունեցէք, այնուհետև մեք ես ընդհանուրի բռնած կրօնը կընդունինք։ Ես ծնած էի հայ-կրօնի մէջ, կամ ընդդէմ կամաց, և կամ իմ կամքով. այժմ յիշումեմ մուսուլման, ապաքէն ես այս նոր կրօնից թէպէտ հասկացայ, որ այժմ այս թողնեմ գամ դառնամ քեաֆուրիկ, զոր Հայերն էլ անուանում են հերձուածող և հերետիկոս։ Եթէ դու, մօնսինեօր Ֆէրրիէ, յորդորէիր զիս կրկին հայ կրօնն ընդունելու, կհաւատայի որ իմ բարեկամն ես, իմ հոգու համար մտածում ես. բայց քեաֆուրիկ դառնալուս համար քարոզելդ՝ ապացուցանում է, որ դու իմ թշնամին ես, ցանկանում ես ինձ յիմարացնել՝ աղճատելով (չարան փարայ) թէ՝ արքայութեան բանալիքը քո բարի ձեռքն է... Էհ, մայ թէ դժոխքի բանալիքը լինի նորա ձեռքն, այն ժամանակ ոչ միայն աշխարհի վերայ արհամարհած, քաղծած և տարաբեալ կը մնամ, այլև մեռնելիս յետոյ կերթամ դժոխքը։ Ապաքէն, մօնսինեօր, յայտնում եմ քեզ, որ երբ միւսանգամ հաւատի վերայ քովս խօսես, կը հրամայեմ արտաքսել սենեակիցս։

Խուդազատ-խանը ինչպէս մուսուլմանների հետ կը կառավարուէր, այնպէս էլ անգանազանաբար քրիստոնեաների հետ էր, ինչպէս մահմէդական էր, այնպէս էլ քրիստոնեայ էր. կամ թէ ինչպէս քրիստոնեայ էր՝ այնպէս էլ մահմէդական էր. այսու ամենայնիւ ոչ ինքը և ոչ ուրիշին չէր ներէր իւր մօտ հաւատի վերայ խօսիլ։ Մէկ օր ասաց ինձ թէ՝ հաւատը, կրօնը մարդոյս սրտի պատուէն է, և ամենայն ոք պէտք է իւր սրտի պատուէը վայելէ, չէ կարելի այն ուրիշին տալ։ Նա մէկ անցք պատմեց, որ հաւանական ատանդութեամբ մնացել է Պարսկաստանի Հայերի բերանում։ Այսինքն, իբր թէ Շահ-Աբբաս մեծը, երբ գաղթեց Հայերն Ասպահան, ուր Պարսիկները ժամանակ առ ժամանակ յանձնում էին Հայերի տեղը գինի խմելու, ճաշելու և ընթրելու, Հայերը զզուելով այսպիսի այցելութիւններից՝ խնդրեցին Խօջայ-Նազարից, որ սրան մէկ ճար մտածէ. նա էլ դիմեց Շահ-Աբբասին, որ և մէկ երեսի Մուշթէխիդի հետ խորհուրդ տեսաւ, ի վերջոյ վճռեցին՝ որ Մուշթէխիդը որոնէ Կուրանի մէջ ու մէկ յօդուած գտնէ, որի համեմատ քարոզէ և արդելի մուսուլմաններին, որ չյանձնեն Հայերի տեղը. քանզի մինչև այն ժամանակը Պարսիկները այնպէս կը վարուէին Հայերի հետ, ինչպէս այսօր Սուանի

Օսմանցիները, Մուշթիվը, արդարև, գտաւ Կուրանի մէջ մէկ յղուած՝ թէ տալ որ Աստուծոյ երկու կամ երեք յաւելութիւն կամ անձնաւորութիւն տայ՝ նա պիղծ է։ Քրիստոնեաներն, ինչպէս և Հայերն Աստուծոյ երեք անձնաւորութիւն են ընծայում, ուրեմն նոքա պիղծ են, նոցա հացն ուտելը, նոցա ջուրը խմելը հառամ է։ Այդ միջոցովն և Հայերն ազատուեցան անկոչ մուտքման հիւրերից, և մեզ Շիա մուսուլմանների մէջ այդ սովորութիւնը մինչև ցայսօր։

Ցաճախ կը կրնէր Խուդադատ-խանը թէ՝ եթէ բարեպատեհ միջոց գտնեմ, այսինքն, եթէ հարստութիւն ձեռք բերեմ, կերթայի Մէքքէի պատրուակաւ ուխտ, և այնտեղից կը վերադառնայի Երուսաղէմ. այնուհետև եթէ միտքս, ուրախութեամբ հոգս կաւանդէի։ Զարմանալի է՝ որ այնպէս էլ պատահեցաւ։ Նորա երկու տրտակից բարեկամները 1847 թուին գնացին Մէքքէ, խնդրեցին որ Խուդադատն էլ նրանց հետ գնայ այն ուխտատեղին, նոցա ծախսովը։ Մէքքէից վերադառնալու Խուդադատի խնդրանքը ընկերները գնում են Ս. Երուսաղէմ, ուր բոլոր անօրինական տեղերը, մինչև անգամ Օսմանցիների ձեռքին եղածներն ևս չրջէին յետոյ, դուրս են գալիս, երկու կամ երեք օրուայ ճանապարհ հեռացած Ս. Երուսաղէմից, Խուդադատը հիւանդանում է և վախճանվում։ Նա թողեց մէկ դուստր, և երկու արու զաւակներ ունէր, որոնք նրանից առաջ էին մեռած։

ԺԲ.

ԴԱՒԻԹ-ԽԱՆ ԱՍՊԵՏ ԵՒ ՀԱՅԻ-ՄԻՐԶԱՅ-ԻՍՍՈՒՖ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ԴՊ-ՇԱՓՈՒՐ.

Իններորդ դարուս սկիզբները՝ մինչդեռ մեծն Նապոլէոն ուզում էր Ֆաթ-Ալի-շահի հետ դեսպանախօսութիւն սկսել, այդ Դաւիթը քաղաքականութեան աշխարհում պատմական անձն է հանդիսանում. բայց ափսոս որ նրա ծննդեան ու մանդեան պատմութիւնը չատ մութ է մեզ համար։

Ամենը, որպէս և հայրս (որ Դաւթի մօտիկ ծանօթներից մէկն էր) պատմում էին, թէ նորա հայրն անցեալ դարի վերջին քառորդումն ապանվում է Գեղամ գաւառի Մակրայ ասած գիւղում, և նրա կինը գերի է վարվում Ասպահան, ուր Նոր-Ջուղայեցի Հայերը լսելով որ այդ կինը յղի և երեսի

գերդաստանի հարան է, փողով գնում են գերի բերողից, որից և ծնում է Դաւիթը։ Սա իւր մայրենի լեզուն և պարսկերէնը Ասպահան սովորէլն յետոյ մայրը վախճանում է, և նա Դաւիթը, 14—15 տարեկան ժամանակ գնում է, կամ թէ մէկ բաղդատելի վաճառական նրան տանում է Բաղդատ, ուր և սովորում է պարսկերէն և արաբերէն։ Ուրիշներն էլ պատմում էլին թէ՝ եօթը կամ ութ տարեկան ժամանակ Դաւիթը գերի է ընկնում իւր մօր հետ։ Մայրն ճանապարհին վախճանում է, և գերեվարները տանում են Դաւիթը Ասպահան, ուր և վաճառում են մէկ պարսիկ վաճառականի, որ նրան կրթում է պարսկերէն և արաբերէն լեզուով, և երբ Դաւիթը դառնում է 17—18 տարեկան, պարսիկը Բեալրաբայ ուխտ գնալիս, հետը տանում է և նրան։ Երբ հասնում են Բաղդատ, Դաւիթը փախչում է ու գնում մտնում մէկ հարուստ հայի տուն, որ վերջինս բարեբաղդաբար անզաւակ լինելով, և տեսնելով Դաւիթի շնորհակալութիւնն ու ձիրքը, ծածկաբար պահելով նրան, քիչ ժամանակից յետոյ որդեգրում է ինքնան, մարմանելանելը է վարձում պարսկերէնն, արաբերէն և ֆրանսերէն լեզուները սովորելու համար և ուղարկում է Փարիզ, որպէս զի վերջին լեզուն այնտեղ կատարելագործէ, և իւր առևտրական գործոց յանձնարարութիւնները կատարէ։

Դաւիթ-խանի թղթակցութիւններից, որ գրել է Անդրկովկասեան կուսակալ Երմոլովի վերայ երևում է, որ նա ծրնած էր Ասպահան. իսկ թէ որտեղ էր նա սովորած այդ լեզուները, չկարողացայ տեղեկանալ, բայց ուշիզ է, որ նա Փարիզ ծանօթանում է երևելի Ֆելոր Շահան-Ջրպետեանի հետ, և երբ Նապոլէօնի դեսպան Ժենարալ Գոռերիը, որ գնում էր դեսպանութեամբ Ֆաթ-Ալի-շահի մօտ, Ինդիգների թելադրութեամբ բանարկվում է Հէր-Բայազիդ, և Նապոլէօնը կամենալով մէկ ուրիշ դեսպան կամ նամակ ուղարկել Ֆաթ-Ալի շահին, հարցնում է, կամ, աւելի ճիշտ ասել, հրամանատ հարց ու փորձ են անում Ջրպետեանից թէ, կարելի է արդեօք Փարիզ գտնել մէկը, որ հայերէն, պարսկերէն և ֆրանսերէն իմանում լինի, որ նրան ղրկեն Բաղդատի ճանապարհով թէհրան։ Այն ժամանակ Ջրպետեանը ներկայացնում է զԴաւիթը, որին և Նապոլէօնը զանազան թղթակցութիւններ է յանձնում, և իրրև վաճառական ուղարկում է Բաղդատ, որ այնտեղից գնայ թէհրան։

Կաջարների պատմութիւնը գրում է թէ «1221 Հիջրին (1804—1805 ամի Ցեառն) Պարսկաստանի դեսպան Բաղեազ Իսմայիլ-բէկը Բաղդատից գրել էր թէհրանի արքունիքին թէ

Դաւութ անունով մէկ հայ եկել է այնտեղ, որպէս թէ Փարիզի և Բաղդատի մէջ առևտուր քանայ. բայց նա ծածկաբար եկաւ մօտս և յայտնեց թէ Փնպերատոր Նապոլէոնից թղթակցութիւններ ունիմ (և ցոյց տուեց ինձ) չորի վրայ գրուած, պէտք է գնամ Թէհրան և այս թղթակցութիւնները մատուցանեմ չորին, բայց երկիւղ եմ կրում գնալ Թէհրան. ուստի և կը խնդրեմ զիս ուղեորես հաւատարիմ մարդկանց հետ։ Թէհրանի արքունիքը հրամայում է խամսիլ-բէգին, որ նա ինքը Թէհրան վերադառնալիս, անպատճառ տեսը բերի Դաւիթ-խանը. Թէհրան դարձեալ ընդլիզների թելադրութեամբ Ֆաթ-Ալի-շահը խարդախ համարելով այդ թղթակցութիւնները, հաւատ չէ ընծայում Դաւիթին. վերջինս աշխատում է և Ֆաթ-Ալի-շահից թէրման առնում, որ այդ թղթակցութիւնները հասել են ինքեան, և վերադառնում է Փարիզ 1806 թուին, ինչպէս Մեսրոպ թարգմանչն ասում է թէ՝ «ի 1806, արքայն Պարսից դեսպան առաքեաց ի Փարիս, և չարունակեաց զայն ցանն սասնանվեցեսրդ, յորում մեծամեծն իշխան հայկազուն Դաւիթ Մելիք-Շահնազարեան, այր գաղղիերենագէտ և հմուտ իրողութեանց Եւրոպայ՝ առաքեցաւ ի դիմաց թագաւորին Նասեր դեսպանութեամբ ի Փարիս։ Որ գնանապարհայն եկեալ յԷջմիածին, ունկն մատոյց հեզութեամբ մնում հառիչ իմոց . . . . զի տարցէ զիս ընդ իւր ի Գաղղիս յուսամանս սէրսէրս գիտութեանց՝ աշակերտակցութեամբ թաչարոյ քեռորդւոյն իւրոյ . . . . [1]».

Դաւիթը Նապոլէոնի կողմից կրկին անգամ գնում է Թէհրան, և վերադառնալիս Փարիզ՝ գալիս է Էջմիածին, ինչպէս երևում է Ներսէս արքեպիսկոպոսի (որ դեռոյ կաթողիկոս) նամակից, որոյ պատճէնը հետևեալն է [2]).

«Շնորհաց հաղորդն սրբոյ վերարուսեալ նորահրաշ զուարճացեալ ծաղիկ տարարգոյ նախնեաց Հայկազանց՝ գերազնիւ վարժապետ և վարդապետ՝ գերքան զարիացու Ցանկոր Շահանեան Ջրպետեան ի Փարիզ.

Սիրեցեալ ըստ հոգւոյ.

---

[1]) Պատմ Պարսից Մ. թարգմանչաց։ Կալկաթա, 1846, երես 223։

[2]) Այս նամակի բառ առ բառ օրինակները պատճառն այն է, որ ցանկանամ թէ՝ այն ժամանակը ինչ ածականներ էին տալիս մէկ մէկի, և ինչ անուն էին գրվում նոցա թղթակցութիւնները։ Ասում էին թէ Ջրպետեանը վեհանգի հայ փարանութեան վարդապետ էր, Նապոլէոնի ժամանակ ալեսարհական եղաւ և անդամ մնաց Փարիզում անուանեցաւ։ Երբ նա հրաժարանք ներսիսի եկաւ, թիֆլիս և Ներսիսեան ուսումնարանում փարանութիւն լեզուի դասախօս եղաւ, նրա աշակերտներից մէկն էլ այս տողերն գրող էր։

«Ցանկացած իմն երբ չէր բնաւ ակնկալութիւն այսպիսի, ընկալաւք զայն շնորհալի դիրն ձեր ի 20 Սեպտեմբերի 1811 ամի ցեռուն, որում գտեալ զձեր յարգութիւն իբրև զնուրաստեղծ իմն շնորհաշուք զաւակ մերոց հայրենեաց։

«Զողորմն, չիք քան զայս սնորժական զրօսանք, եթէ յաջողէր ինձ վայելել անընդհատ զնաչակ բաղդրութեան քումդ քաջաքանութեան. և եթէ հնար գոյր թերևս մերձակայութեամբ բերան առ բերան, բայց զի մերա զուտարամատչելի են ամենայն ուղիղ ըղձալիք, այն է զի միայ մեզ կցորդութիւն իմանալի յանձին սեպհականել, և այնպէս արքան կարելի է տալ մխիթարութիւն անձանց...,

«Բաքատարութիւն իմն ինձ համարեցի, զի հանդիպեցար ի սմին միջոցի ճանապարհորդ զեալի այդր սեպուհ հաւատարիմ սրբոյ Աթոռոյս և ամենայն միաբանութեան մերում, ապին Ադամ Դաւիթի բարի շառաւիղն երեկի նախեւուն իւրոյ Մելիք-Շահնազարայ, կրկին յարգութեամբ մեծարեալ նորին առ ի Պարսից տերութենէն, հրամարտակաւ վկայութեամբ և Շիրբ-Շէմս [1]) կոչեցեալ նշանաւ, որ ի ժամանելն առ մեզ, և կամ ի ներկայանալն սրբոյ գրութեամբ լաւ ևս ունի բերանով իւրով զծանօթութիւն վասն ամենայն որպիսութեան մերոյ Հայրենեաց և վասն երկնահանդէս տաճարի սրբոյ զահի Արարատեան...,

«Բայց զոր ոչ հանդէպ համարեցայ, յուսով եմ թէև ձեզ չգուցէ ծանրութիւն առաջարկելն, այն զի յամին 1808, ի 16 Յուլիսի ի Դանիել Նահատակ կաթողիկոսէն, և յամի 1809, ի 25 Ապրիլի ի սուրբ Ժողովոյն Բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի առ Նորին Կայսերական Բարձրութիւնն ամենայն Ցիսանոյ, և ես ի սուրբ Ժողովոյն առ մեծ իշխան հոգևորական կառավարութեանց և մինիստրն հաւատոյ և օրենից Փօրթալի ի նոյն թիւ, եղեն գրութիւնք Ջերմեռանդական, որոյ և միայն չեզն շնորհ զարձի մինչև ցայժմս Սմին իրի հաշակ հայրենասիրութեան ձերոյ....,

«1814 Փետրվարի 10, յոյժ անձնուկ պատնէ ճանապարհորդութիւնն մերում յիրեան ի սուրբ Էջմիածնն։

«Թանարհ ծառայ Ղերսէս արքեպիսկոպոս, հոգաբարձու կառավարութեան սուրբ Ժողովոյն Բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի»։

---

[1]) Ֆրանսակակիցներն ասում էին թէ պարսիկները գնդէ այս թիւը չգծեցան չուձնին, Շահը կամենալով պարգևատրել ինչ ինչ իրանախոցիներ, Շիրբ Շէմս, կամ որպես այժմ կասեն Շիրբ-Խուրշիդ չգծեցնը, դուսիթ թեկադրութեամբ հնարեցին, որի առաջինը նա, դուսիթը կրեց։

Դաւիթ-խանը այս անգամ փարիզ ինչ զրազմունքով է պարապում վերարերեալ Պարսից տէրութեան չկարողացայ իմանալ. բայց այս յայտնի է որ նա վերադառնում է թէհրան, մտնում Պարսից ծառայութեան մէջ զլխաւոր թարգմանի պաշտօնով, և սառնում է խանութեան տիրոջ։

Դաւիթ-խանը իւր պապերի տուացած չաներից հրովարտակները ներկայացնելով Ֆաթ-Ալի-շահին, հրովարտակ ստացաւ զնալ տիրել իւր ժառանգական երկիրներին Երևանի Սարդարը պատրուակ բերելով թէ՝ իմ ներքոմիջական զլխաւորը կամ հրամանատարը թագաժառանգ Աբբաս-Միրզան է, որի վաւերացնելն ամենակարևոր է, Դաւիթը վերադարձաւ Թավրիզ ու թագաժառանգից հրամանագիր ստացաւ։ Բայց այս անգամ ևս Սարդարը զանազան պատրուակ բերելով մերժեց. քանզի նա տեսնելով որ այն երկրի լայնածաւալ տարածութիւնը եթէ յանձնէ Դաւիթ-խանին, ուրեմն իւրեանց հրամանի ներքոյ մնացածները կարի փոքր երկիրներ կը մնան, և այսօր վաղը ձգելով ուշացնում էր, և մանաւանդ քաջ զիտէր, որ Դաւիթ-խանը երկար ժամանակ չէր կարող մնալ Երևան։ Դաւիթը կրկին անգամ վերադառնում է Աբբաս-Միրզային, և նոր հրամանագիր առնում ու իւր քուռը տրպի խաչատուր-բէգի ձեռամբ ուղարկում է Երևան, որպէս զի սա տիրէ իւր պապերի երկրին, և ինքն այնտեղից, Թավրիզից, չարի հրամանաւ զնում է Ֆրանսիա։

1824 ամի Յունիս ամսի 4-ին Մոսկովից Դաւիթ-խանը նամակ է գրում [1]) Վրաստանի կուսակալ Երմոլովին, որից քաղուածք անելով այստեղ առաջ ենք բերում հետեւեալը։

Նա գրում է. «Ես ծնած եմ Աստրանի Նոր-Զուղայ քաղաքի մէջ, բայց հայրենիքս Գեղարքունին է, և չառաւիղած եմ Մելիք-բէգ Շարուրով ազգատոհմից, որ էր որդի Մելիք-Շահնազարի, և կը բնակէր Մաղրայ գիւղում Գեղարքունին որ այժմ Գէգ-Չայ կասուի, Թուրքերէն կը նշանակէ գեղեցիկ վիճակ կամ նահանգ։ Գեղարքունին կը վերաբերի Շամշադին, Գանձէյ, Ղարաբաղ, Ղախէչան, Երևան, Փամբակ և այլն։

«Թամասպ չահից մինչև Սուլթան-Հիւսէյն-շահը՝ վերագրեալ երկիրները, գրում է նա, հնարուած էին վերոյիշեալ իմ նախնաւ Մելիքներին, որոց մասին չորս հրովարտակներ ունիմ, որոց պատճէններն ահա առաքում եմ նամակիս ձեր զերազանցութեան, այսինքն 1) Շահ Թամասպի հրովարտակը, որ տուած է Մելիք-բէգին 964 Հիջրի Բամազան լուսնին

[1]) Акты Кавк. ком. т. VI, ч. II, стр. 759.

(1557 ամի Ցեռուն), որպէս զի նա մնայ իւր վիճակում, ինչպէս առաջ. 2) Հրովարտակն Շահ-Աբբասի գրուած 1000 Հիջրի Զամատի-ուլ-Էվվելի (1591 ամի), որում գրում է Մելիք-Շահնազարին, թէ Թավրիզին տիրեցի, յաղթեցի Օսմանցիներուն և թէ ի վաղուց հետէ ստացուած է մի միտեսակ և ճշմարիտ ձրգութիւնն ու համակրութիւն զէպի մեր արեգանմաստ տէրութիւնն. Մինոյն չափը կովկասին և Թիֆլիսին տիրապետելն յետոյ՝ վերադառնալիս իջնանում է Մելիք-Շահնազարի տանը, ինչպէս և վկայում է Առաքել պատմագիրը. 3) 1013 Հիջրի Զիլհաջջայ լուսնում (1604 ամի) չափը գրում է Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Բնամային իւր յաղթութիւնների մասին, մինոյն ժամանակն էլ պարգևում է նրան Զաբր ու Զբիլ գաւառը, որ է Նախիջևանի մօտ՝ նրա մէջ եղած բնակիչներով. 4) Հրովարտակ է տալիս Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Եավարին 1014 Հիջրի Զամադ-ուլ-Էվվելին (1605 ամի), երբ պարսիկները գերի են վարում Դեաք-Զայից մէկ քանի մարդ, և երբ չանն իմանում է, հրովարտակ է գրում նրանց, որոնել գտնել, և երբ գտնում են, չնորհում է գերիները Մելիք-Եավարին. Այս չորս հրովարտակներն ապացուցանում են, որ նրանք, մելիքները հզոր տիրապետողներ էին Դեաք-Զայ նահանգի վերայ, և նրանց ժառանգներն էլ իշխում էին նոյնպէս նոյն երկրի վերայ. Յիշիանով կուսակալի ժամանակ Մելիք-Շահնազարեան Մելիք-Բարսեղը, որ սերուած էր այն սերունդից, մինչև հինգ հարիւր տուն իւր ժողովուրդով, ընտանիքներով և ընդհանիներով գաղթուել է Վրաստան, մինչդեռ ես Բաբիլոն (Բաղդատ) տեղապահ էի Ֆրանսիայ հիւպատոսի և գործակատար Պարսից հիւպատոսի. Երբ ես եկի Երևան, գտի իմ հայրենիքն աւերուած ու բուերի բնակարան եղած ու գրաւված անիրաւութեամբ միացած այլեայլ նահանգների և հողերի հետ. ուստի և բողոքեցի Պարսից տէրութեան. Մինչ այս մինչ այն, ինչ ինչ վէճերի համար եկի ասա Մոսկով, որպէս նրանից առաջ ես Մահամմէդ-Ալի-խանի հետ նամակով հաղորդած եմ Զեզ, ճանապարհորդութեանս ժամանակ տեսայ, որ Մելիք-Բարսեղը մեր ժողովուրդի հետ գրկուած իբրեանց հայրենիքից՝ բնակվում են Կլիսաուեսապոլ (Գանձակ), վանորայ և գրեցի պարսից թագաժառանգին, որպէս զի նա չնորհէ Մելիք-Բարսեղին, մեր ժառանգական կալուածները, ուստի և Նորին Բարձրութիւնն իւր ուշադրութիւնը դարձնելով իմ խնդրագրին, թերման էր առաքել Երևանի Սարդար Հիսէյն-խանի վրայ, և հրամայել որ նա վերադարձէ Մելիք-Բարսեղը իւր ժողովուրդով մեր հայրենիքի վերայ. . . . և այլն.

Ցիշեալ Նամակին կցած է և մէկ հրովարտակի պատճէն, գրուած 1823 թուականին, որ թագաժառանգ Աբբաս-Միրզան գրում է Մելիք-Բարսեղին՝ թէ բարձրաստիճան մեր Կուլամ-Փէյ-Թղմամի խաչատուր-բէկը Թիֆլիսից վերադառնալիս յայտնեց մեզ, որ դու մտադիր ես Պեռնջայից վերադառնալ քո հայրենիքը, վատնորոյ փութա արի.... Երկրորդ պատճէնն է մէկ յանձնարարական թղթոյ, զոր Մելիք-Բարսեղը, Թուշան-Միանսար և Մովսէս Մելիք-Շահնազարեանները տալիս են Դաւիթ-խանին, որպէս զի նա իւրանց ժառանգական կալուածների մասին իրաւունք ունենայ ուր հարկաւոր է այխատել, բոզբէ և այլն։ Այս վերջին թուղթը վաւերացած է Թիֆլիսի դատարանում, 2 Մայիսի ամսոյ 1824 ամին։

Կուսակալ Էրմոլովն 29 Հոկտեմբերի 1824 ամի պատասխանում է Դաւիթ-խանին՝ թէ թոյլ կտամ Մելիք-Բարսեղին վերադարձել իւր հայրենիքը, բայց նորա հետ եկած ժողովուրդին՝ ոչ երբէք, աւելացնելով թէ դեռ ես Կոնք-Զայի սահմանները Ռուսաց և Պարսից տէրութեանց մէջ չեն որոշուած, վատնորոյ չէ կարելի թոյլ տալ ձեզ տիրել այն կողմերին, որոնք այժմ Ռուսաց տէրութեան ձեռին են։

Այսպէս ասա Դաւիթ-խանը մինչդեռ տաք տաք պրպտում էր, հետեւում էր իւր ժառանգական կալուածների մասին, յանկարծ ծագեց Պարսից և Ռուսաց պատերազմը (1826), որով և նրա վէճը մնաց թերակատար։ Այս պատերազմն աւարտելից յետոյ՝ Դաւիթ-խանը և խաչատուր-բէկը հրաժեշտ տուին Պարսից ծառայութիւնից, և եկին Երեւան, աշխատել և տիրապետել իւրանց կալուածներին։ Երեւանի նոր տիրապետող Ռուսաց կառավարչութիւնը պատասխանեց նրանց, թէ այդպիսի մեծ զորձն այսաեղ, Երեւան, չէ կարելի վճռել. ուստի դուք պէտք է գնաք Թիֆլիս և երես առ երես խօսք կուսակալի հետ։ Թիֆլիսի կառավարչութիւնն էլ առաջարկեց նոցա՝ թէ անկարելի է ձեզ այդպիսի ընդարձակ կալուածներ գրաւել, մինչև Ռուսաց հպատակութիւն չընդունիք, վատնորոյ և վերադարձան Երեւան, ուր ընդունեցին Ռուսաց հպատակութիւնը։

Քանի որ նոքա Թիֆլիս էին, չատ անգամ կուգային մեր տունը՝ հօրս մօտ, բան որում նոքա հին բարեկամներ էին, որով և ես ի մտոյ ճանաչեցի Դաւիթ-խանը։ Նա էր պարթև ու բարեյարմար հասակով, ամենազեղեցիկ դէմքով ողջամտոնրա հատ, ոգորկ, սև ոլորած ընչացքը, մեծ մեծ աչքերն ու լայն սև յօնքերը, չատ յարմար էին դալու նրա արտաքին հագուստին և չքեղ ոսկեթել նուրբ սպիտակ բեհեզից գլխի

փաթաթիլին և ճարկ քաշ արած ճանանչուար գոնարից հիւսուած Ալիւժ-Արեգական չքանչանին։ Նորա ճարտար, ուշիմ խօսակցութիւնը ևս հանդարտ կը ըլլի և առանձին ինն յարգանք կը զգայի դէպի նա։ Ընդհակառակն թաչատուր-բէգը երկար հասակ ունէր, բայց ոգեղ դէմք։ Սա Ցաճկաց և Իրուանց [1]) պատերազմի ժամանակ (1830) մտաւ Իրուանց ծառայութեան մէջ պարսկերէն, թուրքերէն և ֆրանսերէն լեզուների թարգմանի պաշտօնով, և գտնուում էր Չին-Բայազիդ մեներալ Պանկրատ'ևի մօտ։

Յետոյ 1830—1831 թուականներին՝ երբ ես Երևան էի, յաճախ կը տեսնուէի Դաւիթ-խանի հետ։ Համարեա թէ ամենայն օր նա կը յաճախէր իւր վիճի համար դատարանները, մանաւանդ դատաւորների և նահանգապետի մօտ։ Այս ժամանակ նա ոչինչ տեղից եկամուտ չունէր, ուստի և պարտաւոր էր նախ գաղանի և ապա յայտնի վաճառել իւր հագուստներ, իրարիկ միչտ կիսագնում։ Ի վերջոյ նա վաճառեց և Դապրէտնի նրան պարգևած սուրը, և հետևեալ խղճալին այն տխուր վիճակին հասաւ, որ դիմում էր խնդրագրեալ իւր ծանօթներին՝ դրամական օգնութեան համար։ Հուսկ յետոյ սկսեց դիմել գանգան քաղաքներում ծանօթներին ևս, ինչպէս և գրուեանը հօրս։ Երկու անգամ տասն տասն հոլանդիոյ ոսկի տարել եմ դրել նրա սենեակի սեղանի վերայ փաթաթած թղթի մէջ, առանց որ և իցէ բառ ասելոյ նրան, թէ և նա երբ կը տեսնէր ուշադրակալ եմ՝ բառը կարտասանէր, և այլ ոչինչ։ Այդ անասնների վիճակութիւնից, վերջերը նրա կեղտպարանքը զարմանալի փոխուում էր, որպէս թէ Դաւիթ-խանը այն անձն չէր, որ մէկ քանի տարի առաջ Թիֆլիս տեսած էի իմ Երևանից դուրս գալու օրերը, նա պարգևեց ինձ իւր կենդանագիրը, գոնեարով ոսկեայ փրիզ, արարացի հաղուստով և պարանոցին Արեգական-Ալիւժի չքանչանը, վասնորոյ և ես հանեցի դրպանիցս յետուն ուռչի ասիգնացի ասած դրամ և դրի սեղանի վերայ։ Որմանից ասելի դրամ չունէի մօտս։ Խոստովանում եմ որ՝ եթէ ունենայի, կրկնապատիկն ևս կտայի։

---

[1]) Դաւիթ-խանը, ասում էին, չէր ամուսնացած, վասնորոյ և որդեգրած էր թրքեան խաչատուր-բէգը, որ էր նրա քրոջ որդին։ Սա էր Ցեր-Յովհաննէսի միակ որդին, թէև Մելիք-Շահնազարեան էր Շափաբ էր ասորագրում, խաչատուր-բէգը թողեց մէկ տարի գաւակ Գէորգ անունով, որ երեխայ ժամանակ, երբ զրկուում էր Մոսկվա, տեսաց Լազարեանց Շեմսարանը, Թիֆլիսից անց կենալիս՝ տեսի ես նրան մէկ քանի անգամ։

Հուսկ յետոյ Երևանի Նահանգապետ Իշխան Բարսեղ (Վասիլիյ) Բէհրութեանը տեսնելով Դաւիթ-խանի գաղտնի վիճակը, և Ռուսաց դատարանների երկարօրեայ թղթակցութիւնները նորա վէճի մասին, գործերի ծանր և թոյլ ընթացքը, և թերևս նա տեսնելով, որ Ռուսաց այնտեղի կառավարութիւնը գտարկ թղթակցութիւններով է զբաղեցնում Դաւիթի միտքը, վանսորոյ խորհուրդ է տալիս վերջնոյս, որ մէկ աղերսագիր գրէ Կայսեր անունով, և նրա մէջն ասէ թէ, իմ հայրենական կալուածներն ընծայեցի Ռուսաց Կայսերութեան, հետևաբար աղերսէ, որ Տէրութիւնը նրան գոնէ մէկ գումար նշանակէ, որով նա կարողանայ նրանով ապրիլ. Այդ աղերսագիրը իշխան Բէհրութեանը առաքում է ուր հարկն է, և կարելեցաբար մէջտեղում է ու բարեխօսում. Անցնում է երկար միջոց, Դաւիթ-խանը չկարողանալով տալով բարոյական և ֆիզիքական նեղութիւններին, սաստիկ հիւանդանում է մինչև մերձ ի մահ, երբ և յայտնում են նրան թէ Կայսրը բարեհաճել է ընդունել քո աղերսագիրը, միևնոյն ժամանակ նշանակել է Մելիք-Շահնազարի ժառանգներին որդէց որդի մշտնջենապէս հնօրհուի գանձարանից երեք հազար ռուբլի արծաթ, Աւաղ, նրա հետևեալ օրը Դաւիթ-խանը աւանդում է հոգին. վանսորոյ այն գումարից մէկ մասը մտնում են հանգուցեալոյ թաղման համար, և մնացեալը մէջ ժառանգները իրենց մէջը բաժանում են, որոց թվումը լինում են Խաչատուր-բէգն ու Հաջի-Միրզայ-Իսուփը.

Այս երևելի մարդին վերաբերեալ թղթակցութիւններ անչուշտ չատ պէտք է լինին Խաչատուր-բէգի միակ որդւոյ մօտ, մանաւանդ Երևանի Նահանգապետի դիւանատանը. Ես այժմ անձնենտաս գոլով, չկարողացայ նրանցից նեղութիւն ժողովելու. յոյսս հաստատուն է, որ Երևանի ուսումնական երիտասարդները կամ Մելիք-Շահնազարեան-Արշաֆուրի մէկ անհատը նեղութիւն կրէ, գոնէ այն թղթակցութիւնների պատճէնները հրատարակել, որ և իցէ օրագրի միջոցաւ [1]) որով կընծայուի մեր պատմութիւնը առատ նիւթեր, եթէ ինքը անկարող է էս ազգասոնմի պատմութիւնը գրել։

---

[1]) Ս. Ցեր Շմաւոնեանց, որ թարգման էր Իշխան Բէհրութեանի մոտասաց ինձ թէ, նա կարդացել է Դաւիթ-խանի մոտ նրա կենսագրութիւնը, գրուած նոյն ինքն Դաւիթ-խանից, որից երևում էր նրա ծնունդը, սնունդը, կրթութիւնը, ուր և ումի հետ էին նրա մանապարհորդութիւնները, և ինչ պաշտօններ վարեց մանրամասնաբար նկարագրուած էին։ Կարելի է որ այդ գրուածքը այժմ գտնվում է նրա ազգականների մոտ։

Մեկ քանի խօսք էլ ասենք Հաջի-Խուսէփ Մելիք-Շահնազարեան-Կը-Շափերի մասին։ Ես չկարողացայ իմանալ թէ՝ սա, Խուսէփը մինչ քանի պրտա ազգականութիւն ունէր Դաւիթ-խանի հետ։ Այսքանս միայն կարող ենք ասել, որ Խուսէփն ես իւր երեխայութեան ժամանակ դերի է ընկնում պարսիկների ձեռքը, վաճառվում Թավրիզի մէջ մէկ Արդուլլան անունով հարուստ վաճառականի, որ իւր որդւոց հետ կրթում է նրան պարսկերէն և արաբերէն լեզուներով։ Այս լեզուների մէջ յառաջադէմ լինելու համար Միրզայ տիտղոսին է արժանանում, որ կը նշանակէ գրչի տէր։ Քիչ ժամանակից յետոյ Արդուլլանը Մէքքէ ուխտ գնալու միջոցին, տանում է հետը և Միրզայ-Խուսէփ, որով և Հաջի-Միրզայ-Խուսէփ է անուանվում։

Դաւիթ-խանը Թավրիզից անցուդարձ անելու ժամանակ, լսում է որ իւր ազգականներից մէկը՝ Խուսէփ անունով այնտեղ է, որտեղում գտնում է և ծանօթանում Հաջի-Արդուլլանի հետ, որին խորհուրդ է տալիս Ֆրանսայ հետ առևտրական յարաբերութիւն սկսել, որ շատ վաստակաւոր կլինի։ Արդուլլանն ուղեկցվում է կ. Պոլիս իւր հետը տանելով և իւր հաւատարիմ ստրուկ Հաջի-Միրզայ-Խուսէփը։ Հասնում է Պոլիս և Դաւիթ-խանը, ու նոքա միասին ճանապարհորդում են Փարիզ, ուր Հաջի-Արդուլլան զանազան ապրանք գնելով իւր ստրուկի հետ վերադառնում են Թավրիզ։ ուր, արդարև, այստեղ բարձր գներով են վաճառում, համարեա մէկը երկուսով։ Այնուհետև Հաջի-Արդուլլանն վերառաքում է Փարիզ Հաջի-Միրզայ-Խուսէփը, որ վերջինս մնալով հինգ տարի, մէկ կողմից ապրանքներ է գնում առաքում Թաւրիզ, մէս կողմից ֆրանսերէն սովորում։ Հաջի-Արդուլլանի գրութեամբ Խուսէփը վերադառնում է Թաւրիզ, ճշտութեամբ յանձնում է իւր հաշիւները Հաջի-Արդուլլանին, որ և վաստակի կէսն ընծայում է նրան, միևնոյն ժամանակ նրա հաւատարմութեամբ գործերը կատարելու համար ամուսնացնում է նրա հետ և իւր դուստրը։ Երբ այս ամուսնութիւնից ծնում է մէկ արու զաւակ, Հաջի-Արդուլլանը կրկին վերադարձնում է Խուսէփը Փարիզ, որպէս զի այնուհետև ընկերութեամբ առևտուր անեն, քանզի Խուսէփը արդէն զրամագլխի տէր էր եղած։ Երկու տարի հաշիւ թէ չարտնակում է այս ընկերութիւնը, լուր է ստանում թէ Հաջի-Արդուլլանը մեռաւ։ Ասում և Խուսէփը չտալ տաղնապով ժամանում է Թաւրիզ, տեսնում է իւր ասեղգործը միմեանց հետ մեծ վէճ են բացել, վասն զի նոքա զանազան մօրերից էին ծնած։ Բնական է որ Խուսէփը կը միանար իւր կնոջ համամայր անեղբայրի հետ։ Մինչև Խուսէփի Թավրիզ հասնելը

դատախազները համարեա հանգուցեալի դրամալուսը և վաստակը դատարաններում կաչառք էին տուած, կամ խոցած էին Իսուֆը ոչ միայն իւր դրամալուսին էր հաշուում պահանջում, այլև երկու հազար թուման ժամանակով ապրանք էր գնել փարիզ և ուղարկել, և այժմ նրա պարտատէր ֆիրմաներին հիւպատոսի վերայ, պահանջել Իսուֆից այդ գումարը, իսկ ժառանգներն Իսուֆից պահանջում էին երեսուն հազար թուման, այսինքն այն գումարը, որն Հաջի-Արդուլլան առաքած էր փարիզ, մէջ բերելով Իսուֆից ստացած ապրանքները։ Այս վէճը սառեցնելով օրրատօրէ, հասնում է թագաժառանգ Աբբաս-Միրզային, որն ճանաչելով Իսուֆին, իւր ինչ ինչ յանձնարարութիւնները ճշտութեամբ կատարելու, և փարիզից ինչ ինչ հաղուագիւտ բաներ առնելու համար, պարգևատրում էր նրան, որպէս զի չղրկեն նրան, բայց յանկարծ թագաժառանգը պարտաւորեցաւ դնալ Թէհրան, երբ և մօրաներն ասպարէզ գտնելով և կաչառակերութեան միջոց, վրդովեցին որ Իսուֆին է յանգաւոր, և սէրք է կարանաւորութիւնի թագաժառանգի տեղապահը երկիրը կրելով մօլլաներից պարտաւորեցաւ կատարել նրանց մտիրը։ Իսուֆին անհարացած մէկ գիշեր յարմար միջոց գտնելով, փախչում է գալիս Թիֆլիս ու դիմում Ղերսէս արքեպիսկոպոսին (որ յետոյ կաթողիկոս) և խնդրում պաշտպանել զինքը, որպէս զի գերի վերադարձած քրիստոնեայ տէրութեան, ուր կարող էր ազատութիւն պատել իւր հայրենական հաւատը։ Պարսից տէրութիւնը մէկ քանի անգամ պաշտօնական թղթերով պահանջում է կուսակալ Լրմեղովիցն Միրզայ-Իսուֆը, բայց նա մերժում է։ Ղերսէսը տեսնելով Իսուֆի թշուառ վիճակը, նշանակում է նրան Պարսից Ղազուի վարժապետ իւր Ղերսիսեան ուսումնարանում, երբ և ես անդէն աչակերտում էի։

Որպէս վերը յիշեցինք, երբ Դաւիթ-խանը եկաւ Թիֆլիս, Իսուֆին էլ միացաւ նրա հետ իւրեանց հայրենական ժառանգութեան վէճի համար։ Դաւիթ-խանի ընդհարքի մասին, երբ նա վախճանեցաւ, երեք հազար ռուբլին նրան պարգևած գումարիցն, երեք հարիւր ռուբլի նշանակեցաւ Իսուֆի բաժինը։ Իսուֆը այդ գումարը ստանալով նոր խնդրագրով յայտնեց տէրութեան իւր անարատական լինելը, առաջ բերելով թէ Դաւիթ-խանը չունէր իրաւունք նրա բաժինն ընծայել տէրութեան, այլ թէ ընծայել էր, իւր և կամ ով որ նրան գրով լիակատար իրաւունք էր տուած՝ նոցանը կընծայէր, և ոչ թէ, Իսուֆինս կարող էր ընծայել։ Այդ վէճը

Խաչատիր երկար տարիներ չարունակեց Թիֆլիս, բայց ոչինչ բարեպանութիւն չստանալով ուղևորեցաւ Ս.-Պետերբուրգ։ Այնտեղ ևս շատ ժամանակ տևեց այս պատանին, և երբ տեսաւ, որ տէրութիւնը ոչինչ բարեպանութիւն չտուեց, 1866 թէ 1867 թուին, նա աղերսագիրներ գրեց Օսմանցւոց սուլթանին և Պարսից շահին առ ի բարեխօսել։ Ասցանից ևս բարեպանութիւն չստանալով մնաց այնտեղ աղքատ և թշուառ վիճակում, ուր և մեռաւ։

ԺԳ։

ԴԱՒԻԹ-ԽԱՆ ՄԿՐՏՉԵԱՆ, ԲԺԻՇԿ ՇԱՀԻ ՊԱՒԼԱՏԻՆ։

Անցեալ դարի վերջին քառորդում Պաւլիթը ծնողում է Շիրազ քաղաքում, պարկեշտ ու հանգստ ընտանիքից։ Քանի որ նրա հայրը Մկրտիչը կենդանի էր, նա Շիրազում ուսանում էր հայերէն և պարսկերէն։ Հօր մահուանից յետոյ, նա վշտացած խորթ մօրից վտարանդի ուղևորվում է Հնդկաստան, կալկաթա, ուր սովորում է և անգլերէն, և այնտեղից գնում է Անգլիա, ուր իւր բժշկական ուսումը կատարագործելէն յետոյ, ի լոյս է ընծայում ծաղիկ պատուասանելու, և այն հիւանդութեան վերաբերեալ գրքոյկ։

1821 թէ 1822 թուին նա Անգլիայից Պետերբուրգ և ապա Թիֆլիս է գալիս, որ գնայ Պարսկաստան։ Ներսէս արքեպիսկոպոսը (որ յետոյ կաթողիկոս) արդէն լսած լինելով նրա անունը, խնդրեց, պահեց նրան Թիֆլիսում, որ փոքր միջոցում մեծ համբաւ ստացաւ (մեր ասն թիչէն էլ նա էր, և շատ անգամ ինձ համար դեղեր էր գրել) բնակիչների մէջ։ Այս միջոցները Ատրպատական սատափի հարակուած էր փոքրացուն թօլէրայ, զոր անուանում էին Կալերատարուս, և այս անկոչ հիւրին սպասում էին Թիֆլիս, վասնզոյ նա հայերէն մէկ տետրակ տպեց Ներսիսեան ուսումնարանի նոր բացուած տպարանում, որ ցոյց էր տալիս և սովորցնում թէ ինչպէս և ինչ դեղեր պիտի գործադրուին այդ սխռտով վարակուած հիւանդների համար։

Ներսէս արքեպիսկոպոսն իւր ուսումնարանի համար Ասպահանից, Նոր-Ջուղայից պարսկերէն լեզուի համար բերել էր տուել մէկ վարժապետ Բեթիզեհէմ անունով, որ այն տետրակը

պարկեշէնի թարգմանեց ու երկու օրինակ Ասպահան և Թէհրան ուղարկեց իւր բարեկամներին։ Սոցա մէկ օրինակը Ֆաթհ-Ալի-շահի ձեռքն է ընկնում, որ տեսնելով թէ նրա հեղինակը իւր հպատակ մէկ Շիրազեցի հայ է, և ուստում առած Անգլիա, գրում է իւր որդի թագաժառանգ Աբբաս-Միրզային, որ բերել տայ նրան Թիֆլիսից և ուղարկէ Թէհրան արքունիքի համար բժիշկ լինելու։

Այս միջոցներում Շուշեցի հրեաների հարուստ Հախումեանց գերդաստանի Սահակ անունով միակ ժառանգ պատանին ուղարկվում է Հաշտարխան ուստում առնելու, ուր և խեղացնորվում է։ Այնտեղի բժիշկները չկարողանալով օգնել նորան, պատանին տանում են Շուշի, բայց այստեղի բժիշկներն ևս զանազան փորձեր անելով զարձեալ չեն կարողանում բժշկել. և որովհետև Հախումեանք լսում են, որ Դաւիթ անունով մէկ նոր ու անուանի բժիշկ եկած է Թիֆլիս, դիմում են նրան և խնդրում են գնալ Շուշի և փորձել, թերևս նա առողջացնէ կամ այնպիսի հնարք մտածէ՝ որ հիւանդը մարդ չվնասէ։ Դաւիթը չէ համաձայնում, ուստի և Հախումեանք գրել էին հօրս, որ ազատէ, պաղատէ նրան, եթէ դարձեալ չհամաձայնի՝ միջնորդ և բարեխօս ձգէ Ղերեէս արքեպիսկոպոսին։ Երբ Դաւիթը գնաց Շուշի ու տեսաւ հիւանդը, խորհուրդ տուաւ անուանեցնել նրան, որով նա հետզհետէ մեղմացաւ ու զուարճներ ունեցաւ։ Ղոյն միջոցները հասաւ սուրհանդակը Աբբաս-Միրզայի հրամարտակաւ, որ հրատիրում էր Դաւիթին գնալ Պարսկաստան [1]։

Դաւիթը Իրանում ոչ միայն հմուտ բժշկութեամբ, այլև իւր համեստ և պարկեշտ բնաւորութեամբը այնպիսի համրաւ և յարգ ստացաւ, որ ինչպէս չասի, նոյնպէս և բոլոր մեծամեծների կանանցը համարձակ երևումներ կանէր հիւանդներ բժշկելու, որով նախ խանութեան պատուանուն ստացաւ և ապա հետզհետէ, գնդապետութեան և սարդարութեան, այնինչն զօրագլխութեան չքանչանները։

1249 Հիջրին (1833 ամի հեռուն) թագաժառանգ Աբբաս-Միրզան հիւանդացաւ թոթռաման, ուստի ապաքարեց և տանել տուաւ Թաւրիզից իւր անձնական բժիշկ անդլիացի Կօրմիկը, որ ճանապարհին հիւանդանալով վախճանուեց. յետ որոյ Ֆաթհ-Ալի-շահը չատպ տագնապով իրրև սուրհանդակ ուղարկեց բժիշկ Դաւիթ-խանը, բայց սա ևս չկարողանալով տակալ

[1] «Կովկասի Ազգասէր» օրագիրը 1847, Յունվարի 23, ասում է թէ Դաւիթ-խանը եկաւ Պարսկաստան 1831 թուին։

ամենքան երկար ճանապարհորդութեան, հիւանդացաւ ճանապարհին և մօտ երկու ամիս մնալով մէկ փոքրիկ գիւղում, հազիւ առողջացաւ և վերադարձաւ Թէհրան։

1834 թուին Ֆաթ-Ալի-շահը գնում է Ասպահան, ուր լինում է և Դաւիթ-խանը։ Շահը առանց հիւանդութեան, յանկարծ մեռնում է այնտեղ, որով Ասպահան սաստիկ յուզմունք, շփոթութիւններ ու խառնակութիւններ են լինում, և Դաւիթ-խանը հազարագոյն պաշտպան է հանդիսանում ու օժանդակում Նոր-Ջուղայի հայերին, որի մասին Մեսրոպ Թադիադեանցը որպէս ականատես նկարագրում է մանրամասնաբար [1]։

1258 Հիջրին (1842) երբ Մահմմէդ-շահը լսում է իւր համամայր եղբայր Ղահրաման-Միրզայի (որ էր Ատրպատականի փոխարքայ) հիւանդութեան սաստկանալը, իսկոյն ուղարկում է Դաւիթ-խանը Թաւրիզ, բայց մինչև վերջնոյս տեղ հասնելը Ղահրաման-Միրզան մեռնում է և Դաւիթ-խանը մի ամսաչափ Թաւրիզ մնալից յետոյ վերադառնում է Թէհրան։ Ասպահանի մէջ այդ միջոցները մէկ տեսակ նոր հիւանդութիւն յայտնուեց, որ երկրացի բժիշկները չէին կարողանում բուժել, ուստի և շատ մարդիկ էին կոտորվում։ Այնտեղի զլխաւոր կառավարիչ Հայկազն Մանուչար-խան Մոլիմէդ-Ազ-Դօվլէն (սիրն տէրութեան) խնդիր տուաւ շահին, որ ուղարկէ Դաւիթ-խանը Ասպահան՝ այն ցաւի հնարը գտնելու համար, որ գնաց և հանգցաւ նրա հարը, հրամանդ տուաւ տեղացի բժիշկներին, մնաս Նոր-Ջուղայ, ամենանցաւ և կնոջ հետ վերադարձաւ Թէհրան։

1850—1851 թուին Թէհրան զօրքի մէջ մէկ հիւանդութիւն է ծագում, որ տեղացի բժիշկներին անհասկանալի է լինում, իսկ Դաւիթ-խանը քննելով խմանում է Տիֆ ախտը, անձամբ գնում է զօրքի հիւանդանոցները և շատ ախտացեալներին բժշկում, բայց մեղք որ ինքն ևս ձարակվելով նոյն հիւանդութիւնից՝ մէկ քանի օրէն վախճանվում է, որով նրա ընտանիքը վերադառնում է Նոր-Ջուղայ։ Դաւիթ-խանը թողեց մէկ արու զաւակ, և երբ 1853 թուին ես գնացի Ասպահան, տեղւոյն առաջնորդ Թադէոս արքեպիսկոպոս Բէգնազարեանի հետ այցելեցի հանդուցելոյ ամուսինը, որպէս հինաւուրց բարեկամի ընտանիք, տեսի նորա միակ որդին, որ 7—8 տարեկան կը լինէր։ Թադէոս եպիսկոպոսը՝ որպէս հինաւուրց բարեկամ հանդուցելոյն, ընդունել էր այն երեխայն որպէս որդեգիր, և խոստանում էր թէ երբ այս մանուկը 11—12

[1] Պատմ. Պարսից Մ. Թաղիադեանց, 1846, Կոստանդնուպոլիս, երես 235—236։

տարեկան դառնայ, իւր ծախքովը պիտի ուղարկէ Կայկաթա բժշկութիւն սովորելու. բայց չգիտեմ արդեօք նա կատարեց իւր խոստմունքը թէ ոչ։

Դաւիթ-խանը բնութեամբ ծանր էր և բարբով ու վարքով համեստ, նորա մտերիմ և հաստատ բարեկամութիւնը հանրածանօթ էր Իրանում, մինչդեռ ժամանակ մարդասէր էր և անչահասէր. ուստի և մահուանից յետոյ շատ անհամեմատելի կայք թողեց, մինչդեռ այն ժամանակները կարող էր նա հարստանալ, ինչպէս նրա յաջորդ եւրոպացի պաշտօնական բժիշկները, որոնք մեծ փարթամութեամբ էին վերադառնում իւրեանց հայրենիքը։

ԺԴ.

ՁՕՀՐԱԲ-ԽԱՆ ԿՈՒԼԱՄ ՓԻՇ-ԹՍՄԱԴ-ԲԱՇԻ, ԱՅՍԻՆՔՆ ՁԻԱ-ԻՈՐ ՍԵՆԵԿԱՊԱՆՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐԸ։

Այս երեսի անձնաւորութեան կենսագրութիւնից բաւականին ժողոված ծանօթութիւնները ենթարկուեցան մինչոյն տխուր ճակատագրին ինչպէս և շատերինը — իմ գրատան հետ։ Վերջին անգամ երբ ես գնացի Թաւրիզ, շատ որոնեցի գտնել նրա ծանօթ կամ մարտակից մէկը, որ թերևս փոքր ի շատէ տեղեկութիւններ հաղորդէր ինձ, բայց անկարելի եղաւ։ Այսքանը միայն գտի իմ յիշատակարանի մէջ, որ նա ծնուած է Ղարաբաղ մէկ գիւղում, և մկրտութեան անունը Պետիան եղած է։ Նա գերի է վարվում մանուկ հասակին, և մնում է Աբբաս-Միրզայի կանանոցում, մինչև չափահաս լինելը. յետոյ վերջինս գրում է նրան ի թիւս անձնական ձիաւոր սենեկապաններին։

Կաջարների պատմութիւնը՝ ինչպէս միշտ ուիշտ է որ և իցէ անձնաւորութեան անցեալ կեանքից գոնէ համառօտութեամբ տեղեկութիւններ տալոյ համար, յանկարծ հանդէս է դուրս բերում մէկը իւր պատմութեան էջերում, նոյնպէս էլ վարվում է այս Ձօհրաբի հետ. ուստի և մեք այժմ պարտաւոր ենք նրա երիտասարդութեան կեանքից մեռը վեր առնել, և վերոյիշեալ պատմութիւնից աշտութեամբ քաղուածք անել։ Նա ասում է թէ «1228 Հիջրին (1812 թուին) Թուսաց և Պարսից պատերազմի ժամանակ Աբբաս-Միրզան հրամայեց

Ավշար-Խամ-Կուլի-խանին, Իրդաշի Զօշրաբ-բէկին [1]) և Քանդիարլի Քեարիմ-խանին, որ Դիմանդզի Ազրաքի-խանի հետ յարձակուին Ղալաթաղ գտնուած ռուսերի վրայ, իսկ զկալաքար Ամիր-խանը և Կարա-ԴէՀզլի Հաջի-Մարամնդ-խանը ուղարկեց Խնձրակ (Խնծորէկ), որպէս, բան կամարների պատմութեան, Ղալաթաղի կողմերն աւարեցին, ասերեցին և որով մաղեցին։

Յետոյ 1237 Հիջրին (1821) Պարսից և Օսմանցւոց պատերազմի ժամանակ Զօշրաբը նոյն պատմութեան էջերում յայտնվում է իսկ ոչ տիտղոսով, և անձնական հնձելաղօրքի հրամանատար (Հուլամ-խաստ), այսինքն ընտրեալ Կուլամ պատանեանցով. քանզի ասում է թէ «Զօշրաբ-խան ընտրեալ Կուլամը վերջապահ մէկ գունդ հետեակ և Մրկաղդէմ հեծեալ զօրքով բանակի քամակից չուելիս, պատահեց չորս հազար Օսմանցւոց վանի զօրքին, որ բաղկացած էր Քիւրդերից, Դէլի-բաշներից և Հայիմներից, և որոնք յարձակելով Թրղրլու և Թաքաորի (Թագաւորի) ասացեալ Քիւրդ ցեղերի վրայ, յաղթել էին և գերի էին վարում նրանց. երբ և անակնկալ պատահում են յիշեալ Պարսից վերջապահ զօրքին։ Զօշրաբ-խանը պատերազմելով նրանց հետ, չարաչար յաղթում է և խորտակում թշնամիների զօրքը, ու չատերին գերի վարում, անմիջապէս վերադարձնում է թագաւորի ցեղը իւրանց ազխով

[1]) Ընդհանուր դարերից ՇՈՒՑԵԱԼ մեր պատմութիւններին, թղթակցութիւնների և բերանացի ասողութիւնների մէջ բաւս ԼիւՇՇԷ։ այժմ թարգմանելով բառ առ բառ «Հարիւրապետ», չատերը կարծում են թէ այն անձը՝ որ կրել է այդ տիտղոսը, հարիւր մարդկանց գլխաւոր եղած է, չատ տխալ է. քանզի ԼիւՇՇԷ բառերս Ղամ, Խամ, Մէլէ և Ռէթ, հին ժամանակներում կը նշանակէին թագաւոր, տերպետոց և իշխան, հետևեալ իւրանց նշանակութիւնները կորցնելով, ներկայ դարումս ԼիւՇՇԷ մէջ հասարակացած բառեր են եղած, այնպէս էլ բաւս ԼիւՇՇԷ։ վասն զի անցած գնացած դարերում շահերն ու շահագործները ունէին երկու տեսակ փէշ-խամաղներ, այսինքն անձնակապեալներ, որոց մէկը քաղաքում, իսկ միւսը՝ արտաքոյ քաղաքի կը սպասաւորէին նրանց։ Վերջինս բաժանվում էր երկու դասի, մէկը զուլամներ էին կոչվում, այսինքն սարբազներ, որոնք շահերի անձնապահ սպասաւորներ էին, բայց ձիաւորներ էին, և նոցա գլխաւորը կոչվում էր Կուլամ-բաշի, իսկ միւս դասը բաղկանում էր ձիաւոր անձնապահ անձնակապեալներից, որք էին Կուլամ-փէշ-խամաղներ, և սոցա գլխաւորն անուանում էր Կուլամ-փէշ-խամաղ-բաշի։ Երկու դասի երկրների պատասխանատուները շատ պատասխանատու ասվեանք էին, որոնք և կանուանէին ԼիւՇՇԷ։ Եւ Սրանք ամենայն շահին մերձ էին և յայտնի, և հետևեալներս այս ԼիւՇՇԷները այլեւայլ նահանգներում երեսի ծառայութիւններ կատարելոյ համար կուրգիանէին. ասած չատ ԼիւՇՇԷներ կարեւորութիւն եղաւ, վասնորոյ և չատացան, և որքանատ այս տիտղոսները հասարակական եղաւ, փէշն այն ասվեանք, որ անցեալ տարի կիսատ, երբ Երանը առանց շահի ձիւում էր, իւրաքանչիւր նահանգապետ խան՝ գլխի հա-

և անասունները, տանում հասցնում է Ավաջը, ուր թագաժառանգն բանակուած էր։

1241 Հիջրին (1826—1827) Ռուսաց և Պարսից վերջին պատերազմի ժամանակը՝ Ռուս զորաց մէկ մասը մտնում է Էջմիածնի բերդը, ասում է «Վաղարշապատ»ի պատմութիւնը։ Վանդոյց Աբբաս-Միրզան ուղարկեց թնդանօթաձիգ գնդապետ (սէրէնգ) Իւսուֆ-խանը (որոց համար փոխանակ ասելոյ Հայ, ասում է Գիւրջի, այսինքն վրացի) և Կուլամ փէշ-խանագրաի (այս ևս նոր տիտղոս) Զօհրաբ-խանը, որ չորս հազար զօրքով գնան պաշարեն Էջմիածնի բերդը, և թոյլ տան Ռուսաց պաշարուած զօրքը բերդիցը դուրս գայ, գնայ միանայ այն զօրքի հետ, որ Ռուսաստանից նոր է գալիս։ Իսկ ինքը Աբբաս-Միրզան՝ յուսց՝ գնաց Ազարան, (այս անցքը պէտք է լինի ժեռեալ կրասովսկոյ յաղթութիւնը) և Աչտարակ [1]) գիւղն մօտ պատաւեց նոր եկող թշնամիների զօրախումբին, յարձակուեց նրանց վերայ, չարաչար խոշտակեց, շատ մարդիկ կոտորեց ու գերի վարեց, և այնուհետև հրամայեց Էջմիածնի պաշարումն բառնալ, ըստ որում Աբբաս-Միրզան չէր կամենում, ինչպէս ասում էին, գնդակակոծել այն նուիրական տեղը (օջաղը)։ «Վաղարշապատի պատմութեան» վերջերումը, մէկ յաւելուած կամ պարբերութիւն կայ, որ 1854 թուին է պատահում, բայց պատմողները միաւորում է 1850 թուի անցքերին, և ասում է, «Մադրէ-Դիւանխանէ Միրզայ-Մահամմէդ-Հիւսէյնխանը դեսպանութեամբ Ս. Պետերբուրգ գնալիս ու նրանից անց կենալիս, գնաց Էջմիածին և տեսնուեցաւ Ներսէս կա-

---

մարելով անկախ, անթիշարար ստեղծեց Էջմիածին, նաև ընծայելով այս տիտղոսն իւր ազգականներին և սիրած մարդկանց, մանաւանդ Հայերին. և հնարաւոր այս բառը ժողովրդական դառնալով՝ ընծայուած էին այն անձանց, որք երբեմն ունեցել էին գինուորական պաշտօն. բայց յետոյ զրկուած կամ հրաժարուած էին այն պաշտօնից, իսկ ժողովուրդը նրանց Էջմիածնի էր կոչում։ Հաւսկ յետոյ այս բառն այնքան իւր նշանակութիւնը կորցրեց, որ գիւղացիք իւրանց միջից ինքնանց ընտրում էին տանուտէր, և անուանում էին Էջմիածին, ոչնչպէս և Հայ-մելիքների եղբայրները կամ ազգականները Էջմիածին էին կոչվում նոցա եղբօր կամ ազգակցի պատուի համար։ Վերջերը Ռուսաց դեսպանատունը իւր սուրհանդակները կալաշ էին անուանում և նրանց գլխաւորը—Էջմիածին, որն հաղիւ թէ 20 սուրհանդակներ ունէր իրեն տարուբերելու։ Այս դեսպանատունը սկսեց հետևել և միւս օտար ազգաց դեսպանները, որոնք գալիս էին այս պաշտօնեա պարսկատան։

[1]) Կոմսն Երևանի—Պասկիեվչ, որա համար էր մեզ գրում գնեսանը. վասն զի իբր որա ապապարելով պրասովսկին չու

թողիկոսի հետ, որ ներկայ և ականատես լինելով Պարսից և Ռուսաց պատերազմի ժամանակ այն անցքին, պատմեց թէ «Աբրաս-Միրզան տեսնելով որ Ռուսաց մէկ քանի հարիւր մարդիկ մտել էին Էջմիածնի բերդը պատսպարվելու համար [1]), հրամայեց իւր զօրագլուխներին չու

գնալ նրա մոտ, քանզի ամբոխն որպէս թէ սպառնում էր սպանել նրան. բայց նա չէր ընդհատում իւր յարաբերութիւնն ու մտերմութիւնը դէպի Հային, և ամենայն օր կէսօրուան միջոցին առանց երկիւղ կրելու գնում էր Շահ-Արդլ-ռամմ.

Առում էին Զօհրաբ-խանը մեռել է 1850 թուի սկզբներում.

ԺԵ.

ԻՍՈՒՓ-ԽԱՆ ԱՄԻՐ-ԹՕՓԽԱՆԷ. ԲԱՂԿԱԼ ԴԷԼՕՅԵՆՑ.

Ներկայ դարի առաջին կիսում Իրանի մէջ դանուած եզական տղամարդներից մէկն էր այս Իսուփ-խանը. Նա այն բոպէից, որ գերի էր ընկած, մինչև իւր վերջին շունչը փչելը՝ քաջութեամբ ապրեց ու քաջութեամբ մեռաւ.

Նա Թիֆլիսցի էր, և նրա առաջանի անունը—Յովսէփ, զոր փաղաքշաբար, Թիֆլիսու սովորութեամբ՝ Սօսի կանուանէին. Նրա հայրն էր բաղկալ (նպարավաճառ) Դէլօյենց Թօմա կամ Թովմաս, նրա մօր անունը Քալի և քրոջը Նինօ. Թովմասի պապական տունը Շիա-պարսիկների մէջտեղի մոտ էր, որին կից էր և նրա խանութը, ուր նրա նախնիքը նպարավաճառութեամբ կը պարապէին. ուստի և Թիֆլիս յայտնի էին բաղկալ Դէլօյենք անունով.

Եթէ Ներքինի Ագա-Մահամմէդ-խանի յարձակուելից Թիֆլիսի բնակիչներից ամենք մէկ քանի օր կամ մէկ քանի շաբաթ առաջ դուրս չէին եկել, փախել՝ գնացել ու ամուր տեղերում պատսպարուել, կամ անհոգութիւնից է եղած, և կամ ինչպէս ժամանակակիցները հաստատում էին, իբր թէ Նրանք չեն հաւատում լինում Ներքինիի այդպէս շուտով դալուն, ուստի և չեն դուրս գնացել քաղաքից. բայց եթէ Թովմասը չէր փախած, դուրս գնացած, զորա պատճառն այն էր, որ նա իւր համոզմամբ՝ զոլով Շիա-մահմէդականների մէջտեղին դրացի, զոլով թուրքերին մտերիմ ծանօթ, ոչ միայն ինքը, այլև նորա գերդաստանի բոլոր անդամները ևս ազգական լինելով թուրքերին լեզուին, անչարժ մնացել էին Թիֆլիս. բոլորովին վստահանալով որ երկրացի մահմէդականները նրանց կոգնեն, և անշուշտ չէին թողնիլ, որ օր և իցէ վնաս լինի նրա ընտանիքին, խանութին, և տան ու տեղին. Բայց ի վերոյիշեալ, ըստ նորա երևակայական անհերքելի փաստերից, նա՝ Թով-

մասը իւր բարձր ու պարթև հասակովը, լաւ հրացան ձգելովը, փայտեայ թրով կռուելովը, մանաւանդ մուշտակի և սասած բռնցի մարտնչելովը յայտնի քաջ աղամարդ էր հաստատում Թիֆլիսի մէջ, ուրեմն նա հասկացած էր, որ ոչ ոք չէր յանդգնիլ նրան ձեռնամուխ լինել և նրա բնակութեանց և կալից մերձենալ։ Ահա այս էր նրա գլխաւոր պատճառը, որ նա վատահանալով իւր անձնական յատկութիւններին, հայելով թնդանօթների, հրացանների ադմկաւոր թնդիւններին, հանդարտ և հանգիստ բազմած էր իւր խանութում, երբ Պարսիկները անակնկալ մտնում են քաղաքի մէջ, և յանկարծ մէկ քանիսը թափվում են նրա խանութի վերայ և սկսում են կոզոպտել, ինչպէս և անզանազանաբար երկրացի մուսուլման բնակիչներին ևս էին կոզոպտում։ Թոմասն սկսում է յոխորդալով ասել, որ նոքա ընդդէմ իւրանց հաւատակիցների կամաց մեզանչում են, քանզի նա մէկջիբի դրացի է, ծանօթ է նրանց հաւատակիցներին և այլն, և այլն։ բայց պարսիկ զորականները ամենևին ուշ չէին դարձնում նոքա քարոզներին, սկսում են թալանել։ ուստի և Թոմասը վազում է ներս մտնում իւր տունը և հրացանը ձեռքին վերադառնում, որպէս զի նրանով գոնէ վախեցնէ այն սակոյ հիւրերը, որ չյարգուցանեն նրա խանութի մէջ գտնուած բաները։ բայց երբ նա տեսնում է որ նոքա դարձեալ չարունակում են իւրեանց լրբութիւնը, լարում է հրացանը և վախցնելու համար օդի մէջ պարպում։ Պարսիկներից մէկն ուղղում է նրա վերայ իւր ատրճանակը, բայց չէ դիպչում. իսկ Թոմասը մտնում է իւր սան դրան քամակը, որ վերանորոգէ իւր հրացանը և լցնէ վաճառով, և ասա պարսիկները նրան հետևելով, դռնիցը նայում, տեսնում են մէկ բաւականին ընդարձակ բակ և երեք կողմը սենեակներ, ուզում են բակը մտնել։ Թոմասն իւր հրացանը ձեռքին, ընդդիմանում է և թոյլ չէ տալիս նրանց որ ներս մտնեն, ուստի և պարսիկներն իրանց հրացանը նրա վերայ արձակում են, և անդէն անդ գնդակոծում։ Թոմասի անեղբոջ որդի Աբրահամը, որ այն ժամանակ 15—16 տարեկան է լինում, այս միջոցին մէկ քանի անգամ ներս ու դուրս է անում, և իմացում տալիս իւր քրոջ որդուցն, որ դուրս գայ ու թերևս թոյլ չտայ աղաչանքով, խնդրելով պարսիկներին, որ չյարգուցանեն նրա տան կայքը։ Մինոյն ժամանակ Քալին լսելով հրացանի թնդիւնը, շտապով դուրս է վազում, տեսնում ամուսինը սպանված, գետնի վերայ փռուած, սկսում է լալ, կոծել և թուրքերին անիծանել ու հայհոյել։ Իսկ պարսիկները զայրացած նրան էլ այնտեղ թրատելով կոտոր են

անում, և Աբրահամը որ մինչև այն վայրկեանը չէզոք բանկումը կանգնած լացում էր, տեսնում է որ Թովմասի որդին ու դուստրը, այսինքն Սօսին ու Նինոն, որոնք 10 — 12 տարեկան են լինում, դուրս եկին ներսիցը, և իւրեանց ծնողների քսանմեկի տեսարանը տեսնելով, թափուեցան նրանց վերայ և սկսան լալ և կոծել. Աբրահամն էլ նրանց հետ միանալով սկսում է ողբալ. Պարսիկները խանութի կողպտելէն յետոյ, երբ մրանում են ներսն ևս թալանել, երկոք երեխաներն արդէն ափի են լինում և խափանում, պարսիկները իւրեանց մէջքի գոտիկները բաց են անում, որ նրանց ձեռքն ու ոտքը կապեն կաչկանդեն. Սօսին փախչում է կանգնում մէկ քարակոյտի վերայ (որ բակի անկիւնումն կիտուած էր) և այնտեղից սկսում է քարկոծել գերեվարները, որպէս զի թոյլ չտայ իւր քրոջն ու Աբրահամին կաչկանդեն. Պարսիկներից մէկը նկատելով որ Սօսին քարկոծելով խանգարան է լինում, հանում է գօտկիցը ատրճանակը և նրա վերայ կրակում, բայց բաղդաւորութեամբ գնդակը նրան չէ դիպչում. Միւսներն իրանց ընկերի վերայ զայրանալով ասում են թէ՝ բա չէ՞ արդեօք կալանաւորել այդ երեխան, գերի վարել, քան թէ սպանել, և ապա ժողովում են երեք կողմից միաձայն թափվում են Սօսինի վերայ, կալանաւորում, ձեռքն ու ոտքը պինդ կապում ու ձգում են բակի մէջ Նինոյի և Աբրահամի հետ. իսկ իրանք արձակ-համարձակ ներս են մտնում, եղած չեղածը թալանում, տանում երեք գերիների հետ թուրքի ասած հրապարակը և յանձնում իրանց ընկերներին, որոնք սպասում էին այնտեղ ուրիշ կողոպտների և գերիների հետ, և ինքեանք վերադառնում են այլևայլ կողոպուտներ և գերիներ ձեռք բերելոյ համար. Աբրահամը պատմում էր թէ՝ ես ու Նինոն լաց էինք ընում, իսկ Սօսին մեր վերայ զայրանում էր, և մէկ կողմից աչքատում էր իւր ձեռների ու ոտների կապոցները քակել և փախչել. ուստի և պահապանները առաւել ևս կաչկանդեցին և մէկ քանի անգամ աքացիով և հրացանների կոթով զարկեցին. իսկ նա մէկ կողմից նրանց հայհոյում էր և միւս կողմից դարձեալ աղաչում էր ազատուիլ.

Յիշեալ գերեվարները լինում են քսան հոգի Մաղանդարանցիներ, որոնք ընկերացած էին, որ միասին թալանեն կամ գերիներ վարեն, ժողովեն մէկտեղ ու յետոյ բաժին բաժին անեն. Ուրա Թիֆլիսից դուրս գալու օրն ունենում են քանի և ինը գերիներ, այսինքն, չորս Նորահարսներ, եօթն օրիորդներ և տասն և ութ մանուկներ, բայց առաջ մնական աւարներից. նրանց մինչև Գանձակ ժամանելը՝ չորս հարսներն ու

մի քանի մանուկներ ազատում են իրանց ազգականներից։ Աբրահամը պատմում էր թէ՝ մէկ գերին 26 մինալիուներից (գրեթէ 26 ռուբլիից) մինչև քառասուն մինալիուն սատանայով ազատում էին. բայց նորահարսները տասը թուսանից (100 ռուբլից) պակաս չէին վաճառում. եթէ գնողը պատրաստ դրամ չէր ունենում,—սուր, հրացան, սարեանակ, ձի և ջորի ևս գնահատում էին և սատանում։ Գերիների աչքերը չէին համարձակվում երես առ երես գերեվարների հետ առնուլ անել. ուստի և նրանք ուղարկում էին իրանց ծանօթ Ղազախեցի, Բոչալուեցի կամ Շամշադինեցի սիմնի թուրքեր։

Շատ թիֆլիսից վերադառնում է Գանձակի վրայով, իսկ այս մեր փոքրիկ կարավանը հետևում է նրան մինչև Գանձակ. այնտեղից ոմանք ճանապարհը ծռում են Ղարաբաղի վրայովը դէպի Թավրիզ։ Աբրահամն ասում էր թէ՝ «Ղարաբաղի հողումը յանկարծ մէկ օր գերեվարներից եօթը հոգի անհետացան, և երեք օրից յետոյ վերադարձան երեք հայ երեխայ գերիներով ու խառնեցին նրանց էլ մեզ հետ։ Այնուհետև անասուածները անց կացրին մեզ խիտ անտառների բարձրաբերձ լեռների մէջով. ճանապարհները քարքարոտ և փշալից էին, քաղցած, ծարաւ, յոգնած, ծիրատ, սանամանները մաշած, պատռատած. վանորայ մեր ոտները կոչտացած, կոտրատած և վիրաւորուած, ցնցոտի էին եղած և մեր հագուստները. չատ անգամ եթէ մէկը մեզանից փոքր ինչ յետ էր մընում կարավանից, մտրակով և հրացանի կոթով ստիպում էին արագաքայլ լինել. այս անօրէններն այսպիսի թշուառութեամբ հասցրին մեզ Թավրիզ, ուր բաժին բաժին արին, և իւրաքանչիւրն իւր բաժինը տարաւ ուր և կամեցաւ։ Դինսն մէկ քանի գերիներով բաժին ընկաւ մէկ Մահամմէդ-բէգ անունով անզգամ և խիստ մարդի և իւր եղբօրներին։ Նա բաժին ընկաց կրօնամոլ, մեծատ մէկին Սաղդ-բէգին. իսկ Իւսուֆ-Աղան, Նաջաֆ Իւզբաշիին, որ ամուսնացած էր թէ՝հրան. ուստի և տանելու էր Իւսուֆը մեզ գերուհիներն ու գերիները թէՀրան, իսկ մեզ վարեցին Մաղանդարան։ Այս գերեվարներից առելի մարդասէրը Իւսուֆի տէրն էր երեսուն, վասն զի ճանապարհներին կը տեսնէինք, նա միայն իւր ձիու գաւակի վերայ հեծած կը նստացնէր այն երեխաները, որոնք պարտասած, յոգնած և անկարող կը լինէին քայլել։ Այս սարսաւոյ ձմեռը սատկի ցուրտ էր, վանորայ և պահեցին մեզ Թավրիզ երեք ամիս, երբ և ոչ իմ տէրը, և ոչ Դինսոյինը թոյլ չէին տալիս մեզ դուրս գալ տանից։ բայց Իւզբաշին կը բերէր Իւսուֆը չարաթը մէկ կամ երկու անգամ մեր տունը կամ Դինսոյի տը-

բոջ տունը, մեզ հետ տեսակցութիւն համար։ Ո՛ղբան ժամանակ ինձ ներքինացրած չէին, թոյլ չէին տալիս քրոջս աղջիկ Նինոյի հետ տեսնուիմ, բայց երբ ներքինացրին, այնուհետև ներում էին երբեմն երբեմն նրան տեսնել։ Իւզբաշին շատ էր մեղադրում Աղդ-բէգը ինձ ներքինացնելու համար, ասելով թէ՝ Աբրահամը եթէ ներքինացրած չը լինէր, կամուսնանար և մէկ քանի զաւակներ կունենար մուսուլմանի հաւատով, որովհետև Աստուծոյ և նրա մարգարէի անունը փառաբանելով մարգիր, Աղդ-բէգ, քեզ կը լինէր։ Դու մէկ մարդ չնահատակեցիր։ Աղդ-բէգ, այլ այդ գործողութեամբ հարիւրաւոր մարդ սպանեցիր։

Այդ ժամանակ Ասլան-խան անունով մէկը իւր կողմից բարեկամներից նամակներ և դրամներ է ստանում թէ՝ լսեցինք թաւրիզ շատ գերիներ են բերած և արժան գներով վաճառում են. ուստի գնէ մեզ համար մէկ քանիսը և գալու ժամանակ հետդ բեր։ Նա էլ տասնեմէկ գերուհիներ և գերիներ էր գնել, ուզում էր տանել։ բայց այդ գերիները չիմանալով թուրքերէն, մեծ դժուարութիւն էր կրում, վանտորդ և որոնում էր մէկ գերի երեխայ գտնել, գնել, որ փոքր ի շատէ թուրքերէն խօսում լինէր, և ինչպէս թարգման, դոցա հետ տանէր։ Հարց ու փորձ անելով, իմացել է, որ Իւզբաշին մէկ թուրքերէն խօսեցող Իւսուֆ անունով գերի ունէր, գնացել էր նրա մօտ, սակարկութիւն արել և 25 թումանով գնել էր։ Պատմում էր Աբրահամը, թէ՝ Իւսուֆը ճանապարհորդելու օրը, ինձ հետ միասին գնացինք Նինոյի, այն մէրդ (գիւղաքաղաքի) Նինոյի հետ մեծ բարև անելոյ, երբ և մէկ անտանելի, անասելի տխուր տեսարան եղաւ. մէկ ժամ էր մէկզմէկ գրկած, լալիս էին, Նինոն, այն սուրբ Նինոն, չէր ուզում եղբօրիցը զատուիլ, անջատուիլ, հեռանալ. թէպ նեղութիւնով կարողացայ բաժանել նրան եղբօրիցը. չեմ կարող իմ սիրտ ցեղուովս, պատմել։ Այս միայն ասեմ, որ համարեա թէ՝ վերջին զատաստանի օրն էր։ Ինքաւ դառն արտասուքով լալը։

Ասլան-խանը ճանապարհին տեսնելով Իւսուֆի (Սօսնի) աչքարացութիւնը՝ իւր որդւոց հետ ուզարկում է դպրոց որ կարդալ—գրել սովրել, բայց նա այնտեղ ուսելի յառաջադիմութիւն չէ ունենում, քանզի նրան մօտիկ ճանաչողներն ասում էին, որ նա հազիւ թէ կարողանում էր վարժ կարդալ նամակներ, բայց գրել—ոչ երբէք։

Յետոյ Ասլան-խանը ստանում է Ատրպատականում մէկ պաշտօն։ Թաւրիզ գնալիս, հետը տանում է մէկ գերուհի և Իւսուֆը, և ընծայում է թագաժառանգ Աբբաս-Միրզային, որ և հրամայում է գրեն Իւսուֆը կուլամների, այսինքն անձնա-

պահ ձիաւորների մէջ, որի առնիկը լինում է տարին քսան թուման. վասնզորդ նա շատ յեսոյ յանախ պարծենում է լինում թէ՝ ես սկսել եմ ծառայութիւնս քսան թուումանից և հասել եմ այս աստիճանին իմ մտերմութեամբն ու քաջութեամբն։

Բիչ ժամանակէն Աբբաս-Միրզայի հրամանով Իւսուֆը գնում է Քիւրդստան մէկ երկու վէներ քննելու և ուսումնարելու, Այդ վէներից ստանում է նա ըստ սովորութեան յիսուն թուման տասանորդ, որը չկորուսանելոյ կամ ուսումնարների ձեռք չձգելոյ նպատակաւ՝ մէկ հաւատարիմ հայ վաճառականի է յանձնում. վասն զի բնաւին հաւատարմութիւն չէ ունենում պարսկի վերայ։ Այն հայ վաճառականը Չիմ Զուզայեցի Թոջայ-Շերմազան անունով հայրս էր, որ կպատմէր թէ՝ երբ նայեցի Իւսուֆի դէմքին ու նրա զինուորական հագուստին՝ վախեցայ և մտածեցի, որ զինուորական մարդու հետ գործ բռնելն այն ժամանակին շատ վտանգաւոր էր. ուստի, ի սկզբան մտքիցի ասելով թէ դրամական ուսանը դժուար է ինձ պահելը. բայց երբ նա շատ անգամ կրկնեց իւր խնդիրքը, մանաւանդ վերջը հայերէն լեզուով, որով խնացուց թէ նա թիֆլիսից բերուած գերի է, բաղկալ Դէլօյենց Թօմի որդին (որ ինձ ծանօթ էր). ուստի և ես համաձայնեցայ ու քսանը նրա կնքովը կնքած ստացայ և գրի արկղումս։ Մէկ քանի ամսից յետոյ նա կրկին եկաւ և 30 թուման դրամ ևս բերաւ ուրիշ քսակաւոր դրած և կնքուած ու կամեցաւ ուանդել ինձ։ Այս մտածեցի՝ մտածեցի, և ապա առաջարկեցի նրան թէ՝ վարձմանդաս ինձ տանջում է, որ քո դրամը պէտք է մնայ արկղիս մէջ մնած, մինչդեռ նա կարող էր ինչ մէկ արդիւնք բերել, ուրեմն լաւ չէ արդեօք, այս երկու գումարդ միացնենք, ես վեր առնեմ ձեռս առեւորական գործերիս մէջ, և տամ քեզ մուրհակ տասնին մէկ տոկոսքով, մէկ տարի ժամանակով, և եթէ նախ քան այդ ժամանակն քեզ փոյթ հարկաւորուի, բարեկամ տոկոսքն իւր հաշուով արտասանելից յետոյ, քո մայր գումարն իւր անցկացածովն կարողանաս ստանալ։ Իւսուֆն ուրախութեամբ ընդունեց իմ առաջարկութիւնս, բայց քսակներդ՝ քաջին և անխարդախ դրամներ լինելոյն վերահասու եղանք, ստացայ, և 88 թուման մէկ տարի ժամանակաւ մուրհակը տուին Ա.նուհետև, կամենայնէր հայրս՝ թէ երբ և որքան դրամ նայ վատակէր, իսկոյն կրեր էր ինձ կայանձնէր, թէ ես թաւրիզ չէ՝ լինէի, գործակատարներիս կայանձնէր նոցանից ձեռագիրներ կառնէր, և վերադառնալիս՝ նոցա ձեռագիրները կուանդէր ինձ և տեղը մուրհակ կառնէր։ Այդ մեր ծանօթութիւնը

բարեկամութեան փոխարկուեցաւ և մինչև այն աստիճանի հասաւ, որ երբ ես Թաւրիզ չլինի, նրա ընտանիքը որ և իցէ կարեւորութեան վերաբերեալ առևտրական գործեր ունենային, ուղղակի ինձ կամ իմ գործակատարներին կդիմէին»։

Երբ այս տողերը գրողս առաջին անգամ գնացի Թաւրիզ (մինչ Խոսրով-խանը Խորասան էր) տասն թէ քսան օրից յետոյ մէկ պատուաւոր մարդ՝ քանի մի ծառաներով եկաւ քովս, սկսեց մանրամասնաբար հարցնել իմ կամ հօրս անունը, հօրս կենդանի լինելը, բացակայութեանս միջոցը և այլն, և այլն. և վերադարձաւ գնաց։ Ժամաչափ անցաւ թէ չէ, և ահա նոյն մարդը վերադարձաւ մէկ ծառայի գլխին դրած մեծ ափսէով (խօնչայ) թէյ, շաքար, վանիլ շաքար և քաղցրաւենիք, ու իմ գալը շնորհաւորելով, Ամիր-Թաֆխանի Խոսրով-խանի կինը յուզարկեց, ասաց, և խնդրեց, որ վաղը այս ինչ ժամին գնամ նրանց տունը։ Ի հարկէ այդ բանները պատմեց ինձ տիկնոջ ամուսնի, այսինքն Խոսրով-խանի ինչ սերտ բարեկամութիւն ունենալն իմ հօր հետ։ Հետևեալ օրը գնացի նրանց տունը, տիկինը ծածկոցով եկաւ դրան քամակին կանգնեց, երկարօրէն իմ, հօրս և բոլոր մեր ընտանեաց առողջութիւնը հարցնելէն յետոյ՝ առաջարկեց չմոռանամ նոցա, և եթէ գործ ինչ կամ օր և իցէ վէճ մուսուլմանների հետ պատահի դիմեմ նրան. նա կարող է օգնել ինձ իւր սատարգրեալների և ծառաների ձեռքով և այլն, և այլն. և թէ մինչև անգամ նա կարող է հոգևոր և աշխարհական դատաւորների և նոյն իսկ կուսակալ շահզադաների մօտ իւր հզօր միջնորդութիւնը գործ դնել։ Ի հարկէ ես նրանցից օչխար այդպիսի ակնկալութիւն չէի ունենար, քանզի Թուսաց դեսպանն ու հիւպատոսը այնտեղ էին, որոնք մեր գանգատներին վերահասու էին լինում. այսու ամենայնիւ այս բարեսիրտ տիկինը ոչ միայն անընդհատ մարդիկներ կը զրկէր առողջութիւնս իմանալու, այլև յաճախ կառաքէր ինձ համար ընթրիք, կամ թարմ մրգեղէններ՝ իւրեանց այգիներից ստացեալ. նոյնպէս մածուն, սեր, կարագ, որսեղէն և այլն, և այլն, իւրեանց դեղերից ստացածներէն, և երբեմն երբեմն էլ կը հրաւիրէր ընթրելու կամ ճաշելու իւրեանց տունը, երբ հիւրեր ունենար։

Վերադառնանք դէպի Խոսրով-խանի կենսագրութիւնը։

Անկասկածելի է, որ ներկայ դարի սկզբից անընդհատ շարունակվում էր Պարսից և Թուսաց մէջ պատերազմներ, որի մասին երբ Աբբաս-Միրզան գալու լինէր Երևան, հետը կը լինէր և Իւրաքանչիւրդ, որ նոր էր ստացել այս աստիճանը։ Այդ արշաւանքների միջոցում, երբ զորքը որ և իցէ տեղ

բանական լինէր, պարապ ժամանակներդ պատերազմական կրթութիւններ կանէր։ Իւսուֆն էլ երբեմն հետևակ զորքի, երբեմն թնդանօթաձիգներու հետ կը խառնուէր ու նոցա հետ կը կրթուէր։ Թագաժառանգը մէկ օր ասում է «Իւսուֆ խոջայի, եթէ դու այդքան եռանդ ու սէր ունես այդ կրթութիւնները սովորելու, ապէրի լաւ չէ արդեօք կուսամարիմից հրաժարուիս, և մտնես այդ հետևակ զորքերի մէկի գունդի մէջ»։ Դա պատասխանում է «Ողջ մնայ թագաժառանգը, ես ամենայն փորձում եմ կարողութիւնս, և երբ տեսնեմ, որ կարող եմ լաւ և կատարեալ թնդանօթաձիգ կամ հետևակ քաջ զորական լինել, այնուհետև կը թողնեմ այժմեան ծառայութիւնս»։

Մինչ այս մինչ այն, Աբբաս-Միրզան վերադառնում է Թաւրիզ, ուր և հաւաքում են եւրոպացի զինուորական մարդիկներ, որոց յանձնում է նա կրթելու համար երեսի և հին զերդաստաններից հարիւրաւոր բարձրաստաններ և առոյգ երիտասարդներ։ Իւսուֆ Խոջային էլ թողնելով իւր ձիաւոր ծառայութիւնը, Աբբաս-Միրզայի առանձին հրամանով (վասն զի հին և երեսի զերդաստանից չէր) մտնում է եւրոպացիների մօտ հետևակ զօրքի կրթութիւնը սովորելու։ Դա նայում է, որ հին սերունդներից իշած իւր ազգակցիցները՝ գեղեցկատարելապէս չսովորած կրթութիւնը, մինչդորեմամբ իրանց ազգականների, և կամ հէնց համբաւի համար, փութով նշանակվում են գնդապետ ու գնում են նռանգները զօրականներ ժողովել և զինքը և իւր մարդիկ։ վասնզի լաւ հասկանում է որ ինքը՝ որպէս գերի և չսերուած հին զերդաստանից, հետևակ զօրքի մէջ չէ կարող երեսի դեր խաղալ և յառաջադիմութիւն ունենալ։ ուստի թողնում է այդ կրթութիւնը, մտնում է թնդանօթաձիգ զօրքի մէջ, որը միայն պատերազմի ժամանակ ամենավտանգաւորն է, և բարեհաճմիտները երկիւղ կրելով առաւել ցանկանում են չսովորել այդ արհեստը։ Եւ այսպէս մեր Իւսուֆը թնդանօթաձիգ զօրքի արհեստը կատարելապէս սովորելից յետոյ՝ մտնում է Մակուեցի Իբրահիմբէկի գնդի մէջ, որպէս մարդիս նրա թնդանօթաձիգ զօրաքանդիմբին, և ստանում է փախ-սուլթանութեան պաշտօն [1]։

Այդ մինչդեռ Ռուսաց փախստական զօրականներից մէկ մասը Պարսկաստանի քաղաքներում և գիւղերում սփռուած

[1]) Դախ ֆրանսիացիներ՝ Ֆորգոն ժեներալի հետ, և ապա Ինգլիզ մարդիկներ են գալիս հաւանական է որ վերջինները արդարեւ են տալիս ֆրանսիացիները Պարսկաստանից։

աստանդական չրջում էին, և մէկ մասն էլ ծառայում էին Երևանի հետևակ զօրքերի գունդերի մէջ. վերջիններս չը հաչտուելով իրենց դասակից մուսուլմանների հետ, պատգամաւոր են ուղարկում Թավրիզ Աբբաս-Միրզայի մօտ, յայտնել իրենց անբաւականութիւնը, և միևնոյն ժամանակ խնդրում են, որ նա հրամայէ առանձին յատկապէս Թուսներից գունդ բաղկանայ և շտապէ նրանց մէկ գնդապետ։ Աբբաս-Միրզան ընդունում է նրանց խնդիրը, և յայտնում է թէ ես ինձ նչանակեցի ձեզ գնդապետ, որպէս զի ինչ զորձ ունենաք համարձակ լինձ դիմէք, միևնոյն ժամանակ հրամայում է բոլոր հանանգապետներին, որ ինչտեղ որ փախստական կամ գերի բերած ռուս զօրականներ լինին, ուղարկեն Թավրիզ, որ գրուին իրանց հայրենակիցների գունդում։ Վաչքարների պատմութիւնն ասում է, թէ նոցա թիւը հասնում էր մինչև երկու հազար հոգուց։ Այս գունդը նախ ենթի մուսուլմանի անուանեցին, որպէս թէ նոքա ամենեքեան նոր ընդունեցին մուսուլմանութիւնը, յետոյ անուանեցին թաազ ֆօչ, այսինքն ընտրեալ գունդ, որը նախատինք լինելով բուն մուսուլմանների համար, վերակոչեցին Բ ը հ ա դ ր ա ն գ ո ն դ, և Աբբաս-Միրզան ինքեան փոխանորդ գնդապետ կարգեց մէկ բանասաեղծի եղբօրորդի Միրզայ-Ահմէդ անունով մէկը, որ ոչ միայն բանաստեղծութեան շնորհ ունէր, ասում է նոյն պատմութիւնը, այլ և քաջ տեղեակ էր պարսիկ և արաբացի լեզուներին ??։ Միրզայ-Ահմէդը լսելով մեր իւսուֆ-բէգի համբաւը, խնդրում է Աբբաս-Միրզայից, որ հրամայէ նրան հրաժարական տան իւր գնդից, մանի նրանց մուսուլմանների մէջ, որ մարզէ նոցա գնդի թնդանօթաձիգ դասը։ Այստեղ նա ստանում է Սուլթանութեան, այսինքն Կապիտանութեան աստիճան։

Աբբաս-Միրզան 1225 Հիջրին (1810) հրամայում է յիշեալ Ահմէդին, որ իւր գունդովը գնայ յարձակում մէկ հաստատած Թուսաց խումբի վերայ, որ գտնվում էր Մեղրի գիւղում [1]), և նրան օգնականներ է տալիս Մակուեցի Իբրահիմ-բէգը Թաւրիզի գունդով և Հազար-Ջրիբցի Մէհմի-խանը Քաբզաղի հեծելազօրքով։ Այդ զօրախումբը Երասխ գետն անցնելով անակնկալ հեղեղի պէս ընկնում է Մեղրիի Թուսաց զօրքի վերայ, երկար պատերազմ մղելէն յետոյ կատարելապէս յաղթում է ռուսներին, որոյ մեծ մասը, իրը թէ կոտորելից յետոյ

[1]) Матеріалы для Новой исторіи Кавказа П. Г. Бижова, т. III, С.-Петербургъ, 1863, стр. 394.

մնացեալները գերի է վարում նրանց ընտանիքով (?), անասուններով և աղխով, և ապա վերիվայր տապալում զՄեղրին [1]։

Այնուհետև Աբբաս-Միրզան ուղարկում է Ասան-խանը Ղափանի հայ բնակիչների վերայ, որ և գաղթում է՝ տանում նրանց Խուդաֆերինի կամուրջովը անցկացնում, հասցնում Գարագաղ։ Միևնոյն ժամանակը Միրզայ-Ահմէդը լսում է, որ Կորիսի Հայերը պաշարեղէն են ղրկում Ռուսաց զօրքի համար, վասնորոյ ըստ հրամանի Աբբաս-Միրզայի, վեր է առնում Ջաֆէր-Կուլի-խանը Մուղադդէմի գունդով, հասնում է Կորիս և գաղթում է այնտեղի բնակիչները դարձեալ Գարագաղ։

Եւ այս արշաւանքների ճակատամարտների մէջ մեր Իսուֆ-բէգն իւր քաջութիւնների համար ստանում է Եաւարութեան, այսինքն մայեօրութեան աստիճանը, և այնուհետև պատմութեան էջերում նա հանդէս է դուրս գալիս իբր նշանաւոր անձն, ինչպէս շուտով կտեսնենք։

Աղալար-խան Էնիկոլոփեանցը պատմում էր թէ Իսուֆ-խանը շատ անահ և համարձակ տղամարդ էր, և շատ էլ կը սիրէր անցած գնացած պատերազմների մասին զրուցել, խօսել։ Մէկ անգամ խօսք բացուեց Մեղրիի, Կորիսի և Ղափանի յարձակմունքների վերայ, նա ասաց թէ «խան, հիմի դու մրտքումդ պարծենում կլինիս, որ մնացել ես հաստատ քրիստոնեայ հաւատիդ վերայ, բայց Իսուֆ-խանը թէ ընդդէմ իւր կամքի և կամ իւր յօժար կամքովն ընդունել է մուսուլմանութիւնը. բայց ասա, խան, տեսնեմ թէ մեզանից ո՞րն աւելի օգնել և պաշտպանել է հայերը, դո՛, թէ ես։ Մեղրիի, Կորիսի և Ղափանի հայերի գաղթականութեան ժամանակ դէպի Գարագաղ, հաւատացէք, որ հարիւրից աւելի հայ գերիներ եմ ազատել, չեմ թողել նրանց կայքը կողոպտեն, թալանեն, առևանգեն նրանց կնանիքը, հարսներն ու աղջիկները, ասացէք, պարոն հանդիսականներ (բոլորեքին անդ մուսուլմաններ էին) ինչպէս քրիստոնեաները, նոյնպէս և մուսուլմանները հաւատում են որ վերջին օրը Քրիստոս պիտի նստի գահոյի վերայ, և դատաստան կտրէ, ուրեմն միթէ Քրիստոս չպէտք է խնայէ, ներէ, թողութիւն չնորհէ իմ մեղքերին, նրա համար որ՝ ես նրա հիմարթներին (նրա հետևողներին) հարկաւոր եմ եղած այս աշխարհի վերայ»։ Ռուս Սամսոն-խանը

[1]) Այնուհետև Ռուսաց ընտանիք չկային, այլ Մեղրիի բնակիչները և նրանց ընտանիքները գիտենք, որ Հայեր էին և որոց մեծ մասը գերի վարեցան Գարագաղ։

մէկ անգամ զրոյց բացեց Իւսուֆ-խանի վերայ և պատմեց այս Ազալար-խանի ասածները, որ նա ես լսած է եղած Իւսուֆ-խանիցը։ Իւսուֆ-խանի այս զրոյցներից երևում է թէ մինչև որ ասուՀան նա ազատ, հանդարտակ խօսող է լինում այն մոլեկրօն պարսիկների մօտ, այն էլ այն ժամանակ։

Աբբաս-Միրզան վերոյշէալ յաղթութիւններից յետոյ տանել է տալիս այնտեղի զօրքերը, և սուսար բանակ կազմում, չուում, խաղում գնում Ասլանդուզ, որ այնտեղ եղած Ռուսաց զօրքի վերայ յարձակուի։ Ռուսները բանակուած են լինում Ասլանդուզ չՀասած երեք փարսախաչափ բացակայութեամբ ճանապարՀի վերայ՝ Ակնկ-Սուլթան ասած տեղում, ուր և սկսում է զուռ ճակատամարտ, և ի վերջոյ Պարսիկները յաղթող են Հանդիսանում, զոր կաՀայրերի պատմութիւնը Պարսից լեզուին յատկացեալ ճոխ և ճոռում ոճովը Հրաշալիներ է նկարագրում, ընծայելով իւրանց զօրքին անպատում քաջութիւն [1]։

Այս Իւսուֆ-խանի պալատի Հիւրանոցում, որմի վերայ սոսնձած էր երկու և կէս զրգռալի երկարութեամբ, և մէկ ու կէս զրկալի լայնութեամբ իւզով ներկած կտաւի վերայ զանազան գոյներով նկարուած Ակնկէր-Սուլթանի (Ասլանդուզի) բերդի վերայ եղած պատերազմի պատկերը, զոր նկարագրել էր իտալերէն գրուած իտալացի մուսուլմանացած Բացցէ անունով արքունական պատկերահանը։ Այս պատկերը ներկայացնում էր մէկ բերդ, չորս կողմը բուրգեր ու պատնէշներ կառուցած. բերդի պատնէշների և բուրգերի մէջ Ռուսաց զօրքեր, որոց ռումբերի բերանից խիտ-խիտ ծուխը բղխում էր և օդի մէջ ցնդվում։ Իսկ Պարսից ռումբերի զրնգակներն ուղիղ թշնամիների բուրգերի, պատնէշների և բերդի մէջն էին թափվում։ Այդ թնդանօթների վերայ, հրամանատարն էր մէկ Եւրոպացի զինուորականի չորեքով մարդ, և նրա գլխի վերևը պարկերէն գրուած «Բնգլիզ սնաբ»։ Այդ ինդիզը որպէս թէ հրամայում էր քսանչափ նկարուած թնդանօթների վերայ։ Արտաքոյ բերդի՝ Պարսից և Ռուսաց զօրքերը ցրուած՝ այստեղ՝ այնտեղ գունդ գունդ, խումբ խումբ սուրներով, սուրերով և նիզակներով մարտնչում էին, և տեղ-տեղ էլ իրար թէ զօտեմարտութեամբ էին կռվում, և ամենայն տեղ Պարսիկները անխնայ կոտորում էին զՌուսները, գետնատա-

[1] Ռուսաց պատմութիւնն ասում է իրանք են յաղթել, իսկ Պարսիքը — պարծենում է իրանց յաղթութեամբ, ուրեմն այս վեՀին լուծելը այն ժամանակի պատերազմակոՀին կպատկանի։

բած՝ տապաստ ընկածներից հազիւ թէ երեք-չորս պարսիկներ լինէին, ինչպէս նրանց հագուստներից երևում էին. իսկ մնացեալ սպանուածները Թուններ էին։ Այդ պատկերի վերայ Պարսից զօրավարների, զօրագլուխների, գնդապետների և փոխգնդապետների կամ ինչ ինչ քաջութիւնամբ պատերազմող ստորին աստիճանաւորների դէմքերի հաւասար կամ վերնը պարսկերէն գրուած էին նոցա իւրաքանչիւրի անունները։ Սոցա մէջն էր և մեր Իւսուֆի պատկերը նեկարագրուած և նրա անունը նրա գլխին հաւասար գրուած էր «Իւսուֆ-բէգ Եավ-վարդ» այն որ թեքերը բարձր քաշած տիլոր բազուկներով թուրը աջ ձեռնում, վահանը ձախ կռան վերայ ճակատամարտի մէջ խռնուած՝ անխնայաբար ջարդում էր Թուններ։ Այս պատկերի աջ կողմն ծայրում առանձին կերպով նկարագրուած էր պատերազմը ուսարտուած և կազմուած ատեան ու հանդէս, ուր Աբբաս-Միրզան բազմած էր իւր ականակաղ չքեղ բազկաթոռի վերայ, և նրա փառաւեղ տիտղոսն ևս գրուած ոսքերի տակին։ Նրա առջևը կանգնած էին զրահաւորված հետևակ և հեծեալ իւր զօրքերի բոլոր երևելիները, մինչև Եավ-վարդն ևս անգամ, նոյնպէս նրանց բոլորի անունները նրանց գլխիների մօտ գարձեալ գրուած։ Բազկաթոռի առջևը չարած էին գահիճներ, կուլամներ, քեսարներ, (նուագածուների դասը) և միւս նրա փառաւեղ ատենին վերաբերեալ պարագայքն՝ սրով և բրով։ Այս աջ և ձախակողմեայ բազմաթիւ կերպրանում, Աբբաս-Միրզի առաջը 720 զինաթափ գերի ընկած Թուններ (այս թիւն էլ գրուած էր) մինչև գոտիները կռացած՝ խոնարհած գլուխ էին տալիս նրան և ինդրում որ խնայէ նոցա և կոտրել չտայ, քանզի պատրաստ են ընդունել մուսուլմանութիւնը (այս ևս երկու չարք պարկերէն գրուած էր)։ Այդ զինուորականների չարքումն գրուած էին երկու նկարագրած ռուսներից խլուած թնդանօթներ և երկու սպիտակ մեծ և փոքր դրօշակներ [1]։

Կաջարների պատմութիւնը ասում է թէ՝ Աբբաս-Միրզան խնայեց գերիներին, քանզի ընդունեցին մուսուլմանութիւն, վանորայ և առաջեց նրանց թէչիրան՝ հանդերձ խլած թընդանօթներովն ու դրօշակներովը Ֆաթ-Ալի-շահին ընծայ, որից պարգև ստացաւ երկու հարիւր հազար թուման։

---

[1] Մինեանդ պատկերի նմանութեամբ ուրիշ տեղ ևս տեսայ, ՄԿԸ Միրզայ Հասան-Ալի խան Մուանդ-բարիի տան ոսքի վերայ, որի հայրը ներկայ Միրզայ Հասան-Ալի խան Մուանդ-բարիի տան ոսքի վերայ, նկարագրեալ էր տուել։ Իսկ միւսը Մարագեի ջահանդուլով այդ պատերազմն, նկարագրեալ էր տուել։ Իսկ միւսը Մարագեի ջահանդուլով։ Վեր-Կուլի խանի տան ոսքի վերայ կայցուած։—Ազգային նմանութիւն։

1231 Հիջրին (1813) կաջարների պատմութեան էջերում իւսուֆը հանդէս է գալիս խանութեան տիտղոսով, և փախստական առաջների Բըհադրան ասած գնդի վերայ գնդապետ, այսինքն Աբրէնդ։ Այդ թուականին Սաֆուլ-Բուլաղի Մէքրի և Բաղլաս քիւրդերը ապստամբվում են, վասնորոյ Աբբաս-Միրզայի հրամանով բանակ է կազմվում, և կաջար Ամիր-խանը, Իւսուֆ-խանը, Իբրահիմ-խանն ու Մարաղեցի Ջանֆէր-կուլի-խանը իւրեանց գունդերով յարձակվում են ապըստամբների վերայ, որոնցից շատ մարդ են ջարդում և գերիներ վարում ու հնազանդացնում։ Այդ միջոցում Իւսուֆ-խանը թէև երիտասարդ, բայց այնքան առաջադէմ է լինում, որ վրաց արքայորդի Աղեքսանդրը Դաղստանից նորա վերայ նամակ է գրում և խնդրում, որ բարեխօս և միջնորդ լինի իւր գործերի մասին Աբբաս-Միրզայի մօտ [1]։

1236 Հիջրին (1820—1821) պարսիկների և օսմանցիների մէջ ծագում է պատերազմ։ Աբբաս-Միրզան գարնանը Խոյ քաղաքի վրայովն արշավում է թէշամիների վերայ, պաշարում է Պայազիդը, և նրա մէջի բերդապահ զօրքը Բաղլուլ-փաշայի եղբայր Իբրայիմ-փաշայի հետ անձնատուր են լինում։ Աբբաս Միրզան այդտեղից անց է կենում Զըլդրանի վրայով գնում հասնում է Թօփրակ-Ղալէ (Աշտկերտ, վանարշակերտ), ուստի մեծ բարձրութիւն Հայոց գերի է վարում։ Իրըրումի Սարէ-աքէրը լսելով Իբրահիմ-փաշայի անձնատուր լինելը, կամանտորում է նրա երէց եղբայր Բաղլուլ-փաշան, և կապած կաչկանդած ուղարկում է Աղսարայի ասած բերդը։ Աբբաս-Միրզան լսելով այս լուրը, ուղարկում է Դրմբուլի Ամիր-Ասլան-խանը, և Իւսուֆ-խանը, որ պաշարեն Աղսարայի բերդը ու տիրելով ազատեն Բաղլուլը։ Ամիր-Ասլան և Իւսուֆ խանները մէկ հնարքով փախցնում են Բաղլուլը. առաքում բուն բանակը, և յետոյ յարձակվում բերդի վերայ, գնդակոծում են և վերի վայր տապալում զայն։ Այստեղ Իւսուֆ-խանը թոյլ չէ տալիս զօրքին գերիներ վարել, ասելով թէ այդ բնակիչների գործնական մարդիկը Հայեր են, եթէ նոցանից գերի վարենք, միւս Հայերը անպտտնում իւրեանց տեղը տունը կը թողնեն, կը դաղթեն այնպիսի տեղեր, ուր մենք չենք կարող յարձակուել և որ առաւել վնասակարն է՝ մեր զօրքը կը մնայ անպաշար, ուրեմն աւելի լաւ է նրանց ձեռնամուխ չը լինինք, որպէս զի մեզանից երկիւղ չկրեն ու մեզ ամենայն բանով օգնեն։ Այսպէս էլ լինում է, վասնորոյ և

[1]) Акт. собр. Кавказ Арх. Комм. т. VI, ч. II, стр. 296.

Արբաս-Միրզան հրամարակով շնորհակալ է լինում խուսափ-խանի կարծիքի մասին, և հրամայում է սատկութեամբ արդիլին գերեվարութիւնը։

Երեսի Զէյնէլ-օղլի Հասան-փաշան ատուար բանակով գալիս է օգնել Ազսարայ բերդին, բայց ճանապարհին լսելով նրա կործանումը, վերադառնում մտնում է Ալէնկ ասացեալ բերդի մէջ ամրանում։ Ամիր-Ազան և խուսափ-խաները արշաւում են նրա վերայ։ Այստեղ երկու կողմից յամառուած գոռ մարտ է մղվում, ի վերջոյ Զէյնէլ-օղլին պարտաւորվում է գիշերով բերդը դատարկել զուրս գալ խուսափիլ գնալ Երզրում, ուստի պարսիկներն այս կողմերն ասպատակելով չատ ընտանի անասուններ, բայց առանց մարդիկ գերի վարելու, և մեծ կողոպուտով վերադառնում են, գնում միանում բուն բանակի հետ։

Օսմանցիների գլխաւոր զօրավարը լսելով այս ամենը, խուսափում գնում է Կարա-Հիսար, անտի Մաղէն և ապա Նարիման, վանորոյ և Արբաս-Միրզան առաքում է նրա վերայ Մահամմէդ-Իրայ և Հասան խաներ, իսկ ինքը բուն բանակի գլխին կանգնած՝ խաղում գնում է տիրում Մալազկերտին և Խամուբին, այստեղից չուում է Մուշ, որ էր Հայաստանի վարի (Նահանգապետի) բնակութեան տեղը, ասում է Կաչարների պատմութիւնը։ Միւշիր-Ալիմ-փաշան այստեղ սաստիկ մարտ է մղում ընդդէմ պարսիկներին, ի վերջոյ անձնատուր է լինում, յանձնելով թշնամիներին 17 մեղանչներ և չատ հրազէններ, վանորոյ և Արբաս-Միրզան նրան վերատին նշանակում է իւր կողմից վարի Հայաստանի։ տիտղոսով, և այնուհետև յարձակվում է Արճէշի վերայ։ Կաչարների պատմութիւնը ասում է թէ՝ մեր զօրքը անբաւ գերիներ, անասուններ և կողոպուտներ բերին, բայց նիրատ գետից անցկենալու ժամանակ, նրանց մեծ մասը գետամոյն եղան։

Լինիկոլոփեանց Ազալար-խանն ասում էր թէ՝ փուսափ-խանը գերեվարութեան դառնութիւնը ճաչակած լինելով, ես ու իմ Աստուածը չատ հակառակեց, և մէկ քանի անգամ էլ ատենումն խնդրեց Արբաս-Միրզայից, որ այն գերեվարութիւնը արգիլէ. ուստի և բոլոր գինուորականութիւնը սաստիկ անբաւական էր նրանից։ Աւելացնում էր նա թէ՝ խեղճ Արբաս-Միրզան էլ, երեսում էր, շնորհակալ չէր գերեվարութիւնից, բայց ինչ անես որ չէր կարողանում նա զսպել իւր զօրքը, անպատճառ վախում էր և ապստամբութիւնից, քանզի վեց ամիս էր, որ զօրքին ոչ ռոճիկ էր վճարել և ոչ պարար էր տուել։

Ինչ ինչ անցք, որոնք չեն վերաբերում ներկայ անձնաւորութեան, որի վերայ խօսում ենք, երկարօրէն պատմելոյս պատճառն այն է, որ նախ՝ բան ասուեցան Կաղարեցի պատմութեան և կամ մարտակիցներու, Իւսուֆ-խանը այդ պատերազմի սկզբից մինչև վերջը՝ ներկայ է եղած ճակատամարտներին, և միշտ իւր քաջասրտութեամբը՝ յայտնի և յառաջադէմ. երկրորդ՝ որովհետև դեռ ևս Հայերս չունինք ներկայ դարի համար ազգային պատմութիւն, և անշուշտ ժամանակաւ պիտի յերիւրուի և բաղկանայ, ուստի և ես ասա յիշելով, կամեցայ ծանօթացնել այն ապագայ Հայոց պատմութիւն գրող հեղինակին, որ հետագրքիր լինի ուսումնասիրել Պարսից պատմութիւնները, որոնց մէջ առատօրէն նիւթեր կարող է հայթայթել։ Ուրեմն մէկ քանի խօսք էլ աւելացնենք։

Թէև այդ պատերազմի ժամանակը գրէչս երեխայ էի, բայց լաւ կը յիշեմ՝ որ Պարսկաստանի Հայերից ես զօրաժողով եղև և նոցանից գունդեր կազմից թ ֆ ա ն գ չ ի անունով։ Ուրեմն պատերազմի մէջոցին և վերջանալն յետոյ (որոնց մէջ տասնի չափ Հին-Ջուղայեցիներ կային) վերադառնալիս իւրաքանչիւրը մէկ մէկ, երկու երկու և ոմանք էլ երեք գերի երեխաներ կամ գերուհիներ էին բերած, զորս պարսիկներից ՀԷՆ բանով կամ գնած էին, կամ անվարձ առած և կամ խլած էին, պատրուակ բերելով թէ՝ այն գերիները ազգական են ինքեանց, ոմն թէ կնքած է (քիրուայ) կամ կնքաշօր որդին է, կամ նրա զուսարն է և այլն, և այլն։ Պատերազմը վերջանալէն յետոյ Ջաճկաստանից այն գերիների կամ գերուհիների տէրերը որոնելով, որոնելով գալիս գտնում էին իւրեանց գերիները և վերադարձնում էր այդ գերիների և գերուհիների հետ, որպէս նրանց հասակակից՝ կը խաղայի Հին-Ջուղայ կամ Նախիջևան։ Այդ թ ֆ ա ն գ չ ի Հայերը պատմում էին թէ՝ մէկ Հայոց վարդապետ, ինչպէս յիշում եմ, Յովհաննէս անունով, որ և շատ եւրոպացւոց լեզուներ գիտէր, և իրը Պատմչոյի էր, եկաւ Աբբաս-Միրզայի մօտ, խնդրեց, և 187 գերիներ ու գերուհիներ անդրամ ազատեց, տարաւ աւանդել իւրաքանչիւրն իր տէրոջը։

Բարեմիտ ընթերցողները կներեն ինձ այստեղ օրինակել Եփրեմ կաթողիկոսի մէկ կոնդակի պատճէնը, որ նա գրել է Հնդկաստանի հայ ժողովրդեան, վերաբերեալ այդ տեսարի անցքերին։

«Յիսուսի Քրիստոսի ծառայ . . . ողջոյն և օրհնութիւն նուիրեալք սիրելեաւ հարազատի մերում յարգոյ պարոն Մեքքում Մանուկեան, որում և ծանուցանեմք, զի քաջ յայտնի է

մեզ թէ, ամենայն ազգն Հայոց ընդ ամենայն տեղիս, ըստ օրում որդիք հարազատ սրբոյ Լուսաւորչին և Տայր-Աթոռոյ նորա՝ ցանկան հանապազ լսել զոգեշահութիւնէ սրբոյ Աթոռոյն և Հայաստան ազգի և աշխարհի և հայրենեաց իւրեանց. առ որ ուրեմն, զի մի ի նմին հայրենասիրութեան նեղութիւն իմն յանելոյի մտաց ձերոց տարակուսութիւնն ընդ երկար անձանձրութեամբ վասն սուգութեան լսելի եղելոյն յաջ և յահեակ, ասասրժիմ մաքուր վշտակրութեամբ յայտնել համառօտիւ, զի ի ամին մէջոցի քանի ամաց՝ ընդ ամենայն սահմանս տէրութեան Օսմանցւոց, ուր զանազան բազմութիւնք համարէն ազգի մերում, օր ըստ օրէ առաւելան ազգի ազգի առատապանք և անձկութիւնք՝ երբեմն առանձնակոնք միայն մերազանց, և երբեմն ընդ այլոց քրիստոնէից ազգաց, որով և սուրբ Աթոռն և մեք ամենայն հոգեորականք զոյով պատկանեալք նոցին, նովին կրեալք տառապանաց և անձկութեանց տաղնապաւք ընդ սիրելազոյն հասարակութեան որոյոց հարազատից մօրն լուսոյ սրբոյ Աթոռոյն մերում և նօսին մերում հովուապետութեան. այլ մեզ հոգաբարձն էր յոյսն ի նմին տապակրութեան մերում թէ թերևս ողորմութեամբ խնամակալին հանրից այցելութիւն երագել ունիցի մեզ և նոցա. ասն վասն հաշակեցեալ տարաբախտութեանց փոխանակ կարծելոյ ժամանակի տառապանացն, հետզհետէ բազմացան ծանրացան նորանոր սասանութիւնք և տագնապք անդրեալք յերեսաց սրաձուծութեանց Օսմանցւոց ընդ ցունաց հասարակութեան և պատերազմութեանց Պարսից ընդ Օսմանցւոց, որով մեծ բազմութիւնք ամենայն ազգի հայոց ամ տարեւոր ժամանակաք մարին և հալին ընդ ամենայն տարածութիւնն լայնատոց իշխանութեան Յարակիմասաց՝ իսկ յոչնակաւք Արարատեան հայրենի աշխարհի Հայոց, որ ի մասին նոցա՝ Կարս, Պայազիտ, Վան, Մուշ, Վաղարշակերտ, Բասենք և այլ գաւառք նոցին պատկանեալք հանդերձ ամենայն բնակչօք նոցին՝ որոց իրրև թէ բնաբնի Հայկազնեայք, կոխան ոտից զօրաց եղեալ, բնակութիւն նոցին, և եղեն ասերակք, և ինքեանք առ հասարակ.... որով սուրբ Աթոռն և մեք ամենայն հոգեորականքս մերովք զրկեալ և նուազեալ յամենայն հարկաւորացն մարմնական կառուսարութեանց Աթոռոյն՝ այնքան ճնշեալ գտաք ի տարաբախտ ներգործութեանց բազմամեայ ժամանակաց, մինչ ոչ ևս ունել մեզ յոյս առանց ձեռնտուութեանց կարողագունից գտանել զայցելութիւն վասն ազատութեանց ի ծանրատոկոսի մեծագումար պարտաւորութեանց տեղացելոց, առ որ և զբաւականագիր ժամանգաւորի տէրութեան Պարսից ընկալեալ վասն

ընդարձակութեանց ճանապարհորդութեան մերոյ՝ յամի 1821 յամսեանն Նոյեմբերի ուղեւորեալ ժամանեցաք ի սահմանս տէրութեան Ռուսաց՝ ի Շուշի քաղաք փայտակարանի կամ Ղարաբաղի [1]), և ըստ հարկին պահանջելոյ յառաջեալ անդուստ եկաք ի հռչակաւոր վանս Սուրբ Նշանի որ ի Հախպատ, ի սահմանի Լօռւոյ ընդ մէջ Տփխիսայ և սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, յամի 1822 յամսեանն Հոկտեմբերի, ուր կամ այժմ ընդ մեր սրբազնոց եղելոց ընդ մեզ արքեպիսկոպոսաց և վարդապետաց . . . յամի Ցեռան 1823 յամսեանն Մարտի 12 . . . . Վշտալի Եփրեմ։

Յայտնի է, որ 1822 թուականի գարնանը Պարսից և Օսմանցւոց պատերազմը կրկին բորբոքուեց. ուստի և Աբբաս-Միրզան չուեց գնաց բանակեցաւ Ա վ ա Ջ ը ղ ասած սահմանագլխում, ուր և իմացաւ որ Հաքբեարի քիւրդերը առաջնորդութեամբ Դասիր-խան-բէգի և Օսման-բէգի յանկարծօրէն յարձակվել են Սալմասի գիւղերի վերայ, ասարել և աւերել են, սրով և հրով դատել են բնակիչները՝ գերիներ են վարել և մատղիր են վերադառնալ վանս. ուստի հրամայում է կուլամ-խան (անձնապահ) Իւսուֆ-խանին, որ Բրնադրան և Ենգի-մուսուլման զօրախումբով չտակ տարդնապով փութայ, գնայ թոյլ չտայ նրանց՝ որ գարձումն վանս Իւսուֆ-խանը ժամանում է Սալմաստ, իմանում է որ քիւրդերն արդէն այն տեղից դուրս են գնացել իրանց կողոպտուածներով, վասնորոյ խումբը երեք բաժին է անում, որ երկուսը գնան այլեայլ կարգ ճանապարհներով, կիրճերը, ձորերը գրաւեն, թոյլ չտան քիւրդերին իրանց թալանովը անց կենալ. իսկ մնը հարիւր թէ երկու հարիւր Նոր-Մուսուլմաններով հասնում է թշնամիների քամակից, որոնք հազար հոգի են լինում. այնտեղ սաստիկ ճակատամարտ է մղում, այն ինչ և հասնում են իւրեանից առաջընթաց միւս զօրքն ևս։ Վայգարների պատմութիւնը չափազանց գովելով Իւսուֆ-խանի քաջասրտութիւնը աւելացնում է թէ՝ այնպէս ջնջեց, ջարդեց թշնամիները, որ նոցա առաջնորդ Օսման և Դասիր-խան-բէգերը թող-

[1]) Հանդուցեալ Եփրեմ կաթողիկոսն իջել էր Նախիջևան մեր խնամի Սարգիսեան Սարգիս ազգի տանը, որի երեց որդին՝ Ղազար ազգն՝ ամուսնացած էր իմ քրոջ հետ։ Մեր տանը իջած էր տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսը, որի առաջնորդութեամբ երկց եղբայրս Ղազարն, որ և Յովհաննես և գրիչս գնացինք կաթողիկոսի աջն հմայուելոյնք։ Սոցա ճանապարհորդելէն հարիւր թէ ՁԿուկէս ամիս անցած էր, որ հօրս առաջած Ղափանցի հայ Հիւսուրները եկել էին փախցնել մեր ընտանիքը և տանել Կորիս, ուր Ռուսաց զորքն էին։ Եւ արդէն ՁԿ ամիս առաջ Թիֆլիս էի ուղարկուած։

նելով բոլոր յափշտակած առարներն ու գերիները, հագիւ կարողացան ազատել իւրանց գլուխը և փախչիլ։ Այս ճակատամարտից յետոյ անմիջապէս Իւսուֆ-խանը արշաւում է Աշկեալան բերդի վերայ, երեք ժամ շարունակ ռմբակոծելով կործանում է նորա պարիսպները, զինու զօրութեամբ տիրում բերդին, կոտորում է նրա մէջ եղած զօրքը և կալանաւորում է բերդապահ և ապստամբ քիւրդ Իբրահիմ-խանը ու յանձնում հնձելազօրքի գլխաւոր Օթշեար Ասկար-խանին, որ տանէ հասցնէ Թաւրիզ։ Իսկ ինքն սկսում է ձերբակալել ապստամբ ցեղերի մեծամեծները, նրանց պատժել և երկիրը խաղաղացնել։ Ապստամբների գլխաւոր Մուստաֆայ-խանը, որ սերուած էր Բենի-Աբբաս ասացեալ նուիրական ցեղից, Իւսուֆ-խանի ահից ծպտեալ փախչում, գնում, ներկայանում է Աբբաս-Միրզային և նեղումն ինդրում։ Որանից յետոյ Իւսուֆ-խանը թողնելով Աշկեալանի մէջ երկու հարիւր զօրականներ, ինքը մնացեալ խումբի հետ գնում է միանում Աբբաս-Միրզայի բանակի հետ։

Երկար միջոց չէ անցնում՝ հաշտութիւնը կայանում է Պարսիկների և Օսմանցիների մէջ, և խաղաղութիւնը թագաւորում է։ Այդ ժամանակները փախստական ռուս Սամսոն Մականցով անուն, թէև սովորական զինուորական էր Ռուսաց զօրքի մէջ, բայց նրա երիտասարդ պարթև հասակը, գեղեցկակազմութիւնը, մեղմ ու հանդարտ բնաւորութիւնը, քաջասրտութիւնն ու այն ժամանակի պատերազմական մարդկին տեղեակ լինելը, տեսնում է զԻւսուֆ-խանը մէջտեղել Աբբաս-Միրզայի մօտ, որ հնարէ նրա մայեօրութեան, այսինքն եաւարութեան պաշտօնը իւր գնդի մէջ։ Բայց զինի փոքր մէջտեղ Սամսոնը մղեալ փառասիրութիւնից դրդում է իւր ազգակից փախստեայ ռուս զինուորականները բողոքել Աբբաս-Միրզային, որ Իւսուֆ-խանը չէ տեղեակ նրանց լեզուին, հայոյիչ բերան ունի, բարկացող է և այլն, և այլն։ Աբբաս-Միրզան կողմնակի կերպով իմանում է որ ռուս զօրականները չեն անբաւական իւրեանց գնդապետից, այլ այն ամենն բողոքը Սամսոնի դրդռելով է, վասնզորոյ ուշադրութիւն չէ դարձնում նոցա գանգատի վերայ, մինչև որ ժամանում է 1826 թիւը, երբ Պարսիկները առանց որ և իցէ հիմնաւոր պատճառի, առանց յայտարարութեան, առանց շրջաբերականի, յանկարծ արշաւեցին Ռուսաստանի սահմանագլուխների գեղերի բնակիչների վերայ, և սկսեցին գերիներ վարել, աւարել և աւերել նրանց։ Մինչդոյն ժամանակ Աբբաս-Միրզան հրամայում է Իւսուֆ-խանին, որ իւր Ենգի մաս-

սուլթան կամ Բրնդարան զունդոլը յարձակուի նոյնպէս Ռուսաց հպատակներու վերայ, ասպատակէ և գերիներ վարէ՝ որպէս այլք։ Այդ ժամանակը Սամսոն խանը բարեպատեհ պատճառ և միջոց ձեռք բերելով, դրդում է փախստեայ Ռուսները պատասխանել, որ նոքա մէկ անգամ արդէն երդուած են Ռուսաց կայսեր, ուրեմն նրա զօրքի վերայ անկարելի է ինքեանց արշաւել։ Իւսուֆ-խանի պատերազմական հոգին չէր կարող պատերազմի ձայն լսել և հանդարտ ու անտարբեր մնալ, վասնզորոյ ինքն առաջամատոյց է լինում և խնդրում Աբբաս-Միրզայից, որ իւր զնդապետութեան ատիճանը նորէ Սամսոնին, և զինքը նշանակէ զնդապետ այն թնդանօթաձիգ զօրքին, որի զնդապետը տասն օր առաջ մնալ էր։ Աբբաս-Միրզան գիտէր՝ որ Իւսուֆի մանագէտ ուսումն թնդանօթաձիգութեան արհեստն է, իսկոյն կատարում է նրա խնդիրը, նշանակելով նրան զնդապետ թնդանօթաձիգ զօրքին։

Ի զէպ է ասա ասել, որ այդ անցքից քսանեւմնդ տարի անցած, մինչդեռ Իւսուֆ-խանը մնում էր, Սամսոնխանը մէկ օր վերոյիշեալ անցքերը ինձ պատմելով կցկց թէ Իւսուֆ-խանը որքան և զայրացող էր, բայց վրէժխնդիր ու քինխնդիր չէր։ ասածիս ապացուցութեան համար պատմեմ, նա, Իւսուֆը լաւ գիտէր, որ ես էի զրգռողն ու զրպարտութիւններ գնողը, բայց այսու ամենայնիւ հանգուցեալն, ինքն ինձանից գաղտնի, առանձին խօսում է Աբբաս-Միրզայի հետ, առանց ինձ յայտնելոյ, իմ զնդապետութեան բաղանի (հրամանագիրը) գրել ու տրել է տալիս, և յետագայ առաւօտեան նա ժողովում է բոլոր փախստեայ ռուսները, և հրամայում է առնեղապրին կարդալ այդ բաղանի, և ինքն էլ յայտնում է թէ այսուհետեւ հրաժարուած է նրանց զնդապետութիւնից, և թագաժառանգն այդ պաշտօնը չնորհեց Սամսոնին, ուր և ես ներկայ էի, և հրամայեց չնորհաւորեն իմ նոր պաշտօնը, որպէս և ինքն չնորհաւորցուց։ Այն օրը Իւսուֆ-խանը երեսին հայկերոյթ տուեց բոլոր խումբին, հիւրընկալեց նրանց գինեով, օղիով, և ինքն որպէս սպասաւոր մատակարարում էր, որպէս զի ամենքեանն համահաւասար կերակրուին և ըմպեն։ Ճաշելէն յետոյ նա բոլորի հետ հալալ-համիչ եղաւ, նրանց յանձնեց ինձ՝ և ինձ յանձնեց նրանց, և խրատեց, յորդորեց որպէս զի այնուհետեւ սիրով և պատուով կառավարուին։ Հուսկ յետոյ, մնաք—բարեւ ասաց և հեռացաւ։ Հետեւեալ օրը ես ես ժողովեցի բոլոր սպաները, գնացինք միասին Իւսուֆ-խանի պալատը, նրան չնորհակալութիւն մատուցանելու համար, նա էլ բոլորիս առաջնորդեց ներկա-

յայտնեց Աբբաս-Միրզային։ Այնուհետև Իսուսֆ-խանը միշտ երբ իցէ, ինչ մեզ պատկանեալ իրողութիւն պատահէր՝ կոգնէր, կոչաչապանէր բարձր դրանը։ Աստուած ողորմի նրան, դարձեալ Աստուած ողորմի նրան, Աստուած և նա ողորմի։»

Խորազմի թագաւորը մեծ բանակով արշաւում է Խորասանի վերայ, ասպատակ է սփռում և շատ գերիներ վարում ու վերադառնում, Աբբաս-Միրզան Օսմանցուի և Թուսաց կողմից մնալով լինելով, 1245 Հիջրին, (1829—1830) Ատրպատականի քաջ զորքերից ընտրելով բանակ է կազմում, խաղում դէպի Խորասան։ Նա նախ գնում է Բիրման, ուր թողնելով իւր որդի պատանի Խոսրով-Միրզան ի ներքոյ հոգաբարձութեան Իսուսֆ-խան Ամիր-թօփխանէ ի (այս ասոյենները նոր է սատցել, որ կը նշանակէ, իշխան թնդանօթաձիգ զօրաց, անշուշտ Ատրպատականի զօրաց), և ինքն արշաւում է դէպի Նպատակն։ Ճանապարհին Աբբաս-Միրզան զգում է, որ այսպիսի արշաւանքի ժամանակ ամենահարմար է Իսուսֆ-խանի նման քաջ և իւր արհեստին տեղեակ անձնաւորութիւնը, ուստի սուրհանդակ է ուղարկում Թէհրան և հրամայում է որ Իսուսֆ-խանը վեր առնէ հետը Խոսրով-Միրզան և այնտեղ մնացած զօրքը ու չտալ տաղնապով գայ մնանայ իւր բանակի հետ, միևնոյն ժամանակ նա մէկ յարմար անձն ընտրէ, թողնէ իր տեղը հրամանատար Բիրմանին և Ղզվին։ Այդ լուրը երբ տարածվում է, Նէֆի և Աբդուլ-Բաղալս խաները իրանց ապստամբութեան գրօշակը բարձրացնում են, և շատ տեղեր ասպատակում, վանողոյ և Իսուսֆ-խանը պարտաւորվում է փութալ հաղորդել Աբբաս-Միրզային, որ և հրամայում է չուտով նա, Իսուսֆ-խանը, ուր և իցէ, ճանապարհից վերադառնայ Բիրման և յարձակուի ապստամբների վերայ, կալանաւորէ նրանց և պատժէ։ Իսուսֆ-խանը Բիրմանից երեք օրուայ ճանապարհ արդէն հեռացած է լինում, երբ այս հրամանը ստանում է, վանողոյ և վերադառնում է։ Հետը տանելով Շաղաղիի գունդը, և անակնկալ յարձակվում է Բաներ բերդի վերայ, ուր որջացած էր Նէֆի-խանը, և գնդակակոծելով տիրում է նրան ու վերիվայր կործանում, նոյնպէս և կալանաւորում է Նէֆի-խանը երկու որդիների հետ, և երկաթի շղթաներով կաշկանդած աքսորում է Արդաբիլ։ Այստեղից յարձակվում է Բէֆիկ բերդի վերայ և տիրում, ուր որջացած էր Աբդուլ-Բաղալս-խանը, և սա գիշերով դուրս է դալիս, փախչում, գնում Թարաս։ Այդ յաղթութիւնների լուրը դալիս, հասնում է չահին, երբոր Ասպահան էր։ ուստի և առաքում է Իսուսֆ-խանին Թանկագին խիլայ և ակնակալուն սուր։

Իւսուֆ-խանը մի զինի մոյ հրամանագիր է ստանում Աբբաս-Միրզայից, որ չտապէ գնայ, միանայ բոնս բանակի հետ. ուստի այս յաղթութիւններից յետոյ, վեր առնելով իւր խոսրով-Միրզան՝ Եղդի, Թէբասի և Թարշիզի վրայով գնում հասնում է Սուլթանապատ բերդը և պաշարում ըստ հրամանի Աբբաս-Միրզայի, քանզի Մահամմէդ-Թաղի-խան հրամանատարը Թարշիզի չէր առնում կատարել առաջնոյ հրամանները, և որպէս ապստամբ իւր եղբայր Զէֆէր-Կուլի-խանի հետ մտել էին այն բերդը, և երբեմն երբեմն էլ այնտեղից դուրս էին գալիս ապստամբութիւններ գործում. Թէբասի հրամանատարը, որ խոսրով-Միրզայի պատուի համար, եկած էր նրան ճանապարհ ձգելու, վերադարձաւ գնաց մտաւ բերդը, յորդորեց Մահամմէդ-Թաղի-խանը և դուրս բերեց, իսկ նրա եղբայրը յամառելով, չհամոզուելով, մնաց բերդումը, և երբեմն երբեմն էլ դուրս էր գալիս ու մեծ վնասներ տալիս պաշարողներին, վանտորոյ և Իւսուֆ-խանը անխնայաբար սկսեց և ոչնչացնել Պաշարեալները հոգիի ապաստան եղած, ի վերջոյ մոլլաներն ու բնակիչների երեսփիները նոյն իսկ Զէֆէր-Կուլի-խանի հետ իրանց թերը չլինելու և պատանք հագած դուրս եկին, աղաչեցին, աղերսեցին դադրացնել հրաձգութիւնը. Իւսուֆ-խանը զրկեց աղերսարկուները խոսրով-Միրզայի մօտ, որպէս կանուն էր իրանի, և նա ներեց նրանց. Մի ինոյն օրը այն բերդի պարիսպները և բուրգերը Իւսուֆ-խանը կործանել տուեց.

Այս լուրը հասնում է Թէհրան Նովրուզի օրը, այսինքն Պարսից տարեմտին, որ և անպատում ուրախութեան պատճառ է լինում. վանտորոյ և չարը հրավառանով հաստատում է Իւսուֆ-խանը՝ Ամիրը-Թ օ փ ի ա ն է բոլոր իրանի.

Իւսուֆ-խանի զօրախմբի բարեկարգութեան համար նրա մարտակիցները շատ գոհեանոնրով էին խօսում, ինչպէս նաև կաչարների պատմութիւնը, թէ «Ազուանսանի Թէյ-Մուրազ-շահի որդի Հաջի-Ֆիրուզն իւր հայրենիքից փախած, եկել էր ապաստան եղել Պարսկաստանին, որպէս զի վերադարձնեն նրան իւր հայրենական գահը. խոսրասն խօլերայ ցաւը սատկանալով նա եկած էր Թարշիզ, և պատահմամբ ճանապարհը Սուլթանապատ մօտ լինելով, գալիս է մէկ գիշեր խոսրով-Միրզայի զօրախմբի մէջ մնալու որպէս հիւր, և ապա շարունակել իւր ճանապարհը. Ֆիրուզի սպասաւորներից մէկը՝ գիշերը տարաժամ դուրս է գալիս ջուր բերելու համար, և գիշերապահ զօրականները բռնում են նրան. Սպասաւորը չկամենալով հնազանդել գիշերապահների կանոնին, զոռում գոչելով այնպիսի աղմուկ է հանում, որ ձայնը հասնում է Հաջի-Ֆիրուզ-

զին, և սա կարծելով թէ գիշերապահների այդպիսի հետամտութիւնը ոչ թէ զինուորականութեան ճշտութեամբ պահպանելոյ կանոններն են, այլ թէ վերաբերում է իւր անձնական անսպասելութեանը. ուստի և մերկացրած սուրը ձեռին գուրս է գալիս, որ ազատ իւր սպասաւորը։ Գիշերապահները մութը ժամանակ չճանաչելով զՀաջի-Ֆիրուզը՝ հրացանի գնդակով սպանում են նրան։ Այն ինչ ամենքեան համոզուած էին, որ Իւսուֆ-խանը Թոսրով-Միրզայի հիւրը պատուելու համար անչուչտ կպատժէ գիշերապահները, ընդ հակառակն նա զինուորական բարեկարգութեան կարգ և կանոնը ճշտութեամբ պահպանելոյ համար, գովում է նրանց։

Իւսուֆ-խանը այնուհետև ապստամբ կալանաւորները, այսինքն Մուստաֆա-կուլի, Մահամմէդ-Թաղի, Զաֆէր-կուլի խաներն ու միւսները շղթայակապ ուղարկում է Թոսրասան Աբբաս-Միրզայի քովը, և ինքն այն կողմերը բարեկարգելն յետոյ Թոսրով-Միրզայի հետ գնում մտանում է բուն բանակի հետ։

Մեր պատմութիւնը չընդհատելոյ համար, չուզեցինք յառաջ պատմել մէկ եղերերգական անցք, որ վերաբերում էր Իւսուֆ-խանին ու նրա քոյր Նինոյին։ Դա երբ սատնում է խանութեան տիտղոսը, հետամուտ է լինում որոնել և գտնել իւր քոյր Նինոն և իւր քեռի Աբրահամը. վանորոյ երկու անգամ մարդիկ է ուղարկում Մազանդարան, բայց երկուքն էլ վերադառնում են ապարդիւն։ Այժմ երեք-չորս օրվան մնացած Գիւրման, մէկ ծերացած գերի—Ներքինի՝ լսելով թէ Իւսուֆ-խանը վրաստանից գերի բերուածներից է, և հասել է այս բարձր աստիճանին, համարձակվում է գնում նրա մօտ ողորմութիւն խնդրելու։ Իւսուֆ-խանը նկատելով որ Ներքինին ոչ դէմքով և ոչ լեզուի արտաբերութիւնով չպիտի պարսիկ լինի, վանորոյ հետաքրքրութիւնից ստիպեալ՝ հարց ու փորձ է անում, յայտնվում է որ նա վրացի է, Մատիէ անունով, և զինքը գերի են բերած Նոյն իսկ Իւսուֆ-խանի հետ, և միասին էլ ուղևորուած են Թիֆլիսից մինչև Թավրիզ. ուր գերեվարներն իւրանց կողոպտուը բաժանելիս, վրացի Մատիէն ընկել է գերեվարներից մէկին Մուստաֆայ-բէգին, որ նրան ներքինացրել է և անունել Մամուտ։ Մուստաֆայ-բէգը, իւր որդիքն ու թոռներն անգամ ազգով տակով կոտորուել են, և Մատիէն անտէր մնալով. երբեմն սրան, երբեմն նրան ծառայում է լինում։ Ի վերջոյ երեք տարի առաջ մեր նում է մէկի կանայոցը, և նրա հետ գալիս է Գիւրման կողմերը, ուր վերջինս արտաքսում է նրան, պատճառ բերելով թէ կարի ծերացել է և չէ կարողանում սպասաւորել, վան-

որոյ այժմ նա մեռելով առանց տեղի և անուռեմի՝ պարտաւորուած է ողորմութիւն ժողովելով ապրիլ։ Իւսուֆ-խանը լաւ յիշում է նորա Մատթէ անունը, որի կերպարանքը թէև շատ փոփոխուած է լինում, որպէս և իւրը. բայց երբ Մատթէն յիշում է իւր անունը և սկսում է իւր ճանապարհորդութիւնը պատմել, Իւսուֆ-խանի, Սօսի, նրա քրոջ Նինօյի և մօրեղբօր Աբրահամի և այլոց ազգակիցների ևս անունները յիշել, ուստի Իւսուֆ-խանը հարցնում է իւր ազգականներից լաւ և համբաւ Մատթէն պատասխանում է թէ, Աբրահամը, որ այժմ Բահրամ է անուանվում, իմ Մազանդարանից դուրս գալու ժամանակ ողջ էր. իսկ Նինոյից լաւ և տեղեկութիւն չունիմ։ Իւսուֆ-խանը հրամայում է որ Մատթէն գայ իւր վրանները մի մակի և մէկ քանի ձեռք իւր հին հագուստներ էլ տան նրան հագնէ, և անմիջապէս ներկայանում է Աբրաա-Միրզային, պատմում այդ անցքն ու հրամանագիր առնում նրանից Մազանդարանի մարզպանի վերայ՝ որ որոնէ գտնէ իւր քոյր Նինօն և Բահրամ-Աբրահամն ու յանձնէ Իւսուֆ-խանի առաքած մարդուն և Մատթէ-Մահմուտին։ Իւսուֆ-խանն ևս նամակ է գրում և խնդրում այնտեղի մարզպանին, նոյնպէս և իւր քեռի Աբրահամ—Բահրամին, և իւր առաքած մարդուն ապսպարում, որ Աբրահամը վեր առնէ Նինոյի ամուսինը և զաւակները, եթէ ունին, ու տանի հասցնէ Թավրիզ իւր տունը. և եթէ Նինոյի ամուսինը կամենայ գալ իւր, Իւսուֆ-խանի մօտ, շատ ուրախ կը լինի. իսկ եթէ նա չգայ, գտնէ իւր որդիներից որն որ հասակաւ լինի՝ ուղարկէ նրա մօտ. բայց աւանդ, այդպէս չպատահեց։

Սուլթանապատին տիրելէն երեք օր յետոյ՝ առաքած մարդը վերադառնում է իւր քեռի Աբրահամ-Բահրամի և Մատթէ-Մահմուտի հետ։ Աբրահամը պատմում է թէ, գերեվար Մահամմէդ-բէգը տարաւ Նինօն, զոր վերակոչեց Նենէ, ամուսնացրեց իւր որդու հետ։ Նենէն՝ ինչպէս մինչև ամուսնանալը յամառում՝ չէր կամենում կատարել մուսուլմանների կրօնական ծէսերը, նոյնպէս ամուսնանալէն մէկ տարի անցած՝ չէր մտնում նորափեսի առաջատար. ուստի նրա պատանի ամուսինը մէկ գիշեր դայրանալով Նենէի յամառութեան վերայ, դանակով սատակի վիրաւորում է Նենէն կուրծքի մօտից և Նենէն էլ ձեռը հասցնում է պատուհանում դրած զէնքերին, մէկ բէհրուդ ասած դաշոյն է վեր առնում կոխում ամուսնի փորը, որ խկոյն փչում է հոգին, թէև ինքը՝ Նենէն էլ երեք օրից յետոյ աւանդում է հոգին։

Իւսուֆ-խանը իւր քեռի Աբրահամ-Բահրամը, Մատթէ-

Մահմուտի հետ վերադարձնում է Թավրիզ, որոնք կպատմէին ինձ իւրանց գերեվարութիւնը։ Արբասամիր 1850 թուին դեռ ևս կենդանի էր, և ասում էր թէ, ինքը Թիֆլիսցի Մաղաքնց տղան է կամ որդին։ Աղա Երկուսն էլ մոռացել էին իւրանց մայրական լեզուները, և հարց թէ մէկ քանի բառ յիշում էին, և իրր թէ ամենայն դիպէր անկողին մտնելիս ծածկաբար երեսներուն կխաչակնքէին, և այն չորս հինգ բառերը կը կրկնէին, վասնորոյ և այս չէին մոռացած։

1248 Հիջրին (1832). Իւսուֆ-խանը հանդում է թորասան, միաւորվում է Արբաս-Միրզայի բուն բանակի հետ և յուում խաղում դէպի Հէրաթ։ Մէկ քանի օրեան մնացած Ջնարան գաւառի Ամիրապատ բերդին Արբաս-Միրզան լսում է, որ Կոպայ-Կուլի-խան զէրեանցին ծածկաբար գաղնակցել է Հէրաթի Փեամբան-շահի վէզիր Գոստ-Մահամմէդ-խանի հետ, որպէս զի ամրացնէ այդ բերդն զէրէրանլու զօրքերով և յանձնէ Թահմաս-Իւսուֆ-խանին, որպէս զի Արբաս-Միրզան անց կենալիս այնտեղից, խանդոսն լինի նրան, զբաղեցնէ և ուշացնէ առժամանակ, որ չյառաջանայ դէպի Հէրաթ։ Արբաս-Միրզան նախ՝ առաջարկում է թերես խաղալ բանակցութեամբ յանձնէ ինքեան բերդը, բայց տեսնելով որ չէ լինում այս եղանակաւ, պաչարում է զայն և գնդակահոսում մինչև 15 օր, նայում է այսպէսով ևս անհնարին է տիրել, վասն զի բացի պարսպի ամուրութիւնից, նրա խրամի (խէնտակի) լայնութիւնն ինն գաղ է լինում. ուստի կոչում է Ամիր-Թօփ-խանէ Իւսուֆ-խանը և ասում թէ, այս մեր աշչանաց սիրելին է, ապաքէն, այս բերդն թողնել այս կայի վերայ և անց կենալ, վասն, ամենայնում նշան է մեր ապագայ գործածութեանը. ուստի ինչ հնար ունիս գործ դիր տիրելու։ Իւսուֆ-խանը պատասխանում է թէ, ես հնարք կը մտածեմ և կառնեմ բերդը, եթէ թագաժառանգը չի շտապացնիլ (Արբաս-Միրզայի մեծ պսակաւութիւնն է պատերազմի ասպարիզումն և նոյն իսկ գործառնութեանց մէջ աճապարումն, վասնորոյ և չատ անգամ ճակատամարտը տանել էր տալիս) ինձ, քանզի տեսնում ենք որ մեր թնդանօթների ցերեկը քանդածները, պաչարեալները գիշերը վերանորոգում են, ուրեմն հանրերութեամբ և քայլ առ քայլ պէտք է խրամատենք գնդատիրոներ չենելով, որպէս զի թշնամիները չզան։ Արբաս-Միրզան պատասխանում է թէ՝ Իւսուֆ-խան, այս գործը գլխովին թող եմ յանձնում, ինչպէս յուշդ, խելքդ, և հանճարդ, թող կառաջնորդէ, այնպէս արա. ես այսուհետև այդ գործումը չեմ խառնուիլ։ Իւսուֆ-խանը վեց օրումը գնանա-

փոր է անում և մեծամեծ գնդակներ վառօղով լցրած տեղաւորում ական հատած տեղերում։ Երբ հաչում է որ գետնափորի մէկը հասած է մէկ բուրգին, հրամայում է յանկարծ կրակել։ Վառօղը պայթում է և մէկ բուրգը իսպառ խորտակվում է և ի վայր տապալվում, որի նիւթը թէև խոնարհում թափվում է խրամի մէջ, բայց և ևս պակասում է, այսինքն խրամը կատարելապէս չէ լցվում, ուստի մնացեալներին Իւսուֆ-խանը հրամայում է պատրաստած խոբը, խեղբանքը, խիճը, հողը և զանազան նիւթերը ածեն խրամի մէջ, մինչև որ հաւասարուի գետնին, որպէս զի ինչպէս հետեւակ զօրքը, նոյնպէս թնդանօթները կարողանան ազատ յարձակուիլ, մտնել բերդը։ Իւսուֆ-խանը մէկ կողմից այս գործողութիւններն է անում, միւս կողմից հրամայում է թնդանօթներով սաստկութեամբ ռմբակոծեն բերդը, որպէս զի պաշարեալները ժամանակ չունենան դիմադիր լինելու, բայց նա փորուած է լինում. քանզի պաշարեալները յուսահատութիւնից սաստիկ ճակատամարտ են յարդարում, և երկու կողմից գնդակները անձրեւի նման էին թափվում, սուրերը չզոչզոչում, սուլիները անդադար բանում էին, արիներուչտ պատերազմը կամակորութեամբ և անատար կատաղութեամբ հետզհետէ սաստկանում էր, ամէն տեղ դիակները թաւալ-թաւալ էին գալիս։ Իսկ Իւսուֆ-խանը տեսնում էր որ՝ իւրանց զօրքը գժուարանում է պարսպի խորտակուած տեղերը ներս մտնել բերդը, անհամբերութիւնից, կամ ուելի լաւ ասել, խելագարութիւնից և անդուսպ յանդգնութիւնից, որպէս պատմում էր ռուս Սամսոն-խանը, որն ներկայ է եղած, մերկացրած սուրը ձեռին, ինչպէս առիւծի կորիւն սլանում, խառնվում է սոսկ զօրականների մէջ, իւրանց զօրքը խրախուսելու և քաջալերելու համար։ Հազիւ թէ չորս հինգ քայլաչափ մտած բերդի մէջ, յանկարծ պաշարեալների կողմից չամփսալ ատած մէկ գնդակ գալիս է դիպչում քաջասիրտ Ամիր-Թօփխանէի կուրծքին, և նա՝ իսկոյն գետնի վերայ տարածվում է ու հոգին փչում։ Արդէն համարեա թէ տիրել էին բերդին։ Աբբաս-Միրզան, որ հեռուից նայում էր ճակատամարտին, տեսնելով Ամիր-Թօփխանէի դիապատ անկանիլն, իսկեսկ ուզարկում է նրա տեղն իւր որդի Բահրամ-Միրզան։ Զօրքը այնպիսի տղամարդ կորցնելու համար զայրացին կատաղում է և սաստիկ կոտորած է անում, և Իւսուֆ-խան թաթար սպիտակ դրօշակը ձեռին դուրս է գալիս բերդից, գընում գետնատարած է լինում Աբբաս-Միրզայի ոտքի տակը և աղաչում, խնդրում, որ դադարեցնէ այն կոտորածը։ Մար-

տակիցները պատմում էին թէ՝ բոլոր բանակը կոծում էին այնպիսի ուժգնարդ կորցնելու համար։ Նորա յուզարկատրութեանը ներկայ են եղած Աբբաս-Միրզայի չորգդէ որդիները, որ բնաւին սովորութիւն չունէին այդպիսի անձանց թաղմանը երթալու։

Իւսուֆ-խանի արու զաւակները մնալ էին իւրեանց մանուկ ժամանակ։ Նա թողեց ամբաւ հարստութիւն իւր մէկ դստեր, որն ամուսնացաւ Թաւրիզի Խամ-Ջուամէ Միրզայ Լութֆ-Ալիի հետ, որ էր Միրզայ-Ահմէտ Ատրպատականի Մուշթէհիդի երկրորդ որդին։ Այս ամուսնութիւնից ծնան չատ զաւակներ, որոց երկոցն Հաջի-Միրզայ-Խոսրով անունով, այժմ վարում է իւր հօր պաշտօնը։

Իւսուֆ-խանի ծանօթները, մարտակիցներն ու ստորադրեալները պատմում էին, որ թէև նա պստիկ էր, բայց չքնաղիկ էր, այսինքն ուելի կարճ էր քան թէ բարձր հասակով, պատառի մէրուք կը կրէր, աչքերի պտուղները մուգագոյն էին, անխոնջ բնաւորութիւն ունէր և պարապորդութիւն չէր սիրում, երբ և լինէր, որ և իցէ մէկ զրաղմունք կը գտնէր թէ ինքեան և թէ ստորադրեալներին։ օր չէր անցնէր, որ իւր հետևակ զօրքի գնդապետութեան ժամանակ չդար զօրանոցը ու տեսնէր մաքուր են պահում զօրանոցի սենեակները կամ բակը, կամ զօրքի հրազէնները։ Իսկ երբ թնդանօթաձիգ զօրքի գնդապետ էր կամ զօրալուսաւ, նոյնպէս ամենայն օր կերթար կնայէր թնդանօթներին, կը զրաղուէր նրանց գործիքները, պահապատատը, եթէ լինէին, կուզղէր, կարկատել կտար, յաճախ անգամ կմաղէր, կը կրթէր զօրքը։ մէկ խօսքով, թոյլ չէր տալ որ պարապ նստէ զօրքը, բայց կսիրէր որ ուրբաթ կամ ուրբաթ օրերը զօրականները երգէին, պարէին, նուագածուներ բերէին, ուրախանային և զանազան խաղերով զրաղուէին։ Հասարակորէն թեև քան է ունեցել Իւսուֆ-խանը, պատերազմի ժամանակ յաճախ կերթար կը շրջէր բանակի մէջ, որպէս զի տեսնէր արդեօք զօրականները ճշմարիտութեամբ են կատարում զինուորական բարեկարգութիւնները։ Նա խոչորակեաց է եղած, բայց ոչ ժլատ, արչաւանքի ժամանակ նրա ստորադրեալ սպաները միշտ նրա սեղանի վերայ կնաչէին և երբեմն էլ նրանց մեծ մասը կընթրէին։ Նա ատում է լինում փափկակեաց, նազաքայլ, զուգուած, զարդարուած, մանաւանդ որովայնամէջ պաշտօնատարներին։ Խաղաղ ժամանակ նա անգուսպ բերանով կը հայհոյէր զօրականներին, բայց պատերազմի ժամանակ ողջ, քաղցրարարոյ և ամենամաքուր բերան ունէր։ Նա յաճախ կրկնում է լինում թէ՝ ճակատամարտի մէջտեղը զինուորական-

ների համար նուիրական վայրկեան է, երբ և նրանք մանն ու կեանքը պիտի աչքի առջևն ունենան, ուրեմն և պարտաւոր են իրանց սիրտը և բերանը մաքուր պահել, այն ժամանակը նրանց մէջ բացի բարեկրթութիւնից, մեծութիւն և փոքրութիւն չպէտք է լինի, ուրեմն և պարտաւոր են միմեանց կեանքն ու պատիւը պահել պահպանել։ Շատ ապիկար, ծոյլ և թոյլ զորագլուխներ և գնդապետներ խաղաղ ժամանակ չեն հրամանգում իրանց ստորադրեալ սպանդին ու զօրականները, ընդհակառակն՝ պատերազմի տաք բոպէին, ստոպրիզում հայհոյելով խստութեամբ պահանջում են նոցանից այն, ինչ որ չեն սովորեցրել, իսկ ես նրանց հակառակն եմ արած և կանեմ, թող այլք իմ այսպէս վարուելու համար՝ իմ վերայ ծիծաղին, ինձ փոյթ չէ։

Աստուած էին թէ՝ խուսիքը չէր ուրանում իւր ստոր ծնողների ծագումն, այլ շատ անգամ նա հրապարակաւ խոստովանում էր իւր հօր, պապի և նախահայրերի նպարավաճառ լինելը, որպէս զի խրախուսէր իւր ստորադրեալներին, և նորա յուսային իրանց քաջութեանը. վասնորոյ և բան մեծի մասին, նա առաջ կգաչէր այն քաջ սպանները, որոնք խոնարհ սերունդից էին և ունէին մոերմութեամբ կծառայէին։

Ազալար-խանը, որ նրա մօտիկ ծանօթն էր, կասէր թէ՝ Խուսիքֆ-խանը համ շատախօս էր, համ սակաւախօս։ Եթէ մէկ հանդիսում կամ մենակ ժամանակը, տէրութեան, հաւատի, կրօնի, ուրախութեան, տրտմութեան, դրելու, կարդալու, ուտելու, խմելու, խելքի, հանճարի և կամ որ և իցէ առարկայի վրայ խօսէին, նա լուռ ու մունջ կը նստէր, ցոյց կտար թէ ականջ է դնում, բայց եթէ հարցնէիր թէ՝ ինչ էին խօսում, նա չը կանէր, կը ժմտար, որ նչան էր թէ՝ նրա ուշը միտքը ուրիշ տեղ են եղած, և ոչ ինչ չէ հասկացել։ Լսկ եթէ զրոյցի նիւթը ծագէր պատերազմի բանակ կազմելուց, ինչպէս տեղում, ինչպէս պէտք է զօրքը շարժել, թնդանօթներ շարժել, յարձակուել թշնամոյ վերայ, ուրիշ, հրացանի և զանազան պատերազմական գործիքների վերայ, այն ժամանակ նա բլբուլ (սոխակ) կդառնար, թոյլ չէր տայ, որ ուրիշնին էլ խօսէին, և այնքան կը խօսէր, որ ամենայն բան, մինչև անգամ իր քաղցածութիւնն էլ կմոռանար։ Երբ Գրիբոեդովի (Ռուսաց դեսպանի) սպանվելոյց լուրը տարածուեցաւ, ամենքեան ասում էին թէ՝ գարձեալ Ռուսաց հետ պատերազմ կծագիր։ Խուսիքֆ-խանը վեր առաւ թէ, Աստուած տայ, Աստուած տայ, ինչ ենք մինչայ պէս տեսերամն նոսեր։ Մէկն ասաց, Խուսիքֆ-խան, մարդկանց կոտրվիլը քեզ համար մէկ

ուրախութիւն է. վայ թէ քեզ էլ պատահի մէկ տաք տաք գնդակ և դու էլ սպանուիս...»։

Լուսուֆ-խանը պատասխանեց թէ՝ «Օ՜հ, ինձ անիծում ես բա ինչ ես ուզում, ուզում ես որ ես անկողնիս մէջը հոգիս աւանդեմ»։

Աղդարն, այնպէս էլ եղաւ, աւելացրեց Աղալար-խանը։

ԺԶ։

ԶՕՀՐԱԲ-ԽԱՆ, ԱՄԻՐ-ԹՕՓԽԱՆԻ։

Ամիսներ, որ այս երեկի և քաջ զօրականի կենսագրութեան մասին ոչինչ չմնացին մեզ, և ամենայն հաւաքած նրա մասին անցքերը գլխովին կորան։ Վերջին անգամ երբ թաւրիզ գնացի, չկարողացայ մէկ ծեր և հին մարդ գտնել, որ կենդանի կամ մարտակից լինէր նրան, կամ գոնէ հաղորդէր ինձ թէ Զօհրաբն իւր պատանեութեան կամ երիտասարդութեան ժամանակ ում մօտ էր կացել, ծառայել և ինչ պաշտօնով էր իւր զինուորական ծառայութիւնն սկսել, կրթուել, մարզուել և այլն։

Թաւրիզում մէջ հայ դերձակներից երկու հոգի ասացին ինձ թէ՝ նրանք լսած էին, որ Զօհրաբը ծնած է եղած Լօռիի մօտ գեղերի մէկումը, և թէ նրա ծնողները, Թիֆլիսը աւերելէն մէկ քանի չաբաթ թէ ամիս առաջ (1795 ամին) գնում են լինում Թիֆլիս սուրբ Սարգիս եկեղեցին ուխտ, ճանապարհին պատահում են նրանց մէկ քանի թուրք, ուզում են կողոպտել, բայց Զօհրաբի հայրը թոյլ չէ տալիս, աշխատում է պաշտպանել իւր ընտանիքը, և հրացան է լարում իրի թէ նրանց վերայ, որովհետև սպանում են նրան և կինը, գերի են վարում Զօհրաբը, որ 12—13 տարեկան է լինում, և նրա քոյրը 14—15 տարեկան։

Այս ես յիշենք, Մէկ օր չատ ժամանակ է անց կացել, երբ ես Լենինգրադեանց Աղալար-խանի մօտ էի, Զօհրաբ-խանի ստորագրեալ մէկ սպայ, Ծանօթ Աղալար-խանի, եկաւ խնդրեց որ նա մէկ նամակ տար Զօհրաբ-խանի վերայ, և գրէր թէ՝ այս սպայն հիւանդութեան մասին ուշացել է և ժամանակին չէ կարողացել հասնել Թէհրան, և աւելացրեց թէ խան, խնդրեմ վրացերէն էլ մէկ քանի խօսք գրէք նրան։ Աղալար-խանը պատասխանեց նրան թէ, Զօհրաբ-խանը վրացերէն ոչ կարդալ—գրել և ոչ խօսել գիտէ։

Ուրեմն այժմ դիմենք Պարսից պատմութիւնն, և քանի մի լուրեր հաղորդենք, որ լսած ենք ուրիշներից։

1248 Հիջրին (1832) Աբբաս-Միրզան արշաւում է Խորասան, և այնտեղից Հերատ, որում և Կաֆարների պատմութիւնն էջերումն յայտնվում է այդ Զօհրաբ-խանին անուր, և այն էլ այն ժամանակ, երբ յիշեալ Դելօյենդ Խասուֆ-խան Ամիր-Թոփխանէն սպանվում է։ Շահզադայ Մահամմէտ-Բաքիր-Միրզայի ասութեամբ, իբր թէ նրա մտին է, որ իւր հայր՝ Աբբաս-Միրզան՝ ինքնին Զօհրաբ-խանին (Խասուֆ-խանի սպանուելէն յետոյ) Ամիր-Թոփխանութեան պաշտօնը, և թէ Զօհրաբն արդէն զօրապետութեան (սարթիպութեան) աստիճան ունէր։ Իսկ Կաֆարների պատմութիւնը Զօհրաբ-խանի անունը տեղ-տեղ բնաւին չյիշելով, յանկարծ դուրս է բերում նրան Թրքուչան բերդը պաշարելու ժամանակ «Ինդանօֆների գլխաւոր» տիտղոսով, առանց յիշելու նրա աստիճանը։ Եւ փարը ինչ յետոյ, նոյն պատմութիւնը յիշում է նրան «Զօհրաբ-խան Ամիր-Թոփխանէ» անունով։ Հաւանական է որ՝ Թրքուչան բերդի վերայ քաշուելիքը պատերազմելու մասին՝ Աբբաս-Միրզան ինքնին չնորհած լինի այդ բարձր աստիճանը, և ոչ թէ Խասուֆ-խանին սպանուելու մասին։

Ինչպէս և լինէր, մեք այստեղ յառաջ բերենք հայ գիրքերից, նրա գինուորականներից և յիշեալ չանդադայից լուսածներս, մանաւանդ Պարսից պատմութիւնից քաղուածներս, Զօհրաբ-խանի մասին ասում է վերջինս թէ՝ Կարասխ բերդը պաշարելու ժամանակ՝ նրա մէջ պաշարեալ Ալիենի մուսուլմանները յամառութեամբ և քաջութեամբ պաշտպանվում էին։ Եւ ունենալով մեծ երեք հազար պարսից հպատակ Շեմ-մուսուլմաններ, մէկ օր յանկարծ այն գերիները ձեւը ոսը կապած, կաչկանդած չարեցին բուրգերի և պարսպի գլխին, որպէս զի պարսիկները խնայելով իրանց հաւատակիցներին և ազգակիցներին՝ դադրացնեն գնդակահարութիւնները։ Պարսիկները լուսելեամբ կնամեին իրանց խրամանի նպատակին, եթէ Զօհրաբ-խանը ունկնդիր լինէր Աբբաս-Միրզային, ասում էին ակամատեսները։ Բանդի վերջինս կարգադրեցնել ստիպեալ՝ հրաման է առաքում առ ժամանակ դադրացնել գնդակահարութիւնը, բայց Զօհրաբ-խանը մերժում է թագաժառանգի կարգադրութիւնը, որովհետև ինքը մեծ լինելով բերդի պարսպին, նշմարել էր որ՝ կարելի է այնպէս ռմբակոծել, որ նիւս գերիները չլեռատվէին։ ուստի մեռնում է չորս կողմի դարսած ինդանօֆներին, նրանց բերանները, նշանները նպատակին ուղղում, կարգադրում և հրամայում ռմբակոծել գերի-

ների կացած տեղից երկու-երեք գրկաչափ վար։ Աբբաս-Միրզան, որ հեռու տեղում կանգնած դիտակով հանդիսատես էր լինում, կարծելով թէ ուղարկած թիկնապահն իւր հրամանը ճշտութեամբ չէ հասկացրած Զօհրաբ-խանին, կրկին անգամ աֆակից է ուղարկում որ ամրակոծութիւնը դադրեցնեն. իսկ նա ապասպարելով իւր նպատակը, աւելացնում է թէ՝ հանգիստ կացէք, իմ ձգել տուած ռումբերը մէկ մաղ վնաս չեն տալ մեր հպատակներին։ Արդարև, չէ տեսում երկար միջոց, այն ինչ պարսպի մէկ քանի տեղերը խորտակվում են և փլվում, տեղ-տեղ կիսակործան լինում, որով չատ մարդ պարարեաներից ջարդվում են։ Պաշարեալները անճար մնացած՝ սպիտակ դրօշակներ են պարզում, և բերդից դուրս գալով երեսներից խնդրում, աղաչում են որ Զօհրաբը դադարեցնէ հրաձգութիւնները, իսկ վերջինս թոյլ չէ տալիս նրանց դնալ Աբբաս-Միրզայի մօտ, ասելով թէ՝ մինչև մեր հպատակները չբերէք չանձնէք մեզ, ոչ կդադրեցնենք հրաձգները, և ոչ թոյլ կտանք ներկայանալ թագաժառանգին։ Վանորոյ և նոքա փութով վերադառնում են, բերում են պարսկի գերիները և ապա գնում ներկայանում թագաժառանգին և ներումն ստանում. Հետևեալ օրը՝ մինչ Աբբաս-Միրզան պատրաստվում է յաղթանակով մանել բերդը, յանկարծ բնակիչները գրդմամբ և գրդռելով ոմն ազգատեր Իէլի-Մրտառում, սկսում են ապրատամբութեան գրօշակ վերցնել և պաշտպանողական գրուութեամբ ամրափակուիլ. ուստի Աբբաս-Միրզան զայրացեալ հրամայում է Զօհրաբ-խանին, որ այս անգամն առաւել սաստկութեամբ ռմբակոծէ. Ցամառեալ բնակիչների մեծ մասը նախ մնդանօթների գնդակներից, և ապա բերդին տիրելէն յետոյ՝ յաղթականների սուրերի բերանիցն են կոտորվում, բերդի պարիսպները տապալում են, գետնին հաւասարում, և բոլորի կայքը թալանում. վանորոյ և ինչպէս կաֆարների պատմութիւնն է ասում թէ՝ վերջին զօրականը՝ հազար թումանից պակաս բաժին չստացաւ։

Հետեւեալ տարին (1833) Աբբաս-Միրզան ուղարկում է իւր որդի Մահամմէդ-Միրզան (որ յետոյ շահ եղաւ) ստուար բանակով Հերաթի վերայ, երբ և մնդանօթաձիգ զօրքի գլխաւորը լինում է Ամիր-Թուֆիանէ այս Զօհրաբ-խանը։ Այդ արշաւանքի ժամանակ մէկ քանի անգամ սաստիկ պատերազմներ են պատահում Քեամրան-չէի զօրավարների հետ, և ամեն անգամ էլ պարսիկները յաղթող են հանդիսանում. վասն զի թշնամիները չատ փոքր թուով մնդանօթներ ունենալով իսկ պարսիկներն աւելի, վերջիններս գերազանցում են,

կաշարների պատմութիւնը յիշելով այդ յաղթութիւնները, բուլորն էլ ընծայում է Մահամմէտ-Միրզայի անունը, չյիշելով որ և իցէ զորավարի կամ զօրագլխի անուն, որպէս և Զօհրաբ-խանները, քանզի Մահամմէտ-Միրզան, որ ներկայ Նասր-Էդդին-շահի հայրն էր, որի յիշատակը յաւերժացնելոյ համար, այդ պատմութեան հեղինակն ըստ սովորութեան Պարսից՝ պարտաւոր էր այդպէս գրել ի հանդէս ներկայ շահի, թէև մեք ժամանակակիցներս և նոյն իսկ ականատեսները լաւ կը ճանաչէին Մահամմէտ-շահի պատերազմական յարմարութիւն և քաջութեան հոգի չունենալը։

Եւ այսպէս այդ զօրքը Հերաթից կէս փարատաւոր հեռաւորութեամբ մանակված ժամանակ յանկարծ Մահամմէտ-Միրզան լուր է ստանում իւր հօր, թագաժառանգ Արբաս Միրզայի մահուան համար. ուստի և հարկադրվում է իւր բանակովը Թէհրան վերադառնալ, որոյ հետ գնում է նաև Զօհրաբ-խանը։

Հետեւեալ 1824 թուականին Ֆաթ-Ալի-շահը մեռաւ Ասպահան, որով նրա երեք որդիքը, այսինքն Զիլլի-սուլթանը՝ Թէհրան, Ֆարման-Ֆարմա՝ Շիրազ, Մուլք-Արա՝ Մազանդարան, և նրա թոռը վերոյիշեալ Մահամմէտ-Միրզան՝ Թաւրիզ, հետամուտ եղան շահութեան. ուստի և բոլոր Իրանը յուզուեցաւ, ամենայն տեղ ելուզակները բարձրացան, ճանապարհների երթեւեկութիւնները փակուեցան, առեւտուրը դադարեց. չատ տեղ սովն ու սուրը թագաւորեցին և եղբայր եղբօր վերայ զօրաժողով եղան պատերազմ մղելու։ Չեմ մոռանալ որ երբ Ֆաթ-Ալի-շահի մահուան լուրը հասաւ Թաւրիզ՝ հացի լիտրն մէկ աբասի (20 կոպէկ) էր, յանկարծ բարձրացաւ եղաւ երեք աբասի, ի հարկէ նոյնպէս թանկացան և մուս պաշարները։

Ինչպէս յիշեցինք, Զօհրաբ-խան Ամիր-Թօփիխանէն արդէն Թէհրան էր մնացել, վանտրոյ ինքնակոչ շահ Զիլլի-սուլթանը ուղարկեց Զօհրաբ-խանը չանդագէ Մնաբ-Կրան-Միրզայի հետ 18 թնդանօթներով, 300 զամբարակներով, և հազար բախտիարի հետեակ զօրքով գնալ մնանալ շահդագէ Խամսէ-Միրզայի բանակի հետ, որ գնացել էր ընդդէմ Մահամմէտ-Միրզայի, թոյլ չտալ վերջինս առաջանալ Ատրպատականից և գալ Թէհրան։

Զօհրաբ-խանը ուղեորելէն յետոյ՝ Զիլլի-սուլթանը դրդրմամբ իւր արբանեակների կասկածելով Զօհրաբի հաւատարմութեան վերայ, ուղարկում է Մահամմէտ-Բդայ-խանը չորս հարիւր հետեակ զօրքով, պատրուակաւ, որպէս զի ուղեկից

լինի Զօհրաբին։ բայց նա ծածկաբար հրամայում է նրան, որ հոկի և լրտեսէ Զօհրաբի գործողութիւնները, և եթէ անհաւատարմութեան նշան նկատէ, իսկոյն նրան կալանաւորէ և յետ դարձնէ Թէհրան։ Զօհրաբ-խանը Մահամմէտ-Իրդայ-խանի [1]) գրքին վերայ հասկանում է, որ նա եկել է իւրեան լրտեսէ—վասն զի Զիլլի-սուլթանը ոչինչ կասկած չէր կարող ունենալ Սրհաբ-կրան-Միրզայից, բայց Զօհրաբ-խանը ոչինչ նշան ցոյց չէ տալիս, թէև ինքը հասկանում է նրա գալստեան պատճառը։ Մահամմէտ-Իրդայ-խանի տեղ հասած օրը, հասնում է և խմամ-վերդի-Միրզայի բանակի խորտակվելու լուրը, այսու ամենայնիւ Զօհրաբը դարձեալ ոչինչ նշան ցոյց չէ տալիս թէ ինքը լսել է և գիտէ այդ տարաբախտ անցքը։ Եւ երբ նրանց միասին հասնում են Սուլթանիէ ասուած հովանոցը, այնտեղ է լինում ինքնակոչ շահացած Ֆարման-Ֆարմայի եղբորորդի Հիրմիզ-Միրզան, զոր Զօհրաբ-խանը կալանաւորում է և հաղորդում Զիլլի-Սուլթանին, ցոյց տալ իւր հաւատարմութիւնն առ նա։ Հետեւեալ օրը կէս գիշերին, բանակը չուելիս, ճանապարհին նրանք յանկարծ պատահում են խմամ-վերդի-Միրզային, որ իւր խորտակուելից յետոյ, միջնորդութեամբ Անգլիոյ դեսպանի, հաշտուել էր Մահամմէտ-Միրզայի հետ, և վերադառնում էր Թէհրան, որ յորդորէր, խրատէր Զիլլի-սուլթանը, որպէս զի խուսափվէր և ճանաչէր Մահամմէտ-Միրզային օրինաւոր ժառանգ թագաւորութեան, և եթէ վերջինս խոստանում է ներել ոչ միայն նրան, այլ և նրա արքունականներին խմամ-վերդի-Միրզան և Զօհրաբ-խանը հէնց ձիու վերայ առանձնանում են, երկար ժամանակ խօսում, խորհում են, և ապա միմեանցից բաժանվում են, առաջինն ուղեւորվում է Թեհրան, իսկ Զօհրաբը դէպի Կազվին, այսինքն դէպի Մահամմէտ-Միրզայի բանակը։

Այն ինչ Մահամմէտ-Միրզան բանակած էր Գ Ը Շ Լ Ա Ղ անուած տեղը, հասնում է Զօհրաբ-խանը, և բանակվում է փոքր ինչ հեռու Մահամմէտ-Միրզայի բանակից, և անմիջապէս միայնակ գնում է Անգլիացւոց դեսպանի վրանը և խնդրում որ նա գնայ բարեխօսէ Մահամմէտ-Միրզայի մօտ նեղրել ինքեան։ Մինչ այս մինչ այն, վերջինս լսելով Զօհրաբ-խանի ժամանելն ու գնալը Անգլիոյ դեսպանի վրանը, նախագուշակում է թէ ինչի է նա գնացել նրա մօտ, վասնզորոյ իսկոյն աչքից է առաջում ասել Զօհրաբ-խանին թէ «Զարմացայ քեզ բարեխօս և միջնորդ որոնելն, այն ինչ յայտնի է

[1]) Սա էր թէհրանի թագաւորի որդին։

քո մտերմութիւնդ և զանազան արշաւանքներում երեսի ծառայութիւններդ հանգուցեալ հօրս և ինձ իսկ, ուրեմն ինչից ես երկիւղ կրում, այն ինչ քեզ առաքել են, լաւ գիտեմ, ընդդէմ քո կամաց, ուրեմն փոխիր, հրամայէ զօրախումբդ զալ միասալ իմ մնդանօթաձիգ և հետևակ բանակի հետ, և դու արի, ներկայացիր ինձ, պատմել թէ՝ Երանի անցքերից»

Ամանատանները պատմում էին թէ, Թաւրիզից դուրս գալէն յետոյ, այնպէս ուրախ և զգոնորած չէիք տեսած շահացուն, ինչպէս այն օրը։ Երկար երկար տեղեկութիւններ Զօրաբ-խանից ստանալէն յետոյ՝ շահացուն հրամայում է իւր առանձում հաղցնել Զօրաբ-խանին թանկագին խիլաթ։ Վերջնոյս նման երեսի և քաջակրթով զինուորականի, այնքան զօրքով ու հրազէններով միանգամ անմոխանձելի բանակի հետ, արդարև մեծ, շատ մեծ ազդեցութիւն ունեցաւ ոչ միայն այնտեղի փոքրիկ բանակին, այլև բոլոր Իրանի վերայ։ Լաւ մը տես է որ՝ երբ որպէս նախ Մամուշաբ-խանի և ապա Խոսրով-խանի, նոյնպէս այդ լուրը հասաւ Թաւրիզ, որպէս ևերոպացիները, նամանաւանդ և պարսիկները յայտնի սաւում էին թէ՝ հայ զերիները Ֆաթ-Ալի-շահի թագը դրին Մահմմէտ-Միրզայի գլխին։ Եւ այսպէս երկրորդ իջևանումը Զօրաբ-խանը ստանում է շահացուցին հրամարտակ, որով նա շնորհաւորում է Զօրաբ-խանին Իրանի բոլոր հրազէնների գլխաւոր Ամիր-Թոփխանութեան ատիճանը [1]։

1251 Հիջրին (1835) մեռնում է Զօրաբ-խանի միակ որդի Մահմմէտ-Ղազայ-խանը, որ իւր տղամարդութիւնով և քաջասրտութիւնով Իրանի մէջ արդէն յայտնի էր եղած։ Զօրաբին այս անդառնալի և անտանելի կորուստից կարի վշտանալով, խուսափում է մարդկանց յարաբերութիւնից և չկարողանալով ազատուել մարդկանց երեսներից, որոնք առաւել ևս վշտացնում էին նրան, գնում է ձմեռը Շիմրանի ամառանոցը, որպէս զի ոչ ոքի հետ յարակցութիւն և տեսութիւն չունենալով թերևս մոռանայ իւր ցաւը։ Քանի մի ամիս այնտեղ միայնակ մնալէն ձանձրանում է, մէկ օր ընդդէմ ամենի անկիւրութեան, գալիս է Թէհրան, ներկայանում է շահին և խնդրում է որ արձակուրդ շնորհէ նրան, ուխտի երթալ Քեարբալայի ուխտատեղին, որպէս զի ճանապարհորդութեամբ մոռանայ իւր ցաւը։ Շահը նրան սփոփում է, միխիթարում և

---

[1]) Շահացուի Թաւրիզից դուրս գալը, Թէհրան հասնիլը և անգէն գոհ-կալելու անցքերը մանրամասնաբար գրուած են Խոսրով-խան Կարաբաղեանի և Մամուշաբ-խան Դանիկօվսկեանի կենսագրութեանց մէջ։

խրատում, ապա ասելացնում է թէ՝ գնա, հանդիսատանդ նստէ, մինչև որ ես ես պատրաստուիս, միասին ուխտ գընանք կամ Քեաբրալայի կամ Մաշհադ. Շահը այնուհետև երբեմն երբեմն առաքում է իւր ազգականներից մէկը՝ Զօրաբ-խանին մօտ, որ նրա առողջութիւնը հարցնեն, և ապա լսում է որ՝ այդ իւր շնորհի վերայ, նա մեծ փոխոխութիւն է զգացել, վանտրոյ այնուհետև և ես մխիթարելու համար, երբ շահի համար հնարաւոր նահանգներից բարխանէք կգայլեն, նա կը հրամայէր նրանցից ինչ ինչ հաղուագիւտ ուտելիքներ տանէին Զօրաբ-խանի համար՝ որ Պարսկաստան մեծ շնորհ է, և որով նա աւելի ես կփոխուէր դէպի լաւը, և այնուհետև սկսում է նա քիչ քիչ այցելութիւններ անել ծանօթներին և նրանց էլ ընդունել իւր պալատումը։

1252 Հիջրին (1836) շահը մեծ բանակով արշաւում է Բաստամ ծագած ապստամբութիւնը խաղաղացնելու և այնտեղից յարձակվելու Հերաթի վերայ, վանտրոյ բերել է տալիս Զօրաբ-խանին և ասում, հայտնի ես պատրաստ եմ Մաշհադ ուխտ գնալու, ուրեմն և դու գնա պատրաստուիր ինձ ուղեկից լինելու։ Եւ այսպէս Զօրաբն ուրախութեամբ ընդունում է Մահամմէտ-շահի հրամանը, քանզի գիտէր որ՝ հանապարհորդութիւնը, մանաւանդ պատերազմական արշաւանքները նրան անձնական և հոգեկան մեծ օգուտներ կը բերէին։

Զօրաբ-խանը լինում է այն զօրքի հաստատի մէջ, որ յանձնուած էր Ֆիրիդուն-Միրզայի հրամանատարութեանը, որպէս գլխաւոր հրամանատար հրաղինուց։ Նա յարձակվում է Կարի-Կալէ ասած բերդի վերայ, պաշարում, տիրում և շահի հրովարտակի համեմատ տապալում։ Այստեղից այդ զօրաբաժինը գնում է Գուրգան գետի ափումը գտնվում, մինչև շահն էլ հասնում է իւր բանակովը, և մնասին խաղում են դէպի Քեալբուշ և Գօղլան ցեղերի մէջ, նրանց մեծամեծները կալանաւորում են, և շրջայակապ առաքում թէհրան, ու դիմում դէպի Բիրի—Շերվան, և այնտեղից Հերաթի վերայ, ուր Անգլիացիները խուզդոտն են լինում։ վանտրոյ և շահն իւր բանակովը վերադառնում է թէհրան։ Այդ երկար արշաւանաց ժամանակ անբաժան լինում է շահից և այս Զօրաբ-խանը, որ և շատ անգամ առաքվանում է։

Պարսից պատմութիւնն այնուհետև խորին լռութիւն է պահում մեր Զօրաբ-խանի մասին։ և թէ ուր և երբ նա մեռաւ, ես չկարողացայ վերջին անգամ թաղվրիզ տեղեկանալ։

ԺԷ.

ՍՊԱՆԴԻԱՐ (ԻՍՖԱՆԴԻԱՐ) ԽԱՆ՝ ԻՇԽԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ.

1795 ամի ցեառն Թիֆլիսը ասերելու ժամանակ՝ Սպանդիարը գերի է վարվում Պարսկաստան, բայց ոչ, ինչպես, ում ձեռքն է գերի ընկնում, ինչպես է առաջ գնում և կամ ինչ է լինում նրա ուղարկի անունը,—կորան. իսկ վերջիրումս Թիֆլիս նորա նորատի ազգականներից հարց ու փորձ արի, պատասխանեցին թէ «մեք ինչ գիտենք այն ժամանակուայ անցքը, մեզ այսքանս յայտնի է որ մեր գիրդատանից մէկը գերի է վարուած»։ Որովհետև ինչ գրելոց եմ, պիտի լինին կամ մտիս մնացածները և կամ թէ կաղաքների պատմութիւնից քաղուածները։

Մանուչար խանի մայր Ակում խանումը՝ գոլով իշխան Ամատունիների դուստր, թերևս սորա միջնորդութեամբ կամ բարեխօսութեամբ և կամ թէ նախ քան այս տիկնի ժամանելը Թէհրան, վանորոյ և Սպանդիարն լինում է երկար միջոց Մանուչար-խանի հովանաւորութեան ներքոյ։ Եւ երբ Մանուչարը նշանակվում է Գիլանի մարզպան, հետը տանում է և Սպանդիարը, ուր Մանուչարը գնելով կալուածներ, յանձնում է Սպանդիարի կառավարչութեան։

Հաւանական է որ՝ Մանուչարի միջնորդութեամբ՝ և Սըփահդար խաստ-խանը ամուսնացրած լինի իւր դուստրը Սպանդիարի հետ։ Եւ երբ այդ խաստ-խանը մեռնում է, Ֆաթ-Ալի-շահը նշանակում է Սպանդիար-խանը խաստ-խանի անչափահաս որդի Կուլամ-Հիսէյն-խանի կալուածների վերայ, նրան յանձնուած զօրքի վերայ հոգաբարձու և հրամանատար, քանզի վերջինս ամուսնացած էր Ֆաթ-Ալի-շահի դստեր հետ, վանորոյ և Սպանդիարը թողնում է Գիլանը, գնում է Արազդստան Կուլամ-Հիսէյն-խանի մօտ։

1826 թուին, Պարսից և Ռուսաց պատերազմի ժամանակ Կուլամ-Հիսէյն-խանը, ինչպես ասացինք, անչափահաս լինելով, շահի հրամանով Սպանդիարը՝ առաջնորդում է Խալայի և Սավայի երկու զունդ հետևակ զօրքն (որ էր մէկ մասն Արազդստանի զօրքի և ենթադրեալ էին Կուլամ-Հիսէյնին) զ-

բավարութիւնամբ Դուլբի Կայֆար Հաջի-Մահամմէտ-խանի մինչև 1803 թուականը, ուր այդ զօրախումբը պէտք էր մնար՝ որպէս բերդապահ զօրք ընդդէմ Ռուսաց յարձակմանը։

Պարսից և Ռուսաց պատերազմը վերջանալէն յետոյ Սպանդիարի-խանը իրեն յանձնուած զօրքովը վերադառնում է Աբաղստան, երբ և Կուլամ-Հիւսէյն-խանը չափահաս դառնալով, ինքն է սկսում կառավարել իւր ընդարձակ նահանգը — Աբաղստան, որպէս նաև մօտ երկուասան գունդ հետեւակ զօրքը։

Յետոյ Մամուչարի-խանը նշանակուելով մարզպան Ասպահանի և միւս երկիրների, կրկին անգամ հրաւիրում է Սպանդիարի-խանը իւր մօտ և նշանակում է նրան այնտեղ իւր շահակիրպ պերճութիւնամբ։ Ախուռասիս, այսինքն Մեաբ-ջան։

Այստեղ փոքր մի զարմացզմենք և պատմենք մէկ անցք, որ թէև ինքն ըստ ինքեան չնչին է, բայց վերաբերում է այն ժամանակի Հայերի ընտանեկան, նահապետական և պարզ ու բարոյական կեանքին։ Թիֆլիսը աւերելէն առաջ, Սպանդիարի հայրը եղբօրց հետ բաժանուելիս մնում է իւր երկ եղբօրը պարտական հարիւր թուման Թիֆլիսի գրամ, և վճարած իւր պարտքը՝ նրա հայրը մեռնում է։ Սպանդիարի այրի մայրը զինի ժամանակաց լսում է որ՝ իւր Պարսկաստան գերի վարուած որդին կենդանի է և կարողութեան տէր, վանդոյց գրում է նրան թէ՝ հայրդ որ հարիւր թուման հոգւոյ պարտք է թողել, և դու այժմ ունեցար ես, ուրեմն և պարտաւոր ես նրա պարտքը վճարել, և նրա հոգին ազատել քո հօրեղբօրիցն։ Սպանդիարը պատասխանում է թէ՝ ես մինչև հօրս մուրհակը չտեսնեմ, չեմ վճարիլ ուրեմն թող հօրեղբօրս որդիքը այն մուրհակն ուղարկեն այստեղ, ում վերայ որ կամենան, ես տեսնեմ, միամտամամ և ապա վճարեմ։ Միխայիլ Ամատունին, որ նրա հօրեղբօր որդին էր, 1833 — 1834 թուականներին գնում է Հնդկաստան, որ իւր մօր ազգականների մէկի կողմից մնացած Հնդկաստանի քաղաքների մէկումն ժառանգութիւն ստանայուստի և հետը բերում է այն մուրհակը, որ թէհրանից անցնելիս՝ ցոյց տաց Սպանդիարին և ստանայ նրանից վերոյշեալ գումարը։ Այդ ժամանակ ես Թաւրիզ գնուելով Միխայիլն եկաւ իմ բնակարանումն, մէկ քանի օր կացաւ և ուղեւորուեցաւ Թէհրան, երբ և ցոյց տուեց ինձ այն մուրհակը, որ էր մէկ քառորդ թերի կապուտ թղթի վրայ գրուած, և մէկ քանանաց ու երեք էլ աշխարհական վրացերէն վիմներ ստորագրուած իւրանց կնիքներով կնքած։ Այդպէս, ինչպէս վերջն իմացայ, Սպանդիարը վճարել էր իւր հօր պարտքը և ստացել էր մուրհակը։

Սպանդիար-խանը մնացում է, և թողնում է չորս որդի ~~Ախալար~~ Կասում, Ասկեար և Արբաս խաները։ Երկրորդը ամուսնացած էր Միրզայ-Գուրգէն-խան Լենկորանցի զրաստեր հետ։ Նա ներկայ Նասր-Էդդին-շահի սեռասալնան էր և մեծ կարգուութեան տէր էր։ Նրա հետ մէկ քանի անգամ տեսնուեցայ Միրզայ-Գուրգէն-խանի տանը, որ զարմանալի տէր և եռանդ ունէր հաւատի և կրօնների վերայ խօսելու, որպէս թէ զառանցուած իւր կրօնի մէջ։

1854 թուին, այսինքն մէկ քանի ամիս իմ Թէհրանից դուրս գալէն յետոյ, ինչպէս վերջը լսեցի, նա, Կասում-խանը թողնում է իւր ատաճանը, փառքը, պատիւը, հարստութիւնը, կինը, երեխաները, աշխարհիս ամենայն վայելչութիւնը, մէկ բարի օր՝ դուրս է գալիս իւր տանից, գնում նստում արքունական առջևն եղած մեծ հրապարակի թնդանոթի մօտ, կանչել է տալիս մէկ քանի հարիւր սէրիներ, աղքատներ, կոյրեր, կղերներ, դէվրիշներ, մոլլաներ և չայրիներ, իւր ունեցած չուանեցածը՝ թէ չարժական և թէ անչարժ հարստութիւնը բաշխում է նրանց, և այնտեղ խոյրն կալուածագիրները գրում, կնքում և վկաների էլ կնքել է տալիս, և յանձնում, որոնց բաշխել էր, թողնելով իւր զերդաստանին իւր սեփական տունը, նրա մէջի կայքը և մէկ մեծ արդիւնաւոր գիւղ։ իսկ ինքն անդէն վեր է առնում մէկ գաւազան, հագնում դէվրիշի չորեր, ուսին ձգում մէկ այծի սև մորթի ու հետևակ Թէհրանից դուրս է գալիս գնում դէպի Լօրստան և անտի Հնդկաստան և վերադառնում Մէքքէ մօտ տասը տարի թափառելով։ Այնուհետև իւր զաւակները տեսնելու համար նորից գալիս է Թէհրան, ուսկից կրկին անգամ օտար երկիրներ երթալով անյայտանում է բոլորովին։

ԺԷ։

ԲԷԺԱՆ-ԽԱՆ ԿԱՄ ՀԱՋԻ-ԲԷՋԱՆ-ԽԱՆ ԵՒ ՆՐԱ ՈՐԴԻՆ։

Բէժանը ծնած էր Դրմանիս, որ վրաստանի Սամխէթ (Հայաստան) ասացեալ գաւառի, երբեմն երեսի քաղաք և այժմ աւերակ գիւղ է։ Այս գաւառի դրացի մահմէտականները կալանաւորում են դաշտումը Բէժանը, երբ նա 14—15 տարեկան է լինում, և տանում են Լրեան, ընծայ մատուցանում թագաժառանգ Աբբաս-Միրզային, երբ սա ընդդէմ Թու-

սաց պատերազմելու էր եկած, և նա թուրքացնում է Բէժանին ու պահում իւր դրանը որպէս սենեկապան, այսինքն փիշխամաղ։ Յետոյ նա ստանում է Կուլամ-Ֆիշ-խոտաղութիւնն և ապա խանութիւնն տիտղոսներ, ու նշանակվում է Երբիլի օգնական, Երբիլի փոխանորդ Աղրպատական ինչ ինչ դաւառապետաների և նահանգապետների, և Երբիլի էլ նահանգապետ ևս։ Որպա երկարօրէն և մանրամասնաբար կենսագրութիւնները ժողոված էի, նախ ուրիշներից հարց ու փորձ անելով, և ապա երբ նրա հետ ծանօթացայ, այն ժամանակն իրանից ևս տեղեկացայ։ Նոցանից այսքանը մոխ է որ՝ վերը յիշեցի, և թէ Պարսից և Ռուսաց վերջին պատերազմի ժամանակը Աբբաս-Միրզայի դրանը, նա առաջին կարգի դեր խաղացող անձնաւորութիւններից մէկին է եղած, մինչև այն աստիճան, որ երբ Աբբաս-Միրզան առաքում է Մէհքէթ իւր երկու՝ Երեւլի զերդաստաններից սերուած սիրելի տիկինները, նրանց վերայ վերատեսուչ կամ վերակացու է նշանակում Բէժան-խանը, վասնորոյ և Պարսից պատմութիւնը նրան երբեմն անուանում է Հաջի-Բէժան կամ Բէջան-խան։

Ռուսաց և Պարսից վերջին պատերազմին երբ պարսիկներն ամենայն տեղ խորտակուեցան՝ Աբբաս-Միրզան պատգամաւոր ուղարկեց Թավրիզի Բէգլար-բէգի Ռաչտեցի Ֆաթ-Ալի-խանը որ Երեւլի Հրդայիդ-խանի որդին էր՝ Ռուսաց ընդհանուր զօրավար Պասկեվիչի մօտ, գինադադարման համար, մինչև դաշնադրութեան պայմանների վերջացնելը։ Վերջինս մերժեց նրա առաջարկութիւնը։ Աբբաս-Միրզան այս լուրը հաղորդեց իւր հօրը Ֆաթ-Ալի-շահին, որը թելադրութեամբ Մանուչարխանի, հրամարտակ գրեց Աբբաս-Միրզային կրկնել պատգամախօսութիւնը, և նոյն հրամարտակի լուսանցքի վերայ իւր ձեռքովն ուղարկեց թէ՝ «այս բանախօսութեան համար ընտրէ մեր արդերից (ատրուէներից) հանճարեղ և խելացի մէկը, որ գերի ընկած և մեր ձեռքի տակ մնացած, այժմ փառքի, պատուի և պաշտօնի տէր է եղած»։

Այդ ընտրութիւնն ընկնում է Բէժան-խանի վերայ, որ արդարացրեց շահի նպատակը և թագաժառանգի ընտրութիւնը. վասն զի նա, Բէժանը, կարողացաւ համոզել յաղթող զօրավարը՝ դնալ Դէյխարգան փոքրիկ քաղաքը, որ Թավրիզի և Մարաղայ քաղաքների մէջտեղն է ընկած, և այնտեղ տեսութիւն անել թագաժառանգի հետ, որ գալու էր Արմիից, և երեք առ երես խօսէր հաշտութեան պայմանների մասին։

Շատ հետաքրքրական էին Բէժան-խանի և Պասկեվիչի զրուցատրութիւնները, զորս առաջինը պատմել էր ինձ և ես

գրած էի, և որոնք ոչ Ռուսաց և ոչ Պարսից պատմութիւնների մէջ չեն յիշուած մինչև ցայսօր։

Նրանցից այս առարկայն միայն մտիս է, որ Աբրամ Միրզան յանձնած է Նրան ասել Պասկեվիչին, և տպացուցութիւն բերէր թէ՝ Թավրիզցիք սրանից 100 տարի յառաջ ինչպէս են կոտորել Օսմանցիները, և իբր թէ Թավրիզցիները նոյնպէս այժմ ես դրդեալ մոլեկրօնութեամբ կվարուին Ռուսների հետ։ Պասկեվիչը լսելով այս անցքը, սկսում է սաստիկ ծիծաղել և ասել Բէժան-խանին թէ՝ «Ռուսները այդպիսի աբարմունքից չեն վախենալ, եթէ Պարսիկները սաստիկ կրօնամոլ են, Ռուսներն էլ սաստիկ պատերազմամոլ են։ Այդ ձեր կրօնամոլների դլխաւորն էր Աղայ-Միր-Ֆաթահն, որ այսօր փախած եկած է Ռուսաց պաշտպանութեանն ապաւինած»։

Այս պատերազմը վերջանալէն յետոյ՝ Բէժան-խանը նշանակվում է հրամանատար (հաքիմ) Ղարսոյ, և ապա Արդաբիլի, զէնի Թավրիզի մէջ գահերէց Դիւան-խանէի, երբ և ես ծանօթացայ նրա հետ։ Սա բացի այդ անցքերից, շատ տեղեկութիւններ ես հաղորդեց ինձ, որոնք վերաբերումէին իւր անձնաւորութեանը, իւր գերեկիցներին, բայց աւաղ սրանց մեծ մասը կորան։ Դա հասակով պարթև էր, երկար, թաւ, ես և սաթի նման մորուք ունէր, գեղեցիկ դէմք, ճարտար լեզու, լաւ էլ պարզ։ Երևանի արտաքերութեանը հայերէն էր խօսում, թէև յաճախ թուրքերէն և ապա պարսկերէն բառեր էր խառնում իւր խօսակցութեան մէջ։

1264 Հիջրին (1847) երբ Նասր-Էդդին-շահը գահակալեց, մէկ քանի շաբաթից յետոյ, նա առաքեց Բէժան-խանը Եզդ մարզպանի պաշտօնով, այնուհետև Պարսից պատմութիւնը լռում է նրա մասին։

Վերոյիշեալ տարին Մահամմէտ-շահը զայրանալով իւր անձնական բժիշկ Միրզայ-Նազար-Ալիի վերայ, առաքում է նրան որպէս աքսորած մեռալ Ղում ուխտաւորելուն։ Մէկ քանի ամսից յետոյ շահը վախենում է, և նրա որդի Նասր-Էդդին-շահը գնում է թէհրան գահակալելու համար։ Նազար-Ալի բրժիշկը լսելով Նասր-Էդդինի գնալն թէհրան, առանց հրամանի ետ նազարդուս Ղումից դուրս է գալիս գնում նոր շահին ընդառաջ, որ և բարկանում է և հրամայում է Հասան-խանին, որ էր Բէժան-խանի որդին (այս ժամանակն սա շահի կուրամ-թիֆանկչի էր), կալանաւորէ Նազար-Ալին, և կապանքը վերադարձնէ Ղում և յանձնէ այնտեղի հրամանատարին։

1851 թուին Թավրիզ ես ծանօթացայ այդ Հասան-խանի

հետ, որ էր սարթիփ, այսինքն զորագլուխ։ Սա թարգմանաբար՝ գեղեցկադէմ երիտասարդ էր. մինչեւ ժամանակ քաղաքարարն, մարդասէր, հիւրընկալ, հեզ և գիւրամատոյց քրիստոնեաներին, որ և մեծ ապագայ էր խոստանում։ Բայց յետոյ իւր գունդովը գնաց Թէհրան, որ շահի պալատին և քաղաքին պահապան լինի. երբ և նրա գունդի մէջ նեխեալ անկոյ է վարակվում, և նա անզգուշութեամբ ել և մուտ անելով հիւանդների մէջ. ինքն էլ վարակվում է և այդ հիւանդութիւնով էլ մեռնում։

Ժ.

ԱԼԼԱՀ-ՎԵՐԴԻ-ԲԵԳ ՄՕՀԲԴԱՐ, ԱՅՍԻՆՔՆ ԿՆՔԱՊԱՀ ԵՒ ՆՐԱ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ—ԳՆԴԱՊԵՏ (ՍԷՐՀԷՆԴ) ՄԼՀՏԻԹԱՆ ԵՒ ԸՐԶԱՑ-ԿՈՒԼԻ-ԹԱՆ ԿՈՒԼԱՄ ԹԱՍ։

Ինչպէս Մէհտի-խանը պատմում էր, այս երեք եղբայրները 1806—1807 թուականին պէտք է գերի վարուած լինին, երբ նրանց հայրը փախճանուած էր, և սրանք իրենց գեղից Զանգի-Զօր Ղարաբաղի վիճակում, փոքր ինչ հեռի իրանց վարելիանոցը ակուած միջոցին։ Գերեվարները լինում են հինգ-վեց հոգի. Ահաւ քաղաքի խանի ծառաները, որոնք իրանց մեծի հրամանով եկած են լինում մարդիկ օրապ, որպէս զի միւս ընծաների հետ մէկ քանի բանական ընծաներ ևս ձեռք բերեն և առաքեն իրանց մեծամեծ պաշտօնատարներին պաշտօն կամ տեղ ճարեն։ Խանը՝ այդ երեք մանուկները առ ժամանակ պահելով իւր տանը՝ թրփատել է տալիս, ուղարկում է բաղնիք, նրանց գլուխը, մազերը, ձեռները, ոտները հինով ներկել է տալիս, նոր չորեր հագցնում, և ապա տեսնում է նրանց երեքն Ալլահ-Վերդին (որի մկրտութեան անունը լինում է Աստուած) ասելի գեղեցիկ դէմք ունի, հեզ է և խնամաբ, և յարմար սպասաւորութեան, վասնզոյց նրան պահում է, իսկ միւս երկուսը, այսինքն Մէհտին՝ որի ուսագանի անունը լինում է Մկրտում, և Թաշ-Կուլին (Գրիգոր անունով) առաքում է Կազվին՝ վաճառեն, և նրանց գնովը ընծայացու իրեղէններ առնեն բերեն, որ հետը տանէ Թաւրիզ։ Այդ խանը իրանց տարելանին, այսինքն Նաւրուզին գնալով Թաւրիզ, պաշտօն ձեռք բերելոյ համար, միւս իրերի հետ ընծայում է և Ալլահ-Վերդին՝

պատանի Մահամմէտ-Միրզային (որ յետոյ շահ եղաւ), Ալլահ-վերդի իւր արքայորդի պատանի տիրոջ քոլը զարկելու

նս և վեսեմ տիտղոսներ, բայց նա բէգ համեստ տիտղոսը ամենից նախադասեց։ Նա ոչ մէկ տեղ հիւր կերթար, և ոչ էլ իւր տանը հիւր կընդունէր, բացի աղքատներէ. մէսջիթը (այն էլ ուրբաթից ուրբաթ կամ օր օրը չտնը մէսջիթ կերթար) և իւր տանը, ուրիշ տեղ չէիր կարող նրան տեսնել։ Պատիկ կրօնասէր էր, երբէք աղօթելոյ ժամանակը չէր մոռանում։ Այս համար Մէհմէտ-խանի հետ մէկ օր խօսելիս, նա ասաց ինձ թէ «Ալլահ-Վերդի եղբայրս, պէտք է հետեւել իւր մեծին— չտնի ընտրութեանը, չտնը սիրում է կրօնասէր մարդ, նա ես պարտաւոր է կրօնասէր երեւիլ։ Իսկ ինքը, Մէհմէտ-խանը՝ մեծացած լինելով ռուսների մէջ, երբէք կրօնասիրութեան նշան չունէր, և գինի ու օղի կը խմէր, որպէս քրիստոնեայ, առանց արբենալու։ Սամսոն-խանը Յարութեան կամ Զօրմնեանց օրերը չատ անգամ կդար Հայոց եկեղեցին, միշտ նրա հետ կը լինէր և Մէհմէտ-խանը, որ գդակը վեր կառնէր արամչինով կը կանգնէր, որպէս զի հարբուխով չմրսանդանար։ Մէկ անգամ նա ասաց ինձ Զօրմնեանց հանդիսին թէ «այս քշոցները, ծնծղաները, առաք փառաք զգեստաւորուած վակասուած եպիսկոպոսը, չուրջառուած քահանաները, ժամաւոր՝ սարքացուները, գաղիները, ճաղերը, լուսաւորուած մոմակալները, երգով, նուագով մեռոն (դիմէ) թափելը կոնքի մէջ և խաչ հանելը ջրից, այնքան ինձ հրապուրած են, որ եթէ իմանայի մուսուլմանները չեն սպանիլ ինձ, կվերադառնայի իմ հայրենական կրօնին։

Մահամմէտ-չտնի թագաւորութեան սկզբում, այսինքն 1251 Հիջրին (1853) պատահած անցքերի մէջ երեւելին է նրա խեղդել տալն իւր Պարտ-աղէմ Միրզայ-Վերդ-Կասում վերակոչեալն Կայիմգամ, որն որ մտադիր էր գահավիժել Կաջարական հարստութիւնը և ինքը գահակալել, որպէս չառաւելեալ պարարայի մարգարէի սերունդից ճշմարիտ ժառանգ թագաւորութեան։ Այս տարաբախտ անցքի մէջ, ըստ ասութեան Կաջարների պատմութեան, երեւելի դեր խաղացողը լինում է Ալլահ-Վերդի-բէգը, ուրեմն համառօտապէս պատմենք ասա։

Շատն արդէն հասկացել էր Կայիմգամի չար խորհուրդը, բայց երկիւղ էր կրում վատահանալ և յայտնել ումեք, քանզի նա որպէս սէիդ, սուրբ անձն էր, և չէր կարելի նրան ձեռնամուխ լինելը։ Իրանի մէջ սէիդները կազմում են քաղաքների բոլոր բնակիչների հինգ կամ վեցերորդ մասից մէկը, ապա-քէն նրանք երբ ոտի վրայ են կանգնել, չատ էլ խռովութիւններ են յուզած, որոնց առջեւ տէրութիւնն ու զօրքն անգամ չեն կարողացել նրանց զսպել, վատորայ և նոր գահակալող

չանը երկար մտածելէն և մտքումը որոճելէն յետոյ, վստահանալով Ալլահ-Վերդի-բէգի անձնանուիրութեան և խորհրդապահութեան, ամենից առաջ իւր սրտի գաղտնիքը նրան է յայտնում, և միասին խորհում են Հնգէկ ոնչարդնեն, կորցնեն Կայիմգամն, որի արքանեակները, Թէհրան գտնուող պրոտարյոյ և վայրայած սէիդները՝ չկարողանան զրգռել ժողովուրդը և խառնուրդիւն յարուցանել։

Շահը հետևեալ օրը՝ առաւօտը չատ կանուխ զրօսնելոյ պատրաստակաւ ձիաւորվում և գնում է չրջելու Թէհրանից դուրս, և ճանապարհից մարդ է ուղարկում ասել անտեսին իւր նախահաճիին ու ընթրիքը պատրաստուին Նրդարատան ասած այգիի պալատում, և թէ մոռացիր է անդէն մնալ ամաչափ։ Վերադառնալիս Նրդարատան (որ ժամաչափ ճանապարհ բացակայ է Թէհրանից) ուրիշ թիմնապան է առաքում Թէհրան և ասպարում Կայիմգամին, որ նա գայ Նրդարատան և հետը բերէ այս և այն պաշտօնական թղթակցութիւնները։

Երբ շահը ժամանում է այգին, մտնում պալատը, կանչել է տալիս Կասում-խան Կուլար-աղասին, (անձնապահ հեծելազորքի գլխաւոր) և հրամայում է որ՝ բոլոր կուլիր ներկայ և պատրաստ լինին այգիից դուրս, և երբ Կայիմգամը կգայ, կը մտնէ այգին, այն ժամանակ գոցել տայ այգիի դռները, և կուլիրը չրջապատեն այգին, ու այնուհետև ոչ ումեք թոյլ չտան ներսս մտնել։

Եւ ապա կանչում է Միրզայ-Իբրահիմ-խան Փիչ-խոմաղը (ընտրեալ սենեկապետը) և Ալլահ-Վերդի-բէգի ներկայութեանը պատուէրներ է տալիս նրանց, որ միասին սպանեն գործիքները (այսպէս է գրում Կայարների պատմութիւնը) իրանց վրէն կրեն, և վերարկուների տակին այնպէս պահեն, որ չերևան ընդմարուին, իսկ երբ Կայիմգամը կգայ, նրան առաջնորդեն տանեն հասցնեն Դիզ-Գօչադ (ուրախութիւն սրտի) ասած վերին գտակների սենեակումը նստացնեն, և յետոյ ասեն նրան այնտեղ սպասէ մինչև շահի դուրս գալը, և եթէ Կայիմգամն յանդգնի չնստանցիլ և չգնալ այն սենեակը, իսկոյն նրան սրախողխող անեն և այլն. և ինքը շահը մտնում է կանոնցը։

Մինչ այս՝ մինչ այն, ժամանում է Կայիմգամն մեծ բազմութեամբ ուղղորդիների, և միայն մէկ ծառայի հետ, ինչպէս սովորութիւն էր, մտնում է այգին, որի դուռն իսկոյն գոցվում է. իսկ նա մինչև հասնում է պալատը, նրան ոչ որ չէ պատահում, ներս է մտնում պալատը, երրորդ սենեակում նրան հանդիպում է Ալլահ-Վերդի-բէգը, որից նա հարցնում է

թէ, «Շահն [1]) ծր սենեակումն է բաղմած», Նա պատասխանում է թէ, «Շահն իսկոյն ՀՈՐՏ տարաւ կանանոցը, և հրամայեց թէ, երբ Կայիմքամն գայ, ապասէ մինչև իմ դուրս գալը, ուրեմն գնանք մէկ սենեակում նստինք մինչև նոցա դուրս գալը»։ Միւս սենեակիցն դուրս է գալիս և Միրզայ-Թահիմն, և միասին նրան առաջնորդում են վերի դասակնոջը Դիլ-Գօշող սենեակը, Կայիմքամը աստիճանները բարձրանալիս հարցնում է սմիթէ վարը ուրիշ սենեակ չկայ, որ մէկ էլ ծեր մարդուս նեղութիւն տուիք բարձրանալ վերին դասակիները։ Ալլահ-Վերդին պատասխանում է թէ «մենք էլ նոր եկանք, ներքևի սենեակները դեռ ես մաքրած չենք։ Երբ մտնում են Դիլ-Գօշող սենեակը՝ Կայիմքամն ըստ իւր սովորութեան բազմում է իւր տեղը, ուր միշտ կը նստէր. իսկ Ալլահ-Վերդին և Թահիմը մեծ յարգանքով ներսի կողմից դռան առջևը աջ և ձախակողմ վերայ կանգնում են։ Կայիմքամն հրաւիրում է նրանց նստիլ, որպէս սովորութիւն էր, երբ նա, Կայիմքամն միայնակ լինէր, նրանք ևս կը նստէին. բայց այժմ հաստատեցին, թերևս որպէս հաւանական է, եթէ նստէին, նրանց գաղած զէնքերը կմատնէին նրանց։ Երբ նա երկար սպասում է և չարը դուրս չէ գալիս (ըստ սասութեան Մէհտիխանի, որ լսել էր իւր եղբօրից) նրա դէմքի վերայ մէկ կասկածանքի նշոյլ է նշմարվում, քանզի տարադէպ անցք էր. վանտոպայ յուզուած նայում է նրանց երեսին և գլուխը խոնարհացնում, քանզի տեսնում է որ այն մարդիկը, որոնք միշտ առանց իւր հրաւիրելոյ՝ իւր մօտը կրազմէին, իսկ այժմ հրաւիրեց ևս դարձեալ չբազմեցին, և կամ թէ թերևս նշմարեց որ նրանք իրանց հանդերձների տակից զէնքեր էին կրած, որ տարադէպ բան էր։ Ջիմրդ և իբդ. Կայիմքամն գլուխը խոնարհացրած բաւական ժամանակ մտատանջութեան մէջ խորասուզուած մնում է, և ապա գլուխը համբառնալով ասում է, «իմացայ ասելք չահին իմ գալը, զուցէ նոքա չգիտեն որ ես արդէն այստեղ եմ»։ Ալլահ-Վերդին պատասխանում է թէ, «ըստ որում նոքա հրամայեցին որ «երբ Կայիմքամն գայ, ապասէ մինչև իմ կանանոցից դուրս գալս, ուրեմն կրկին հարց ու պատասխան անելով՝ առիթ չտանք նոցա բարկութեան»։ Կայիմքամը դարձեալ մտատանջուել սկսաւ և յետոյ կրկնում է թէ «ես թէ Հրան ամենահարկաւոր գործեր ու-

[1]) Բրբուներում քիչ անգ Շահ կանանոցի պարսից թագուորը, ՈՒԼ. Փէտ «Կպլէի-Ալէմ», իսկ մեր այսուհետև կանանութեան համար շահ կը գրենք, և ոչ «Կպլէի-Ալէմ», որ «Աղօթարան աշխարհի» կը նշանակէ։

նիմ, գոնէ խմացուն տուէք շահին, որ եթէ կրկին ուշանայ, հրամայէ ես գնամ գործերս աւարտեմ, և փութով վերադառնամ։ Նայում է նա որ նոցանից ոչ մէկը չպատասխանեց ինքնան, չարժում է տեղից, որ յառնէ և դուրս գնայ, Ալլահ-վերդին ասում է «Շահի հրամանն է որ այստեղ սպասէք մինչև.....»։ Կայիմքամին ընդհատում է նրա խօսքն և ասում «ուրեմն ես բանտարկուած եմ այստեղ»։ Ալլահ-վերդին և Բահլին փոխանակ պատասխանելոյ, գլխները խոնարհեցրած՝ ամբ են քաշում և յարձակվում նրա վերայ.....։ Մէկ քառորդ ժամից յետոյ Կայիմքամի դիակը բարձով խեղդուած վարի դատարանի սենեակների մէկի մէջ անշունչ գրած էր, և նրա մէկ սպասաւորը ուրիշ սենեակում շղթաներով կապկանդուած կար։

Միենոյն օրը երեկոյեան պահին մէկ մարդ արքունիքից լուր է բերում յայտնում Կայիմքամի հարիւրաւոր ծառաներին և ուղևորիչներին, որոնք այդիից դուրս սպասում էին նրան թէ նորա բոլորը վերադառնան Թէհրան, որովհետև նա մնայոց է այն գիշերը շահի արքունիքումն ինչ ինչ հարիւրաւոր թղթակցութիւններ գրելու և աւարտելու համար։ Նորա մարդիկը մտքնն էր որ հասնում են Թէհրան. ուստի այդ տխուր անցքի մասին ոչինչ լուր քաղաքի մէջ չէ տարածվում. իսկ հետևեալ օրը նրա մարդիկը վերստին գալիս են Դիզարատան, և երեկուայ միենոյն խօսքերը լսելով վերադառնում են Թէհրան։ Այնուհետև զանազան լուրեր են տարածվում քաղաքի մէջ, ոմանք ասում են բանտարկուած է Կայիմքամին, այլք թէ հիւանդացել է, ոմանք թէ՝ ըստ որում նա սէիդ է, վասնզոյց և շահը հրամայել է նրա ոտները ֆալակով ծեծեն, և թէ շահն ինքն է նրա ոտները ճիպոտով ծեծել և այլն, և այլն։ Օրը, ժամն ու բոպէն կերպ կերպ լուրեր են տարածվում. Շահն էլ ի հարկէ լրտեսներ ունենալով Թէհրան, դիտութեամբ զանազան լուրեր էին տարածում, ժողովրդի և սէիդների կարծիքները իմանալ և հաղորդել շահին, որ նկատելով ժողովրդի կողմից ոչ ինչ համակրութիւն չծագեց դէպի Կայիմքամին, ուստի վերջերդը օրը նրա դիակը առաքեցաւ Շահարդը։ ազիմ ուխտատեղին, որ այնտեղ թաղեն։ Թէև կաֆարների պատմութիւնը գրում է վերջերդը օրը Նրան խեղդեցին, այլ դա անշիմն է, և շահի համբաւը պաշպանելոյ համար էր։

Ալլահ-վերդին վարեց իւր պաշտօնը ամենայն հաւատարմութեամբ մինչև իւր մահը, որ պատահեց 1846—1847 թուականում։ Նա թողեց երկու աղջիկ, որոնցից մէկին ամուսնացաւ Մէհտի-խանի և մէնա Բգայ-Կուլի-խանի որդիների հետ։

Մէհտի-խանը պատմում էր թէ «ես չատ յոգնեցի, ինդրեցի և ստիպեցի ես, որ եղբայրս Ալլահ-վէրդին, ուրիշ մէկ մէջ էր առել, որպէս զի նրանցից գոնէ մէկ արու զաւակ ծնէր։ Նա պատասխանեց թէ, ես իմ հայրական կրօնը թողի, ուրացայ, բայց նրա մէկ օրէնքն (չարիքն) պէտք է պահպանեմ, որքան կենդանի եմ, այն է, սիմանութիւնը։

Խորասանի արշաւանաց ժամանակ հրամանատարն էր Համզայ-Միրզայ շահզադան, և Սամսոն-խան սարդիվին էլ Բրնարան զունդովն այնտեղ էր, և որպէս յիշած ենք, այդ զունդի զունդապետն էլ Մէհտի-խանն էր։ Խորասանը գրգռամբ Սըհար-Սալարի ապստամբվում է, և երբ Սամսոն-խանը վախճանվում է և նրա տեղը մնում է Մէհտի-խանը, այդ ժամանակ ապստամբների վերայ յարձակումներում և խաղացնելում թէ և Մէհտի-խանը երևելի քաջութիւններով հանդիսանում է, բայց նա առանց արքունիքի հրամանով չէր կարող սարդիվութեան, այսինքն զօրավարութեան ասպնձանը ստանալ, վասնորոյ և Համզայ-Միրզան ներկայացնում է արքունիքին, որ չնորհեն նրան այդ ասպնձանը և ոսնիկը։ իսկ արքունիքը խառնէր, քանզի Նասր-էդդին-շահը նոր գահակալած, ամէն կողմից ապստամբութիւններ ծագած, մանաւանդ Բաբի ասած ազանդաւորների խռովութիւնները, մինչդեռ ժամանակ և Միրզայ-Թաղի Ամիր-Նիզամի (որ սաղրասազմութեան պաշտօնն էր կատարում) անկանելը, սպանուելը և այլն, և այլն։ Համզայ-Միրզայի ներկայացնելն Մէհտի-խանի սարդիվութեան մասին, մնացել էր Թէհրան անկատար։ Բայց խոցանէ Համզայ-Միրզան տեսնելով ապստամբները ճանապարհներին իւր թիմակցութիւններն ըմբռնում են, վասնորոյ կամենալով որ առաջել Թէհրան, որ տերանցի պատմէր շահին այնտեղի անցքերը, ապաքէն հարկաւոր էր այդ մասին ընտրել մէկը, որ ակամտես լինէր և տեղեակ խորասանի անցքերին։ Նա նշանակում է Մէհտի-խանը, որ բացի վերոյիշեալ ծառայութիւնից, կարդանաւոր աշխատել ստանալ իւր նոր պաշտօնը, որի մասին ինքն միմնորդել էր արքունիքի առջեւը։

Մէհտի-խանը չատ տաղնապով իրրև սուրհանդակ անվանգ զալիս հասնում է Թէհրան, ներկայանում շահին, հաղորդում է նրան խորասանի հանգամանքները և մանրամասնաբար պատմում, որի մասին չատ չատ զոհ լինելով խոստանում է կատարել Համզայ-Միրզայի խնդիրը նրա սարդիվութեան մասին և փութով վերադարձնել նրան խորասան։ Բայց Մէհտի-խանը տարաբախտաբար անգզուշութեամբ երկրորդ օրը գնում է բարձիք, դուրս է գալիս այնտեղից անգզու-

չութեամբ քնում և մրսում, ու եօթներորդ օրը հարիւք ասա-
ցեալ ախտովը մեռնում։

Իսկ Բզայ-Կուլի-խանը նոյնպէս իւր մտերիմ ծառայու-
թեան համար Նասր-Նդղին-չահից ստանում է Կուլամ-խան,
այսինքն ընտրեալ թիկնապահի պաշտօնը, և Մէհտի-խանի
մահուանից երկու տարի յետոյ սա ևս մեռնում է թէհրան։

Ի.

ԱՂԱՋԱՆ-ԽԱՆ ՍԷՐՀԷՆԴ· ԱՑՍԻՆԵՐՆ ԴՆԴԱՊԵՏ·

Աղաջանի անունը երեխայութիւնից հէնց եղած է Աղա-
ջան, սա իւր ինը կամ 10 տարեկան հասակին գերի է ընկ-
նում Ղափանի, այսինքն Կապանի գեղերի մէկի մօտ, որուն
տանում են Ենգի-մուսուլման կամ Բրնադրան գունդի գնդա-
պետ Միրզայ-Ամէտի կանանցին։ Սերտահատ լի-
նելէն յետոյ Միրզայ-Ամէտը մէկ քանի տարի էլ իրան սպա-
սաւորի նման է պահում, ու գրել է տալիս իւր գունդի մէջ
իբրև սոսկան զօրական, որով և փոքր ի շատէ իւր ծառայա-
կիցներից առաւելն է սովորում։ Մինչդեռ ժամանակ երկար
բազմատրձիգ գործունէութեամբ իւր զինուորակիցներից աւելի
հմտանում է զինուորական արուեստին և կրթութեան, բայց
ափսոս որ այն բարոյական յատկութիւններից, որոնք կպատ-
կանէին այն ժամանակ մէկ սպայի զուրկ էր։ Նա աւելի չը-
ռայլ էր, սաստիկ թուղթ կխաղար, յայտնի գինի կը խմէր,
բայց նամազը (աղօթքը) ճիշտ իւր ժամանակին կկատարէր,
և կասէր, կեղծաւորութեամբ եմ կատարում։ Արդարև, շատ
անգամ քաջութեամբ պատերազմներում հանդիսացել էր և
ստացել սպայութեան աստիճան, այստեղ ամենայնիւ տասնեվինգ
տարուն հաւիւ հաղ հասել էր եաւարութեան (մայորութեան)
աստիճանին։ Նա կարծենար թէ, իրանի մէջ ոչ մէկ սպայ
չկայ, որ նրա նման սոսկական զինուորականութիւնից սկսած
մինչև եաւարութեան աստիճանը ամենայն շքանշաններ կար-
գով ստացած լինի։ Բրնադրան գունդի գնդապետ Մէհտի-
խանը, որի մասին անցեալ գլխումը խօսեցինք, մեռնելէն յե-
տոյ, Աղաջանն ստանում է գնդապետութիւն և խանութիւն
ու շուտով ինքն էլ մէկ տարից յետոյ մեռնում է։

Աղաջան-խանը ոչ մէկ լեզուով կարդալ գրել չգիտէր, սա-
կայն զարմանալի սուր յիշողութիւն ունէր։ Նա խօսուն պատ-
մութեան պէս ոչ միայն իրանց գնդի սուրին ծառայողների,

այլ և բարձր աստիճանաւորների անուններն ու աղդանունները, որ գեղացի ու որ ցեղից (իլաթից) լինելը կպատմէր. որպէս նաև նոցա բարքը, վարքը և արած գործերը ճշտութեամբ կը նկարագրէր. Բաւական չհամարելով այս ամենը՝ շատ երեւելի անցքերի տարեթիւները, ամսաթիւները, որ օր ինչ պատահածը, մինչև անգամ առաւօտեան թէ կէսօրից յետոյ հանդիպածը կասէր տեղն ի տեղը. Դիցուք թէ՝ այս ամենը իրանց ղեղի վերաբերելով կպատմէր, բայց զարմանալին այս է որ նա գիտէր նաև թէ այս կամ այն երեւելի անձը երբ, և ինչ պաշտօն է կատարել, որ տեղացի է եղած, ինչ գործ է կատարած և ինչ ցեղից է. Մեռելթեամբ Աղաջան-խանը զուարճախօս, կատակասէր և երգիծարան էր. ուստի երբ կսկսէր զրգիծարանել, կատակել, ինքը ոչ միայն չէր խնդար, այլ և իւր շրթանց վերայ ժպիտ անգամ չէր ցուցնէր, որպէս աւելի հանոյ ու զուարճալի կլինէին նրա կատակներն ու երգիծաբանութիւնները. Նա չէր վերայ անգամ կատակներ ու զուարճալի վէպեր կը հնարէր, և ոչ օրից էլ այս մասին երկիւղ չէր կրեր, չատ անգամ էլ իւր ստեղծած և հնարած կատակները կասէր այն մարդու երեսին, որի վերայ հնարել էր. Շատը դեռ ևս չչահացած լսած էր և անձամբ կճանաչէր Աղաջանն իրրև ծիծաղաշարժ կատակող, երբ նա էլ դեռ ևս հասարակ սպայ է լինում.

Կանուն է Իրանում, որ ամենայն զօրաղլուխ թէհրան հասնելիս, իւր ստորադրեալ աստիճանաւորներով ներկայացայ նախ սադրասդէմին, կնստուցանէ աստիճանաւորների անունների ցուցակը, և հետեւեալ օրը սադրասդէմը կգայ կը-նայէ զօրքը, իսկ երրորդ կամ չորրորդ օրը չէնը կգայ զօրքը տեսնելու. Մէկ անգամ Մամպոն-խանը իւր Բրնադրան զունդովը ժամանում է թէհրան ու ներկայանում է Հաջի-Միրզայ-Աղասիին, որ սադրասդէմն պաշտօն էր կատարում. Հաջին սկսում է ցուցակը կարդալ, և երբ հասնում է Աղաջան-բէգ եավարի անուանը, «Մամպոն-խան, հարցնում է նա, որն է, ոստանից Աղաջան բէգը»։ Մինչև Մամպոնի ցոյց տալը, Աղաջանը չարքից դուրս է գալիս, ձեռը դնում ճակատին և ասում թէ «Աղա, քո գլխի վերայ երդվում եմ, որ քեզ վերայ մէյայն մէկ անգամ եմ հաջվ (այսինքն կատակ, ծիծաղաշարժ բան) ասած»։ Հաջին խնդալով պատասխանում է թէ «եթէ երկու անգամ ասած լինէիր, այսօր ինձանից մէկ քէշմիրի շալ խլիլ կտանայիր»։ Աղաջանը կրկնում է «Աղա, ուրեմն յոյս ունեմ որ վաղը շալս կտանամ»։

Շատը երկու կամ երեք օր անցած գալիս է զունդին

նայելու, Հաֆի-Միրզայ-Ազասին էլ հետը։ Երբ շանը գնում, հեռանում է, Հաֆին կանչում է սպաներին ինչ ինչ հարցեր առաջարկել նրանց կամ տեղեկանալ Սամսոնի խանից։ Այս բոլորին Ազաֆանի կերպարանքը երևում է Հաֆիին, որ հրամայում է մտանալ և ասել «Էր. Եավվար, պալատականների վերայ սկսել ես երգիծաբանութիւններ ստեղծել։» Նա պատասխանում է, «Ազան, ստեղծել եմ, վասնզորս և խոստացել են մէկ մէկ շալ պարգևել ինձ, բայց չեն տալիս, պատճառ բերելով թէ՝ մինչև Ազան (այսպէս կանչում Հաֆիին) քո շալը չտայ, մենք ես չենք տալ։» Հաֆին հարցնում է թէ «մինթէ իմ վերայ երկրորդ երգիծաբանութիւն ես հնարեցիր։» Ազաֆանը պատասխանում է թէ՝ «այո հնարել եմ և բոլոր թէհրանն էլ լսել է, զարմանք է որ դատարկաղօրտները դեռ ես քեզ չեն հասցրել. ձեր ականջին ուրեմն ես հասցնեմ։ Առաջին օրը՝ երբ ներկայացանք ձեզ, ի հարկէ չէք մոռացել որ՝ հրամայեցիք և մարդ ես տուիք որ առաջնորդէ զվանգանոխանը, տանի ցոյց տայ ձեր ձուլել տուած թնդանօթները, ես ես, ձեր խոնարհ ծառան, նրա հետ գնացի։ Մաքիա չէ, ով էր այնտեղ, որ հարցրեց թէ, արդեօք Ազան այսքան անթիւ թընդանօթներ որ ձուլել է տալիս ինչ պէտք է անէ։ Ես պատասխանեցի թէ՝ Ատուած ողորմութիւն անէ Իրանին, որ Ազային երեսուն տարի էլ կեանք շնորհէ, այնուհետև Իրանի զօրականներին (սարբազներին) այլ ես հարկաւոր չէ մինելու հրացաններ կրել ուսերի վերայ։ Միւսը ասաց, հրացան չկրենն, ինչ պէտք է կրենն։ «Ես կրկնեցի պատասխանս թէ, այսքան թընդանօթները տեսնում ես, այն ժամանակ իբաքանչիւր զօրական մէկ մէկ թնդանօթ կը կրէ իւր ուսերի վերայ։»։ Հաֆին այստեղ սկսում է ծիծաղել և ասել «փսոֆ փսոֆ, մարդան քեզ, Ազաֆան-բէգ, ճշմարիտ ես խօսացիր։ Շուտ է գալիս հրամայում իւր հանդերձապետին որ մէկ շալ թէրայ պարգևէ Ազաֆան-բէգին։

Մուսուլմանների շարիաթով (հոգևորական օրէնքով) մէկն որ նամազ (աղօթք) անում ընդ, եթէ թշնամին սուրը ձեռքին վրայ հասնէ սպանել, աղօթողը չպիտի ընդհատէ իւր աղօթքը, այլ պարտաւոր է շարունակել։ Մահմամեդ-շանը զրո-

---

[1]) Հաֆի Միրզայ-Ազասին շատ կը սիրէր լսել իւր ձուլել տուած թընդանօթների վերայ զրվանանութիւններ. ուստի և ի՛նչ երբոպացի որ թէհրան գար, ներկայանար նրան, նա կտրիչի նրան գնալ տանել և շատ անգամ էլ ինչը կառաջնորդէր նրանց այն գործարանը, ուր կը ձուլուէր թնդանօթները, և նա համոզուած էր, որ բոլորը աշխարհումն ամենամի ձուլարան չկար, և այնքան թնդանօթներ էլ ոչ մէկ թագաւորութիւն չունէր։

սանքից վերադառնալիս՝ գինուորական մօտից անցնելիս, անակնկալ մտնում է զօրականը, որի կենդրոնում մեծ հրապարակ կայ։ Այդ մէջտեղն Աղաջանը կիսատ թողնելով իւր նամակը, ակռը կռնելով վազում է թուրը կապում մէջքին ու գնում կանգնում զօրականների չարքում։ Երբ չարը մօտենում է, Աղաջանը ակռը կռնելով թուրը մերկացնում է և չարին պատիւ տալիս։ Շարը մէկ կողմից բաւական է լինում զօրականների խստութեամբ բարեկարգութիւնը պահպանելոյ մասին. միւս կողմից՝ չկամենալով անարարեր մնալ դէպի չարքիթը, և ցոյց տալ զօրականներին, որ ինքը չարգում է չարիթը, մօտենում է Աղաջանին ու ասում թէ «Եալար, նամազդ ընդհատելով՝ քեզ վերայ բարկացրիր սրբազան մարգարէն, ուրեմն պէտք է քաղես յանցանքդ»։ Աղաջանը պատասխանում է «Աղօթարան Աշխարհի, դիւրին է սրբազան (Ջնար) մարգարէի բարկութիւնը մեղմել, բայց մեզ այն մարդոյն որ կրաւկացնէ Աշխարհի Աղօթարանը, որիցն Աստուած ինձ ձեր ոտաց փոշիցն, հեռի պահէ»։ Այս խօսքին մէկ ժամ չանցած՝ Աղաջան-բէգն ստանում է չարից մէկ շաբաթ կիսամուչտակ (թիւրէչէ) պարգև։

Սովորութիւն է կրանում որ նոմրուզին (տարեմտին) ամենայն երեկի անձնատրութիւններ կղան չարի ատենում կնեկայանան, առ ի շնորհաւորել նրա նոմրուզը, և նրա ձեռքից ստանալ Շա-աշրաֆի անուանեալ ոսկէ և արծաթէ շահանցներ։ Զինուորականներից՝ եաւարի ատենից ստորին ատիճանաւոր չէ կարող այն օրը այն ատենումն ներկայանալ։ Մէկ նոմրուզի օր չարը դեռ ևս դուրս չեկած ատեանը, արարողաւորը բերում է մէկ ոտեղ դէպքով և կարճատատակ եաւարը, որ Աղաջան-բէգից բարձր կանգնացնէ։ Աղաջանը թոյլ չէ տալիս ասելով թէ «Այդ պարոնը հարիւ թէ մէկ տարի է որ եաւարութեան ատիճան է ստացել, ինչպէս կնամարձակի տատնեմնիզ տարուայ եաւարի վերայ բարձր կանգնիլ»։ Արարողաւորն Աղաջանի ականջում փսփսում է թէ «Ընդրեմ թոյլ տաս, որովհետև նա այս ինչ չահագրգիռ անեղծացն է, ուրեմն պիտի պատուենք»։ Աղաջանը բարձր ձայնով պատասխանում է «Պատուն էլ ազգական և անբանների թագաւորին—առիւծին, բայց արդը երբէք չէ պատվում պատուենինչ է, կամենում ես որ ես արդիցն էլ պակաս լինիմ»։

Աղաջան-խանը հարիւ թէ չորս տարի գնդապետութեան ատիճանը ստացած էր՝ որ մնաւ, թողնելով երկու արուզաւակներ։

ԻԱ·

ՆՈՐ-ՋՈՒՂԱՑԵՑԻ ՊԱՐՈՆ ՈՍԿԱՆ ՍԱՄՈՒՐԻ ԵՒ ՀԱՄԱԴԱՆՑԻ ՎԵՐԱԲՆԱԿԵԱԼ ԹԱՎՐԻԶ՝ ՄԱՀՏԵՍԻ ՑՈՎՀԱՆՆԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ· ՈՐ ԷՐ ՔԻԻՐՔՋԻ-ԲԱՇԻ ԹԱՎԱՀԱՌԱՆԳԻ ՊԱՐՍԻՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՄԼՋ·

Պարսկաստանը հաղնելու ազնիւ մտադրէնները կստանար Թուստատանէից· Պարսիկները հանմտատ Մահմէտական չարիա թի, որն մինչև ցայսօր գոյութիւն ունի, չեն կարող քրիստոնէի ձեռից գնած կամ ստացած մտադրէնները կրել կամ հագնել, թէև շահերը, արքայազունները և շատ մեծամեծ մարդիկ, մանաւանդ նրանց կնանիքը չէին յարգում այս չարիաթը, բայց մօլլաներն ու բարեպաշտ մուսուլմանները մինչև 1834 թիւը խստութեամբ կպահպանէին այդ օրէնքը· Յիշեալ թուականն սկսեալ մօլլաները հնարեցին կամ գտին մէկ նոր չարիաթ, որով կներուէր մինչև կրօնաւոր մօլլաներին ևս հագնել· Ասենք, ինչպէս է կատարվում այդ նորագիւտ օրէնքը· Որ և իցէ մուսուլման խօսում, վերջացնում է քրիստոնէի հետ գնելի մտադրէնի գինը, և դրսից կանչում է մէկ մշակ, ազքատ կամ մուրացող մուսուլման, խոստանում է նրան մէկ քանի շահի դրամ, որպէս զի նա ձեռք ձեռքի տայ քրիստոնէի հետ և ասէ թէ՝ գնեցի քեզանից այս ինչ մտադրէնը այս ինչ գումար դրամի, և վաճառող քրիստոնեան պատասխանում է միմեանց բառերն թէ վաճառեցի· Յետոյ՝ ազքատ մուսուլման գնողն չուտ է դալիս վաճառում է մուսուլման իսկական գնողին, դրամն վերցնելու ստանում, յանձնում քրիստոնէին և ինքեան խոստացեալ շնչին վարձը ստանում ու թողնում գնում· Այնուհետև իսկական գնողը, վեր է առնում իւր գնած մտադրէնը տանում վաճառում բարեպաշտ և ուղղափառ մուսուլմաններին, որոնց թէև յայտնի է այդ կերպով գնելն քրիստոնէից, այսու ամենայնիւ նա մաքուր և արդար խղճմտանքով կարդանում է գնել, կարել տալ և հագնիլ, ըստ որում վերջի վաճառողն մուսուլման էր· Մինչև վերոյիշեալ թիւն մուշտակակարները վնում էին հայերից միայն, իսկ երբ յիշեալ շա-

բիաթը հնարուեցաւ, այնուհետեւ սակաւ առ սակաւ յառաջ եկին և մուսուլման մուշտակակարներ—տղամարդիկ և կնայնք անգամ, և մուշտակակարութիւնը հայերի ձեռքից իսպառ ընկաւ ու անհետացաւ։ Ահա սոքա համար անցեալ ժամանակները որպէս արքունիքը, նոյնպէս և արտաքոյ թէՀրանի արքայազուններին, կուսակալներն ու նահանգապետները իրանց համար հայ մուշտակակարներ կպահէին։ Արքունիքի մուշտակ կարողները մեծ արտօնութիւն ունէին անուանվել սամուրի կամ սամուրդուզ տիտղոսով, իսկ մնացեալներ ուր և լինէին Քիւրջի-բաշի, սրանք համարվում էին պատուաւոր պաշտօնեաներ, քանզի դիւրամատոյց լինելով չաներին, դշխոներին, արքայազուններին ու մեծամեծներին, յաճախ անգամ ոչ միայն միջնորդ և բարեխօս էին լինում մուսուլմաններին, այլ և մինչև իրանց հայ ազգակիցներին պաշտպան էին հանդիսանում և կարի օգտաւէտ լինում։

Ինչպէս Ասպահանի Նոր-Ջուղայում ծերերը պատմում էին՝ 150 տարուց չափ Կրիգորեանց ազգատոհմի անդամները որոշոց որդի պարապելով չաների գրանը այս արհեստով, ստացած են լինում արտօնութիւն սամուրի կամ սամուրդուզ տիտղոսը կրելու։ Նոյնպէս հաւատում էին թէ մեր առարկայ պարսն Ոսկանը չառափիզած էր այն երեսի պարսն Մանուկ սամուրիի սերունդից, որն 1722 թուին նահատակվել է Ասպահանի Ազուան-Մահմուտ շահից [1]։

Ֆաթ-Ալի-շահը երբ թագաւորում է, Ասպահանից բերել է տալիս թէՀրան պարսն Ոսկանը (որին արդէն իրաբ ծանօթ էր անձամբ) մէկ քանի աշակերտներով։ Դա լինելով հայ տարբ, խոհեմ, ծանրաբարոյ և գրագէտ հայ և պարսկի դպրութեան, նաև սեւաւ, երկար մորուսով (Ֆաթ-Ալին իւր մորուսի նման մորուսները շատ կարէր) փառաւոր կերպարանքով, բարեկազմ, նա մանաւանդ՝ հին պարսկական տարազով մաքուր հագնուող, շուտով գրաւում է երիտասարդ շահի համակրութիւնը, և սկսում է խառնուիլ քաղաքական գործերի մէջ ևս այնչափ, որ նա շատ անգամ շահի բանակի հետ կը շրջէր, ինչպէս կերևի Դանիէլ կաթողիկոս յետագայ կենդանիցը։

1797 թուականին, երբ Աբբաս-Միրզան նշանակվում է ընդհանուր հրամանատար Ադրպատականի, հրամայում է պարսն Ոսկանին, որ իւր փոխ-վարպետներից կամ աշակերտներից մէկ հանեստ, հնուտ իւր արհեստին և բարեխիղճ մուշտա-

---

[1]) Պատմութիւն Զամչեանի, հատոր Գ, երես 732, Վենետիկ, Պատմութիւն Մեծի Թագաւորաց, հատոր Ա, երես 184. Կալկաթա, 1846.

կակաբ ուղարկէ Թավրիզ իւր պալատի համար։ Այդ ընտրութիւնը վիճակվում է համանդանցի Յովհաննէս Ղազարեանին, որ չափազանց մէկը լինելով ընտանեաց տէր, միևնոյն ժամանակ խելացի և ծանրաբարոյ, մեծ համբաւունէր է ստանում որպէս Աբբաս-Միրզայի, նոյնպէս Ատրպատականի բոլոր մեծամեծների մօտ, և ինչպէս ականատեսները պատմում էին, երբ մարդիկն կարելու գործ պատահէր, նա անարդել էլ և մուտ կասէր նրանց կանոնները։ Այս, Յովհաննէսը (որ յետոյ Երուսաղէմ գնաց և եղաւ մահտեսի) պարսն Ղոսանից աւելի բարեյաջող միջոցներ ունէր դիւրանալոյց լինելու արքայորդուն, և չատ անդամ խորհրդակից ևս լինել նրան։ Ատրպատականի մէջ սփռուած հայերի և Ատրպատականի սահմանակից օսմանցիների և ռուսների երկիրների բնակիչ հայերի մասին։ Աբբաս-Միրզան մեծ կարեւորութիւն ունէր տեղեկանալ արտասահմանների մասին պատահած փոփոխութիւններից, անցքերից, լուրերից և վերահասու լինել նրանց զօրքերի արշաւանքի համար պատրաստուելուն, բայց ամենս որ նա, Յովհաննէսը պարտաւոր էր կատարել այդ ամենայն յանձնարարութիւնները ձեռամբ անկիրթ հայ հողագործականների, որոնք և Յովհաննէսի նման անգրագէտներ էին, և չէին կարողանում համապատասխանել նրա նպատակին։ Սորա և պարսն Ղոսանի նամակներից՝ իմ ուշադրած գրառան մէջ մօտ քառասուն նամակներ կային, բոլորն էլ իսկականներ, որոնցից (մէկ քանիսն պատճէններն այժմ ունիմ) երեսում էին Յովհաննէսի գրածներն բոլորն էլ զանազան ձեռագրերով էին և նա ստորագրած էր։ իսկ պարսն Ղոսանի նամականին յոտակ և հրեղկատանի ոճով կամ ձեռագրով գրուած և ստորագրուած։ Վերջնոյս նամակների մեծ մասը գրուած էին Դանիել կարմրիպսի և Ղերսէսի վարդապետութեան և եպիսկոպոսութեան մասնակցները, սկսեալ 1802 թուից մինչև 1825 թուները։ Այդ նամակների մէջ չատ անդամ յիշվում էին կենդանիների, թռչունների և ծառերակների անունները, երբ իրոզութիւնն սկսվում էր մէկ քաղաքականութեան վերաբերեալ անցքի մասին, զորքրնակ, արծիւ, բազէ, կաչաղակ, ագռաւ, կաքաւ, աքաղաղ, հաւ, ճնճղուկ, առիւծ, գայլ, արջ, աղուէս, կատու, մուկ, հրան, փայլածաւ, արուսեակ, արեգակն, լուսին և այլն, և այլն, որոնք ի հարկէ առանց բանալիքի ինձ համար դժուարաբաժանելի, մութ և անհասկանալի էին մնում, և սպասում էի հանդիպիլ մէկ գիտուն անձի, որ նա լուծէր թերեւս։

Թուսաց և Պարսից վերջին պատերազմի դադարութիւնն անելից մէկ քանի օր յետոյ՝ գնդապետ Խան Ղոր-

զանձանը գնում է Թէհրան յանձնարարութեամբ կուսակալ Պասկիէվի, ուր Ծանօթանալով պարոն Ռսանի հետ, անչուչտ Ներսէս արքեպիսկոպոսի միջնորդութեամբ, վանքարոյ և Ռսանը աւանդում է Օրդուբադին իւր երէց որդի Աստուածատուրը, որպէս զի Ներսէս արքեպիսկոպոսն առաքէ Մոսկուա տարց Լազարեանց ճեմարանը, որ այնտեղ սովորի արուեստն լեզուներ։ Այդ պատանին մնաց երկու տարի մեաց Թիֆլիս և յամախսեց Ղերսխանան դպրոցը (ուր սովորում էին և գրիչս), որպէս զի նա փարը ինչ բնութեանս Ռուսաց լեզուին և յետոյ երթայ Մոսկուա։ Բիչ ժամանակից Թիֆլիս բերին նաև Աստուածատրոյ կրտսեր եղբայրը, որում այդ երկու հարազատներ Մոսկուա ուղարկուեցան։ 1834 թ. երբ նա առաջին անգամ գնացի Մոսկուա և հարց ու փորձ արի, տեսցին թէ երկու եղբայրներն էլ անտեղ գտնուելով հիւանդացին խիստ եղանկներին։ Վախճանեցան անտեղ։ Իսկ 1853 թ. երբ նա ուղեւորեցայ Ասպահան, պատմեցին որ Յամբարի պարոն Ռսանի աղջատանմից այժմ Դար-Ջուզայ ոչ որ չէ մնացել, բացի նրա Պողոս եղբօրորդի Սանեմանից, որ գտնուում է Պ.-Պետերբուրգում, ուր և վաճառականութեամբ է պարապում, և մեր Ջուզայեցիներից երբեմն պատանեներս անտեղ, նա պատում է և այլն։

Գաւիթի հարառակաթոռ կաթողիկոսը 1803 թուին Ապրիլի 22-ին գրում է Հնդկաստանի նուիրակ Յակոբ վարդապետին մէկ կնոնակ, որի մէջ ասում է թէ «Զարատակ թուղթանս.... յատուկ մարդով ուղարկեցի տանիլ հասցնել ի Գամբէժ առ տիրելին մեր մատնեան Յովհաննէս ազգաց։ Սա մատնոյն Յովհաննէս Ղազարեանը վարում էր ինչպէս Գանիէլի, նոյնպէս և Գաւիթի հետ անգանազանաբար։

Այստեղ առաջ բերենք մէկ կնոնակի և մէկ քանի նամակների պատճէններ, որոց մէջը կայրելին ոչ միայն վերը գրուած երկու անձնաւորութիւններին վերաբերեալ անցքեր, այլ և ազգային պատմութեան համար նիւթեր, որոնք եթէ այժմ չհրատարակուին, թերևս ժամանակաւ ենթադրուին այն տարաբախտ վիճակին, որին ենթարկուեցան մէկ քանի հազարաւոր ազգային պատմութեան վերաբերեալ նամակներ։ Խնդրում եմ բարի ընթերցողների ներողամտութիւնը նրանց երկար վինելոյ համար։

«Ցիսուսի Քրիստոսի Ծառայ Տէր-Դանիէլ արքեպիսկոպոս [1]) սրբոյ Էջմիածնի և ամենայն Հայոց, որ կապեալս եմ

---

[1]) Պարսից տերութիւնը սասաթիկ արքեպիսկոպոս էր որ Դանիէլը շրջաբերական կոնդակներս։ Այս նամակի հեղինակի վերայ գրուած էր ձեռամբ Դա-

և կամ յուսումն Քրիստոսի, ողջոյն կարօտիւ և սիրոյ մատուցանեմ սիրելի եղբարդդ իմոց, պանդխտելոց Ցեռանդ Գրիգոր, Ցեռանդ Բարսեղ և Ցեռանդ Յովհաննէս արքեպիսկոպոսաց, և Յովհաննէս եպիսկոպոսիդ երջանիկ և որք ընդ քեզ են եպիսկոպոսուն, և Ցեռանդ Աբրահամ և Դերսէս Աստուածիմաստ վարդապետացդ և որք ընդ ձեզ են..... ի Սեպտեմբերի 19 գաղարեցայ ի Թավրէզ ի տան մահտեսի Ցոհաննէսի հրամանաւ Ահմադ-խանին [1]), որ բնական խնամածու է սրոյ Աթոռոյն և սիրաւոր կաթողիկոսաց Հայոց»։

1) Մինչ դուք գնացիք ի Մեացորդացն միաբանից, և զմեզ Դաւիթն առեալ երեք ի սուրբ Աթոռն վասն գալստեան հեգաչուք և քաղցրաբարոյ չահին, որ և եկն և զմեզ առեալ տարաւ ընդառաջ, որ և ամենայն զոքին հարցանէին թէ՝ որն է Շերփեխտուրի [2]) խալիֆայն»։

2) Ի չարաթի երեկոյեան չահն ի շրջելն ընդ աստիճանաւք սրբոյ եկեղեցւոյն՝ եկեալ կանգնեցաւ յատաքան սրբոյ Ստեփանոսի հիւսիսահայեաց արտաքին կողմանցն և զիս կոչեալ ասաց թէ, դու ինչ ասացիր, որ Իրանի չահին թագիր և Ռուսէն Ֆերման առիր։ Ասացի թէ չեմ համարձակ ընդ քեզ խօսելոյ, երկու քէթխուդայից հրամայեա գալ և իմանալ, որ ինչ իմ անցքն են, և թէ, ես Պատրէզ խալիֆայ էի, թողի և եկի աստ, զի այս կոխոքն մի լիցին։ Ա-ամենայ (զոլով) այս Աթոռոյն ծառայ եմ, Երևանցի եմ, ինչ կասեմ որ Երևանու չահին չեմ ուզիլ։ Ասաց թէ՝ քեզ պիտիր սպանէի, Դաւիթն ի բիջայ (միջնորդեաց) արար, բաշեցի, որպէս և ի մօրէն խրատեն առ Ցոհաննէս, չատ և չատ սիրեցի զայս չահն, որ ի Ղազարապատին ի մտանելն հրաւիրեաց ի ներսն, նա ինքն ասէն եղեալ յատաքան դրանն՝ փութով դարձոյց զերանն յեկեղեցին և գնացեալ նշանացի խոնարհեցոյց իրրու զոլուսն եկեղեցւոյն, նստեալ չահն Ցոհաննէսի, երկու օր՝ երկու անգամ շրջեցաւ եկեղեցեաւն և այլն»։

3) Ի Սեպտեմբերի 12 մինչ ի ձի նստեալ և ելանել ու-

սիսի «Դանիել սրբազանն գրէ սա Թաբանս ի Թիֆլիս զորպուսութենն տանելոյ գլեռն ի Թավրիզ»։

[1]) Ատրպատականի մէջ սա ամենահարուստ մարդն էր, որ կը բնակէր Մարագայ և Թավրիզի հրամանատար կ՚ելլէր։ Սա, արդարև, չատ կարգեր և կղզոյացմանցեր Հայերը. նրա գրամագլխի մեծ մասը Հայերին էր յանձնուած։ Ցնս. Ատրարատ ամսագրերի մէջ (ամենապարկերգութիւն ի Հայաստան տպեալ 1877 տարի։

[2]) Ի տիրոջ խալիֆայ։ Այսպէս կանուանէին իշխան Ցեղիանով Ատրատանի կուսակալը։

նէին, Միրզայ-Ռզայ-Ղուլի-վէզիրի անդուժխառաբ թուրքացած Գէօրգի անն ելն և ի խզել եման գնեց, որ ինչ և գտաներ, կապեալ մատրաչ տարաւ. խսկոյն և հանեալ գնեց ի ջորի, գմրեթի ճանապարհաւ մասամբ զորաց եկաբ չարչարանաբ. թէպէտ ուրախ էի... յանմնեցաբ, բայց չիքն վասն ազատութեան մխիթարէր և տասապեցուցանէր ասելով թէ, իմ զուլուրիս (ծառայութեան) համար ես եմ բերեալ, որում խոստացայ եթէ այդպէս է, ղեան դիս ի Բայազիդ՝ քուրքերս քեզ գրաւ լիցին, այլ զի սուտ էր, քէչէքս առաւ, յանեժամ և յերեկոյին ղել կամեցաւ. Միրզայ-Ռզայ-Ղուլին տեսի՝ ասաց թէ՝ քեզ պատուով կտանեն Ամէլտ-խանին թէպիմ կանեն (կաւանդեն) մինչև չանը գայ, և յայն երեկոյին եկեալ Ադիվէզալ-բէգի չադրն, մարանդեցաւոց կռուոն հնձեալ եկի ամենայն չարչարանաբ, մինչև թէՀրան տանելն ես կարձելով, և կամ ի թաւրիզ սպանելոյ և չարչարանս կարծիս ունելով, յեսոյն մանգիրն (օթիանն), զրանս առաբեցի առ Ամէլտ-խանն թէ, ես ամենայն ցաւոց դեղ եմ վասն հայաստեանն. Նա հրամայեալ էր զմեզ բերել և յանձնել մահտեսի Յովհաննէսին, որ ի Սեպտեմբերի 19 եկի հանգեալ ի տան քրիստոնէի, որպէս և էի զինաւորեալ իմ յուսովն Քրիստոսի Ցեառն իմոյ. Շանն եկն և անօրէն Գէօրգին ենաս ինձ տանել ասելով (թէ) չանն և միրզան հրամայեցին որ գնաս թէՀրան, այլ այս և այն ստոբեամբն կարացաւ հարիւր, կամ քառասուն, կամ քսան թուման յառաջադրելով թէ Միրզան ասէ՝ բան ունի թէ ոչ. մի ինչ տուեալ բերանք՝ զնրիայ քուրքս մնասիլով ուզեց տարաւ, գրեանք և մանր բաներ էր հանեալ ի կապէն կորաւ։

4) «Եկն չանին ի 21 Սեպտեմբերի, անցանէին ինձ ցաւք Գէօրգիին. Ջուղայեցի, բայց հաւատարիմ քրիստոնեայ ոմն Սամուրզուզ ազայ Ոսկան [1]) ի ներկայութեան մահտեսի Յովհաննէս ազային, զամենայն խորհուրդս չանի յինքեան ունելով, մինչ ես զկարծիս գոն իմ ի Դաւիթն, նա պատմեաց՝ հարազատն լուսաւորչին թէ՝ մինչ էիր գու յիւքրիրիսայն [2]), Քանաքեռցի Նիկոզոսն գիր երեր ի Դաւիթն չանին թէ նա ինձ ասաց որ գայ նստի չանքառն և Ռուսն բերէ քոյ երկիրներն լցնէ, և այստեղ գալուց չանն խաբաբ չուներ, զէրէ (քանզի) Դաւիթն ասաց թէ՝ զի..... ինքն չգիտէ, թէՀրան պիտի գը-

[1]) Описаніе достойныхъ происшествій въ Арменіи князя Егора Хубова. С.-Петербургъ, 1811, стр. 95 — Ուսկան թէ Ոսկան ազգ էր Ֆոթ-Ալի-շահին։

[2]) Երեք խորանից սուրբ Յովհաննէսի վանքը, ուր սենեաց Դանիէլը կոթողեցաւ։

նաս թէ Թաւրիզ պիտի մնաս։ 23 Սեպտեմբերի շաբն գնաց և մեք ազատուեցաք ի Դէօրդիէն և տարաւ իմ քուրքս, քէշքս, գրքեր և մանր մունր բաներ, և Աշմէտ-խանը խոստացաւ որ կապկոց զէնջիրին արձակէ, զի գիտած է այր բարեբարոյ, և Վարպաս սուրբ Խաչի կիւրակէն եկաւ իմ յեկեղեցւոյն զբնացի ի տես կապկոց, և Մելիք-Աբովի որդի Թոմասա-բէկն [1] հանենալ ի զանջիրէն հրամմանաւ Աշմատ-խանի, մահտեսի Յոհաննէս ազգն առեալ երթի ի տունն առ մեզ . . . փոխեցաք

---

[1] Մելիք-Բէկլարեանց որդի Մելիք Աբովին, որ գնին գլխատեցաւ ի Թաւրիզ։ Տես «Բազմավէպ» Վենետկոյ 1847, որդ երգն սաս օրինակեմք։

Մուռնենքին ի ձայն բարձր աղաղակ,
Ժանտ գահիրքն սուր ի ձեռն անցաց սրբէ
Վագեր հանգոյն զիմ կենաց թեկ կըարեկ Իբնդրէ,
Ի կախարան և կամ ի սպանդ. ուր զիս տանէ,
Քաղաքս հմամբն, մահմետական զիս խուռաբն գան,
Զիմ մահ արգան.
Դառնացին լան զիս Աբովեան քաջ ախոյեան։

Մարիմ ի չիր նր սաս Քրիստոնեայ, զիս փրկեսցէ
Ցայս ամէնի և մահագոյն վայրագ դահնէ,
Ընդեր զանմեղ արիւն թափել յերկիր ցանկայ.
Նոյնիրական զնմանն իմ՝ լերանց վրայ,
Սէր հայրենեաց ի թընամեաց ձեռն մատանեաց,—
Ուրախ մեռայր.
Եւ դատեցայր, ընդ գիւցազանց իմոց նախնեաց։

Փլուանք Թագեալ իմ սիրելի Հայոց ազգի.
Որ զբռանքս ի ձեռս Պարսից յայս քաղաքի,
Մի մուսաջիմ պատմել և զայս յորդւոց որդի,
Թէ քաջն Թոմասա վասն հայրենեաց ի սպանդ վարի.
Թէպէտ ցաւիմ զի մեռանիմ ի մարտ ընդդէմ,
Թընամեաց իմ.
Ամէ յօժարեմ. զի զոհ լինիմ այսպէս զանմ։

Այս քաջ բարձակը յարեաց Պարսից հընակոյս հզաւոր
Ցապատաս արկին ի բազում նուագս հարեալ բարբարոս.
Լուծ. կընատա անգուսի դահճի հանէ ետ որս
Պատանեաքիր զայս վեհն գիւցազն՝ զառամեալ հօրս.
Քաջ նաշատակ որդիդ փրկ ի ձեռս վայրագ
Պարսից է անկ
Իւր յազգականակ մահ զբժընդակ էառ զբանակ.

Մեծդ յարեաց արքայորդի Որբաս Մերզա.
Սուր ի ձեռին գահիճքն սեղ առընթեր կայ,
Զիս թընդա՞ս քոյրդ ազգի տապատ ի մահ
Զիարդ կարա՞ս ընպանանել՝ ըստ հրամայեալ.
Մեռայր սրգամ, զի կարեալ կամ թեկ միւսանգամ
Հրացան սուր իմ
Ի ձեռս ունիմ ընդառաջել իմ ձեզ ցուցանեմ։

գնանդերձմն լուացեալ, Աստուծով թէ այլ ոչ ևս է մտանելոյ ի զէնիր. . . . 1804 Սեպտեմբեր 23 ի Թաւրիզ».

Արժանապատիւ և Մեծայարգ Տէառն Դանիէլի սրբազնասուրբ և առաքելաշնորհ կաթողիկոսին և հանճարափայլ պատրարքին Հայոց ներկնչաւոր նրբանցն սորկարար համբոյր [1]։

«Վեհափառ Տէր իմ. Ցիրաւի միով մասիւ արժանի է երանել աչացս իմոց սակս տեսութեանս սրբազնութեան ձերոյ ապա, այլ սակայն մինոյն ժամումն ես ինքնին զգամ զտարաձգութիւն իմ, զոր ունիմ արժանի բարձնապետ փեսայիդ և ընդ հարսին զարգարեալ տեսանելոյ, յոր և յուսամ արժանաւորիլ նմին ես փուքով. . . . Արդ ներկայ ի պատճառէ ընտանի և պաշտօնակից թշնամեացդ ի Պարսից արքայէն վարեցեալ եղեալ ասա, բայց ակն ունիմ ըստ իմաստնոյն, զի արդարութեամբդ փրծանելոց ես, և փոխանակ քո խակապէս մեղաւորն մատնելոց է։ Իսկ իմ անարժանութեանս խնդիրն ի սրբազնութենէդ՝ ներկայ այս է, զի ինքն արարեալ յայտնեամ, յորս պարարեալ կայիր յամրոցն Երեանայ, զոր ինչ ծանեար ի պատերազմելն հիւսիսայնոցն ընդ Պարսից՝ համառօտակի ներքոյ ծանուցեալս, զոր առաքելոց եմ ի Հնդիկս, և մեծապէս ինքնակալ լինելոց ի մեծի սրբազնութենէդ։ Զոր այս ինքն առնելով նուաստս պահելոց ես մեծարգութեանդ միշտ պարտական և պատրաստական ինչին ծառայ Հայրապետ Ստեփաննոսեան, ի Թաւրիզ, ի Սեպտեմբերի 25 յամի Տէառն 1804»։

Դանիէլ կաթողիկոսը պատասխանել է Ստեփանին այսպէս [2]. «Լաւն հարազատ որդիութեանդ սիրոյ Լուսաւորչին և հաւատարիմ բարեկամութեանդ նշանակեմ զասոյդն փոքր ի շատէ։

---

[1] Օրինակեմ յիսկականէն։ Գրերուձիները սատմ էին թէ սա ինգլիզի գեսպանատանից նշանակաւ էր գործակատար։

[2] Օրինակեմ Դանիէլի մեռագրէն։ Ինչ ինչ տեղ չնշուած կամ վերբսուին գրուած էին նոյն մեռագրով։ Երեի որ սա սեռագիրն էր։ Որ որ ածվերծանելի էին կեռագրութեամբ անցոյ, և ինչ ինչ տեղերնք էլ մուքն էին և անշականելի, նորնպէս կեռագրութիւններ ուելացրեր։ Ը.սարիկ երկու նամակնի, այսինքն Հայրապետ Ստեփանոսեանի և Դանիէլ կաթողիկոսի սրինակեալ էի յիսկականց, որք գալով մինակերը, ինչ ինչ տեղիս ցեղակերը սրինակեալ էի յիսկականց, որք գալով մինակերը, ինչ ինչ տեղիս ցեղակերը և մանկալ, յորս գժուարին էին բնթեռնելիք, վասնորոյ և ես կեռագրութեամբ էի յանելեալ։ բայց արժանապատիւ ասաք քանոնայ և խաչակիր Տէր-Թեամբ էի յանելեալ։ բայց արժանապատիւ ասաք քանոնայ և խաչակիր Տէր-Գրիգորեանն Սիրեան և կ. Պոլիս, նշմարեալ յայլոյժ օրինակի յիսկականէն էր գաղափարեալ և հաղորդեալ ինձ, ուստի և ես այնպէս օրինակեցի յանելով զայն սխալանս։

1) Ի զրգռութենէ Երևանու Մահմատ-խանին և Քէլբալի-խանին (Ղախիջևանի) պայծառափայլ Յիցիանով զորապետն զառաջինն հրամանաւ Կայսերն սակս Երևանու բերդին ի խրնդիր խանիցն զիջեալ՝ ևս հանեցաւ գալ և պատերազմել... զոնէ թէ իցէ ընդ չահին և առնուն զբերդն սիրով ըստ մտացն խանիցն, թէպէտ պարսկական խորամանկութեամբ է լեալ զերկուս կողմանս յարուցանել ի վերայ միմեանց, և յաղթողին լինել հնազանդ։

2) Զկամս իւր կատարելոյ մտօք Յիցիանովն եկն մինչև ի Շիրակաւան գաւառ, գրեցին ինձ խանքն, թէ կամայ թէ ակամայ առ Յօհաննէս և Դերսէս վարդապետքն թէ ազդեցէք մեծ կուսակալին, զի հրամայեսցէ Ղարսայ փաշային չբռնել զառաքին մեր չահին և ինքն յառաջասցի այսու պայմանաւ, որ մեր խանութիւնն մեզ լիցի և բերդն ի ձեռս մեր մնասցէ, միայն հարկս տացուք չորս հազար թուման, որ և անդէն գնեալ Արազդի զօրքն և անկեալք նոքն բազուքք առաջի թնդանօթիցն Ռուսաց և դարձեալք զփոքր էլլիկ և զհարիւր հազար ոչխար գերեցին։

3) Յօրէ յորմէ խանքն զինդիրս առաքելով յառաջացուցին զզօրսն Յիցիանով Դեմեռոր զորապետին, որովհետև չահզադէն (Աբբաս-Միրզան) եկեալ երեսուն հազար զօրօք և բանակեալ էր ի Զար-Բաղ կոչեցեալ տեղին մերձ ի Կաւակերտ գիւղն և պատերազմէր ընդ Երևանու բերդին ինեղ արկեալ զնոսա, վասնորոյ յօձական լեզուէ խանիցն և անպարտելի յաղթութեամբն իւրով վստահացեալ խաղաց պայծառափայլ կուսակալն՝ զանգիտեալ ի սաստիկ չղջոյն և ի վերայ եկեալ զօրացն չարժեցաւ և էջ նա ի խնդիր մեր յազատութիւն սրբոյ Աթոռոյն, յոր լցեալ և ամրացեալ էին յաւերութիւն... իցէ թէ յԱստուծոյ կողմանէ ի տօնի սրբոյ Հռիփսիմեանց ի լուսանալ առաւօտուն մտին զօրքն Ռուսաց ի դաշան սրբոյ Էջմիածնի. իսկ զօրքն Պարսից գիշերայն պատրաստեալ և եկեալ յարուցեալք էին ի վերայ անպատրաստութեան նոցա պաշարեալ էին և իբր նեղեալ ի մէջ սրբոյն Հռիփսիմեայ և Շողակաթի վանիցն և ի կողմունս այգեստաներացն մինչև ի Քասաղ գետն։ Իսկ Յիցիանովն 60 արամբ և այլ զօրապետք նմանապէս մասնաւոր զօրօք յայս և յայն կողմն Ժողովեալք թնդանօթաք կոտորեալ ցրուեալ էին զպարսիկս ի պարտութիւն, և ինքեանք զօրացեալք և չնչաւորեալ էին զինքեանս պահպանելով անվնաս, և զպարսիկս յաղթահարեալ, միայն թէ երկու սայլ և եօթն ուռս ասելի կամ պակաս գերեալ և աւերեալ էին։

4) Անդ պատերազմեալ ընկճեցին զպարսիկս և ի տճեսի սրոյ Լուսաւորչի եին ի վիրապէն չարժեցան զօրքն Ռուսաց դէպ յԵրևան, յարևան և զօրքն Պարսից ի վերայ նոցա, սոքա դային և նոքա պատերազմէին, զոր կատարեալ յաղթութեամբ եկին և բանակեցան անմեան ի Կաւակերտ գիւղն՝ մերձ Հրազդան գետոյն և առաքեցին զոմն Նահապետ անուն Նոր-Նախիջևանցի [1]) ամբարդար զօրացն, զի եկեալ ծանուցէ զմտաս խանին, որովհետև յառնել Պարսից ի վերայ Ռուսաց ի նոյն օրն իսկ ապատամբութեան, երկու թագ եռուն չանգաղային և երդմնագիր գրեալ և նկքեալ և յիմ ներկայութեամբս կընքեցուցին և Դաւթին զան խոստման նոցա և երդմանց, թէ ձեր խանութիւնն և պատանդքն և բերդն ձեզ տամք, միայն թէ ի կողմն մեր և Ռուսաց մնասջիք, և մանաւանդ Նահապետ ամբարդան յառաջագոյն երիցս եկեալ սուրուսաթի (արմտիքի) պատրաստութիւն հոգալ, մեծամեծ ամբարանոց ցորենոյ էին ցուցեալ թէ ձերն է, ոչ մինչև ցվախճանն ոչ եառուն և ոչ մի ապ ցորեան՝ օձու լեզուաւ յետս դարձուցին՝ սիրտ մեր առ ձեզ է, ասելով՝ Միայն թէ Արաղցիքն կամին սպանանել զՆահապետն, խանքն, մարտ եղեալ ուղևորեցին զպատասխանին ընկալեալ ի Նահապետէն թէ՝ զուք գրեցիք և բերիք զմեզ, ընդէր զժգնիք, և յայնժամ երեկոյեան եկեալ ի բանակէն չանգաղէն, որ էր յանդիման Ռուսաց ի վերայ Երասխ գետոյ մերձ ի Մասիս լեառն խաղաց և դարձաւ ի կողմն Խոր-Վիրապու և Գառնւոյ և Գեղին քաղաքին, ապա անուն, սէրդ և հաղիք բերդաքանակքն աղերսանաք հրաւիրեցին զչանգաղայն գալ և բարձրանալ ի Գանաքեռ, զի մնասցեն Ռուսքն ի ներքին տեղին, և եթէ գալ լիցի Ռուսաց ի վերայ բերդին, նոքա արտաքուստ և սոքա ի ներքուստ յաղթահարեսցեն։

5) Ի Յունիսի եկ մեծ զօրապետն Ցիցիանով՝ առեալ զզօրս և թողեալ պահապան բանակին՝ էանց ի Հրազդան գետն ձեռնլով և սիրալով գառաջով բերդին ի կողմանէ խոտրովապատու [2]) խաղաց և եկ սայլիւք ի լեառն Ջրվէզ գեղջ, և ի սաստիկ վանդաւոր նեղուցէ լերին կատարելով զպարսիկս, 60 սալդաթի հրամայեալ յապառաժս մտանել սայլիւքն և գնաց ի վերայ Աւանոյ ջրոյն, ուր Հերակլ արքայն վանեաց

---

[1]) Ռուսաց պաշտօնական թղթակցութեանց մէջ յայտնի է Նոր-Նախիջևանի կողմանք, որ նեռվեայովի հետ միացեալ Էջմիածնի կողմը տանելիս՝ շատ թանկագին եկեղեցական նիւթեր պարտքեցին։

[2]) Որ այժմ ասի Ցրդաստ բերդ կամ Ամարանց Ցրդաստ։

զզօրս Պարսից և կալաւ զԱզատ խանն, մինչ նա բանակեցաւ ի տեղին, չանգռդէն և զօրք իւր թողեալ զբանակն իւրեանց ի ապրիւք և վրանաւ, փախեան և իջին յերեան քաղաք, թէպէտ ոչ զք էր որ գայր զկնի նոցա, այլ ինքեանք հեղանէին զառ ի վայր քարաժեռ տեղիսն մինչ պաշարեալ Քեռանգարլու Նախիջևանցի հայ և տաճիկք Քեալբ-Ալի Քօռ-խանին, յանցս ճանապարհի քաղաքին մերկացուցին զզօրս հայտ ինքեանց՝ աճապարելով անցին ի ներքոյ բերդին և բոլորեցան ի խումբ բոլոր դաշտիւք ցկէս ժամ մտանել արևուն յայնմ կետով իսկ գնացին ի կողմանց Նորագեղու և Մառմառ թափային զէպ ի Խոր-Վիրապ։ Լուսաք թէ մեծ կուսակալն առաքեալ իցէ զՁաքուղ-բէգն Մելիք-Շահնազարի որդին ի պահել զկայս և զկարասիս փախուցելոցն՝ մինչև յառաւօտն եկեալ տացէ զամենայն սալդաթաց, որք առին և վաճառեցին զմի ուղտն եօթն կամ ութն ռուբի սակս նէ ի Յուլիսի 3 իջին ռուսքն զառ ի վայր Քանաքեռու և եկեալ մտին ի քաղաքն Երևան՝ փախուցանելով զնևանցի թուանգչին և բերդն և նստաւ պայծառափայլ մեծ կուսակալն ի մզկիթն՝ մէջիթն Հիւսէյն-Ալի-խանէն շինեալ և շրջապատեցին զբլրաք բերդին քարակուտակ ամրոցս պատսպարելով քթոցաք։

6) «Թէպէտ ասէին թէ չանն ևս գալոց է, բայց ոչինչ կասկածէին թէ գալոց է, մինչև պատասխանեցին ազդելոյ մերոյ թէ չանն ոչ գայ, և թէ գայցէ պատժելոց է, որովհետև Ջաֆար-Ղուլի-խանի մարդն պակաս չէ ի Թավրիզու և ի Խոյայ, և ինքն է Քէօռօղլի բերդէն եկեալ անձնատուր եղաւ Ռուսաց. յորմէ մխամտացաք, և իբրև Լանց Ը օր զկնի մտանելոյ մեծ կուսակալին ի մէջ գիշերի չանն յանկարծակի յանգուգն յարձակմամբ եկեալ ի վերայ փոքր և մեծ ամրոցաց մարտեալ ինն ժամ, անպատեալի գտեալ Ռուսքն կոտորեցին ի նոցանէ երկու հազար և եօթն հարիւր տասնեւութ մարդ, յինքեանց վեց մարդ պակասեալ, ես աչքք իմովք տեսի, որ վեց սալդաթի վերայ չկարացին մօտենալ հազարի չափ Պարսիկք, թողին և զամօթի հարեալ գնացին։

7) «Զինի տասն աւուր հրամանաւ զօրապետին եօթն հարիւր զօրք ի գիշերի Պօրոնագին եկէրալն գնաց ի վերայ բանակի չանին, առեալ ընդ իւր և զՁաֆար-Ղուլի-խանն ի զբօսանս, և դեռ ևս ոչ հասեալ ի բանակ չանին լուսացաւ. վասնորոյ չանն ութսուն հազար զօրք ել ընդդէմ եօթն հարիւրոցն, և փախեալ ի կատար լերինն Դաւռնոյ և անտի թրդանօթաք թուացեալ ցրուեաց զզօրսն ենևրալ Պօրոնագինն և ինքն կացեալ ի վերայ Դաւռնոյ գեռոցն մինչև ի կէս

օրն բարձրանալոյ արեգական. և քանզի ծարաւեցան Ռուսքն և չոքն նեղեաց՝ իջին անտի ճեմելով առ ամն Հուրասան գետոյ դէպ ի Մասիս, որոց վերայ կրկին ժողովեալ ուխտն հաղարքն բոլորամասամբ. Նա ինքն Պորանդին ենեբալն ցիր ու ցան արարեալ կոտորմամբ՝ քաշելով զսայլսն ի Դորագաւիթ գեղջէն՝ եկն և հանդեաւ ի բանակի իւրեանց՝ զմի սաղլաթ վասն ջուր խմելոյ պակասեցաւ յինքեանց, և յայնմ հետէ զայլն և զնայլն ի հեռուստ ակնարկելով և տարածանէին ի դաշան Արարատու և զորս գտանէին՝ գերէին և կամ զզլուխն կտրեալ տանէին առ չահն»։

8) «Երկիցս անգամ ուռելի և ջեբեխանայ եկն ի Թիֆլիզու՝ ձեռամբ Մելիք-Աբովի որդի Ռոստոմ-բէկին, բայց յերրորդ անգամն ի գնալն հրամանաւ զօրապետին 33 արամբք, և Բամբակաձորու մայեօր կոչեցեալն 70 արամբք. Փիրվուլի-խանն հանդերձ Հերակլ արքայորդի Ալէքսանդրիւ. Ընդ (8000) ի վերայ Բամբակաձորու Ղարաբիլիսայի մարտուցեալ և պարտեալ գոլով, և այլ բաղում զօրք Պարսից հետամուտ եղեն զկնի մայեօրին, որ երեայր մի թօփով և 70 արամբք յոգնութիւն եձ սալդաթացն Ղարաբիլիսայու երեք աւուր ճանապարհ մարտեաւ անպարտելի մնալով, ի միարանութենէ Փիրվուլի-խանին Ալէքսանդրիւն ընդ այլ պատերազմող եկելոցն 3000 զօրք և Ալէքսանդրի ի Ղազախաց և ի կողմանց Թիֆլիզու և կամ լեզդեաց, հետեակ հմուտ եղելոցն վայրաց՝ յաղթեցին զմայեօրն, սպանին, և վասն անգլուխ լինելոյն գերեցին զամենայն և զորդի Մելիք-Աբովի, որս դիտումն էր միարանել ընդ Ղարաբիլիսայու եձ-ին, և փախուցանել զՓիրվուլի-խանն զօրաք իւրովք, գերեցին և զմի թօփն զայն ևս բերին ի Թավրիզ»։

9) «Յայսմ միջոցի 120 սալդաթք գնացին ի սուրբ Էջմիածին ի բերել զթնեալ բաքսիմաթսն, զի զոյր անդ սակաւ թողեալ ալիւր և ցորն ի յափշտակութենէ խանիցն գաղեալք զկնի Պարսից ելանելոյն ի պարտութենէ չահզադային, գնացին Ռուսքն և տիրեցին զսուրբ Աթառն մի թօփով և 100 արամբք, և այն ձի (120) զօրքն ի բերելն գնացն սալիւք՝ 800 զօրք ելին ի վերայ նոցա յերեկոյէ պատերազմելոք առանց թօփի մինչև առաւօտեան երրորդ ժամն երեք զլիսաւոր խան սպանին, և այլ բաղում զօրս, և աքանչելի յաղթութեամբ եկեալ մտին ի բանակս իւրեանց յԱգոստոսի 21 աքանչելի յաղթութիւն ընդ պանդխտացն»։

10) «Զկնի 64 օր նստելոյ յերեան քաղաքի չէր խանքն ձգէին յօրէ յօր և խաբէին վասն ահի չահին, և ասէին թէ՝

հան զչէն յերկրէս և ամենայն ինչ քո է, և զօրապետն առէր, տուք զերերն սիրով, զչէն վանեցից և զպատանդս ձեր առից ի նմանէ, միայն եՀ (500) սալդաթ առէք ի ներքս, զեօթն հարիւր Պարսիկսն հանէք. խարեցին և ոչ եաուն զերերդն, տարան և կրեցին (ռուսք) զշէն սաստիկ, մերդ ուսելով ի պակասութենէ հացի հիւանդացան զօրքն և նեղացան, ի Սեպտեմբերի 4 մերձեցուցեալ զԹնդանոթն վեց թօփով ճեղքեաց զորմն բերդին, մինչ բերդացիքն ջահի հարեալ տալոց էին զերերդն, եթէ երկրորդ օրն ևս այնպէս փլուցանէր, այլ յայնմ գիշերի իսկ զծանրութիւնն իւր առաքեալ էր ի սուրբ Աթոռն. և յառաւօտու երրորդ ժամուն զբարբանս իւր հնչեցուցանելով եկ ի ճանապարհն, գնայր և հնչեցուցանէր և խնդրէր զպատերազմ, յառաջեաց մինչ ի Կաւակերտ հին բանակն և անտի, յերկրորդ օրն պատերազմելով գնաց և եմուտ ի սուրբ Էջմիածին անվնաս, թէպէտ սրտաբեկեցան յերկիւղէ չէնին խանքն և բերդանակքն թէ զքաղաք ոճիրս գործէ չէնն, և տանիցեն զմեզ զամենեսեան ի գերութիւն, բայց զի չէնն իրրև զմամ կակղացեալ էր, օրինակ առեալ զգործս Յիցիանովին, գնացին խանքն ի տեսութիւն, ետ զորդին Մահմէտ-խանին և խրլայեաց խանութեան ֆէրման տալով։

11) «Եւ զի Պարսիկքն գնացեալ պաշարեցին զսուրբ Էջմիածին իցէ թէ վնասիցեն զՌուսքն, այլ նա ի Սեպտեմբերի 6 եկեալ անտի, ՁՌ զօրաք, թէև փոքր պակասեալ գնայր և մարտնչէր ընդ Պարսից և կոտորէր, ի 4 օր ժողովեալ ամենայն զօրացն Պարսից, զոմս թողեալ և ինքն եմուտ ի Բամբակաձորու. Ղարաբլիսայն և զարձան Պարսիկք ի սուրբ Աթոռն առ չէնն, որ եկեալն էր և Ալեքսանդրն և Ջավատ-խանի որդին, որք գնացեալ էին ի խառնակել զկողմանսն, ոչ եկին առ Աղեքսանդր իրրև հրամանաւ չէնին գնացեալ ի Ղարաբաղ անդ դադարեցաւ։ Իսկ և գնալն Յիցիանովին ամենայն մերաքսքն չէնէ Պարսից թէ գուցէ զայցեն և սպանցեն զմեզ. և որչափ կողոպտեցին զթողեալսն ևս մերկացուցանեն. վանորոյ զնարկաւորսն սիրհով դավթար արարեալ, և գնացեալ տարեալ էին (Ռուսքն) ընդ զօրացն զէջ ի Թիֆլիս. թէպէտ ի գալն չէնի կրկին կողոպտեցին Պարսիկքն մինչև երկու հազար թումանի գիրք, պղնձեղէն բեռն բեռն արարեալ տարին, զոր տեսաք հազարաւոր գիրք ծախեին և եկեղեցական հանդերձ ի Թավրիզ քաղաքն. զպիտանի և զգրչեայ գրեանսն յառաջագոյն ընտրեալ տարին յԷրեան, և գնացեալսն ի Թիֆլիս ընդ այլ մասնաւոր իրաց դավթարով թողեալն չատ քան զտարեալն։

12) Եւ քանզի ցնծացաւ շանն ընդ գնալ ասուածաւոր զօրացն՝ եկն ի սուրբ Երկրաքաղաքն, որպէս թէ օգնական ընկալաւ զնորոյ. ի մտանելն հրաւիրեցաւ գնալ և նստիլ այսմանն, ապրն ուղղեաց և փութով դարձաւ ի սուրբ եկեղեցին Նշանացի իմն խոնարհեցուցեալ զգլուխն շրջեցաւ և ել ի շարաթ երեկոյեան և եկեալ շրջէր զգլխով ասահարին, կոչեաց զիս Դանիէլ եղբայր, մինչ կանգնեալ արտաքոյ եկեղեցւոյ յաստիճան սրբոյն Յոհաննոսի, և ասաց թէ՝ «զու զինչ ասացիր Իրանի շանն թողիր. . . .» (Ապա սկսէ երկրորդել, զոր ի կոնդակի որ առ մխիթարեանսն Թիֆլիսու էր գրեալ, վանորոյ և զաղափարելն աւելորդ համարեցի).

Ի Թաւրիզ, Սեպտեմբերի 27. ՌՄԴԳ ամ (1804)

«Գիտասի Քրիստոսի ծառայ Դանիէլ սրբազանակոպատակեալ սրբոյ Էջմիածնի և ամենայն Հայոց իբր կաթողիկոս կոչեցեալ».

Այստեղ առաջ բերենք մէկ նամակի պատճէնն ևս, որ մահտեսի Յովհաննէսը գրել է Դաւիթի հակառակորդ կաթողիկոսին 1804 Հոկտեմբերի 1 ի Թաւրիզ.

«Սրբազան իմ հայր, Տէր-Դաւիթի կաթողիկոս վեհին»,

«Արդ լինի որ էս քանի օր է հեծելոյ շարժիքն ելեր է, հրամանոցդ թուղթ արգով գտնուած չեմ կամ հրամանոց սրբոյ գրէն ունիմ պատասխանի արդ անեմ. արգս էն ժամանակն տեղս է. մի գիր փակեթովն աղարկած էր զասիթով չուղարկեցի, մնաց, այժմ ուղարկեցի, պատասխանին չուռով չնորհես։ Ովանէս վարդապետն կուգայ մօտերս կուղարկեմ զուլլուզն ու բանովն և էլ չանն եկաւ Դանիէլ հայր սուրբն խանին տուեց ՊաՀիր խանն ինձ տուեց, վիզ չառիմ, առի իմ մօտն է. Մելիք-Աբովի որդին զինջիրլի էր, ինքն չատ հիւանդ, գնացի տեսի չատ տկար, խանից խնդրեցի առի բերի տունս, հիմի լաւ է, մէյոյն Դանիէլն կու մնանի, այս գիշեր հոգեվարք էր, հոգին չի առանդեց մնայ գարենփարեց [1]) ինձ ուղեց ջուր տուինք խմեց, մնայ Աստուծոյ. մնանի ով թաղէ էս մանն իմ տանէն լինէր ոնց անեմ, փառք Աստուծոյ էլ յոյս Աստուած մնայ արդ կանեմ. երեք օր է մահուան դրան է, հեքիմ, բան բերի չելաւ. մնայ Աստծու. Քաղաքի [2]) թաւալ-

[1]) Այս նամակն օրինակեմ իսկակնից, կնատգրութիւններն ես եմ աւելացրած։ Ինչ ինչ բառերն չկարդացայ որոշել, վանորոյ օրինակեցի ինչպես էին գրուած։

[2]) Քաղաք ասելով Թիֆլիսն է խնամում.

ներն զէնջիրլիմն է, ծանդր զէնջիրլի է, մի զէնջին վիզեր-նումն։ Ասուած հեռի անէ... մանտեսի Օհանէս Ղազարի որդի»։

Ըստ որում, որպէս յիշեցի վերն, այս երկու անձնաւո-րութիւնների չատ նամակներն ոչնչացան, որոնցից կարելի լի-նէր ենթադրել թէ՝ երբ են ընդհատուել նրանց թղթակցու-թիւնները. ուստի և չեմ կարող ասել ճշտութեամբ թէ երբ են նոքա վախճանուած, բայց էջմիածնի գանձապետ Գրիգոր եպիսկոպոսն 1809 թուին գնում է Թաւրիզ, որ Աբբաս-Միր-զայից հրամանագիր առնէ հաստատելու և հրաւիրելու զնփրեմ արքեպիսկոպոսն Ռուսաստանի Հայոց ի կաթողիկոսութիւն, երևում է նրա գրութիւններից՝ Յունվարի 15-ից գրուած, որ կենդանի էր մանտեսի Յովհաննէսն, և իջևանել էր նրա տանը. Մանտեսի Յովհաննէսը թողեց մէկ արու զաւակ Ղազար անու-նով, որ Ռուսաց և Պարսից վերջին պատերազմն ուսարտելն յետոյ գաղթվեց Օրդուբադ, ուր ցոյց տալով Ռուսաց կառա-վարութեան թագաժառանգ Աբբաս-Միրզայի, և թերևս Ֆաթ-Ալի-շահի հրովարտակները, Ռուսաց տերութիւնն էլ ընդունեց նրան ի թիւս ազնուականաց։ Բայց ըստ որում պարսիկներն ազգատոհմ զործ ածել չգիտեն, այլ մէկ անձնաւորութեան անունը գրելիս՝ նրա հօր անունը հազիւ թէ կը գրեն. առաւել ևս նրա բնակութեան քաղաքի անունը կը յիշեն, վասնորոյ և մանտեսի Յովհաննէսին տուած հրովարտակների մէջ իբր գրուած է եղած Համադանի, այսինքն Համադանցի. ուստի և նրա որդին այժմ գրվում է Ամատունի, ըստ որում Ռուսները չունին հ տառը, ուստի և յարմար է առանց այդ տառի Ամա-տունի ևս գրելն։

Մանտեսի Յովհաննէսն, ըստ ասութեան ժամանակիցնե-ների, չատ հիւրասէր մարդ է եղած, պատմում էին թէ՝ ով որ նրան դիմէր, ձեռնունայն չէր վերադառնար. նա միչտ ասում է լինում թէ՝ տերը որ և իցէ մարդու լաւութիւն անեմ, այն օրը ես ուրախ կլինիմ. իսկ երբ մէկի համար բարի զործ կատա-րեմ, այն գիչերը հանգիստ կը քնանամ։

ԻԲ.

ՄԻՐԶԱՅ ՌՈՍՏՈՄ ԷՆԻԿՈԼՈՓԵԱՆՑ [1]).

Ներկայ դարի սկզբիցը մինչև ցայսօր Էնիկոլօփեանց ազգատոհմի անհատներն՝ Իրանի մէջ մնծամեծ և վսեմ պաշտօններ վարեցին, և մինչև այսօր ևս վարում են, որոնց կենսագրութիւնները հետզհետէ առանձին առանձին գրելու եմ. և որպէս զի իւրաքանչիւրի կենսագրութեան մէջ նոցա նախահաներին անունները՝ թէ ինչ տեղից և երբ են գաղթուած վրաստան, և այնտեղ ինչ պաշտօններ են վարած—վրկնեմ, յարմար համարեցի այստեղ Միրզայ-Ռոստոմի կենսագրութեան մէջ հատառօտաբար յիշել, քանզի նախ՝ սա հասակով միւսներից երիցագոյնն էր, և երկրորդ՝ սա բոլորից առաջ է ինքնակամ մտած Իրանի ծառայութեան մէջ.

Թավրիզ Աղալար-խանը և Թէհրան Սուլէյման-խան Էնիկոլօփեանները պատմեցին ինձ թէ՝ իւրեանց ազգատոհմի մէջ մնալով բերանացի աւանդութիւն, հասել է նրանց, որ Սիւնեաց տէր Էլիկումն ամուսնացած է եղած Մամիկոնէից նախարարութենէ սերուած մէկ օրիորդի հետ. Այն ինչ Մամիկոնեանք Սասուն գաւառում կոլորպատէին, վասթարանում և ապիկարանում են. նոցանից մէկը վեհէն անուն փախչում գալիս է Սիւնիք իւր ազգական Էլիկումի որդիների կամ թոռների մօտ, ուր և նա ամուսնանում է. Նրա սերունդէն ծագած մէկը 1600 կամ 1650 թուերին Միրզայ-Զօրաբ կամ Զուրաբ Մամիկոնեան անուն երիտասարդ՝ քաջ տեղեակ լինելով պարսիկ, արաբ-Ջղաթայի և իւր մայրական հայ լեզուներին, գնում է Վրաստան, ուր և կրթվում է և վրացերէն լեզուով, մտնում է Վրաց իշխանապետի մօտ, թարգմանի պաշտօնով. Միրզայ-Զուրաբը ճարտար և նոր-ում լեզու ունենալու համար՝ այն ժամանակուայ Վրաց իշխանապետն, այսինքն Նէփէն շնորհում է նրան վերակացուս Էնիկոլօփ, այսինքն տուփ լեզուին Ամնուհետև Զուրաբն իւր սերունդի շքեղ մականունն Մամիկոնեան թողնելով, սեփականացնում է ինքեան Էնի-

---

[1]) Histoire moderne de la Georgie, II Partie. 1857. S. P. Bourg, երես 502. ասում է թէ՝ 1691 ամ. Ցուցած կար ամ. Էնիկոլօփայ չվիւ, այսինքն որդի, քաջի-խոսրով անուն. բայց Էնիկոլօփեանների մօտ եղած ազգաբանութեան ցուցակում չէր յիշուած անունս քաջի-խոսրով։

կոլոփ վերակոչումս. ուստի և նրանից չառաւիղեալները նոյն մականուամբ են յայտնի վրաստանի մէջ։ Պատմում էին թէ Միրզայ-Զուբարն՝ ապրել է հարիւր տարի, և թողել է երկու արու զաւակ Միրզայ Աֆթանդիլ և Թօմաս անուններով։ Թօմասից զաւակ չէ մնում, իսկ Աֆթանդիլն իւր լեզուագիտութեան համար վարում է իւր օր պաշտօնը Միրզայ-Աֆթանդիլ տիտղոսով. վերջինս իւր օր նման երկարակեաց է եղած. Սրանից մնում է Միրզայ-Պաղիլ, որ նոյնպէս իւր օր պաշտօնն է կատարում [1] և որ թողնում է երկու զաւակ՝ Ազարիա և Միրզայ-Դաւրդէն անուններով։ Ազարիան հարիւր տարիից աւելի է ապրում, սրանից ծնում է Ստեփանոսը, որից ծնում են Ջէանդիրն ու Միքայէլը, որոնք այժմ իսկ կենդանի են, իսկ Միրզայ-Դաւրդէնը վարելով իւր թարգմանութեան պաշտօնը, թողնում է առաջին անուանութիւնից չորս արու զաւակներ, Միրզայ-Ղանրաման, Միրզայ-Թոստոմ, Միրզայ-Աբրահամ և Ազալար-խան. իսկ երկրորդ անուանութիւնից Մանուչար-խան, Ջէան-Բաբխ և Ջէանդիր անուններով։

Պէտք է ասած որ՝ Էնիկոլօփեանց գերդաստանի արու անհատները բոլորովքեան էլ հայերէն, վրացերէն, պարսկերէն, ֆրանսերէն, այսինքն թուրքերէն և արաբերէն լեզուները, երեխայութեան ժամանակից կսկսին սովորել, որպէս զի ոչ միայն վրաց իշխանապետների և իշխանազուսների դրան թարգմանութեան պաշտօնը կատարէին, այլ և այդ գերդաստանների անդամներից ամենք երբեմն պոլիս՝ սուլթանների մօտ, և Ադաման՝ շահերի մօտ վրաց իշխանապետների կողմից՝ գնացել են դեսպանութեան պաշտօնով, նոյնպէս չորս կողմի սահմանակից փաշաների և խաների մօտ ևս, ինչպէս և 1833—1834 թուերին, որպէս յիշում եմ, Միրզայ-Աբրահամը վրաստանի կուսակալի կողմից գնաց Թէհրան շահի մօտ և ստացաւ խաութեան տիտղոս [1]։

Անցեալ դարի վերջերում վրաց իշխանապետ Հերակլ խանը անբաւական լինելով Էնիկոլօփեանց գերդաստանից, իրում է նոցանից իւր պաղերից պարգեսած գիւղը։ Միրզայ-Թոստոմը սրա համար խանվելով թողում է իւր երկու անչափահաս զաւակները և տարաբախտին լինելով գնում է ինչ-

[1] Միրզայ-Աբրահամն ստացաւ ժէներալութեան ասոյնան, և իւր թարգմանի պաշտօնը վարեց մինչև իւր մահը։ Դրան յաջորդեց նրա երէց որդի Միրզայ-Ղազան, որ և Միխայէլ, որ հարը նման կացաւ թարգմանի մինչև իւր մահը։ Сов. вет. Кавк. арх. ком. т. VI, ч. II, стр. 861, որ գնեալ Պարսպանին գրում է կուսակալ Երմոլովին թէ՝ Բալայ-բէգ Մելիք-Թոստանեան Ղեն նարեցցին և հարեցցեր թառն Միրզայ-Աբրահամ Էնիկոլօփանցի։

պէս պատմում էին, Աստրիոյ երկիրը, ուր սկսում է եւրոպացիների նորահնար գինուորական կրթութեամբ մարզուիլ, ցնոյ երբ լսում է թէ պարսիկները սուրել են Թիֆլիսը, Հերակլ մեռել է ռուսները տիրապետել են Վրաստանին, 1805—1806 թ. վերադառնում է հասնում Թիֆլիս, ուր իմանում է որ՝ քաղաքն սուրելոյց ժամանակ անցայտ են եղած նրա երկու կրտսեր եղբայրները, Ջհան-Բաշխ և Ջհանգիրը. և թէ իւր եղբայր Միրզայ-Աբրահամը՝ Հերակլի մահուան օրերումն վերադառնում է իւր հայրական իրած գիւղը, միենոյն ժամանակ երբ ռուսներն տիրում են Վրաստանին Ռուսաց կուսակալի մօտ թարգմանի պաշտօն է ստացել, ուրեմն և ինքն պարտաւորուած է անպաչտն մնալ։ Անմիջապէս լուր է գալիս Երեւանից՝ թէ իւր եղբայր Զօնգուրն (յետոյ Մանուչար), որ Վրաստանի կամաւոր պատերազմ գնացող ազնուականների հետ, որոնք կենաց ՅԷրեանով կուսակալի բանակի հետ Երեւանի բերդը առնելոյ համար էին գնացել, վերադառնալիս նոյն ազնուականների հետ Ապարանի ձորումը գերի են ընկած։ Դիւրին է երեւակայել Միրզայ-Ռոստամի խորհ մը Ոկսումի դառն վիճակը, որի երեք որդիքն էլ տարաբաղտութեամբ կորած էին. ուստի Միրզայ-Ռոստամն իւր մօրացուի դառն արտասուքից ստիպեալ, պարտաւորվում է ուղղորիլ Պարսկաստան և որոնել, թերեւս կարողանայ գտնել նրանցից մէկը գտնել ու վերադարձնել։

Ռոստամը հասնում է Երեւան, ուր հարց ու փորձ անելով, լսում է որ Ապարանի մօտ վարած գերիները զրկել են Թաւրիզ, ուստի գնում է այնտեղ, և իմանում է որ նրանց ներքինացրած են շահի հրամանաւ, որոնց մէջին է և Զօնգուր-Մանուչարը. և ուղարկել են Թէհրան շահի կանանոցի համար։ Այնուհետեւ հետամուտ է լինում միւս անհետացած եղբայրների մասին, բայց նոցանից ոչինչ տեղեկութիւն չէ կարողանում ձեռք բերել, ուստի ուղղորվում է Թէհրան Զօնգուր եղբօրը որոնել՝ գտնել և թերեւս ազատել։

Աբբաս-Միրզան մտադիր էր մուծանել իրանի զօրքի մէջ եւրոպական պատերազմական կրթութիւն, երբ նա լսում է թէ Միրզայ-Ռոստամը տեղեակ է այդ արհեստին, հրաւիրում է նրան մնալ իրան մօտ և կրթել իւր ստորադրեալ զօրքը, բայց նա չէ ընդունում այդ հրաւէրը և խոստանում է վերադառնալիս կատարել նրա առաջարկութիւնը. ուստի և Աբբաս-Միրզան պարգեւում է նրան մէկ երիվար և քսան թումանի դրամ իբրև ծախք ճանապարհի։

Թէհրանի Թիֆլիսեցի հայ գերիները շատ են աշխատում.

որ Ռոստոմի խնդիրը Մանուչարի մասին կատարուի, և երբ տեսնում են որ չարը չէ համաձայնում Մանուչարի ազատութեանը, սկսում են այլ միջոց գործ դնել։ Եւ որովհետև չարը հետամուտ էր իւր զորքի մէջ Եւրոպական կրթութիւն մտցնելու, ուստի ներկայացնում են Միրզայ-Ռոստոմը որպէս մարդ, որ վերջինս մերձենալով չարին, յարմար միջոց գտնէ, և յետոյ ինքն երես առ երես խնդրէ չարիցը, որ ազատութիւն շնորհէ Մանուչարին։ Եւ չարը տատանուած երիտասարդներ է նշանակում՝ յանձնում նրան մարդելու արքունիքի մօտ հրապարակում, ուր չարը յաճախ այցելում էր նրանց կրթութեանը։ Ռոստոմը մի քանի ամիս մնալով Թէհրան, երկու անգամ խնդրում է չարիցը Մանուչարի մասին, իսկ չարը միշտ մերժում է նրա խնդիրը. ուստի և Ռոստոմը սրտաբեկ և յուսահատ վերադառնում է Թավրիզ [1]) և սկսում է Աբբաս-Միրզայի մօտ ծառայել որպէս մարդիչ, որում և վերջինս մօտ յիսուն արքայազուններ և երեսի գերդաստաններից երիտասարդներ է ընտրում և յանձնում Միրզայ-Ռոստոմին՝ մարդելու համար։

Ռոստոմի կին Մաթօն [2]) լսելով իւր ամուսնոյ Թավրիզ մնալը, նախ իւր մեծ որդի Սօլօմոնը (Սուլէյման) տալիս է Ռուսաց զինուորական ծառայութեան, և ապա փոքրիկ—Գուրգէնը, որ շատ հակուած էր հոգևորական դառնալու համար, ուղարկում է Թավրիզ, որ յորդորէ իւր ամուսնին, այսինքն իւր հայրը՝ վերադարձնելու համար։ Իսկ Միրզայ-Ռոստոմն իւր ներկայ ծառայութիւնն աւելի շահաւէտ և յարմար գտնելով, մանաւանդ որ իւր եղբայր Միրզայ-Արրահամը՝ Շերակլից կամ նրա որդիներից վերատանալով իւրանց ժառանգական գիւղը, որի հնորհագիրը գրուած լինելով նրա անունով մնայն, զլանում էր մասն և բաժին տալ իւր միւս եղբայրներին, որպէս և Միրզայ-Ռոստոմին, կամ նրա կնոջն ու զաւակներին, ուստի և նա վերադարձնում է իւր որդի Գուրգէնը Թիֆլիս, որ գնայ իւր մայրը Թավրիզ բերէ։ Գուրգէնը հասնում է Թիֆլիս և տեսնում իւր մայրը վախճանուած։

Այդ ժամանակը հասնում են Թավրիզ Ֆրանսիոյ զինուորական մարդիչները, ուստի Ռոստոմին յանձնուած աշակերտները մնում են նրանց մօտ կրթութիւնը շարունակել, որով և

---

[1]) Акты. Собр. Кавк. арх. ком. т. III, стр. 69. Գէորգ Ռոստոմեանն գրում է 1806 թ. Դեկտեմբերի 10, թէ Միրզայ-Ռոստոմն ասա Թավրիզ։

[2]) Սա էր Իւղրաչենց ազգատոհմից, քոյր Եսայի և Գասբարիկ (Գասբի) Իւղրաչեանների։

Աբբաս-Միրզան վեր է առնում Միրզայ-Ռուստամը իբրեան մտա, որպէս արտաքին գործոց խորհրդական [1]).

Միրզայ Ռուստամը ցոյց տալու համար Աբբաս-Միրզային, որ ինքն այնուհետեւ չպիտի վերադառնայ Թիֆլիս, ամուսնանում է Թավրիզ՝ Նազլու անունով օրիորդի հետ, որ սերուած էր Շահբազանց գերդաստանից։ Արդարև Աբբաս-Միրզան այնուհետեւ առաւել ևս իւր ջնորհն աւելացնում է նրա վերայ, և մէկ քանի անգամ էլ նրան ուղարկում է Թէհրան իւր հայր Ֆաթհ-Ալի-շահի մտա, հաղորդել նրան այն առարկաները, որոնք վերաբերում էին ինչ ինչ քաղաքական գործերի, բայց չէր կամենում գրել, այլ թէ նա բերանացի պէտք էր հաղորդէր շահին։

Դանիէլ կաթողիկոսը վերադառնալով Ս. Էջմիածին, կոնդակ է գրում Միրզայ-Ռուստամին, իւր չքանչանն ստանալու համար, որոյ պատճէնը գաղտարարեալ ասա, թէ ի այդ յետագայ կոնդակի մէջ այնպիսի նիւթ չկայ, որ վերաբերէր Միրզայ-Ռուստամին, բայց որովհետեւ ազգային պատմութեան վերաբերեալ նիւթեր կան, վասնորոյ աւելորդ չէ օրինակել ասատէն։ Զկնի կաթողիկոսական սովորական տիտղոսների գրում է նա . . . . «Յորմէ սիրով բաղձաս և Աստուածային ամենառատ օրհնութեամբ գիտասջիք ամենի սիրելի մեր և հարազատ որդի սրբոյ Աթոռոյս Մեծապատիւ բարեպաշտն Միրզայ-Ռուստամ, զի ի 13 ամսոյս գրեալ եմք ընդ Սիրեկան Ազնիւ Ազայի (յետոյ Ազալար-խան) հոգևոր որդւոյ մերում, վասն ընկալնլոյ մեր զնորատակ և զկամաւոր և զկամաւոր ի կայսրէն Ռուսաց՝ ըստ բնական օրինի և սովորութեան կաթողիկոսացն սրբոյ Աթոռոյս։ Այժմ ևս դարձեալ գրել պատաշաճ համարեցաք, որով լիապէս ծանուցանեմք սիրելւոյդ, զի յորժամ ընդունէր Աստուծոյ և ողորմութեամբ բարձրարարման չահազդային (Աբբաս-Միրզային) եկաք մեք ի սուրբ Աթոռս, յայնժամ մեծագոյն Հիւսէյն-խան սարդարն վասն միմամտացուցանելոյ զմիաբանան սրբոյ Աթոռոյս, որք էին ի Թիֆլիս և յամենայն կողմանս Ռուսաց ցրուեալք, գրեաց զգիր առ կուսակալին, որպէս վայելուչն էր, և խնդրեաց ի նմանէ ըստ այսմ միմամտացուցանել զվարդապետան և զայլս, և առաքել ի սուրբ Աթոռս, որպէս և արարն։ Զի եկին ժողովեցան ի սուրբ Աթոռս վար-

---

[1]) Акты Соб. Кавк. арх. ком. т. III, стр. 931. Կուսակալ Ցորմանովի գրում է 1809, Մայիսի 29 թէ «Ռուստամն մեծ վարդ ունի Աբբաս-Միրզայի մտա, նա է իմ թարգմանի Միրզայ-Աբբահամի հարազատ եղբայրը»։ Յետոյ նա ասելիս է թէ «նոյնպէս նա վարդ ունի և Ֆաթհ-Ալի-շահի մտա»։

դապետք աւելի քան զքառասունուհինգ, և այլքն բոլոր այն, որ և անա շնորհաք Աստուծոյ և բարի ակնարկութեամբ ողորմած չահագործին պայծառացեալ կայ Ս. Աթոռս բաղմութիւնամբ միաբանից, որպէս էրն յառաջ. Այն գիր յղեալ է առ թագաւորն իւր Կուզովիչն (կուսակալն Վրաստանի), յայտնեալ նմա զողորմութիւնն չահագործին, որ եղեալ ի վերայ Էջմիածնի Աթոռոյս և ի վերայ մեր, և թագաւորն Ռուսաց իմանալով զայն՝ որպէս բնական սովորութիւն է, և այնպէս և մեզ ևս արժանացուցանելով ողորմութեան իւրոյ, շնորհեալ է ֆերման վասն կաթողիկոսութեան մերոյ՝ և ընդ ամենայն պարգևեալ է զնչան, որպէս յառաջագոյն ևս եղեալ է Սիմէօն և Պուլաս կաթողիկոսացն, ևս և Յովսէփ սրբազանին, և զայն նշան և ֆերման յանձնեալ է Կուզովիչն վարդապետաց մերոց և գրեալ է, թէ ոչ կամեցայ յատուկ մարդով յղել, որովհետև գիտեմք պակասութիւնն սուրբ Աթոռոյդ, ծանրութիւն չը-լինիցի, իրաւ պէտք էր որ յառաջ մեր և սուրբ Աթոռոյս մերոյ տէր գերազօր, փառազարդ և երկրաչէն չահագործին յայտնէաք և այնպէս ընկալուաք, բայց որովհետև յանկարծ եկն և մեք չէաք լուեալ, մանաւանդ զի բնական այնպէս է, որ ուր Հայոց ազգն գտանին, այնտեղի թագաւորէն կաթողի-կոսին ֆերման պիտի ունենան, որ նորա սիւրէիմովն կարենայ կաթողիկոսի մարդն շրջիլ նոցա երկրումն և Հայոց ազգին իշխել, և մեր նախնիքն ևս ընկալեալ են քան զայս առաջ զֆերմանս և զնչանս Ռուսաց թագաւորի, մեք ևս պատչած համարելով վասն չահաէտութեան Աթոռոյն ընկալաք զֆեր-մանն և զնչանն, այլ դեռ ևս ոչ կամիմք գրել զպատասխա-նիս Կուզովիչի վասն հաստատելոյն առ մեզ, մինչև ընկալցուք զնչանն ի մեր բարերար և տէր Միրզայ-Պուզուրկէն (նախա-բար Աբբաս-Միրզայի) կամ ողորմած չահագործէն, որպէս և նոքա հրաման տան, այնպէս ունիմք առնել ի հարկէ. Զի ողոր-մութեամբ Աստուծոյ մինչև ցայսօր ժամանակի այս 1500 տարի՝ այս Ս. Էջմիածնի չէն հաստատ պահողն Իրանու չա-հերն են և յաւիտենականապէս ևս նոյնպէս նոցա ողորմու-թեամբն է չէն լինելոյ և ամեն կերպիւ մեր և Աթոռոյ մերոյ բարի կանեցողն և կառավարողն, այժմ ևս Զրուլլաչ (այսինքն Աստուէր Աստուծոյ) չահն և նորին ժառանգ չահագործ Աբբաս Միրզան են, և զկնի ևս ժառանգն է լինելոց, զոր հաստատ պահեսցէ Տէր Աստուած։ Իսկ ֆառանգի թագաւորաց ողորմու-թիւնն օրական է միայն և փոքր ապահովութիւն վասն Աթո-ռոյս, ֆերմանն և նշանն նոցա որպէս և յայտնի է ինքնին իսկ։ Խնդրեմք ուրեմն յայտնել զայս բարերարին մերում Միր-

զայ-Պուզուրկին, զի որպէս և հանոյ Թուեցեալ ինքեան յայտնեսցէ մեզ և մեք այնպէս արասցուք. մեք ևս ասա զնոսանն յատուկ մարդով յղեցաք օրդուն (բանակն) առ սարդարն և նմա ևս յայտնեսցաք, որ և նա ի հարկէ կարելի է թէ յայտնեսցէ ուր հարկն է։ Սակայն ի վերայ ամենայնի այս մի ինչ հարկաւոր է ևս յայտ առնել սիրելեալ հարազատիդ մերում, զի մեք գիտեմք և գիտեմք որ առաւելապէս մեծ ողորմութիւն ունի ի վերայ մեր և սուրբ Աթոռոյս մերում կերազան և բարձրիչման ողորմած շնորհագան, որպիսի ողորմութիւն նկատեմք ի պատմութենէ նախնեաց մերոց, զի ոչինչ ժամանակ ոչ Էջմիածնի Աթոռս, ոչ Էջմիածնի կաթողիկոսն կամ միաբանքն և կամ Ղզլբաշի երկրի Հայոց ազգն ոչ են վայելեալ այսպիսի ողորմութիւն, խաղաղութիւն և բարերարութիւն, որպէս այժմ վայելեմք մեք հասարակ, վասնորոյ ցանկամք միշտ երբեմն կամ անեամբ ներկայանալ և կամ առաքել զոք ի հաւատարմաց Ս. Աթոռոյս ի դուռն ողորմութեան տեառն մերում շնորհագային, և արժանանալ մատուցանելոյ փութարութիւն մեր ամենաիսաւոր մեծութեան նորին և վայելել զվայելչութիւն անդին կենաց նորին, և նոմանալ զմեծ ուրախութիւն և մխիթարութիւն. բայց նախ վասն պակասութեան ձեռաց մերոց, ապա վասն զանազան պատճառանաց մեք մեզէն ոչ կարողանամք հատարձակիլ և վստահանալ, վասնորոյ խնդրեմք ի հարազատ սիրելելոյդ, թէ արասցես հատարեսցիս հալի անես վասն այսպիսի փափագանաց մերոց մեր բարերար և յատկեալ պաշտպան Միրզայ-Պուզուրկին, որ եթէ կամենայ և հաճեսցի ժառանգեցուցանել մեզ այսպիսի ողորմութեան ողորմած զրանն շնորհագային, յորմէ յամենայն ժամ լիացեալ լինիցի ազգաւք և հարուստք, կամ յիրմէ և կամ յողորմած շնորհագային բարձրագոյն հրամանագրով, յայտնեսցէ մեզ զներողութիւնն վասն պակասութեան սրբոյ Աթոռոյս և մեր, և հնարեսցէ մեզ զհատարձակութիւն և վստահութիւն, զի ընդ ժամանակս ժամանակս թէ վասն ծերութեան մեր և տկարութեան մեզէն չկարողանայցեմք գալ և յանդիման լինել նորին մեծութեանն Աստուծով մեծացեալ շնորհագային, կարող լինիցիմք առաքել զոք ի հաւատարմաց մերոց փոխանակ մեր, և ի ձեռն նորա լցուցանիցեմք զփափագ սրտից մերոց, և ստանալ մեզ զմեծ մխիթարութիւն մեր քան զոր յայտնի է ինքնին իսկ, թէ ոչ կարէ լինել մեզ այլ մխիթարութիւն և ուրախութիւն. բան որում տէր սուրբ Աթոռոյս և մեր բոլոր ազգիս՝ թարգմանաբար ծառայից իւրոց՝ յետ Աստուծոյ բարերարատ շնորհագան Աբբաս-Միրզան է, և բաց ի նմանէ չունիմք յուսակալ

ի վերայ աշխարհի զոյս վասն մեր և վասն Աթոռոյս և բոլոր ազգի մերոյ։ Այն կերպ առ ինքն Միրզայ-Պուղուրին ևս գրեցաք տառկերէն (կամի ասել պարսկերէն), զոր ահա ընդ գրոյս մատուցանեմք ձեզ և յանձնեմք ի կամս ձեր տալն կամ չտալն, և զինչ կերպ անօրինելոյ վասն չահաւէտութեան լուսածին Ծնողի ձերոյ վասն Աթոռոյս ամենայն Հայոց։ Ողջ լեր և զօրութիւն Ցեռան եղիցի ընդ ձեզ միշտ, ամէն»։

«1808. 19 Յունուար, ...Դանիէլ կաթողիկոս ամենայն Հայոց»։
ի սուրբ Էջմիածին»։

Դորանից յետոյ Էջմիածնի նոր կաղմեալ խորհրդարանն ուղարկում է Թավրիզ գանձապետ Գրիգոր եպիսկոպոսը, որպէս զի նա Արբաս-Միրզայից հրամանագիր (բաղամ) ստանայ, որ նփրեմ արքեպիսկոպոսն Ռուսաստանի՝ գայ Էջմիածին կաթողիկոս օծուի։ Գրիգորը գրում է Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակցուն, որ անդամն էր խորհրդարանին, 1809 ամի 15 Յունվարի, թէ ներկայացայ Արբաս-Միրզային, որ հրամայեց Միրզայ-Ռոստոմին գրել տայ հրովարտակը և ներկայացնել իրեն նկարելոյ համար։

Յիշեալ տարուոյ Մեպտ. 30-ին Էջմիածնի բարձրագոյն խորհրդարանը գրում է Թիֆլիս Պօլսոյ նախորդ պատրիարք Գրիգոր եպիսկոպոսին՝ Արբաս-Միրզայի և Մահամմէտ-Ալի-Միրզայի Էջմիածին գալն ու միաբանութեան կողմանէ չգեղ հանդէսով ընդունուիլը, և կամ նոցա այնտեղից չուելն ու բանակիլը Թոր-Վիրապի մօտ, և եթէ Ներսէս եպիսկոպոսն (յետոյ կաթողիկոս) երրորդ օրը Միրզայ-Ռոստոմի հետ գնաց բանակը, որ բոլոր հին ֆարմանները նորոգել տայ և այլն։

Ապաքէն երբ է վախճանում Միրզայ-Ռոստոմն՝ չկարոզացայ հաւատալ անել, բայց յայտնի է որ նա 1812 ամին կենդանի չէր, քանզի Ներսէս եպիսկոպոսը 1812 թուի սկիզբներումը գնում է Թավրիզ, և իջևանում է նրա եղբայր Աղալար-բէգի տանը (որ յետոյ Աղալար-խան), ինչպէս Ներսէսը գրում է Էջմիածնի Սինոդին և կամ Ենգբան Ստեփան եպիսկոպոսին, որ Ջմիւռնիոյ առաջնորդ էր։ Այն ինչ եթէ Միրզայ-Ռոստոմը կենդանի լինէր, անուշա նրա մօտը կիջանէր, և կամ նրա անունը կյիշէր իւր թղթակցութեանց մէջ։

ԻԳ·

ՄՕԼԼԱՑ-ԲԱՇԻ ՀԱՉԻ ՄՕԼԼԱՑ ՔԵԱՐԻՄ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ·

Պարսիկները Թիֆլիս աւերելիս՝ գերի են տանում 9 կամ 10 տարեկան մէկ երեխայ Գրիգոր անունով, որ ծնած է Լինում Մօղնոյ (սուրբ Դէորգ) եկեղեցոյ միաբան Տէր Գրիգորեանց սերունդից· Ըստ ասութեան այս գերդաստանի անհատների, իբր թէ իրանց տոհմից մի զինի մոյ ուխտ քահանաներ են եղած յիշեալ եկեղեցում, որի գաւթումն էլ ցոյց էին տալիս նրանց գերեզմանները·

Այս Գրիգոր երեխան թաւրիզ ընկնում է մէկ Մօլլայ-Մահամմէտ-Հիւսէյն-Փէշնամազի ձեռքը, որ թլփատել է տալիս և անուանում Քեարիմ, ու իւր միակ որդւոյ հետ պարերէն և պարսկերէն կարդալ և գրել է սովորցնում իւր տանը, և նրանց փոքր ինչ զարգանալէն յետոյ, ուղարկում է Մէդրէսէ ասած դպրոցը, որ սովորին հոգևորական օրէնքները ու պատրաստվին մօլլայութեան· Նոցա չափահաս դառնալէն յետոյ Մօլլայ-Մահամմէտ-Հիւսէյնը վեր է առնում նրանց և հետը տանում է Քեարբալայի ուխտատեղին, որպէս զի պատրաստուին մուչտէութեան քննութիւն տալու և վերադառնան Թավրիզ· բայց տարաբախտութեամբ Քեարիմի դասընկերը վարակվում է մահտարաժամ ախտով և անդէն մեռնում է· Մօլլայ-Քեարիմ-Գրիգորը իւր բարերարի ստէպ-ստէպ գրութեամբ պարտաւորվում է առանց քննութիւն տալոյ վերադառնալ Թավրիզ և գնալ ուղղակի իւր բարերարի տանը իշխանիլ· Բարերարը տեսնելով իւր որդեգրի համեստ բարքն ու վարքը, և նրա ուսման բարձր ատիճանը, ամուսնացնում է նրան իւր մէկ դստեր հետ, հետևաբար ախատում է նշանակեն նրան Աբբաս-Միրզայի որդի Ղահրաման-Միրզայի համար դրան վարժապետ և դրան մօլլայ·

Այդ ժամանակ Շիա-պարսիկների մէջ մէկ հերձուած է ծագում, որի հետևողներն աղանդաւորի անունով Շէյխի էին կոչվում· Այս աղանդը կարի մեծ տարաձայնութիւնների յուզումներին ու խռովութիւնների առիթ եղաւ, վանորոյ հետ-

ւանդ մուշթեիդները դիմեցին Աբբաս-Միրզային, որ այդ չէյխերները հալածէ, կամ արգելէ, որ այդ հերձուածը չտարածուի. իսկ Աբբաս-Միրզան գոլով հեռատես և խորագէտ՝ երբէք ուշադրութիւն չդարձրեց նրանց դանդատների վերայ, և ըստ ասուրեան Աղալար-խան Լենկորանցի, որ իւր ականջովը լսել էր Աբբաս-Միրզայից թէ՝ մենք, այսինքն մեր տէրութիւնը, չունի այնքան զօրութիւն, որ տկարացնէ մեր մոլլաների ազդեցութիւնը կոպիտ ժողովրդի վերայ, ուրեմն պարտաւոր ենք թոյլ տալ նրանց, որք իրանք իրանց տկարացնեն, և կորցնեն իրանց անսահման ազդեցութիւնը. Շէյխիների հակառակորդներն էին Մութաշառռի անուանեալները, որոնք հին ծէսերի և արարողութիւնների վերայ հաստատ մնալով՝ ատում էին շէյխները, վանորոյ և աշխատում էին նրանց հալածել, անդռնել, հրապարակաւ հայհոյել և անպատուել։

Մեր Մոլլայ-Բեարիմը ջատագով հանդիսացաւ մութաշառռութեան կողմնակցութեան, վասնորոյ շատ յոգնածներ տեսրակներով լոյս էր ընծայում և ցրվում, և յետոյ մէկ զրքոյկ ևս հրատարակում է։ Այդ ժամանակ տարան չկար ոչ միայն բոլոր Ատրպատականում, այլ և բոլոր Իրանի մէջ, քանզի ձուլած տառերը չտիրանց թանգ էր. ուստի և Մոլլայ-Բեարիմը տալիս է Մութաշառռի մէղրէսէի աշակերտներին օրինակել և ցրուել անվարձ։ Այս գրքովին Մոլլայ-Բեարիմը մեծ համբաւ է ստանում Իրանի մէջ։ Նա արդարև Մուշթեիդի կոչում չունէր, բայց որպէս պարսիկները վկայում էին, շատ մուշթեիդների վերայ ասելի խորին և հմուտ հասկացութիւն ունէր արաբացի լեզուից, որի վերայ հիմնուած է մահմէտականների հոգևոր օրէնքը, արարողութիւնները, ծէսերն ու կրօնը։

1835 թուին Մահամմէտ-Միրզան բարձրացաւ շահութեան գահի վերայ, և առաքեց Ատրպատական իւր համամայր եղբայր Ղահրաման-Միրզան ընդհանուր հրամանատարի պաշտօնով, և հնարեց նրա դատարակ Մոլլայ-Բեարիմին բոլոր Ատրպատականի մոլլայ-բաշութեան, այսինքն գլխաւոր մոլլայութեան պաշտօնը, որն որ ոչ միայն վսեմ և մեծարու, այլ և կարի արդիւնաբեր էր, երբ և մեծ հարստութիւն ժողովեց։

Այդ ժամանակները պատահմամբ ես ծանօթացայ Մոլլայ-Բեարիմի հետ։ Նա յայտնեց ինձ Թիֆլիսեցի մնալը, և թէ շատ էր սիրում իւր այնտեղի ազգականների մասին մէկ համբաւ կամ որ և իցէ տեղեկութիւն ստանալու թէ՝ արդեօք նրանք Թիֆլիս թնչ կանեն, ով է նոցանից այժմ կենդանի և

ինչ վիճակի մէջ են. ի վերջոյ խոստովանեցաւ թէ ես լմնելով նորահարսաւ մօտայ, չէի կարող օր և իցէ յարաբերութիւն ունենալ մէկ քրիստոնէի հետ, թէև նորանով կարողանայի սրտիս փափաքը լեցնելի ի հարկէ այս խոստակցութեանց ժամանակ նա ու ես մենակ էինք, և մինչև անգամ ծառայք ևս չկային այն սենեակումն, ուր մենք նստած էինք։ Նա չէր մոռացել իրանց տունը Թիֆլիսում օրտեղ է, որ փողոցում, իւր եղբօր Նիկողոս անունը, նաև նրա արհեստը։ Բայց մոռացել էր իւրեանց դրացի եկեղեցոյ անունը, ուր նրա պապերն ու նախահարները քահանայութիւն էին արած։ Վերջապէս մեր երկարօրէն խոսակցութիւնից դուրս եկաւ որ Թիֆլիս նրանց տունը մեր դրացիութեան Մօղնու եկեղեցոյ հրապարակի վերայ էր, և երբ ես սկսեցի նրա ազգականների անունները ասել և նրանց վիճակը պատմել, այնուհետև նա աւելի ևս սիրով էր վարվում հետս, երբ գնում էի նրա մօտ, և մէկ օր խնդրեց որ գրեմ Թիֆլիս, թերևս հայրս նրա ազգականներին խորհուրդ տայ, մանաւանդ նրա եղբօր որդիների մէկը գար Թավրիզ և ամուսնանար նրա զատերների մէկի հետ, և ժառանգէր նրա անքաւ հարստութիւնը, վասն զի ինքն արու զաւակ չունէր։ Դիտէի որ այդ անկարելի էր, ըստ որում նրա երեց եղբօրորդին արդէն սարկաւագ էր, այսու ամենայնիւ մէկ ծանօթութիւն նրա հօրեղբօր մասին գրեցի, բայց ոչ աք նոցանից չհամաձայնեցաւ ընդունել նրա առաջարկութիւնը, մինչև որ ես ուղղորեցայ Թիֆլիս, և Մօլլայ-Բեաքրմի խնդրանաք դիմեցի նրա ազգականներին, որոնք ըստ ամենայնի մերժեցին, և երբ ես վերադարձայ Թավրիզ՝ հաղորդեցի նրան, որ ասաց թէ «եթէ Թիֆլիս մահմէդական տէրութեան ներքոյ լինէր, կթողնէի այս իմ վեսմ պաշտօնս և պատիս, կերթայի իմ ծննդեան տեղը, կը բնակէի այնտեղ թէ կուզես որպէս մուսուլման»։ Մինչև այն ժամանակ ես չէի կարծում որ վերջին բառերը նորա ներքին համոզմունքն էր, այլ յետոյ երբ որ իմացայ թէ նա իւր կեանքի վերջերումն հակուած էր չէյխի աղանդին, որին այնքան հակառակ յօդուածներ և գրքեր էր հրատարակել։ ուստի և այժմ աւելի է մութաչառուներին, այնուհետև համոզուեցայ որ նա հաստատուն մուսուլման չէր։

1844 թուին Միրզայ-Զաֆէր-խան Մուշիր-Ուդ-Դաուլէ շահի կողմից դեսպանութեամբ եկաւ Թիֆլիս։ Մօլլայ-Բեաքրմը խնդրել էր որ երբ նա ժամանէ Թիֆլիս՝ բերել տայ նրա ազգականների մէկ չափաւորը և յորդոր նոցանից մէկը գնայ Թավրիզ։ Զաֆէր-խանը բերել էր տուել Մօլլայ-Բեաքրմի գնայ Թավրիզ։ Զաֆէր-խանը բերել էր տուել Մօլլայ-Բեաքրմի եղբօրորդի տիրացու Զաքարը, երբ և ես պատահմամբ այնտեղ

գանուեցայ, վասնորայ և նոցա մէջ թարգմանութիւն արի։ Ջաֆէր-խանը մեծամեծ խոստմունքներ առաջարկեց տիրացու Զաքարին, որ գանէ իւր եղբօրներից կամ իւր օրդիներից մէկը ուղարկէ Թավրիզ, բայց նա բացէ ի բաց մերժեց նրա առաջարկութիւնը։

Նոյնը կրկնուեց 1853 թուին, այն ինչ Աբբաս-Կուլի-խանը դեսպանութիւնից վերադառնում էր Ս.-Պետերբուրգից, մնաց Թիֆլիս մէկ շաբաթաւոր յորդորելու համար Տէր-Զաքարը (որ այժմ քահանայ էր ձեռնադրուած Մօղնու եկեղեցւոյ վերայ), բայց այս անգամն ևս նա մերժեց, ինչպէս սրանից յառաջ մերժել էր, թէև Աբբաս-Կուլի-խանը հաստատուն յոյս ունէր կատարել Մօլլայ-Բեաբրիմի խնդիրը։

1855 թուականի սկզբներումը Մօլլայ-Բեաբրիմը վերադառնալով Մէքքէ ուխտատեղից, եկած էր Թավրիզի Օսմանցւոց հիւպատոսին վերայցելութեան, երբ և ես հոն պատահեցայ։ Նա օրվնեան նոր էր եկած Ցանկաստանից, զրոյց ծագեց Ալատատպօլի պատերազմի մասին, որ պէտք էր փութով սկսուէր, Հաջի-Մօլլայ-Բեաբրիմն ինձ աչքով նշմարեց և ասաց թէ հպարտն հիւպատոս, ինչ էք այդքան երկնչում անհաւատ ռուսներից, վեր առէք սրբազան Ալիի զուլֆիքարը (սուրը) եան Ալի, եան Ալի ասէք, և ինչէք, ջարդէք նրանց։ Օսմանցւոց հիւպատոսը պատասխանեց թէ «մենք հարիւր անգամ տեսա Ալան, եան Ալլահն էլ ասացինք, բայց ոչինչ չշինեցինք, ուրեմն դուք Իրանցիքդ մէկ փորձեցէք, վեր առէք այն սրբազան Ալիի զուլֆիքարն ու տեսա Ալի, եան Ալի» ասէք, տեսնենք թէ կարող էք ոչ թէ ջարդել ռուսները, այլ և գոնէ յաղթել և Իրանի հողից վռնդել։»

Հաջի-Մօլլայ-Բեաբրիմի ներքին համոզմունքը վերաբերեալ կրօնի չէին համաձայն նրա արտաքուստ կրօնամոլութեանը, վասն զի մէկ քանի անգամ նրա տանը պատահեց մեզ մենակ մնալ և կրօնի վերայ համարձակ խօսել, որ նա շատ էր սիրում։ Դա մէկ անգամ ասաց ինձ թէ «ես պարսկերէն Աստուածաշունչն ու Աւետարանը կարդացել եմ, բայց խօսքը մէջերս մնայ, Աւետարանը դատարկութեան չի ենթարկուիլ, վասն զի նա գրուած է ոչ թէ միայն քրիստոնեաների, այլև աշխարհս մէջ եղած բոլոր մարդկութեան համար. իսկ Աստուածաշնչի մասին երկայնութիւն ունիմ իմ կարծեօքը՝ նա իսկականը չէ, այլ փոփոխութեան է ենթարկուած։

Հաջի-Մօլլայ-Բեաբրիմը մեռաւ 1876 թուին գրեթէ 90 տարեկան։ Նա բարձրահասակ էր, ինչպէս նրա Թիֆլիսի ազգականները, նրա լայն և սև յօնքերը, մեծ մեծ աչքերը, եր-

կայն և լայն սև ներկուած միրուքը, նրան չատ գեղեցկացնում էին, միևնոյն ժամանակ մի կ վսեմութիւն էին տալիս նրա դէմքին։ Նա ասաց ինձ թէ «Մինչև արա զատակ ունենալս, մօտ յիսուն կին եմ առել և արձակել»։

ԻԳ.

ԹՈՍՐՈՎ-ԽԱՆ ՎԱԼԻ ՂԱՅԹՄԱՉԵԱՆՑ՝ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱՆ ՇԻՐ, ԱՅՍԻՆՔՆ ԱՌԻՒՈ.

Թրիգլիսի սուրբ Դէորգ (բերդի) եկեղեցւոյ աւագ քահանայ Տէր Ֆիլիպէ Դայթմազեանցն ունեցել է երկու որդի Տէր-Սամուէլ և Տէր Դաւիթ անուններով։ Տէր Սամուէլն եղել է սուրբ Բեթղեհէմ եկեղեցւոյ աւագ երէց [1]։ Իսկ Տէր Դաւիթը փարափի եկեղեցում քահանայ։ Այս գերդաստանի ծագումը լինելով Վրաստանի հին ազնուական հայ սերունդից Դաւիթն էլ իւր երիտասարդութեան ժամանակէն միշտ յարակցութիւններ ունենալով հայ և վրացի իշխանների և ազնուականների հետ, մէկ օր որ և իցէ առարկայի վերայ՝ նորա և վրաց իշխանապետ Հերակլի ազգականների մէկի մէջ գժտութիւն է ծագում։ Տէր Դաւիթը վախենալով իւր հոգը և բազմաթիւ թշնամիների վրէժխնդրութիւնից, փախչում գնում է իւր ծանօթ Լէզգիների մօտ առ ժամանակ մնալ այնտեղ, մինչև թշնամիների վրէժխնդրութեան կիրքը չիջանի և ապա վերադառնայ Թիֆլիս։ բայց նրա հակառակորդները լուր են տարածում թէ նա գնաց Դաղստան որ Լէզգիների մեծամեծների հետ միանայ, զօրաժողով լինի ու յարձակուի Կախէթի վերայ։ Թէև այս որքան և անհաւատալի լինէր, բայց այն ժամանակը չատ անգամ այնպիսի անցքեր կատարէին վրացիների մէջ, երբ ոմն և նախանձ ունենար մէկը, կմիանար վարձեալ Լէզգիների հետ և կյարձակուէին միմեանց կալուածների վերայ։ Հերակլը, որ անձամբ կճանաչէր Տէր Դաւիթը, և գիտէր նրա խրոխտ ու յանդուգն ձեռներիցութիւնները, կանչում է Տէր Սամուէլը, սպառնալիքներ թափում նրա վերայ և հրամայում, որպէս զի նա գրէ իւր եղբօրը, որ ոչ օրից երկիւղ չը կրէ, այլ փու-

---

[1] Վրաստան Աւագ երէց ասելով կիմանան Աւագ քահանայ, թէև երբեմն երբեմն «Ա.Ա» տեր-տեր» էլ են ասում։

թով վերադառնայ Թիֆլիս իւր ընտանեաց մօտ. ընդ հակառակն ինքը, Տէր Սամուէլն իւր ազգատոհմով սաստիկ պատժի կենթարկուի և այլն.

Տէր Սամուէլն այս մասին մարդ է զրկում և ազերատեաք նամակ է գրում եղբօրը, Տէր Դաւիթին, և խնդրում որ նա անպատճառ վերադառնայ Թիֆլիս, և թէ՝ Հերակլը խոստանում է ներել նրան. բայց Տէր Դաւիթը ցաւառուած ոչ միայն չէ վերադառնում, այլև չէ պատասխանում. Տէր Սամուէլը վախենալով Հերակլի ու նորա ազգականների վրէժխնդրութիւնից, և չկամենալով խառնուիլ այդ կեղտոտ գործերին, քիչ ժամանակից, այսինքն 1785—1786 թուականներուն, ուխտի պատրուակաւ գնում է Էջմիածին, ուր քիչ մի կենալէն յետոյ, անցնում է Պարսկաստան և այնտեղէն Հնդկաստան.

Տէր Դաւիթն ութն տարի մնում է Դաղստանում. Յետոյ նորա ազգակիցները հասկացնում են Հերակլին, որ նրա գնալը Լէզգիների մէջ և մնալը, թէ՝ չար նպատակաւ լինէր, նրա նշոյլը մինչև ցայսօր կայծակում, ուրեմն սուտ և անհիմն էր այն լուրը. ուստի և Հերակլը ներողութեան նամակ է գրում Տէր Դաւիթին և միամտացնում, որ և վերադառնում է Թիֆլիս, ուր և լսում է իւր եղբօր Տէր Սամուէլի տարագիր լինելը, որով և ինքն էլ գնում է Հնդկաստան. Թիֆլիս նրա 70—80 տարեկան ազգականները չկարողացան ասել ինձ թէ՝ նա Հնդկաստանի որ քաղաքումն է եղած, բայց Կալկաթայի «Ազգասէր» օրագրին առում է թէ՝ «Յորժամ Տէր Սամուէլն Ղայթմազեան Տփխիսեցի եկանէ վիճակաւոր ի Մադրաս, ուստայ փանոս Դէօրգեան՝ պատանի առոյգատասակ ընկերացաւ նմա մինչև ի Բուչիս, և յանցանել ժամանակաց՝ յորժամ խոսրով մեծ՝ ներքինի, որդի Տէր Սամուէլի Ղայթմազանց բդեաշխ կարգեցաւ կողմանցն Ասպահանայ, և ընկալաւ ի Հնդկաց զպատկեր Տեառն Սամուէլի հօր իւրոյ, . . . զիպաւ իւրք մատեաւ ուստայ փանոս (որ 117 ամ հասակ ունէր), առ իշխանն մեծ, և ծանօթս եւ նմա զնախնի ընկերակցութենէ իւրմէ ընդ սրբազան հօր նորա. . . . և առձիկ կապէր նմա տարեկան ոսկիս երեսուն» [1]. Ուրեմն Տէր Սամուէլը վիճակաւոր է եղած Մադրաս, Ասպահանի սուրբ Ամենափրկիչ վանքի կողմից, և Տէր Դաւիթն էլ գնացել էր Մադրաս.

Մադրասի հայերը թոյլ չէին տալիս որ Տէր Սամուէլը թողնէ իւր հոգևոր հօրը անհոգիս ու վերադառնայ իւր հայրենիքը, այլ խնդրում են որ նա՝ այնքան մնայ Մադրաս,

[1] «Ազգասէր» օրագիր. Մայիս 1, 1847, Կալկաթա.

մինչև Նոր-Ջուղայի առաջնորդին գրեն, որ նորա տեղն ուրիշ մեկ քահանայ ուղարկի. այս պատճառաւ Պարսպասցիները Տէր Դաւթի համար աջահաստոյր են հանդանակում, և բաւականին գումարով վերադարձնում են Թիֆլիս։ Երկու տարիից յետոյ մեռնում է Տէր Սամուէլը, բայց թէ ուր, նրա զառամեալ ազգականները չկարողացան ասել։ Հայաստանի հին նահապետական սովորութեամբ Տէր Սամուէլն ու Տէր Դաւիթը զոլով անբաժան եղբայրներ, մէկ տան մէջ կը բնակէին, ուրեմն և անհրաժեշտ պարտաւորութիւն էր Տէր Դաւթին հոգաւորել և խնամել իւր եղբօր ընտանիքը։

Տէր Սամուէլն ամուսնացած էր Ջազաթեանց Եթերի հետ, և ունէր երեք զաւակ՝ Մարթայ, Շուշան և Հռիփսիմէ անուններով, և երկու արու զաւակ Պետրոս և Անդրէ (որ յետոյ խոսրով, մեր այս պատմութեան առարկան)։ Տէր Սամուէլը Հնդկաստան երթալու ժամանակ, Անդրէն լինում է 18 ամեայ, ուրեմն նա ծնել է 1785—1786 թուականներում։

Տէր Սամուէլը երեք աղջիկ է ունենում։ Մարթան ու Շուշանը մեռնում են անզաւակ. իսկ երրորդը—Հռիփսիմէն ամուսնանալով Լազուլենց Եսայի հետ՝ որդեծնութեան ժամանակ վախճանում է, և թողնում է մէկ զաւակ Թորիչան անունով։ Երիցկին Եթերը կորցնելով իւր զաւակները, մեր է առնում իւր մօտ նորածին որբ թոռն Թորիչանը և մեծացնում իւր կրտսեր Անդրէի հետ։ Վերջինս մինչև իւր 45—50 տարեկան հասակը ամենևին չէ իմանում որ Թորիչանը իւր հանգուցեալ քրոջ զաւակն է, այլ հաւատի է եղած որ իւր քոյրն էր, ինչպէս Թորիչանի որդի Յովհաննէս (Եսահան-բէգ) Մանթաշեանը պատմեց ինձ։ Տէր Դաւիթը յետոյ մեռնում է և թողնում է միակ զաւակ Գալի անունով, որ ամուսնանում է Շիօշ Շիօշեանցի հետ։

Աւանդութեամբ մնացած էր այդ գերդաստանի մէջ, և ինչ ինչ գերեզմանաքարեր էլ վկայում էին, որ Ղալիմզանց ազգատոհմի մէջ անչիւատակելի ժամանակից հետէ եղած են անընդհատ քահանաներ. և թէ երբ այդ ազգատոհմից քահանայ պակասի, կը ջնջուի նոցա սերունդը. ուստի և Տէր Դաւիթը՝ թէպէտ չունենալով արու զաւակ՝ աշխատում էր որ իւր եղբօրորդիներից մէկը գտնէ՝ նուիրել եկեղեցականութեանն։ Դա մեռնում էր որ իւր եղբօր տարագրութեան ժամանակը Տէր Սամուէլի երեց որդին, Պետրոսը՝ չափահաս էր եղած առանց կրթութեան, և այնուհետև անկարելի էր նրան պատրաստել քահանայութեան պաշտօնի համար, վասնզի իւր բոլոր ուշ ու միտքը դարձնում է մանուկ Անդրէի (որ յետոյ խոսրով)

վերայ, որ զոլով կրակոտ և ապերասան երեխայ, նա նրան միշտ հետը կտանէր եկեղեցի և ապա հետը կբերէր տուն, հայերէն կարդալ գրել կսովորցնէր, և թոյլ չէր տալ դուրս գնալ փողոցներումը չրջել կամ խաղալ դրացի երեխաների հետ։ Բայց Անդրէն ամենեին համակրութիւն չէր զգում դէպի եկեղեցականութիւնը, մանաւանդ որ նա ծագած էր ազնուական ցեղից, միևնոյն ժամանակ սաստիկ ուժեղ, ուելի հակեալ էր դէպի զինուորականութիւն, և սիրում էր ձի հեծնել, դանդան զրահներ ունենալ։ Սորա մասին Տէր Դաւիթը չատ էր վշտանում։

Մինչ այս՝ մինչ այն, ռուսները տիրապետեցին Վրաստանին։ Դրանք միւս դասակարգ բնակիչների վերայ նախադասում էին ազնուական սերունդները, դիւրութեամբ նրանց ընդունում էին զինուորական և քաղաքական ծառայութեան մէջ, և փութում էին զարգարում նրանց չքնաղ ամենեներով, մանաւանդ նոցա, ռուսների, զինուորական ոսկեթել հագուստներն ու փետրազարդ խոյրերը ուելի ևս հրապուրում էին բնակիչների ուշումիտքը, վասնորոյ և Անդրէն ցանկանում է մտնել զինուորական ծառայութեան մէջ, ինչպէս իւր դասակից ազնուականները։ բայց Տէր Դաւիթը միշտ խրատելով, յորդորելով աշխատում է նրել որ նա յետ կենայ այդ նպատակից։ Այն միջոցին, այսինքն 1804 թուին Յիցիանով իշխանը արշաւում է Երևանի բերդի վրայ, և Վրաստանի ազնուականութիւնն էլ անձնամատոյց է լինում, որ մէկ քանի հարիւր ինքնակամ հեծելազօրով օժանդակէ նրա զօրախումբին։ Ահա այդ կամաւոր հեծելազօրից կազմվում է մէկ խումբ, առաջնորդութեամբ սարդար Իման Օրբելեանի։ Մեր Անդրէն խոստով վերակացուելից յետոյ, ընդդէմ Տէր Դաւթի կամացը ծածկարար գրվում է այդ կամաւոր հեծելազօրի խմբի մէջ։

Այդ խումբը Երևանի բերդը պաշարած ժամանակին անընդհատ լինելով Յիցիանովից՝ վերադառնում է Թիֆլիս։ Պարսից չարը լսելով լրտեսներից այս խումբի վերադառնալը, ուղարկում է մէկ քանի զունդ զօրք որ գնան դարանակալեն նրանց ճանապարհին ու յարձակուին նոցա վերայ։ Շահը կատարելապէս համոզում է իւր նպատակին, վասն զի Պարսից զօրքը Ապարանի ձորում երկու կողմից կալում են նրանց ճանապարհը, յարձակվում են նոցա վերայ և չարաչար յաղթում, օրքան կարողանում են կոտորում են և մնացածները գերի են վարում, որոց մէջը լինում է և մեր սանմանութամնայ Անդրէն, ուրիշ վեց գեղեցկադէմ պատանիներու հետ ընծայ է ղրկվում Ֆաթ-Ալի-շահին, որ իւր Թէհրանի կանա-

նոցի համար ներքինացնել է տալիս և հրամայում է Թոսրով անուանել։

Նա չէր խոսում և խոսումիս, այլ պարզ էր բնութիւնամբ և բարեսիրտ. ինչ որ մտածէր, այն էլ կիսաձայն, մինուոյն ժամանակ դիւրագրգիռ էր և բուռն յուզմանց տէր։ Նա լաւ ձիաբուռ էր, զարմանալի նետաձիգ անուն կը լարէր, հրացան և ատրճանակ կը ձգէր, անենսն ուժով թուր կարձէր և բաղխով անխոնջ որսորդութիւն կանէր։ վասնորոյ և շատ երբ որսորդութեան գնար, Թոսրով-խանն էլ նրանից անմեկնելի կլինէր։

Եւ այսպէս ժամանակ անցնելով՝ Միրզայ-Թոսրով Էնիկոլօփեանցը գնում է Թէհրան, որ իւր եղբայր Մանուչարը գերութիւնից ազատէ ու վերադարձնէ Թիֆլիս։ Տէր Դաւիթն էլ օգուտ քաղելով այդ հանգամանքից՝ թախանձանաք խնդրում է Միրզայ-Թոսրովից, որ Պարսկաստանի մէջ հարցուփորձ անէ, իմանայ իւր եղբօրորդի Աղդրէի վիճակը և գրէ իրենց Միրզայ-Թոսրովն էլ իւր ազգականին գրած նամակի մէջ յիշում է Աղդրէի (այժմ Թոսրով վերանուանելոյ) կենդանի լինելն ի Թէհրան, և թէ նա ներքինացրած է և թուրքացրած։ Ազգրմելի Տէր Դաւիթը հէնց այս բոթը լսում է, իսկոյն կսկիծն կսթուածաձայն է լինում և մի քանի օրից յետոյ մեռնում։ Տէր Դաւիթի վշտալի մահն այնքան զգալի է լինում Թոսրովին, որ մինչ իւր վերջին շունչը փչելը, չէր մոռանում իւր պարտաւորութիւնն դէպի նրա և իւր ընտանիքը։

Կայարանների պատմութիւնից երևում է որ 1815—1816 թուականում, Թոսրովը նշանակուում է Գիլանի Բէգլար-բէկի, այսինքն մարզպան և նա հանդէս է դուրս գալիս իւ ան պատուանունով, որով սկսում է զանազան բարեկարգութիւններ անել։

Բոլոր Պարսկաստանի մէջ Գիլանի նահանգը՝ իւր մեսաբսի արտաբերութեան համար ամենահարուստ նահանգն էր, մանաւանդ որ գիւղացիները Իրանի մէջ յայտնի էին իւրանց անխոնջ աշխատասիրութեամբ և խաղաղ բնաւորութիւնով. նրանց անծանօթ էին մարդասպանութիւն, գողութիւն և ասա-զակութիւն, այսու ամենայնիւ այս բարի գեղացիները միշտ ճնշուած էին պարսքի տակ կալուածատէրների հարստահարութիւնից և չէին կարողանում արքունական հարկերը անգամ վճարել։ Այդ մէկ այնպիսի կնճռուած խնդիր էր, որ ոչ մէկ մարզպան չէր կարողանում այնտեղ երկար ժամանակ մնալ իւր պաշտօնում, վասնորոյ և շուտ շուտ փոխվում էին, քանզի երբ այդ մարզպանները ձեռնամուխ էին լինում կարգ և կանոն մտածանելու, որով ազատվէին գիւղացիները իրանց

պարագիր, կալուածատէրերը աշխատում էին զանազան զբաղարտութիւններ բարդել մարզպանների վերայ և հրաժարեցնել պաշտօնից։ Իսկ եթէ մարզպանները պաշտպանում էին կալուածատէրերը, գեղացիները չկարողանալով զանձարանի հարկերը վճարել, արքունիքից մէկ հարկական էր գրկվում, որ պատճառ էր լինում մարզպանի իշխանութեան և կառավարութեան վատթարանալուն։ ուստի և վերջինս պարտաւորվում էր հրաժեշտ տալ։ Ազատէն ոչ ոք պատասխանիներից չէր կարողանում կամ թէ չէր կամենում անձնական օգտի համար մէկ դեղ ու դարման անել այս չարաչար գործածութիւնների համար, թէև բոլորի կարծիքն էլ այն էր, որ Գիլանի մարզպանը պիտի զօրաւոր վճռողութիւն, իրագործութիւն և երկաթի կամք ունենայ, անմիջապէս և անվեներ բնաւորութիւն, մանաւանդ, և արքունիքի մէջ վարկ և հզօր պաշտպան։ Վասնորոյ որոնեցին, որոնեցին և ի վերջոյ գտին Խոսրով-խանը, ուստի և չարը կանչեց նրան և հրամայեց թէ՝ ես եմ ընտրում քեզ, տեսնենք թէ քո առաջին անգամ ծառայութիւնը ինչպէս կը լրացնես, և միևնոյն ատենում հրամայեց Մանուչար-խանին որ նա հսկէ նորա ամենայն գործողութիւնների վերայ, և եթէ որ և իցէ հրամանագիր հարկաւոր լինի Գիլանի գործերի վերաբերեալ, նա, Մանուչարը, գրել տայ, ներկայացնէ նրան, չէնին, զոր կնքելէն յետոյ՝ տանէ աւագ նախարարին հասցնէ։ Անմիջապար յայտնեց արքունականներին, որ ոչ ոք չհամարձակի այնուհետև որ և իցէ գործի համար վերաբերեալ Գիլանին, բարեխօսէ կամ միջնորդէ իւր մօտ։

Այն ժամանակները ասում էին թէ՝ յառաջ Դաչտը օրը մէկ լիտր ոսկի էր վճարում զանձարանին, բայց այժմ իջել էր կէս լտրի, ահա սորա համար էր որ չտեն այսքան ուշադրութիւն դարձրեց այդ նահանգի վերայ։

Խոսրով-խանը հասաւ Դաչտ, ժողովեց բոլոր կալուածատէրերը, նրանց հետ միասին խորհեց, խօսեց, խորհուրդ տեսաւ, և ի վերջոյ ամենի համաձայնութեամբ վճռեցաւ, որ այնուհետև կալուածատէրերը իրանց փոխ տուած դրամների համար չհամարձակուին հարիւրին տասներկուսից աւելի տոկոսք առնել գիւղացիներից, (այն ինչ հարիւրին 24 և 30 ևս տոկոսք էին ստանում), և գիւղացիներն իւրանց արտարերած մեռաքսը բերին Դաչտ, յանձնեն կալուածատէրների գործակատարներին (սիմսարներին) իւրանց պարտականութեան հաշվումն և մեռաքսը այն օրուան գնացական գնին հարիւրին երեք պակաս հաշուելով, և գրամին ստացա-

կան առնեն, տանեն տան կալուածատէրերին և իբրեանց մուրհակի քամահին գրեն, իսկ եթէ այդ վճարուած գումարով լիովին վճարուած լինի մուրհակի գումարը, այն ժամանակ գիւղացին յետ ստանայ իւր տուած մուրհակը։

Գործակատարների (սիմսարների) թիւը հազիւ թէ տասը հոգի լինէին, բոլորն էլ հարստացած գիւղացիների և կալուածատէրերի արդիւնքով, և միւռ մեծաքանչ առաջ արժան գնեցրով կժողովէին. իսկ երբ գրսից վաճառականներ կգային, կմիաբանվէին միմեանց հետ ու գրսից եկողներին թանկ գնեցրով կվաճառէին, և այսպէս միւռ արժանացնեն ու թանկացնելը նրանց ձեռին էր, և այժմ աւելի ևս յաջող միջոց ծագեց նրանց համար. քանզի մինչև հիմի ծածկաբար էր, այժմ յայտնի գործ կածէին այդ չարաչար հնարքը, և խեղճ գիւղացիները պարտաւորեցան կիսագնով աւանդել գործակատարներին իւրեանց մեռաքանչ. Խոսրով-խանը քնած չէր, մանաւանդ Թիֆլիսեցի կամ Ագուլիսեցի վաճառականները, երբ կգային Մոսկուայի համար մեռաքանչ գնելու, միւռ կյանախէին նրա մօտ և ծածկաբար կհաղորդէին նրան սիմսարների խարդախութիւնները, ասելով թէ արդէն երեք ամիս է նոքա օրը մէկ պատրուակ են բերում, չեն կամենում մեզ հետ գին վերջացնել, որպէս զի գիւղացիներին կտրեն և արժան գնեն, մանաւանդ որ մինչև վրայ հասնին Բաղդասեցի և Թավրիզեցի վաճառականները, մրցողները կշատանան ու կիմանանցնեն։

Գիլանի վիճակները, իւրաքանչիւրը ջոկ ջոկի քարեր ունէր ի հնուց մնացած, և նոյն իսկ Ռաշտի մէջ, որ կեդրոնն էր առուտուրի, մերձ տասը տեսակ քաշի քարեր կային։ Գիւղացիները Ռաշտի ոչ մէկ քարից հասկացողութիւն չունէին, ուրեմն քանզ՝ այսինքն նոցա հաշիւները մնացել էր սիմսարների իրեմտանքի վերայ. վասն զի քաշի քարերը մեռաղից չէին, որանց վերայ որքանութիւնը նշանակուած լինէր, այլ գեղի սեպի քարեր էին, գրեթէ միմեանց նման, բայց մէկզմէկ չատ զանազան ծանրութեամբ։ Այս պատճառաւ Խոսրով-խանը մէկ քանի հազար երկաթից քաշի քարեր լինել տուեց համաչաւասար ծանրութեամբ իւր կնքովը դրոշմած, և ինչ արժողութեամբ նրանք նատած էին զանձարանին, այն գնով բաժանեց որպէս քաղաքի, նոյնպէս գիւղերի մէջ և հրատարակեց, որ եթէ այնուհետև մէկը ուրիշ քար պահէ կամ գործածէ մեռաքանի համար, այսքան տուժէ և պատժուի։ Ահա այն քարն եղաւ հասարակական մինչև ցայսօր. վանորոյ և կոչվում է Մէն-Խոսրովի, այսինքն Խոսրովեան քար, Էշիւ կամ լիտր։

Խոսրով-խանն այնուհետև սկսեց իւր ուշադրութիւնը

դարձնել չերեմապահութեան վերայ, քաջալերելով գիւղացիները, խրախուսելով այն մարդը, որ իւր դեղում ամենից աւելի լաւ և շատ մեղաքս էր արտարերում։ Այն ինչ օտար երկրացի վաճառականները լսեցին թէ մեղաքսի գնելն ու վաճառելը ազատվեց սիմսարների աղդեցութիւնից, այնուհետև տարուայ ամենայն եղանակին թէ ամառը և թէ ձմեռը՝ կը յաճախէին Ռաչա, մինչդեռ առաջուայ ժամանակները սովորաբար Օղոստոսին Թիֆլիսեցի հայերը և Նոյեմբերին Բաղդատեցի ու Թաւրիզեցի վաճառականները կերթային ու չուտով իրենց տեղերը կվերադառնային։

Սիմսարների հացը կտրուեց այնուհետև և փոքր առ փոքր ոչնչացան, իսկ գիւղացիք երկու տարուայ միջոցում ոչ միայն իրանց հին պարտքերը վճարեցին կալուածատէրերին, այլև 4—5 տարիից մնացած անվճար հարկերից ևս ազատվեցան։

Եւ այսպէս տէր Խոսրով-խանը օրքան սիրելի էր լինում խաղաղ և աշխատասէր գիւղացիներին, այնքան ատելի էր լինում ծոյլ, թուլամորթ և չարայլ կալուածատէրերին, որոնք իրենց գահեկական բարքերը մինչև անգամ մահ էին սպառնում նրան, բայց նա լաւ հասկանալով իւր պարտաւորութեան արժէքը՝ երբէք չէր մտում նոցա սպառնալիքին, մանաւանդ որ նա Թէհրանի մէջ Մանուչար-խանի նման [1]) հզոր պաշտպան ունէր և զգալի կերպով աւելացրած էր սէրութեան գանձարանի արդիւնքը։

Խոսրով-խանը մնաց Թէհրան մինչև 1851 թիւը, յորում և նշանակուեցաւ Կաղբինի վալի։ 1852 թուի Յունիսի սկզբներումը, երբ գրիչ Թաղիրլից Թէհրան էի ուղևորվում, մնացի Կաղբին, և Խոսրով-խանի հետ տեսութիւն արի անձնական գործի համար։ Այս մեր տեսութեան պատմութիւնը հրատարակած եմ Թիֆլիսի «Ռուսերէն «Կովկաս» օրագրում 1876 թուին 51 համարի մէջ, իւր շարունակութեամբը Ֆ. Ֆ. ստորագրութեամբ. ուստի այստեղ ևս առաջ բերելը աւելորդ համարելով այսքանս միայն կաւելացնենք, որ Խոսրով-խանը կացաւ Կաղբինում վալիի պաշտօնով մինչև 1856 թիւը, երբ և կախուածով հրանդացաւ, գնաց Թէհրան, և 1858 թուականին վախճանուեց, որի դիակը շատի հրամանով տարին թաղեցին Պարսից նուիրական սրբավայր ուխտատեղի Կումի մէջտեղի գաթի մէջ, առանձին նրա համար շինուած մատուռում, որ կից է Մանուչար-խանի մատուռին, ուր թաղվում են Պարսից շահերն ու արքայազուները։

[1]) Акты Соб. Кавк. арх. ком. VI т., II ч., стр. 380.

ԻԵ.

ԵԱՂՈՒԲ-ԹԱՆ ՍՈՒԼԹԱՆ (ԿԱՊԻՏԱՆ).

Երևանի Կոնդ Թաղի բնակիչ Ստեփան անունով մէկը այս ներկայ դարի սկզբներում սուրբ Մօղնի ուխտատեղի պատրուակաւ առնում է իւր կինն ու 10—12 տարեկան միակ որդին Ցակօբը և այնտեղից գաղթում է Ղարաքիլիսէ ասուած գիւղաքաղաքը, որ Ռուսաց և Պարսից սահմանագլուխն էր. Նայում է որ այնտեղ քաղաքացու մարդու համար դժուար է հաց ձեռք բերել, վերադաղթում է Թիֆլիս և բնակւում Հաւլաբար ասուած թաղում, ուր էր և իւր երկրացիների գաղթականութիւնը տեղաւորուած. Մէկ քանի ժամանակից յետոյ իւր որդւոյ հետ վերադառնում է Երևան՝ իբրև ռուսի հպատակ, որպէս զի իւր հայրական տունը վաճառէ ու նրա դրամով բամբակ գնէ տանէ Թիֆլիս, և այն փոքրիկ գումարով առուտուր սկսէ. Երևան չհասած՝ ճանապարհին աւազակները սպանում են Ստեփանը, իսկ զՑակօբը գերի վարելով տանում են Երևան վաճառելու. Երևանի Հայերը լսելով այս իրողութիւնը, աշխատում են ազատել Ցակօբը, բայց չեն կարողանում. ուստի դիմում են վրաց իշխանաց Ալեքսանդրին, որ ազատում է նրան ու պահում իւր դրանը, ինչպէս վրաստանցի իւր հպատակ.

Մէկ քանի ամսից յետոյ Ալեքսանդրը ուղևորվում է Թաւրիզ, որով Երևանի մահմեդականները բարեպատեհ առիթ գտնելով պատրուակ են բերում թէ՝ Ցակօբը գերի ընկած ժամանակ ընդունել է մուսուլմանութիւն և Իսլամի կրօնական հանդանակն ասել է. վասնորոյ նրան ուժով կալանաւորում են. Հայերը տեսնելով որ այժմ Ալեքսանդրի բացակայութեան համար անկարելի է նրան ազատել մուսուլմանների ձեռից, պարտաւորվում են Ցակօբի հայրական տունը վաճառել 40 թումանի, և վճարել դատախազներին, որ սոքա ազատեն Ցակօբը, տանեն յանձնեն Ալեքսանդրի մարդկանց, որ մինչև նրա վերադառնալը Թալ չտան Ցակօբին նրանց տանից դուրս գալ միայնակ և շրջիլ. Մէկ փոքր ժամանակից յետոյ վերադառնում է Ալեքսանդրը, և Ցակօբը միամտանալով մը-

նում է նրա դրանը առանց ռոճկի և առանց որ և իցէ դրամ. մանց։ Մինչ այս՝ մինչ այն, Ցակոբը լուր է ստանում Թիֆլի. սից, որ նրա մայրը վախճանուել է, նա գիտէր որ Թիֆլի. սում առանց արհեստի և կամ առանց դրամագլխի մարդս քաղցած կը մնայ, և այնտեղ Երևան պարապողութիւնից տաղտկանալով, գնում գրվում է փախստական և դասալիք ռուս զորականների գնդում սոսկ զորական, ուր և սովորում է զինուորական կրթութիւն, և այն գունդի հետ արշաւում է Գիւրզստան, և ապա պատերազմի ժամանակ Ցանկաստանի վերայ, ի վերջոյ և Արաղստան, ուր լսում է թէ իւսուֆ-խան սրբահոգին նոր գունդեր է կազմել, և կարևորութիւն ունի մարդիչների, վանոբոյ և նա գնում է նրա մօտ ու առաջարկում է թէ՝ ինքը տեղակ է զինուորական կրթութեան, և պատրաստ է նրա գունդերի մէկին մարդիչ լինելու։ Սրբահոգին ընդունում է նրան, ու զետեղում իւր ստորադրեալ գունդերի մէկի մէջ։ Այնուհետև Ցակոբը, որ և Եղուզ, մնում է նրա մօտ մինչև սուլթանութեան ասուիման ստանալը, որով նրա գունդը նշանակվում է թէհրան՝ արքայանիստ քաղաքի պահապան։ Այդ գունդի թէհրան մնալու հերթը սովորաբար մէկ տարի էր, որ լրանալէն յետոյ Եղուզ-սուլթանը նշանակվում է Սադր-ասազէմի դրան դռնապանների գլխաւոր, որ կարի արդիւնաւոր պաշտօն է Իրանում։ Եւ որովհետև մինչև ցայսօր սովորութիւն է, որ ամենայն նոր եկող երեսելի անձինք, որք յաճախած են Նախարարի, այսինքն Սադր-ասազէմի պալատը, թէհրանից դուրս գալու ժամանակ պէտք է շանի, նախարարի և կամ միւս պալատականների դռնապաններին մէկ բան, չատ թէ քիչ դրամ պարգևեն, վասն զի դռնապանների գլխաւորը՝ միշտ իւր մեծի առանձնասենեակի կամ դիւանատան դրան չէմքի վերայ նստած է, և ինչ որ ներսը գրոյց է լինում, նա լսում է, և չատ անգամ այն գրոյցները, ում որ վերաբերում են, լուսեցնում նրանց հաղորդում է, բաց ի սոցանից՝ դռնապանի գլխաւորն ում որ ուզենայ ժամանակ անժամանակ թոյլ կտայ մտնել իւր մեծաւորի առանձնասենեակը և դիւանխանէն։ ուրեմն եթէ նա յոյս ունի, որ ենթադրեալ անձից առատ պարգև կստանայ, թոյլ կտայ նորան ներս մտնել. իսկ եթէ ոչ՝ հարկաւ թոյլ չի տալ։ Այսպէս և Եղուզի օրը, այսինքն պարսկական տարեմուտին, դռնապանների գլխաւորը մէկ քանի իւր ստորադրեալ դռնապաններով գնում շրջում է այն մարդկանց պալատները, որոնք գործի համար յաճախած են իւր մեծաւորի մօտ, մանաւանդ նահանգապետների և գաւառապետների մօտ, որոնք

եկած են հաշիւ տալ և իրանց պաշտօնի մասին նոր հրովարտակ ստանալ։ Այդ միջոցներում Եաղուբ-սուլթանը բաւականին կարողութեան տէր է դառնում և ուելի հանրածանօթ մէկը։ Երբ որ Ֆաթհ-Ալի-շահը մնանում է, և նրա գահի վերայ բազմում է Մահամմէտ-շահը, սրա նախարարը լինում է մեր ծանօթ Երևանցի Հաջի-Միրզայ-Աղասին որ երբեմն Լէմիսածնի քարտուղար էր [1]) և անդանդաղանաբար շատ էր սիրում Երևանցի թուրքերն ու հայերը, վանորայ Եաղուբ-բէգ-սուլթանը ստանում է և խանութեան պատուանուն, և իրաւունք միջոնորդելոյ, բարեխօսելոյ հայերի համար, երբ պարսկները զրկում լինեն նրանց։

Մահամմէտ-շահի մեռնելէն և Հաջի-Միրզայ-Աղասին նախարարութիւնից հրաժարուելէն վեց ամիս առաջ Եաղուբ-խանը ծերութեան պատճառաւ հրաժեշտ է տալիս իւր պաշտօնից, և հրովարտակ ստանում որ՝ ոչ ոքան կենդանի է, տարին յիսուն թուման թոշակ ստանայ տէրութիւնից։ Դա երկու անգամ թէհրան ամուսնանում է, բայց ոչ մէկ ամուսնութիւնից զաւակ չէ ունենում։

Եաղուբ-խանն ունէր երկու ազգային գովելի յատկութիւններ, զորս չէ կարելի չյիշել այստեղ [2])։ Առաջինը հիւրընկալ էր։ վան զի որ և իցէ օտարական հայ, երբ մանէր թէհրան, անկարելի էր որ գնէ մէկ անգամ նրա սեղանի վերայ չհաւիրուէր։ Եթէ օտարականը, պանդուխտը կամ թէհրանում ուղևորվողը երևելի մէկը լինէր ու ժամանակ չունենար նրա հրաւէրն ընդունելու, Եաղուբ-խանը անպատճառ կերակուրներ կպատրաստէր՝ իրրև պաշար ճանապարհի, և կուղարկէր նրա օթեանը, որ իւր ուղևորութեան ժամանակը վայելէ։

Եաղուբ-խանի երկրորդ գեղեցիկ յատկութիւնն էր երախտագիտութիւնը։ Դա դրամ կրաչխէր աղքատներին, մօլլաներին և սէիդներին, որ Մահամմէտ-շահի, Հաջի-Միրզայ-Աղասիի և ուրիշ իւր բարերարների հոգու համար աղօթեն (նամազ անեն)։ Մէկ օր ինձ ասաց, արդարև հարուստ չեմ, բայց հարուստ հոգի ունեմ։ Նրա երախտագիտութեան անցքերից մէկը պատմենք։

Երբ Եաղուբ-խանն ամուսնանում է և իւր համար տուն ու տեղ է սարքում, այնուհետև նրա տունը լինում է վրաց

---

[1]) Յեռ Գաւազանագիր եպիսկոպոսաց Վանաց Նոր Ջուղայի, աշխատասիրութիւն Տէր Յովհաննէսի Խաչիկեան, Կալկաթա, 1876, երես 26 –32

[2]) Յեռ Արկածք Յեռան Յովհաննէսի Խաչիկեան, ուսոյ քահանայի և ասպետի, Կալկաթա, 1863, երես 108։

իշխան Ալէքսանդրի կողմից զրկուած սուրհանդակների համար հիւրանոց, վասն զի երբ վերջիններս իրանց մեծաւորից չարի անուամբ խնդրագիրներ, և կամ նախարարի ու երեելի պաշտօնատարների վերայ նամակներ բերէին Թէհրան, այնքան ժամանակ կը բնակէին Եաղուբի տանը, մինչև որ խնդրագրի կամ նամակների պատասխաններն ստանային ու վերադառնային. երբ ինքը Ալէքսանդրը գար Թէհրան, մինչև նրա համար յարմար բնակարան գտնելն ու վարձելը, նա կը բնակէր Եաղուբի տանը. թօք չկայ որ այս ամենը լինում էր առանց որ և իցէ նիւթական վարձատրութեան. Եաղուբ-խանը երդվում էր թէ «օրքան ես իմ կեանքումը զրամ եմ վատտակած, թէ չասեմ երեք մաղը, անչուշտ կէսն իմ բարերար Ալէքսանդրի ճանապարհին եմ մսսած, և թէ՝ վարձէք որ ես փոչման եմ, այլ ընդ հակառակն ուրախ եմ, որ իմ պարտաւորութիւնս կատարած եմ».

Մահամմէտ-շահը բոլոր ծառայողների ռոճիկները պակասացրեց, ի թիւս որոց և Ալէքսանդրինը. ուստի և վերջինս գնաց Թէհրան, որ աշխատէ չպակասացնեն. բայց անկարելի եղաւ. Այդ պատճառաւ Ալէքսանդրը Թէհրանի մէջ նիւթական նեղութիւն կրելով իւր բոլոր ծանրագնի բաները վաճառելից յետոյ պարարի տակ է մտնում, այնպէս, որ նրա հետ վիրաստանից փախած կամ յետոյ եկած վրացիները՝ տեսնելով Ալէքսանդրի դառն վիճակը, սկսում են հետզհետէ փախչել գնալ Բաղդատ, Բասրայ, Թավրիզ և ուրիշ տեղեր. Այդ ապերախտների տարդի ցրուելը թէ բարոյական և թէ ֆիզիքական չատ վատ ազդեցութիւն է անում Ալէքսանդրի վերայ, որով նա սկսում է նիհարանալ, մաշուիլ և հիւանդանալ. Նրա պարսիկ ծառաներն էլ չտանելով իրանց ռոճիկները, նրանք էլ հետևում են ապերախտ վրացիներին. Պարտատէրները լսելով այս ամենը, ժողովվում են գնում նրա դրանը գոռում, գոչում և մինչև անգամ հայհոյում. վասնորոյ Ալէքսանդրը անճարութիւնից իւր կնքովը թուղթ է տալիս նրանց, որ նոքա իրանց կողմից մարդ ուղարկեն, որ գնայ իւր ռոճիկի տեղ տէրութիւնից տրված Սալմաստի մսոր թոսրովայ Թիվուլ գիւղի արդիւնքն ստանայ.

Այսպէս ասա, ասում էր Եաղուբ-խանը, պարմի որդի Ալէքսանդրը չկարողանալով կրել այն անտանելի վշտերը, հիւանդութիւնը հետզհետէ սաստկացաւ, կանչեց ինձ ու ասաց թէ՝ Եաղուբ, ես այսուհետև չեմ կարող ապրել, իմ վրացիները ինձ սպանեցին, ես 30 տարի ուտացրի, խմացրի, հագցրի նրանց, նոքա իմ վերջին տարաբախտ օրերումս, թողեցին

ինձ փախան, թէպէտ ես մնռնում եմ, բայց ասում եմ որ՝ նրանք իրանց պատիժը կստանան. հիմի դու ես իմ յոյսն ու բարեկամը, այսքան նեղութիւնները ինձ համար կրեցիր, այս կատակ էլ ընդունէ, այսինքն «ինձ թաղել տուր Հայոց եկեղեցւոյ գաւթումը», (այս արտասանելիս՝ Եաղուբն սկսեց արտասուել) . . . . . Երկրորդ օրը պարնի որդին ուանդեց հոգին.

«Պարտատէրերն իմանալով նրա մահը, ժողովեցան, եկին և չէին թողնում որ նրան թաղենք։ Աշխատեցի, բանը հասցրի չանին, որ հազիւ հինգերորդ օրը հրաման դուրս եկաւ թէ՝ չանը 40 թուման դրամ է պարգևել նրա յուղարկաւորութեան ծախսի համար, և թէ՝ պարտատէրները պիտի բաւականանան հանդուցեալոյ մնացած կայքովը։ Բայց ինչ էր մնացել, հազիւ թէ 50—60 թումանի հին ու անպէտք բաներ։ Այն 40 թուման, ուելացրեց Եաղուբը, հազիւ կարողացայ կատարել նորա թաղումը, որ եղաւ Շահ-Աբդուլ-Ազիմ ասած բերդի դրանը եղած Հայոց եկեղեցիի գաւթում, արևմտեան եկեղեցւոյ դրան առաջիը, և երբ քառասունքի օրը պատարագ էին մատուցանում, մէկ փոքրիկ քար էլ ձգել տուի վրէն, որովհետև հայերէն կամ վրացերէն քանդակող չկար, չուզեցի էլ պարսկերէն գրել տամ, և մինչև ցայսօր էլ ամեն մնռելոցի օր օրհնել կտամ նրա գերեզմանը։»

Իմ խնդրանքի՝ Եաղուբ-խանը մէկ օր առաջնորդեց ինձ վերոյիշեալ եկեղեցիի գաւիթը և ցոյց տուեց այդ անշուք գերեզմանը, որ արդարև արևմտեան դռնից 17 քայլ ուղիղ գծով հեռի է։ Նս մտքումս դրի այն գերեզմանի քարի վերայ գտնէ պարսկերէն հանգուցեալոյ անունն ու վախճանելը քանդակել տամ, բայց դեսպանատան պաշտօնատարներից մէկն ասաց ինձ թէ՝ ինչ գործ ունիս, թերևս մէկ քաղաքական հարց ծագի, և դու պատասխանատու լինիս. ուստի և ես թէև կասեցայ նպատակիցս, բայց Զատիկ և Զրօրհնեաց մեռելոցի օրերը օրհնել տուի հանդուցեալոյ գերեզմանը. վասն զի ես նրա հետ խոյ և թավրիզ ծանօթացած էի, և շատ անդամ էլ յաճախած էի նրա մօտ։

Ասում են, Եաղուբ-խանը վախճանուեցաւ Թէհրան 1859 թուին։

ԻԶ.

ԹԱԶԱՏՈՒՐ ԲԷԲՈՒՐԵԱՆ ՁԱՌՆՇԱՆՁԻ [1].

Վրաց իշխանապետները ամեն տարի Դազաստանից կապրագաբէին մինչև քսան լէզգիներ, որ գային Թիֆլիս թուրքեր, այսինքն գեօրդաներ չինելու համար։ Այս արհեստաւորները ոչ միայն ռոճիկ կստանային, այլև Թիֆլիսի բնակիչ արհեստաւորները պարտաւոր էին հերթով նրանց կերակրել, և նրանց վերադառնալիս էլ իւրաքանչիւրին բստ ստորճանի ընծաներ հայթհայթել։ Այդ անսանձ և փրբ լէզգիները միայն վեց ամիս կկենային, և հաղիւ թէ 200—300 թուր կչինէին, և ոչ միայն բնակիչների, այլև Վրաց պարոնների, այսինքն վալիների համար ես տաղտկալի և անտանելի էին. ուստի և վերջին թէմուրազ-խանը նոցանից տաղտկանալով՝ միշտ կրկնում է ընում թէ՝ եթէ մեր հպատակներից մէկը գեօրդայ չինելը սովորէ, ոչ միայն՝ պարգև կտամ, այլև մեծ թոշակ կը նշանակեմ նրան։

Իւր արհեստի մէջ քաջ վարպետ Ջառնշանչի Ցոլհանէս Բէբուռեանը թէմուրազի խոստմունքից խրախուսելով՝ սկսում է ծանօթանալ և հաղորդակցութիւն անել լէզգիների հետ և ընծաներ է տալիս նրանց, հիւրընկալում է և պատվում, որպէս զի սովորցնեն նրան թէ ինչպէս են ջուր տալիս երկաթին, որ ամուր լինի և չուտով չխորտակուի. բայց նոքա զլանում էին սովորցնել, վասն զի նոցա բոլոր վարպետութիւնը կայանում էր ջուր տալումն, զոր կարի խրատութեամբ գաղտնի էին պահում. Ցոլհանէսն էլ չնայելով ցուրտին, անձրևին, ձիւնին, գիշերները գնում է նստում նրանց արհեստանոցի կողում և երթիկից նայում՝ տեսնում թէ՝ նոքա ինչպէս են կատարում ջուր տալու գաղտնիքը։ Այնուհետև սկսում է իւր գործարանում փորձել չատ անգամ, մինչև հասնում է իւր նպատակին, և մէկ հատ գեօրդայ է չինում, տանում ներկայացնում թէմուրազին ու յայտնում իւր գտանելն

---

[1]) Երկաթէ և պողպատէ զրահների վերայ ոսկեգիր քանդակող կամ դրոշագիր գրող։ Histoire moderne de la Georgie, II Partie, 1857. S. P. Bourge, երես 547, ասում է՝ թաչատաւր Բէբուրայ չվիրն, Դամասկոսի թուր լիեալոյ համար ազատութիւն է ստացել Վրաց Մէֆէ թէմուրազ երկրորդէն։

այն գաղանիքը։ Թէմուրազը երբ հաւատի է լինում, այնուհետեւ ի հարկէ չէ բերել տալիս լեզգիներ, այլ աշակերտներ է յանձնում Յովհաննէսին, որ սովորցնէ նրանց այդ արհեստը. և որպէս զի խրախուսէ նորա ձեռնարկութիւնը՝ Թէմուրազն անմիջապէս խնդրում է և ազնուականութեան արտօնութիւն է շնորհում նրան։

Յովհաննէսի որդի Խաչատուրը իւր զառնանչութեան արհեստի մէջ գերազանցում է իւր հօրը, մանաւանդ որ աշխատում է գտնում թէ ինչպէս պէտք է թուրերի վերայ ջովհար խփել, որ մինչև այն ժամանակը միայն Խորասանի ձեռագործները կունենային, որին և Եւրոպացիները Դամաս են անուանում, գուցէ նոքա առաջին անգամ սովորել են Դամասկոս քաղաքի արհեստաւորներից։ Ինչ և իցէ Խաչատուրի համբաւը տարածվում է շատ տեղ, մինչև որ Շամախիից, Նուխիից, Գանձակից, Երեւանից, Նախիջեւանից, Խոյից և Ջաւրիզից շատերը իրանց զրահները ուղարկում են լինում Թիֆլիս Խաչատուրի մօտ, որ ոսկի ջրով կամ ոսկի գրերով գրուագէ, քանդակէ, նոր կամ թէ իրանց ճաչակովը վերանորոգէ և կամ ջովհար տայ (ջուր տայ)։

Ինչպէս Խոսրով-խան Զայթմաղեանի և Մանուչար-խան Լիսիկօլօփեանի կենսագրութիւնների մէջ պատմած ենք՝ թէ հենաղ Ցիցիանովը 1804 թուին արշաւելիս Երեւանի բերդի վերայ, Վրաստանի ազնուականութիւնն անձնամատոյց է լինում մէկ քանի հարիւրաւոր ձիաւորներ հայհայթել նրան։ Մեր Խաչատուրը, որ իւր կեանքում Թիֆլիսից դուրս չէր գնացած, այլ իւր գործարանի մէջ տաղակալի կեանք էր վարած, ինչից արդեօք նա ստիպուեցաւ որ գնաց գրուեցաւ այն ձիաւորների մէջ,—թերեւս փոքր ինչ ժամանակ հեռանայ անառների աշխատութիւնից, և կամ ազնուականների խնդրանքը, կամ թէ որպէս ազնուական,—նրա որդի Աւետիքը չկարողացաւ ինձ բացատրել. զի թէպէտ և իցէ գնում է մանում նրանց դասը, միայն այս իմացայ որ հնոր տանում է իւր աշակերտներից երկուսը, որպէս զի նրանք ճանապարհներին սպասաւորեն և եթէ արհեստի մասին հարկաւոր լինին, նրանք օգնեն նրան։ Ալանցից մէկը հիւանդանում է և մնում է ճանապարհին, իսկ մէւսը հիւանդանում է Երեւան և այնտեղ էլ փախճանվում։

Երբ վերադարձել ազնուականները Երեւան խառվում են Ցիցիանովից, թողնում պատերազմի ասպարէզը և վերադառնում Թիֆլիս, Խաչատուրն էլ նրանց մէջն է լինում։ Բամբակաձորում, կամ ինչպէս ուրիշներն ասում են, Եղվարդի մօտ պարսիկները յարձակվում են այդ ազնուականների և նրանց

ուղեկիցների վերայ, որոնց մեծ մասը կոտորում են և մնացեալներն էլ գերի են վարում. սոցա մէջ լինում է և մեր խաչատուրը։

Խաչատուրը կասկածելով որ՝ եթէ պարսիկները ճանաչեն թէ նա այն երեւելի արհեստաւորն է, թոյլ չեն տալ նրան վերադառնալու Թիֆլիս, իւր անունը փոխում է և Գուրգէն անուանվում. Դերեւարները նրան տանում են Թավրիզ և վաճառում համեստ գնով, քանզի նա բացի կոպիտ ծառայութիւնից ուրիշ ոչինչ գործի յարմար չէր կարող լինել։ Երեւանի, Նախիջեւանի և Խոյի տիրապետող խաները լսելով գերիներից, որ Խաչատուրն ևս գերի է վարուած, իւրմանց շրջակայ քաղաքներում հրատարակում են թէ՝ ով որ այսպիսի անուամբ գերի բերէ, կրկնապատիկ գին կստանայ։ Բայց ոչ մէկ տեղ նրա նշանը և անունը չէ յայտնվում, ուստի հաղորդում են Թագաժառանգ Աբբաս-Միրզային, որին արդէն ծանօթ էին նրա ձեռագործները և անունը. իսկ վերջինս հրամայում է նահանգապետներին, որպէս զի հարցուփորձ անեն, որտեղ գտնեն նրան։ Ցեղնում է որ այդ տեղերաւք էլ նրա նշանը չերեւցաւ, գրում է Թէհրան իւր հօրը, Ֆաթ-Ալի-շահին, որ նա ևս բոլոր Իրանի նահանգապետներին ծանուցանէ։ Այս հնարքովն ևս անկարելի է լինում։ Իսկ շահը, գրում է Աբբաս-Միրզային, որ եթէ գտնուի, ուղարկէ նրան Թէհրան պարսկերէնի համար, որպէս զլխաւոր վարպետ։ Զարմանալի սէր և եռանդ ունէին հայը և որդի զլխաւոր և ճարտար վարպետներ պահելոյ համար։

Որպէս վերը յիշեցինք թէ զանազան քաղաքներից տիրապետող խաները գրաւներ կուղարկէին Թիֆլիս իրանց ստորադրեալների ձեռքով խաչատուրի մօտ, և այդ եկողները կը մնային Թիֆլիս, մինչև իրանց բերած կամ ապապրած գրաւները պատրաստուէին ստանային և վերադառնային։ Շատ անգամ այս մարդիկը 4, 5 և 6 ամսով կըսպասէին Թիֆլիս։ Երեւանի խանի մէկ մարդը որ մէկ քանի անգամ գնացած է եղած Թիֆլիս խաչատուրի մօտ և լաւ էլ կծանաչէր, մէկ օր Թավրիզի բազարում անակնկալ պատահում է խաչատուրին, բարեւում, բայց խաչատուրը գլխը ցոյց է տալիս որպէս թէ չէ ճանաչում նրան։ Երեւանցին խնդալով ասում է թէ՝ երեսի լուր չունիս որ մեր խանից սկսեալ մինչև շահը քեզ որտեղում են, բայց չեն կարողանում գտնել, փառք Աստուծոյ, այժմ գտնուեցար. արի, արի գնանք Թագաժառանգի պալատը և իմացուցէ տանք, որ նա քեզ քո գերեւարիցն ազատէ ու իսկոյն քեզ փառքի ու պատուի տէր անէ։ Իսկ խաչ-

տուրը դարձեալ ցոյց է տալիս որ ինքը նրան երբէք չէ տեսած և չէ էլ ճանաչում, և ինքը՝ նա չէ՝ որ կարծում է, իսկ երևանցին ստիպմամբ քաշում է նրան տանում թագաժառանգի պալատը։ Այստեղ ևս նա ուրանում է իւր թաչատուր լինելը Աղբայորդին ուրան յորդորում է, խրատում է, իսկ թաչատուրն անդրդվող մնում է առանց որ և իցէ պատասխանի, ուստի աղբայորդին էլ հրամայում է որ նրան բանտարկեն։

Այս լուրը տարածվում է քաղաքի մէջ, որ և լսում են մէկ քանի Նախիջևանցի և Երևանցի ուրիշ թուրքեր, որոնք արդէն եղած են Թիֆլիս, գնում են նայում որ նա իսկապէս թաչատուրն է, և վկայում են նոյնպէս թագաժառանգի առնուամբ, վասնորոյ և նրա յանձնման համար պահապանները ուզարկվում է թէհրան։ Այստեղ ևս չարի մօտ նա ուրանում է, բայց երբ չարը զայրանում է և հրամայում պատժել նրան, այն ժամանակ թաչատուրը գնտնատարած լինելով ասում է «Շահնշահ, եթէ քո թագի վերայ կերդնուս որ մէկ ընդն ինդիրս կատարես, ես ևս ճշմարիտը կասեմ»։ Շահը խոստանում է։ Այն ժամանակ թաչատուրը յայտնում է խընդրում է որ «ինձ փոքրով վերադարձնէք Թիֆլիս և կրօնի փոփոխութիւն չառաջարկէք ինձ»։ Շահն էլ ընդունում է նրա այդ խնդիրները և հարցնում «դէ, այժմ ասա, գու ես թաչատուրը»։ Նա պատասխանում է, «այո, ես եմ և վախում էի այդ երկու առարկայի համար յայտնել անունս»։ Շահն իսկոյն հրամայում է փոխել նորա զգուծ և հնացած հագուստները, արքունիքի դրսի բաժնումը բնակարան տալ և 100 թուման դրամ, որ ուղարկէ իւր ընտանեաց համար և նշանակել ռոճիկ։

Ֆաթ-Ալի-շահը ուրան ժլատ, այնքան և առատձեռն էր, և թերևս չուայլ՝ ազնիւ ձեռագործաց վարպետների համար. զօրաբրնակ ակնագործի, պատկերահանի, սուր և հրացան և ատրճանակ չինողների, մետնի անողների, ժամագործի, ոսկերչի և այլն, և այլն։ Վասնորոյ արքունիքի հիւսիսային կողմում կարմիր-սրահի նման մէկ չքնաղ էր կանգնացրել գաւիթով և պարտէզով, ուր տասնեվեցնդ սենեակներ կային, և յիշեալ արհեստների գլխաւոր վարպետներն ընտրեալներն այնտեղ կդնեցուէին, և ինքն էլ չատ անգամ կէսօրից յետոյ կերթար այն խանութների մէջ կը նստէր կէս ժամի չափ ու նրանց ձեռագործերին կնայէր, այս պատճառաւ նա չատ լաւ կդնահատէր նրանց կամ այլոց ազնիւ և նուրբ ձեռագործերը, շարաթ չէր անցնիր որ նրանցից մէկը—երկուսը՝ մեծ կամ փոքր պարգևներ չտուանային չարիցը։ Եւ այսպէս տեղաւորում է անդ թաչատուրին այն արհեստանոցի մէջ սենեակում։

Թաչատուրը վատահանալով շահի բարեսրտութեան և սակայն սակայն նրանից պարգևներ ստանալուն, ուրախ տարի շարունակ մնում է Թէհրան, երբ և շահի հրամանով սովորցնում է իւր արհեստը մէկ քանիսին, որոնցից երկրը մինչև 1852—1853 թիւը դեռ ևս կենդանի էին, և զուարճանութեամբ էին խօսում իրանց վարպետի վերաբ և ասելի ևս զարմանում էին նրա պարկեշտ և համեստ բարքի ու վարքի վերաբ. Նոքա համոզուած էին, որ Թաչատուրը մի տեսակ հող կամ բաղադրութիւն է ունեցել, որ ցանում է լինում երկաթէ կամ պղնձաձել նկարուած զէնքերի վրայ, և երկու օրից յետոյ մաքրելով այն հողը կամ բաղադրութիւնը, այն նկարուածների յատակը փոս ընկուած կամ փորուած էին լինում, յետոյ նոցա մէջը ոսկի կամ արծաթ էր լցնում և փոքրիկ կռանով զարկում ու մնացնում մետաղի հետ։ Ես այս չսիրազանցութիւն էլ համարում, բայց երբ վերադարձայ Թիֆլիս և հարցրի նրա որդի Ալեսիքին, սա ևս հաստատեց իւր հօր ասելիքները։ Թաչատուրի աշակերտները ասում էին թէ, մեր վարպետի թուրը մաքառում էր Խորասան չինած թրերի հետ։ Վերջինիս ձեռագործները թէև նրբութեամբ ու թեթևութեամբ զուարթ էր, բայց ամրութեան կողմանէ Թաչատուրինը վեր էր։ Սորան իրրև ապացոյց պատմում են, թէ Ֆաթ-Ալի-շահը չատ կսիրէր վայրենի կամ պատաւող չորքոտանի կենդանիների որսորդութիւնը։ Մէկ անգամ իւր կրած Խորասանի ամենանուրբ թրովը զարկում է մէկ կենդի, որ թէև վիրաւորում է, բայց թուրն էլ երկու կտոր է լինում։ Կենդը կատաղած շուռ է գալիս յարձակվում է շահի վերայ։ Չինակիրն իսկոյն տալիս է շահին Թաչատուրի չինած թուրը, որով զարկում է և սատակ մնացում վէրք է տալիս որսին, մինչդեռ ժամանակ թուրը մնում է անվնաս։ Շահը վերադառնում է Թէհրան և հետևեալ օրը բերել է տալիս Թաչատուրը, մէկ սամուր մուշտակ է պարգևում նրան և հրամարակ չնորհում, որ բոլոր Իրանի թուր չինող վարպետները, այնուհետև Թաչատուրը ճանաչեն իրենց, որպէս գլխաւոր վարպետ։

Վերոյիշեալ աշակերտներից ծերագոյնը պատմում էր ինձ թէ ես մանուկ երեխայ լինելով, գործէքներ կառնէի վարպետիս հետ կերթայի շահի կանանոցը, և եթէ զինի այլ ևս գոգոնքի հարկաւոր լինէր, դարձեալ կվերադառնայի խանութից կերթէի։ Հշմարիտ է, ես չեի համարձակվել մտնել այն սենեակը, ուր շահը բազմած էր, բայց դրան վարագոյրի մէկ ծայրից նայած ժամանակս՝ յետագայ անցքը տեսայ։

Ֆրանկստանից (Եւրոպայից) մէկ թագաւոր հաղուագիւտ

ընծաներ էր ուղարկած Ֆաթ-Ալի-շահին, որոց մէջ մէկ զոյգ ատրճանակ կար, որի խողովակն ու կոթը (զօնդաղը) երկու կողմից էր շինուած, բայց այնպէս միմեանց հետ փակցրած՝ միացրած, որ հաղիւ էին նշմարվում, թէ երկու կողմներ են։ Շահը տալիս է այդ ատրճանակներն արքունի հրաղէն շինող վարպետին մաքրելու. վերջինս օրքան աշխատում է, անկարելի է լինում նրանց անջատել, վասնզոց և շահն իւր ներքնային սպասաւոր (սենեկապետ) Նունի-խանը (որ վրացի էր ազգաւ և գերի) ուղարկում է բերել թաչատուրը, սա ևս զորձիկներ է տալիս վերոյիշեալ աշակերտին, գնում է Նունի-խանի (Բազրատաս-շվիլի) հետ արքունիքը, կանանոցի մէկ սենեակ, ուր շահը ծալապատակ նստած էր յատակի գորգի վերայ և ատրճանակը դրած ծնկան վերայ։ Թաչատուրը գլուխ է տալիս և կանգնում. շահը հրամայում է նրան մօտենալ իրեն և նստիլ ու փորձել թէ, արդեօք կարող է ատրճանակի խողովակն ու կոթը մէկը միւսից բաժնելու։ Թաչատուրը յանդգնութիւն համարելով մերձենալ շահին և նստիլ, փոքր ինչ հեռի է նստում. իսկ շահը կրկին անգամ է հրամայում աւելի մօտենալ։ Երբ Թաչատուրը փոքր ինչ առաջանալով զարձեալ քայլափի նրանից հեռի է նստում, միւս կողմից Քութուլի աղա Եղանուբ-ներքինին և Նունի-խանը աչքով գլխով նշանացի են անում նրան մօտենալ և շահի ծնկան մօտը նստիլ։ Թաչատուրը կատարում է նրանց խօսքը և ամով զողով նստում է մէկ երկու թիզաչափ հեռի շահից, և սկսում է ձեռնահարել ատրճանակը, որպէս զի կարողանայ բաժնելոյ հնարքը գտնել։ Շահը անհամբերութիւնից ինքն է մօտենում Թաչատուրին և ծունկը նրա ծնկան կպցնում. Թաչատուրն արդէն ճաշած և Վրաստանի սովորութիւնով գինի խմած, երևան այս կողմն այն կողմը շրջելով է գործ տեսնում, երևնչելով որ՝ թերևս շահը գինիի հոտը կըզգայ։ Շահը զարմանալով հարցնում է նրան այնպէս վարուելու պատճառը։ Թաչատուրը յայտնում է բանի էութիւնը, և թէ կասկածում է որ շահին զգայի լինի գինիի հոտն ու զայրանայ։ Շահը քաղցր և ոգեր դէմքով պատասխանում է թէ՝ «դու հայ ես, օրէնքդ հրամայում է քեզ գինի խմել, ուրեմն և յանցաւոր չես. բայց աւելի լաւ կանես, որ խելքդ գլուխդ հաւաքես և ինչ որ շահը հրամայում է՝ ճշգրտութեամբ կատարես»։ Թաչատուրը խրախուսված այս գեղեցիկ խրատովը, շատ չէ անցնում, որ նա գտնում է ատրճանակի գաղանիքը, և այն ինչ ուժով սխմում է, ատրճանակի կոթի վերջին գմբեթաձև երկաթն այնպիսի շառաչելով է հեռանում կոթիցն, որ շահը ոռնում է, և ապա ծիծաղելով առնում է ատրճանակը նրա ձեռքից, նրբութեամբ նայում և

հրամայում, որ մէկ Քիւմիրի չալից վերարկու (ջուպպէ) բերեն խիլայ խաչատուրի համար, որ նա անպատճառ հագած դուրս գայ կանանոցից և արքունիքից, փողոցներով գնայ, ուր որ կամի։ Շահը անմիջապէս նայում է որ վերարկուն չատ յարմար եկաւ նրա հասակին և դէմքին. ուստի հրամայում է, որ նա փոխէ իւր Պրաստանի անունական, կարճ և անյարմար զգեստները և հագնէ Պարսից երկար, լայն, համեստ և պարկեշտ զգեստները, և մօտաւ թողնէ։

Պատմում էին թէ՝ խաչատուրը պարծենում է լինում որ կարող է այնպիսի թուր շինել, որ գոմէշին կէս անէ և անվնաս մնայ։ Այս լուրը որպէս թէ հասնում է շահին, որ և ասում է խաչատուրին թէ «ինչի ուրեմն մինչև ցայսօր այդպիսի թուր չշինեցիր Ֆիզերքի Աղօթարանի համար»։ Նա պատասխանում է թէ «չանձնառու եմ լինում այժմ շինել, եթէ շահնշահը կիսոստանայ հրաման տայ իրեն վերադառնալ Թիֆլիս իւր ընտանեաց մօտ»։ Շահը յուժարանում է արձակել նրան։

Խաչատուրը նոր շինած թուրը ներկայացնում է շահին, որ հրամայում է Շիր-խոսրով Պայթմազանցին փորձել։ Այդ փորձը մէկ գոմէշի վերայ կատարվում է արքունիքի ընդարձակ հրապարակում, երբ շահը արքունիքի առաջին եղած վերնայարկում բազմած, և հրապարակի մէջ բիւրաւոր հանդիսատեսներ են լինում։ Երբ խոսրով-խանը մէկ անգամում կէս է անում գոմէշը, շահը հրամայում է խիլայել խաչատուրը զինուորական վերարկուով, պայմանաւ, ինչպէս հաղնուած է Թէհրան, միենոյն հագուստով ու մօրուքով ուղևորի Թիֆլիս, և այնտեղէն Ս.-Պետերբուրգ, ներկայանայ Ռուսաց կայսեր, և պատմէ թէ Իրանի շահնշահը ինչպէս նրան ընդունեց և ինչպէս ճանապարհ ձգեց։ Միենոյն ժամանակ հրամայում է հանդերձապետին որ երկու ձեռք շորեր կարել տայ խաչատուրի համար, որ պէտք էր մէկը հագած ներկայանար Ռուսաց կայսեր, և միւսովը—կայսեր ազգականներին։ Նոյնպէս հրամայում է գրում որ՝ ճանապարհներին ամենայն տեղ պատուով և ձիաւորներով ուղևորեն նրան մինչև Ռուսի հողը, և սահմանագլխի վերայ հսկող Ռուսաց սահմանապահներին յանձնեն ու տարցական առնուն։

Խաչատուրը մէկ տարում հազիւ է հասնում Թիֆլիս, որովհետև ճանապարհին կազմիին և Թավրիզի շահզադաների, Նախիջևանի և Լրեանի խաների և այլոց համար զանազան զրահներ է գրուագում։ Նա Թիֆլիս հասնելիս հետը ունենում է 24 երիվարներ, թէ նստելոյ և թէ բեռնաւորելու համար պարգևած զանազան երեսելի մարդկանցից։ Նոյնպէս 35

հատ քիշմիրի շալեր, շատ ոսկի, արծաթի, մարգարտ և զանազան կանանց զարդեր։

Նա մնում է Թիֆլիս երկու տարիաչափ, և զանազան ձեռագործներ է շինում անդրկովկասեան կուսակալի և Ռուսաց երեսի պաշտօնատարների համար, որով և մեծ համբաւ է ստանում, և յետոյ ուղևորվում է Ս.-Պետերբուրգ, ներկայանում է իւր պարկական հագուստով և մօրուքով կայսեր և այլոց՝ ըստ հրամանի շահի։ Այնտեղ էլ զանազան ձեռագործներ է պատրաստում կայսերական թանգարանի կամ երեսի մեծամեծների համար։ Հրամանաւ կայսեր ուղևորվում է Տուլ քաղաքը, ասում էին, որպէս զի սովորեցնէ այնտեղի թաղաւորական գործարանի վարպետներին աւելի ևս նուրբ ՀՈՎՀարդար շինելը, և ոսկւով կամ արծաթով զրուսագելը։ Մոսկուայից անց կենալիս երեսի փարթամ կնեաղ Շերեմետեվը պահում է նրան, որ իւր թանգարանին նայէ և պակաս սորդները լրացնէ, վերանորոգէ, մաքրէ, և ինչ ինչ ձեռագործներ էլ աւելացնէ։ Խաչատուրը ասում է վերում թէ, կնեաղ Շերեմետեվի թանգարանը աւելի հարուստ է, աւելի հագուստ ունի և հին զրուներ, գործիքներ ունի քանիէ Ռուսաց կայսեր և Պարսից շահի թանգարաններից։

Խաչատուրը վերադառնում է Թիֆլիս, մէկուկէս տարիից յետոյ, նրան ծնում է մէկ դուստր, երբ և խնդրագիր է ուղարկում շահին, նկարագրելով իւր գնալը Ս.-Պետերբուրգ, Ներկայանալը կայսեր, անդ պատուով ընդունուիլը, որպեզ, ում համար ձեռագործներ շինելը, և ինչ պարգևներով վերադառնալը իւր ընտանեաց մօտ, և ապա նրան դուստր ծնանիլը։ Վանորայ և ի վերջոյ աւելացրել էր թէ, Տիեզերքի Ազոթարանը պիտի նորածին զուտերս համար օժիտ նորէէ։ Ֆաթհ-Ալի շահն էլ առաքում է երկու սենեակների համար անհնարապատուական խորասանի գորգեր, և եզրու թաղիքներ, և նոցա վերայ ձգելու երիայն և լայն եզրու ՉՍՅՆԱՄԱՂՆԵՐ, նոյնպէս զանազան գիպակներ և մետաքսեայ ճոթեր, որպէս զի այն նորածին օրիորդը պսակվելու օրը հագնէ։

Խաչատուրը մնանում է Թիֆլիս 1828 թուին, թողնելով երկու զուստր և մէկ ուստր Աւետիք անունով, որ այժմ էլ կենդանի է։

Խաչատուրն ունէր վերջ թաղաւորիցը 15 թուման Թիֆլիսի դրամ թոշակ, որ յետոյ Ռուսաց կայսրը շինում է 400 ռուբլի, և որ մինչև իւր մահը ստանում էր գանձարանից։

ԻԼ·

ԹԱԳԷՈՍ ՈՐ ԵՒ ԹՈՒՐԱԲ-ԽԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ·

Թադէոսը թէև քաջ քաղաքական և զինուորական պաշտօնատար էր, բայց իւր բարակ հանճարովն ու գեղեցիկ ձեռագործովը նախ՝ Թավրիզ Թագաժառանգ Աբբաս-Միրզայի, և ապա Թէհրանի արքունիքում որպէս պալատական ականագործ և ոսկերիչ սիրելի էր Ֆաթ-Ալի և Մահամմէդ-շահերին, ուստի և ազգային գործերում երևելի դերեր է խաղացել այն ժամանակները, երբ Իրանի մէջ Թագաւորում էին բարբարոսութիւններ, և Թուրաբ-խանը խոշնդոտն էր լինում նրանց ու արտօնութիւններ էր առնում իւր ազգի համար. այս պատճառաւ և արժանի է նորա անունը դասել ի Թիւս այլոց երևելի անձանց·

Թադէոսը ծնած էր Թավրիզ, բարեպաշտ և համեստ ծնողներից· Նրա Առաքել հայրը ոսկերիչ լինելով, երբ իւր որդին դպրոցում կարդալ-գրել է սովորում, հանում բերում է իւր գործարանը, իւր արհեստը սովորեցնելու·

Ներկայ դարիս սկզբումը Թագաժառանգը բերել է տալիս Բազդատից մէկ երևելի արհեստով ականագործ հայ Գաբրիէլ անունով, որ և զետեղուում է Երա պալատին կից Զէրէխանէ ասուած արհեստանոցում· Գաբրիէլը որոնում է մէկ Նրբաբանդակ ոսկերիչ, գտնում է երիտասարդ Թադէոսը, և նրան վեր է առնում իւր գործարանի մէջ իբրև գլխաւոր իւր ունեցած վարպետների·

Թագաժառանգը Գաբրիէլի արհեստանոցը գնալով գալով ճանաչում է Թադէոսը, նրա ճարտար և նուրբ ձեռագործերը տեսնելով· ուստի և խրատում է չքրտականանալ ոսկերչութեան արհեստովը, այլ աշխատել սովորել ականագործութիւնն ևս, և մէկ անգամ էլ էս նիւթի վերայ խօսելիս ասում է թէ՝ ցանկալի է ինձ տեսնել որ իմ հպատակներն ևս սովորած լինէին զանազան արհեստներ, որ այնուհետև կարօտութիւն չունենայինք արտասահմանից վարպետներ հրաւիրելը· Թադէոսը Թագաժառանգի այս խօսքերից խրախուսելով սկսում է տաք տաք աշխատել և նմանել իւր վարպետին·

Եւ որովհետեւ չորս հինգ տարի անցած չանցած՝ Գարբիէլը վախճանվում է, ուստի և թագաժառանգը՝ նրա տեղը նշանակում է Թադէոսը, վերանոռանելով Թուրաբ, որին 1815 և 1819 թուերին ուղարկում է Կ. Պոլիս դանազան ակնեղէններ գնելու իւր կանանոցի, որդւոցը և կամ չահին ընծայելու համար։ Թուրաբն այս յանձնարարութիւնները կատարում է մեծ հաւատարմութեամբ, և մէկ տարի էլ այնտեղ մնալով առաւել ևս կատարելագործում է իւր արհեստը, որով նորա բարի համբաւը Իրանի մէջ հետզհետէ տարածուելով չատ հեռի քաղաքներից, յանձնարարութիւններ է ստանում նա, որ նոր ճաշակով, այսինքն Կ. Պոլիս նոր տեսած կամ նոր հեռը բերած օրինակներովն ու ձեւերովը չինէ.

Աբբասը Կոստանդնուպալսից բերած՝ իւր թանկագին քարերից և իւր ընտրած օրինակով մէկ հատ բազպան և մէկ կանանց գլխի ջղկայ է չինել տալիս Թուրաբին և ընծայ ուղարկում չահին։ Վերջինս լսելով որ այն գեղեցկաչէն ընծաները Թուրաբի ձեռագործներն են, հրովարտակ է գրում որ Թուրաբը գնայ Թէհրան պաչտօնական ակնաղագործի պաչտօնով. բայց որովհետեւ թագաժառանգը չէր ուզում նրան թոյլ տալ, նոյնպէս էլ Թուրաբը չէր ցանկանում գնալ Թէհրան, ուստի դանազան պատճառներ բերելով առ ժամանակ մնում է Թավրիզ։

Այդ միջոցները Թուրաբի կնոջի ոսկեդարն էր։—Դա միջոց ունէր հրաչացնել իւր անունը ինչպէս մուսուլմանների, նոյնպէս և իւր ազգայնոց առջեւ։ Դա այն ժամանակը երեսի պալատականներից մէկը լինելով հայ գիւղացիները նեղանալով իւրեանց կալուածատէրներից, սկսում են գիմել Թուրաբին, որն որ մէկ լաւ ընթացք էր բռնել, այսինքն այս վշտացած գիւղացիների համար նախ կմիջնորդէր, կրաբեխօսէր կալուածատէրների մօտ, որպէս զի մէկ կերպով քաղցրութեամբ վարուէին հայերի հետ, և ապա եթէ նոքա յամառուէին, այնուհետեւ նա կգիմէր թագաժառանգին, և կը խնդրէր, որ ինքը՝ թագաժառանգը վերահասու լինի գործին էութեանը և արդար վճիռ անէ.

Զարմանալին այն էր, որ երբեմն երբեմն և մուսուլման գիւղացիները ևս կգիմէին Թուրաբին։

Թուրաբը լսում է որ մօլլաների զրոմամբ խուժանը պատրաստվում է յարձակվիլ Թաւրիզի հայ բնակիչների տան վերայ գիտի կարասները խորտակելոյ պատրուակաւ, նրանց կամ-կարասիքը թալանելոյ, ինչպէս և չատ անգամ նրանք արել էին. վաստոյոյ փութիով հաղորդում է Աբբաս-Միրզային,

Նաև էլ մէկ գունդ զօրք է ուղարկում չրջապատել Հայոց թագը՝ որ թոյլ չտան խուժանին դէպի այն նկրաւոր։ Մէկ քանի օրից յետոյ, թագաժառանգը վերադառնալ լինելով խնամում է զրպարտողների անունները, ուստի ուղում է պատմել նրանց, բայց թուրքը խնդրում է որ նա ձեռնասուն չլինի այդպիսի ձեռնարկութեան, վասն զի պատժողները կամ նրանց ազգականները սրտերումը ոխ պահելով ուրիշ ժամանակ առիւն ևս վատթար կերպով վրէժխնդիր կլինին հայերից։

Պարսկահայերի նուիրական ուխտաւորներն եղած են և այժմ ևս Արտազի թադէոս առաքելոյ վանքը, և Մազարիի Ստեփանոս Նախավկայի մենաստանը։ Մէկ անգամ թուրքը կամենում է իւր բնանիկով գնալ ուխտ թադէոս առաքելոյ վանքը, թագաժառանգը արձակուրդ չէ տալիս, ասելով թէ, այս ինչ ձեռագործերը չունէ, վերջացրու և յետոյ գնա։ Դա պատասխանում է թէ տեսէ այս չարաթի չգնամ, այնուհետև մինչև մէկ տարի պիտի սպասեմ մինչև այն սուրբի տօնի օրը, որովհետև իմ անունը այն սուրբի անունը նուիրված է, և իմ ծնողքը մանկութեան օրերից ընծայած են այն վանքին։ Այս զրոյցի վերայ թագաժառանգը հետաքրքիր է լինում, և հրամայում է պատմել այդ սուրբի անցքը, նրա նահատակութիւնը և երբ լինելը։ Թուրքը լաւ ծանօթ Ս. Գրոց և Հայոց պատմութեան, քանզի Կ. Պոլիս աշակերտած էր մէկ երեսի ուսումնական վարժապետ, և բնական էլ ճարտար լինելով երկարօրէն պատմում է թագաժառանգին, որ և հրամայում է գնալ և ասել այն վանքի առաջնորդին (կարծեմ Սիմէոն եպիսկոպոսին), որ առաջիկայ տարին թագաժառանգը մտադիր է գնալ վանքը, ուստի մէկ ամիս առաջ լուր տայ նրան, որ պատրաստուի գնալու։ Արդարև յետոյ գնում է այն վանքը, և մերձ մէկ չարաթի կենում է այնտեղ, վասն զի առատ որսորդութեան տեղ է, և երբ վերադառնում է Թաւրիզ, ճարտարապետ է ուղարկում վերանորոգել վանքի գմբէթը և աւելացնել խուցեր, որպէս զի ուխտաւորները կարողանան նրանց մէջը տեղաւորուիլ, և ոչ թէ ինչպէս էիր տեսել էր՝ բաց երկնքի տակին մնալ։ Այդ շինութեան ճակատին գրուած է թագաժառանգի յիշատակարանը մէկ քարի վերայ, որ և գրիչս օրինակել էր, բայց կորաւ իմ գրագրասնի հետ։

Թագաժառանգը յետոյ լսում է, որ Նախավկայի մենաստանն ևս առաւել լաւ որսորդութեան տեղ է, մանաւանդ որ այնտեղ լաւ ջուր, խիտ անտառ կայ, և Երասխի ձուկն առատ է։ ուստի մէկ անգամ էլ այնտեղ է գնում, ուր և հրամայում է զանազան վերանորոգութիւններ անել իւր ծախքովը։

Եւ այսպէս, մինչդեռ Թուրքն ապագայ յոյսերով մեծագայլ առաջ էր գնում, և ահա յանկարծ ծագում է Ռուսաց և Պարսից վերջին պատերազմը։ Ռուսները առնում են Թավրիզը, յորում ժողովում են բոլոր նրանց զորագլուխները, զորապետներն ու զօրավարները, չուռով գալիս է նաև ընդհանուր զօրավար Պասկիէվը, և սկսում է երկու տերութեանց մէջ դաշնախօսութիւնը։ Թուրքն այդ մինչդին Ռուսաց մեծամեծների կողմանէ այնքան արծաթեղէնի և ոսկեղէնի յանձնարարութիւններ է ստանում, որ պարտաւորւում է նոցա երկպատկել, և ապա երեքպատկել իւր զօրավարների թիւը։

«Մէկ օր, ասում էր Թուրքը թէ «Վեհազն Եղիազար Եղիազարեանը (Մոսկուայի Լազարեվը) ասաց ինձ թէ, փարպետ, ես հպարտանում եմ, երբ Ռուսների բերանից լսում եմ քո բարեխիղճ և ճշտութեամբ իրեր գնահատածդ . . . և այլն»։ Այս դիւթական յարաբերութիւններից Թուրքը հրապուրված, երեւակայում է որ Ռուսները իւրեանց երկրումն ես անչուչտ այնպէս կընդունեն նրան ու կպատուեն. վասն զի եթէ Պասկիեվն իւր ձեռքով թէյ էր մատուցանում նրան, ապաքէն նոքա ստորադրեալներն ինչպէս պատվում կլինէին նրան։ Սրանից զատ՝ աչքի առաջ ունենալով Դերսէս արքեպիսկոպոսի հրապուրիչ նամակը, նրա զրկած եպիսկոպոսի ձոխ ու ճարտար յորդորանքը, վեհազնեայ Եղիազարեանի ապագայ խոստմունքը—ամենից առաջ իւր ընտանիքովը ազատելովը և նոցա գերդաստանովը գաղթում է Օրդուբատ և Ագուլիս, կարձելով թէ՝ այստեղի եղանակն ու օդը նման լինելով Թավրիզի օդին ու եղանակին, առողջարար կլինի նոցա Աստղջարար էին, արդարև, բայց առանց նիւթական ապրուստ հայթհայթելու. վասն զի Թուրքը և նրա զորավարները գործ էին ուզում, և ոչ թէ առատ մրգեղէն, գինի, օղի և այգեստան. ուստի և բաւական ժամանակ փորձելով ու տեսնելով, որ իւր սրտեստոր նոյն յարգը չունեցաւ. Ռուսաստանի մէջ՝ ինչպէս երեւակայում էր նա ի սկզբան, 1831 թուի վերջերումը Թուրքը վերադարձաւ Պարսկաստան [1]), ուր ներկայանալով Թավրիզի մէջ Արբաս-Միրզային դիմացը ծունկ է չոքում, մնալով գոչում և ասում, «Տէր արքայ, իմ ապերախտութեան փոխարէնը կրեցի մեծամեծ թշուառութիւններ ու

[1]) Այս մասին մեզ առանձին յայտնած հրատարակած է գրքոյս (թեև առանց ստորագրութեան) «Սահակ արքեպիսկոպոս Պարտեւեանց» վերնագրով, 8ես «Մասիս» օրագրի 1755—1759 համարներում. Կ.-Պոլիս, 1874.

վիշտեր, և հասկացայ որ քո աղուհացն իմ աչքերս բռնեց և ես տարաբախտութեանս պատճառ եղայ, վանորոյ և այժմ իմ քանի մի գործավարներովը վերադարձայ դարձեալ բարերարիս և երախտաւորիս դուռը և այլն, և այլն։

Թագաժառանգը չհանդուրժելով Թուրաբի պարզ և սրտառուչ խոստովանութեանը, որ ընկնում էր այն տարաբախտ մարդոյ բերանից, որին երբեմն շատ հաղարներով էր հաւատացել, և այժմ այնպիսի դառը վիճակումն էր ներկայանում իւր առենում, ինքն ևս սկսեց լցուել և մէկ քանի կաթիլ արտասուք ևս թոռեց իւր աչքերից, վանորոյ հանեց թաշկինակը, աչքերը մաքրեց, ու իրեն յատկացեալ քաղցր դէմքովը հրամայեց Թուրաբին ոտքի կանգնել, ասելով «Թուրաբ, Թուրաբ, թագաժառանգը մոռացար անցեալը, ուրեմն գնա, նստէ գործարանումդ, և յիմար ազակերտիդ, Աւետիքին (Աբրահիմ) խրատէ որ միւսանգամ չհամարձակուի արքեալ մտնել այն գործարանը»։

Թագաժառանգը հետեւեալ օրը ուղարկում է երկու հարիւր թուման դրամ, որ Թուրաբը գործարանի պակաս-պառատի համար գործ դնէ, և կամ նրանով առ ժամանակ իւր ազակերտներին օգնէ։ Այս բաւական չհամարելով քիչ ժամանակին շանը խանութեան տիրոջս է ընտրում նրան։

Թուրաբ-խանը պատմելով թագաժառանգին Թուսաց կողմն անցած Հայերի վիճակը, մինչեւ ժամանակը հասկանալով և նրա ցանկութիւնը, որպէս զի ինչ կերպով և լինի ազատակ վերադարձնել Թավրիզի բնակիչ արհեստաւորները, առանց որոց Թավրիզի մէջ արհեստները շատ կաղացել էին, վանորոյ և Թուրաբ-խանը խորհուրդ է տալիս թագաժառանգին, որ մէկ բաղամ, այսինքն հրամանագիր տրուի Հայերին թէ՝ այսուհետեւ Թավրիզեցի Հայերը գլխահարկ չտան տէրութեան մինչեւ յաւիտեանս, որպէս զի նոքա այս արտօնութեան վերայ հիմնուելով՝ վերադարձին։ Արդարեւ այս բաղամի լուրը երբ հասաւ Պարսկաստանի Թավրիզ քաղաքից գաղթած Հայերին, շատերը վերադարձան իւրեանց ծննդեան քաղաքը։ Պարսից տէրութիւնն այդ բաղամի զօրութեամբ մինչեւ ցայսօր վարվում է Թավրիզի բնակիչ Հայերի հետ, մանաւանդ որ 1852 թուին միւս թագաւոր-խան Թագրատունին այդ բաղամը հաստատել տուեց և ներկայ Նասր-Էդդին շահին։

Թուրաբ-խանը փոքր ժամանակից յետոյ գնաց Թէհրան արքունիքի գլխաւոր ականագործի պաշտօնով, և ինչ վարկ որ Թավրիզ ունէր, այնտեղ ևս առաւել ունեցաւ։ Նա մնաւ Թէհրան 1846 թուին, և թողեց մէկ զուտար, որ ամուսնա-

ցաւ Աբնամ-Ալի-Գովլէ Սուլէյման-խան Ինիկոլոփեանցի հետ, իսկ Թուրաբ-խանին յաջորդեց Թոմաս-խան անունով մի կիր, որ առանց ամուսնանալոյ մնաւ Քասվերդի մէջ։

ԻԸ։

ԺԱՆ ԴԱՎԱՈԻԹ-ԽԱՆ ԿԱՄ ԴԱՎԱՈԻԹ-ԽԱՆ ԴԱԻԹԵԱՆ ԶՄԻՒՌՆԱՑԻ։

Այս երեկի անձնուրոյթիւնը զանազան տեղ, զանազան ժամանակ և զանազան անուններ է ստանում։ Երբ նա վարժատանը կարդում է լինում Զմիւռնիա, նրան անուանում են աւազանի անունով Յովհաննէս։ Երբ չափաս է դառնում և գնում Կոստանդնուպոլիս, նա անուանվում է Ջան, ապա՝ Ջան, և յետոյ միւսիս Ջան։ Զմիրնի ժամանակաց գալով Պարսկաստան՝ դառնում է միւսիս Ջան, և երբ խանութեան պատուանուն է ստանում, փոխվում յորջորջվում է Ջան-Դաւութ-խան, և կամ ինչպէս Պարսից պատմութիւնն անուանում է սոսկ Դաւութ-խան, և երբեմն Ջան-Դաւութ-խան, նպատակաւ, որպէս զի ժամանակաւ չերեայ թէ՝ սա Հայ կամ մինչ բառիս ասած, այլազգ չէ, այլ Պարսիկ է, քանզի պարսիկներն անուանում էին Ջան Դաւութ-խան։

Յովհաննէսը ծնած էր Զմիւռնիա, Դաւթեան կամ Դավութ-օղլի յայտնի գերդաստանից։ Նա հայերէն, իտալերէն, յունարէն, ֆրանսերէն և տաճերէն գրել ու խօսելը սովորում է իւր հօր տանը։ իսկ պարսկերէնը Պարսից դեսպանատնը։

Պարսկաստանի առևտրական յարաբերութիւնները Ցանկաստանի հետ այս դարի առաջին քառորդումը՝ սկսում է ցամաք ճանապարհով և հասնում է մինչև Զմիւռնիա, ուր և սակաւ առ սակաւ ժողովվում են բաւականին պարսկանպատակ վաճառականներ, որոց զանազանները չատանալով, և այնտեղ չունենալով հիւպատոս՝ ազերսագիր են ուղարկում Թավրիզ թագաժառանգ Աբբաս-Միրզային, որպէս զի մէկ բազում չեղոնէ այնտեղի հարուստ պարսկանպատակ Աղա Ալի-աքպարի անունով, որ իբրև հիւպատոս պաշտպանէ նրանց իրաւունքները Ցանկաց դիւանատուններում և կամ Եւրոպացի իրաւունքները Ցանկաց դիւանատուններում և կամ Եւրոպացի հիւպատոսների մօտ։ Այդ Ալիաքպարը պատմում էր թէ՝ մինչև

այն ժամանակը Իրանը ռոճիկ ստացող հիւպատոս կամ դեսպան չունէր Յաճկաստանի մէջ. ուստի և Պարսից տէրութիւնը երբ մէկ քաղաքում ստիպողական և երեսելի անցք կամ գործ ունենար, արտաքոյ կարգի մէկ անձն կը ղրկէր այնտեղ, որ այն գործը վերջացնէր. և վերջացնելէն յետոյ, կամ թէ կիսատ կթողնէր, կվերադառնար Պարսկաստան։ Իսկ առաջին հիւպատոսը Պարսկաստանից ես նշանակուեցայ Զմիւռնիա թէև առանց ռոճկի, բայց Միւղիմ տիտղոսաւ. այսինքն այնտեղ հաստատ բնակուող։ Ցիմրդ և իբդ՝ այս Ալիաքպարն, որ յետոյ Հաջի-Ալիաքպար-բէգ եղաւ, ծանօթ լինելով Դաւթեան գերդաստանի հետ, և տեսնելով Յովհաննէս պատանուոյ լեզուագիտութիւնն ու աշխատասէր և հաճոյ բնաւորութիւնը, ընդունում է նրան Պարսից հիւպատոսարանում թարգմանի պաշտօնով։

Երբ 1830 թուին Ռուսաց և Յաճկաց պատերազմը վերջացաւ և այնուհետև բացուեց Երզրումի նաւահանգիստը՝ Իրանի և Յաճկաստանի առևտրական յարաբերութիւնների համար, Զմիւռնիա եղած առևտրական գործերը բերուեցան Կ. Պոլիս, ուր օրըստօրէ պարսիկ վաճառականները բազմանալով Իրանն էլ պարտաւորվեցաւ մէկ դեսպան ուղարկել այնտեղ, որ պաշտպանէ իւր հպատակների իրաւունքները։ Այս ընտրութիւնը վիճակեցաւ Միրզայ-Զէֆէր-խանին (որ յետոյ Մաւշիր-Ուդ-Դաուլէ) որը Լօնդօն ճարտարապետութեան գրպրոցումն ուսած և կրթուած, փոքր ի շատ տեղեակ էր Եւրոպայի կեանքին, և ուղղորվում է Պոլիս երեսելի պաշտօնատարներով և ծառաների բազմութեամբ, բայց առանց ֆրանսերէնի և իտալացւոց լեզուների թարգմանի, կարձելով թէ՝ իւր ուսած անգլիարէնը այնտեղ բաւական կլինի նրան, ընդհակառակն՝ հասնելով Կ. Պոլիս, նկատեց որ իւր սովորած լեզուն բաւական չէր, պարտաւորվեցաւ որոնել, գտնել մի այնպիսի թարգման, որ իտալերէն, ֆրանսերէն և տաճկերէն գիտեր։ Այդ ժամանակը վերոյիշեալ Աղա-Ալիաքպարն եկած էր Զմիւռնայից ներկայանալ նոր եկած դեսպանին, որին և առաջարկում է Յովհաննէս Դաւթեանը, բայց Զէֆէր-խանը ուշադրութիւն չէ դարձնում նրա խօսքին, այլ ինքն արդէն որոնում է և գտնում մի յոյն թարգման, որ վատ լինելու համար արտաքսում է և բերում մէկ ուրիշը, սա ևս չէ համապատասխանում նրա նպատակին, վատնելով ստիպեալ գըրում է Ալիաքպարին, որ Զմիւռնիայից Յովհաննէս Դաւթեանը ուղարկէ։

Յովհաննէսը երբ Կ. Պոլիս է հասնում, Միրզայ-Զէֆէր-

խանը յայտնում է նրան իւր նպատակը թէ պիտի մնայ հոն դեսպանատան թարգմանի պաշտօնով։ Դա պատասխանում է թէ՝ Ագա-Ալիաքպարը Զմիւռնիա չյայտնեց ինձ ձեր նպատակը, որ ես ես յայտնէի ծնողներիս և նրանց համաձայնութիւնն ստանայի, վասն զի ես առանց իմ ծնողների համաձայնութեանը չեմ կարող խօսք տալ ձեզ, և առանց նոցա կամացն ու օրհնութեանը աշխարհս փառքն ու պատիւը եթէ ինձ տար, չեմ մնայ Կ.-Պոլիս։ Միրզայ-Չէֆէր-խանին չատ զուր է գալիս Յովհաննէսի այդ պարզ և լուրջ պատասխանը, վասնզորդ նա զգալով ասում է «պան, պան. մարդան քեզ, որդի, ուրեմն մա քեզ այս գումար դրամը ճանապարհդ ծախսի համար, վերադարձիր, ծնօղացդ օրհնութիւնը ստացիր և այնպէս արի»։

Միրզայ-Չէֆէր-խանն այդ անցքը պատմելով ինձ ասում էր թէ «Յովհաննէսի առաջի այդ խօսքերը ինձ այնքան դուր եկան, որ ահա 25 տարի է ես նրան սիրում եմ և պատմում, և այդ խօսքերը հանգուցեալ Մահմմէտ-խանին, և ներկայ չատին ես պատմած եմ»։ Յովհաննէսը իւր ծնողների օրհնութիւնն ու համաձայնութիւնը ստանալէն յետոյ, չատով գալիս է Պոլիս, և այնուհետև նա անուանվում է միւսիս ֆանտ։

Ինչպէս ասացինք, մինչև այն ժամանակ Իրանը չունենալով Ջաճկաց դրամը դեսպան, չատ անկարգութիւններ էին ծագած այս երկու տէրութեան սահմանագլուխներում, և մանաւանդ Պարսից հպատակները Իրանց բնական սովորութեամբ ցրուած լինելով Ջաճկաստանի զանազան բաղաքներում, ուր հիւպատոսներ չլինելով նոցա բաղաքները մնացել էին անկատար, և այժմ դեսպանի գալոյ վերայ հետզհետէ հաղարաւոր բաղաքներ բարդուեցան դեսպանատան դիւանում. ուստի Միրզայ-Չէֆէրը չատ քաղաքներում, ուր պարսիկները առատագոյն յարաբերութիւններ ունէին, նշանակեց հիւպատոսներ, փոխ-հիւպատոսներ, իսկ Կ.-Պոլսի մէջ վերջացնելու գործերը յանձնեց իւր առաջին խորհրդականին և միւսիս ֆանտին, որպէս մէկուկէս տարուայ մէջ փութաջան եռանդով աշխատելոյն և չատ գործեր վերջացրին, և որով վերջին, 1833 կամ 1834 թուին ստացաւ Ֆաթ-Ալի-չահից Ադիւ-Արեգական երրորդ ատիճանի ադամանդեայ չքանչանը։

Միրզայ-Չէֆէրը որպէս քաղաքագէտ մարդ, կամենալով Եւրոպայի տէրութիւններին ծանօթացնել Պարսկաստանը, սկսեց՝ նախ Բելգիոյ դեսպանի հետ բանակցութիւններ, և ապա 1841 թուին առևտրական դաշնադրութիւն անել, և որովհետև այս բանակցութիւնները լինում էին միւսիս ֆանտի մէջ

Նորդութեամբ, ուստի նա ստացաւ Բելգիոյ Լէոպոլտ կարգի ասպետութեան շքանշանը։

1834 թուին մենոյն կերպով Իրանը դաշնադրութիւն կնքեց Իսպանիոյ տէրութեան հետ, որի մասին Ֆանը ստացաւ Իզաբէլ-Կաթոլիկի կարգի ասպետութեան պատուանշանը։

Երկար ժամանակ էր, որ Պարսից և Ցանկաց մէջ սահմանագլուխների մասին վէճ կար, որոյ համար շատ անգամ բանակցութիւններ եղած էին նրանց մէջ, բայց միւռ մնացած էին թերկատար։ 1844-ին այս վէճը քննելու համար նշանակուեցաւ Էրզրումի մէջ մասնաժողով, որ բաղկացած էր Պարսից, Ցանկաց, Ռուսաց և Անգլիացւոց պաշտօնատարներից։ Պարսից կողմից նշանակեցաւ Միրզայ-Թաղի-խան Ամբրպատկանի վէզիր-նիզամը, և նրա խորհրդական և թարգման մուսիո Ջանը (այժմ էլ այսպէս կոչեցաւ), որպէս երկար ժամանակ ծառայած կ. Պոլսում Պարսից դեսպանատանը, ուրեմն և տեղեակ այս վէճին վերաբերեալ բանակցութիւններին։ Այս մասնաժողովի մասին ոչքա Էրզրում քաղաքի մէջ կացան ամրողջ երեք տարի։

Միրզայ-Թաղի-խանը բնական խելացի և ուշիմ մարդ էր, և երեք տարուայ միջոցում, իւր պարապ ժամանակները գործ դրաւ իւր մտաց կրթութեան համար, այսինքն միւսիո Ջանը ստոյգութեան նրան ընդհանուր պատմութիւն, աշխարհագրութիւն, այլև օրքան նոքա հպատակներ և զօրք ունին ստքի վերայ, և օրքան կարող են հարկադրեալ ժամանակին զօրաժողով անել։ Նոցա հին և նոր պատմութիւնները, նոցա քաղաքական նուրբ իրազործութիւններն ու օրէնդրութիւնները, մէկ խօսքով Ջանը վերածնեց նրան նոր մարդ, որպէս ինքը Միրզայ-Թաղին կխոստովանուէր։ Վերջինս պատմում էր թէ ես առաջ Եւրոպացիների լրագիրները վայրաչաչ բան կհամարէի, բայց միւսիո Ջանը երեք երեք այլեայլ օրագիրներ բերել տուաւ, և կարդալով թարգմանեց ինձ, այն ժամանակը փոքր առ փոքր ես հասկացայ որ՝ ով լրագիր կամ օրագիր չկարդայ, նա կոյր է մտքով։

1847 թուին (1263 Հիջրին) Միրզայ-Թաղին և միւսիո Ջանը վերադարձան Թէհրան, ներկայացան շահին, որ մեծ շնորհ ցոյց տուեց և միւսիո Ջան-Դաւութին Էրզրում թարգմանած և շահին ուղարկած օրագիրների համար Միրզայ-Թաղի միջնորդութեամբ շնորհեց գնդապետի շքանշանը և անմիջապէս խանութեան տիտղոս, ու վերադարձրեց Թավրիզ, որ թագաժառանգ Նասր-Էդդին-Միրզայի քով Միրզայ-Թաղին լինի վէզիր, Ջան Դաւութ-խանը թագաժառանգին առաջ

թարգման և կրթող քաղաքագիտական ուսումով։ Սոցա թէհրանից դուրս գալու օրը, չարը չնորհեց Ջան-Դաւութ-խանին և գնդապետութեան ասպիճանի ժամանէնը, որ ուսցը կախած կրէ։

Փոքր ժամանակից յետոյ մնաց Մահամմէտ-չարը, և նրա թագաժառանգ Նասր-Էդդին-Միրզան ուղարկեցաւ թէհրան, բազմիլ իւր հօր գահի վերայ։ Հասաւ նա թէհրան, և նշանակեց Միրզայ-Թաղի-խանը Ամիր-Նիզամ, այսինքն որպէս Սադր-Ազէմ, և Ջան-Դաւութ-խանը չահի դրան առաջին թարգման, անուանելով հրամարտակի մէջ Դաւութ-խան։

Նասր-Էդդին-չարը թէհրանում կանգնացրեց առաջին անգամը մէկ համալսարան, որի իւրաքանչիւր ճիւղի ուսման համար ուսուցչապետներ էին հարկաւոր, ուստի և 1850 թուին ուղարկեց Դաւութ-խանը Աւստրիա և Ֆրանսիա, որպէս զի այնտեղ խորհրդով այն տէրութիւնների արտաքին գործոց նախարարների՝ ուսուցչապետներ վարձէ և ուղարկի թէհրան։ Այս անգամն ստացաւ նա Աւստրիայ տէրութիւնից Ֆրանցիսքի առաջին կարգի պատուանշանը և Ֆրանսիայ տէրութիւնից Լէգէոնի պատուոյ կարգի ասպետութեան չքանշանը։

Միևնոյն ժամանակ Պարսկաստանը արտաքոյ կարգի դեսպան ուղարկեց Ս.-Պետերբուրգ Միրզայ-Մահամմէտ-Հիւսէյն Սադր-Ֆիւան-խանէ, և նրա հետ խիստ երեսի պաշտօնատարներ, փանսոյայ և չարը հրամարտակ ուղարկեց Աւստրիա և Ֆրանսիա, որ ինչ տեղ էլ գտնուի մեր Դաւութ-խանը, փութայ, գնայ միանայ դեսպանի հետ առաջին թարգմանի պաշտօնով։ Նա կատարում է չահի հրամանը, և երբ այս արտաքոյ կարգի դեսպանը ներկայանում է Թուսաց կայսեր, նրա հետ լինում են նրա խորհրդական Միրզայ-Բոզորկն ու մեր Դաւութ-խանը։ Դեսպանութեան ամենայն անդամները ստանում են չքանշաններ և պարգևներ, որոնք կպատկանէին ոչ քրիստոնեաներին, իսկ Դաւութ-խանը որպէս Հայ-քրիստոնեայ ստանում է սրբոյն Անդրէի երկրորդ կարգի ազատանդեայ չքանշանը։

1857 թուին չահն ուղարկեց Դաւութ-խանը Թիֆլիս, որուն և յանձնեց իւր ազատանդից յետուած պատգերը՝ նոր եկած կենդ Բարեսաթինսկիի համար, երբ և Դաւութ-խանը ստացաւ [1]) սրբոյն Ստանիսլաւի երկրորդ կարգի ազատանդեայ չքանշանը։ Նա չահի յանձնարարութեամբը Թիֆլիսից

---

[1]) Տես ռուսերէն «Պավկազ» օրագիրը 1857 թուականի 84, 87 և 95 համարները։

գնաց Վիեննայ, և այնտեղից վերադառնալիս գնաց իւր ծնունդեան քաղաքը Զմիւռնիա, ուր ամուսնացաւ Յասվալեանի դերդաստանից սերուած այրի Եղիսաբէթ տիկնոջ հետ, և վերադառնալիս գնաց Կ.-Պոլիս, ներկայացաւ սուլթանին, որ շնորհեց նրան Մէջիտիէ կարգի ասպետութեան շքանշանը, երբ ժամանեց Թէհրան, շնորհեց նրան սարթիփութեան, այսինքն զօրապետութեան աստիճան, անմիջապէս և նոքա ժապաւէնը ազամանդեայ շքանշանով [1]).

1858-ին վախճանեց Խոսրով-խան Ղայթմազեանը, վասնորոյ և շարք յանձնեց Դաւութ-խանին Իրանի մէջ գտնուած Հրէաները և հին Պարսից դեսպանները, որպէս զի այնուհետև նա հոգէ նոցա վերայ, և թոյլ չտայ մահմէտականները նրանց զրկեն ու նեղացնեն։

Երկար ժամանակէ հետէ Անգլիոյ, մանաւանդ Ռուսիոյ դեսպանատունները զանգատում էին շահին՝ որ մէկ պաշտօնատար ուղարկէ Ատրպատական, որպէս զի անտեղի իւրեանց հպատակների առնելիքներն ստանայ Պարսից հպատակներից և յանձնէ պարտատէրներին, բայց ինչ պաշտօնատար որ գըտնում էր Ատրպատական, կաշառ էր ստանում պարտականներից և ոչինչ չէր տիւում, վասնորոյ այս անգամ խնդրեցին շահից՝ որ մէկ քրիստոնեայ պաշտօնատար ուղարկէ։ Շահն ընտրեց Դաւութ-խանը, որ 1862 թուին եկաւ Թաւրիզ, և անաչառութեամբ, խստութեամբ և ջանասիրութեամբ աշխատելով մինչև մէկուկէս քուրուի գործեր վերջացրեց։ Ռուսաստանի դեսպանը տեսնելով Դաւութ-խանի փութաջանութիւնը, խնդրեց շահից, որ նշանակէ Դաւութ-խանը Թուսաց և Պարսից սահմանագլուխներում եղած վէճերն ուսարկ. վասն զի Ռուսաց հպատակների այդ պահանջների համար՝ շատ անգամ նոյնպէս պաշտօնատարներ գնացած էին, բայց ոչինչ չէին վճարած։ Դաւութ-խանը գնաց Մուղան դաշտը, ուր սկսեց վերահասու լինել գանգատաւորների բողոքներին։ Նա այն կողմերում օգի վատութիւնից ու ջերմութիւնից հիւանդանալով՝ վերադարձաւ Թէհրան, յուսալով որ թերեւս այնտեղի բժիշկները կարողանան նրան ապաքինել, բայց նոքա խորհուրդ տուին որ նա գնայ Եւրոպա ու այնտեղ բժշկուի։ Այս պատճառաւ շահը հրամայեց արքունական գանձարանից

[1]) Դաւութ-խանը, որպէս Թիֆլիս, Նոյնպէս և Թաւրիզ անց ու դարձ անելու ժամանակ, դերդաստանով կիշներ իմ մօտ. ուստի և նոքա ուրուան հրովարտակներից օրինակած էի նրա շքանշանների մասին, բայց դժբախտաբար ամենը կորան, միայն վերոյիշեալների պատճէնները մնացին։

վճարել նրա ճանապարհի և Եւրոպայի բժիշկների վարձի համար ծախսերը, անմիջապէս և հրամայեց Սամսոն Աղա Դաւաթեան անունով Մարաշցի բժշկին, որ Խրիմում զինուորական, բժիշկ էր, ուղեկից լինի նրան, ասելի հացչի մինչև Փոթի, և յետոյ վերադառնայ Թէհրան։ 1865 թուին Մայիսին նրան եկին Թիֆլիս, 20 օրից յետոյ գնացին Փոթի, ուսկից Բաթում գնալու ժամանակ Դաւիթ-խանը չոգնաւի մէջ վախճանվում է։ Նրա դիակը տանում են Բաթում, ուր չլինելով Հայոց եկեղեցի և քահանայ, թաղում են նրան Յունաց եկեղեցիի արևելեան կողմում գաւթի մէջ սեղանի քամակին։ Դաւիթ-խանից մնաց մէկ արու զաւակ, որ չորս տարեկան հասակին նոյնպէս վախճանվեց։

Շատը երբ լսում է Դաւիթ-խանի մահը, շատ ափսոսում է և հրամայում, հազար թումանի դրկեն նրա ամուսնուն որպէս նպաստ։

Հրէաներն ու հին Պարսիկները լսելով Դաւիթ-խանի մահը, շրջաբերականներով հաղորդում են իրանց հաւատակիցներին, որ ամենայն տեղ իրանց աղօթատեղիներում, հոգեհանգիստ կատարեն նրա հոգոյ համար։ Այդ միջոցներ գրիչս հարցուցի մէկ խախամ հրէայի թէ՝ ինչի նրա թոսրոլ-խանի համար հոգեհանգիստ չկատարեցին։ Նա պատասխանեց թէ՝ թոսրոլ-խանը իւր ծերութեան պատճառաւ մեր գանդատները իւր Պարսիկ ստորադրեալներին էր յանձնում, որոնք շատ անգամ կաշառք էին առնում և իրանց կրօնակիցներին պատպանում. իսկ Դաւիթ-խանը ինքը անձամբ վերահասու էր լինում մեր գանդատներին ու ճշմարտութեամբ դատում. և երբ ինքը բացակայ էր լինում, թողնում էր իրան տեղապահ հայ ատիճանաւորներ, որոնք անիրաւ չէին թողնում. ուստի և մեք պարտաւոր ենք պատուել և յարգել նրա յիշատակը։

Կը մնայ ինձ ասելցրնել, որ Յովհաննէս Դաւիթեան, կամ որ նոյն է Դաւիթ-խան, Դաւիթ-օղլի կամ Ջան-Դաւիթ զարմանալի խոշորակեաց էր, ծանրաբարոյ և մարդասէր բնաւորութիւն ունէր. նրա բազդիմամբ հպարտութիւն և ամբարտաւանութիւն բառերը չէին գրուած։ Նա հաստատ բարեկամութիւն ունէր, բայց գործում, որ կվերաբերէր իւր սրտակից բարեկամին եւս, անաչառ էր և իրաւ, և կասէր թէ՝ բարեկամութիւնն և հաշուի, պատուի և օգոյ վերաբերեալներէ դատաւորի առջեւ պիտի առանձին առանձին նշանակութիւններ ունենան։

ԻԹ.

ԱՂԱ ԱՌԱՔԵԼ ԵՒ ՍՏԵՓԱՆՈՍԻՈՐ ԵՒ ԻՍՄԱՑԻԼ-ԹԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ.

Պարսկաստանի Հայերը կարող էին ոչ միայն զինուորականութեան մէջ մտնել, այլև միայն չորս արհեստով պարապիլ, այսինքն վաճառականութեամբ, ոսկերչութեամբ կամ ականագործութեամբ, հիւսնութեամբ և գինեվաճառութեամբ, քանզի Շիայ պարսիկները իւրեանց օրէնքով չէին կարող քրիստոնեաներից թացութիւն կրող որ և իցէ բան գնել, զորօրինակ չէր կարելի հային տալ չորեր կարելու համար, որ Հայ դերձակը թաց ձեռքով չօշափէր նիւթը. նոյնպէս հաց, իւղ, պանիր, մորթի և այլն, և այլն։ Մէկ խօսքով ասած, այն բանը որ թացութեան կենթարկուէր, չարիաթը չէր ներում հայից գնել, և ահա սորա համար հայերը պարտաւոր էին միայն վերոյիշեալ չորս արհեստներովը պարապիլ և իւրեանց հացը հայիհայթել, ուստի և ոսկերչութիւնն ու ականագործութիւնը ազնուական արհեստ էր եղած նրանց մէջը, եթէ կարողութիւն չունէին վաճառականութեամբ զբաղիլ։

Աղա Առաքել և Յոհան հարազատ եղբայրները ծնած գոլով Թավրիզ բարեբարոյ և համեստ ծնողներից, սովորում են իւրեանց հօր զորձարանում ոսկերչութեան արհեստը։ Առաքելն [1] իւր հօր մահուանից յետոյ թողնում է իւր կրտսեր եղբայր Յոհանը վերոյիշեալ թաղէոսի, այսինքն Թուրարի գործարանում, և ինքը հրաւիրմամբ Քիւրդստանի վալիի (փոխարքայի) գնում է Սինէզ (Սինէ) բերդաքաղաքը, նորա մօտ ոսկերչակերտութեան պաշտօնով, և ամուսնանում է այնտեղ մէկ աստի օրիորդի հետ, և յետոյ իւր ամուսնոյ հետ վերադառնում է Թավրիզ, և իւրեան համար առանձին գործարան բանում։

---

[1] Մէկ անգամ հաշուեցէք Թավրիզի բնակիչների անունները, տեսնէք որ նոցա մէջ վեց մարդից մէկի անունը Առաքել էր, որի պատճառն, ասացին թէ՝ ըստ որում երեւելի Առաքել պատմագիրն այն տեղացի էր, վասնզի Թավրիզեցիները ուրախութեամբ էին այդ անունով կոչում իրանց զաւակները։

Փոքր ժամանակ անցած՝ ծագում է Պարսից և Թուրաց պատերազմը, երբ և Թավրիզի հայ բնակիչները գաղթվում են Թուրաստանի կողմը։ Այդ երկու եղբայրներն էլ հետևելով ոսկերչական թագէում Առաքելեանին, գաղթվում են նախ Որդուբադ և ապա Կրեան, որպէս և արդէն պատմած ենք թագէոս վամ Թուրաբ-խանի կենսագրութեան մէջ։ Ի՞նչ ասա՞ նս ինչպէս նա ենթարկուեցան նրա կարի դառն և տխուր վիճակին։ Սանեփանը երեսի է իւր բարակ և նուրբ արծաթեայ ձեռնաջրովն, վասնորոյ և Թուրաց ընդհանուր սպարապետ Պասկիչին նրան վարձատրելով պարգևում է արծաթեայ ճոխ մեդալիոն, որ այն ժամանակը մեծ պատիւ էր ստացողին։ Այդպիսի պարգևատրութիւնն և ևս ստացած էին այնտեղի քանի մի հայ ձեռագործներ, որով և նոքա քաջալերելով փութիւով միաձայն համաձայնեցան հայ եկեղեցականների և վեհանեայ Եղիազար Լազարեանի հրաւիրանացն, և գաղթուեցան Թուրաց նոր տիրապետած երկիրը, այսինքն Արարատեան նահանգը։

Նոքա գնին նեղսակրութեանց՝ թուրաբի հետ վերադարձան Թավրիզ, և երբ սա գնաց թէհրան, այնուհետև Սանեփանը ստացաւ Ատրպատականի հրամանատար շահզադայի գլխաւոր ոսկերչութեան և ակնեղործութեան պաշտօնը և վերակոչումը։

1840 — 1841 թուին շահզադայ Մեղիք-կասում-միրզան գնաց թէհրան, որ իւր եղբօրորդի Մահմմէտ-շահին ներկայանալու ժամանակ կրում էր մէկ մէջքակալ (քամար), ադամանդեայ ձեռագործն Սանեփանին շահը տեսնելով այդ մէջքակալը չատ հաճանում է, և ասում, արդեաք երբ պէտք է մեր հպատակներն ևս կարողանան այսպիսի նուրբ և բարակ ձեռագործեր շինել, որ այնուհետև չկարօտանանք Եւրոպայի ձեռագործներին։ Մեղիք-կասում-միրզան պատասխանում է թէ՝ արդեաք մեր հպատակները ինչ քաջալերութիւն պիտի ունենան, որ այնպիսին գնան գործեն և սէր ունենան այդպիսի բանի ձեռնամուխ լինելոյ ապագայ յոյսով, ինչպէս միւս ազգութիւնների մէջ կայ։ Շահն ասում է թէ՝ նրանց թոշակ կը պարգևէ՛ք, խանութեան տիտղոս կշնորհէ՛ք, կամ գլխաւոր արհեստապետութեան կոչումը կտայ՛ք։ Այն ժամանակ Մեղիք-կասում-միրզան յայտնում է շահին, որ ահա այդ ձեռագործը մեր ամենախանարհ հպատակ հայ Սանեփանին, որ և խամաչի ձեռագործն է, որին և դուք լաւ կճանաչէ՛ք։ Շահը իսկոյն հրամայում է պարգևել Սանեփանին խանութեան տիտղոս, անուանելով նրան խամաչիբաշի, և միենոյն հրամայում կում յիշել, որ նա լինի գլխաւոր արհեստապետ Ատրպատա-

կանի մէջ։ Այնուհետեւ այս գերդաստանը օր ըստ օրէ առաջ գնալով չատ օգտակար եղաւ վերազգիներ հայերին։

Այսպէս հարկաւոր կ՚համարիմ ասել, որ Երբ Թադէոս Առաքեալեանը իւր արհեստակիցներով հասաւ Թավրիզ, այնտեղ գտաւ մօտ 40 հայ գերդաստաններ, որոնք յայտնի կամ գաղտնի ազգականներ տեսնելոյ համար, Ս. Նախավկայի և Արտազի Ս. Թադէոս առաքելոյ վանքերը ուխտ անելոյ պատրաստակամ եկած էին, ու Թավրիզ խանութներ բացած, Սրանց զգալի էր գառել մէկ փոքրիկ վարժարան ունենալ Թավրիզի մէջ, որոյ մասին յանի մի անգամ դիմած էին իրանց ինքնակոչ խորհրդոյ եպիսկոպոսին, որ Շամախիից փախած, ընդդէմ Էջմիածնի Ջանթոնին, Նուիրականութեան դրամները հետը բերած, չանյուսութեամբ ապրում էր Ատրպատական, և ինքնալուսիցը դրջում էր յետնմնացած ժողովուրդի մէջ, և որպէս վանքական կալուածներից, առաջնորդական արքունիքներից և հասարակ պակներից ստացած դրամները ժողովում էր և անասանելական կեանքով ապրում, մանաւանդ երբ թագաժառանգ Աբբաս-Միրզան իմանալով նրա իւր մայր Աթոռից ապստամբուած լինելը նրան իւր նպատակին լաւ գործիք համարելով, բան թուման թոշակ նշանակեց, որպէս զի աչքատէ, քարոզէ, յորդորէ Ատրպատական մնացեալ ցրուեալ հայերը, որ այնուհետեւ չդաղթին Ռուսաց կողմերը։

Այդ եպիսկոպոսն իւր վատ բարքովն ու վարքովը առելի էր ոչնչացուցիչներին, այլեւ պանդուխտ և օտարական հայերին, վասնորոյ և վերջիններս չկամեցան նպատակ վարժարան շինելոյն, այն ինչ եպիսկոպոսն հետամուտ եղաւ դրամ հանգանակելու։ Բայց երբ Նախիջեւանից վերադարձաւ Ծերունի Տէր Յովհաննէս ուաղ քահանան Տէր Յովսէփեանց, և նրան հետեւեց Թադէոս Առաքելեանն իւր արհեստակիցներով, այն ժամանակ յիշեալ քահանան և Աղա Առաքել Մելիք-Միրասանը միացան, ոեսեցին օտարականներից ևս դրամ հանգանակել և եկեղեցոյ դաբեռնն եղած ժամկոչի խուցը մեծացնել ու վարձել մէկ վանեցի զառատեալ տրացու, որ գոնէ առժամանակ 20—25 երեխաներ հաւաքէ ու կարդալ-գրել սովորցնէ։

Այս միջոցները Անդրկովկասեան Հայերի համար սովորական էր, վասն զի Պարսից և Ռուսաց հաշտութիւնից յետոյ եկին Թավրիզ Ռուսաց հիւպատոս, գեսպան և այլ ատենագրաւորներ, որոնք պաշտպանեցին իրանց հպատակների իրաւունքներն ու առեւտրական գործերը. ուստի և Պարսկաստանի բոլոր առեւտրական յարաբերութիւնները նրանք ձեռք առին,

և մինչև անգամ Գերմանիայից, Անգլիայից և Ֆրանսիայից մեծամամ գումարներով ապրանք բերին Թավրիզ, հարկերին հինգ մաքսով։ Այս միջոցը բարեպատեհ առիթ եղավ Էջմիածնին և Մելիք-Մինասեանց հարազատներին, խանութի խանութ, անկ տուն չրմիլ օտարականներից առատ նպաստութիւններ ժողովել, որով և եկեղեցւոյ գանձարանը բաւականին մեծամամ սենեակներ կառուցանել վարժատան համար։ Այդ լուրը հասաւ Ագուլիս, ուր էր այն ժամանակ և Պողոս վարդապետ Գ. արաղաղցի երեսի վարժապետը, որ ոչ թէ Ս. Էջմիածնին, այլև Շուշի և Թիֆլիս հարիւրաւոր աշակերտներ էր ունեցել (սորա մասն աշակերտել էր Մեսրոպ Թարգմանչաց—Լ.Ջմիածնին, և Թիֆլիս 1823 ամին—գրիչս)։ Սա եկաւ Թավրիզ ստանձնել այդ նորակառոյց վարժատան ուսուցչութիւնը. բայց մէկ վանեցի վարդապետ, որ նոր խնորոյ սկսել էր դասատուութիւնը, իւր խորամանկ հնարքներով այնպիսի դիրք խաղաց, որ ողորմելի Պողոս վարժապետը հարկադրեցաւ Ագուլիս վերադառնալ։ Այնուհետև ուրիշ վարժապետներ ևս եկին, բայց ամենին էլ այդ վանեցի վարդապետը փախցրեց. մինչև որ եկաւ երևելի ու անմոռանալի Մեսրոպ Թարգմանչաց, որ համաձայնեց տարեկան 60 թուման ռոճկով կրթել այնտեղի աշակերտները, որոնք մերձ հարիւր եղած էին։ Բայց երկրացիք չկարողանալով այդ պայմանեալ գումարը վճարել, նա ևս թողեց գնաց Էջմիածին։ Միևնոյն ժամանակ Փարզանա ևս թողեց գնաց Էջմիածին։ Միևնոյն ժամանակ Գարեգին Աւաքելեանը գնաց Թէհրան, և Սանեփան Մելիք-Մինասեանը ստացաւ նրա պաշտօնն ու գործը։ Եւ այսպէս մէկ կողմից վարժատան գործերը վատթարանում էին, միւս կողմից վերադարձների թիւն աւելանում էին, ընդ որս և նրանց երեխայքը. ուստի կրկին անգամ ժողով կազմեցին դրամ ժողովել և պահպանել վարժարանը, երբ և Մելիք-Մինասեան եղբարքը [1]) ամենից առաջ տուրագրեցին 100 թուման, և միւսները իւրաքանչիւր ոք ըստ իւր կարողութեան և կամացներով և աւելացրին վարժապետներ Պարսից և Ֆրանսիացւոց լեզուների։

Այնուհետև թէպէտ վարժարանը չարունակվում էր կաղ ի կաղ, բայց երբ Սանեփանը ստացաւ խանութեան տիրոջոս, բարեպատեհ միջոց գտաւ տէրութեան թոյլտվութիւնով հրա-

---

[1]) Տես «Արգասաւոր Կուլտուրա», 1848, Նոյեմբեր, թիւ 6, ուր անուանվում այդ եղբայրները. «Իշխանական տան Յեսայեանցի Դաւիթ ... Քաջերի նոցա հոր անունը Յեսայի էր, թէպէտև Եղբայ Բառաչի մեծ որդոյ անունը։

վարտակ ստացաւ, որ իւր մեծ եղբօրորդի Բաբսեղն ու իւր որդի Պետրոսը գնան Ռուսաստան Եւրոպական լեզուներ սովորին ու վերադառնան Պարսկաստան և ծառայեն ազրութեան թարգմանութեան պաշտօնով։ Այս պատանիները չորս տարի մնալով Թիֆլիս ռուսաց և Ֆրանսիացուց լեզուներին և այնտեղի կեանքին տեղեկացան, յետոյ գնացին Մոսկուա, Լաւարիանց հաշուովը սովորեցին նոցա ձեռնարկումը։ Վերադառնալից յետոյ շարը տեսնելով այն երիտասարդների մեծ ընդունակութիւնը՝ շնորհեց Ցեարց Եղիազարեանց երկու եղբօրներին — Յովհաննէսին և Թաչատուրին, առաջի կարգի Ահիւ-Արեգական ասպետութեան չքանշանները։

Երբ մէկը կամենում է մէկ անհատի կենսագրութիւնը գրել, այն ժամանակը նրանից յայտ է գալիս, ծագում է և մէկ ազգի կեանքն ու բարոյականութիւնը։ Այդ՝ սատ ձեռնամուխ լինիք վէպել մէկ անցք, որիցք ծագում է մեր ժամանակի ինչ ինչ մարդկանց ազդեցութիւններն ու ներգործութիւնները, որոնք վերաբերում են ոչ թէ մէկ անհատի, այլ նրա բոլոր ազգին,— անցքն որին ականատես և ներկայ եղած, վասնորոյ և հրաւիրում եմ ամենայն մտածողի ուշադրութիւնը ծանօթանալ մեր ժամանակի Լրանի մէջ գտնուած վիճակին, և օտար ազրութիւնների գործակատարներին թէ՝ նոքա ինչ ազդեցութիւն են ունեցած մեր Հայերի վերայ, թէ ինչպէս նոքա վարվում էին նրանց հետ և որպիսի արդեօք մարդկանց ձեռքով նրանք հասնում էին իրանց լաւ կամ վատ նպատակներին, կամ թէ ինչի իրանց անսահման ուժն ու հեղինակութիւնը չատ անգամ ի չարն էին գործ ածում ընդդէմ իրանց առաքելի բարի նպատակներին։

Ռուսաց ընդհանրական հիւպատոս Անիչկովն ունէր մէկ որդի պատանի ծառայ Յովսէփ անունով, գուբս պրծած Թաւրիզի մէջ սենեքոր գերդաստանից, որի անպարոյական կեանքը յայտնի էր իւր երկրացիներին։ Անիչկովն [1]) իւր սէրութիւնից արձակուրդ ստացաւ գնալ Եւրոպա երկու տարի ժամանակաւ իւր առաջնորդութիւնը կազդուրելու։ Համար Նրա սպասաւորներից ոչ մէկը չհամաձայնեց գնալ նրա հետ էնքան երկար ճանապարհ, իսկ պատանին Յովսէփ ընդունեց և զը-

[1]) Իմ ժամանակը մեռ տասն հիւպատոսներ են եկած և գնացած մի գեղի մէջ, Թաւրիզ։ Նրանց հաշմանելով գործեալ Անիչկովը միւս բոլորի վերայ լաւ էր։ Եթէ այս տասը հիւպատոսների և մէկ կամ երկու պատգամաւորների գործերը, որ ընդդէմ Հայերի գրվեին, մէկ մեծ գիրք հագիւ կարողանար։ Դիպուածդիւ Համալը Թաչատուր եպիսկոպոսին տասներկու պարսիկ պա-

նաց։ Այդ հիւպատոսը երբ վերադարձաւ, նշանակեց Յովսէփը հայերէն և ռուսերէն լեզուի բերանացի թարգման հիւպատոսարանին, թէև ոչ մէկին էլ նա կատարեալ տեղեակ չէր։

Յովսէփը այդ նշանակութիւնն ստացաւ թէ չէ, քահանայ ուղարկեց Աղա Աւաքելի մօտ խնամքով, որպէս զի վերջինս իւր գուստրը տայ Յովսէփին։ Ըստ որում Աւաքելն ու Ստեփան-խանը անբաժան եղբայրներ էին, վաստրոյ միախորհուրդ և միակամ զանազան պատճառներ բերելով մերժեցին։ Սորա համար Յովսէփն այնուհետև սկսեց ծածուկ կամ յայտնի գործով և լեզուով դարձներ լարել ընդդէմ Մելիք-Մինասեանների դերդաստանի անդամներին, և նրանց ստորադրեալներին և մինչև անգամ ծառաների վերայ բարուբանքներ և զրպարտութիւններ բարդելով հիւպատոսին էր դիմում, որ և ապապարում էր Պարսից օտարական գործերի տեսուչին պատժել յանցաւորն առանց որ և իցէ քննութեան և վերջաւորութեան, բայց այդ տեսուչը հասկանալով բանի էութիւնը, և թէ ինչ է բողոքելոյ պատճառը, չատ անգամ ուշադրութիւն չէր դարձնում զրպարտիչների վերայ։ Քանի քանի անգամ Յովսէփը, ինքն անձամբ դիմից գաւառապետին և կամ տեսուչին, բողոքելով Մելիք-Մինասեանների վերայ, որպէս զի նրանց բերանացի յորդորելոյն չվերձնեալ Ռուսաց հիւպատոսարանի մէջ ծառայողներին և մէկ երկու անգամ էլ նրանց յանդիմանութեամբ վերջացրին։ Եւ չեմ կարող հաւատալ, որ Անիչկովին յայտնիչը լինէր Յովսէփի ենթադրութիւնն ու վրէժխնդրութեան դարձները, վասն զի Անիչկովը մի ինչ չարի հոր բոր մօտ, որ ընդհանուր կառավարիչ էր Ատրպատականի ներսիզ Յովսէփին խանութեան տիրոջտ, զուցէ կարելի թէ այժմ Մելիք-Մինասեանների տանն էր, ներկայացաւ Տէր Դաւրիէլ աւագ քահանան, կէսը հիւպատոսի կողմից կէսն իւր կողմից, որպէս խորհրդատու և խնամքոյ։ Եւ հարկաւորն բանախօսութեան (և հարկէ ես ևս որպէս օտար մէկը ներկայ էի

հայազգներով Յոպոհանից պարոնել տուեց Էջմիածին։ Հիւպատոս խանիկովն օրհնանք արեց Սահակ եպիսկոպոս Սարգսեանցը, որ և մեռաւ Սալմաստ։ Ձերնեակով հիւպատոսը անպատուի փոխ տուաւ զԱրքել եպիսկոպոսն, և Յովսէփ վարդապետն այն դառն վիճակին հասցրեց՝ որ երկիւղիցը մեռաւ։ Թանկագոյն այնքան անպատուի վարուեց Ինդրեաս եպիսկոպոսին հետ, որ ինքզինքն ամենայն հրաժեշտ տալ վիճակաւորութիւնից և անիրաւութեամբ պարտաւորեցաւ հրաժեշտ տալ վիճակաւորութիւնից թշուառացրեց վեց ու տասներեսներորդ քանդեց ու անանդութեամբ թշուառացրեց վեց երեսի հայ վանականների տները, և Ինդիկովն թոյլ տուեց և պաշտպանեցի հայ վանականների տները, և Ինդիկովն թոյլ տուեց և պաշտպանեց պարոնիկ Յովսէփ-խանին նոր եպիսկոպոսի կոչոցը ու մեծագունեց պարոնիկ Յովսէփ-խանին նոր եպիսկոպոսի կոչոցը ու մեծագունեցրեց դրամը։ Իսկ ամենի մանրամասն պատմութիւնը մարդ կարող է ընթեռնուլ նաև Էջմիածնի Սիոնի գրքոց մէջ։

պանում ինձ) Յոտեփան-խանն ասաց քահանային թէ «Ձէր հայր, ինչ որ ասելու եմ քեզ, ինդրում եմ այնմանս այն գերատարման անձին, որ պատճառ էր եղած քեզ այսպէս զրկելոյ. միայն այս ևս աղերսում եմ, որ եթէ ասածներիս մէջ սուտ կամ անհաստատ բան լինի, խնդրոյ ասես. վասն զի դու մեր և Նրա, Յովսէփի ազգին, տակին լաւագոյն ծանօթ ես, ուրեմն կասես առաջարկիդ, որ Յովսէփ-խանը կարող է Ռուսաց տէրութեան քովը ոչ միայն թարգման, այլև մեծամեծ պաշտօններ ստանալ, մանաւանդ որ նա հայ է, նա Թավրիզեցի է. նոյնպէս՝ նաև Իրանի մէջ ոչ թէ խանութեան, այլ սարդարութեան աստիճան ստանալը զարմանք չէ. բայց նա այսպէս մեր երկրացի, ինչպէս մեզ, նոյնպէս և մենք նրան լաւ կճանաչենք. նա, Յովսէփը լաւ պիտի հասկանայ, որ իւր հաւասար գերդաստանից կարող է կին առնել. իսկ եթէ նա արժանի չէ համարում այսօր իրեն հաւասար տեղից կին առնել, թող դիմի Ռուսաց կամ Պարսից հպատակ գերդաստանների, որոց տէրութիւնները նրան պաշտօն, տիտղոս և շքանշաններ են պարգևած, ի հարկէ այդ հպատակներն այն պատուանշանները յարգելով, ուրախութեամբ կցանկան նրա հետ խնամութիւն և ազգականութիւն անել. թող չկարծէ հիւպատոսը որ մեք այսօր հարուստ ենք, սան, տեղի, այգիի, գիւղի, աղրիւրների տէրեր ենք, և այդ պատճառաւ մերժում ենք նրա առաջարկութիւնը. Ո՛չ, քանի լեցի, կարելի է որ վաղը մեք աղքատանանք և Յովսէփը հարստանայ, այլ թէ մեք հայերս թագաւորութիւն չունինք, որ ինչպէս տէրութիւն ունեցող ազգերն իրանց ազնիւներն ունին, շքանշաններով, աստիճաններով և տիտղոսներով երևելի անձնաւորութիւններ ունին. իսկ մեք հայերս թէև զոցանից ոչ մեկը չունինք, այլ մեր մէջն էլ նա է ազնիւ ու երևելին, որ իր և իւր ազգային օգտի համար մէկ բարի գործ կատարած լինի, կամ կատարած է ներկայումս. կարելի է մեզ յայտնի չեն նրա հոր կամ պապերի արած գոնէ մէկ շահաւէտ գործը իրանց ազգի համար. թող նա այժմ ցոյց տայ, մեք ևս այն ժամանակը մեր աղջկայ ձեռքից բռնենք, տանք նրան և թող, որ տանես եկեղեցումը պսակես Յովսէփի հետ...» Քահանան՝ որ մեռ եօթանասուն տարեկան էր, ոչինչ պատասխան չգտնելով,—չատ լաւ, կասէ—ու կերթայ.

Ակնյայտնի է, որ այս ապպարանքներից, հիւպատոսը սատակի կնեղնար, և մինչև այն ժամանակը գաղտնի էր ներգործում, այնուհետև սկսեց նա յայտնի թշնամութիւնները անել և պաշտպանել Յովսէփ-խանի շատ ապօրինաւոր արարմունքը.

Այդ անցքին մէկ երեկի անցք ևս հետեւեց, որ նոյնպէս հարկաւոր կհամարիմ պատմել այստեղ։ Ներսէս կաթողիկոսը Ս.-Պետերբուրգ հիւանդանալով մէկ բժիշկ նրան բժշկում է, որ և իւր բժշկութեան համար վարձ—դրամ չէ ընդունում կաթողիկոսից։ վասնորոյ և վերջինս Թիֆլիս հասնելիս, որոնում է երկու երկար և լայն գրքեր, որ գնէ և նրան ընծայ ուղարկէ, բայց չկարողանալով Թիֆլիսում գտնել, կամենում է գրել Թավրիզ մէկ հաւատարիմ մարդու, որ նա գնէ ըստ իւր ցանկութեան և առաքէ։ Հարցուփորձ անելով սրան նրան, բոլորէքեան միաբերան վկայում են, որ Մելիք-Մինասեան եղբայրները աւելի յարմար են այդպիսի յանձնարարութեանց, վասնորոյ գրում է նրանց և պէտք եղած փողն ուղարկում։ Նոքա ճշտութեամբ և հաւատարմութեամբ կատարում են նրա յանձնարարութիւնը։ Ներսէս կաթողիկոսն էլ տեսնելով նրանց գործ կատարելը, Խիկօյեան Ազալար-խանի վախճանվելից յետոյ՝ առանձին կնդակով յանձնում է նրանց Ատրպատականում Աթոռային կալուածների խնամակալութիւնը։ Այսպիսի յանձնարարութիւնը աւելի ևս զայրացնում է Տիւպատոս Անիչկովը, վասնորոյ և գրում է մասնաւոր նամակով արտաքին գործոց վերատեսուչ Լէյլիին, որ բարեխօսել, աշխատել, յորդորել զ՝Ներսէս կաթողիկոսը, որպէս զի Աթոռային կալուածների խնամակալութիւնը յանձնէ Յովսէփ-խանին։ Բայց կաթողիկոսին յայտնի լինելով Յովսէփի անունը՝ ասդէն վիճակաւոր Նիկողայոս եպիսկոպոսի մեծագումար կայքի խօսելը, մերժում է Լէյլիի մէջնորդութիւնը, որով մեծ խոց է լինում Անիչկովին։

Ներսէսը՝ որ Էջմիածնի կալուածների համար թղթակցութիւն ունէր Մելիք-Մինասեանների հետ, մէկի մէջ հարցնում է նոցանից թավրիզու Հայերի այժմեան վիճակի մասին։ Նոքա պատասխանում են թէ, որովհետև Պարսից տէրութիւնը յանձնել է Հայերը Անգլիոյ Տիւպատոսին, վասնորոյ փոքր Ասուծոյ, այժմ չառ հանգիստ և խաղաղ կեանք են վարում։ կաթողիկոսն էս լուրի վերայ իւր ուրախութիւնն է յայտնում և ապա կդրում թէ, զարմանալի է որ Իրանը Հայերին յանձնել է Անգլիոյ Տիւպատոսարանին և ոչ թէ Ռուսաց, որ աւելի մերձ էր մեզ և աւելի համակրող կլինէր և այլն։ Այս կնդակ կարդացողը ուրիշ կերպով է հասկանում (որպէս ասացինք Մելիք-Մինասեանները գրագէտներ չէին) և դուրս է գալիս մէկ քանի իւր բարեկամներին ասում է թէ՝ կաթողիկոսը չատ ուրախացել է, որ Իրանի տէրութիւնը յանձնել է Հայերը Անգլիոյ դեսպանին, կամ Տիւպատոսին, և ոչ թէ Ռուսաց։

Այս լուրը փոխով հաղորդում են Յովսէփին, որ իսկոյն հաղցնում է Անիկովին, և սա, վերջինս էլ յատուկ աուրանդակ է ուղարկում Թիֆլիս, և հաղորդում Անդրկովկասի փոխարքայ Վորոնցովին, որն որ ուղարկում է իր փոխանորդ իշխան Բարսեղ Բէկ-Տրուբեցոյն ու քաղաքական գործերի վերատեսուչը, որպէս զի գրաւեն կաթողիկոսի թղթակցութիւնները և գտնեն թէ արդարև այդպիսի բան գրել է նա Թավրիզ։ Նոքա տանում են Ղերսիսի թղթակցութեանց պատճէները, և մէկ քանի օրից յետոյ վերադարձնում են նրան միամտանալով, որ այն լուրը սուտ է։ Իսկ Ղերսէսը չկարողանալով մարել այդ զրպարտութիւնը, կամ լաւ ևս ասել այդ անպատմութիւնը, իր այն թղթակցութիւնները, որ յիշեալ նիւթին կվերաբերէին [1]) ուղարկեց Զմիւռնիա, և հրատարակուեցան «Արշալոյս Արարատեան» օրագրում, սակայն Յովսէփը չդադարեց դաւեալ հեռամուտ լինելէն ինքսել Մելիք-Մինասեանները՝ ազդեցութեամբ հիւպատոս պարոնանին։

Այդ ժամանակն էր, որ չահի թագաժառանգ Նասր-Էդդին-Միրզան եկաւ Թաւրիզ ընդհանուր կառավարիչ Աբրպատականի պարտեզում։ Սա տեսնելով Ստեփան-խանի ձեռագործները, չատ հաւանեց. ուստի նա ոչ միայն առատութեամբ էր նրան վարձատրում, այլև չքանչան ևս չնորհեց նրան, և փոքր առ փոքր Ստեփանը չնորհ գտաւ պատանի թագաժառանգի առջև, և սկսեց ձեռնամուխ լինել բարեխօսելու և միջնորդելու Հայոց գործերի համար։ Ուրեմն Ստեփանի հակառակորդները ամչանում էին նրան կործանել, այնքան նա օրըստօրէ պատուով և համբաւով առաջանում էր։ Բայց յանկարծ մէկ անակնկալի և ամենայիսաբ անցք ծագեց, որից Ստեփանը չկարողացաւ ազատուել այսինքն Ստեփան-խանը պարսկերէն մէկ նամակ է ստանում, տալիս է իր գրագրին կարդալ, որի մէջ գրած է լինում թէ՝ Քիւրդստան խոյերայ ցաւ երևցաւ։ Այս լուրը բերնէ բերան անցնելով միևնոյն օրը հասնում է Յովսէփին, որ հաղորդում է Անիկովին, և սա առանց գոյժի իսկոյն Ստեփանը տեղեկանալու, իսկոյն իմացուցին է տալիս Թիֆլիսու փոխարքային, որ և հիմնուելով Անիկովի գրութեան վերայ, կարգադրում է Թուսաց և Պարսից սահմանագլուխներում ամրացնել, և սահմանել արգելանոց (կարանտին) և Պարսկաստանից եկողները պահել 15 օր. այն

[1]) Տես «Արշալոյս Արարատեան» օրագիր Զմիւռնիոյ, 1850, թիւ. 353 և 375, յորմէ և «Ազգասէր» օրագիրն Պոլսոյ մէջ, 1851, Յունվար 30, թիւ. 65 վերատպելով աւելացնում է և իւր կարծիքն, որ լաւ հնարագրական է։

ինչ մինչ այն օրը, նախ՝ միայն 3 օր էր նշանակուած. Հետևեալ օրը Անիշկովը մարդ ուղարկում Քրդստանի կողմերը իմանալ ցարի սատկութիւնը, ուր լինին ու օրը օրական մարդ մեռնիլը։ Այդ մարդը վերադառնալով լուր է բերում թէ Քիւրդրստան խուլերայ չկայ, և միայն այս ինչ տեղը մէկ երեսելի մարդ յանկարծակի մահուամբ մեռնելով լուր է տարածուել թէ՝ խուլերայ ցաւով է մեռած.

Անիշկովն իւր անզգուշութեամբ չտապին ու գրելը Թիֆլիս կամենալ իւր յանցանքը ձգել Ստեփան-Խամայիլ-խանի վերայ, այս պատճառաւ ապստարեց հիւպատոսարանի պարսիկ թարգմանի բերանով պատանի թագաժառանգին թէ՝ Խամայիլ-խանը չատ անգամ այսպիսի անհիմն լուրեր տարածելով յուզում է ժողովուրդը. ուստի ապագայի զգուշութեան համար պիտի նրան պատժել կամ թաղիրիպից արտաքսել։ Թագաժառանգը զարմանալով այսպիսի առաջարկութեան վերայ՝ վերահասու է լինում բանի էութեանը, և բերանացի պատասխանում է թէ՝ Խամայիլ-խանը անդրագէտ լինելով սուել է նամակը իւր պարսիկ գրագրին կարդալու. ուր և մեզ տասնեվեցնգ իւր գործավարները ներկայ են եղած, որոնք այդ լուրը տարածել են, ուրեմն ես չեմ կարող այդպիսի անհիմն և չընչին գործի համար նրան պատժել ու աքսորել։ Այնուհետև Անիշկովը պաշտօնական թուղթ է գրում և պահանջում որ կատարէ իւր առաջարկը. բայց թագաժառանգը ոչ միայն չէ կատարում նրա խնդիրը, այլև պատասխան ևս չէ գրում այդ նամակին, վասնզի Անիշկովը բողոքում է թէ՝ Նրան իւրանց դեսպանին, որ և հաղորդէ օտարական գործերի Պարսից նախարարին, սա ևս բերանացի պատասխանում է թէ՝ նախ բան տրում Խամայիլ-խանի անձնաւորութիւնը յայտնի է չէ՞ին, երկրորդ՝ թագաժառանգն է նրան պահպանում, ուրեմն չեմ կարող այդպիսի մէկ վնեմ մարդոյ համար ինքնագլուխ վճիռ գրել թագաժառանգին, ուրեմն սպառնալք մինչև չէին առաջանալը։ Մինչ այս՝ մինչ այն, չարը մեռնում է, և թագաժառանգն էլ պարտաւորվում է ուղևորվիլ Թէհրան, բայց իւր հօր գահի վերայ, երբ և ինքը հրամայում է Խամայիլ-խանին թէ՝ արի գնանք Թէհրան և կատարէ Թուրաբ-խանի [1]) պաշտօնը. վասնզի եթէ մնաս այստեղ, Ռուսաց հիւպատոսն անչուշտ որ և իցէ գործում քեզ կը վնասէ։ Խամայիլն էլ կատարում է թագաժառանգի հրամանը, և մէկ քանի օրից յետոյ

[1]) Թուրաբ-խանի վախճանվելի յետոյ տեղն անցաւ իւր որդին, որ փոքր ժամանակն նա ևս մեռաւ։

գնում է Թէհրան, և ստանում Թուրաբ-խանի պաշտօնն ու գործարանը, որ արքունիքումն էր։

Խամայիլ-Սեիդան-խանը պարթև ու վիթխարի հասակ ունենալով, գործարանում չատ նստելէն ստացաւ. ուստի և բժիշկներն արգիլեցին նրան գործարանում նստելն ու աշխատելը, և խորհուրդ տուին առ ժամանակ ճանապարհորդել, յուսալով որ օդափոխութիւնը կօգնէ նորա ցաւին։ Այս պատճառաւ 1859 թուին եկաւ Թաւրիզ, և 1861-ին վախճանվեցաւ. իսկ նրա մեծ եղբայր Աղա Աւաքերը, որ նրանցից էլ հաստատնդամ էր և պարթև, չկարողանալով կրել իւր սիրելի եղբօր կսկիծը, սկսեց օր ըստ օրէ մաշուիլ ու մեկուէս տարիից յետոյ վախճանվիլ, թողնելով երկու արու զաւակներ՝ Եղիգեար և Միրզայ Բարսեղ անուններով։ Ալերիմնս, երբեմն Պարսից փոխ-հիւպատոս էր Երևան. իսկ Սամիքանը թողեց չորս որդի, այսինքն առաջինը՝ Միրզայ-Պետրոս-խան, որ արտաքին գործոց նախարարութեան թարգման էր, երկրորդը Տիգրան-խան, որ և Խամայիլ-խան-ս ան էր, այսինքն Սամիքանխան երկրորդ, վասն զի սա ստացաւ իւր հօր պաշտօնն ու գործարանը, երրորդը՝ Արզուլ-Մահ, և չորրորդը Միհրդատ։

Տիգրանը իւր հօր պաշտօնն ստանալից յետոյ շատի ծախքանվ ուղեորեցաւ Պարիս իւր արհեստը կատարելագործելոյ համար. ուսկից 1870 թուին վերադարձաւ Թիֆլիս և գնաց Բաքու, յետոյ չդադարեալ գնաց Անգլիա, ուր նստաւ մի մակոյկի մէջ, որ Մուրդ-Աբ ասված լճի միւս կողմն անցնի, բայց յանկարծ սաստիկ ալէկոծութեան հանդիպելով մակոյկը չուռ է գալիս, որով այն բարեկիրթ երիտասարդը խորասոյզ է լինում ալիքի սէջ և անհետանում, նրա հետ և նրա հարուստ կայքն ու այն ամենայն հազուագիւտ ձեռագործները, զորս շատի համար պատրաստել էր արքան ժամանակ կացել էր Պարիս։

Լ.

ԿՈՒԼԱՄ-ՀԻԻՍԷՅՆ-ԹԱՆ՝ ՍՐՓԱԶԳԱՐ.

Արդէն իւսուֆ-խան սրփազգարի կենսագրութեան մէջ յիշած ենք թէ՝ նա ամուսնացած էր Ցաճկաստանից գերի վարած մէկ հայուհի օրիորդի հետ, մնել էր սոյն Կուլամ-Հիւսէյնխան սրփազգարը, որ իւր երեխայութիւնն ու մանկութիւնը

անցուցել Ֆաթ-Ալի-շահի կանանոցում հայուհի Զիբա-Զէհր խանումի դշխոյի ձեռքի տակ, որն որ նրա 14—15 տարեկան հասակում ընտրում է հարմարագույն և ամուսնացնում է Ֆաթ-Ալի-շահի քառասներորդ Մահ-Բէգում խանում միամօր դստեր հետ, որ ծնած էր 57-րդ դշխոյ Թօշնամայ խանումից. նոյնպէս վերի բերած վրանանից. Վերջինս ազատների անունը վերում է Խօրշան, վանքում և այդպէս են թարգմանում.

Կուլամ-Շիռէյն-խանը երեխայութիւն և պատանեկութիւն հասակում մնում է համառ և ծանրաբարոյ, և հետզհետէ զարգանալով սեփականում է ինքնին իւր հեղհամբոյր բնութիւնը, պարկեշտ քաղաքավարութիւնն ու բարի պատատանութիւնը.

Նրա ամուսնանալէն մի քանի շաբաթից յետոյ Ֆաթ-Ալի-շահը հնարում է նրան իւր հօր Իւսուֆ-խանի տեղապահութեան պաշտօնը, անուանելով Արազատանի մարզպանի տեղապահ (նայիբ). Վերնոյն ժամանակ նրա անչափահասութեան համար հոգաբարձու է նշանակում Ամատուն Ապանդիարբ-խանը, որ Իւսուֆ-խանի դստեր հետ էր ամուսնացած, այսինքն Կուլամ-Շիռէյն-խանի մեծ քրոջ հետ, վասն զի Իւսուֆ-խանը ըստ մեծի մասին կամ թագաւորական քաղաքում էր լինում, և կամ իւր մարզպանութեան տեղէն բացակայ իւր զօրքովը, ինչպէս և այժմ Ապշանի վէզիր էր և այնտեղ էլ մնաց.

Կուլամ-Շիռէյն-խանի ամուսնութիւնից երկու տարի անցած, այսինքն 1240 Հիջրին (1824) մնում է Իւսուֆ-խանը Ապշան, և չարը հնարում է առաջնոյն Արազատանի մարզպանութիւնն ու նրա հօր սիրահարութեան պաշտօնը [1].

Կաֆարների պատմութիւնն ասում է թէ հարգարեն, Կուլամ-Շիռէյն-խանը այն ժամանակ տասնեակներ տարեկան պատանի էր, բայց չատ խելոք էր և արժանի իւր բարձր ծագմանը. կատարեալ էր իւր ամենայն ձեռնարկութիւնների մէջ, մանաւանդ և առատաձեռն էր և բարձր բնութեան տէր.

Կուլամ-Շիռէյն-խանը իւր հօր հաղենանդատեան համար, ամեն դատ մարդկանց առանձին առանձին 40 օր 40 գիշեր ամենաճոխ հոգեհաց է բարխում Դրանից առաջ, ասելացնում է վերոյիշեալ պատմութիւնը թէ, Իրանում այնպիսի

[1] Ընթերցողը չպարմանայ սորա վերայ, քանզի Մահմատ-շահի ժամանակը Դրա վէզիր Հաջի-Միրզայ-Ագասիի թիւնդրութեամբ Մահուանցի նոր ծնած խանների որդիներին երկու երեք տարեկան հասակում, գեղեցկութեան և զօրագլխութեան ասպիտներ էին շնորհվում.

ծախք մէկ մեռելի համար ոչ լսուած էր և ոչ տեսնուած, Հետևաբար իւր հօր կատուցած բարեգործական հաստատութիւնների ծախքերի վերայ՝ ուշացնում է հարիւրին տասը, որի մասին տարեկան տասը հազար թուման ծախք կլիներ։ Մէկ քանի ամսէն յետոյ՝ նա վերահասու է լինում իւր հօրից մնացած չարժական և անչարժ կայքերին և տեսնում է որ մօտ յիսուն հազար թուման ստանալիքներ կան մարդկանցից, որոնք անկարող են վճարելուստի կանչում է նրանց Սուլթանապատ, երկու օր հիւրընկալում, և երրորդ օրը իւր պալատի առջևն եղած հրապարակի կեդրոնում կրակ է վառել տալիս՝ պարտականների ներկայութեանը, տալիս է մուրհակները այն քաղաքի առաջին մօտլայն որ մէկ մէկ կարդայ ու կրակը ձգէ այրէ։ Այդ գումարը, չասենք թէ այժմ, այլ այն ժամանակը շատ մեծ փող էր։ Այդ հանդիսում մէկ քանի պարտականներ սկսում են բարձր ձայնով կուլամ-Հիւսէյն-խանի կեանքին երկարութիւն ցանկալ, օրհնել և փառաբանել նրան, բայց նա արգելում է ասելով, խնդրեցէք Աստուծմէ որ իմ հայր սրտիդարի մեղքերը քաւէ և նրա հոգին արժանացնէ արքայութեան և այլն։ Այս օրինակ չէ արդեօք վսեմ երախտագիտութեան այն ամենայն զգացմունքների համար՝ որոնք պէտք է տածեն դէպի իւրանց ծնողները։

Մէկ խօսքով ասած, ինչպէս բոլոր Իրանի մէջ նրանից հարուստ, առատաձեռն և մարդասէր մէկը չկար, այնպէս էլ իւր հօր յիշատակն անմահացնելու համար՝ ոչ մէկ մարդ չէր եկած, և ոչ էլ կգայ, որպէս վկայում էին միաբերան ամենքը։ Մանաւանդ նրա բարի գործերն էլ կենդանի ապացուցանում էին։ Բայց աւաղ, այս անկայուն աշխարհն և նրա յոդոդող բաղդն, այդ ամենի համար փոխանակ նրան վարձատրելոյ, ընդհակառակն իւր ամենատաւն տարաբախտութեան մրուրները ճաշակել տուեց, ինչպէս յետոյ կտեսնենք։

Կաջարների պատմութիւնն ասում է թէ՝ երբ՝ Ռուսները 1241 Հիջրին (1826) տիրեցին Աբբասապատ բերդին (Հինգ-Խախիջևանի մօտ), Ֆաթ-Ալի-շահը կամենալով ստուարացնել Ատրպատականի զօրքը, նոր բանակ կազմից և յանձնեց Հաջի-Մահամմէտ-խան կաջարին։ Այս բանակը բաղկանալով զանազան գունդերից, ի թիւս որոց էին Խալջի, Պաշայի և Կուամի գունդերը, որոնք ստորագրեալ էին սփահդար Կուլամ-Հիւսէյն-խանին՝ որ պատանի լինելոյ համար, յանձնեց գունդերը Խապանդիաբ-խանին, որ առաջնորդէ նրանց մինչև Ատրպատական։ Մինչև այս՝ մինչ այն, թէհրան հասնում է Ռուսների մուտն Ատրպատական, երբ և մօլլաներն այս պատերազմն ամբիոնի վրայէն

մեջքերի մեջ քարոզում են կրոնական պատերազմ ընդդէմ անհաւատից. ուստի և բոլոր իրանը ոտքի վերայ կանգնում, Շահն էլ վերոյլեալ բանակի վերայ կոմենալով ուրախանել և մէկ քանի գունդեր, ամենից առաջ Կուլամ-Հիսէյն-խանն է անձնատաղց լինում, խոստանալով որ ինքեան ենթադրեալ տաներկու հազար զօրքը չորս ամսուայ իւր անձնական ծախքովը տանէ հացնէ Աստրաստական պատերազմի ասպարէզը։ Այդ զօրաքուռմբը լինում է քսան հազար ձիաւոր և հետեակ բացի Կուլամ-Հիսէյն-խանի գունդերից, և այնքան էլ քամակիցն էին գալու։

Նոյն պատմութիւնն ուրացնում է թէ՝ երբ Սուլթան-Մուրատ Ալիխանն և Մահամմէտ-Թաղի-միրզայ արքայազուններն ու Կուլամ-Հիսէյն-խան սրբիազարը հանում են իրենց զօրաքուռմբերով կազմին, և Ռուսաց ընդհանուր սպարապետ Պասկիվիչը լսելով Իրանի բոլոր բնակիչների ոտքի վերայ կանգնելը, երկիւղ կրեց, զինքա հաշտութեան. վասնզոյս և պարտաւորեց անուանով մէկ երեսի պաշտօնատար՝ պատգամաւոր ուղարկեց Թէհրան հաշտութեան համար բանակցելու։

1243 Հիջրին (1827), ինչպէս սովորութիւն է Իրանում, Ֆաթ-Ալի-շահը մեծ բազմութիւնով, զօրքով և պաշտօնատարներով գնում է Կում ուխտաւորին, որ սրբիազարի գտնոյն տեղ Սաւթանապատ քաղաքից հեռի չէ։ Վերջինս մեծամեծ ընծաներով գնում է Կում իւր խոնարհ երկրպագութիւնը հաւատալ շահին։ Այստեղ նոյն պատմութիւնն ասում է թէ՝ սրբիազարը, որ այն ժամանակ Իրանի պետականների մէջ փայլում էր որպէս պայծառագոյն աստղ, և նորա բարի համբաւը տարածուած էր սկսեալ Աբաղամանից մինչ Բեարբաբայի և Մէքքէ, նրա դուռը միշտ ապաւէն էր կարօտեալների և ասպնջական էր Արաբ-Աշէմի ուխտաւոր անցուորներին, և այժմ երեսի վերայ ընկած՝ աղերսեց շահին, որ սա թէհրան վերադառնալիս իւր պալատականներով, մեծամեծներով, բանակով և ուղեկիցներով Սաւթանապատում անցնի և նրան տիւր լինիս Շահն էլ ընդունեց նորա խնդիրքը։

Սաւթանապատ մէջ շահն իջևանում է սրբիազարի պալատում. իսկ պալատականների և միւս մեծամեծների համար, իւրաքանչիւրի պաշտօնի և պատուի համեմատ պատրաստուած էին տներ կամ այդիներում վրաններ։

Հետեւեալ օրը սրբիազարը բաց է անում իւր գանձարանի և դրամների գռները, ուր էին նորա ոսկի և արծաթի դրամները, գոհարեղէններ, թանկագին ակներ, և կամ ուանդրամներ, գոհարեղէններ, թանկագին ակներ, և կամ ուանդրամներ, գիւղերի, անդաստանների, ագարակների, ջաղացների և

անկովի անասունների կապաղաղիր և սիպիներ ու հրաւիրում է չարը գալ և տեսնել, մինչեւ ժամանակ առում է թէ «Տիեզերքի Աղօթարան, այդ ամենը Աստուծոյ ողորմութեամբ և չարնչաղի հարիւրիւն է վաստակուած, և այժմ ընծայ եմ մատուցանում Տիեզերքի Աղօթարանին»։ Շարը չատ հետաքրքրութեամբ ամենը դիտելով վեր է առնում մէյն մի հաղուստիւ գոնար, պարգևում է իւր աղջիկներ սրփանդարի կնոջը. իսկ միւսների համար ասում է նա թէ «ընդունեցի այդ ամենը որպէս ընծայ, և անմիջապէս պարգևում եմ քեզ և քո որդոցը ի բարի վայելումն»։

Ամենից աւելի հետաքրքրականն այն է, որ սրփանդարը արգելում է Արարատեան բնակիչներին, որ չհամարձակուին ոչ միայն մեծամեծներին, նոցա ծառաներին, զօրքին, այլև բանակի հետ չրջող վաճառականների ու նրանց կենդանիների համար ուտելիք վաճառել, այլ ամենը իւր տեմտարաններից, մարաններից, ամբարներից և խոնարհաններից տար Նոցա Սուլթանապատից դուրս գնալու օրը, սրփանդարն ընծաներ է բաժանում մեծամեծներից սկսած մինչև նրանց սպասաւորներին, ձիաղարմաններին, ջորապաններին և ուղտապաններին. այլև զօրավարներից սկսած մինչև սոորին գնուորականներին Երբ չարն ուղեորվում է դէպի թէհրան սրփանդարն իւր գրասենեակով, ջորիներով և ուղտերով իւրաքանչիւր օթևանում բոլորի համար այնպիսի առատ ուտելիք է պատրաստում, որ ինչպէս ասենասես ծերերը պատմում էին, բանակը չուելից յետոյ չատ պարարեցին էր մնում ասդին անդին ցրուած։ Նորա այսպիսի հիւրընկալութեան համար չարը ընդունում է իւր ասպնջականին թանկագին անիներով յեռուած իւր պատկերը, մինչեւ ժամանակ և հրամայեակ, որ նրա պատուանուն վերայ աւելացուի բառերս «բոլոր Արարատեան քանդակուդայ» այսինքն ասենասէր։ Հետևարար պարգևում է հինգ հատ թնդանօթներ, որ նա դեռեղէր իւր պալատի առջևը հրապարակում, բայց սրփանդարը համեստութիւնից դեռեղում է թնդանօթները Սուլթանապատի բերդի բուրդերի վերայ, որի ադգաւ չարն էլ հրամայում է որ գանձարանի ծախքովը վերանորոգուին բերդի պարիսպները, և նրանց խրամները մաքրուին։ Այս հիւրընկալութիւնը տևում է քսանչորս օր։

Շարը 1245 Հիջրին (1829) Ապարանի վրայով գնում է Շիրազ, վամնորոյ իւր թէհրանից դուրս գալն մի քանի օր առաջ նա ուղարկում է սրփանդարը վեց հազար հետևակ զորախումբով և թնդանօթներով գնալ Ապարան և այնտեղ սպասել իրենց

Թէհրան մէկ օր իմ ներկայութեանս, ուր էին տասնամեայ երեկի մարդիկ զրոյց ծագեց նրանց մէջ այդ յիշեալ անցքի մասին, սրփանդարը պատմեց թէ «Ես հօրեղբայր (Ամու) կանուանէի Մանուչար-խան մահմէտիզդը, վասնզոյ Թէհրանից դուրս գալէն առաջ դիմեցի Ամուին և խորհուրդ տարցրի նրանից թէ ինչպէս առաջնորդում այդ զօրագնդին, որից զրժգոհութիւններ ջնջելու ճանապարհների վերայ եղած գիւղերի բնակիչներից։ Նա պատասխանեց թէ «իւրաքանչիւր գնդապետից, փոխ-գնդապետից և հարիւրապետից սառգրութիւններ առ, որ եթէ որ և իցէ նրանց սառգրութիւններից մէկին ապօրինաւորութիւն զտնէ, նրա պատասխանատուինն։ Այդ պատասխանատուութիւնը ոչ թէ դրամի առգանքի վերայ կայացնես, այլ հրաժարեցնես պաշտօնից։ Թարամ եմ տալիս քեզ, որ հէնց գիւղացիների առաջներորդ բոլոքի վերայ ուշադրութիւն դարձնես և խստութեամբ վարուես գնդապետի և փոխ-գնդապետի կամ հարիւրապետի հետ, այնուհետև կտեսնես որ ամենքդեան կը զգուշանան և ամենայն ինչ բարեկարգ կլինի»։ Այս մէկ քանի բառ իրատներից ես խեղճուտ եղայ, ասում էր սրփանդարը, և կատարեալ բարեկարգութեամբ առաջնորդեցի գունդերը մինչև Ասպահան, ուր չանն առաջին տանեի նիստումը յայտնեց ինձ իւր գոհունակութիւնը։

Շահի Ասպահանից դուրս գնալէն երկու օր առաջ սրփանդարը մենանդ բարեկարգութեամբ խաղում, գնում է դէպի Շիրազ, յետ որոյ հանդում է և չանը, որը մէկ քանի չաթաթ այնտեղ կենալէն յետոյ, որսորդութիւն անելով գնում է դէպի Շուշտէր և Դաղիուլ (Տիսրոն) այնպիսի ճանապարհներով, որ տեղից թեղանօթներ կամ նրանց ծանրութիւններն անկարելի էր անց կացնել։ ուստի և չանը հրամայում է սրփանդարին որ իւր զօրախումբով գնայ Ֆարէհան և այնտեղից Իէհրէան, ուր և սպասէ իւր գալստեանը։ Այստեղից դարձեալ նա գասվում է չանից և հանդում է Շուշտէր, ուր արձակում է զօրքը, և մնաց չանի սպասում գնում է Դաղիուլ և անտի Հանգան, ուր Ռուսաց դեսպան կենում Դոլգորուկին սպասում էր չանին։ Գրիբոյեդովի վչտալի անցքից յետոյ, նա էր Ռուսաց առաջին դեսպանը, որ եկաւ Պարսկաստան. վասնզոյ չանը հրամայել էր նրան պատուելոյ համար խնճոյքներ տան։ Պատուութիւնը գովելով այս հանդէսներն ասում է «էին ամենից ուրախ մեծամօր և հոյակապներն էին Ասրֆ-Ալդ-Դաուլէի և սրփանդար Կուլամ-Հուսէյն-խանի տուած խնճոյքները։

Քիրմանշահի-խուզստանի (Հին-խուզստանի) և Բուրու-

ջերդի-Լօրքսանի մարզպան արքայորդիների մէջ պատերազմ է ծագում ու միմեանց դրայ են յանձնում, վասնորոյ չունն առաքում է սրբազնարը վեց հազար զօրքով, որ գնայ սատակ և թոյլ չտայ նոցա չարունակել պատերազմը. միևնոյն ժամանակ ով որ նոցանից յանցաւոր է, ուղղորդ թէՀրանս Սրբազնարը չտապով հասնում է պատերազմի տապարէզը, երբ Բուրուջերդն պաշարուած էր, վասնորոյ հրամայում է վեր առնել պաշարումը և առաքում է այնտեղի մարզպան չանգադէ Հրամանագրութիւնն թէՀրան, և այնուհետև սկսում է այն տեղերում բարեկարգութիւններ անել և խաղաղացնել Կաջարների պատուհասեան հեղինակն այս անցքը պատմելից յետոյ, ընծայում է սրբազնարին երկու հարիւր վասնասն տուն բանաֆիսութիւններ, ջաստաղութիւնք նրա բարքը, վարքը, առատաձեռնութիւնը և այլն, և այլն։

Պարսից թագաժառանգ Աբբաս-միրզան 1249 Հիջրին (1833) խորասանում վախճանում է. և նրա մեծ որդին Մահամմէտ-միրզան այնտեղ լինելով, բանակով վերադառնում է թէՀրան, երբ և Ֆաթ-Ալի-շահը յայտնում է պալատականներին թէ, մտադիր է նշանակել Մահամմէտ-միրզան իւր հօր տեղը թագաժառանգ։ Միևնոյն ժամանակը Իրանի շահերին հանդիսով իւրանց թագաժառանգ նշանակելը անծանօթ էր Պարսկաստանին, վասնորոյ պետականների, մանաւանդ արքայազուններին մէջ քրթմնջիւններ և տարաձայնութիւններ են ծագում։ Որա բաժանվում են երկու կողմնակցութիւնների. մէկը պնդում էր թէ, աւելի օրինաւոր է, որ նշանակուի Աբբաս-միրզայի համահայր և համամայր կրտսեր եղբայր Զիլլիսուլթանը, որ Ալի-շահ կոչուէր. իսկ միւս կողմնակցութիւնը համամիտ էր շահին։ Արքայազուններից ամենք թէև ըստ երևութին ոչ մի կողմը չէին հակուած, սակայն ի ներքուստ վշտացնում էին, վասնորոյ ծածկաբար պատրաստվում էին պատերազմի և քաջ մարդկանց սիրտը շահում էին, որպէս զի շահը մեռնելից յետոյ ով որ Իրանի հին սովորութեամբ ճակատամարտների մէջ քաջագոյն և հզօրագոյն հանդիսանայ, նա տիրէ թագաւորական գահին։ Ահա սորա համար մէկ քանի արքայորդի մարզպաններ զլանում էին թէՀրան ուղարկել գանձարանի հարկերը։

Թագաժառանգութեան առարկայի մասին մանրամասնաբար գրուած է Մանուչար-խան Մօլթէմիրի կենսագրութեան մէջ, այստեղ միայն այսքանը կասենք, որ սրբազնարը համակարծիք էր Ֆաթ-Ալի-շահին, և Մահամմէտ-միրզայի կողմնակիցներից գլխաւորագոյնն ու հզօրագոյնն էր, թէ նրան

ատորադրեալ զօրքով և թէ հարստութեամբ։ Արքունիքի այդ ալեկոծեալ ժամանակը յանկարծ խռովութիւն է ծագում Մարլայիր և Թուսուրիկեան Նահանգներում, որոնք սահմանակից էին սրփազդարի հրամանատարութեան ներքոյ եղած գաւառներին։ վասնզոյ չէր հրամայում է նրան փութալ գնալ մէկ քանի գունդ զօրքով հրաժարեցնել պաշտօնից այն երկու Նահանգների արքայազուն մարզպանները և նրանց հաւատացեալ նահանգները միացնել իրան յանձնուած գաւառների հետ։

Այսպիսի խռովութիւնները մի քանի տարի անպակաս էին լինում, որոնցից աւելի զգալի էին մէկ քանի երեսի արքայազուն հրամանատարների հարկեր չառաքելն թէ հրան, որոնց մէջն էին Ասպահանինը, Շիրազինը և Փերմանինը (Կրման)։ Այս վերջին երկուքը ոչ միայն կարի բացակայ էին արքայանիստ քաղաքից և ոչինչ ապառնալիք չէին ներգործում նոցա վերայ, այլ միշտ սպասում էին շահի մահուանը, որպէս զի հանձին իւրեանց նպաստեին։ Ուստի և շահը մէկ խորամանկ հնար մտածեց, որպէս զի առանց որ և իցէ խռովութեան և արիւնհեղութեան քաշէ բերէ Ասպահան Կրմանի և Շիրազի մարզպաններ։ Նորա համար իւր ասողութիւնը կազդուրելոց պատրուակաւ չուեց, գնաց Ասպահան, և հրավառանքներ ուղարկեց որ նոքա ևս գան ժողովին Ասպահան։ Շահի հետ ուղեւորեցան պետականների մեծ մասը, նոցա մէջն էր Կուլամ-Հիւսէյն-խան սրփազդարը իւր մէկ քանի գունդերովն ու թնդանօթներովը։

Շահն Ասպահան հասնելէն մէկ քանի օրից յետոյ առանց որ և իցէ զգալի հիւանդութեան վախճանվում է [1]։ Այս լուրը տարածվելուն պէս չորս տեղ, չորս շահեր են բուսնվում, այսինքն Ֆարմանֆարմա—Շիրազում, Մուլլարա—Մազանդարանում, Ալի-շահ որ և Զիլլի-սուլթան—Թէհրանում, և Մահամմէտ-միրզա—Թաւրիզում։

Ասպահան սրփազդարը շատ նեղ և դժուար վիճակի մէջ էր, վասն զի նախ Ասրֆ-Ուդ-Դօվլէն էր միայն նրա հետ կոգնակից Մահամմէտ-միրզայի թագաւորութեանը, և տարաբախտաբարութեամբ էլ նա Ասպահանից երեք ֆարսախաչափ բացակայ էր իջեանած։ Երկրորդ Թէհրանի գանձարանն ընկած էր Զիլլի-սուլթանի ձեռը, որով չհայլ առատաձեռ-

---

[1]) Տես Պատմութիւն Պարսից, Մեսրովպայ թարգմանեց, Կոստանդնուպոլիս, 1846, երես 228—271։ Երբեմն է մտադրութեամբ ընթերցողը, որ ոչ միայն Պարսից կենաց է ծկարագրում, այլև շատ դիմեր ազգային պատմութեան համար։

նուիրեամբ գրաւում էր այնտեղ գտնուած զօրքի սիրտը և հետզհետէ ինքնակոչ շահի հրովարտակներ էր գրում, ցրվում Արազստան թէ, սրփահրաբը հրաժարված է մարդպանութիւնից, և սրփահրաբութիւնից, վանտրոյ այսուհետև ով որ հարկ վճարէ նրա տեղապահներին՝ անընդունելի է։ Երբոր՝ ամենից վատթարագոյնն այն էր, որ շահի մեռնելին երկու օր անցած՝ Արազստանի հետևակ զօրքի և Մազանդարանի հեծելազօրքի մէջ փոքր բանի համար գժտութիւն պատահելով, և Զիլլի-սուլթանի կողմնակիցները դրդելով ու գրգռելով Մազանդարանցիները [1]) առաւել ևս բորբոքեցին հրդեհը. ուստի վերջինները տեղափոխուեցան՝ զատ բանակուեցան, պատնէշ եղան ու սկսեցին Արազստանցիների հետ պատերազմել ու մէկմէկ անընդհատ կոտորել։

Այդ վանդաւոր տագնապի բոցէին սրփահրաբը հարիւր գոռ. գինուորված հաւատարիմ մարդիկ է ուղարկում, որոնք գիշերով Ասքի-Ուզ-Դովլէի ծառութիւնը ծածկաբար զարուցի ճանապարհներով քաշում բերում ենքաղաքը, սրփահրաբի պալատում գետեղում։ Այս մէկ մեծ հարուած էր նրա հակառակորդներին։ վասն զի Ասպահանի խաղաղ բնակիչներն իւրանց տներից չէին կարողանում դուրս գալ, խանութներ բանալ, միևնոյն ժամանակ չորս կողմի գիւղացիներն էլ անից պաշարելէն չէին կարողանում բերել քաղաք. ամենայն ուտելեաց ոչ թէ թանկութիւն էր, այլ ձեռք բերելը գրեթէ անկարելի էր։ Կաղաբների պատմագիրն ասկանատեսի պէս ասում է թէ, սրքան քաղաքի մէջ ուտելեաց սղութիւն էր, մանաւանդ մեծամեծների բնակարաններում, այնքան առատութիւն էր սրփահրաբի մատ. ուտելի և բոլոր մեծամեծները գալիս էին նրա սեղանի վերայ կշտանում։ Գիչ էր մնացել, աւելացնում է նոյն պատմութիւնը, որ Մազանդարանի հակառակ զօրքը միանային Ասպահանի սրիկայ և ստահակ բնակիչների հետ ու յարձակուէին նրա բնակարանի ու վրանների վերայ, որպէս զի ինչ կարելիք կողոպտէին և այնուհետև թափվէին արքունիքի վերայ ևս. իսկ սրփահրաբը այնուհետև ինչ կարող էր անել արդեօք իւր փոքր զօրախումբովն ընդդէմ անթիւ խուժանին. ասա այս էր, որ տիպեց նրա վճռողական հանճարն ու

---

[1]) Ընդմեան պարսից կաջարեկ հարաստութեան նախահայրը ծնած էր Մազանդարան։ Մահմմեդ-շահը ծնած լինելով թուրքեց. նրա հակառակորդները տարածում էին թէ, նա կաջար ցեղից չէ, ուրեմն և չէ կարող շահանալ. իսկ Զիլլի-սուլթանը ծնուելով Մազանդարան, ուրեմն նա է արժանի պարսից թագին։

անձնապաստան քաջությունը ձեռնամուխ լինել մեկ յանդուգն ձեռնարկությեան, որով կարողացաւ ոչնչացնել իւր թշնամիների չար նպատակը. այսինքն՝ հրամայում է նա թնդանոթների և ջամբուրակների բերանները լարն դեպի երկու մլմանց հակառակորդ զորքերը, երբ և պատգամաւորներ է առաքում նրանց մէջ և ասում է թէ, եթէ նոքա չը զինանին և չեներն մլմանց և անմեղապէս չհաշտուին, պատրաստ են, անաւասիկ հրազէնները, և կրծամեալ կրակել նոցա վերայ անգանգանաբար՝ չնայելով որ Արազատանի զորքը իսկ սուրգրեալներն են. Որպա վերայ առաջինը Արազատանի զորքի պաշտօնատարներն են դնում Մազանդարանցիների մէջ ներումն խնդրում, և ապա Մազանդարանցիների պաշտօնատարներն են վերայդիրում նոցա, և հաշտութիւնը կատարելապէս տարածվում է նոցա մէջ. Այդ հաշտութիւնը օրքան անհանոյ էր խռովարարներին, այնքան փառք ու պատիւ ուրեցուց սրմանդարի անուանը.

Եւ այսպէս խռովութեան սեղը խաղաղութիւն տիրելով ժողովվում են խորհում, որ ամենն առաջ հանդուցեալ շահի դիակի յուղարկաւորութիւնը կատարեն և նոյն արքայավայել չքվմբ ու հանդիսաւոր յուղարկաւորեն կում ուխատեղին, ուր նա, հանդուցեալը արդէն իւրեան համար հոյակապ դամբարան էր շինել տուած. Այդ հանդիսին գլխաւոր նշանակեցին Ալի-Կուլի-միրզան, որ այնտեղ գտնուող արքայորդիների մէջ ամենից մեծն էր հասակով, տալով նրան Արազատանի զորքի կէսը. իսկ մնացեալ կէսը՝ վերատեսչութեամբ Ալի-Ռէզա-Դովլէ արքայորդոյ և սրմանդարի, որ առաջնորդեն հանդուցեալ շահի կանանոցը մինչև Կում.

Այստեղ համառօտաբար մէկ անգ պատմենք, որ տպագուցանում է Զիլլի-սուլթանի արքանակների անհնարտեսութիւնն ու անմտութիւնը, մանաւանդ Զիլլի-սուլթանի կարճամտութիւնն ու յիմարութիւնը, որ նոցա խօսքովն ու յուսովը ուզում էր թագաւորել. Արդուլլայ-խանէմմին-Ռէզա-Դովլէն (որ խիստ երևելի անձն էր, և Զիլլի-սուլթանի կողմնակիցների գլխաւորը), մէջտ ակերեն գրգռում էր մեծամեծներն ու զորքը ընդդէմ Մահմմէտ-միրզայի. Ճանապարհին հրապուրում է Ալի-Կուլի-միրզայ Բաբէդ-Ռէզա-Դովլէն և նամակ առնում նրանից Զիլլի-սուլթանի վրայ, որի մէջ նա ընծայում է վերջնոյս չահութեան տիտղոսը. որպէս թէ այսպիսի մէկ անտաղ նամակի մէջ չան գրելով, նա պէտք էր շահանայ. Մինչդեռ ժամանակ Աբդուլլայ-խանը իւր մէկ նամակով յորդորում է Զիլլի-սուլթանը՝ թէ գանձի բա-

նավիքը քեզ մոտ է, բաց արա, դանձ հանիլ և բաշխել զորքին ու մեծամեծներին, ես ևս զորք եմ բերում՝ քեզ նեցուկ լինելու։ Երբ սրփահդարն այդ Բուչան քաղաքումը լսում է, ինքն էլ մէկ նամակ է գրում Մահամմէտ-միրզային և այդ յիշեալ անցքը նկարագրում ու կցում թէ «Արաքսատանի 12 գունդ զորքը ինքս իմ ծախքովն պատրաստել եմ, ուր որ կհրամայես, Մահամմէտ-շահ, կիաղացնեմ. կարող եմ մինչև Թավրիզ ևս առաջնորդել, դարձեալ իմ ծախքովը, միայն թէ փութաս, գաս, բազմես քո օրինաւոր գահի վրայ»։

Սրփահդարը շահի կանանոցը կում հասցնելից յետոյ, Ասքի-Ղուլիէի և իր զօրագունդերի հետ գնում է Սուլթանապատ իւր գահոյի տեղն և սկսում է իրեն սատարելու մնացեալ գունդերն ևս ժողովել անտեղ, որպէս զի Մահամմէտ-միրզան պահանջելիս, պատրաստ լինի, չուել ու գնալ, ուր որ նա նշանակէ։ Իսկ Զիլլի-սուլթանը լսելով նրա Արաքսատան հանիլը, հրամարակներ է գրում նրան թէ, հարկերը ժողովէ՝ ուղարկէ Թէհրան, և ինքդ էլ փութան արի ներկայացիր ինձ. բայց սրփահդարը ոչ թէ գրաւոր չէ պատասխանում նրան, այլև հարկերի փողը ևս չէ առաքում։ Մինչ այս՝ մինչ այն, Ասքի-Ղուլան գնում է Մահամմէտ-միրզային ընդառաջ, որի հետ սրփահդարը դարձեալ իւր մտերմութիւնը ապացուցանելու՝ նամակ է գրում նրան, Մէկ քանի օրից յետոյ Մահամմէտ-միրզան մօտենում է Թէհրանին, սրփահդարն էլ գնում է ներկայանում նրան մեծամեծ ընծաներով. այսինքն հարիւր ձիեր՝ թնդանօթների համար, յիսուն ջորի, հարիւր ուտտ, հազար ոչխար և քսան հազար թուման փող։ Բայց մեզք որ այդ ամենը իզուր անցան, և հէնց այն օրը նրա տարաբախտութեան դռները բացուեցան։ Զան զի, Մահամմէտ-միրզան չատ վար ցեղի ու աննշան մարդիկ էր հետը բերած Թէհրան, որոնցից մէկին ու գլխաւորն էր Հաջի-միրզայ Աղասի անունով մէկ մօլլայ, որ վարպետ էր եղած նրան. ուստի և մեծամեծներն ուելի ուշադրութիւն չէին դարձնում նրա վերայ, ինչպէս և սրփահդարը։ Հաջին թէ մէկ տարի անցաւ, Մահամմէտ-շահը կասկածելով իւր տարրաղէմ Միրզայ Արդուլ-Կասում-Կայիմքրզամից, խեղդել տուեց նրան, որի պաչտօնը յանձնեց վերոյիշեալ Հաջի-միրզայ-Աղասիին։

Երկար միջոց պնտականները չէին համակրում սրան և չէին էլ հանդուրժած, որ մէկ մօլլայ կարողանար Էնդիսի վսեմ պաչտօն կատարէր. ուստի և միշտ սպասում էին նրա կործանումին. ընդհակառակն խորամանկ մօլլան (զոր անուանում էին Աղա կամ Հաջի) այնպիսի անակնկալելի դերեր խա-

զաց, որ ցաւագար չէն իւր կառավարութեան սանձն բան ամենայնի մինչև իւր մահը՝ յանձնեց Նրան։ Հաջին էլ այնուհետև սկսեց սակաւ առ սակաւ արմատախիլ անել այն հին պաշտամունքներն ու պետական անձնաւորութիւնները, որոնք արհամարհել ու արհամարհում էին զինքը և չէին ճանաչում իւր հեղինակութիւնը։ Այս տեսար վիճակի դառն մասերը ամենից առաջ ճաշակեց մեր սրփահղարը։

Հաջին ամենից առաջ չոչափեց սրփահղարի հրամանատարութիւնը, այսինքն զանազան Հնդին պատրուակներով մէկ-մէկ դուռա տակաւ առ տակաւ Նրանից խլեց և այլ ոք Նրա մանատար կարգեց։ յետոյ ձեռնամուխ եղաւ Նրան ստորադրեալ զունդերին, նոյնպէս մէկ մէկ Նրանից առնց և յանձնեց ուրիշ զօրագլուխներին։ Միևնոյն ժամանակ սրփահղարը եթէ ներկայ չլինէր Հաջիի առենում, վերջինս կոկսէր բարկանել Նրան, զրպարտութիւններ ստեղծել Նրա վրայ, Նրա առատաձեռնութիւնը՝ անուանելով չռայլութիւն, պախարակելով Նրա զուսոզ վարմունքն ու անձնապատասխանութիւնը, ասելացնելով թէ, այն ամէն ասանները, գեղերը, ազրիւրները այգիները և միւս բոլոր կալուածները, որոնց սա տիրում է այժմ սրպէս ժառանգական սեփականութիւններ, Նրա հայր Խասէֆ-խան սրփահղարն ընդդէմ չարիաթի՝ ապօրինաբարութեամբ էր տիրապետել, և այժմ էլ ներկայ սրփահղար Կուլամ-Հիսէյնխանը՝ մտադիր է զրկել իւր եղբօրը, և ոչինչ չտալ Նրան հայրական կայքից և կալուածներից, միամտանալով իւր չանի հետ ազգականութեանը և այլն, և այլն։

Այս յայտնի է, թէ Պարսկաստանում դրական օրէնք է որ ամենայն վէճ պէտք է չարիաթով, այսինքն մոլլաների քննութեամբ վճռուի և համեմատ նոցա վճռագրին՝ կառավարութիւնը կատարէ։ Կառավարիչը, հրամանատարը կամ մարզպանը եթէ օգուտ չունի դատից, վէճից և կամ չէ ուզում պանը եթէ օգուտ չունի դատից, վէճից և կամ չէ ուզում զլխացաւութիւն կրել, ուզարկում է դատախազներն այն մոլլայի մօտ դատ վարել, որն որ ընտրվում է նոցա, դատախազների համաձայնութեամբ։ Մոլլաներն էլ իւրեանց անձնական օգտի համար այնքան ուշացնում են գործը՝ մինչև պատճառները, որ դատախազները յուսահատութիւնից հաշվում են ներով, որ դատախազները յուսահատութիւնից հաշվում են կամ մեռնում են, յետոյ նոցա ժառանգները խաղաղութեամբ են վերջացնում և կամ կաշառներ տալով դատարկվում են կարգութիւնից և աղքատանում և յետոյ հաշվում, եթէ կառավարիչը կամ հրամանատարը բարեխիղճ է կամ օգուտ ունի, մանաժողով է բաղկացնում իւր՝ կամ մէկ ուրիշի նամակով, որ դատախազները վերջացնում է վէճը և խաղաղութեամբ, երկու երեք նիստով վերջացնում է վէճը և

կամ հաշտացնում են դատախազները ու երկու կողմի համաձայնությամբը վճռում են։

Արփիարիից բազմաբազմությունների զորձերը յանձնվում էին զանազան մոլլաների, վանքերոյ և նա պարտաւորեցաւ իւր հրամանատարութեան պաշտօնն ըստ ամենայնի թողուլ իւր տեղակալներին, զորքի գունդերը յանձնել գնդապետներին և ինքը գալ մնալ Թէհրանում. ընդ քարշ գալ մոլլաների գրաներում և ատեաններում պատասխանելու իւր հակառակորդներին և ջրելու համար նրանց գանգատները։ Նա չէր կարող ոչ թէ զորձակատարի յանձնել այս պաշտօնը, նաև կարող չէր հաւատալ իւր գրաւոր վաւերականները, վասն զի չատ անգամ զորձակատարները, որոնք ըստ մեծի մասին մոլլաներն են լինում, կաշառք առնելով հակառակորդներից հաշտութեան պայմանագիր են տալիս և կամ թէ գրաւոր թուղթերն ու կապալաները վերադարձնելով հակառակորդներին, ձայն են հանում թէ կորցրինք կամ թէ գիշերով սրիկաները խլեցին նրանցից և այլն, և այլն։

Արփիարիի բացակայութիւնը Արազատանից՝ Հայքին բարեպատեհ առիթ տեսնելով իւր կիրքը յագեցնելու համար սկսեց նախ տրտնջալ, յայտնել զժգոհութիւն իւր առնումը թէ, արփիարը անպիտան տեղապահների և փոխանորդների ձեռին թողել է չատ բարի և աշխատասէր հպատակները, որոնք անզուսպ կեղեքում են նրանց. իսկ ինքն այսպես անօգուտ կերպով չրջում է և այլն, և այլն։ Նա զրոյցները յաճախ կրկնելով ի վերջոյ հրավարտակ հանեց, որ արփիարն իսպառ հրաժարուած է Արազատանի հրամանատարութիւնից և նրա տեղը չատը չորրեց Երևանցի Հասան-խանին, որ և Խան-Բաբա-խան [1]) վերակոչեալ, որ նոյն իսկ Հայքի բարեբարի որդին էր։ Սա ևս Հայքի կամքը կատարելու համար ուղարկեց Արազատան տեղապահ՝ կոչմամբ իւր տատեսեռնամեայ անմարմ որդի Արդուլլահ-խանը, որպէս զի տաւել ևս յանդգնութեամբ ներգործել և խաւնել նախ արփիարի կալուածների զորձերը, և ապա քրքրել նրա հրամանատարութեան հաշիւները, իբր թէ ասելի փող է ժողովել ժողովուրդից, բայց պակաս է հասցրել գանձարանին կամ իբրևան տարարդեալ

[1]) Խան Բաբա-խանը մեռաւ 1822, նրա որդի Արդուլլահ-խանը գնաց Երևան, տիրել իւր ժառանգական կալուածներին, որ ինքան արքունութեան տուեց, և յետոյ գնաց Մեքքէ, ուսկից վերադառնալու ժամանակ մեռաւ Կ. Պոլսում։ Սա էր Երևանի Մահմատ-խանի թոռը, որ Հայոց պատմութեան մէջ յայտնի անձն էր, դարձեալ տեղը ու անցնում դարի վերջերում։

զօրագունդերին։ Այս մասին մինչև երկու հարիւր հազար թուման անվճար պարտք հաշուեցին սրբազգարի վերայ, չհարցնելով սրբազգարիցն էս գումարի մասին որ և իցէ խօսք. իսկ գանձարանն ստացաւ գրաւելով նորա կալուածների բոլոր արդիւնքը։

Սրբազգարն այն մարդը չէր, ինչպէս կասեն, որ մէկ թեկով խեղդուէր ու երկրորդիանամ Հաչիի առաջից խուսափէր, կամ ցածութիւնամբ և կեղծաւորութեամբ նրա առջեր նուաստանար, վանորոյ մէկ քանի անգամ դիմեց Հաչին և ողորմեց Հաչիի ապօրէն վարուելու վերայ, բայց երբ նա տեսաւ, որ Հաչը միայն իւր խոթութեան համար է մտածում և ոչ իւր անձնուէր հպատակների բարօրութեան վրայ, ուստի ինքն էլ սկսեց ամենայն տեղ և ամենայն ժամանակ ապերասանութեամբ հայհոյել և կատակել Հաչին, և հրապարակաւ յայտնել իւր տխրերիմ տեսակցութիւնը դէպի նա մինչև ժամանակ հաչուուեց իւր կրուսեր եղբօր հետ և ինչ ինչ կալուածների վիճերը վերջացրեց գանգատաւորների հետ։ Այդ հաչուութիւնն արդարև կարի թանկ նստեց նրան, վասն զի պարտաւորվեցաւ պատրաստի դրամով բաւականութիւն տալ նոցա. ուստի չբնայեց վաճառել իւր ամենայն թանկագին ակնեղէններից մէկ մասը, անմիջապէս իւր կալուածների երկու տարուայ արդիւնքը պարգեց գիւղացիներին, բան որում արդէն Աբդուլլահանը ազատում էր ոչնչ հարկ կամ տուրք չառնել գիւղացիներից, որպէս զի նոքա նոր նոր վիճեր արտադրէին ընդդէմ սրբազգարի։

Իսկ ահա այժմ նոր ի նորոյ սրբազգարը սթափելով տեսնում է որ մեծագումար պարտքի է ենթարկուած, այսինքն մինչև երեք հարիւր հազար թուման, որի տարեկան տոկոսքն հասնում էր, բան իւր տասիեան. 30—40 հազար թուման. ուստի բարեբաղդ է համարում նախ՝ մեռցեալ հոգեպահուստ, հազուագիւտ և շնչաբերիկ գոհարեղէններն արժան գներով վաճառել, և երբ տեսնում է նոցա արժողութիւնները չբաւականացան լրացնել իւր պարտքերն, ապա սկսում է վաճառել անչարժ կալուածներից ևս, այստեղ ամենայնիւ նա չէ կասում իւր հօր կտակիցն որ և իցէ գումար պակասացնել ի մասին գնացող գացող ուխտաւորների ծախքերից։

Բոլոր Պարսկաստանը կարեկից էր սրբազգարին նրա դառը վիճակի համար, բայց ոչ ոք չէր կարողանում հնարք գտնել, օգնել նրան։ Այդարև գտան ոմանք պարտականներ, որոնք ցանկացութիւնից ստիպուած, նրա տխուր վիճակը յայտնեցին չահին, որն և կամենում էր մէկ արդիւնաւոր պաշ-

տօն հնորհել նրան, բայց խորամանկ Հաֆին զանազան պատրուակներով արգելափոխ էր լինում, մինչեւ ժամանակ վերջինս իւր լրտեսներից խմանալով, թէ ոչք են շահի մօտ բարեխօսները սրփահդարի մասին, այն ժամանակը ուղղակի կամ անուղղակի տարագրել տուեց նրանց կամ թէ պաշտօնազուրկ արեց. ուստի այնուհետեւ երկիւղից ոչ ոք չէր համարձակվում շահի քով սրփահդարի անունը արտասանել։ Սրփահդարը մէկ անգամ տաք տաք էս անցքերի վերայ խօսելու ժամանակ ասաց թէ՝ «երբան Հաֆին կամ նրա արբանեակները հայածում էին ինձ, այնքան համակրողներս բազմանում էին, առաւելանում էր փառքս ու պատիւս, երբ հանդէսում ներկայանում էի, նկատում էի, որ առաջուանից աւելի յարգ էին նուիրում ինձ, որովք մարդոյ համար աւելի թանկ են՝ քան թէ հարստութիւն և փեսմ պաշտօն»։

Մինչ այս մինչ այն, 1264 Հիջրին, 6 Շէվվալի (1847) Մահամմէտ-շահը կնքեց իւր կեանքը թէհրանում և ամէնի ամբոխը միանալով զօրքի հետ՝ յարձակուեցան Հաֆիի վերայ սպանելու, բայց նա փախաւ մտաւ ուխտատեղի Շահ-Աբդ-Ազիզ մէջ։ Ֆիթն և ազատուեցաւ։ Իսկ նրա քաղաքում գտնուած պարսկերը թալանեցին։ Ամենք կարծում էին՝ թէ սրա պատճառը սրփահդարի զրգռելն էր, ամենք էլ համոզուած էին թէ, խուժանը սրփահդարի համար ինքնօրէն վրէժխնդիր եղաւ, և այլք թէ՝ սրփահդարը մարդիկ էր ուղարկել ծածկաբար զրգռել խուժանը։ Բայց ինքը, սրփահդարը, երդմամբ պատմում էր թէ «երբ իմացայ շահի մահը, իսկոյն ձիաւորվեցայ գնայ արքունիք, հասայ արքունիքի դրապարակը, տեսայ ստամակ, սրիկայ և ամէնի ամբոխը խռնուած՝ փոշմանելայ որ այն ճանապարհն եկայ, բայց էլ վերադառնալ չէր կարելի։ Ամբոխը տեսնելով զիս, որ չունիմ առաջուայ իմ փառաւոր և շքեղ դուրս գալը, մանաւանդ որ սակաւ էին ծառաներս, աւելի ևս ամենացաւ և «ենկլաշ կալլաՀ» գոչելն առաւել ևս ատակացրեց։ Այս կողմից՝ այն կողմից ցոյց էին տալիս մէկ մէկին զիս, և բարձր ձայնով ասում էին «հանա եկաւ սրփահդարը, տեսէք, Հաֆին սրան մինչև ինչ վիճակի է փատթարացել։ Արա հայրը չէր, սա չէր մինթէ, որովք հիւրընկալում էին մուսուլմանները, գիտէք, որ նրանում մարդ չկայ, որ սրանց ազի ու հացի համը տեսած չլինի»։ Այդ խօսքերն ևս ականջներովս լսում էի, բայց ևս գլուխս խոնարհացրած չարունակում էի ճանապարհս, որ ամբոխի խրոնութիւնից հաղիւ կէս ժամում հասայ արքունիքի դուռը»։

Ուրիշներն ինչ կուզեն թող կարծեն, բայց ինձ աւելի հա-

ամական երևաց վերջինս, որովհետև սրբհոգարն իւր խօսքն եզրակացրեց բառերովս թէ «ես եթէ չէի եղած սրբհոգար իւսուֆի-խանի որդին, կարելի էր այդ տմարդի (նէմէրդ) միջոցով վրէժխնդիր էի եղած Հաշիիցս։ Կործանուած, վայր ընկած մարդուն աջացի տալը տմարդութիւնից տմարդութիւն է։» Այսու ամենայնիւ, ինչպէս ես ճանաչեցի, սրբհոգարը այնքան ազնիւ և մեծհոգի անձն էր, որ արժանի չէր համարել ինքեան ձեռնամուխ լինել այդպիսի կեղտոտ մեջոցի, մանաւանդ որ եթէ նրանից այդ անցքում փոքր ինչ կասկածանք լինէր, յետագայ չարը չէր ընդունել նրան մէկ վսեմ պաշտօն, այն էլ առանց որ և իցէ ընծայաբերութեան, ինչպէս սովորութիւն է Իրանում, և էն էլ էն ժամանակը, երբ նոր չարը զկրտում էր փողի համար։

Շարը մեռնելից յետոյ թէհրանը տակնուվրայ է լինում, ոչ ինչ բարեկարգութեան նշան չէ նշմարվում, ոչ որի կայք ու կենաք չէին ապահովուած, կարաւանսարաները. խանութները դոցվում են։ Բացի տեղացի սրիկաներից, Մարազայի բերդապահ զօրքը, որի զօրավարն էր յիշեալ խան-Բաբա-խանը, ուրեմն ես վանդալսոր են հանդիսանում բնակիչներին. ուստի պետականները ժողովվում են խորհում և եզրակացնում, որ սրբհոգարը չտաց տաղնապով մարդիկ ուղարկէ Արազրստանից, որ մէկ քանի գունդ զօրք ժողովեն բերեն թէհրան, զինաբանից նոցա զէնք և զրահներ բաժանեն, որպէս զի հակեն արքունէքի վերայ և անվտանգ պահպանենքաղաքը՝ մինչև թագաժառանգի հասնիլը։ Այդ զօրքը հասնում է թէհրանից բացակայ մէկ օթեան, իսկ Մարազայի գունդը դրդմամբ խան-Բաբա-խանի գիշերով լռելեայն գնում է, անպատրաստից յարձակվում, անզէն և անզրահ Արազրստանի զօրքի վրայ և ցրրվում։ Կարծում էր խան-Բաբա-խանը թէ սրբհոգարն այս ծառայութեամբ առաջադէմ հանդիսանալով նոր եկող չարի առջևը՝ իւր արած վատութիւնների փոխարէնը նա ես կը հատուցանէր։

Թագաժառանգիստ քաղաքի յիշեալ երեքման ժամանակը՝ թագաժառանգ Նասր-Էդդին-միրզան հասնում է և բազմում իւր հօր գահի վրայ, վանդալ և ամենայն ինչ լռում է և փայր փոքր բարեկարգվում Նասր-Էդդինին քաջ յայտնի էին այն տառապանքներն ու վնասները, որ ի զուր տեղը սրբհոգարը դարը հրել էր, և առ ի վերականգնցնել նորա վարկն ու հանրաւոր, նշանակում է նրան մարդպան Ասպահանի՝ առանց որ և իցէ ընծայի, որ ըստ սովորութեան իւրաքանչիւր մարզպան անչուշտ պիտի մատուցանէր շահին։ Սրբհոգարն ինչ զպան անչուշտ պիտի մատուցանէր շահին։

ինչ կարելոր, գրաւոր պատուէրներ արքունիքից ստանալու համար՝ ուշանում է թէհրան. ուստի մէկ քանի չաբաթ առաջ ուղարկում է Ասպահան իւր տեղապահ Իմամվերդի-Հիւսէյնխան-խարաղ ասպետին՝ հանդերձ չահի հրամանագրով, որ նա մէջլիսներում կարդայ տարի խակ սրբահաղորդն հանում է Ասպահան 4 Բամազանի 1265 Հիջրի (1849), երբ և երկրացի մոլլաները, մեծամեծները, վաճառականներն ու արհեստաւորները դուրս են գալիս նրան ընդառաջ չքեղ հանդիսով, մատաղներով և համակրութեամբ ընդունում, քանզի մօտիկ էին ճանաչում նրա ազգատոհմը և յայտնի էր նրանց նորա ատաւիծահանաց հատատաութիւնները։ Բայց մեզք որ անագորոյն բաղդը դարձեալ նրան հալածում էր, վասն զի անակնկալ մէկ հնչին տարադէպ անցքից՝ մէկ մեծ խռովութիւն ծագեց, որն որպէս չահի և արքունիքի, նոյնպէս և խաղաղասէր բնիկ Ասպահանցիների ակնալրութիւնների ի դերն եկաւ։

Կաղարների պատմութիւնը ասում է թէ՝ Բամազան լուսնի չորսին [1]) սրբահաղորը հասաւ Ասպահան և երեք օրից յետոյ այս տխուր անցքը պատահեց այսպէս։ Իմամ-Ջումայ սէիդ Իմամվերդի՝ առաջին կարգի մոլլաներից մէկը մէջլիսում ներամաղ անելիս՝ դուրսը մէկ խառնաձայն աղաղակ է բարձրանում, վասնորոյ ներկայ եղող ժողովուրդը թողնելով նամազը՝ շտապով դուրս է դնում։ Իմամ-Ջումէն աղօթքը վերջացնելէն յետոյ՝ ինքն էլ դուրս է գալիս։ Նրան պատմում են թէ, մէկ սարբազ (հեռեակ զօրական) քա սպասաւորների մէկի հետ խօսք խօսք է լինում, մէկդմէկը հայհոյում են, ներկայ եղողները կամենում են նրանց հաշտեցնել, միևնոյն ժամանակ մէկ քանի սարբազներ անց կենալիս են լինում, անմեղով իւրանց դասակիցն մենակ չրջապատած հասարակ ժողովուրդից, մօտենում են, լսում են, որ քա մարդիկը հայհոյանքներ են տալիս՝ սարբազին, վասնորոյ և նոքա յարձակվում են որ ծեծեն քա ծառաները։ Իսկ մենք ժողովուրդս թոյլ չտալիս, և այժմ ախատում ենք հաշտեցնել։ Իմամ-Ջումէն առանց քննելու՝ ով է յանցաւորը, որպէս իւր սպասաւորների, նոյնպէս և սարբազների վերայ զայրանալով, միևնոյն ժամանակ յանդիմանալով և խրատելով, հրամայում է որ մէկ մէկից հեռանան և չպարտնակեն կռիւ և ամբոխ մէջ-

[1]) «Ազգասէր» օրագիր, Պալկամա, 1849 Դեկտ. 15 № 36 ասում է. «Փիր ի Նոր-Ջուղայ՝ Հոգոտասն 5, ասէ թէ, Աբքահանդն եհաս Ասպահան, որ խիստ լաւ մարդ է։ բայց դեռ ոչ զոր ի չարագործացն պատուհասեցաւ։»

ցիթիր առջեր։ Բայց յետոյ ոմանք պարտարոյծ և դատարկապրտ մարդիկ, զրկելով Իմամ-Ջումէն, որ եթէ չցասուբին և չցասուժուին այս նոր եկող սարբազներն այժմ իսկ, ուրեմն այսուհետև քո մարդիկը չեն կարող չրթիլ քաղաք մէջ և քո հրամանները կատարել և այլն, ուստի և Իմամ-Ջումէն հետեւեալ օրը գնում է սրփահդարի պալատը, բոզբռում և խնդրում, որ պատուին այն սարբազները։ Սրբահդարն իւր բազաբավարի բնաւորութիւնամբ մեծ յարգանքով ընդունում է Իմամ-Ջումէն և խոստանում, որ հետեւեալ օրը մինչև կէս օրերը կկամենայ նա ինքն իւրի արքունական հրապարակի սենեակը (առանձը) և այն զօրականներն էլ պատրաստ կլինին այնտեղ, նրա ազբի առջեր անպատճառ կպատռէ նրանց, որոնք յանդգնութեամբ պատասխանած են նրան բարձրութեան մէջ և այլն։ Իմամ-Ջումէն այս խոստումը վրայ կատարեալ գոհունակութեամբ վերադառնում է իւր բնակարանը։

Իմամ-Ջումէն կռիւ անող սպասաւորն՝ ազգական լինելով դատարկապրտի Ղազաբ-Ամէտ-միրզայի հետ, որն մօր կողմից իջած էր Աէֆէվիէ նախորդ թագաւորող հարբասութիւնից, և միւս զինքը ժողովրդապէս ոչ ցոյց կտար, բայց կարի հակամէտ էր խռովարարութեան։ Ինչպէս բնական է այսպիսի տեղ փտած սոնմից եկած՝ ազբատ և ապականոր ամբարտաւանութիւնին, այժմ իւր ազգականը պաշտպանելու համար, սկսել է դեր խաղալ և լսելով որ, սրբահդարը խոստացել է Իմամ-Ջումէի՝ ուր անպատաս կլինին մարդասպան, գող, ասադակ, անանկացած, սրիկայ և անառակ մարդիկ, նոցա մէջ կանդնած, սկսում է ճառախօսել ու զրգռել յիշեալները, մանաւանդ Իմամ-Ջումէի դառաներ, եղբայրացնելով թէ, դուք անառոմիկ ծառայում էք ձեր մեծին, որպէս զի նախ ձեր պատիւն ու ծանրութիւնը պահպանէք քաղաքիս մէջ, երկրորդ՝ ձեզանով է ապահովուած խեղճ, զրկուած և անանկ մարդկանց կեանքն ու կայքը, որովհետև երբ մէկն ուզում է նրանց զրկել, զրկեալները ձեզ մօտ են վազում դիմում են ձեր պաշտպանութեան, ինչպէս ահա այս ներկայ բազմութիւնը, ապաքէն այս անցքում, եթէ դուք այսօր անպատիւ լինիք մէկ քանի ՀՆՉԻՆ զօրականներից, ուրեմն այսուհետև խեղճերն իսպառ ոտնակոխ կլինին զօրականներից, վանողոյ լաւ կանէք որ իսկոյն մուտարվիք ժողովուրդի հետ, նեցուկ լինիք միմեանց և պատժել տաք յանցաւոր սարվազներին, որպէս զի ապագայում զինուորական ոչ չամարձակուի ձեռնամուխ լինել ձեզ։ Սրբահդարը նոր եկած, պէտք է նրա

քիրն այս գլխից տրորած, նա խոստացել է պատժել սարբաձները, բայց ծածկաբար հաղորդել են ինձ, որ նա չը պիտի պատժէ, նրա համար էլ հրաւիրել է Իմամ-Ջումէն ներէ ու անպատիժ թողնէ նրանց։ Ազաքէն եկէք, գուսարուեցէք, գնացէք, մտէք մէսջիթը և այնտեղից պատուսաւոր ուղարկեցէք Իմամ-Ջումէի մօտ, որ ստիպէ սրբազանն անպատճառ պատժել սարբաձները։ Ներկայ եղող թաղամէիթիներ համաձայնվում է նրա քարոզին և առաջարկում, որ նա ևս իբրեանց հետը գնայ։ Անմիտ-միրզան ընդունում է և մէկ քանի ազգականների հետ ընկնում է ամբոխի առջևն՝ առաջնորդում մինչև մէսջիթը, Ալլահ, Ալլահ գոչելով, և ստիպում է ճանապարհին պատահողները դադարից լինել, միանալ և հետևել ամբոխին, որոնց թիւը քանի մի հարիւրի է հասնում։ Իմամ-Ջումէն այս լսելով, չցանգում գնում է մէսջիթը խրատել ամբոխը՝ որ այնտեղից դուրս բերել նրանց։

Մինչդեռ ժամանակ լսում է ամբոխի մէսջիթ գնալը և սրբազնադարը, որ և իսկոյն ուղարկում է իւր տեղապահ Պատամ-մէտ-Հիսէյն-խան-Խալաջն մէսջիթ Իմամ-Ջումէի մօտ՝ խնդրելով ամբոխի համագումարուելոյց պատճառը և ասել, որ ինքն էլ սպասում է նրա գալուն առ ի պատժել յանցաւորները, ինչպէս երեկ խոստացել է։ Խալաջը ներկայանում է Իմամ-Ջումէին, և գնում ևս մէկ բառ չարտասանած, Անմիտ-միրզան ամբոխի մէջից՝ սպրտվում է դուրս, ձեռքի գաւազանով մէկ քանի անգամ զարկ է իջացնում նրա գլխին և հրամայում ամբոխին, որ ինքնանք ևս իրան հետևին։ Զորս կողմից խափվում են Խալաջի վրայ անխնայաբար զարկում և դաշոյնով մէկ քանի մահացու վէրքեր հասցնում, յետոյ դիակը տանում են ձգում մէկ ցամաք ջրամբարի մէջ։ Սրբազնադարը մարդիկ է ուղարկում կիսակենդան դիակը բերում են, բայց հնարեալ օրը նա փչում է հոգին [1]։

Իմամ-Ջումէն վերոյիշեալ անցքից յետոյ թողնում է ամբոխը մէսջիթում և ինքը գնում է իւր տունը։ Իսկ Անմիտը զգալով իւր անձնական յանցանքը, բերել է տալիս այնտեղ իւր ընտանիքը, որպէս նուիրական և անմատչելի տեղ, և մինչդեռ ժամանակ պատգամաւոր է ուղարկում ասել Իմամ-Ջումէի ին թէ, որովհետև այս սուրբ տեղը նուիրված է քեզ, ուրեմն այսուհետև մենք ամենքս քո պաշտպանութեան ներքոյ ենք։

---

[1]) 8ես «Ազգասէր Արարատեան» օրագիր, տպեալ ի Պոլսոյ, 1850, Փետրվար 15, թիւ 42, ուր ասում է, թէ ըստ գրութեան ի Դար-Ջուղայ, այս անցքն եղել է 13 Հոկտեմբերի տեղեալ ապ։

Բայց նա՝ խմամ-Ջու

, վճռաբար պնդում է նրանց պաշտպանել և այնուհետև յարակցութիւն ունենալ նոցա հետ։

Զօրականները լսելով խալիֆի մասը՝ գրոհ են տալիս, գնում Ամիտ տունը-տեղը վերփվայր տապալում։ Վերջինս կասկածելով որ այնտեղ ևս զօրականները ձեռնամուխ կլինին նրան, մեկ գիշեր ընտանիքով դուրս է գալիս այն մզկիթից, գնում, մտնում է Հաջի-Մեիդ-Մահամմէտ-Բաղր, երբեմն ամենաբնակելի մուշիկիդի որդի, Միրզայ-Զէյնալ-Արզինի տունը, նրան հետևում է և ամբոխը։

Այստեղ Ամիտը փոխանակ զսպելու սանձարձակ ամբոխը, առաւել ևս գրգռում է, որով խումբ խումբ յարձակվում են զինուորականների և սրճարանների տապալրեանների վերայ, երբ յիշեալ Միրզայ-Զէյնալ-Արզինի տան չորս կողմի փողոցներով անցուդարձ էին անում, և երբեմն երբեմն նոցանից կալանաւորում, տանում էին, չարչարում և տանջում ևս։ Բացի սոցանից դուրս չէին գալիս այնտեղից՝ յանձնում էին և խաղաղ անցուդարձ անողների վրայ, պատճառ բերելով թէ, ինչի նոքա չեն գալիս և մտնում այնտեղ և միաբերան, որ միասին ներդրծեն հասարակաց բարօրութեան վերայ։

Մինչև այս կէսաբ սրճարարի և ամբոխի մէջ, որի գլխաւորն էր Ամիտը, անընդհատ բանախօսութիւններ էին շարունակվում, բայց վերջինս առանց մօլլաների պատասխան ևս չէր տալիս, վասն զի մէկտ նրա և մօլլաների մէջ ևս գաղտնի բանախօսութիւններ կային։ Մօլլաները համոզուած էին, որ այս անցքի լաւ թէ վատ եղրակացութիւնը վերաբերում էին ոչ միայն Ասպահանի, այլ բոլոր Իրանի մօլլաների պատուին, իշխանութեանն ու ազդեցութեանը. ուստի ջերմեռանդութեամբ աշխատում էին ուղղակի և անուղղակի միջոցներով զսպել և խոնարհացնել տէրութիւնն ու նրա կառավարիչները։

Աբիսդարը տեսնելով որ իւր ներողամտութեամբ և բանախօսութեամբ ժամանակ է կորչում, հրամայում է որ մէկ զօրագունդ գնայ պաշարէ Միրզայ-Զէյնալ-Արզինի տունը, և արգիլէ որ ամբոխը չնեղացնէ անցուդարձ անող խաղաղ քաղաքացիները, և թէ որ պաշարողներից մէկը դուրս գայ այնտեղից, թող տան ազատարար գնայ։ Բայց որ որ կամենայ, միևնոյն ժամանակ յորդորին և երդմամբ հաւատացնեն, որ կառավարչութիւնը յանձնանս ներում է նրան, ով որ դուրս գայ այնտեղից։ Այդ միջոցում մեծ երկպառակութիւն է ծագում պատեղից։ Այդ միջոցում մեծ երկպառակութիւն է ծագում պատեղների մէջ, վասն զի նրանց մեծ մասը ցանկանում է դուրս գալ, այն ինչ յանկարծ երկու յայտնի և երեսի մարդ

դիմ Միրզայ-Աբդուլ-Հուսէյն և Միրզայ-Աբդուլ-Կասիմը գը-նում են միանում Անմէաի հետ և թոյլ չեն տալիս զդիցազ-ներին դուրս գալ այնտեղից։

Այսուամենայնիւ, սրբահոգաորը իւր բնական բարեսրտու-թիւնը չկամենալով որ արիւնհեղութիւններ լինին, հրաւի-րում է իւր պալատը բոլոր առաջնակարգ մարդիկները և խրն-գրում, որ նոքա աշակիչ լինին իրենց և խաղաղութեամբ վեր-ջացնեն այդ տարաձայնութիւնը և անախորժ անցքը, որպէս զի շնար-կարողանայ նա հաղորդել նոր գահակալող երիտասարդ շահին, որ նա անուշաչա կը վչանայ և կզայրանայ ու ինչ միջոցով որ լինի կը զսպէ անհնազանդները, անպատճառ ի վերա բնակիչների այդ հին քաղաքի, որ Իրանի պարծանքն է։

Մոլլաները թէև կարեկցութեամբ խոստանում են աշխա-տել, նաև գնալ ամբոխի մէջ յորդորել, խրատել և խնամուտ անել նրանց, որ դուրս գան այնտեղից, բայց ոչ ոք չէ կատա-րում այդ խոստմունքը, ուստի և սրբահոգաորը պատգամաւոր է ուղարկում պաշարեալներին սպառնալով որ եթէ նոքա դար-ձեալ յամառին ու դուրս չգան չցրուին, նա կպարտաւորուի վարուիլ նոցա հետ ինչպէս ապստամբների և տէրութեան լուծը նշկանողների հետ։ Պաշարեալները, որոնց թիւը երեք հազարէն աւելի կլինէր, այս լսելով գիշերն սկսում են պատ-նէշներ կանգնացնել և հրացանակոծել զօրքը։ Զօրքի գնդա-պետը նախ անտարբերութեամբ հանդիսատես է լինում, բայց երբ տեսնում է որ հրազգութիւնը հետզհետէ սաստկանում է, հաղորդում է սրբահոգաորին և հրաման ստանում, որ ինքն էլ թնդանօթի գնդակներով պատասխանէ նրանց։ Պաշարեալնե-րից մէկ քանիսը գնդակոծ լինելու համար, նոյն գիշերը փախչում են, զօրքն էլ ի հարկէ արգելարգելի չէ լինում։ Սրբա-հոգաորը հետեւեալ օրը դարձեալ պատգամաւոր է ուղարկում և ներողութիւն հարցնում նրանց, որոնք կկամենան դուրս գալ այնտեղից, բայց որովհետև նոքա առաջուանէն աւելի յա-մառվում են, ուստի և նա հրամայում է զօրքին, յարձակուիլ պաշարեալների վերայ, որով հասարակաց պատերազմ լինելով Շերիս-Ալի-խան գնդապետն ու շատ զօրականներ սպանվում են ու վիրաւորվում։ Իսկ պաշարեալներից երեք կին աւելի են կոտորվում և վիրաւորվում։ Այս ևս պէտք է յիշած, որ կանանաւոր զօրքի մեծ մասը համեղուած էր, որ միրզայ-Զէյնալ-Աբդինը Հաջի-Սէիդ-Մահամմէտ-Բաղրի որդին լինելով, նրա տան վրայ գնդակ ձգուը գժոխք կերթայ, վանորդ և թոյլ էին գործ գնում հրազգութիւնները։ Ինչ իցէ սրբահո-գաորը պարտաւորվում է Թէհրանից նոր զօրք պահանջել։ Այդ

լսերի վերայ Աստուծլան, որ մինչև այն ժամանակ չէր գոյութիւն էր պատուում, այժմ յայտնի չուռ եկաւ մոլլաների կողմը և սկսեց բարբաջել զամբոնն մեռ մոլլաների նման թէ, ով որ մէկ մէկ կամ մոլլաների տների վերայ թնդանօթի կամ հրացան ձգէ, դժոխք կերթայ. իսկ նոքա, որոնք պաշարուած են և հրաձգութիւնից մեռնեն, մարտիրոսներ կլինին և անդադար արքայութիւն կերթան, և ով որ զօրքից մարդ սպանէ, նա ևս արքայութեան ժառանգ է. մինեւնոյն ժամանակ մոլլաները ծածկարար հրազէններ, վառօդ և գնդակ էին հայթհայթում պաշարեալներին։

Վերջապէս հասնում է թէհրանից ուղարկած զօրքը, որ խաստութեամբ պաշարելոյ [1]) ապստամբները, ընդհատում է նրանց յարաբերութիւնները քաղաքի մանաւանդ մոլլաների հետ։ Ապէսր լուսնի 17-ին զօրքն սկսում է պատերազմել, չատ խռովարարներ է կոտորում, և կալանաւորում, որոնց մէջը լինում են երեքլի խամսէ-ջումի Ահմէդ և փէշնամազ Հաշիմը, բայց դարձեալ չեն կարողանում տիրել պաշարեալների տրջին. ուստի և սրփազնդը հրամայում է խամսէ-ջումի Ահմէդը թնդանօթի բերանում դնել և արձակել։ Սրանով ապստամբների վրայ ահ ու սարսափ տիրելով պատմաւոր են ուղարկում և ներում խնդրում. սրփազնդն էլ համաձայնում է այն պայմանաւ, որ մինչև հետեւեալ օրը նոքա դուրս գան ցրուին։ Մինեւնոյն ժամանակ հրամայում է դաղտնապէս իւր եղբօր Բդայ-Կուլի-խանին և իւր որդի Աղա-սարդարին, որ գնան հանեն զօրքի վրայ, և պատերազմի դրութեամբ բարեկարգութիւնը պահպանեն մինչև պաշարեալների ցրուիլը։ Վասն զի նա միամիտ չէր զօրքի հաւատարմութեան, նոյնպէս էլ համոզուած չէր, որ պաշարեալները ճշմարիտ են խօսում։ Սրփազնդի հեռատեսութիւնը անսխալ եղաւ։ Բանախօսու-

---

[1]) Տես «Եղբարք Արարատեան» օրագիր, 1850, Մարտ 15, թիւ 11, որ սատմ է «Գուանվար 19, 1850 ամ. ունին հազար զօրք հասեն ի թէհրան։ Ամենայն 11 թնդանօթաւ և հրաման սատակել յարբայնն զարգից կալանաւորել զգիւղաւորս ապստամբիցն։ Մարդպանն զպատգամ ասաքնաց առ գնդապան, և նա յետ բազում պատիպաս պատասխանաց՝ արեաս չարեցան զհնոց գիւղս կուիսին քաղաքին։ Հրաման տրար մարդպանն և զօրքն սկսեալ ի Շահի Ամանուել հրապարակէն կոչմանեցնար քանդեցին մինչև ի Զարսու Շիրազի, անուանեալ հրապարակէն՝ ի Ղազանչիոց զարգարցին, տեղեալ կար ի Լամբան, ի Թեղարագ և այլն, և զինն յարեգակն զարգացին, տեղեալ կար ի Լամբան, ի Թեղարագ և այլն, և զինն յարեգակն զարգացին, տեղեալ կար զարգ և գիւղ, գիր և գրագէտ, գիրգ և գանձաւոր փանգամանք։ տարեալ զարգ և գիւղ, գիր և գրագէտ, գիրգ և գանձաւոր փանգամանք։ Ասեն՝ զարգ և գիւղ, գիր և գրագէտ, գիրգ և գանձաւոր փանգամանք։ Ասեն՝

թիւնը դեռ չվերջացած՝ պայարեալները յանկարծ բուռն զո-
բութեամբ յարձակվում են զօրքի վերայ, երևակայելով թէ
սաքա անպատրաստ կլինին, բայց սխալուած էին. վասն զի,
ինչպէս յիշեցի, Բզա-Կուլի-խանն ու Ադա-սարդարը պատուէր
էին տացել արդէն զօրքը պատերազմի ոտքի վերայ պահել.
Այս անգամ պատերազմն առաւել ևս արիւնհեղ եղաւ, վասն զի
զօրքը—ասում է «Կայծարների պատմութիւնը», քաջութիւնով
գնդուզէջ պատանի Ադա-սարդարի օրինակից և խրախուսելից,
և մանաւանդ տեսնելով այն պատանին մերկացրած ուրը ձե-
ռին՝ ամենից առաջ անվեհերութեամբ էր առաջ յարձակում,
ինքեանք էլ նրան հետևելով գրոհ տուին և չատ մարդիկ սրա-
խողխող արին և տրեցին մէկ քանի պատանէներին։

Սկիզբ լուսնի 19-րդ օրը, որ սուրբ և նուիրական օր է
մուսուլմանների համար, արքայադարը հրամայում է գնդապետ-
ներին, որ այն օրը իւրեանց ձեռները արիւնով չներկին ու
գադրեցնեն յարձակումը. Ընդհանրապէս պայարեալները բա-
նեպաստ ժամ և ժամանակ համարելով զօրքի յարձակում
գադրեցնելը, անակնկալ յարձակվում են զօրքի վերայ, որն որ
նախ պայազանողական դրութիւն է պահպանում, բայց երբ
մէկ քանի զօրականներ վիրաւորվում են և սպանվում, այնու-
հետև գնդապետներն ու սպաները չեն կարողանում զսպել
զօրքը, որով դարձեալ սկսվում է պատերազմը ու տասնեհինգ
մարդ ապստամբներից սպանվում են և չատերը վիրաւորվում.
Եւ մինչդեռ զօրքն առաջ է մատչում, և անպ յանկարծ մէկ
քանի բռպէի մէջացում բոլոր մէջիթների գմբէթների վերայ
բարձրանում են մահմէտական նուիրական գոչով, այսինքն
կանաչ գոչով գրօշակներ, որոնց հետևում են քաղաքի
արուարձանների մինարէթները, անմիջապէս և մուա-
զինները, սկսում են կրկնացնել քաղցր ձայնով և հրաւի-
րել բարեպաշտ մուսուլմանները փութալ, դալ մասնակից լի-
նել այն կրօնական սուրբ պատերազմին։ Արքայադարն այս
անցքը պատմելիս ասում էր թէ՝ ամենից աւելի զարմացրեց
և զարհուրեցրեց զիս, երբ հետևեալ առաւօտ դեռ չլուսա-
ցած՝ զարթեցրին ինձ և իմացուցին թէ, քաղաքի չորս կողմ
դեղերից անթիւ ընակիչներ եկած չրջապատած են պայարող
զօրքը։ Ցնծոյ իմացայ, որ քաղաքի երեսի մօլլաները մինչոյն
գիշերը ցրուել են մէկ քանի հարիւր մոլեռանդ մօլլաներ,
պարապոյծ դատարկասուն սէյիդներ, որոնք մոլեռանդ կա-
տաղութեամբ զգացած էին, որպէս զի դեռն երկու-երեք ժամ
բացակայ գիշերի մէջ քարոզեն, զրգռեն և յորդորեն նոցա,
որ փութան, դան Ասպահան և ջնջեն կրօնի թշնամի զօրքը։

որի հրամանատարն է հայ սերունդից յառաջացած անհաւատի որդի՝ անհաւատ սրփահոգարը [1]։ Գիւղացիները չէին գալ և չէին կարող անհաւատ անուանել մեզ, բայց մոլլաները հաւատացրած էին նրանց թէ ես յանիծակել եմ խմամ-Բդայի թուրը, նրա դրած կուրանն ու այն թաշկինակը, որ նա թաց արած էր իւր արտասուքով, և չեմ վերադարձնում, վասն զի կամենում եմ տանել Աւլիմանայատ և այլն։

Անհամար՝ բայց առանց կարդի գիւղացիների բազմութիւնը պաշարում է զորքը և ինչպէս դուրսից գիւղացիները, նոյնպէս էլ ներսից պաշարեալները մեծ մոլեկնութեամբ յարձակվում են զորքի վրայ, որն որ այս անգամ ամենայն բարեկարգութեամբ կատարում է իւր պարտաւորութիւնը։ Սրփահոգարն ասում էր թէ «մեզ ասած էին և ինքս էլ նշմարում էի՝ որ սոսկ զօրականներից, մահաւանդ թնդանօթաձիգներից ամենք հրապուրված մոլլաների քարոզութիւններից, խղճահարվում էին ճշտութեամբ կատարել իւրեանց սպաների հրամաններն ու կարգադրութիւնները. իսկ ես ցոյց չէի տալիս, որ այդ արդէն գիտեմ և հասկանում եմ, բայց այժմ նրանք տեսնելով որ իրանք անխուսափելի վտանգի մէջ են, վատնոյ ստիպուեցան այլ ելն ոգի ընդդիմել և այնպիսի եռանդով մղեցին մարան որ ինչպէս դրսից, նոյնպէս և ներսի ամբոխը չտակալով զորքի հրաձգութիւնը, պարտաւորուեցան փութալ խուսափիլ և ցիրուցան լինիլ»։

Իսկ Ահմէտ-միրզան և Միրզայ-Աբդուլ-Հիւսէյնը փախչում, գնում մտնում են ուխտաւանց սէիդ-Աբդուլայի տունը, որն մէկ քանի մոլլաներ հեան առած՝ գնում է սրփահոգարի մօտ և խնդրում, որ ներէ այն երկու ապստամբներին։ Սրփահոգարը մեծարելով նրա բարեխօսութիւնը՝ ներում է այն պայմանաւ, որ ինչպէս երևելի յանցաւորները, նոյնպէս և գիւղացի կամ քաղաքացի ամբոխը, մինչև 5 օր դուրս գնան Ամասիանից և ուր կամին երթան։ Այս պատճառաւ չատ յանցաւոր մոլլաներ, որոնք չէին կարող անյայտ մնալ քաղաքում և նոցա սարգիր լինիլն անկարելի էր, կուրանը ձեռ քերում

---

[1] Ցնա «Ազգասէր», նոյն 15 Ապրիլ 1850 թվ., թիւ 46, յորում զբրատած է, «Հեռագիրեալ գուժկարը գան, թէ ի գժաուութենէ ռանի՝ որ ի ՄՀ գնեալացաց և մարգպանի՝ քանդեցաւ։ Ասպանան գրենի բան մեծի մարդեն։ Զաւուրս քանեն հինգ ասի, թնդանոթը ոչ դադարեցան ի հրանոտան չանթից, ռուռը և ապարանք մեծամեծք, ամեն թէ և թնդան բազումք կործանեցան գաղանեաւ, բայց դեռ խուժանն ոչ դադարի, քանզի զորք մարգպանին յաւելի ահն ասի, գնուրբ խմամ Բրդայի, զՊուրանն գրեալ ի նմանէ և գեռ թաշկինակ մնչ նորա, և մարգպանն ոչ կարէր յեռս զարձուցանել գնոսին»։

բռնած՝ մէջտիթից ուղիղ գնում են սրփանդարի պալատը նեռում խնդրում. Վերջինս էլ բոլորովին անտիրաշարութեամբ իրը թէ ներում է նոցա։

Երկրորդ օրը սէիդ-Ասադուլլան գնում է սրփանդարի մօտ և յայտնում թէ, ըստ որում դու ներեցիր որպէս սկզբնապատճառ անկարգութեան հեղինակ Ամէտ-միրզային և նոյնպէս միւս զլխաւոր յանցաւորներին, ուրեմն թոյլ տուր ինձ այն բոլորը տանեմ հետս կում և նա այնտեղից մենակ գնամ Թէհրան՝ բարեխօսեմ շահի մօտ, որ նա նս ներէ նրանց։ Սրփանդարն էլ յայտնում է իւր կատարեալ համաձայնութիւնը։ Իսկ յետոյ լսում է որ նա, Ասադուլլան, առաջնորդում է յանցաւորները ուղղակի Թէհրան, որպէս զի սրփանդարից բոզքեն չանէն։

Այդ մոլլաների և յանցաւորների կարաւանը դուրս գալով Ասպահանից, երբ հասնում է Մուրչախորտի օթևանը, սրփանդարն էլ գիշերով մէկ քանի հարիւր հեծելազօրքով, մէկ գունդ հետևակ զօրք երկու թնդանօթի հետ յանձնում է շտապագէտ Քէյքաւուզ-միրզային, որ լուսեկայն գիշերն ուղևորում է, որ գնայ, հասնի կարաւանին, ցրուէ և գլխաւոր յանցաւորները ձերբակալ անէ, բերէ Ասպահան։ Այն ինչ լուսածագին Մուրչախօռտի կարաւանը իւր ծանրութիւնը գրատների, ֆորմների և ուղտերի վերայ բարձած, ընտանիքը ձիաւորված և ոտամարդիկ էլ հա ուզում են լինում ձիաւորուելու ճանապարհ ընկնել Մուրչախօռտիից, և ահա ժամանում է Քէյքաւուզն, սկսում է խնդրել նրանց, որ վերադառնան Ասպահան, և որպէս թէ միայն այդ նպատակով է նա եկած, պատրուակ է, բերում որ եթէ այսքան բազմութիւնը մնայ կում կամ Թէհրան, մեծ անպատուութիւն կլինի սրփանդարի հասցէին, անուանը և պատուին։ Այսպէս առաջարկելու պատասխանն այն էր, որ ժամանակ վատատակ, մինչև քամակում մնացած հետևակ զօրքն ու թնդանօթները հասնէին, որովհետև կարաւանի բազմութեան թիւը նորա հեծելազօրքիցն չատ աւելի էր։ Նատերը համաձայնում են Քէյքաւուզի յորդորանքին և կամենում են վերադառնալ, բայց Ամէտ-միրզան յամառվում է և սոխալում կարաւանի մարդիկը, որ չարունակեն իրենց ճանապարհը. ուստի Քէյքաւուզն ազաչում է նրան պատճառ չլինել տարաձայնութեան, և աւելացնում է թէ գնանք նոցա մօտ, որպէս զի վերայ հասանք, խելքով, պատուով և անուանով երեսելիներն են, խորհենք, խօսենք, թերևս նորա համաձայնին իմ խնդրքին և վերադառնան Ասպահան։ բայց նկատում է որ նա, Ամէտը, չէ կամենում ունկնդիր լինել նրան,

ընդ հակառակն սաստիկութեամբ հայհոյելով գրատապանները, ջրապանները, և ուղտապանները, հրամայում է իւր ծառաներին, որ մտրակին գրասաները և ճանապարհը չարուն։ Այստեղ Փէյքավուզն էլ հրամայում է իւր հեծելազօրքին որ արգիլին և թոյլ չտան նրանց քաղաքից անել, որով նախ փայտակոխ, ապա թրեկոխ և հուսկ յետոյ հրացանակոխն սկսում է։ Մինչ այս մինչ այն, հասնում են հետևակ զօրքն ու թնդանօթները։ Ճանցաւորներից չատ մարդիկ խլոյն փախչում ցրվում ազատվում են, և զօրքն էլ արգելարիթ չէ լինում նրանց փախստականը, այլ հետամուտ է լինում ձերբակալել գլխաւոր խռովարարները, և շղթայակապ վարել Ասպատան [1]։

Այդ վերջին ազատվելի ժամանակ ապատամբապետ Անմեաը ծպտեալ փախչում է և զարտուղի ճանապարհներով գընում մտնում է կռամի նուխրալան ուխտատեղին, և խաչաքի օրդին ընկալ այս, իւր հոր արիւնի վրէժն առնելոյ համար, գնում է կռամ, և օրը կէսօրին ուխտատուների մեծ բազմութեան աչքի առջեւ գաղնակով խոշորագոյն է զԱմէնոր, իսկ մերոպայ-Աբդուլ-Հիւսէյնը, որ նոյնպէս փախած, գնացած էր և իւր ծառայի տան մէկ գիւղում ծածկուած էր, փոքր ժամանակից յետոյ ապանվում է իւր ասպէնջականից [2]։

---

[1]) Նոյն «Ազատ», 30 Պարիզի, թիւ 47, էջ 18 Յունվարի գինի գինը բարձրանին սրիկայք և Աբդալ-Հասէն նավաքն ինչն բարձրանին սրիկայք և մոլլայիք գեղի Ղում, ի վարիս ամեր մարդպան Պապանայ գնեա աբակնոց ոռոյ գրքեր ի հարիւր ազրուանս և գերուս հազարս հնանայ երկու թնդանօթիւ հանեցեալ, որ իրեն հասանեն Մարդպետ, իրը սեանայ օթիւ ի քաղաքն, սեանալ ապատամբքն ի փախուստ անապարեն։ Երկու օթիւ ի քաղաքն, սեանալ խոշորագոյն է զԱմէնոր։ Իսկ գնան ի փախուստին պանեն և Ջերկուս յանգաղարանանալ հեծելէրն, կեար գնան ի փախուստին պանեն և Ջերկուս գնանալ հեծելէրն, խնայելով փայն ի գնդպես իւրեանց։ Ազատ գրասաները ի նոյնանել, գինեվաճառանալ սասանպես արգիլեալ է, և մարդպանն կարեալ գրքան գինեմարի ուրուանս։ Բայց քաղաքն ի կասարեալ հանգստութեան կայ։

[2]) Նոյն, 30 Հոկտ. թիւ 59, էջ Ջուլայ 1850, ի 19 Պարիզի։ Բարդ հանն է առ այժմ ի խաղաղ վիճակի։ Ոչ որ սրիկայք, որ ի դարարիլ անցեալ խռովութեան փախուցեալ էին ի Քարվանդ, իրրև քան ասուոր յառաջ քան գալս գալս գառան ի Սեյիդ։ Հարի Մահամատ-Ալիզայ վերակացու, ասացեալ գեղ գալս գառան ի Սեյիդ։ Հարի Մահամատ-Ալիզայ վերակացու, ասացեալ գեղ ջեն.... ձերբակալ արարեալ ասալ գնասս ան Դարեն վանմանիսի սպանեցեն.... գար քաղաքապետի տեղայն, որոց երկուքն գալ չէին արձակալ գերացան, գար քաղաքապետի տեղայն, որոց երկուքն գալ չէին արձակալ գերացան, ի սեղրն ամայս կորուսին իւրբանեիր ասանեին գի ձեռն և գի սան Դրա ի սեղրն ամայս կորուսին իւրբանեիր ասանեին գի ձեռն և գի սան Դրա մանաս. Դարեն վանմանիսի Ցիս երկուքն կան տակուն յարգելանս... ի Ջուլայ, 19 Ջուլայի, ցենիներարդաս ամայն ժողովն Դարեն վանմանիսի ասր ի Ջուլայ, 19 Ջուլայի, ցենիներարդաս ամայն ժողովն Դարեն վանմանիսի ասր փահարդ գասանայն մեծամեծս քաղաքիս և ցուցանեն Դոցա գեմուզի գի գրեալ

Այնուհետև Ասպահանը բոլորովին խաղաղանում է [1]), միայն թէ սրփահաղարն հրամանաւ շահի սկսում է հետզհետէ խուսափարարներ որսալ կամ ինքն է պատժում, և կամ ուղարկում է Թէհրան [2]) որ այնտեղ պատժեն։

Թէև այնուհետև ամենայն ինչ խաղաղութեամբ է անցկենում և լուրը հասնում է շահին, որն շնորհում է սրփահաղարին խիլաթ, բայց մոլլաները դարձեալ ձեռք չեն վերառնում գաղտնի դարաններ լարելէն ընդդէմ նրա, և որպէս թէ զմօլլաներն քաջալերելու համար անարի շահը միջնորդութեամբ իւր Ասպահանցի տիկնոջ, առաքում է Ասպահանի խան-ջուանին և խոտվայոգ սէիդ-Ասպօլլայ գենպլետին առանց գիտութեան սրփահաղարի խիլաթներ, վանտարդ և սրփահաղարը 1852 ամի սկզբներում ինքնգինքը հիւանդ ձևացնելով հրաժէշտ է տալիս և գալիս Թէհրան։

Յիշեալ ամի կիսում ես ծանօթացայ սրփահաղարի հետ։ Նա բարձրահասակ էր և բարեկազմ. նրա սէգ, ճերմակ, պարզ և գեղեցիկ դէմքի գծագրութիւնը մտանում էին նրան, որ պարսկին սերունդ չէ։ Նրա երկար, բայց ոչ չատ բարձր, սև սաթի նման մօրուքը, ոզոք և ուշիմ, մարդավարի և հանգիստ շարժուձիութիւնը ամենապարզ Պարսկաստանի հին սովորութիւնը ու ծէսով հագուստը, պալատական բարքառով գրուցատրութիւնն ապացուցանում էին, որ նա արքունիքի մէջ է սնուած և մեծուն որ է։ Նրա դէմքի վերայ չէր նշմարվում որ նա այնքան երկար տարիներ ի զուր տեղը վիրա ու տառապանք էր կրած, ինքն էլ ուշութեամբ էր երկրորդում իւր կրած նեղութիւնները և ասում էր թէ, երբ մտքս եմ բերում կրած անցեալ վշտերս, այն օրը չատ անհանգիստ եմ լինում, և մինչև այն ամենը մոռացութեան չեմ տալիս, սիրտս չէ հանգարտվում։ Նրա պալատն արդարև հոյակապ էր, անհաւանների գա-

---

ի Պարսից վերափոխութիւնն առ ինքն, յորում հրամայէ ի մահ մատնել զԻրդալ-Աբդալ-Հասէն պարագուխ ապստամբաց և որիշոյց քաղաքին.... Եւ Նոյնհետայն խեղդամահ լինի... Ծառայքն զնոն զրի նորա ի գաւակ փաթաթի իշոյ և տարեալ անարգաբար արկանեն զայն ի մեծ հրապարակն։

[1]) «Աշխարհ Պարսից ի ծայր ոգոյն խաղաղութիւն վայելէ արդ... Ճանապարհքն յամէն տեղեաց կուսէ ապահովք են ի վառգիցդ...»։ Ընդ. 15 Հոկտեմբեր, թիւ 58։

[2]) Ընդ «Նասրէդդին-շահ գաւով իւրք առ ինքն ի Թէհրան հրաւիրէ զԱբդալա խան զհին աւուրց ապստամբէ խաղաղութեան Ասպահանայ. Որոյ ի հասանելն ի մայրաքաղաք անարդ հրամայէ խեղդն ձերբակալ առնել և ապառնել.... Զաւանաւորն և քաղաքացիքն Ասպահանայ զնման գլուխ անառակացն Ղասգուլլայ-խան և անդ առ տեղեաւն սասակն գնան։

սաւորութիւնները, նոցա մէջի փառաւեղ և յստակ կամ կարապէքը, մաքուր հագուած սպասաւորների, մարդավարութեամբ հիւրերը ընդունելը, թէյ, սուրճ, խոռխոռակ, ընթրիք մատուցանելը, յայտնի ցոյց էին տալիս ասպնջականիս մեծութի լինելը։

Երբ նա արքունիք կերթար նրա տակի արարի կամ թուրքմանի նժոյգը, համակ ոսկեկուռ և ակնակալ սարերի արժէքը, չատերը հաստատում էին թէ, երեսուն հազար թուման։ աւելի կարժէին։ Երբ նա չուկայից անց կենար, պատած մերձ չիտուն հետևակ ծառաներից, չէր կարելի որ, մէկ արտեստաւոր կամ վաճառական, թէև իր խանութիւնը նրատած լինէր, ոտի վերայ չկանգնէր և սրփահդարին գլուխ չիջեցնէր և ողջոյն (սալամ) չտար, վերջինս էլ ըստրոմին նրանց մէջտ ձայնով ալէքումը սալամը կվերադարձնէր։ Երբ սրփահդարը կը մտնէր սադրաղէմի դիւանխանէն, բոլոր բազմականները նորա համար ոտքի կկանգնէին։ իսկ սադրաղէմն տեղիցը կելուստ կրարձրանար, և սրփահդարն առանց տան տերոջ տեղ ցոյց տալու, բարձր ձայնով սալամ կտար ու կերթար վերջնոյս քովը կրազմէր։

Մէկ օր երեկոյեան պատուն գնացի սրփահդարի պալատը որպէս այգելութիւն։ թէյ, սուրճ խմելից և խոռխոռակ ծրխելից յետոյ, երբ ուզեցի գնալ, նա ստիպեց ինձ մնալ անդ և ընթրել նրա հետ և յետոյ գնալ։ Եւ որովհետև մեզանից զատ ուրիշ մարդ չկար, ուստի և մեր զրուցատրութեան առարկաները չատ փոփոխուեցան, ի վերջոյ, ինչիր ծագեց կրօնի վրայ, այսինքն, ես վարպետութեամբ այս խնդիրն առաջ բերի, որպէս զի նրանից նրա ծնողների վերայ ինչ ինչ ծանօթութիւններ ժողովեմ։ Նա նախ կմկմաց, չէր կամենում այս մասին խօսիլ, կարծեմ իւր սպասաւորներից էր քաշվում, բայց երբ մեզմ ձայնով կանչեց ծառաներ, և նոցանից պատասխան չտացաւ, այն ժամանակ յուշիկ յուշիկ ասաց թէ «մայրս աւելի պինտ Հայ էր (Պարսկաստան փոքրանակ քրիստոնեայ ասելու, Հայ բառը կգործածեն) նա ինձ հայերէն բառեր, աղօթքներ կսովորցնէր, երեսիս խաչակնքել կսովորէր, անմիջապէս կասստէր, որ ոչ օրի չյայտնեմ, չասեմ։ Մէկ աղօթք անգիր անել տուեց, որ սկսվում էր «Հայր մեր» և նրա հետևեալը մոռացել եմ։ Մայրս տարին երկու անգամ մէկ մէկ չաբաթ ծոմ (օրուջ) կպահէր։ նա կասիլէր որ հայրս էլ մէկ չաբաթ ծոմ (օրուջ) կպահէր։ բայց հայրս չէր պահում։ այս բաներ նրան նման օրուջ պահէր։ բայց հայրս չէր պահում։ այս բաներ նրան նման օրուջ պահէր։ նրան նախ ձու կուտէին մտիս է որ օրուջի օրը ընթրելիս նրան նախ ձու կուտէին և ապա կընթրէին։ Մանուչարխանի մայր Ոսկում խանումը

կյանախէր մեր տունն, երբեմն երբեմն կարտաքսէին մուտքման ազախիններեր և ինձ էլ սենեակից, նրանք կը մնային միայնակ, ինչ կանէին հոն, չմացայ, թերևս կաղոթէին։ Մէկ անգամ Ռակում խանումը մէկ բոլորակ սպիտակ ալիւրից թխած հացի կտոր բերաւ, կէսն ինձ տուեց և միւս կէսը մօրս՝ որ երեսը խաչակնքեց կերաւ։ իսկ ես առանց խաչակնքելու կերայ, և մինչև ցայսօր էլ չգիտեմ ինչ հաց էր այն։ Այրս ինձ երբէ բ կուլամ-Հիւսէյն չէր անուանում, այլ միշտ կարդ—ինչի,—չմացայ, և հանգուցեալն էլ պատճառը չատաց ինձ, թէեւ մայրս շուտ չէր վախճանվել, ի հարկէ նա այս ամենը կը բացատրէր ինձ։ Հա, ասեցրեց թէ, մայրս տարին մէկ նշանակեալ օր, մէկ քանի ոսկեդրամ շորի մէջ կկարէր, քաշ կտար պարանոցիցս, երբ տարին կը լրանար՝ կհանէր և նրանց տեղը ուրիշ ոսկիք կկարէր շորի մէջ, էլի քաշ կանէր պարանոցիցս, երբ Ռակում խանումի ազախինը կգար, անցեալ տարուայ ոսկիքը կտար, ես կկարծէի թէ, նրան է պարգևում, բայց երբ փոքր ինչ խելքի եկայ, իմացայ, որ ազախինը տանում է օր քաշիկ ազքատներին։ Կուլամ-Հիւսէյն-խան սրտանդարն հազիւ թէ տասնչափ հայերէն բառեր մորին պանել էր։

Դա Ապպասանից վերադառնալէն յետոյ հետամուտ չէր լինում պաշտօնի, և եթէ Աուլթանպատից թէհրան կգար, այն էլ ես կալուածների վէճերի համար կլինէր։ Դա մնում է 1875-ին, թողնում է մէկ աղջիկ, և երկու մանչ, որոց մեծը Խանուֆ-խան՝ փաղաքշաբար Աղա-տղղար կանուանէին, իսկ կրտսերը՝ Հասան-խան։

Լ.Ա.

ՄԻՐԶԱՅ-ԴՈՒՐԻԷՆ-ԽԱՆ ԷՆԻԿՕԼՕՓԵԱՆՑ ԿՈՒԼԱՄ ՓԻՇԽԴՄԼԻԹ-ԽԱՍԼ։

Թէպէտ՝ միրզայ-Դաւրդէն-խանի կեանքը չունի այնքան փայլ, որ ուշադրութեան արժանի լինէր, բայց բաղդի հնարքով, նա ծնած լինելով երևելի ազգատոհմից, մանուանդ նրա մեծ եղբայր Աղսամոն-խան Արհամ-Դաւդ-Օվլի և հօրեղբայր Մանուչար-խան Մօհթէ Միդ-Ուդ-Դովլէի, խիստ պետական անձնաւորութիւններից հնարելը՝ ոչ միայն երևելի

անձինք պատվում նրան, այլև նա ընդունված էր արքունիքում և վսեմ պաշտոն ևս ունէր։ Այնուամենայնիվ նրա համար նախ նրա անունը մնաց ևս դասընկեր երեսփի հայերի չարքում, և երկրորդ՝ հարկաւոր համարեցինք ցոյց տալ մեր ընթերցողներին այն ժամանակուայ ինչ ինչ մարդիկներ, որոնք թագաւորում էին Իրանի մեծամեծների մէջ։

Արդէն նորա հայր Միրզայ-Իսմայիլ և մոր մայր Սալտանի կենսագրութիւնների մէջ յիշած ենք թէ, նրա ծնողները նուիրված էին Գուրգէնը կրթնաւորութիւնս, և թէ նա ինքն Թիֆլիս գալէն յետոյ, վերադարձաւ Թաւրիզ, տանելով հետը իւր եղբայր Սալտանը, ուրեմն այստեղ կրկնելն ուղղորդ է։

Ոչ թէ քանի տարեկանի է կենսագիր լինել մէկ մարդոյ, այլ գոլով երեսփի գերդաստանի ծնունդ, որի անդամներն ամենայն ուրեք իւրանց բարձր յատկութիւններով գերազանցվում են և՝ փառաւորապէս հանդիսանում։ Իսկ նա որպէս Գուրգէնն, իւր կենաց մէջ մի գործ չէ կատարած, որն արժանի լինէր իւր ազգատոհմին անդամ կոչուելուն։

1852—1853 թուերին մինչ ևս թէհրան էր, նա յաճախ կը տրաւիրէր ինձ իւր տուն, և չատ անգամ էլ մարդ կղրկէր որ ստիպմամբ տանէին ինձ, բայց ես ասկա կյամախէի նրա մօտ, և եթէ գնայի, միշտ տհաճութեամբ և դժկամակութեամբ, քանզի անտանելի էին նրա վատաբակաց կեանքը, նողկալի էր ինձ նրա զզուելի զրոյցները, որոնք անվայել էին նրա հասակին, կոչմանը, ազգատոհմի հանրաբին և նրա եղբայր Սալտանի-խանի։ Վերջին բարի անուանը, որ պատկանելի էր պարսկերենին անդամ Միրզայ-Գուրգէնը ինձ փեսայ կանուանէր, քանզի նրա մայր Մաֆեն և իմ անեղբօր Կարապետ Զօնբարեանի մայր Եղիսաբեթ հարազատ քոյրեր էին։ Ուզղչանց գերդաստանից սերուած։

Գուրգէնը հասակով պարեկ, բարեկազմ, քաջառողջ էր, թէև վախճան ամ հասակ ունէր, բայց առոյգ էր և աշխոյժ ինչպէս երիտասարդ։ Նրա գեղեցիկ դէմքը վարուցուիրմեն ու մարգավարութիւնը համակրոյ էին, որքան նա լրիկ-ունչիկ բարձրահասակ էր։ Նրա լայն, երկար, միմիայն հինայով կարմիր գոյներանգած մորուքը ընծայում էր նրա թարմ և պայծառ դէմքին մէկ պատկանելի գեղարուեստ, բայց—բայց, այն ինչ դէմքին մէկ պատկանելի գեղարուեստ, բայց—բայց, այն ինչ դէմքին մէկ պատկանելի գեղարուեստ էր խօսել, նրա գեղեցիկ խելոքատակարութիւնների մրգաբուներ, խնամի ու խելաց ծերեկ բուներով անպարկեշտ խօսակցութիւնները, որոնց նրա մեծի մասին վերաբերում էին զգայական հեշտութիւնների, խմելու երևում էր նրա վայրաշաչ և թեթեամիտ անպարոյականութիւնը։

Ամենայն գիշեր նրա պալատում անպակաս կլինէին հացկատակ, գինեխում, ծայրայեղ, թուղթ խաղացողներ, գատարկապորտ պալատականներ և անկրօն մօլլաներ։

Նա իւր տան մէջ պահում է պարթև երգեցող և երաժիշտ նուագախումբ գուսաններ և մանկամարդիկ, որոնք արդարև, խիստ ախորժելի համբոյր էին յօրինում, եթէ բարոյական լինէր նրանց հանդէսը։ Նա մէկ առանձին սենեակ էր նուիրած սրնգի, թմբկի, բօժոնների, դափի, փողի, սազի, սանթուրի, թառի, ջութակի և այլ հարուածաւոր զանազան երաժշտական գործիքների։

Քրդները երբ կվառուէին երաժիշտների և նուագածուների կէս խումբը կգար կրազմէր այն դահլիճում, ուր անկոչ հիւրեր տակաւ առ տակաւ կհամախմբէին, և կըսկսէին մէկ կողմից երգել և հնչեցուցանել նուագարաններ, և միւս կողմից հերթով թէյ, գինի, օղի, ռօմ և այլ խմիչքներ մատակարարել հիւրերին, որոնցից ոմանք թուղթ կխաղային, ոմանք նարդի, ոմանք միայն օղի կամ գինի կը խմէին, կը գրուցէին և ունկնդիր կլինէին նուագածուներին և երգեցողներին, ու կը խրախուսէին ծայրաստեղ ծափահարութեամբ մաչալլահ, բէրէքալլահ և այլ ներբողական բառեր ազազակելով։ Երկուսուկէս կամ երեք ժամ երեկոյից անցած, դուրս կգար միւս նուագածուների և երգեցողների խումբը, հինները կամ կերթային կամ կը մնային անդէն և այնուհետև կկազմուէր մէկ բարիբնական խառնափնթոր հանդէս։ Հիւրերը ծափահարութեամբ խենչ և խեղկատակ շարժումներով և ատամտեղով կամ կաքաւանով տատանուելով մէկ մէկի հետ կխառնուէին և ձէն ձէնի տալով կերգէին և կկազմէին մէկ տարտարական հնչիւն, որին միայն—մրմիայն արբեալ մարդը կարող էր տակալ և անզգայօրէն ապրութեամբ հանդիսատես լինելի։ Մնալէս կասեն, այնուհետև չանը տիրոջը չէր ճանաչում, կամ լաւ ևս ասած՝ չանչեմնոց էր։

Այդ հարուստ ժամանակամիջոցում, այսինքն՝ գրեթէ երեկոյից սկսած մինչև կէս գիշեր, կամ և ևս աւելի, մանկամարդ սպասաւորները հետզհետէ մատակարարում էին հիւրերին խոնախոնակ, լիմնով և ազով բռված նուշ, պիստակ, ձմերուկի, սեխի, գդումի սերմեր, այսինքն կորիզներ, քէջիթ, կանեփ, սիսեռ և ուրիշ տեսակ տեսակ խմիչքի չարաչներ, սխտոցած մածուն, որի համար պարսիկները մոլեալ են, և դուն ուրեք թռչունների խորոված, կամ տապակած թարմ ձկնեղէն։ Ցան տիրոջ մատակարարն (նազիր) երբ կը նշմարէր, որ բոլոր հանդիսականները կամ նրանց մեծ մասը կատարեալ

արված էին, կնիքայանաբ, բարձր ձայնով կարդալ թէ ընթրիքը պատարաստ է (որ լինում էր կից սենեակում), Պէտք է ասէք տեսած թէ այդ խնդրանքով և անզգայ խումբն ինչպէս էր գազիմում, կամ լաւ ևս ասած, այնտեղից տեղափոխվում ընթրիքի սենեակը, Այդ կէսն ամենից աւելի քաջամիտն էր։ Հիւրերից ոմանք երբեմն գլխով, տատանեալ մարմնով, քայլամերտ, ոմանք ճօճուելով, որոշվելով, իրենց զոզոջուն անզօր ձեռներով պատերը բռնելով աշխատում էին գնալ գտնել ընթրիքի սենեակը, ոմանք չկարողանալով տեղից շարժել, վանորոյ սպասաւորները մտնում էին նրանց կռներն տակը, հասցնում էին սեղանի քովը (սուփրի) և որպէս թէ նրանց բաղադրում էին, և ոմանք էլ չկարողանալով իրենց գլխի հաւասարակշռութիւնը պահպանել, տեղն ու տեղն արդէն պառկած մրափել էին, վանորոյ և մնում էին անընթրիք։

Այժմ ասենք նոցա համար, որոնք արդէն հասած էին ընթրիքի սենեակը, և գինդ և իրդ բաղմած էին սեղանի քովը։ Կտեսնես մէկը զոզոջուն աջի բռնով փլաւ է վեր առնում փոխանակ հասցնելու բերանը։ Կէսը ճանապարհին բռնիցն թափուեց և ցրուեցաւ մօտերի կամ կուրծքի վերայ, և կամ չատ սակաւ կարողացաւ հասցնել բերանը, և կամ ձեռք փլաւով փոխանակ տանելու բերանը, տանում է ականջի մօտ, որովհետև գլուխը դրմդրմում է, տատանվում է, չէ հնազանդում նրա ձեռքին։ Միւսն ընթրիքի մօտ հասած, չկարողանալով ուղիղ նստել, մէկ էլ տեսաք, գլուխը երեսաց երեսաց, ծանրացաւ և ընկաւ գոգի վերայ, կամ նոյն իսկ սեղանի վերայ, և անկարող գոլով բարձրացնել գլուխը, տեղն ու տեղը խրընթմխալով ընկաւ։ Լինում էր որ ոմանք կիսատ մրսատ մէկ քանի բուռն փլաւ ուտելէն յետոյ, յանկարծ անդէն փսխում էին։ Որա համար էր որ իւրաքանչիւր հիւրի ծառաներից մէմիսին մէկը ներկայ էր գտնվում գաւիթի դրան նստատեղեակում, ինչպէս յետոյ ասելու ենք, որպէս զի հանէ իւր տիրոջ վերայ, և նրան մտնէ, մաքրվ նրա փսխածը և այլն։

Ինչ մարդ որ խմիչքի հանդէսներ (մէջլիս) պիտի ունենար, նա էլ իւր տունը նրան յարմարացրել էր չինուհեան ժամանակ, այսինքն կառուցել էր երեք մասն կամ բաժին։ Առաջինն էր ցորեկը կամ գիշերը այնպիսի հիւրեր ընդունելու համար, որոնք խմողներ կամ թմբուկի խաղացողներ չէին։ Այդ բաժինն ունէր մէկ ընդարձակ գաւիթ, սենեակներ և սխտաս։ Երկրորդ բաժինում կային մէկ քանի սենեակներ և մէկ գաւիթ, ուր սապնչականն ընդունում էր գինեխում հիւ-

բերը և երգեցող, պարեցող մանկամարդիկ։ Երրորդ մասնաբաժինն էր կանանցը։ Ի հարկէ այդ երեք բաժինները յարաբերութիւն ունին միմեանց հետ խորհրդական գաղերով։ Երկրորդ մասնաբաժինը ներս գնալու իրաւունք ունի իւրաքանչիւր հիւրի միմիայն մէկ ծառան, որպէս զի երբ նրա տէրը ջուր, խոսխոսակ և այլն ուզէ՝ նա հայթհայթէ։ Այդ ծառան երբ տեսնում է իւր տէրը կարողութիւն չունի գնալ ընթրելու, նրա գլխի տակին բարձ է գնում, պառկացնում մէկ բան ծրդում նրա վերայ, որ քնած ժամանակը չմրսի։ Եւ եթէ ուզում է նա գնալ իւր բնակարանն առանց ընթրիքի կամ ընթրիքից յետոյ, բայց չէ կարողանում քայլել, այն ժամանակը ծառան օգնում է նրան հասցնել առաջնորդող գաղիին, ուր է սիրուն, և այնտեղ միւս ծառայակիցների հետ հեծցնում են երիվարի վերայ և հասցնում են նրա բնակարանը։ Պատահում է, որ այդ ներսի ծառաներն ևս օգնում են մէկ մէկին, եթէ մէնի տէրն հանապազամ և վիթխարի է մարմնով, նրա մէկ, երկու սպասաւորները չեն կարողանում զարել կամ համբառնալ հեծցնել և կամ քաշքշելու լինում էին և այնպիսի, որոնք ոչ երիվար և ոչ ծառայ ունին, և երկիւղ կրելով որ արբած կլինեն ոստիկանութեան ձեռքը ու կալանուն, վանողոյ անդէն քնում են, և ասն տէրը նրանց անկողնիներ է հայթհայթում։ սորա համար, որոնք գինեխում հիւրեր կանենան, արբածների համար 10—15 ձեռք անկողիններ են պահում ասանը երկրորդ բաժնում։ Լինում են և այնպիսի հիւրեր, որոնք գզուշութեամբ են խմում և չեն էլ արբենում, մանաւանդ նրանք, որոնք թուրքի են խաղում, և կամ թէ եկած են փոքր փոքր խմելով ժամանակ անցկացնեն։ և կամ թէ խաղացողները, խաղը վերջացնելէն յետոյ, կամ ընթրիքը վերջացնելից յետոյ են խմում։ Մեր առարկայ մերզայ-Գուրգէնը երբէք չէր արբենար, որովհետև նրա վայելչութիւնը թոգրի խաղալում էր։ Այսպիսի անհեթեթ հանդէսներին պատահեցայ յաճախ անգամ շատ երեսելի պարսիկների աներում, ուր որ մերզայ-Գուրգէնը ներկայ չէր լինում։ Ինձ այս էր զարմացնում, որ այդ մարդիկը հետևակայ օրն առաւօտեան շատ կանուխ գնում էին դատարաններ կամ դիւանատուններ, ուր որ ծառայում էին, մինչև արքունիքն անգամ, և պարապում էին գրագրութեամբ և թղթակցութեամբ։ Մէկ քանի գիւնօրական կամ քաղաքական պաշտօնատարներ ևս տեսի, որոնք նախընթաց գիշերն արբած էին, և լուսածագին գարձեալ գնում էին զրաբ մարդելու կամ դիւանատուն։ Եւ գիւտութեամբ հարցրի նոցանից թէ՝ մինչ երեկոյայ խմելից նրանց գլուխը չէ ցա-

լում, կամ չեն արդեօք զգում անձնական թուլութիւն, խուսաբութիւն կամ սկարութիւն, Նրա պատասխանում էին թէ՝ մինթէ զուտ քրիստոնեայդ այդպէս տկար կազմուածք ունիք. մենք հետեւեալ օրը զգանք օր և իցէ ցաւ, մինթէ յիմար ենք որ կրկին անգամ խմիչք գործածենք. մինչդեռ գիտենք, որ ընդ հակառակն երբ չենք խմում, զգում ենք թուլութիւն, սկարութիւն, գլխացաւութիւն և խուսաբութիւն միայն.

Այստեղ մէկ անգամ պատմենք, որը պատահեց է այդպիսի հանդէսներու. Մէկ գիշեր մերզայ-Դուրգէնի տանը մօտ տասը երեւելի մարդիկ հիւրեր են լինում. Առաջ երբ արբենում են, սկսում են հակառաքիլ մօլլաների վարքի, բարքի և քաղաքրտութեան վերայ. Ի վերջոյ խաներից մէկն Ամէտ-խան անունով, մօլլաները վեհերոտներ և կնամարդիկ է անուանում. Մէկ մօլլայ, որ ներկայ է լինում պաչտպանելով իւր կարգակիցները, կցում է թէ՝ մենք մօլլաներս ձեզ վերայ աւելի քաղաքրտ և անվեհեր ենք, բայց մեր կոչումն ստիպում է մեզ երկչոտ ձեւանալ. Ամէտն իւր գտակում ցցած դաշոյնը (բէշրուդ) պատենից հանում կառկառում մօլլային և ասում է թէ՝ եթէ արդարև դու ես սոյն քաղաքրտներիցն ես, ահա դաշոյնս, առ, եթէ կարող ես, զարկէ, սպանէ ինձ, և ես այս պատուելի հանդիսականների վկայութեամբ արիւնս հալալ եմ անում քեզ. Մօլլան տաղ արած տեղից բարձրանում է, մօտենում նրան, նրա ձեռից առնում է դաշոյնը, ոչ դէս՝ ոչ դէն, լիբուռն դեշտակի ցցում է նրա սրտի մէջն, որ և իսկոյն փչում է հոգին։ Այդ անակնկալ և տարաղէպ անցքի համար՝ բոմբակակիցներն օրքան և մոլի ունակութեամբ խանգարուած ու ապականուած անձինք էին, այսուամենայնիւ ի զայր և ի զարհուր ապագայ վտանգի, տեսնելով որ բանը բուրթ եղաւ, սթափվում են արբեցութիւնից, և սկսում են խորհիլ թէ՝ ինչ եղանակաւ վարպուրեն այդ տխուր դէպքը. Ի վերջոյ նրանք կաշառում են ծառաները, որպէս զի փաթաթեն դիակը մէկ կարպետի մէջ, տանեն ձգեն սպանուած խանի տան դրան առջեւը փողոցի մէջ, և լուր տարածեն թէ, իբր խանը գիշերը տուն դառնալու ժամանակ նրա թշնամիները սպանել են նրան։ Հետեւեալ առաւօտն էլ այսպէս լուր է տարածվում քաղաքի մէջ, բայց ըստ որում սպանվողն երեւելի գերդաստանից էր, երեւելի ազգականներ և երեւելի եղբայրներ ունէր, վատնորոյ նոքա ստիպում են ստիպանութիւնը՝ հետազօտելով վերնոյ այդ անցքին։ Ստիպանութիւնը լուսեւոյն հետազօտելով մեռնում է վիրաներից, որոնք իրանց աչքովն տեսած էին՝ ասն օրը Ամէտ-խանը ծրագրաւորեցին իւր ծառաներով մըտ-

նելիս միրզայ-Գուրգէն-խանի տունը. ուստի ասելիանը բանտարկում չարչարում է և խոշտանգում սպանուածի ծառաները, որոնք և յայտնում են իսկական անցքը։ Շահը հրամայում է որոնել, գտնել մօլլան և կապել թնդանօթի բերանում և ձգել։ Իսկ եթէ մօլլան չգտնուի մինչև երեք օր, այն ժամանակ գլխատեն Գուրգէն-խանը։ Սա նախազգուշութեամբ իւր տանը թագցրած կամ բանտարկած է լինում մօլլան, և երբ լսում է շահի վճիռը, իսկոյն աւանդում է մօլլան ասելիանութեան, որով և նոցն օրը կատարվում է շահի հրամանը։

Մօլլաները տեսնելով իրանց կարգակցի խստութեամբ պատժվելն ու սկզբնապատճառ Գուրգէն-խանի անպատիժ մընալը, սկսում են քրթմնջել և հրապարակաւ իւրեանց անբաւականութիւնը յայտնել, վասնորոյ շահն էլ հրամայում է գլխատել Գուրգէնը։ Երբ Մանուչար-խանի մայր Ոսկում խանումը լսում է շահի հրամանը, շտապ տաղնապով գնում է շահի կանանոցը և միջնորդութեամբ շահի առաջին տիկնոջ ընկնում է Ցիներքի Ազօթարանի ոտները, կողկողալով ասելով, պաղատում որ շահը փոխէ իւր վճիռն ի պատիւ նրա հայր միրզայ-Ռօստոմի, նրա հօրեղբօր և եղբօր հաւատարմութեամբ ծառայութիւններին։ Շահը զլխանում է Ոսկումի խնդիրքին, և յանձնում է Գուրգէնի պատիժը Մանուչար-խանին, որի համար այդպիսի յանձնարարութիւնը կարի անախորժելի էր, քանզի քաջ գիտէր որ՝ ինչպէս և սատկութեամբ նա պատժէր իւր եղբօրորդին, դարձեալ մօլլաները իրանց կոչտ ու կոռիւտ բնաւորութեամբ պիտի մրթմրթային և մռմռային, վասնորոյ նա, Մանուչարը հրաւիրում է իւր տանը երեսնի մօլլաներից, նրանց հետ խօսում, խորհում, ի վերջոյ միաբերան վճռում են որ՝ Գուրգէնի ոտները փայտեկայի մէջ դնեն, այնքան դալար ճիպոտներով զարկեն որ նա հնչասպառ լինի։ Շահն էլ այդ վճռին համաձայնում է։ Առած է որ նեղքիմներն անզգայ և դժնեայ սիրտ և խղճմտանք կոչենան։ Այս անգամ Մանուչարն արդարացրեց հանրակաց ասածը։

Մանուչարը՝ զինքը բամբասանքից ազատելու համար, բերել է տալիս շահի դահիճները այդ գործողութիւնը կատարելու համար։ Վերջիններն այնքան զարկում են Գուրգէնի ոտներին, որ նա թէև հնչասպառ է լինում, բայց կենդանութեան նշան է նշմարվում նրա մէջ։ Մօլլաներն առաջարկում են որ քառորդ ժամ ևս սպասեն, ցուրտ ջուր սրսկեն նրա ոտների վերայ և երկրորդն գործողութիւնը։ Այդ ժամանակամէջոցում շահը լսած է լինում Գուրգէնի գոռում գոչումը, քանզի արքունիքին մօտ էր Մանուչարի պալատը (մէկ

անձուկ փողոցով էին նրանք մթնանցից անցնում, ինչպէս և Խորով), ուր և տապալով գնում է Ոսկում խանումը, Խորովը հետ միասին արքունիքը, երկին երկին ազաչում, պաղատում են չարին, որ և յամառուած մնրմում է նրանց բարեխօսութիւնը։ Մինչ այս մինչ այն, սկսում է երկրորդ գործողութիւնը, երբ Նրանք պաղատում էին չարին, յանկարծ Գուրգէնի ազազակի ձայնը հասնում է չարին, ինչպէս և ճիպոտների սատակութեամբ զարկելոյ չրխչրխկոցը, և երբ կորմում է Գուրգէնի ձայնը։ Ոսկումը լալով գնտնատարած է լինում չարի առջեւը և ասում «Աղօթարան աշխարհի, մեռաւ Գուրգէնը և էլ ձայնը չէ հանում, ուրեմն ասենք թէ մեռաւ. բայց եթէ այս անցքը Գրատանում կամ ուր և իցէ լսեն, թէ Մանուչարը ազատեց իւր եղբօրարդին իւր տանը, անպատճառ կարծելու են թէ՝ Մանուչարը այնքան ատում է լինում իւր եղբօրարդին, որ չէ կարողացել ազատել նրան, կամ թէ նա երես չէ ունեցել չարի մօտ, աշխարհի Աղօթարանի առջեւը, որ բարեխօսել էր և ազատել էր նրան, և կամ թէ, մինթէ այնպան ինչիկոլոգիական մտերմութեամբ ծառայելը մէկ Գուրգէնի արժանաւորութիւն չունէր։ Այդ ժամանակը չարը կարեկցելով պատասխանում է թէ «Բանի մայր, երեկուայ և այսօրուայ քո արտասուքն ու պաղատանքը ինձ վերայ այնպան չազդեցին, որքան այժմ քո բերած պատճառները։ Մանաւոր և անմիջապէս մարդ է ուզարկում գաղրացնել ծեր և ներել Գուրգէնը անամօթ անապարժութեամբ այդ անցքը պատմելիս, խոստովանում էր թէ՝ վերջին ծեր չէր ղրում, որովհետև նրա սուները թմրել էին։

Անմիջապէս Խորով-խանը տանել է տալիս Գուրգէնը իւր պալատը, բերել է տալիս չարի անձնական բժկապետ Ֆրանսիացի Մարտինիկոն, որ զանազան հուսալա գեղերով մէկ քանի ժամում հաղիւ կարողանում է նրա շնչառութիւնը և միտքը յետ բերել։ Գուրգէնի սուների մասերի կէսն ու եղունգները թափում են, ասում էին, սրունքների վէրքերից արիւն էր շրջում, և բժկապետը հաղիւ թէ վեց ամսում կարողանում է նրան բժկելի, թէ և երեսուն տարի անցած, երբ կարողանում է նրան բժկելի, թէ և երեսուն տարի անցած, երբ ես տեսի նրան, նա դարձեալ չէր կարողանում ուղիղ քայլել և ընթանալ հետևակ, դուն ուրեք հարիւր քայլ առանց շընչառապա լինելոյ, վանաորոյ մէջտ մի հեծած կը շրջէր։

Այդ անցքից յետոյ Մանուչար-խանն առաքում է Դաշտ Մրդայ-Գուրգէն-խանը իւր տեղապահի պաշտօնով, բայց նա Մրդայ-Գուրգէն-խանը իւր տեղապահի պաշտօնով, բայց նա իւր անխոնջ վարդապետութեամբ գրգռում է ժողովուրդն ընդդէմ ինքեանց, որոնց բազաքը հասնում է թէՀրան, իսկ յետոյ դէմ ինքեանց, որոնց բազաքը հասնում է թէՀրան։

այն ինչ Մանուչարը նշանակում է մարզպան Ասպահանի, երևակայելով թէ, թերևս Գուրգէնը այժմ խրատուած լինի և խոնեմացած, վասնորոյ հետը տանում է Ասպահան, ուր մէկ քանի պաշտօններ է յանձնում նրան. բայց նա, Գուրգէնը իւր վատ յատկութիւններից ձեռք չէ վեր առնում. ուստի և Մանուչարը պարտաւորվում է վերադարձնել Թէֆրան, որպէս զի իւր թղթակցութիւններն ստանայ, աւանդէ Բարձր Դարձը կամ նախարարներին, և նոցանից պատասխաններ ստանայ, առաքէ ինքեան, նոյնպէս հեռուանց վերահասու լինի Դաշտ իւր ունեցած կալուածների վերակացուների գործերին.

Իմ տեսած հայ գերիների և փախստականների մէջ բացի Գուրգէնից չտեսայ մէկը, որ Հայոց եկեղեցական ազօթքներին և երգերին կատարեալ տեղեակ լինէր կամ մոռացած չլինէր. Նա ասում էր, հայերէն սովորել էր Թիֆլիս Երևանցի ազգ քահանայ Սուրբ Նշան եկեղեցւոյ Տէր Յովհաննէս Կուկուջանեանից. Նա անգիր և անսխալ ասում էր եկեղեցական բոլոր ժամերգութիւնները, ինչպէս և չարականներից չտուրը, և մինչև անգամ մէկ քանի զլուխ Նարեկից ևս, շատ էլ ախորժ ձայն ունէր. Մէկ օր հարց առաջարկեցի Նրան թէ, խան, ինչը ստիպեց քեզ հաւատափոխ լինել։ Նա պատասխանեց թէ՝ բազմանուիրիւնը հրապուրեց զիս։ Կրկնեցի.՝մինչև ցայսօր ոչդան կին ես ունեցել։ Նա ասաց թէ՝ երեսուն և՝երկու՝կնկայ ազատարդան եմ տուած, և այժմ միայն մեցն ունիմ, որոնցից երեք կենդանի արու զաւակներ ունիմ և չորս դուստրներ։

Միրզայ-Գուրգէն-խանի արտասուքին իւր եղբօր Սօլօմոնխանի թաղման օրն եկեղեցում պատարագի ժամանակ, գրած ենք վերջնոյս կենսագրութեան մէջ, և ասելն մանրամասն աւելորդ է.

Մանուչար-խանը Ասպահան վախճանուելիս՝ միրզայ-Գուրգէն-խանին այնտեղ է լինում Իշխան Դաւիթ Մելիքեանցն, որ Մանուչարի քրոջ որդին էր և հանգուցեալի անտեսական կառավարչութիւնը նրա, Մելիքեանցի ձեռին էր, տեսնելով որ Սօլօմոն-խանը բացակայ է, և Իրանի սովորութեամբ արքունիքը Ասպահանի մարզպանութիւնը նրան ուզի դիւրութեամբ կաար, քան թէ ուրիշին. բայց այժմ Գուրգէնը անդ ներկայ լինելով, կարելի է ասել ևս նորէն չարը, վասնորոյ նա մեծամեծ բնծաներով առաքում է Թէֆրան Սօլօմոն-խանի որդի Նարիման-խանը բարեխօսել որ չարը նշանակէ զԳուրգէնը մարզպան կամ փոխ-մարզպան Ասպահանի։ Նարար-Իդրին-չարը ընդունում է Նարիման-խանի միջնորդութիւնը և նոյնում է մարզպանութիւնը միրզայ-Գուրգէն-խանին, առաքելով վերջ-

նոյս հրովարտակ և խիստ։ Բայց վերջինս իւր անչարմարութեամբ այն վախմ պատճառեցին, տեղիք է տալիս արքունիքին նրան փոխելոյ։ Այնուհետև Դաւիթին ու Դաւիթը գալիս են Թէհրան, սկսում են վիճել Մանուչար-խանից մնացած կայքի վերայ, չարաշահելով վէճը մօլլաների մօտ, առանց Պարսից տէրութեան միջամտութեանը [1]։

Մինչ այս մինչ այն, ժամանում է Թէհրան և Սալամն-խանը, որ ուելի յարգանք ունենալով արքունիքում, հրովարտակ և հրամանագիր է հանում բարձրագոյն դռնից, որ որպէս ժառանգ Մանուչար-խանի, նորա կալուածներն իւր եղբայր միրզայ-Դուրգէնի հետ տիրապետեն, որոնց վերայ դեռևս Դաւիթ-խան Մելիքեանցն էր իշխում, ինչպէս Մանուչար-խանի կենդանութիւնը։ Դաւիթ-խանը, որպէս Ռուսաց հպատակ, պարտաւորվում է դիմել Ռուսաց դեսպանատանը։ Դեսպանը մեծ դժուարի պարգև, կամ լաւ ևս ասած, կաշառք ստանալով Մելիքեանից ստիպում է բանախօսութեամբ արդեւաւոր լինել, որ Պարսից տէրութիւնը թոյլ չտայ Սալամն-խանին մնոյակ տիրել՝ այն կալուածներին, բայց երբ արքունիքը պատասխանում է թէ, Ռուսաց հպատակը համեմատ դաշնագրութեան չէ կարող ունենալ իրանում անչարժ կալուածք, որպէս և Մելիքեանցը, այն ժամանակը դեսպանն սկսում է խօսել պաշտօնական թղթակցութեամբ։ Պարսից տէրութիւնն որ մինչև այն ժամանակն այս անքաւ կալուածներին անտարբերութեամբ էր նայում, հիմի աչքը բացեց, խոնջացաւ, և ոչ Ընիկիօրեանցներին, և ոչ Մելիքեանցին թոյլ տուեց տիրել, այլ ինքը մարդիկ ուղարկեց բոլոր կալուածները խլելոյ և տիրեց, պատրաւակ բերելով թէ՝ դատը վէճի ընկած, արքունիքը նրանց արդիւնքը պիտի ժողովվ և պահպանէ, վերջն ով նոցանից իրաւունք կունենայ ժառանգելոյ, այն ժամանակը կարող է տաւնալ դանձարանից արդիւնքն ու կալուածները։

Այդ մէջտեղումն գրիչս հասաւ Թէհրան երկու կողմնակցութիւններն էլ զոլով ինձ վաղուայ բարեկամներ և ծանօթներ, մէկ քանի անգամ այցելելի նրանց, երբ և երկու կողմից էլ երկարօրէն պատմում էին ինձ այդ վէճի հանգամանքներն, ի վերջոյ համաձայնեցան որ իմ միջամտութեամբ հաշտուին։ Ես առաջարկեցի նրանց որ այդ պաշտօնը յանձնատուին։ Ես կարիք և կրաժանեմ այդ անքաւ հարստութիւնը համեմատ իմ խղճմտանքին, եթէ և նոքա ընդունեն որ ես գրեմ

[1] Տես «Ազգասէր Ընթերցողաց» օրագիր, Պալկանա, 1847 թ., 15 Մայ, երես 156, 3 Յունիսի, երես 264 և Հոկտեմբեր, երես 340.

վճռագիրն, և նոքա առանց այն կարդալոյ, նախ ստորագրեն և ապա կարդան։ Նոքա ընդունեցին այդ իմ առաջարկութիւնը, և ես վճռեցի, որ ամենայն ստանալիքը Մանուչարխանի թէ մուրտակով և թէ առանց մուրտակի Իրանում կամ թէ արտաքոյ Իրանի, լինին Դաւիթի Մելիքեանցին։ Իսկ անչարժ կալուածները լինին երկու եղբօրների սեփականութիւնը։ Այս բաժանմունքին համաձայնեցան, և պէտք էին ստորագրել, այն ինչ ոմանք՝ որոնք արդէն աչխատած էին և չէին կարողացել լրացնել, այս լուրն իմանալով, չար լեզուներ խառնեցին, դատաւորներն էլ ստորագրելը բաժանագրի վերայ, այսօր մաղը ձգելով, Սալամն-խանը վախճանեցաւ, զորքը դարձեալ մնաց կիսակատար, հետևեց խօլերայ ցաւը, չարը, արքունիքը, դատաւորները և ընակիչները ցրուեցան, և այն ինչ վերադարձան, Թուսաց և Ցաճկաց պատերազմին, որ Սեաստապոլի պատերազմն էր կոչվում, ծագեց, անուշնան Թուսաց դեսպանը փոխուեց, նոր դեսպան եկաւ, որ չուզեց խառնուիլ այս գործին։ Մեռան Դաւիթի-Մելիքեանցն ու մերզայ-Դաւրգնիանը, Պարսից տէրութիւնը մարսեց այնպան կալուածները, իսկ ստանալիքներն էլ բոլորը կորան։

ԼԲ.

ԻՍՈՒՓ-ԲԷԳ ԷՆԻԿՕԼՕՓԵԱՆՑ։

Սորա կենսագրութիւնից համարեա թէ ոչինչ չեմ կարող ասել, վասն զի վաղուց էր վախճանուած, և նրա որդիքն էլ անչափահաս էին մնացած. ուստի և չկարողացան հիմնաւոր պատմել ինձ որ և իցէ տեղեկութիւն իւրեանց հօր մասին, միայն, այսքան գիտէին որ Իսուփ-բէգն Ազալարխանի իմաստը Կուլամ լինելով՝ մշա անմնմնելի է եղած Նրանից։

Իսուփ-բէգը ծնած է Դարաբաղ, այնտեղ մնացած Լինիկօլօփեանց սերունդից, և այս դարի սկզբներում եկած է Պարսկաստան ու մնած է ծառայութիւն։ Դա ամուսնանում է Թավրիզ, որ ունենում է երկու արու զաւակ, Ասլան-խան և Բարայ-բէգ, և մէկ դուստր, որի մայրն էր այժմեան Իրանի դեսպան Դաղար-ադայի ամուսինը, որ հիմի գտնվում է Պարիս։

Ասլանն իւր ծառայութիւնների համար ստացաւ խանութեան տիտղոս, և եռավարի (մայոր) աստիճանը, Մարա-

զայի գունդի մէջ. իսկ Բաբայ-բէկը եավաբ էր Թնդանօթաձիգ զօրքի մէջ, որ ըստ վկայութեան Կաջարների պատմութեան, Չեանդան քաղաքը պաշարելիս Բաբի ասած ազատագրողների ժամանակ, Բաբայ-բէկը մեծամեծ քաջութիւններ էր արել։

ԼԳ.

ԱՍԼԻ-ԲԷԳ ԲԸՀԱԹՈՒՐԵԱՆՑ [1]).

Ասլի-բէկը Ղարաբաղցի էր և ծնած էր Ջրաբերդ ամրոցում կամ Մոխրաթաղ կամ Կասպատ գիւղում, ուստի և ամենք նրան Ջրաբերդցի, և այլք Կրնապատցի կոչում անէին։ Նրա պապերն ու հայրը, և ինքն Ասլին անմնաց մէջ, և քաջ զինուորական էին Ջրաբերդի մելիքներին, և երբ Գանձակի բերդը պաշարվում է, Մելիք-Մէջլումը, այսինքն Ջրաբերդի տիրապետողն սպանվում է, Ասլի-բէկը տեսնելով որ նրա որդի Մելիք-Ադամի պատանի և անփորձ լինելոյ համար նրա թշնամիները Ղարաբաղի Իբրահիմ-խալիլ-խանի արքանեակները կամենում են նրան, Ադամին, զրկեն մելիքութիւնից և կարգեն նրա տեղ մէկ ուրիշը, որ կատաւաբէ նրա տարաբերակալ ժողովուրդը, և վախենալով որ այնուհետև կը սպանեն զԱդամն ևս, և ապա չուտ կգան և նորա տարաբերակներն ևս կհալածեն, և կամ թէ ծածկաբար սպանել կասն. ուստի մէկ քանի պատանիների հետ խորհուրդ են տեսնում, թաղնում իւրեանց հայրենիքն ու ժառանգական կալուածները և տարագիր են գնում Հին-Նախիջևան, Ղարաբաղի Իբրահիմ-խալիլ-խանի սատրապ թշնամի Քեալբ-Ալի-խանի մօտ, որ և պատուով ընդունելով հրամայում է զրել նրանց ի թիւս Ջրգայիրլի ասած հետևակ զօրքին։ Բայց Ասլի-բէկն տեսում է թէ, մենք ըստ պատ սովորած ենք ձիաւոր զօրք լինել, վասնզոյ խնդ-

---

[1]) Ասլի բէկն ամուսնացած էր Հին-Նախիջևանցի Սարգիս-աղայի դստեր հետ, և Սարգիս-աղայի մեծ որդի Ղազարոսն ամուսնացած էր իմ մեծ քոյրս հետ։ Ասլի բէկին մանկի ազգական էին Հին Ջրաբերդցի Շուշի վերաբնակներ, Մանասեի Մխոյեան, Ղազար և Սարգիս Բրնձոնցներից հարազատ եղբայրները, որոնց թոռներից շատերը, ինչպէս լսել եմ, կենդանի են դեռևս ցայժմ։

գրում ենք հրամայես, որ մենք Հայերս, մէկ խումբ կազմենք, և միչա հետեւակ կամ ձիաւոր զօրքի հետ ինչ ծառայութեան համար ուղարկես, կամ հետզ տանես, մենք պարտաւոր լինինք կատարել։ Քեալբ-Ալին էլ ընդունում է։ Մինչ այս մինչ այն, այս հայերի խումբի թիւը հասնում է մինչև ութսուն ձիաւոր, վասն զի ոչ միայն Դաստիկանի մէջից, որոնք մեծ եռանդ ունէին դէպի զօրականութիւնը, այլև Ղարաբաղի և Ղարադաղի հայերից չատ երիտասարդներ փախչում գալիս են գրվում այս խումբի մէջ։

Իբրահիմ-խալիլ-խանի հայր Փանահ-խանը որքան աչխատում էր, որ Ղարաբաղի հայերի խիտ գիւղերի մէջ կամ նրանց մօտերը թուրքեր գաղթեցնէ, որ հայերը բոլորովին հեռանային նրան, բայց չէր կարողանում, վասնորոյ հիմի Իբրահիմը սկսել էր հայերի արօտատեղերի մէջ բռնութեամբ թափառող կամ ասատնդական ցեղերի (իլյաթների) հօտեր մուծանել, որպէս զի այդ երկու ազգի մէջ օխ ու նախանձ սերմանէ, նրանք մէկմէկի վերայ յանձնեն ու արիւնհեղութիւններ, մարդասպանութիւններ, ասպատակութիւններ և աւազակութիւններ յառաջ գան, մէկմէկ տկարացնեն և վատթարանան, երբ և ինքը աւելի ևս աղդեցութիւն գտնէ հայերի, մինչև ժամանակ և մուսուլմանների վերայ։ Եւ այժմ Իբրահիմ-խալիլը մէկ ուրիշ հնարք մտածեց. այսինքն, Վրաստան, Դանձակ, Նուխի և ուրիշ տեղեր գաղթուած հայերի թողած գիւղերի մէջ թուրքեր բնակացնել։ Նրանց կալուածները, արօտատեղիները, դաշտերը պարկեսում էր թուրքերին, և անարի հայերից ոմանք, եթէ չասենք ուրախանում էին, դէթ անտարբեր աչքով էին նայում և օգնում նրանց ևս, վասնորոյ այն թափառական (քէչարի) ցեղերը խառնուելով հայերի մէջ աւելի էլ զօրեղանում էին, և նոցա մէջ մէկ որ և իցէ անբաւականութիւն պատահելիս, ի հարկէ թուրքերը միմեանց օգնում էին և զրկում հայերին. ուստի և վերջիններս կամաց-ակամայ դուրս էին գալիս հայրենիքից գնում, գաղթում ուրիշ երկիրներ, որ ապահով կերպով ապրին։

Չեմ կարող ասել թէ Ալի-բէգը Ղարաբաղի խանից կամ նրա արքունականներից վրէժխնդիր լինելու թէ մահմեդականներին չթողնելու իւր հայրենիքում բնակութիւն հաստատելու, և կամ իւր զինուորակիցների օգտի համար, դիմում է Քեալբ-Ալի-խանին, և առաջարկում թէ, արդեօք նա կնեսի որ իւր ձիաւորներովը գնայ, յարձակուի Իբրահիմ-խալիլի սառբազրեալ գիւղերի, հօտերի, խաչինների և ջոկերի վերայ, և որքան աւարէ, քշէ, բերէ, երեք բաժին լինի, մէկը խանին,

երկու միւս բաժինները՝ ձիաւոր հայ խումբին, թանը ուրախութեամբ է ընդունում, վասն զի և Պարսպաղի թուրքերը դաս դաս անպակաս յառնում էին Նախիջեւանի գիւղերի վերայ։ Սորանով Հայերի ձիաւոր խումբի վերայ այլ ևս նոր արդեանց դուռն է բացվում, ըստ որում այս խումբը իւր աւարած անասունները քշում տանում էր Երեւան, Խոյ, Սարմատա, Մարանդ, մինչև Թավրիզ անգամ վաճառելու համար։ Կվաճառէին, և դրամը կը դնէին ծոցերումը, կվերադառնային Նախիջեւան։ Իսկ այժմ նոքա կարավանների ուղեկցութիւններն ևս յանձնառու եղան, որ կրկին անգամ են շահումում. ուստի ձիաւորների թիւն օր ըստ օրվ. աւելանալով հասաւ մինչև 150 հոգւոյ։ Պէտք է ասած որ՝ Երասխի ձախ կողմից մինչև Կոմկասեան սարերի հիւսիսային կողմի, և Կասպից ծովից սկսեալ մինչև Սև ծովի ափերի բնակիչների հաղուստի և տան սարք ու կարգի նիւթերը՝ կդային Արարատեանի և խորին Պարսկաստանի ձեռագործներ։ Այդ առևտուրներն էլ հայերի ձեռքումն էին։ Բոլոր Պարսկաստանը խաղաղ լինելու համար, իւրաքանչիւր նահանգապետ իրան, դիւրին ինքնակոչ տիրապետող երևակայելով, իւր դրացի թշնամի խաների երկիրներն աւարում ասպատակում էր. ի թիւս որոց և անցուդարձ կարավանները. ուստի վաճառականները կամ կարվանների զբաղումները պարտաւորված էին թիւրք ձիաւորներ վարձել, որ առաջնորդէին կարվանները այս քաղաքից միւս քաղաքը։ Այդ թիւրք ձիաւորները շատ և շատ անգամ անհաւատարմութիւններ էին անում. այսինքն ծածկաբար ընկերանալով ուրիշ գող և ասպատակող ձիաւորների հետ, գիշերները մէկ քանի բեռ գողանալ էին տալիս, և յետոյ զանազան պատրուակներ առաջ բերելով, գողոնի արժողութիւնն չէին վճարում տիրոջը։ Իսկ Հայերի խումբը ոչ միայն գոյչ էին և բան չէին գողանալ տալիս, այլև գրաւ էին ունենում միշտ վաճառականների քով, այսինքն իւրեանց վաճառած անասունների դրամն աւանդում էին վաճառականներին և փոխանակագիր ստանում, որ ինչ քաղաքում որ թղթակից կամ ընկեր ունէին՝ փող ստացողները, նոքաք վճարէին, և շատ անգամ վաճառականներն, այդ դրամին սակոսիք կամ վերնագիր ևս էին վճարում։ Բացի սոցանից՝ ի հարկէ հայ վաճառականներն աւելի ևս հայ ձիաւորներին հաւատ կընծայէին քան թէ թուրքերին, որոնք չուռով կարող էին դատաւորների և մոլլաների քով զանազան պատրուակներով արդարանալ և ոչինչ վճարել վաճառականներին։

Այս ևս պէտք է յիշած որ՝ երբ Հայերի խումբը մէկ

քանի մասն բաժանուած՝ Ղարաբաղի հողու�ամենայն տեղ հանդիսանում էին իւրանց քաջութիւնովը, ուսով և Ղարաբաղից եկող ապաստակողները հեռացնում անտեսացան։ Նախիջևանի գիւղացիք հանդուսացան, և էլ երկիրը չունենալով յուզկանարութիւնից, միամտութեամբ և անդորրութեամբ զբաղում էին իւրանց երկրագործութիւնովն ու խաղաղաբաժութեամբը, և Ասրի-բէգի անունն էլ ամենայն տեղ հռչակուեցաւ, երբ և Նախիջևանի աւագ քահանայ Յերոնիմ Տէր Յովհաննէսը [1]) ցանկանալով որ՝ Ասրի-բէգի Նախիջևանի մէջ բնակութիւնն առաւել ևս զրական և հաստատուն լինի, ամուսնացնում է նրան Սարգիս ազգայի [2]) Լիլի անունով աղջկայ հետ։

Թէև որպէս Ասրի-բէգի խուսրի, նոյնպէս այլևայլ քաղաքներում եղածների մէջ էացած կանանները չեն վերաբերում մեր առարկային, բայց թող ներելի լինի մեզ, որ փոքր ինչ չեղուինք ասա և ծանօթացնենք ընթերցողները նրանց կարգ-կանոններին և գործառութիւններին, որոնք թէև ապօրինաւոր էին, բայց ժամանակը նոցա կանոնագրել էր և եղել էին որպէս օրինաւոր։ Պատմում էին թէ՝ այդպիսի յուզկահարող և ապաստակող խուսրերը, բաղկացած հայերից ու Թուրքերից առանձին առանձին, մինչև եղած են այն ժամանակուայ տիրապետող խաների մօտ, սոցա նամանդները մինչև մեր ժամանակները լինում էին, նաև Թուսաց սէրասիութիւնից նշանակեալ Նաչալնիկ սաացեալ կառավարիչնի մի մօտ ևս (ի հարկէ սոքա գաղտնի էին իւրանց՝ սէրասիութիւնից), որք ծածիպաբար ասանում էին գողերից իւրանց նշանակեալ բաժինը և նրանց պաշտպանում էին գատարաններում։

Ասրի-բէգի խուսրը ցրուելէն յետոյ, նրա ձիաւորներից մէկը խաչատուր անունով, որ իւր գինուորակիցները՝ Ապէր կասէին, ծառայում էր յետոյ իմ վեսայ Ղազար ազայի մօտ, և Թիֆլիս գալիս փնտէս նրան էլ հետը կուներէր որ մի տանը կիչևանէին։ Զմեռուան գիշերները կնստաբուէինք հինգ պատանիներ և կսատկէինք որ՝ Ապէրն իւրանց ձիաւորների ան-

---

[1]) Սա էր հոգեզբայր Հին-Նախիջևանցի շուշակ երեսի Օհան վարդապետի՝ որ գնաց Հնդկաստան, դրամ ժողովեց, վերադարձաւ Երևան, վերանորոգեց սուրբ Գեղարդայ վանքը, զոր քիւրդերը գամ էին լինում, ինչպէս 1830 թուականին ևս անեմք տեսայ։ Օհան վարդապետը կարգվեցաւ անդ վանահայր, ուր և մեռաւ և թաղեցաւ։ Իսկ ս. Բ. գիմէ սովորած եմ Տէր Յովհաննէսի քրոջը, որ և ասում էին հարիւր տարեկան էր, բայց դարձեալ երեխայէ էր կարդացնում Նախիջևան իւր տանը Ռէկ խցում։

[2]) Հաճատպ սրհորդութիւն Մեսրովպայ Թարգմանչացն։ Պոլսոյ, 1847, Հատոր Ա, երես 275։

ցեալ գնացեալ անցքերիցը պատմէր մեզ։ Դա այնքան շատ անցքեր կպատմէր, որ կասէր անհնարելի են։ Օրինակի համար նա պատմում էր թէ երբոյի մեր բէկիցն կամ իւրաքանչիւր մեր խումբը երեք դաս էր բաժնուած, և երեք էլ տարբերութիւն ունէին, այսինքն մեծ և պիծի քեռիներ կամ բէկեր, մեծ և պիծի ապերներ և ապա խոխէք։ Մենծ քեռին 50 ձիաւորի գլխաւոր էր, և պիծի քեռին նրա օգնական կամ նայիբն է։ կասէին։ Մենծ և պիծի ապերները 25 ձիաւորի գլխաւորներն էին։ իսկ խոխէքը, նրանց գինուորներն էին կամ ձիաւոր սատարդեաները։ Քեռիքն ու ապերները իրաւունք ունէին բէգի մօտ նստել, իսկ խոխէքը—ոչ երբէք։ Ինչ որ խիստ էր, ասարէին, եթէ բէգը ներկայ չէր, պիտի բերէին քեռիի մօտ, և նա կարգադրութիւն կանէր, ով և ուր ասէր վաճառէր։ վասն զի ասարդները չէին տանում, որպէս զի նրանց չնանչէին ապրանքի տէրերը։ Խրաքանչիւր ձիաւոր իւր աստէճանի և պաշտօնին համեմատ իւր մասը կստանար ինչպէս ասարառութիւնից, նոյնպէս կարավանի ուղեկցութեան վարձիցը։ Եթէ յարձակման ժամանակ վիրաւորուէր մէկը թշնամիներից, նա օրէնքով նշանակեալ մասից՝ մէկ մաս աւելի կստանար։ իսկ եթէ վէրքը անբուժելի լինէր, և չկարողանար ասարառութեան գնալ կամ կարաւանի ուղեկից լինել, նա բացի մէկ մասն աւելորդ ստանալից, այնուհետև մինչև իւր մահը ամենայն արդիւնքից իւր մասը պէտք էր ստանար։ բայց եթէ վէրքից մեռնէր, մինչև նրա մեծ որդուց չարահաս լինելը, հանգուցելոյ ընտանիքը նրա բաժինը կստանային։ Այն էր եկած այն ձիաւորին, որ ասարած բաներից մէկ բան թաղցներ, այն ժամանակ նրա ձին, զէնքերը կը խլէին և դատարկ նրան դուրս կանէին իւրանց խմբիցը։ Բայց եթէ մէկի ձին կաղ էր, կոյր էր, ծոյլ էր, այդ ասարների մէջին եթէ ձիան կայնն, մենծ քեռիի գլուխներ կարելի էր փոխել նրա ձիի տեղ։ Եթէ մէկը նախ քան զարշաւելն կամ գեռ ևս սեռած չլինէին գինամիները, կամ այն գիրը և նրա անասունները, որոնց վերայ պիտի յար ելուէին, յետ կասէր և վերադառնար, ունէր կատարեալ իրաւունք, բայց յարձակման ժամանակ կամ ասպատակութեան և ասարառութեան բռնելին, երբ թշնամիները յայտնվում էին և կախէր պատերազմը, մէկը դասալիք լինէր և փախչէր, միւս ձիաւորները նրան գնդակոծել, թրատել և սպանել ևս իրաւունք ունէին։ քանզի խումբի մէջը մնալիս, երդուած էր իւր թագի, հրացանի և սուրբ թագի վերայ։ Ասատիկ արդիւնած էր կին կամ օրիորդ չորթելը, և կամ գերեվարութիւնը։ բայց եթէ մէկն ազջիկ փախ-

ցնէր և տանէր եկեղեցում պատկէր, ներելի էր, եթէ աղջիկայ կամքն է եղած։ Եթէ մէկ խօսայ չհաւատէր իւր անմիջական մեծաւորի կամ քեռի կամ ապօր հետ, նրան կը փոխէին ուրիշ դաս, ուրիշ քեռի կամ ապօր մօտ մնալու։ Կային այնպիսի յանցանքներ, որոնց համար երկուսից մինչև վեց երիվարներ կյանձնէին յանցաւորին, որ առաւօտ երեկոյ մաքրէր մինչև հինգ օր՝ տասն օր, և կամ իւր դասակիցների համար ջուր էր կրել ճանապարհորդութեան ժամանակ, և երբեմն էլ 10—15 օրով, դարձեալ ճանապարհներին կերակուր էր պատրաստել։ Նրանց կերակուրներն էին բոզբաշ կամ եանին, չամիրի վերայ կամ մսրի տակն ողջ ոչխարը կամ դաւը խորոված։ Կային էնպիսի յանցանքներ, որոց համար թուրք յանցաւորի գլխին կկտրէին, նրա ձիու թամբի ասպանդակի փոկերը կը կարէին, որի վերայ հեծնելը շատ ամօթ էր։ Միգանից մէկը միանգամ հարցուց թէ «Հաւատուր Աստէր, այդքան ձիաւորներդ որտեղ էիք քաղաքում կամ քաղաքից դուրսը տեղաւորվում։» Նա պատասխանեց թէ «ով որ քաղաքում տուն-տեղ ունէր, այնտեղ կը բնակէր և ձին էլ այնտեղ կը պահէր, իսկ օտարականների համար մէկ ընդարձակ կարվանսրան էինք վարձած, ուր անսահման կար, այնտեղ կը մնայինք, և շատ սակաւ կպատահէր, որ յիսուն ձիաւոր շարունակ քաղաքում լինէին, այլ մասն մասն եղած մինչև դուրսը կլինէին, և հարիւ թէ յիսուն ձիաւոր մէկտեղ գնային, այլ 25 կամ 30։ Ամառն ի հարկէ այն ձիաւորները գաշտերում, անասուններում կամ գիւղերից դուրսը կինէին։ իսկ ձմեռը որ հայի կամ թիւրքի տանտէրը Նախիջևանի գիւղերում, կհամարձակուէր տանջական ելնել մեր ձիաւորներին, մինչև անգամ ճաչ, ընթրիք, և մեր ձիերին ուտելիք ևս կտային, քանզի Պարարաղի տապատակող ձիաւորների ձեռքն ու ոտքը մեր ոզորմութեամբը կտրվել էին։ Իսկ Պարարաղ արշաւելիս կինջանէինք Հայերի գիւղերում, ով էր տուել Պարսիկներին գեղ, որ կարդանար մեզ ընդունել, ընդունէր էլ, յիմար էինք մինչ, որ նրանց մտ իջևանել էինք, թերևս մտանել էին մեզ։ Իսկ Հայերը ուրախութեամբ էին մեզ ընդունում, ըստ որում մենք նրանց անասուններին ձեռնամուխ չէինք լինում, և պատահում էր որ նրանց անասունները Պարսիկների հոտերի, ջուրերի մէջն էին լինում, այսինքն վարձ էին տալիս թուրքերին, որ ամառը տանէին պահէին, երբ և մենք դրսում տանում էինք թուրքերի անասունները, Հայերն խմանալով, գալիս էին խլդրում, աղաչում, մենք էլ վերադարձնում էինք նրանց անասունները։

Վերադառնանք դէպի մեր առարկան։

Եւ այսպէս Ասրի-բէգի ձիաւորները երկու, երեք առաջով կ՚ցարձակուէին Ղարաբաղի մահմէտական ցեղերի անասունների վերայ և կաւարէին, վասնորոյ և Խրշահիմ-խանը կրսկսէ ծածկաբար բանախօսութիւն Ասրի-բէգի հետ, խոստանալով որ՝ եթէ նա վերադառնայ իւր հայրենիքը, նա կվերադարձնէ նրա, Ասրի-բէգին իւր հայրենական կալուածները և անմիջապէս մելիքութիւն կտայ։ Ասրին կապացարէ թէ՝ «էնն գերդասաններից սերուածները յիմարացան, որ քեզ ու հօրդ մեծամեծ ծառայութիւն ցոյց տուին։ Նոքա ինչ օգուտ ստացան, որ ես ինչ ստանամ, մանաւանդ որ շատ լաւ գիտեմ ու համոզուած եմ, որ մէկ քանի տարիից յետոյ իմ մասս էլ կմարեա»։

Ասրի-բէգը մտածում է որ, թերևս Խրշահիմ-խանը այդ բանախօսութիւնը ուրիշների բերանով յայտնէ Քեալբ-Ալի-խանին, որպէս թէ ինքը, Ասրին է սկսել այդ բանախօսութիւնը, վասնորոյ անմիջապէս յայտնում է Քեալբ-Ալիին, որ և հրամայում է որոնել կալանաւորել բանախօսը և լեզուն հրապարակի մէջ կտրել է տալիս, ու ասում «Էնն այս լուրը տար խանիդ»։ Անշայսանի է, որ այնուհետև ոչ ոք չէր համարձակվում ձեռնամուխ լինել այդպիսի բանախօսութեան։

Այդ ժամանակ Ազայ-Մահմէտ-շահ ներքինին արդէն ապաստանած Շուշի բերդումը, յաջորդած էր նրան նորա եղբօրորդի Ֆաթ-Ալի-շահը, որ և ուղարկած էր Ատրպատական իւր որդի Աբբաս-Միրզան տեղւոյն գլխաւոր հրամանատարի պաշտօնով։ Բայց որում կաղաքական նշանակութիւնը դեռ ևս հաստատուն չէր և շատ նշանդգալտներ ու ցեղագլուխներ կասարելապէս չէին հնազանդվում նրան, վասնորոյ Աբբաս-Միրզան մէկ եղանակ քաղաքականութեամբ էր կառավարում, այսինքն ամէն նշանդգալտից հետևակ կամ ձիաւոր զօրք էր պահանջում և ուղարկում այլեայլ նշանդգալտներ, պատճառելով թէ՝ այնտեղ ապստամբութիւն կամ խառնակութիւն կայ, և այսպէս զօրքը տեղափոխելով, նախ՝ միամտանում էր որ նշանդգալտը մտադիր չէր ապստամբել, և երբոր՝ այն զօրքը պատանդի պէս էր պահում հեռի տեղերում, թէև ներքինի Ազայ-Մահմէտ-շահը, կասկածելով Քեալբ-Ալի-խանից, կուրացրել էր նրան, և կառավարիչ էր Գեանձակ Դաղիստանի, այսու ամենայնիւ դարձեալ Աբբաս-Միրզան կասկածանք ունէր նրանից. ուստի հրամայագրում է Քեալբ-Ալի-խանին որ 300 ձիաւոր զօրք ուղարկէ Սօվուզ-Բուլաղ, որպէս զի ապստամբ երկու քիւրդ Բալլաս թէ Մէքքի

ցեղապետները կալանաւորէ և ուղարկէ Թաւրիզ։ Ինքը Քեալբ-Ալի-խանն ևս միամիտ չէր, որ Կաջարի հարստութիւնը կարող է երկար միջոց թագաւորել, թերևս մի-ութների նման պիտի չուտուլ կործանուի, վասնզոյց չկամենալով, որ իւր զօրքն զգալի կերպով պակասի և տեսնելով որ արդէն Հայերը 150 ձիաւորներ են, ուստի 150 ձիաւորներ էլ Պարսիկներից է ժողովում, յանձնում Ասրի-բէգին, որ վեր առնէ գնայ Սօվուզ-Բուլաղ։ Բանը սրանում է որ պարսիկ երեսելի գերդաստաններից ոչ ոք չհամաձայնեցաւ գլխաւոր կարգվիլ այդ 300 ձիաւոր խումբին, երկիւղ կրելով թէ՝ կարելի է մէկ տարաբախտութիւն պատահի, և նրան Աբբաս-Միրզան Քիւրդստան կալանաւորել կամ սպանել տայ, կամ թէ բանտարկէ և իբրև պատանդ զրկէ Թէհրան, ուսկից ազատուիլն անհնարին էր, այդ խառն ժամանակումը։

Դեռ Թաւրիզից Քիւրդստանի կառավարիչը հետևակ զօրքով դուրս չեկած՝ Ասրի-բէգը հասնում է Սօվուզ-Բուլաղ իւր ձիաւորներով և լսում է, որ այնտեղ ապատամբութիւն կամ յուզմունք չկայ ընդդէմ տէրութեան, այլ ցեղապետի ազգականները՝ մէկ արդէն նշանուած աղջկայ համար դայրացած (ըստ օրում նշանուածի հայրը չէր ուզում տալ իւր դուստրը փեսայացուին) երկու կողմնակցութիւն են բաժանված, վասնզոյց մի մեանց վրայ են յարձակում, մի մեանց կայքն են աւարում, և մէկ կողմնակցութիւնը աշխատում է փախցնել նշանուած աղջիկը, բայց անկարելի է լինում. ուստի և մարդասպանութիւններ են լինում։ Ասրի-բէգը միջամտում է և նրանց հաշտացնում, նշանած տղին տալիս է իւր նշանդրածը, և տղի քրոջն էլ տալիս է աղջկայ եղբօրը, սպանուածների արեան գինը առնում է տալիս նրանց ազգականներին, վէճը վերջացնում է, և այնուհետև մէկ խնդրագիր Աբբաս-Միրզայի անունը՝ սուրբ գրութեամբ երկու կողմնակցութեան երեսելիների, և հինգ հարիւր թուման պարգև առնելով, ուղարկում է Աբբաս-Միրզային, և ինքն էլ մէկ խնդրագիր դարձեալ շահզադայի վերայ գրելով գործի ամենայն հանգամանքը ուղարկում է Թաւրիզ։ Ասրի-բէգի խաղաղութեամբ վերջացնելը համապատասխանում էր երիտասարդ շահզադայի նպատակին, վասն զի նա չէր ցանկանում, որ կռիւ ու մարդասպանութիւններ լինէին, մանաւանդ որ ժամանակն էլ էնպէս էր կարգադրում, որ ամենայն ինչ խաղաղութեամբ անցնի։

Շահզադան այս գործովը ճանաչում է Ասրիին. ուստի և շատ հաճանում է ու խրախյում, միանգամայն և հրամանագրում, որ նա գնայ Աղբակ, կալանաւորէ և պատժէ այնտեղի

քիւրդերը, որք նեղացնում էին զՀայերը, և նոցանից, այսինքն քիւրդերից պատանդներ առնէ ու Թաւրիզ ղրկէ։ Այսուեղ ես խաղաղութիւնը է անցնում, այսինքն լոզգրոյ հայերի կայքն առնելով քիւրդերից, վերադարձնում է հայերին, սոցանից էլ Հնարաւորութեան գիր է առնում, երկու պատանդ էլ քիւրդերից, և ուղարկում Թաւրիզ, որով և Աբբաս-միրզան հրամանագրում է որ նա արձակէ իւր զօրախումբը, և գնայ Թաւրիզ։ Աղբակի արշաւանքը չատ արդիւնաւոր է լինում որպէս ձիաւորների, նոյնպէս և Ասրի-բէգի համար, վասն զի ասպատակող և յանցաւոր քիւրդերը փախչում են Օսմանցւոց կողմը, վասնորոյ Ասրի-բէգն էլ պատրուակ բերելով փախածները՝ երկու—երեք անգամ յարձակվում է Օսմանցի քիւրդերի վերայ, որոնք պաշտպան էին հանդիսանում Պարսկաստանի քիւրդերին, և մեծ աւարով վերադառնում Ասրի-բէգն այս անգիքերը պատմելիս ասում էր թէ, այսօրուան իմ և ստորագրեալներիս ունեցած հաղթութիւնից բերած հաղթ է։ Աստուած նրանց բարեբաստ (առատութիւն) տայ։ Աբբաս-միրզան պատուով ընդունելով Ասրի-բէգը, գրել է տալիս նրան իւր անձնական կուլամների չարքումը և խրկայում է։

Տիրապետող և ինքնակոչ խաները, ոմանք նախ քան Աբբաս-միրզայի ժամանելն Աստրպատական, և ոմանք նրա ժամանելէն յետոյ, դիտու զօրութեամբ, խնամութեամբ և կամ ահից հնազանդեցան փոքր առ փոքր, և ընդունեցին Ֆաթ-Ալիի չանութիւնը, որ և հետգհետէ վերջացան խաների յարձակումը մինանց վրայ, ինչպէս նաև մէկ մէկի գիւղերը և նրանց մէջի բնակիչների կայք ասպատակելը, կամ անցուդարձ անող կարաւանների վերայ յարձակումը։ Այս պատճառաւ անա կարաւանները զգալի հարկաւորութիւն չունենալով այս քաղաքէն այն քաղաքը գնալու ձիաւորների առաջնորդելոյն, Հայ ձիաւոր խումբն էլ հետգհետէ սկսան դրուիլ Ասրի-բէգն էլ այնուհետև որպէս տէրութեան ծառայող անձը փոխում է իւր վիճակը և չէ զբաղում յուզկաստութեամբ ու ասպատակութեամբ։

Ինչպէս ասացի, Ասրի-բէգը իւր փեսայի փեսան լինելով Նախիջևանից Թաւրիզ, կամ Թաւրիզից Նախիջևան գնալ-գալու ժամանակ կգար, կիջևանէր Ջուլայ մեր ասանը, մինչև 1819—1820 թիւերը, երբ և ես կյիշեմ նրա 7—8 ձիաւորներով գալն ու գնալը, և նրա պատմելն Աբբաս-միրզայի հետ իւր խոսակցութիւնները, տեղ տեղ ծառայութեան պաշտօնով գնալը, նրա յանձնարարութեանց կատարելն ու այլ զանազան պատերազմական անցքերը։ Նա պարթև էր հասակով և բա-

ռեկազմ, դէմքը բոլորակ, կարմիր ու գեղեցիկ, այլև հինգած պատառի մօրուքով, նոյնպէս հինգած էր նրա ոսկեգոյն խոպոպիքը (բբրշէկ)՝ կախուած քներակների վերայ, կարճ թիկնոց և կապայ կնգաղէր, սպիտակ գօտիկը մէջքին և խանչալը (զամէն) կոզքիցը քաշ տուած. կարմիր կասաբից լայն փոխանով. խոյի նախշուն գուլպաներով և սաղրի քօղերով (այն ժամանակը սաղրի քօղ և կարմիր փոխանը միմիայն ազնուական մահմէտականները կնաղէին. և սրա համար՝ հայերը կրելիս, պիտի հրաման ստանային տէրութիւնից), որով նա աւելի կը նմանէր պարսկի, քան թէ հայի, մանաւանդ որ իւր ստուգաբանների և սպասաւորների հետ թիւրքերէն կխօսէր. նա նրա մէջ սովորութիւն տեսայ, որ մինչև ցայսօր կյիշեմ, այնինչն, երբ նա առաւօտները զարթէր քնից, դուրս կգար բակում կպզպզէր, ատնամանը ջրով լիքը կրերէր ծառան կտար նրան, նա ինքը նախ իւր հինգած կարմիր ձեռքերը և ապա երեսը կլուանար ու կկանգնէր, կասնարէր խոպոպիքը, մօրուքը, և երեսարիւով—երեսը, ձեռքերը մաքրելով կը մտնէր սենեակը, ուր քնել էր. այնտեղ երեսը դէպի արևելք դարձուցած ծունկի կը չոքէր, մէկ քանի րոպէ կաղօթէր համբիչը ձեռին, յետոյ երեք անգամ ծունր կը կրկնէր, երեսը կխաչակնքէր, և ապա գոտկը կը դնէր դլխին, չորքը կնգաղէր և ներկայ եղողներին, թէև 7—8 տարեկան երեխայ ես լինէր, բոլորին մէկ մէկ բարիլոյս կցանկար, և մէկ մատնաչափ հաց կը դնէր բերանում. դարձեալ կխաչակնքէր, և ապա մէկ փոքրիկ բաժակով օղի կը խմէր, ու նրա ծառան խոտխոտակ կը բերէր, զոր կծխէր նա. Նրա ստորադրեալներն ու սպասաւորները թէև ոչ ինչպէս նա՝ կատարելագէս, այլ համարեա թէ նրա նման, պարտաւոր էին աղօթել. Առանց «Հայր մեր» տէրունական աղօթքի նա ոչ կնաչէր և ոչ կընթրէր. եթէ քահանայ լինէր սեղանակից, նա կասէր տէրունական աղօթք «Հայր մերը». իսկ եթէ քահանայ չլինէր, երեխայի ասել կտար, ապա թէ ոչ՝ ինքը կասէր.

1820—1821 թուին սկսաւ Պարսից և Ջանկաց պատերազմը. Աբբաս-միրզան յանձնեց Ասրի-բէգին Նախիջևանի նահանգից ժողոված հայ-ֆիւռոր խումբը, և հետը տարաւ մինչև Աւաչկերտ. իսկ ձմեռը նա վերադառնալով Թավրիզ, արձակեց և հայ-ֆիւռորները գնալ իրանց տները. Հետևեալ տարին նա կրկին արշաւեց Ջանկաց վերայ, նրա հետ էր և Ասրին իւր խումբովը. Աբբաս-միրզան հաստատեալ Ավաջքն, լսում է որ Աւաչկերտի հայերը մօտ 200 գերդաստան, համախմբված են Ղարաքիլիսայ գիմագրաւ լինել պարսիկներին,

ուստի ուզարկում է նա, Աղալաբ-բէգը (որ յետոյ խան) և Ասրի-բէգը հայերի քով, որ յորդորեն և ասեին նոցա թէն, Աբբասին, զինու զօրութեամբ հնազանդացնել նրանց, որի հետևանքը վնասակար կլինի իրենց հայերին, այլ աւելի լաւ կանեն որ ցրուին, գնան իրենց գիւղերը ու երկրագործութեամբ պարապին։ Հետևում է պատգամաւորներին և ինքը Աբբասն իւր բանակովը։ Հայերն էլ հաւատալով պատգամաւորների յորդորանքներին, խաչով, խաչվառով և քահանաներով դուրս են գալիս Աբբաս-միրզային ընդառաջ, որ և մուտներկներում և հրամանագրերով յայտնում է բանակի զօրագլուխներին, որ եթէ մէկը հանդգնի մեռնանուշ լինել այն հայերի կայքին ու կեանքին, սասանել կոպատուր, մինոյն ժամանակ վերադարձնում է Ասրի-բէգն իւր խուսքովն սուրբ Յովհաննէսի վանքը, որպէս զի կենայ այնտեղ, հսկէ և թոյլ չտայ քիւրդերին մտնեալ վանքին և կամ վանքի մէջ ապաստանուած հայերի անասուններին։ Ըստ ասողների Աղալաբ-խանի (որպէս ասրա և Ամիր-Թոխմախանի խաւսքի-խանի կենսագրութեան մէջ գրած ենք այս պատերազմի անցքերը) Աբբաս-միրզան փոխում է յետոյ ձիաւորները, և ուղարկում է հայ-հետևակ զօրք վանքի պաշտպանութեան համար։

Պարսից և Ցաճկաց պատերազմն աւարտելէն յետոյ, Ասրի-բէգը յաջող ժամանակ գտնելով, գնաց Ղարաբաղ, իւր հայրենիքը, որ թերևս կարողանայ տիրել իւր ժառանգական կալուածներին և տեսնել իւր ազգականները. վասն զի Իբրահիմ-խալիլ-խանի որդի Մէհտի-խանը փախել գնացել էր Ասրի-պատական և իշխան Մաղաթովը, որպէս հայ, կառավարիչ էր Ղարաբաղի գաւառին, որն որ ըստ կարծեաց Ասրի-բէգի, ի հարկէ կոգնէր նրան։ վասնորոյ Աբբաս-միրզայէն արձակու

անակնկալ Շուշի բերդը պաշարուեցաւ պարսիկներից, երբ և Ասրին էլ իւր ընտանիքով նրա մէջն էր։

Շուշի բերդաքաղաքի վիճակի մէջ եղած զօրքի հրամանատարը (կոմենդանտ) գնդապետ Ռէուսն էր, որ իւր զօրքի փոքրիկ քանակութեամբը չկարողանալով պահպանել բերդը, առաջարկել էր Հայերին սպառազինուել և զինուորական լինել Ռուսաց բերդապահ զօրքին։ Հայերն ուրախութեամբ ընդունել էին նրա առաջարկութիւնները։ Նրանց մէջն է եղած և Ասրի-բէգը, որ ինչպէս Հայ՝ չէր կարելի ջնջուել իւր ազգակիցներից։ Պաշարեալները ամենայն օր սպասում էին դրսից Ռուսաց օգնութեանը, բայց իզուր էր նրանց յոյսը, որովհետև բոլոր Անդրկովկասում զօրք չատ փոքր էր այն ժամանակը, վանորայ և կասպիական քաղաքներից, ուր որ փոքր ի չատ զօրք կային, բոլորին էլ բերել էին տալիս Թիֆլիս, և Պարսիկներն էլ գալիս առանց պատերազմ մղելու՝ տիրում էին զօրքերից դատարկացրած քաղաքներին։ Գրեթէ ոչ ոք չէր մտածում Շուշի բերդի համար, թէև մտածէին, ինչ կարող էին անել,—հարկաւ ոչինչ։

Աբբաս-միրզան 48 օր գրաւուելով Շուշիի պաշարմամբ, ժամանակ տուեց Ռուսներին զօրաժողով լինել և Ռուսատանէն զօրք բերել, և եթէ նա, Աբբաս-միրզան չէր պաշարել Շուշին, անշուշտ Թիֆլիսը զոհ էր լինելու պարսկական աւարառութեանն ու աւերմանը։

Բէուսը մէկ քանի անգամ թղթով կամ առանց թղթակցութեան մարդիկ է ուղարկում Թիֆլիս կուսակալ Երմօլովի մօտ, որ գոնէ մէկ պատասխան բերին։ բայց նոցանէ ոչ ոք չէ կարողանում Թիֆլիս հասնել, վասն զի Շուշիից մինչև Կանձակ (Ելիսավետպոլ) ճանապարհներումը գրուած և տարածուած էին Պարսից զօրքերը, որոնք բռնում էին գրատարներն ու չարաչար սպանում։ Ի վերջոյ Բէուսը կամենցաւ մէկ անգամ ևս փորձ փորձել, և խոստացաւ մեծ պարգև տալ դրատարին և այնուհետև պատասխան բերողին։ Ոչ ոք չէր յանձնառու լինում այս վտանգաւոր ծառայութիւնը կատարելու։ Ասրի-բէգը, ինչպէս կտեսնենք շուտով յետասահմանութիւնից տարսկաւ, անձնամատոյց է լինում Բէուսի մօտ, և ընդունում նրա առաջարկութիւնը, և նամակը՝ տեղաւորում է տրեխի մէջ, դիշերով բերդի արևմտեան պարսպիցը քաշ ընկած դուրս է գալիս, անտառների մէջտեղը զարուղի ճանապարհներով գնում, հասնում է Շամշադին, ուր մէկ հայ ուղեցոյց է վեր առնում ու գալիս հասնում Թիֆլիս։

Թիֆլիս մենք երեք փոքր եղբայրներս, մօրաքրոջս որդին

և մեր փեսայ Ղազար-աղայի եղբայրը, որոնք մեր տանն էին կենում, Ներսիսեան ուսումնարանումն էինք կարդում։ Մէկ օր, մտացել եմ ինչ երևելի տան էր, առաւօտը շատ չուտով մեզ զարթեցրին, որ գնանք եկեղեցու։ Ես չարերս կիսատ-միսատ հագնուած, բացի մէջտեղը կանգնած՝ թնկթնկում էի թէ թէյ տուէք որ խմեմ, յետոյ ժամ գնամ։ Այդ միջոցին Մելիքենց կարուսարսի՝ օգաստին (այստեղ էր հօր վաճառատունը) մէկ մարդ բերեց մեր մեծ դրանը կանգնացրեց և ասաց «տան այս է Աղէնց տունը»։ Ես կարծեցի թէ այն մարդը պարսիկ բեռնատարած ջորեպան է (չարվադար), վասն զի նրանց նման էր հագնուած։ Այդ մարդը մօտեցաւ ինձ, հարցրեց «Աղաջանն (Յովհաննէսն) ես թէ Գալուստը»։ Ես զարմացայ նրա հարցրէն խօսելու վերայ, նկատեցի նախ՝ նմանացրի ծանօթ մարդոյ, բայց անունս տալէն յետոյ, լաւ նայեցի և տեսայ որ Ասրի-բէգն է, պատասխանեցի—«Գալուստն եմ»։ Նա կրկնեց հարցը «հայրդ տանն է»։ Պատասխանեցի «չէ, ժամ է գնացել»։ Ես թողի նրան բաղումը, վազեցի մեծ եղբօրս և մօրս խնացում տուի, որ փեսայ Ասրի-բէգը եկել է ու բաղումը կանգնած է։ Ամենքը դուրս թափեցան, «խնամի փեսայ, խնամի փեսայ» ասելով ներս տարին, նստացրին թէ չէ, «Զե զանից «ով կարող է ասաց, վազէ-վազ գնալ եկեղեցին, ասել ազային, որ շուտով գայ տուն, և խմցնի իմ գալը»։ Այդ վիճակն ինձ ընկաւ։ Հենց հօրս չտապաւ ասացի Ասրի-բէգի գալը, նա խսկոյն դուրս եկաւ եկեղեցիից, եկաւ տուն։ Մինչ Ասրի-բէգը թէյի բաժակը նոր էր առած ձեռքն ու կամենում էր խմել, վար դրեց, հօրս հետ միմեանց բարևեցին, համբուրեցին, հայրս հրաւիրեց նրան նստել և թէյը խմել, բայց Ասրին ասաց, ժամանակ չէ թէյ խմելու, ըստ սրում Շուշիի կոչնականից նստակ եմ բերել Երմօլով կուսակալին, պէտք է մենդանտից նստակ եմ բերել Երմօլով կուսակալին, պէտք է մենդանտից նստակ եմ բերել Երմօլով կուսակալին։ Հայրս խնդրեց հետ տանենք, տանք նրան, բայն Թանկ է։ Հայրս խնդրեցաք նրան մէկ բաժակ թէյ խմացրեց ու մեսին գնացին։ Մօտ երեք ժամ տեւեց նրանց վերադառնալը։

Այդ ժամանակամիջոցին մեր դուռն ու բաղը եղաւ սրբարատեղիք։ այնքան բազմութիւն հաւաքուեցաւ այնտեղ, որ ոստիկանութիւնը պարտաւորվեցաւ իսկոյն յայտարարել քանի մի տեղ որ «ասում էր այն լուրը՝ թէ Շուշի բերդը անձնատուր է եղած պարսիկներին»։ Դղրդիւն էր քաղաքի մէջ, ոչ միայն նոքա, որ ազգական կամ առևտրական յարաբերութիւններ ունէին Շուշուայ բնակիչների հետ, ցանկանում էին Ասրի-բէգի բերանից մէկ խօսք՝ մէկ զրոյց լսել, այլև նոյն իսկ թիւրիմացեալ հանդուգն և քաջ գիտէին որ եթէ Շուշին առ-

նուի, Թիֆլիսն ևս չուտ կառնուի, բան որում անպարիսպ է, վերջապէս եկաւ Ասրի-բէգը, ով էր կարողանում զսպել, արգիլել ամբոխը, որ չմերձենայ նրան և որ և իցէ հարց առաջարկէ։ Ամենքը գիտէին որ եթէ Շուշին առնուի Թիֆլիսը գոհ է լինելու պարսիկներին։ Ասրին ի վերջոյ մեր սան պատրգամն վերայ կանգնեց բարձր ձայնով ասաց թէ «Ասուած, երկնիք, չուշեցի հայերը կարող են մէկ տարի ևս պաշարուած մնալ, նոքա այնքան հաց ու պաշար ունին, որ ոչ թէ իրենց, այլ և ռուս-զորականներին ևս բաւական կլինի այդ միջոցում։ Գնացէք, միամիտ կացէք, և խնդրում եմ ինձ էսօր ժամանակ տաք, որ քնանամ, վեց օր է գլուխս գետնին չեմ դրած, և վաղն ով ինչ հարց ունի, դայ, ես նրան պատասխանեմ»։ Ամբոխը ցրուեցաւ։ Ասրին փոքր ինչ ճաշեց ու քնեց. հետեւեալ օրը Լերոպացւոց ժամը 10-ին հազիւ զարթեցաւ, երբ և երեկեան օրը եկողները կրկին գալիս, հարցնում էին, զանազան տեղեկութիւններ էին առաջարկում, և լուռթեամբ պատասխան էին ստանում ու գնում։

Ասրի-բէգը հագնուած էր ինչպէս մէկ Փիրմանչացի, այսինքն գլխին թաղիք արախչինի նման գտակ, վրէն մէկ թաշկինակ փաթաթած, գտակի տակիցը քնարակների վերայ հինած կարմիր խոպոպիքը թափուած էին նրա դարձեալ հինած կարմիր պատառի (փաղարի) մօրուքի վերայ. հագին թաղիքէ կարճ մինչև ծնկները կապայ, տակիցը կանաչ գոյն զամաքից թիկնոց, կարմիր ու դեղին չերտ չերտ գօտի, նրանից խանջալը քաշ ընկած, և երկու ատրճանակ ցցուած գօտիումը և մէկ ծուռ թուր ուսիցը կախ արած, սև բրդէ վարտիկ ունէր և կարմիր թելերով հիւսած արեխներ հագին։

Հետեւեալ օրը դարձեալ չատ մարդ եկաւ Ասրի-բէգից ինչ ինչ լուրեր կամ անցքեր իմանալու։ Դա Շուշի բերդի մէջ պատահած անցքերից երկարօրէն պատմում էր, ինչպէս և իւր վտանգաւոր և դժուարին ճանապարհորդութիւնից, որոնցից այժմ չատ քիչ են մնացել մտքումս, այսինքն մոռս է որ նա գովում էր բերդի մէջ պաշարուած հայերի ջերմեռանդութեամբ ունկնդիր լինելը Բէյզի հրամաններին և կարգադրութիւններին, մանաւանդ պաշարեղէններով, ոգիով և գինիով նրանց պատուելը Ռուսաց զինուորականներին։ Իսկ իւր գալու համար ասում էր թէ, ցեղերները զարտուղի ճանապարհներով էի քայլում. իսկ գիշերները ուղիղ ճանապարհով. վասն զի եթէ պարսիկները գիշերով պատահէին ինձ, հարցնէին ուր եմ գնում, ով եմ, ես ասելու էի, ինչպէս և երկու անգամ ասացի, երբ նոցանից պատահեցան ինձ թէ «Փիրման-

չանեցի. Ջորեպան եմ, Ջորիքս վարձով եմ տուած, որ զոլքի հրաձէն զորձիքներ և ծանրութիւններ բառնան, ես ես յետ մնացի կարավանից, այժմ գնում եմ, հասնում Նրանց։ Քանզի ոչ թէ բերդիցն էր տեսած, այլև դիտէր որ յաճախ անգամ պարսիկների բանակի ուր և իցէ յարձակուելու ժամանակ, այդ պաշտօնը Քիրմանչանեցիք կկատարէին։ Շուշի բերդը մինչև Շամշադին ոչ միայն ուղիղ, այլև զարտուղի ճանապարհները, գլուղերը, լեռները, ձորերն ու գետերը ինձ երևոյութիւնիցս էին յայտնի, բայց ես մոռացում էի Շամշադինից մինչև Թիֆլիս գնալու համար, որ ինձ անծանօթ էր. վասնորոյ հասայ Շամշադին թէ չէ, այնտեղ մէկ հայ ուղեկից առի հետս։

Մէկ օր հայրս ասաց, խնամի Ասրի-բէգ, դու յիսուն տարեկան մարդ, ընտանեաց տէր, շատ դժուար գործ ես յանձդ առած. Ցէր մի արացէ, թէ որ մի վտանգ պատահէր, ինչ պիտի անէին ընտանիքդդ։ Նա պատասխանեց «յուսահատութիւնից յանձնառու եղայ ու ինքս ինձի ասացի թէ եա Հերթեամա, եա եէր-աթամա, այսինքն կամ Հերթեամին կամ գեռնի տակին։ Մէկ պատրուակով Աբբաս-միրզայից արձակուրդ ստացայ գալ հայրենիքս՝ ազգականներուս հետ տեսութիւն անելու, հայրական կալուածներուս տիրելու, և գուցէ քրիստոնեայ թագաւորութեան (թէ կարողանամ) ծառայելու ծերութեանս օրերը. վասնորոյ մէկ քանի շաբաթ որ դրամ էի ժողոված՝ բերի սրան—Նրան ընծայ և կաշառք, միսին խնդրագիրներ գրելու, օրէնքներ գտնելու համար բաժանեցի, մնացի դարտակ, յուսալով որ հա այսօր, հա էգուց վճիռը կըստանամ, և ինձ էլ Թուսների մէջ մէկ պաշտօն կտան։ Բայց ոչ մէկը չեղաւ, ես ես սկսեցի փոքր առ փոքր պարտքի տակ ընկնիլ, բանս գործս օր ըստ օրէ գժուարացաւ, ուզեցի տակ ընկնիլ, բանս գործս օր ըստ օրէ գժուարացաւ, ուզեցի վերադառնալ Պարսկաստան, սրա համար էլ փող չկար. մինչ այս՝ մինչ այն, և անհ յանկարծ այս կռիւը ծագեց, էլ ժամանակ չեղաւ, որ վերադառնամ Պարսկաստան, մնացի անճար ու այս յանձնաբարութիւնը, որ շատ դժուար էր, յանձնառու եղայ որ կամ մեռնեմ, կամ մէկ բան վաստակեմ գոնէ մէկ օրդուս համար։

Ջորս կամ հինգ օր Ասրին մնաց Թիֆլիս, և իր բերած նամակի պատասխանը ստացաւ կուսակալից ու վերադարձաւ Շուշի։ Այս անգամ նրան ուղարկեցին ձիով մինչև Շամշադին, ուստիկ նա գնացել էր հետաքրքիր կուսակալը պարգևեց դին, ուստիկ նա գնացել էր հետաքրքիր կուսակալը պարգևեց դին, և խոստացել էր որ շուտ հարիւր հատ հոլանդական ոսկի, և խոստացել էր որ շուտ հարիւր հատ հոլանդական ոսկի, ինչպէս ասացի Ասրի-բէգ կատաղեալ չէին, այսինքն ազնուութեան ասաֆան։

դարն, հագիւ թէ երեք ամիս անցած էր՝ ստացաւ նա պրաւոյչչիութեան ատենեան, որ այն ժամանակ մեծ արտօնութիւններ էր շնորհում ստացողին։

Պաչարող պարսիկները Ասրի-բէգին Շուշի հասնելից երեք օր առաջ բարձր ձայնով լուր են տալիս պաչարեալներին թէ՝ իրենց զօրքերը արդէն առել են Թիֆլիսը, մինչ քան հազար օրիորդներ և մանուկներ գերի են վարել, և ծերերը կոտորել են, քաղաքը տակնուվրայ են արել և այլն։ Ի հարկէ այս ցաւալի լուրին, որքան և պաչարուածները հաւատ չընծայէին, այսու ամենայնիւ այնքան երկար միջոց Ռուսներից լուր և օգնութիւն չհասնելոյ համար՝ ճշմարտանման էր և վհատեցուցիչ, և ահա յանկարծ հասնում է բերդը Ասրին, և ուսանելով Թէուսին կուսակալի նամակը, ինքն էլ՝ ինչ որ տեսել էր և լսել կուսակալից և կամ ուրիշներից պատմում է ի լուր ամենեցուն։ Բնակիչներն ընդունում են Ասրին ոգեւորեալ. ամենեքեան քաջալերվում են, նոր հոգի են ստանում և նոր զօրութիւն են զգենում, և ամենայն ինչ իսկոյն փոխվում է։ Թէուսն էլ պարգևում է Ասրի-բէգին հարիւր հատ հոլլանդիոյ ոսկի։

Ասրին ցաւագարուելով այս ճանապարհորդութիւնից, երկար ժամանակ չտես՝ վախճանուեցաւ, թողեց մէկ արու զաւակ Աստուածատուր (ԱղաՀվերդի, յետոյ Բօղդան) անուանով, և երեք դուստրներ։ Նրա կին Լիլին իր ամուսնու վախճանելից յետոյ վերադարձաւ Դաստիջան, իր եղբօր մօտ։ Նրա դուստրներից մէկն ամուսնացաւ Կապատաւ Ամիրգեան Մելիք-Վանիի որդի իւսուֆ-բէգի հետ [1]։ Ինչպէս այն ժամանակը տէրութիւնից իւրաքանչիւր քաղաքի ազնուականների երկու երեխաներ էին ուղարկում Ռուսաստան, որ և իբրէ տէրութեան հիմնարկութեան մէջ ուսումն առնեն, լրացնեն իւրեանց ուսման ընթացքը Դրիարար, և ապա ծառայեն տէրութեանը, այնպէս էլ 1833 թէ 1834 թուերին, Դաստիջանի մէջից ընտրուեցաւ վերոյիշեալ Աստուածատուր երեխան և ուղարկուեցաւ Ռուսաստան, որ ուսումն աւարտելից յետոյ մտաւ զինուորական ծառայութեան։ Մինչև կապիտանութեան ատենանը ստանալն իւր ռոճկի երրորդ մասը կը զրկեր իւր

---

[1]) Բ ա ֆ ֆ ի մականուանեալը, որ «Խամսայի մելիքութիւններ» անուանով գիրքը հրատարակեց 1882 թուին Թիֆլիս և ինչ որ գրում է երես 349—353 Ասրի-բէգի համար, բոլորն էլ առասպելներ են, և նշին տեղից օգուտ չէ քաղած և ինքն էլ ժամանակակից չէ, որ ասեն, նեղկայ է եղած։ ուրեմն մտացածին վէպիկներ են։

մորը. այն ժամանակն էր, որ եկաւ Ղամիշեան, տեսաւ իւր ծնող մայրը և բուրեցաւ, վերադարձաւ իւր գունդի մէջ չարունակել իւր ծառայութիւնը։ Ապնուհետև նրա քոյրերը ամուսնացան, մայրը վախճանուեցաւ, էլ լուր չիմացաց թէ նա որտեղ է մինչև յայսօր, այլ ասում են թէ նա այժմ Ղիմնը-Ղօվզօրօղ (Մակարիայի մօտ) քաղաքումն է լինում։

ԼԴ.

ԱՂԱԼՕ-ԱՂԱՑ, ՈՐ ԵՒ ԱՂԱԼԱՐ-ԽԱՆ ԷՆԻԿՕԼՕՓԵԱՆՑ [1]).

Էնիկոլօփեանց ազգատոհմի ծագման մասին արդէն ասած ենք սորա մեծ եղբայր Միրզայ-Յօսեփ Էնիկոլօփեանցի կենսագրութեան մէջ, ուրեմն այստեղ կրկնելն անէծրդ է։

Ինչպէս Աղալար-խանը կպատմէր, նա հայերէն և վրացերէն լեզուները, այսինքն կարդալը սովորել էր Թիֆլիս երեխայ ժամանակ Չգրաչէն (Աւետաց) եկեղեցոյ Պետրոս աւագ քահանայ Տէր Պետրոսեանի մօտ, որ քաջ վրաց լեզուին ևս տեղեակ լինելոյ համար, վրաց մէլիքների (արքաների) ընտանեկան, կամ լաւ ևս ասած՝ արքունիքի—ընտանեկան վարժապետն էր, մինչդեռ ժամանակ և հայոց լեզուի գրաւոր թարգմանն էր։ Իսկ արաբերէն, պարսկերէն և թուրքերէն լեզուները Աղալարը սովորում է իւր նոր տանը՝ որպէս անհրաժեշտ պարտաւորութիւն, և չափահաս լինելից յետոյ նշանակվում է տաւորութիւն, և ամենայն գրածը թարգման։ Վրաց մէլիքներից վրաց թագաժառանգի գրածը թարգման։ Վրաց մէլիքներից մէկը խլած է լինում Էնիկոլօփեաններից ինչ ինչ կալուածներ, իսկ նրա մեծ եղբայր Միրզայ-Աբրահամը, որ

---

[1]) 1840 թուից դէնչև 1844 թիւը թաղվել ես գրէլից էի Աղալար-խանին։ Համարեա թէ ամենայն որ Ռէգիստրի հետ տեսութիւն կանէինք, կամ նա ինձ մօտ, կամ ես նրա մօտ փասին կնստէինք կամ կընթրէինք, երբ և ես ինձ մօտ, կամ ես նրա մօտ փասին կնստէինք կամ կընթրէինք, երբ և ես հետաքրքրուելով նրանից իմանալ ուզէի Պարսկաստանի, Հնդկաստանի գերի ընկնողների կամ փախածների կենսագրութիւնները։ Հանգամանքը զարմանալի սուր յիշողութիւն ունէր։ շատ անգամ պատմութիւններն ես կասէր։ Նա գալով պատմէսիս և կասակ տրալ, պատմածներն էլ շատ ապի ես ծիծաղալարտ էին։ Մօտ հարիւր թիւրթ ես նրանից լսածներս գրած եմ, որոնք ըստ մեծի մասին կարան, և այժմ ինչ որ Աղալար-խանի մասին գրում եմ, կամ մարտս Ռեացոնեանն են, կամ թէ պաշտօնական թղթակցութիւններից եմ մարտցել։

թարգման էր վերջին Հերակլ մէֆէի մօտ, այնտեղում է, վերաստանում, բայց մասն չտալով իւր միւս եղբարներին, տարաձայնութիւն է ծագում նրանց մէջ, երբ և Աղալօն խուսափում է գնում Ախալցխայ և նշանակվում այնտեղի փաշայի մօտ թարգման Հայոց, Վրաց և Պարսից լեզուներին Մէկ քանի տարիից յետոյ լսում է, որ Ռուսաց զօրքը եկաւ հասաւ Թիֆլիս, նա էլ յուսալով որ այժմ կարող է իւր եղբօրից ռուսների օգնէնքով պոկել, գՀնել ժառանգական կալուածներից իւր մասը, թողնում է Ախալցխան, գալիս է Թիֆլիս, տեսնում է որ իւր եղբայրն առաւել ևս ուժոլցած՝ նշանակուած է Ռուսաց կուսակալի մօտ թարգման, վատնորդ Աղալարը կասէր թէ «չատ գանգ ու գոնգով, հարթ ու փուրթով էի գալիս, որպէս թէ պէտի փեսրաման կամ բուկիսեզ անէի մրրզայ-Աբրահամը. Բայց էնեց մտայ Թիֆլիս, այստեղից այստեղից ծկլուկ արի նրա գործերը, տեսայ որ չէ, բանս էլի բուրթ է, ինձ ու ինձ ասացի, էսիրակս, վեր արի, մունչ կացիր. ես էլ լռեցի, և չատ փոսմանեցայ որ Ախալցխայից եկի, բայց ինչ օգուտ բանը բանից անցել էր Մէկ քանի չարի փող էի բերել հետս, էն էլ մսխեցի, մնացի դարտակ, մէնները սկսեցին ջիրերումս երբեմն լէգէվար, երբեմն մրրզէի պար գալ. իսկ ուրիշներն էնէնց էին կարծում, որ հարիւր թուման փող եմ բերել, նրա համար՝ օրը հինգ-վեց մօղիքսալներ (խնամախօս, մէնորդ) էին գալիս մօտս, որ կնիկ առնեմ Ապաքէն կնիկ առնէի, ինչով էի պահելու նրան. Մէկն եկաւ ասաց թէ էսիրումնք ուզում են իրանց աղջիկը քեզ տալ, որ քսան թուման էլ բաժին (օժիտ) ունի։—Հապա, քսան թումանի ձէնը լսողը, կնիկ չէր առնի. Այն ժամանակ քսան թումանն էլ հիմիկուայ հազար թումնին հաւասար էր։ Ես էլ խօսք տուի, գնացի եկեղեցումը տեհայ Գ.օզալին (իւր կինը) հաւանեցայ և պսակուեցայ։»

1804 թուին Վրաստանի կուսակալը լսում է որ՝ Աղալօն մտադիր է ծածկաբար փախչել գնալ Պարսկաստան Վրաց իշխան Ալէքսանդրի մօտ, վատնորդ և հրամայում է բանտարկել նրան, բայց երբ քննութիւնից երևում է որ զրպարտութիւն է այն լուրը, նրան ազատում է բանտից [1]։ Ժիներալ Նեսվետայովը իմանալով որ, Աղալօն երբեմն եղած է Ախալ-

---

[1]) Акты Собр. Кавказ. арх. III т. стр. 232. Աղալարխանը կասէր այդ անդրի համար թէ «մենք ուրախ էինք, որ վրացիների շառաւղից ազատուեցանք. բայց չէ, տեսանք որ ռուսների շառաւղաւ ուրեի է եղած և վերտանգաւոր»։

ցրեայ, և ծանօթ է այնտեղի փաշայի և մեծամեծների հետ, վասնորոյ 1806-ին յանձնուած է նրան մէկ պաշտօնական թուղթ, այնտեղի փաշայ Սելիմին վերայ, որ տանէ տայ նրան, և ինչ ինչ բերանացի պատուէրներ ասանդէ. մինչեւ ժամանակ լուսնայն տեղեկանայ թէ ինչի համար են այն պատերազմական պատրաստութիւնները, որոնք կազմվում էին Ախալցխայ [1]։ Աղալօն այդ յանձնարարութիւնը ճշտութեամբ է կատարում, վասնորոյ Դեսվիտայովը խոստանում է նրան մէկ տեղ պաշտօն տալ. ուստի և Աղալօն սկսում է ռուսերէն կարդալ, գրել և խօսել սովորիլ։ Մէկ էլ նա լսում է որ նրա եղբայր միրզայ-Աբրահամը արգելք է լինում նրա պաշտօն ստանալուն, վասնորոյ և նա էլ 1808-ին Յունիսի սկզբներում փախչում գնում է Լէմմանին, և այնտեղից Թավրիզ մուտ եղբայր միրզայ-Ռօստոմի մօտ։ Վերջինս ներկայացնում է Աղալօն թագաժառանգ Աբբաս-միրզային, որ պարգևում է նրան տարեկան ռոճիկ քսան թուման պարսից դրամ (60 ռուբլի ռուսաց), և մէկ ձի, ու դրել է տալիս իրա անձնապահ ձիաւորների մէջ կուրամ, անուանելով նրան Ագալար-բէկ։

Շատ յետոյ երբ Աղալօ-բէկն եղաւ Աղալար-խան՝ պարծենալով կը կրկնէր բազմութեան մէջ թէ «Էս մտած եմ Դրանի հոզը մէկ քորաչի ասած հրացանով, մէկ տարձանակով, մէկ խանչալով, մէկ քոստ թրով, մէկ եաանչիով և մէկ Նէրար պառաւ եաբուով (կռատած երիվար) ու վեց Թիֆլիսի արբասի դրամով, և մտած օրիցս մինչև հանգուցեալ միրզայ-Ռօստոմ եղբօրս վախանուելն ես ինձ պահած եմ այնպէս համեստ ու չափաւոր, որ նրա մահուանից յետոյ տէրութիւնն այնքան վարկ ունէր վրէս, որ ինձ տէրութեան գործերումը յաջորդ ճանաչից հանգուցեալ եղբօրս, և ժողովուրդը թէ հայ, թէ պարսիկ համարում էին ինձ մի անվնաս և կաչուելիս դուրս չեկող մարդ։ Երեսակցեցէք, տարեկան ռոճիկս էր քսան թուման, թէ չասեմ ժլատ, գոնէ այնպէս համեստ կարդէին, որ երեք տարուայ միջոցին երեսուն թուման դրամ ժողովեցի, տարայ տուի աղայ Շերմազանին, որ ասանդ պահէ իր արկղումը։ Այդ ժամանակ Թավրիզի հայերի մէջ նրանից հարուստ և վարկի տէր ուրիշ մէկը չկար։ Երիտասարդներ, ձեզ եմ ասում, լսէք, անդրամագլուխ մարդի համար գժուար, ամենասում, լսէք, անդրամագլուխ մարդի համար գժուար, ամե-

---

[1]) ԱՆդ, III т. стр. 577։ Աղալար-խանը կասէր թէ «մենք կարծում էինք որ ռուսները սուտ չեն խօսել. բայց տեսանք որ՝ Դրանք մեզ ձեռ չտա սուտխօս են եղած։ Դա այս գրոյցները ռուսերէն երեսին կասէր, որպէս կատակ, և Դրանք էլ կծիծաղէին։

նադժուար է, որ այնքան դրամ ժողովէ իւր հալալ քրտինքովը, այնուհետեւ այդ դրամն ինքն իրան կուլեանայ, կը ծեր և կրգամապատուի։ Զորս տարիից յետոյ գնացի աւանդապահիս հետ։ Հետզհետէ նրան պահ տուած փոքրիս հաշիւը տեսայ և իմացայ, որ բոլոր նրան պահ տուած դրամներիս գումարն էր 180 թուման. իսկ աւանդապահս առանց ինձ իմացնում տալու, իմ դրամները ձգել էր առևտուրի մէջ, վաշխը վաշխի վերայ բարդելով չինած էր 240 թուման։ Հիմի այս երեւակայեցէք թէ՝ ես ինչ ուրախութիւն կը զգայի։ Այնքան իմ հարուստ լինելս միայն երկուսս գիտէինք. բայց ուրիշները նայելով իմ համեստ կեցութեանս, կարծում էին թէ ես հաղար թուման գեանումը փոքրած, խորած դրամներ ունիմ։ Այսու ամենայնիւ այդ կարծիքի վերայ հիմնուելով որպէս Աբբաս-միրզան, նոյնպէս նրա դրան մեծամեծները, երբ մէկ մեծ գումարի վիճելի գործ լինէր, ինձ կյանձնէին, թէ քաղաքների մէջ և թէ արտաքոյ քաղաքների մէջերը։ Վասն զի, այսպիսի գործեր եթէ վերջացնէի, երկու դատաւորներից տասնին մէկ վարձ պէտք էր հանէր ինձ, բացի իմ և ձիաւորներիս ուտելիքից։

Ներսէս արքեպիսկոպոսը (որ յետոյ կաթողիկոս) 1812 թուի սկզբներումը գնում է Թաւրիզ աթոռային գործերի համար և իջնում է Ազալար-բէգի տանը, որով նա այնուհետեւ ներկայանում է Պարսից տէրութեան առջեւը ինչպէս կատարեալ վէքիլ, գործակատար Էջմիածնի, հսկող վանքերից և նրանց կալուածների կամ Էջմիածնի, և խորհրդակից Աբբաստանի վիճակաւոր առաջնորդներին։ Այնուհետեւ երբ Էջմիածինը մէկ գործ ունենար տէրութեան հետ, կդիմէր Ազալաբէգին, որ և կյայտնէր Աբբաս-միրզային և նրանից հրամանագիր կառնէր կը դրկէր ուր որ հարկն էր։ Երկրացի հայերն էլ նրան Ազալաբէգին կը հնազանդէին, ինչպէս ազգապետի, և երբ որ և իցէ բողոք ունենային, կդիմէին նրան, և նա կպաշտպանէր նրանց թէ Աբբաս-միրզային յայտնելով և թէ որ և իցէ նահանգապետի գրելով։

Ազալար-բէգը կպատմէր թէ ամեն անգամ, երբ կներկայանայի Աբբաս-միրզային որ և իցէ գործի համար, թէկն երբէք նրան չէի առաջարկում մի այնպիսի գործ, որ ապօրինաւոր լինէր կամ նա բացասէր ինձ, այսու ամենայնիւ մարմինս փոշաքաղ էր լինում, ոչ թէ երկիւղից, այլ այն պատճառաւ, որ նրան յայտնի էր, որ ես ամուսնացած էի, և կինս Թիֆլիս է, և օրքան նա կենդանի է, չեմ կարող ամուսնանալ. նոյնպէս նա հաւատի էր, որ իմ ճակատագրս չէր գրուած հաւատափո-

թութիւն, ուրեմն նա որպէս մուսուլման, ժամանակի ծնունդ, որ և իցէ, երբ և իցէ գաղտնիք կամ խորհուրդ ինձ յայտնելու ժամանակ, իրաւունք ունէր կասկածել ինձանից, մանաւանդ չատ անգամ այնպիսի խորհուրդներ և գաղտնիքներ էին լինում մեր մէջ, որոնք վերաբերում էին քրիստոնեայ տէրութիւնների։ Այդ ամենը մտածելիս, ես ինձանից խրտնում էի, չէի կարողանում մտածել մէկ հնարք, որով կարողանայի փարատել ոչ թէ Նրա, այլ իմ երևակայական կասկածանքը, որ կրծում էր հոգիս։ Վերջապէս այս մտածեցի և խնդրեցի Աբբաս-միրզայից, որ գրէ կամ մարդ ուղարկէ Էջմիածին Եփրեմ կաթողիկոսի մօտ, որ նա միջնորդէ Պարսատանի կուսակալին, որ թոյլ տան Թիֆլիսից ընտանիքս գաղթուի Թաւրիզ, վասն զի կինս մէկ անգամ անցպիրէ էր ուզել Թիֆլիս, չէին տուել, պատճառ բերելով թէ կուսակալը հրամայած չէ։ Երբ ընտանիքս հասաւ Թաւրիզ, այնուհետև կասկածանքից փարատուեցայ, առաջուայ նման Աբբաս-միրզայից էլ երկիւղ չէի կրում, երբ մէկ որ և իցէ գործ առաջարկում էի նրան, կամ թէ Նրանից որ և իցէ խորհուրդ կամ գաղտնիք էի լսում։

Աղդարեն, Աղալար-բէգի կինը մեծ օժանդակ եղաւ իւր ամուսնոյ վարկն ու յարգը բարձրանալու մասին, նա մանաւանդ որ, Գոգալ խանումը խելացի, ճարտարախօս և երեսելի տանտիկին էր, վասնորոյ և Աբբաս-միրզան հրամայեց նրան արձակ-համարձակ ելմտուտ առնել իւր կանանոցը, ուր և տիկինները կընդունէին չատ պատուով և յարգանքով, վասն զի ոչ միայն լաւ հեռագործներ կանէր, այլև չատ լաւ քաղցրախօսներ տիկիններին։

Շատ տարիներ էին, յորմէհետէ թոյլ և Մակուի խանութիւնների և Բայազիդի փաշայութեան մէջ բանակցութիւններ և պատգամախօսութիւններ էին չարունակվում, կոչիւններ և պատգամախօսներ էին ղրկվում, հոգեզատուած, յափշտակուած և թալանուած հօտերի, կարաւանների, և այլևայլ վաճառականների կայքերի համար, բայց ոչինչ չէին արգիւնաւորվում. և այս անգամ Աբբաս-միրզան նշանակում է Աղալար-բէգը, որ գնայ Բայազիդի փաշայի հետ խօսէ, ստիպէ նրան, որ բանակցութիւն տայ Պարսից հրամատակներին, որոնց չատը Հայեր էին. ուստի առում է թագաւորը թէ «Աղալար-բէգ. Հայերի պահանջմունքների համար, Հայ եմ ուղարկում, մանր պահիր հն, որ քեզ նշանակեցս, առանց նպատակի չէ, ուրիշների նման ինձ խօսք ու կեղ, առանց նպատակի չէ, ուրիշների նման ինձ խօսք ու զրոյցներ չրերեսս։» Աղալար-բէգը գնում է, հնացած վէճերը վերջացնում, ստանալով մօտ յիսուն մեսա վեց ամսուը վերջացնում,

կրողներից բաւականութեան սառորագրութիւններ, վկայութեամբ տեղացի քահանաների, մոլլաների և երեւելի վաճառականների կնքովը, և ներկայացնում է թագաժառանգին, որ բացի իրլայից, չորդում է նրան հայտնուն թուման պարգև։

Վերոյիշեալ եղանակով Խոյի, Սալմաստի, Որմիոյ և Սալդուզի խանութիւնների բնակիչները պահանջներ ունէին Վանի փաշայութեան բնակիչներից. ուստի Աբբաս-միրզան դարձեալ նշանակում է և ուղարկում Աղալար-բէգը Վան քաղաքը, որի փաշան լինելով Աճառեցի հաւատափոխ վրացի չատ սերտ բարեկամանալով Աղալար-բէգի հետ, հանում է օթևանից, ուր վերջինս իջևանել էր, և տանում է իւր պալատումը տեղաւորում, որպէս զի միչտ յարակցութիւն ունենան միմեանց հետ։ Ցետոյ Աճարեցի փաշան գրում է Աբբաս-միրզային և խնդրում որ նա միչտ թողնէ Աղալար-բէգը Վան քաղաքում, որ վերահասու լինի ամենայն վէճերի, որոնք այնուհետև կպատահէին Պարսից և Ցաճկաց հպատակների մէջ. վասն զի այդ ժամանակը մեծ առևտրական յարաբերութիւններ կային Պարսից և Ցաճկաց հպատակների մէջ, Մուշ, Վան, Բիթլիս, Դիարբէքիր, Բաղէշ, Խլաթ և այլն։ Ի՛նչ և իցէ մեռ տասն ամիս Աղալարը կենալով Վան, մեծ յաջողութեամբ է վերջացնում Պարսից հպատակների վէճերը, մինչդեռ նոցա պահանջմունքների մեծ մասը բիւրը մեծամեծներից են լինում, որոնց կենդանութիւնը առանց դողութեան և ապահովութեան կարող չէ գոյութիւն ունենալ։

Մինչ այս՝ մինչ այն, և ահա 1820 թուականի վերջերում ծագում է Պարսից և Ցաճկաց պատերազմը։ Աբբաս-միրզան նկատելով որ իւր զօրքը երկու առաջով պիտի յարձակուի Ցաճկաստանի վերայ, այսինքն Բայազիդի և Վանայ կողմովը, ուր բնակիչների մեծ մասը հայեր են, որոնք կարող էին որպէս չատ վնասներ, նոյնպէս օգուտներ տալ իւր բանակներին, վասնորոյ զօրաժողով է լինում Արտպատականի հայերից հետևակ և այրուձի ու անուանում թրջանգչի (հրացանաւոր) և սրվարէ (ձիաւոր), և նրանց գլխաւոր է ընտրում այն հայ մարդիկներից, որոնք հաւատարմութեամբ և քաջութեամբ յայտնի էին իրեն, զորօրինակ Աղալար-բէգ և Իւսուֆ-բէգ Լենկլօփենց, Աբրի-բէգ Բրնադուբեան, Սամի-բէգ և այլն [1]։ Աղալար-բէգը 100 այրուձիով, ինչպէս անձնապահ խումբ անմոռնալի է լինում Աբբաս-միրզային։ Այդ նոր-

[1]) Եթէ տեսած եմ Սամի-բէգը Դարիշենան, և յետոյ երբ ընտանիքով փախանք գնացինք Թիֆլիս, նա ևս իւր ընտանիքով եկաւ այնտեղ և բնա-

ընտիր հայ զորքը, ինչպէս յիշած ենք իւսուֆ-խան Ամիր-Թօփ-խանի կենտրոնութեան մէջ, չատ տեղ և չատ անգամ պաշտպան են հանդիսանում իրանց համազգիներին, համեմատ Արբաս-միրզայի նպատակին, որին արդէն յայտնի էր նրա անզուսպ և բարբարոս պարսկի զորքերի լրութիւնները, երբ նորա պատերազմում էին ընդդէմ ոչ իբրեանց համակրօնների, Ազալար-խանը չատ յետոյ չատախ կլինէր, որ նա մինակ 76 հոգի հայ գերիներ էր ազատել, որոնցից մէկը Մանկասարը, մինչև 1843 թիւը թէև ծերացած՝ կորացած էր, այսու ամենայնիւ ծառայում էր նրա տաճը, վասն զի չէր ցանկանում վերադառնալ իւր հայրենիքը։

1821 թուին երբ երկու տէրութիւնները սկսում են հաչտութեան բանախօսութիւնը, գործը մնում է անկատար, 1822-ին գարնանը Պարսից զորքը կրկին յարձակվում է Օսմանցիների վերայ, Արբաս-միրզան ստուար բանակով չու

համարելով այդ լուրը, միւս օրը դուրս է գալիս Դիոդոնից հասնում է սուրբ Յովհաննէսի վանքը, որ օթևագայէ այնտեղ, հետը վեր առնէ եպիսկոպոսը և միասին գնան Ալաշկերտ, բայց խաչատուր եպիսկոպոսը չէ ընդունում Աղալար-բէգը բերդի մէջ, այլև ինքը ևս բերդից չէ դուրս գալիս, թէև Աղալարը շատ է խնդրում, աղաչում, որ գոնէ եպիսկոպոսն ինքը պարտնով քաշ ընկնի մինակ, միասին գնան հայերի մօտ, բայց նա բացէ ի բաց մերժում է թէ՝ ես իմ տեղն ու իմ վանքը այսպիսի ժամանակ չեմ կարող անպլուս թողնել, գնայ ուրիշ տեղ, այլ հազորդում է Աղալարին Ալաշկերտի երեսի և խօսքի տէր տանուտէրների անունները, Աղալարն էլ մէկ նամակ է գրում Աբբաս-միրզային և փրթաւում պարսպիցն վեր, որպէս զի Աբբաս-միրզան այնտեղից անցնելիս, գոնէ ինքը, եպիսկոպոսը, մինակ վայր իջնի պարսպից, գնայ ներկայանայ նրան և այդ նամակը տայ ու բարեխօսէ, մինչեորզէ Ալաշկերտի և ուրիշ հայերի մասին։

Մէկ քանի օրից յետոյ Աբբաս-միրզան անց կենալիս՝ եպիսկոպոսն էլ պարանով քաշ է ընկնում պարսպից, մէկ քանի մարդով գնում է նրա առաջ, թագաժառանգը սիրով ընդունում է նրան և Աղալարի նամակը կարդալից յետոյ հրամայում է իւր մարդկանց, որ մէկ երիվարի վերայ հեծցնեն եպիսկոպոսը, և խօսակցելով մօտ մէկ ժամի ճանապարհ տանում է հետը։ Խօսակցութեան մէջ եպիսկոպոսը պատմում է թէ քիւրդերն երեք անգամ արշաւեցին վանքի վերայ, բայց չկարողացան վնաս տալ մեզ պաշարեալներիս, վասն զի ուրիշ հատ գերանից երկաթագամ թնդանօթներ եմ շինել տուել և գետեղել պարսպի բուրգերի վերայ, և երբ քիւրդ աւազակները երեք չորս հարիւրով գալիս են, մենք էլ լարում ենք այն թնդանօթները, և նրանք ահիցը չեն կարողանում պարբսանքը մօտենալ։ Աբբասը հարցնում է, վաղուց կամ գնդակն ուսկից էք բերում։ Նա պատասխանում է թէ վաղուց մենք ենք պատրաստում, խակ գնդակների տեղ՝ հին պայտերի կտորանք, գանազան տեսակ մանր երկաթներ ու բեկոներ ենք գործ ածում։ Աբբաս-միրզան չլսած ու չտեսած գերանից շինած թնդանօթ, զարմանալով հարցնում է այս մասին կրկին, կրկին անգամ, և երբ հասկանում է ինչպէս են շինել, ասում է թէ «փոքր ժամանակ ևս դուք ձեզ պաշտպանեցէք, մինչև իմ ժամանելս Ալաշկերտ, վայր իջացնելս հայերը և տեղաւորելս նրանց իրանց գիւղերում, այնուհետև հայ ձիաւորներ կը զրկեմ, որ պահպանեն ձեզ քիւրդերից, բայց չմոռանաս թնդանօթները անկորուստ պահես մինչև իմ վերադառնալը»։ Յե-

տոյ քան ձիաւոր է տալիս եպիսկոպոսին, որ վերադառնայ վանքը և վերադարձնել ձիաւորները։

Իսկ Աղալար-բէգը ժամանում է հայերի համագումարուած տեղը, յորդորում, խրատում և համոզում նրանց, որ ոչ նշանդիմանան թագաւորանգին և խոստանան պահպանել հնազանդութիւն, որքան ժամանակ որ չարունակուի պատերազմը։ Ապագայում, հայերն էլ այնպէս են անում, և չէն ենթարկվում միւս տեղերի հայերի պէս գերութեան և սրածութեան։ Հայերը խնդրում են Աբբաս-միրզայից որ նա մէկ քանի օր հիւր լինի նրանց։ բայց նա մերժում է ասելով թէ, ես չեմ եկած ձեզ մնաս տալու, եթէ կամենում էք ես դոն լինիմ ձեզանից, գնացէք ձեր տեղերը, պարապեցէք երկրագործութեամբ, որպէս զի ինչպէս ներկայ, նոյնպէս առաջիկայ տարին կերակրէք ձեր ընտանիքը, ձեր անասուններն ու իմ զորքը։ Այնուհետև մինչև քան երեքի տանուտէրների խրատներ է հնարում, և ինքը յառաջ խաղում և հրամայում Աղալար-բէգին, որ վերադառնայ տուրք Յովհաննէս վանքը, այնտեղ սպասէ որ հայերի ձիաւորները անցնելու՝ հարիւր ձիաւոր թողնի վանքին պահապան։ բայց Աղալարն առաջարկում է թէ, վանքը չէ կարող նրանց ձիերը կերակրել, աւելի լաւ է յիսուն թիֆանգչի թողնեմ այնտեղ, որոց ծախսը քիչ կլինի։ Աբբաս-միրզան ընդունում է նրա առաջարկութիւնը, և հրամանագիր է տալիս նրան ու վերադառնում պատերազմի ասպարէզը։

Աղալար-բէգն ասում էր թէ, խաչատուր եպիսկոպոսը ամենեին չհամաձայնեց հայ թիֆանգչիներ թողնել վանքի պարքապի մէջ, ասելով թէ, վաղը միւս օրը հաչտութիւնը կկայանայ, այնուհետև տաճիկները իրաւունք կունենան մեզ հանձնել դաւաճան և ապաստան. այլ թող դռան դուրսը գիւղի մէջ մնան, նոցա պէտքը մենք ծածկաբար վանքից կոնդանք։ Աղալարը համաձայնում է սրան, և այսպէս կարգադրելէն յետոյ, վերադառնում է Աբբասի զլխաւոր բանակը։ Աբբասն էլ վերադառնալու գալիս է սուրբ Յովհաննէսի վանքը, և մէկ գիշեր սթագայում այնտեղ։ Դա շրջում է պարսպի մէջը, և տեսնում է բուրգերի վերայ զետեղած թնդանօթները գերանից շինած, և հրամայում է նրանցից մէկ հատ տանեն թավրիզ, վանքոյ և հարիւր թուման փող է պարգևում վանքին, և գրոյցի մէջ ասում է եպիսկոպոսին թէ, հայերը միշտ և ամենայն տեղ եղած են մեզ հլու և հաւատարիմ հպատակներ. բայց զարմանք է, որ այս անգամ նոցանից ոմանք դրժեցին մեզ, մանաւանդ Բասենի Բաչբանդ գիւղի նահապետ տանուտէրը, որ իւր ձիաւորներովը մեր զորքին մեծամեծ վնասներ

հաստատեց։ Եպիսկոպոսը պատասխանում է թէ «Աստուծոյ, անտառն առանց նաւապետակի չի լինիլ. մի անհատի վատութիւնը երբէք չի վերաբերիլ մի ամբողջ ազգի [1])։

Եւ այսպէս երբ Ռուսաց դեսպան Գրիբոյեդովը սպանվում է Թէհրան, այդ ժամանակ նրա կինը չդի լինելով մնացել էր Թավրիզ։ Աբբաս-միրզան մնում է չուարած թէ ինչպէս անէ, որ նրա կինը Թավրիզից դուրս գայ, գնայ Թիֆլիս և այնտեղ լսէ իւր ամուսնի սպանման լուրը։

Այդ տխուր գործումն Անգլիացւոց դեսպան Մագդոնալդն առաւել ևս մասնակցում էր. վասն զի նա Գրիբոյեդովի հետ Թավրիզ ծանօթացել էր և չատ պատվում էր նրա ամուսնին. վասնորոյ խորհուրդ տուաց Աբբաս-միրզային, որ գտնէ գտնէ մէկ կին, որ դեսպանի կնոջ հետ ընկերակից լինի և աչխատէ համոզել նրան, որ գնայ Թիֆլիս՝ ու այնտեղ ազատուի ծննդաբերութիւնից։ Աբբաս-միրզային արդէն յայտնի էր որ Ազալար-խանի (այն ժամանակ Ազալարը խանութեան տիտղոսը ստացել էր) կին՝ Գոհար խանումը դեսպանի կնոջ հետ երկրացի լինելով, այնքան բարեկամացել էին, որ համարեա թէ միչտ միասին էին լինում, վասնորոյ Աբբաս-միրզան և Մագդոնալդը բերել են տալիս նրան և խրատում, թէ նոքա ինչպէս խօսեն Գրիբոյեդովի տիկին Նինոյի հետ, և եզրակացնեն որ Թավրիզ մանկաբարձ բժիչկ չկայ. վասնորոյ լաւ է որ նա գնայ Թիֆլիս, և այնտեղ ազատուի որդեծնութիւնից։ Ամենայն ոք կարող է երևակայել թէ այս ինչ դժուարին խնդիր էր, այն ինչ տիկին Գրիբոյեդովը երբէք չէր կամենում առանց իւր ամուսնին տրամանին դուրս գալ գնալ Թիֆլիս, մանաւանդ որ Թավրիզէն մինչև Թէհրան 5—6 օրուան ճանապարհ էր, կամենում էր ամուսնիցը հարցնել և ապա ուղղորդիլ. չատոյ, ասում են, թէ դեսպանը գնացել է խորասան չանի հետ։ Ինչ և իցէ դեսպանի կինը համաձայնվում է լսել Ազալար-խանի և Գոհար խանումի խորհուրդին, պատմեաւ, որ եթէ նոքա ևս նրա հետ կուղեկցեն մինչև Թիֆլիս,

[1]) Այդ նահապետ Իբէսի, այսինքն տանուտիրոջ քաջութիւններն Ազալար-խանը պատմել էր ինձ և ես գրել էի, բայց ոչնչացան։ Իսկ Խաչատուր եպիսկոպոսի մասին, մինչև ինձ Ազալար-խանի պատմելը, ես ի բան չիրչել և երկարօրէն լսած էի սուրբ Յովհաննէս վանքի վանահայր Գոլշատ վարդապետից, որ այն եպիսկոպոսի ձեռնասունն էր եղած այդ անցքերին։ Երբ 1832-ին մեռաւ կարապետով անց էի կենում Էրզրումից Թավրիզ գնալիս, տասնիկ ամեն լինելով պարտաւորեցայ հանգրեա տասն օր մնալու այդ վանքումը, ուր դեռ ես կայի այդ թեղանոթներից երեք թէ չորս հատ շարաւած բարդերի վերայ, որ Գոլշատ վարդապետը ցոյց տուեց ինձ։

գոզալ խանումը խորհրդով Մաղդոնալդի առ այժմ համաձայնվում է. բայց դուրս գալու վայրկեանին նա գիտութեամբ իրեն հիւանդութեան է տալիս, մնում է Թավրիզ. իսկ Ազալար-խանը նրա հետ գնում է [1]) Թիֆլիս, ուր, ինչպէս ասում էր ինքը «Նա առաւել դիւրին կհամարէի մէկ բանակ զօրք առաջնորդել, քան թէ մէկ կին, այն էլ չդի վիճակում, այն ինչ պէտք էր անքուն հսկէի որ ոչ ոք կամ յիմարութեամբ կամ անդգուշութեամբ չյայտնէր Դիմսդալին նրա ամուսնոյ այնպիսի սխալ կերպով սպանութիւնը»

Ազալար-խանի Թիֆլիս գալն ու այնտեղ մօտ մէկ ամիս մնալը իմ լաւ մտքս է, վասն զի մէկ քանի անգամ հրաւիրուած էր մեր տանը, ես մեր գրօշկա ասած կառքովը կը գնայի կրեբէի նրան կէսօրին մեր տունը ճաշի.

Երբ գեղջուկ կնոջ Թիֆլիս հասնելը Մաղդոնալդը լսում է, գնում է Ազալար-խանի տունը. նրա ամուսնոյն ընծայում է մէկ ազամանդեայ մատանի. իսկ Աբբաս-միրզան ուղարկում է նրան Գիշմիրի շալ.

1842—1843 թուականին Մահամմէտ-շահի կրտսեր եղբայր Բէհմէն-միրզան նշանակուեցաւ կուսակալ Ատրպատականի, այն սկսեց մինչև վեց ամիս իւր նոր սուրարդութիւնը փորձել, նրանց զանազան գործեր յանձնել. բայց նայեց տեսաւ որ բոլորքեանն էլ կաշառակիրներ են և խաբում են զինքը. իսկ Ազալար-խանը միայն անսպառութեամբ և առանց կողմնապահութեան էր կառաւարում և հաղորդում նրան այն գործերի հանգամանքը՝ զորս յանձնում էր նրան. վասնզոյ և ընդարեց նրան իւրեան խորհրդակից, և հրամայեց որ ամենայն օր, բացի ուրբաթ և կիրակի օրերից (կիրակի օրերը Ազալարն անպատճառ եկեղեցի կյաճախէր) առաւօտեան չյառ չյառալ երթայ դուռը, ներկայանայ նրան, երբ նա առանձնանեանակամը լինի Ազալար-խանը համեմատ նրա հրամանի կերթայ Բէհմէն-միրզայի մօտ, բաւականին ժամանակ նոքա միայնակ կխորհրդակցէին, և նա ուրիշ մէկ հրամանագիր չէր կիրաւում, մինչև հրացրէին, և նա ուրիշ մէկ հրամանագիր չէր կիրաւում, որ ցնէր Ազալար-խանից. Բայց այս պէտք է ասեցրած, որ Ազալարը թէև այնպէս ընդունված էր չանդգայից, այսու ամենայնիւ, նա զինքը ցոյց չէր տալիս թէ այնքան մօտիկ է

---

[1]) Իմ լաւ մտքս է այս արիկեանի Թիֆլիս մտնելու օրը։ Ես ես գնացել էի գարեգիներիս հետ, հանդիպասաս լինել նրա հետ եկող պարտից տերութիւնից Դիմսդալեալ ծառաների մեծ բազմութիւնը, որոնք կարգի մտնելու դեղ կապէր էին հագած։ Ես լեռ մտքս է որ Գրիբոյեդովը նախ քան ուղևորվելն Պարսկաստան, երկու անգամ Ղարսէս արքեպիսկոպոսի հետ եկաւ Ղարսէսեան ուսումնարանը, երբ ես այնտեղ կարդում էի։

չանգայլին, այլ ինչպէս առաջ համեստութեամբ վարուել էր ուրիշների հետ, նոյնպէս և այնուհետև կվարուէր նոցա հետ։

Ազալար-խանը խոնեմ, չրջանայեալ և հեռատես էր. անա նրա հասարակ առածներից մէկ քանիսը. «Լեզուիցս ու գրչիցս երբէք վնաս չեմ կրած, և միշտ աչխատած եմ պատուել ոչ միայն ինձանից մեծերը, այլև փոքր մարդիկը ևս. վասն զի նոքա էլ ինձ նման են։ Ամենայն ժամանակ զրուցելիս քաղցր եմ եղած և մեղմ, մանաւանդ այլազգեաց հետ։ Ես աչխարհս վերայ սրանից աւելի երջանիկ կեանք չեմ ուզեցել և չեմ էլ ուզում ունենալ մինչև մահս։ Մինչ բանի որ ապասել եմ երիտասարդութիւնից, փառք Աստուծոյ, այժմ ծերութեանս լրութեամբ հասած եմ նրան, այսինքն ծերութեանս հանգիստ կեանք վարեմ և մեծիս մտ վարկ ու յարգ ունենամ։ Ջներս չեմ մեծացրած ու բարձրացրած, որ ուրիշները ճանաչեն։ Դեռ ևս զուռա մեծ չեմ բաց արել, չայլ չեմ ապրած, չեմ պահած աւելորդ սպասաւորներ, ձիեր, ջորիներ, որ պարքի տակ չընկնեմ։ Կաչառք չեմ կերած, որ տուողի առջևը ամօթով մնայի. ուրիշների ինձ ժլատ անուանած ժամանակ չեմ նեղացած. բայց երիտասարդութեանս ժամանակ ապրել եմ չափաւոր, եթէ զրկել եմ, զրկել եմ իմ անձն և ոչ թէ ուրիշները, որպէս զի չայլ ապրէի. թէ հաւաքել եմ կարողութիւն, ծերութեանս համար եմ հաւաքել» և այլն։

Ազալար-խանը պատմում էր թէ՝ Պարսից և Ռուսաց պատերազմը վերջանալէն յետոյ, Աբբաս-միրզան ուղարկեց ինձ ժեներալ Պանկրատեի մօտ պաչտօնական գործի համար։ Այս լսելով որ նոքայրս միրզայ-Աբբասամբ, կուսակալների գլխաւոր թարգմանն է, և նրա որդի միրզայ-Ազան (Միքայէլը) ևս, պատերազմումը Պանկեիչի թարգմանն է, առաջարկեց ինձ վերադառնալ Թիֆլիս, ուր կարող եմ աւելի փառքի և պատուի հասնել և երջանիկ կեանք վարել և այլն։ Ես պատասխանեցի թէ՝ մեր մէջն առած է որ՝ «քաղաքամեայ հասակում ով որ նուազածութիւն սովորէ, նա այն կեանքումը կածէ իւր նուազը։ Ես մեր 40—45 տարի հասակ ունիմ, այսուհետև ինչ արդիւք կամ ծառայութիւն կարող եմ մատուցանել ձեր տէրութեանը, որ արժանանամ այն փառքին ու պատուին, որ այժմ այստեղ ունիմ։ Պարսից տէրութիւնն իմ երկրամեայ ծառայութիւնների համար ապահովցրած է իմ ապագայ կեանքը, ուրեմն եթէ դու լինելիր իմ տեղը, կհամաձայնելիր արդեօք թողալ այս ներկայ բախտաւոր վիճակն ու կերթայիր Ռուսատան երկայայական և ապագայ յուսոյ։» Հաչաութիւնն աւարտելից յետոյ, աւելացնում էր նա, եղբօրս որդի միրզայ-

Աղան ես չատ ստիպեց որ գնամ Թիֆլիս. բայց ես նրան ես կրկնեցի նոյն խօսքերը, ինչ որ ասած էի Պանկրատեանին. Հուսկ յետոյ հայազգի վեհագն Լազար Եպիսկոպոս Լազարեանը խորհուրդներ էր տալիս ինձ վերադառնալ Թուսատան. իսկ ես նրան ես մերժեցի, որպէս և այլոց. Աղալար-խանը վախճանեցաւ 1846 թ. Յուլիսի 26-ին, և թաղուեցաւ Թավրիզի բերդի մէջ եղած սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ գաւթի հին պարտէզի հիւսիսային կողմում, հին առաջնորդարանի առջեւ. նրա կին Գեւոգալը խօլերայից վախճանեցաւ նոյն ամսոյ Հոկտեմբերի 26-ին.

Աղալար-խանի կեանքից ամենայն մարդ չատ բարոյական խօսքեր ու գործեր կարող էր սովորիլ. բայց, կրկնում եմ, մեղք որ իմ բազմամեայ աշխատանքով ժողովածները կորան ու անհետացան.

Լ.

ՄԱՆՈՒՉԱՐ-ԽԱՆ ԷՆԻԿՈԼՕՓԵԱՆՑ ԻՋ-ԱՂԱՍԻ-ԲԱՇԻ ԵՒ ՄՕՀԷՄԻԴ-ՈՒԴ-ԴՈՎԼԷ.

Հրաւիրում եմ պատուելի և պատմութիւն սիրող ընթերցողներին առանձին ուշադրութիւնն այս եղական մարդոյ կենսագրութեան վերայ, որ օտար երկրում, օտար հորիզոնի տակ և օտար տարրի մէջ, որպէս գերի, որպէս ստրուկ, առանց պաշտպանութեան հոգս աղգականների, առանց օր և իրաւունքի ու կրթութեան, ինչպէս նա իւր բնական հանճարով պարտաստանի մէջ պետական և ամենանշանաւոր անձն եղաւ. եթէ մեացել էր Թիֆլիսի նման փոքրիկ քաղաքում և վարատանի նման անենան երկրում, անշուշտ նա կը մեար անենան մէկը, և ի հարկէ չէր կարող այդ անձուկ շրջանում հանդէս դուրս բերել իւր բնական ձիրքերը. բայց Պարսկաստանի նման ընդարձակ տէրութեան մէջ համարեա թէ մնալով և զարգանալով արքունիքի շրջանում, նորա անձնական և բնական յատկութիւնները չմեացին սահմանափակուած, այլ չուսով յայտնուեցան և չինեցին նրան հայակապ անձն, որ և սով յայտնուեցաւ նրան հանդէս դուրս բերելու և իւր ազգականներն ես, որոնք իւրանց ծառայութիւններով եղան Խանի մէջ նշանաւոր անձնաւորութիւններ.

Մէկ պատմական և պետական անձի հիշատակութիւնն ու նրա եղական յատկութիւններ՝ հասկացնելու համար, պէտք է նկարագրել այն ժամանակի և տրված տէրութեան բաղաքականութիւնը, և մեր ժամանակի մարդկանց կեանքն ու սովորութիւնները, որոց մէջ այն անձն ապրում էր, և հանդէս գործ բերել այն խոչընդոտները, որոց դէմ նա պարտաւոր էր մրցիլ։ Վասն զի նրանց մեծութեամբն է չափվում և կշռվում նրա իսկական մեծութիւնը։ Մանուչարեանի անունը շատ սերտ կապված է իւր ժամանակի Իրանի պատմութեան հետ։ Նրա կենսագրութիւնը մանրամասնաբար պատմելու համար՝ պիտի Պարսկաստանի մեջ յիսուն տարուայ անտեսական, քաղաքական և պատերազմական պատմութիւնները գրել, որոնք թէև մեր նպատակից դուրս է, բայց պարտաւոր եմք, սրքան կարելի է համառօտութեամբ պատմել այստեղ, որպէս զի ընթերցողը փոքր ի շատ հասկանայ թէ, Մանուչարն արդարև, Իրանի մէջ շատ երևելի անձն էր, և յայտնի Պարսկաստանի դրացի տէրութիւններին։

Կնեազ Յիցիանով [1]) զօրավարը Ռուսաց զօրքով չու

մաւորին թէ ՀԵՌԷ ամբարում գարի լինէր, ես զօրքին կտայի, և ոչ թէ նոցա ձիերին, որոնք ԵՐԷ սատկին էլ, ինձ փոյթ չէ. և ԵԹԷ չեն կարողանում այդ վիճակով համբերել՝ մնալ այս տեղ, կարող են գնալ ուր որ կամենան, նրանց արգիլող չկայ» և այլն։

Վրաստանի հեծելախումբը Յեղիանովի այդ անակնկալի և խիստ պատասխանից չատ յուզուելով պատրաստվում է վերադառնալ իրանց հայրենիքը։ Այդ լուրը տարածվում է բանակի մէջ. ուստի և մաւորվում են նրանց հետ որպէս չատ թիֆլիսեցի հայեր, որոնք եկած էին բանակի հետ՝ առուտուրի համար, նոյնպէս մտ հարիւր երկրացի հայ գերդաստաններ, որոնք ներգրաված լինելով պարսիկների ծառը լուծից, ուզում էին գաղթել Թուսաց կողմը։

Իշխան Օրբելիանների մէկ մանկատական Լամբ անունով ճորտ սպասաւորը լսելով ազնուականների և այլոց վերադառնալը, փախչում է գնում Պարսից բանակը և յայտնում. Ֆաթհ-Ալի-չահն էլ ուղարկում է Կալար Փիր-Կուլի-խանն ու Շահսէվան-Ալի-Կուլի-խանը վեց—եօթը հազար ձիաւոր և հետեւակ զօրքով, որ գնան Բամբակաձորում գարանամուտ [1]) լինեն և յանկարծակի յարձակուին նրանց վերայ։ Օգոստոս ամսի 4-ին մինչդեռ քրիստոնեայ կարաւանի մէկ մասը Բամբակաձորում ողջուիեամբ իւր հայրենիքը վերադառնալու համար, մէւս մասը իւր առուտուրից առաւ վաստակ ստանալու համար, իսկ մնացեալները Պարսից անտանելի լուծից ազատուելու համար՝ ուրախ ուրախ երգելով, դափ ու զուռնայ ածելով չարունակում էին իւրանց ճանապարհը մխիթարեամբ և անկարգութեամբ, և ահա յանկարծակի պարսիկ գարանամուտներն առաջից ու ետեից չրջապատում են և ամենայարձակվում նոցա վերայ։ Գիւրին է երևակայել, թէ այն վայրկենին ինչ ազմուկ կրաւորական երեխայոց, տղայոց և կանանց մէջ, նաև ինչ չփոթութիւն կծագէր ազամարդոց մէջ՝ օրդան և նրանք քաջ լինէին։ Այսու ամենայնիւ Պարսից պատմութիւնն ասում է թէ «քրիստոնեաները մեծ քաջութեամբ պաշտպանեցին զինքեանս՝ մինչև ցայն աստիճան, որ լռեցին հրացանների թնդիւնները, և պատերազմը փոխուեցաւ գօտեմարտութեան. այսինքն, այնուհետև սուրը, թուրը, խան-

[1]) Описаніе достопам. провинціи въ Арменіи, Егора Хубова. С.-Петербургъ 1812. ст. 65 и 66 Ասում է թէ, այս անցքը պատահեցաւ Եղուարդ, և թէ Վրացի ձիաւորները Հայերի տանից բաներ էին գողանում, վանքերը և թէ Վրացի ձիաւորները Հայերի տանից բաներ էին գողանում, վանքերը և Կենաց Յեղիանովը բարկացաւ և վերադարձրեց նրանց Վրաստան։

չան ու նիրակը չէր գործածվում. բայց ի վերջոյ հագիւ հազ քրիստոնեաները տեղի տուին և յաղթուեցան, և նոցանից ոչ ոք ազատուեցաւ. Թշնամիների դիակներից և գլուխներից երկու կոթող կազմուեցան, և անչափ կնանիք, օրիորդներ, մանուկներ ու պատանիներ գերի վարուեցան Իրան»։

Կնեաղ Ցիցիանովն իւր պաշտօնական թղթակցութեանց մէջ այս անցքն այլ ինն դիմակով է ներկայացնում կայսեր. այսինքն թէև յանցաւոր է ցոյց տալիս Վրաստանի հեծելախումբը. բայց որպէս գերիները, նոյնպէս և թղթակիցների մատնաւոր նամակները վկայում են այնպէս, ինչպէս որ ես գրեցի։ Ցիցիանովի պաշտօնական թղթերի մէջ չէ յիշուած քանի մարդիկ էին Վրաստանի հեծելախումբից, քանի հոգի էին թիֆլիսի հայ վաճառականներից, և օրքան գերուստան կամ հոգի էին Երեանցի գաղթականներից, և կամ նոցանից օրքանը կոտորուեցան և օրքանը գերի վարուեցան. այլ միայն վերիվայր և համառօտաբար յիշելով ներկայացնում է գերի ընկածների մէկ ցուցակը, որի մէջ յիշուած են այս երեսելիները։ Ի շ խ ա ն ազ ա ն ե ր. — գեներալ-մայոր և սարդար Իվանէ Օրբէլեանի. Ալան, Զուբաբ և Սօլոմոն Օրբէլեանք. Լաւարաբ Ամիրայ շվիլի (որդի). Եօսէփ Շալիկայ շվիլի, Ռէվազ Բարաթա շվիլի, Երեմիա Մուխրան-բատմնի շվիլի, Բէժան Բէհրութեանց, Դաւիթ Բարաթա շվիլի, Ռէվազ Թարխանա շվիլի, միւս Դաւիթ Բարաթա շվիլի։ Ա զ ն ա ւ ա կ ա ն ն ե ր.—Զենգուր Էնիկոլօփեանց, Ռոստոմ Մելիքեանց, (Անգրէ) Ղայբմազանց, Դէօրգի Ղօրղանեանց, Ռէվազ Թաղի որդի (Երկայնաբազուկ Արզումեանց), Դաւիթ Թաղայ շվիլի, Զաքարիանի Խաչատուր (Բէրուանց)։

Մասնաւոր թղթակցութիւններից երևում է որ բացի վերոգրեալ մարդկանցից, այլ ևս շատ իշխանազուններ և ազնուականներ են գերի վարուած, զորօրինակ Թամազ Օրբէլեանի, Թաղայ Երկայնաբազուկ-Արզումեանց, Սօլոմոն Թարխանայ շվիլի, Թէյմուրազ Բագրատիոն, Իսան Մելիքեանց, և ազնուականներ Նէնիայ (որ յետոյ Նունի-խան) Բագրատայ-շվիլի, Սօլոմոն Ղօրղանեանց և այլք։

Գերիների մասին երկար միջոց երկու տէրութիւնների մէջ բանակցութիւններ եղան, ի վերջոյ խառնուեցան Դանիէլ և Եփրեմ կաթողիկոսներն ևս։ Նոցանից ոմանք իւրեանց ազգականների գրամոլն ազատուեցան, ոմանք փախան գնացին իւրեանց հայրենիքը, ոմանք մաչուցան բանտերում և մեռան, և չատերը հաւատափոխ եղան կամ ներքինացրին, և ոմանք էլ կաթողիկոսների միջնորդութեամբ կամ էջմիածնա-

կան դրամով ազատուեցան և վերադարձան իւրեանց ընտանիքի մօտ։

Փիր-Գուլի-խանը վերոյիշեալ յաղթութիւնից յետոյ գընում է Թաւրիզ, և որպէս ընծայ ներկայացնում է շահին վեց գեղուշէշ, առոյգ, չքեղադէմ պատանի գերիներ, որոնց մէջը լինում է մեր առաջիկայ Զօնգուր Նիկոլօփեանցը. իսկ միւսներն էին Անդրէ Ղայթմազեանց, Յակոբ Մարգարեանց Երևանցի և երեք ռուսներ [1]։ Շահը փոխում է բոլորի անունները և Զօնգուրը վերակոչում Մանուչար կամ Մանուչէր և անմիջապէս էլ հրամայում է ներքինապետին որ ներքինացնել այն վեց գերիները արքունական կանանոցի համար։

Մանուչարը զոլով ընական ուշիմ և տեղեակ տանկերէն լեզուին, գերի ընկած օրից առանձին մեկ ազդեցութիւն է ստանձնում իւր գերեկիցների վերայ. թէհրան ուղարկելէն մէկ օր առաջ ներկայացնում են նրանց Աբբաս-միրզային, երբ և Մանուչարը համարձակվում է կամ լաւ ևս ասել, ընդդէմ իրանի սովորութեան, յանդգնում է և առաջարկում թագաժառանգին թէ՝ երբ ներկայանանք Տիզերբի Աղօթարանի տոից հողին, ինչ արզ (խնդիր, աղաչանք) անենք թագաժառանգի շնորհի և առատաձեռնութեան մասին։ Աբբաս-միրզան հրամայում է որ նրանց իւրաքանչիւրին շնորհեն մէկ-մէկ ձեռք շոր, և հինգ հինգ թուման դրամ, յարելով թէ՝ «ահա այս արզ կանէք Տիզերբի Աղօթարանի տոից հողին»։

Նրանց ուղեկից են անում նաև չորս օրիորդներ, երկուսը հայ գերուհիներ՝ բերած Ջանկասանից, մէկ հրէուհի և մէկ քրդուհի։ Ճանապարհից ոչ կենալիս իջեցնում են նրանց՝ կառավարիչների պալատում, որոնք նոյնպէս իրանի սովորութեամբ հագուստներ և փոքր թէ՝ չատ էլ դրամ են պարգևում նրանց։

Թէհրան յանձնում են այդ փոքրիկ կարավանը ներքինապետ Ազայ-Նազուբ-Ռուխուլիին, որ և ուղարկում է նրանց բաղնիք, որ ներկում են նրանց ձեռքերն ու գլխի մազերը (քանքալ) հինայով, նոր նոր հագուստներ հագցնում և իրամատում թէ՝ ինչպէս նոքա գլուխ տան շահին, ինչպէս պատաս-

---

[1]) Ըստ որում Մանուչարի, Խոսրովի և Յակոբ Մարգարեանի կենսագրութիւնները գիտանց հետ յարաբերութիւններ ունին, վասնորոյ և նեղրուանի կը խնդրենք ընթերցողներից, որ ինչ որ նոցա մէջ գրեցինք, այսուհետ կը խնդրենք ընթերցողներից, որ ինչ թէ ներքնացրած, երկրորդ թէ՝ երկրորդեցինք։ Երեք ուսա գերիները որպէս թէ նոր հագուստներ հագցրած երբորդ գիշերը գաղտնի սաղ ջուր են խմում (արգիլած է լինում նրանց սաղ ջուր խմելը)։ ուստի և մեռնում են, որոնց անունները մեզ անյայտ մնաց և Լուսաց պատմութիւնների մէջ չգտանք։

խանին նրա հարցումներին և ինչ տիղմոներ տան նրան և այլն։ Այս անգամ շատը մեծ սիրով է նայում նոցա վերայ, և զանազան հարցեր առաջարկելով պատասխանում է ինչ ինչ տեղեկութիւններ նրանց ճանապարհորդութեան մասին, և թէ բաւական էին արդեօք նոցա ուղեկից հիւրընկալից և այլն, և այլն։ Այդ ամէն հարցերին մանրամասնաբար պատասխանում է Մանուչարը պէտք եղած քաղաքավարութեամբ, որով չատը յանձնում է նրանց Քութուլին և հրամայում որ լաւ հոգէ նոցա վերայ, կրթէ կանանոցի քաղաքավարութեամբ, պատրաստէ իւրաքանչիւրը մէկ մէկ արժանաւոր պաշտօնի համար և այլն։

Մանուչարի մեծ-մեծ և արթուն աչքերը, սեւ լոյն և կամարաձև յօնքերը, սպիտակ արիւնախառն երակներով տիպիկ դէմքը, մանաւանդ նրա մէր, աչխոյժ, դիւրաբարբ և դիւրաշարժ լինելը, որ և իցէ, ում և իցէ հրամանը կամ յանձնարարութիւնը կատարելու համար, փութով դրաւում է Քութուլիի և միւս երեսի ներքինիների համակրութիւնը, վասնզորդ և Քութուլին աշխատում է նրան նախապատրաստել ներքինապետութեան պաշտօնի համար։ Շատերը պատմում էին թէ, իբր վերջինս նախագուշակած լինի և Ֆաթ-Ալի-շահին էլ ասած իւր նպատակը։ Նոյնպէս իբր Մանուչարը չատ յիսոյ յանձն կրնեած լինի բարութեան մէջ թէ՝ «իմ առաջադիմութեան համար ես պարտաւոր եմ Քութուլին։ վասն զի երբ մենք միաչնակ լինէինք, նա չատ խրատներ կտար ինձ, և իմ սխալները երեսիս կասէր և կաւելացնէր թէ «դու չատ յատ կութիւններ և յարմարութիւններ ունես ներքինապետ լինելուստի աշխատէ այժմէն իսկ որ խոհեմութեան, ուշիմութեան և համեստութեան անուն վաստակես, որպէս զի ժամանակով կարողանաս այս իմ պաշտօնը ձեռք բերել»։

Մանուչարն իւր նախնական վիճակը միտ բերելով, երբ հոյակապ անձն էր եղած, ասում էր թէ՝ «երբ ես դերի վարուեցայ, կենդանի յուսով սպասում էի ազատուել եղբօրներիս ջանքով. բայց երբ ներքինացրին ինձ, այնուհետև ի զուր եղաւ նոցա վերայ դրած ակնկալութիւնս. ուստի սկսեցի հոգալ իմ ապագայ կեանքի մասին, չատ խորհեցի, մտածեցի, տեսայ որ ուրիշ ճար չկայ, բացի փող ժողովելէն, երեակայեցի որ ռուսները Պարսկաստանի մէջ չեն մնար, անպատճառ կվերադառնան իւրեանց հայրենիքը, ինչպէս մենք ցայսօր մէկ քանի անգամ եկած ու կրկին դնացած են, այն ժամանակ ես ես հարստութիւնս ուժգոր երեսի պաշտօնով կերթայի Պարսկաստան, ուրեմն պէտք է փող ժողովել։ վասն զի աչ-

խարիսխ վերայ ամենայն զորք փողով է կատարվում։ Թավրիզից մինչև Թէհրան մէկ քանի ձեռք հազուստներ էին պարգևել ինձ, առանց հաղնելու. բերի Թէհրան վաճառեցի. մէկ քանի թուման փող էլ ճանապարհներին նոյնպէս պարգև էի ստացել, մինեանց վերայ բարդելով եղան քառասուն թուման։ Այդ փոքրիկ գրամագլուխը ժամն ժամն տուի վաչխով կանանոցի տիկիններին ու ներքինիներին։ Օր ըստ օրէ նրանց վաչխը բարդելով գրամագլխիս վերայ չուտով բազմապատկեցաւ, եղաւ հարիւր թուման, թէև ուրիշները երեսակայում էին, որ ես շատ ունէի փող ունիմ։ Այդ փոքրիկ գումարով կանանոցի մէջ ստացայ յարգ, վաճառականների մօտ վարկ և Քութուլլի մօտ համարումն։ Ցիրաւի, ժառանգեցի կոչումս ուիշտ, բայց մինոյն ժամանակ ինձ ուիշտ անուանողները չէին կարողանում չյարգել ինձ, որովհետև ապագայ ունկնդրութիւն ունէին ինձանից և կամ թէ փոքր պատուի համար էր,—բայց ինձ ինչ փոյթ։

Շատ ժամանակ չանցան Մանուչարն իւր հաւատարիմ գործունէութեամբն ու Քութուլլի պաշտպանութեամբը հետզհետէ անուանի է լինում, որով և չարը ընդհանում է նրան պատուանունս փոխանորդ աղայ, այսինքն Դայիր։

Երբ Մանուչարն մեծ եղբայր մերդայ-Թոսոմը գալիս է Թէհրան, որ ազատէ իւր կրտսեր եղբայրն ու Թիֆլիս վերադարձնէ, այն ժամանակ նա զրոյցի մէջ ասած է լինում Քութուլլին թէ՝ իւրեանց մայր Ռակումը գիտէ թուրքերէն, և փոքր ի շատէ էլ պարսկերէն. ուստի այժմ Քութուլլին խորհուրդ է տալիս Մանուչարին, որ նա գրէ բերել տայ Ռակում խանումին Թէհրան, ուր նա ներկայանայ չէնին ու նրա տիկիններին, և հետզհետէ ծանօթանայ բոլորի հետ, որով Մանուչարը մեծաքայլ յառաջադիմութիւն կունենայ, մանաւանդ և պարսիկները վստահանալով Մանուչարի վերայ, մեծամեծ պաշտօններ կյանձնեն նրան, եթէ նրա ներքինապետութիւնը չյաջողի։

Խորով-խանն այդ անցքի մասին այսպէս էր պատմում, այն ժամանակ քրիստոնէութիւնը պատանի և երիտասարդ ներքինիներին և ուէիների մէջ սաստիկ գաղտնի էր և չէին կարողանում որ և իցէ եղանակաւ կատարել իւրեանց կրօնական ծէսերը, որոց ծանօթ էին միայն տեսական կերպով։ Եւ որովհետև մեր մէջ Քութուլլին հաւակով և պաշտօնով ամենից երիցագոյնն էր, տեսնելով որ գերիները մինչև չունին ժամերգութիւն լսելու, որով անչուշտ կշկՉանի նրանց մէջ քրիստոնէութիւն կայծը, ստիպում է Մանուչարին բերել տալ իւր

մայրը, որպէս զի քահանան կարողանայ երբեմն երբեմն յանձնել նորա մօտ ժամերգութիւն կատարելու, երբ և գերիները կամ գերուհիները իրր թէ այցելում են Ռոկումին, կարողանան ոչ միայն ժամերգութիւն լսել, այլև ով որ նոցանից կամենայ, կարողանայ խոստովանուիլ ու հաղորդուիլ։

Ռոկում խանումն ուրախութեամբ է ընդունում իւր միակ և սիրելի որդւոյ հրաւէրը, և ուղևորվում է դէպի Թէհրան. Ջուղայից անցած ժամանակ իշխանեցու մեր տանը, ու մէկ քանի օր կացաւ Երասխի յորդառատ լինելու պատճառաւ, մինչև ջուրը վարարութիւնից զլիջաւ։ Այս պէտք էր 1818—1819 թուականում լինէր, երբ ես երեխայ էի։ Նա տուեց ինձ մէկ քանի բուռն ունաբ և երկու հատ սուլոյզ (չուլիսկայ), որոնցից չէի կերած և անուններն էլ չգիտէի։ Նորա ինձ մոր-գեղէն տալը և նրանց անունները ինձ ասելը, այլև նրա դէպքն ու հագուստը, մինչև ցայսօր մտի կերպով մտում է գալիս։

Նա իշխանազն Ցակոբջան-աղայ Ամատունոյ աղջիկն էր՝ ծնած Համադան, և դեռ չէր մոռացած պարսկերէն լեզուն, որ սովորած էր Համադան երեխայութեան ժամանակ. իսկ թուրքերէն լաւ կիսօսէր, վասն զի նրա ամուսնի, Լենիկօլովանց տանը, մեշտ թուրքերէնը գործ կածուէր, ըստ որում նրանք վրաց իշխանազունների, այսինքն իշխանապետների թարգմանների պաշտօնը կվարէին։ Եւ յիրաւի Ռոկումի թէհրան գալը այնչափ աւելացրեց Աղայ-Մանուչարի վարկը տէրութեան առջև, որ նրա ընակարանում երբեմն երբեմն գերուհիներ և նեղքինի գերիներ կժողովէին և իւրեանց մայրական լեզուովը ժամերգութիւն կը լսէին։ Այս տիկինը իւր խելացիութիւնով, ճարտար լեզուով, անեղկիւղ բայց միշտ վայելուչ համեստութեամբ մեծ համբաւ ստացաւ թէհրանի բոլոր երեսելի գերդաստանների մէջ, և այնպիսի անարգել ելմուտք ունեցաւ շահի կանանոցի մէջ, որ շաբաթը մէկ անգամ գոնէ պարտաւոր էր գնալ, այցելել, երբ և շահը նրա հետ երկարօրէն կիսօսէր։

Մէկ օր շահը հարցնում է թէ «Ռոկում խանում, ինչպէս տեսար մեր Իրանի տիկիններրը»։ Ռոկումը պատասխանում է թէ «Տէր արքայ, իմ կարծիքով Իրանի տիկիններն կարճ հագուստները՝ պէտք է հագնէին տղամարդիկը. իսկ տղամարդոց երկար հագուստները — տիկիններս, որոնց ոչ միայն գեղեցկութիւնը առաւել ևս կիսայլեր, այլև կերազանցէր նոցա համեստութիւնն ու պարկեշտութիւնը, որ նոցա համար առաջին զարդն է»։

Դարձեալ Ֆաթ-Ալի-շահը մէկ օր կատակի ձևով ասում է

Ոսկումին թէ «Ալիրսէի խան, այսինքն խանի մայր (երբ Մանուչարը խանութեան ոտքուս սատցաւ, այնուհետև չէր երբան այսպէս էր անուանում), արի դու ես Մանուչար-խանի, Խոսրով-խանի և Մերզայ-Գուրգէն-խանի պէս մուսուլմանութիւն ընդունիր»։ Նա պատասխանում է թէ «Տիեզերքի Աղօթարան, ում անունը կամենաք յիշել, յիշեցէք. բայց Գուրգէնի անունը խնդրեմ չյիշէք»։ Շաւը հարցնում է թէ «ինչ»։ Ոսկումն ասում թէ «Էնէ սրգէն դրբ, նէ բրգէն, ջրնանանն օրթասարդէն» այսինքն,—նա ոչ ձեզանից է և ոչ մեզանից, այլ գժոխքի մէջտեղիցն էր»։ Շաւը «ալա», պաշ է անում սրա վերայ և չատ ծիծաղում։

Նոր-Ջուղայեցի զառամեալ Տէր Յովհաննէսը պատմում էր «թէ իմ թէհրանի հայոց հովուութեան ժամանակ Ոսկում խանումը չատ էր ստիպում, որ ես պատարագ մատուցանէի նրա տանը, որպէս զի քանի մը տիկիններ խոստովանցնէի և խսկոյն հաղորդէի. բայց ես կմերժէի պատարագ մատուցանելը, վասն զի վէմքար չկար այնտեղ, թէև չատ անգամ ոչ միայն կանայք, այլև ազատարդիկ ես այնտեղ խոստովանցրել եմ և հաղորդել։ Քրիստոսի սուրբ Մարմնիցն ու Արիւնիցը։ Մէկ անգամ Ոսկումը կանչել էր ինձ չտապով. ես հասկացայ որ մէկ տարաղէպ անցք էր պատահել. ուստի մատնատանն (ըստ սովորութեան) ծոցումս դրի ու գնացի։ «Այս ինչ խանի կանանոցում մէկ հայ գերուհի տիկին կայ, ասաց, որ մեռած մահ է. նա կանչել էր իմ ազախին Մարիամը և նրա բերանով ազերսական արտասուքով ապատարել էր Սրբութիւն հասցնել նրան, որ անհազորդ չը մեռնի։ Եւ սրտմտան դու չես կարող մտնել այն կանանոցը, ուրեմն պիտի սրբութիւնը յանձնես Մարիամին, որ տանի նրան հաղորդէ [1]։ Ես ասացի չեմ կարող այն Սրբութեան մասնատուփը յանձնել նրան. ուստի և պէտք է վերադառնամ եկեղեցին մէկ ուրիշը բերեմ, մէկ մասնիկ նրա մէջ ամփոփեմ ու այնպէս յանձնեմ Մարիամին։ Ոսկումը գնաց ներսն սենեակից մէկ բոլորտին նոր տուփիկ բերեց. խնդրեց որ Սրբութիւնն ամփոփեմ նրա մէջ, և էն նոր մասնատուփը Մարիամին տամ։ Մարիամը գնաց, Ոսկում խանումը ինձ նստացրեց. սուրջ, թէյ խմացնե-

---

[1]) Հայոց եկեղեցւոյ սովորութեամբ հաղորդութիւնը քահանայի ձեռքով կը տրուի հիւանդին, երևի թէ Տէր Յովհաննէսը չէ կարողացել ընդդիմանալ Ոսկումի խնդրանացը, որ հարկադրուել է մասնատուփը ղրկել Մարիամի ձեռքով։

լու, և թոյլ չտուեց որ զուրս գամ, մինչև Մարիամի վերադառնալը։ Վերադառնալից յետոյ՝ Ռոկումը նուիրեց այն տուփը եկեղեցիին, որ այնուհետև այնպիսի մէկ դէպք պատահելիս չմոռանայի հետս տանելու։

Ի վերջոյ՝ որպէս Ազգային Պատմութեան նշխար, այս էլ աւելացընենք։ Լսած էի որ Ֆաթ-Ալի-շահը հանել է մէկ ժամանակ գանձարանից սուրբ Խաչափայտի մասը և պարգևել է Ռոկումի խանումին։ Ոմանք ասում էին թէ սուրբ Խաչափայտը մնացած է եղած Նադիր-շահի ժամանակից, ոմանք էլ պատմում էին թէ, Հնագետցի Դաւիթ ինքնակոչ կաթողիկոսն էր տուած Ֆաթ-Ալի-շահին։ Վերջինս աւելի հաւանական է, վասն զի եթէ Նադիրի ժամանակ այդպէս մէկ անգք պատահած լինէր, Աբրահամ կաթողիկոսը չէր թողնիլ առանց յիշելու իւր պատմութեան մէջ։

Ինչ և իցէ, թէհրանի մէջ պատմեցին ինձ ծեր մարդիկ թէ՝ մէկ գիշեր Ֆաթ-Ալի-շահը երազումը տեսնում է որ իւր գանձարանում կրակ է փայլում, ուր որ այս երազը պատմում է, ոչ ոք չէ կարողանում մեկնել։ Ռոկումը լսելով որ շահը Խաչափայտի մասն ունի գանձարանում, և թէ վերը պատմածիս պէս երազ է տեսած, վանդոյց մէկ օր ասում է շահին թէ «Ցիլզերքի Աղօթարան, նրա համար այդպիսի սոսկալի երազ ես տեսել, որ սուրբ Խաչափայտը բանարկել ես. ուստի խնդրեմ շարէՔ ինձ, որ տանեմ պէտք եղած պատուոյը պահեմ, և հաւատացէք, որ այնուհետև Ցիլզերքի Աղօթարանը՝ այնպիսի սարսափելի երազ չի տեսնիլ»։ Շահն էլ որպէս թէ կատարում է նրա խնդիրքը։

Իսկ միրզայ-Ֆուրդէնն ուրիշ կերպով էր պատմում այդ անցքը։ Նա ասում էր թէ, Ռոկումը լսել էր որ՝ շահի անձնական գանձարանի մէջ կայ սուրբ Նշանը, վանդոյց մէկ անգամ շահի ուրախ ժամանակ դրոյց է բաց անում այն սուրբ Նշանի հրաշագործութիւնների վերայ, և աւելացնում է թէ, որովհետև աշխարհիս բոլոր քրիստոնեայ ազգերը հաւատով պաշտում են սուրբ Խաչափայտը, ուստի լաւ կլինի որ Ցիլզերքի Աղօթարանը պարգևէ ինձ, և ես տանեմ իմ սենեակում բարձրացնեմ, և խունկով ու մոմով պաշտեմ ու Ցիլզերքի Աղօթարանի կեանքի երկարութեան համար աղօթեմ։ Շահը խոստանում է տալ. բայց կամ մոռանում է և կամ զղջանում խոստացածը կատարել, մինչև որ բաւական ժամանակ անցած, շահը երազում տեսնում է գանձարանի մէջ հրդեհ, մրան և բերում իւր խոստումը, մարդ է ուղարկում, բերել տալիս Ռոկումին և սուրբ Նշանը պարգևում նրան։ Ռոկումն էլ ուխտ է

անում, որ Թիֆլիս վերադառնալիս տանի այդ սուրբ Նշանը յանձնել Էջմիածին կաթողիկոսին։

Երբ Ասկումը լսում է Սալոմոն Մելիքովի սպանութիւն ու հարստածով վախճանվում է (տես Ազգայ-նյութերք Մարգարեանի կենսագրութեան մէջ), նրա աղախին Մարիամը գաղտնի թէ յայտնի առնում է այն սուրբ Նշանը, տանում Գիւրիկ-քան գաւառը, ուր նա ծնած էր, երկու տարի պահում, որպէս զի միջոց գտնէ տանել Էջմիածին և կատարել իւր բարեպաշտիկի ուխտը, և նրա վերեվմանն օրհնել տայ։ Քանի՞սի այն կողմերը տատիկ սով է ընկնում. ուստի այդ կինը, թէև կարգութիւն ունէր, բայց սովը պատրուակ բերելով, առնում է իւր գաւակները, մուս այնտեղի հայ ժողովրդի հետ, որ գնայ Թավրիզ, այնտեղից ուխտագնացութեան անուամբ, անցնէ Երասխը, գնայ Էջմիածին, ճանապարհներին բացի սովից գանդատան դժուարին արգելքներ պատահելով նա պարտաւորվում է ունեցած չունեցածը վաճառել մսխել, և յետոյ իւր մեծ որդին էլ դրա դեմ մէջ պարսկի մօտ, թատրոնատարկ, տիլոր, քաղցած, ծարաւ հինգ թոռը գաւակների և մէկ հարսով գալ հասնել Թավրիզ, ուր էին և ես։ Այս վշտալի և անասելի վիճակով ոչ միայն նա, այլև մնացեալ քառասուն գերդաստանի անհատներ մուրացկանութեամբ, ոմանց տուն և խանութից խանութ մուրալով շրջում էին և անհանգիստ անում քաղաքացիներին ու օտարականները. այս պատճառաւ ստորագրութիւն բացինք, փող ժողովեցինք ու նոցա տուինք, որ առժամանակ կառավարութիւն և չմուրան։ Արարատեանի թեմական առաջնորդ Նիկողայոս Եպիսկոպոսը լսելով որ Մարիամ մօտ խաչափայտի սուրբ մասը կայ, ստիպում է որ բռնութեամբ իսկ գայն Մարիամից։ Վերջինս դիմում է ինչ ինչ օտարականների թէ ես այդ սուրբ Նշանի պատճառով դուրս եկի իմ ծննդեան երկրից, փոխանակ 15—20 սրում ժամանելոյս, 2—4 ամիս չարունակեցի ճանապարհս, օգնելով չատ անգամ երկրացիներիս։ իսկ ես այսօր տեսնակացեալ, ուզում է առաջնորդը զրկել ինձ, և իսկ սուրբ Նշանը ինձանից։ Վանատոյ և մէկ քանի հոգի, յորոց մէկին էլ ես էի, փող ժողովեցինք, տուինք Մարիամին, որ զրկէ իւր որդիի ազատութեան և իւրայնոց սենդեան համար, ու սուրբ Նշանը, նրանից որպէս թէ գնեցինք, և մեր մէջը բաժին բաժին արինք։ Այդ իմ բաժին սուրբ խաչափայտի մասը երկար ժամանակ մեր տանը՝ Թիֆլիս բաղված էր, և չատ ուխտաւորներ կգային տանը՝ Թիֆլիս կամաւորութիւն։ Բայց երբ մեծ եղբօրս երեք երկրագործութիւն կամաւորանվեցան, մեր բոլոր ազգա-
և իմ երկու գաւակներս վախճանվեցան, մեր բոլոր ազգա-

կանները, որպէս և մեր տան քահանան, միաբերան գոչեցին թէ՝ այդ մահը նրա համար է, որ ձեր տանը սուրբ Նշանն էք պահում. ուստի և ես նուիրեցի զայն Թիֆլիսի Քարափի ասած եկեղեցին, ուր կայ մինչև յայսօր։

Փախստական ռուս երեսելի Սամիսան-խան Մականցով զօրապետը կպատմէր թէ Ոսկում խանումը մէկ գնդասեղի մեծութեամբ պարգեւեց ինձ սուրբ խաչափայտից, որ պատերազմ գնալիս միշտ կկրեմ կուրծքիս վերայ. իսկ երբ տանը լինիմ կրազմացնեմ առանձին սենեակում, ուր գիշեր ցերեկ կանթեղ կվառվի։ Հարիւր անգամ այդ սուրբ Նշանը ճրագից կախ արած, մտած եմ պատերազմի ասպարէզ. հազարաւոր գնդակներ թափուած են վրէս, բայց զօրութեամբ խաչափայտի՝ ոչ մէկ գնդակ չէ դիպած ինձ, այլ միայն երեք անգամ թուրից վէրք եմ ստացած։

Այժմ վերադառնանք դէպի մեր առարկան։

Մանուչարը վաճառականների հետ իւր ունեցած յարաբերութիւնովը հանրածանօթ է լինում. վասն զի նա որպէս ներքինի կարող էր արձակ համարձակ երեսմուտ ունենալ որ և իցէ կանանոց, և այժմ ոչ միայն արքունիքի, այլև արքայազունների, պալատականների և բոլոր մեծամեծների կանանոցների առեւտուրն ես բոլորովին հաւաքել էր իւր ձեռքը, և ում, ինչ ճոթեղէն, չալեղէն կամ զոհարեղէն հարկաւոր լինէր, եթէ նրանից չգնէին, գոնէ կուզարկէին նրա մօտ գնահատելու, որա համար այդ գործով զբաղուող ներքինիները նախանձից զինաւորվում են ընդդէմ նորա, որոց մէջ աւելի հզօր ախոյեաններ հանդիսանում են նրա գերեկից և սիրելի Խոսրով-խանն ու Աղա-Նազուբ Մարզարեանը։ Քուէնտլին անմիջապէս հաստատում է նրանց և խորհուրդ տալիս, որ չարունակեն այդ առեւտրական գործն ընկերութեամբ։ Նոքա էլ իրանց հարիւրները կարգով պահելոյ համար, նախ՝ վարձում են Հնդկաստանից եկած Նոր-Ջուղայեցի մէկը Յոսեփ անունով, հմուտ տօմարագիտութեան և առեւտրական գործերի, որ բաւականին ընդարձակում է նոցա առեւտուրը, և ապա վարձում են Թիֆլիսից Շեխէնց Սամուէլը, և սկսում են չարունակել աւելի փութով ու եռանդով, այն ինչ յայտնվում են ուրիշ նախանձոտներ ևս, բաղկացած պարսիկ ներքինիներից, որոնք զբաղում են ինչ ինչ տիկիններ, որ բոլորքն չահին Շահը չէ կարողանում անտարբեր մնալ, և սկսում է անձամբ քննել այս գործը. որով տեսնում է որ չարախօսների բողոքները զբաղարութիւններ են, մանաւանդ որ Քուէնտլին էլ իւր կարծիքն է առաջարկում չահին՝ թէ փիսական պարսիկ ներքինի-

ներն ըստ մեծի մասին երևելի գերդաստաններից և երևելի ցեղերից են պատժի համար ներքինացրած. Եթէ ոչա հարբատանան, կենդանութեան ժամանակ կը կտակեն իւրեանց հարստութիւնը, կամ հէնց կենդանի ժամանակ կտան իւրեանց ազգականներին, կամ թէ հարստութեամբ հարբատանալով կմտնան իւրեանց ցեղերի հետ, կյանդգնին ապստամբել ընդդէմ տէրութեան, որպէս քո հօրեղբայր Աղա-Մահամմէտ-շահը, կամ նրանից առաջ ևս Պարսկաստանի պատմութիւնների մէջ շատ անգամ պատահած են, որոնք և հետամուտ են եղած թագաւորական գահին. իսկ այս ներքինի գերիների հարստութիւնը վերջ ի վերջոյ մնալու է քեզ կամ քո սերունդին. և նոքա, այդ գերիները, չունենալով նրանի մէջ ցեղ, ժողովուրդ, մինչև անգամ ազգականներ, ուրեմն և երկիւղալի չենք։ Շահը շատ հաւանութիւն է տալիս Քութուլիի կարծիքին, և հրամարակով վճռում է թէ «Ազատ են գնողները և ազատ են վաճառողները, ուրեմն ով որ արժան կվաճառէ, թող նրանից գնեն»։

Այնուհետև Մանուչարի ընկերութիւնը ոչ միայն յայտնի համարձակ չարտնակում է իւր գործունէութիւնն ու գործառնութիւնը, այլև կամ գործակատարներ է ուղարկում, կամ թղթակիցներ է գտնում Թաւրիզ, Հաչտարխան, Դաշտ, Կոստանդնուպոլիս, Բաղդատ, Բուշիր, Մաղրաս և Կալկաթա անցամ, որպէս զի ոչ միայն կանանց վերայ վաճառելու, այլև ի վաճառ հանելու գանազան հազուագիւտ ապրանքներ ևս գնեն և ուղարկեն Թէհրան. և ինքը, ընկերութիւնը, Դաշտի մնաքաս, մարգարիտ և թիրմայ Քէշմիրի, և Քիրմանի շալեր էր գնում ուղարկում նոցա, որ վաճառեն և նրանց փոխանակ գանազան ապրանքներ գնեն ուղարկեն Թէհրան։ Ճշմարիտ է, ընկերութիւնը բաղկանում էր երեք անդամներից, բայց որովհետև կառավարողը Մանուչարն էր և մանաւանդ գրամագլուխը նրանն էր, վաճառքս և ամենայն տեղ էլ նրա անունն էր յիշվում և ամենայն ինչ նրա անունովն էր սկսում ու վերջանում։

1227 Հիջրին (1812) շահը գնում է Սուլթանիէ ամառանոցը և թողնում է Թէհրան Աղայ-Մանուչարը, որպէս զի վերանորոգել Հաայ արքունիքն ու կանանոցը։ Շահը վերադառնալից յետոյ տեսնում է որ, կանանոցի կողմից փոքրիկ ծակ է բացուած իւր անձնական գանձարանի մէջ. վերահասու են լինում և տեսնում, որ վեց քսակ ոսկի, այսինքն երեսուն հազար թուման փող է պակաս։ Այդ մասին սաստիկ խուզարկութիւններ են լինում, բայց չեն կարողանում գողերի

հեռաբը գտնել (սորա համար պատմած ենք նաև Ասպահանի գանձապետ Զօհրաբ-խանի կենսագրութեան մէջ). վանտորայ արքունականներից մասնաժողով է կազմվում, ի թիւս որոց լինում են թագաժառանգ Աբբաս-միրզան և Աղայ-Մանուչարը. Աբբաս-միրզան պատէպատ կատակներով ասում է թէ «Աղայ-Մանուչար, այն ժամանակը դու վերակացու էիր, ուրեմն և դու ես պատասխանատու, ապաքէն դու հարստահ ես և դիւրութեամբ կարող ես այդ գումարը վճարել, որպէս անզգուշութեան տուգանք, մանաւանդ հշանոյանաս Տիեզերքի Աղոթարանին։ Ի՞նչ արդեօք գանձանուութիւն, որ այդ գումարը մէկ քանի տարի առաջ անցնի շահի գանձարանը, մինչդեռ քեզանից յետոյ քո բոլոր կարողութիւնը պիտի մնայ պետութեան գանձարանը [1]»։ Նորա ծիծաղելով ասածին արձագանք են լինում անդամներից երկուքը։ Աղա-Մանուչարը չընդամբելով այդպիսի խորամանկ ենթադրութեան, զայրացած ասում է «Աղքատազուններ, պարոններ, դուք կամենում էք մարդավարի, կամ պարզ ասած, ազնիւ գող ներկայացնել զիս Տիեզերքի Աղօթարանի աչքում, ուստի և ես ստիպուած եմ իմ համարն ու անունը պաշտպանելու համար ասել ճշմարիտը, որ այդ գողութիւնը ծածկաբար չէ և կամ անյայտ չէ ձեզ, ես չեմ կամենում այժմ մատնացոյց անել թէ ով է այն անձը, բայց յայտնում եմ որ այս մասնաժողովում կայ այնպիսի մէկը, որի թելադրութեամբը պիտի եղած լինի այդ գողութիւնը, որովհետև նրան հարկաւոր էր այնպիսի մէկ դրամի գումար, որով կարողանար իրեն արքունականներ ճարել, ցեղերի գլխաւորներ վաստակել և իրա համար շահութեան թագ նախապատրաստել։ Լեռ նման օտարականի համար ինչ հարկաւոր էր դրամ. նա մանաւանդ ինչպէս և շահին, նոյնպէս ձեզ ես յայտնի է, և ես էլ չեմ ուզենում, որ արդարև հարստահ եմ, ոչ որդի ունիմ և ոչ էլ կամենամ, ոչ ցեղ կամ տոհմ ունիմ իրանում, որ հարստութիւնս ժառանգէ և ոչ էլ ցեղապետ եմ, որին վստահանալով չար նպատակով ուրացրած լինիմ հարբստութիւնս. եթէ ես իմ դրամագլխի տակոսիքը չեմ կարողանում մնել, ուրեմն և չուալ ապրեմ, ուրեմն ինչ հարկաւոր էր ձեռնամուխ լինել այդպիսի գումարին. . . . » Այս տեղ ծաղրաղէմն ընդհատում է Աղա-Մանուչարի զրոյցը և ասում էր. լիցի՛ թէ մեզանից մէկն այդպիսի վատ կարծիք

---

[1] Պատմ. Պարսից Մ. Թագիսթեանց, Պալկիթա, 1846, երես 279, ասում է թէ «Այս անցքը պատահած է 1818-ին». իսկ ես հետևեցի պաշտօնեների պարզակերեն պատմութեանը։

ունենայ քեզ վերայ. . . . . Աղա-Մանուչարը կանգնում է և դուրս գնում հանդէսից։

Որովհետև այդ զողութեան մէկ մասը վերաբերում է Նոր-Ջուղայեցի հայերին, վասնորոյ նրա վերջաւորութեան մասին ես պատմենք։

Իմ բարեկամ Խաչակիր աւագ քահանայ Տէր Յովհաննէս Մկրեան ի Կ. Պոլիս, ինձ հաղորդում է այս զողութեան մասին տեղեկութիւն, որ գրուած է եղել Պատմութիւն Նոր-Ջուղայու անուանեալ գրքի մէջ, զոր ես չեմ տեսած և կարդացած։ Այդ տեղեկութիւնը այսպէս նոյնութեամբ գեսեղում եմ, այսչափ միայն յաւելացնելով, թէ զողութեան բուն հեղինակները ոչ թագաւորի ազատներն են եղած և ոչ ապակեգործ հայերը, այլ ինչ որ ես հաւատի աղբիւրներից առնելով պատմած եմ, այնպէս է։

ԱՆՑՔ ԱՊԱԿԷԳՈՐԾԱՑ։

«Աղախնեայք ամենք թագաւորին՝ զոդանալով ի Տէրութեան գանձարանէն գերիս քսակս ոսկւոյ (որոց իւրաքանչիւրն պարունակէր 2000 թուման ոսկեդրամ) պահեալ էին ի խորշ սենեկի միում պալատան թագաւորի՝ յազգս փոխադրելոյ անդէն. ընդ այն ժամանակս չորեքին Ջուղայեցի հայ ապակէգործքն Բարել Ջաքարեան, Մանուկ Խաչեան, Յարութիւն Տէր Թաւատրեան և Ալէքսէ Դիոնէսիսեան ծառայէին ի պալատան թագաւորին ի չինումն ապակեաց և էին սիրելեաք առաջի Ֆաթ-Ալի-շահին։ Դէպ լինի նոցա տեսանել զգզուտնի գանձն, զոր ի սիրոյ ագահութեան բառնան անտի ի տունս իւրեանց և պահեն զայն գաղտնածածուկ. ի յայտնի լինել թէ զողացեալ են ի գանձարանէն գերիս կնքեալ քսակս գանձու՝ թագաւորն բարկացեալ յոյժ հրամայէ սրոնել և զբռատանել զայն, որ վասն բազում տանջանք տուեալ լինին պաշտօնեիցն պալատան և աղախնեայցն կանանոցի, մինչև անգամ գնել գլխարանս ի վերայ ստեանց կանանց ամենց թագաւորին, առանց երբէք կարծիք տանելոյ զայնմանէ զՀայոց ապակեգործաց։ Երբեմն ամենայն սրոնմանցն ջանք ի դերև երանեն և ոչ ի յայտ գայ զողունին թագաւորն սրամտեալ յոյժ վրդովեաւ թէ յորում քաղաքի երևանցի այն, զայն քաղաք մատնելոց է ի չարաչար հարուածս ահեղմանց։

«Յամի 1816 գերիս քսակն նոյն գրամոց Մանուկ Խաչ-

կեան գնելով ի կորդին Ջուլայ՝ երկու ընկերաքն բերէ ի Ջուլայ, և ինքն զոլով բնակիչ Երևան Թագի՝ ի մէջ այգոյ իւրում Թագի զայն ընդ հողով։

«Ցերուսական վճիռ է թէ՝ չկայ ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի, որ և յայտմ իրողութեան կատարեցաւ. զի յաւուր միում ընդ բարկամաց իւրոց ի նմին այգեոջ Մանուկայ ի գինարբուսս զբօսնալ, ի Ջեռնուլ խելապատակին յոխորտանաք մնծարանեալ էր ի վերայ ընկերացն սակս զօրութեան իւրոյ և կարողութեան, պարծենալով թէ զգանձ Թագաւորին ի մէջ նոցն այգոյ ունէր պահեցեալ։ Ի վեր ել բանն և լուրն ժամանեցաւ ի լսելիս Ռամազան-Ալի-խան քաղաքապետին Ապահանայ. առաքեալ նորա զծառայս կալանաւորին զՄանուկ, և զգողունին գանձ ի հողոյ հանեալ տանին ի վանքն Ամենափրկչի, ուրանօր և Ռամազան-Ալի-խան զայ յաղագս առարկային այնմիկ։ Անդ կամի կուսակալն գանակոծել զՄանուկն, որ աներկիւղ վստահութեամբ պատասխանի առնէ նմա և ասէ թէ՝ ոչ է կարողութիւն քո ի գանել զիս, զի որպէս դու՝ նոյնպէս և ես ծառայ եմ Թագաւորի, և վճիռ իսոյ զատապարտութեան Ակրայէ՝ և ոչ ի քէն կարելի լինելոյ ի համարձակախօսութենէ անտի նորա քաղաքապետն ոչինչ վնաս առնէ նմա, այլ պահելով յարկելանս յայտ առնէ զանցիցին վնասփառ չահին։

Ի լսել նորին վնասփառութեան զայսմանէն զողունայն՝ ծանրացաւսումն լինի ի վերայ ժողովրդեան Հայոց և հրամայէ ի սուր մաշել զընակիչս Ջուլայու, և յաւարի առնուլ զամենայն ինչս նոցա։ Թուրքմանք անդէն ի պատրաստի լինեին չուառնելոյ ի Թէհրանայ և գալոյ ի Ջուլայ յարբուցանել զուսերս իւրեանց յարենէ անմեղաց Ջուլայեցւոց։ Մինչ ապատիս Մահմատ-Հասէն-խան Սատր առաջին Նախարար Պարսկանայ ընդ այն ժամանակս լինելով ի Թէհրան քաղաքի և լսելով զահեղասաստ հրաման Թագաւորին՝ մոռանէ ի սպաս նորա երկիրպագեալ խոնարհն առաջի նորա և ասէ. Վնասփառաւորեալ աքայ, որք մեղապարտք են՝ կրեսցին զարժանահատոյց պատիժս տէրութեան ձերոյ, իսկ որք անմեղք են և անկցուսցի գործոցն մեղապարտից՝ զինչ վնաս ունին զի համայնաջինչ մեռանիցին ի վրէժ անօրէնութեան քանի մի մեղաւորացն։ Ուստի ապաչեմ խնդրեալ յարիւն անմեղացն, որ ծառայք են տէրութեան ձերում և ի փրկանս արեան նոցին պատրաստ է ծառայ ձեր վճարել զքսանեմիկոգ հազար թուման։ Զիկեալ Թագաւորին և կրկին բարկութեան իւրոյ հրամայէ ընդունել ի Սադրէն զքսանեմիկոգ հազար թուման զին փրկանացն Ջու-

զայեցուց, և յետս կոչել զնրամանն համայնաջինջ սպանութեանն Ջուղայաբնակ Հայոց։

Նշանաւոր է յոյժ արդարև բարեբարութիւնն զոր մեծագործ նախարարն Սարգիս առատապէս ողորմութեամբ արար յօգուտ Ջուղայեցւոց, զի եթէ բան Աստուծոյ անօրէնութեանն չիցէր նորա ջնարհ միջնորդութեան և առատաձիգն փրկանք՝ բան հրամանի արքային ընդմէջ ի բերան սրոյ վախճանելին Ջուղայեցիք, ոչ պակաս քան երկու հազար անձինք։ Զովնցի գարուց ի դաս անզուգական բարեշնորհութիւն Սարգսոյ, զի յետ զայն ջնարհ առնելոյ ոչ զմի զեան պատանջեաց և ընկալաւ ի Ջուղայեցւոց զվոխարէնն, այլ եթող զամենայն պարգև Ջուղայեցւոց։ և ի վերադարձին իւրոյ ի թէհրանայ, ի գաղ ի Ջուղայ մինչ Հայք ընդառաջ երեալ նմա յայտնէին զզեղմունս երախտագիտութեան և պատրաստեալ էին զմատաւոր ինչ պարգև, նա ի վերայ նոցին երախտագէտ զգացմանցն ուրախ լինելոյ յոյժ մխիթարեաց և քաջալերեաց զամենեսին, այլ զնուէրսն ընդունել ոչ բարեհաճեցաւ։։։

Յետ փրկանաւոր լինելոյ Սարգսի զՀայ բնակիչս Ջուղայու։։։ հրաման լինի յարքայէ գալ ի Ջուղայ և տանել զապակիգործսն և զգերդասանս նոցա։ Յարան և զԱռաքել Ազարէգ որ էր ապակիգործ, այլ անման էր և անպարտ յայնմ գործութեան, սակայն անիրաւութիւն ախտարին բերմանց գնա պարտաւոր կացոյց և մահապարտ փոխանակ անձին Յարութիւնի Տէր-Խաչատրեան, որ ճարտարագոյն էր ապակիգործաց։ Ի 26 Մարտի 1816 ամի կալեալ զնոսա զամենեսին հանդերձ կանանաբ և զաւակաբ խրեանց տարան ի թէհրան, զԻաբէլ խարշեցին կենդանւոյն, և զՄանուկ և ի թէհրան, զԻաբէլ խարշեցին կենդանւոյն և պայթուցին ընդ օդս։ իսկ զԱզարէգ եղին ի բերան հրանոց և պայթուցին ընդ օդս։ իսկ Յարութիւն արձակեցաւ առանց մահու։ զի ծանօթ զոլով նորա ընդ մեծամեծաց և ընդ նախարարաց տերութեան։ զուն նորա ընդ մեծամեծաց և ընդ նախարարաց տերութեան։ զուն գործեաց բազում ծախսարարութեամբ և զԱռաքել փոխանակ անձին իւրոյ մատնեաց ի թիւ մահապարտութեան, վասնորայ Առաքելն սպանեցաւ յերկուս հերձանելով մարմնոյն և Յարութիւնն արձակեցաւ զնարանս բազում տանջանաց յանձն իւր ընդունելով [1])։։

Վերոյիշեալ անցքից մի քանի ամիս յետոյ յայտնվում է, որ գողութիւն անողները ուրիշներն են, և միայն մէկ քսակ այսինքն հինգ հազար թուման պատահմամբ բնկած է հայասէրներ հինգ հազար թուման պատահմամբ բնկած է հայ-

---

1) Պատմութիւն Նոր Ջուղայու։։։, աշխատասիրեալ ի պ. Յարութիւնէ թոռ. Տէր Յովհաննէսեանց։ Տպագրեալ ի Նոր Ջուղայ, 1880, հատոր Ը, երես 102։

ապակեհատների ձեռքը, հետևաբար էլ յայտնվում է, որ գոգոլիինը այսպէս է եղած։

Արտասահմանի արդիւնքը չէր բաւականանում Աբբաս-միրզայի ծախսերին, երբ նա Թուսաց հետ պատերազմում էր, նոր նոր զինուորական բարեկարգութիւն էր անում, զէնք գնում, նոր էր բերել տալիս և այլն, և այլն, վանողոյ միչտ փող էր պահանջում իւր շահ հօրիցը, որն իւր ագահ բնաւորութեամբը զլանում էր. այս պատճառաւ Աբբասն էլ գալիս էր Թէհրան՝ բերանացի խնդրելու, բարեխօսներ ձգելու, որ հարը օգնէ նրան փողով։ Այդ միջոցով ևս նա չէր կարողանում շահիցը գրամ պոկել, ուստի մի օր մտքումը դնում է գանձարանից մէկ մեծ գումար գողանալ տալ, և նախագգուշութեան համար հետը բերած է լինում չորս երեկի յաջողակ և ճարտար գողեր, Սիմնին խանպէյ, Քաչալ Թազի և ուրիշներ։ Երբ շահը ուղեւորվում է Սուլթանիա ամառանոցը, Աբբաս-միրզան մնում է Թէհրան մօտ 20 օր, և թելադրում է գողերուն ձեռնամուխ լինել շահի անձնական գանձարանին հետևեալ կերպով։ Ինքն Աբբաս-միրզան ամենայն օր յաճախում է իւր շատ ծառաներով արքունիքը, պատրուակաւ՝ տեսնելու թէ ինչպէս են շինում, վերանորոգում արքունիքն ու կանանոցը, որպէս զի ինքն էլ թագրիզ իւր պալատն ու կանանոցը նմանեցնէ նրանց։ Նա արքունիքը գալու և գնալու ժամանակ էլ գողերը խառն են լինում նրա ծառաների հետ, բայց նրա, Աբբասի, դուրս գալու ժամանակ, գողերը հերթով զատվում են և մնում կանանոցի դաւթում, և թագչում են պարտէզի խիտ խիտ թուփերի մէջ, և երեկոյեան՝ երբ մթնանում է, բարձրանում են բարդի և կաղամախի ծառերի վերայ ու նրանց խիտ ճիւղերի և տերևների մէջ նստում մինչև կէս գիշեր. երբ պահապանները քնանում են, նոքա ծառերից վայր են իջնում, գնում գանձարանի տանիքը՝ վերևից ծակում, ներս մտնում, քսակները դուրս են բերում, տանում զետեղում կանանոցի լուսամուտների վերը եղած խոր պատուհանի (պարսանի) մէջ, և իրենք վերադառնում են դարձեալ որջանումը։ Հետևեալ օրը Աբբաս-միրզան գալիս է դարձեալ շրջում և նայում տեսնում՝ թէ նրանց գողերը վայր են իջնում ու բարեպատեհ ժամանակ գտնելով մտնում են այն սենեակը՝ ուր պահած էին քսակները, որոնցից մէկ մէկ առնում են, ծածկում վերարկուների տակ, գնում խառնվում ծառաների հետ ու Աբբաս-միրզայի դուրս գնալու ժամանակ նոքա էլ (գողերը) դուրս են գալիս։ Այնպէս է պատահում, որ գողերը կամ մոռանում են կամ յարմար ժամանակ չեն գտնում դարձեալ մտնելու

վերջին քսակը հանել, վանորոյ և մնում է մէկ քսակն այնտեղ պատուհանում, որ հայերը գտնում, տանում են իրանց մէջ բաժանում։ Իսկական գոգերը գնում են Սալթանխա և այնտեղ անվարձ մնալով, մէկ մէկ ձի գոգանում են Աբբասմիրզայի ախոռից, հեծնում, փախչում գնում են Գեարբաշ (Բաղդատի մօտ ուխտատեղի), ուր և չատ ուխտաւորների մօտ խոստովանում են յիշեալ անցքը, և ազատցնում են թէ, ամենք մէկ քուրուշ (հինգ հարիւր հազար թուման) խոստացած էինք գոգանալ և յետոյ վարձ տանալ, բայց յաջողակ ժամանակ չգտանք, այնպէս վարողացանք դուրս բերել, և չվարձատրեցանք, վանորոյ ահից լռելեայն փախանք եկինք այս ուխտատեղին, ուստ ոչ մեզ հանեն անկարելի է»։

Այս ժամանակները Ազա-Մանուչարը սկսում է աւելի ևս մեծաքայլ առաջնանալ, վասն զի մէկ կողմից նորա եղբայր Ազալօ-բէգը (Ազալար-խան), միւս կողմից նրա եղբօրորդի Սօլթան-խանն ու միրզայ-Գուրգէնը, որպէս փախստական թիֆլիսից գալիս են Պարսկաստան, ընդունում Պարսից հպատակութիւնը և մտնում ծառայութիւն, որոնք առհաւատչեայ էին Մանուչարին մտերիմ և հաւատարիմ լինելոյն տէրութեանը։ Բացի սոցանից չատ երեսելի մարդիկ գիտում էին Մանուչարին և նրանից փող էին փոխ առնում և ընծայի անուամբ կապառում էին չարը, որ և ջնորհում էր նրանց մարդասիրութեան, նախանգապատութեան և հրամանատարութեան պաշտօններ։ Այդ պաշտօնն ստացողները, իւրեանց նշանակութեան տեղը գնալիս, հետերնին տանում էին մէկ մէկ հաւատարմատար (վէքիլ) Մանուչարի կողմից, որպէս զի այնտեղ նախ իրանց պարտքը վճարէին նրանց և նոքա ուղարկէին Մանուչարին։ Շատ այսպիսի պաշտօններ ստացողները նշանակվում էին բարձր դրան առէջը զՄանուչարն իւրեանց փոխանորդ, որն որ պարտաւորվում էր ամենայն օր ներկայանալ կամ չարի կամ պարտաւորվում էր ամենայն, պատասխանել այս ինչ այն ինչ սաղրաազէմի առենումը, պատասխանել մարդասանի, նախանգապատի և հրամանատարի վերայ եղած բողոքներին և պաշտպանել նրանց իրաւունքը, աշխատել որ նրանց չփոխեն, անմիջապէս և հրովարտակներ կամ հրամանագիրներ ստանալ ու առաքել իւր հաւատարատարներին (վէքիլներին) որ յանձնեն մարդասաներին, նախանգապատներին կամ հրամանատարներին։ Եւ այսպէս Ազա-Մանուչարն այնքան հաստատում է, որ գրեթէ Իրանի մէջ բարոյապէս կէս թագաւորութեան իրաւունքներ և իշխանութիւն է ստանում, վասն զի նրանից կախուած նախանգների մէջ պատուած կաւառարիչներից, մարդասաներից, հրամանատարներից, կամ

նրանց մէջ բնակուող երեւելի մարդկանցից բոլոր բողոքողները չէին դիմում արքունիքին, այլ Մանուչարին, որոյ հրամանագիրն այդ կառավարիչների վերայ՝ ու�ի աղդեցութիւն ունէր, քանիկ սաղրառաղէմինը,

կաղարների պատմութիւնը չէ յիշում թէ Մանուչարը երբ է ստացել խանութեան պատուանունը, և երբ Իշ-աղասութեան պաշտօնը (մարդպետական իշխան). բայց որովհետեւ նա 1816-ին խան էր, և ներքինապետ (խօջէ-բաշի, Բուխարայի մահուանից յետոյ)։ Պարսից պատմութիւնների մէջ Իշ-աղասի բառը չկայ, այլ միայն խօջէ-բաշի է յիշվում, երեի Ֆաթհ-Ալի-շահը՝ Մանուչար-խանի պատուոյ համար է Իշաղասի պաշտօնը հնարել, և կամ Բուխարայի հնարածն է։

Միրզայ-Շաֆին չատ տարիներէ հետէ վարելով սաղրառաղէմի պաշտօնը, արդարև, չատ հմուտ էր նեղբին գործերին, բայց որովհետեւ նա արդէն զառամած էր և չունէր այնքան ժամանակ չարունակելու այդ վեհ ասպիճանը, չէր կարողանում Պարսից սովորութեամբ լուսաբաղին դուրս գալ, բազմել ատենում, ընդունել մեծամեծները կամ ունկնդիր լինել ժողովուրդի գանգատներին, միեւնոյն ժամանակ՝ ոչ աքի էլ չէր հաւատում, որ գործերը յանձնէր նրան, որ նա անաչառութեամբ վերահասու լինի գործերին և անաչառութեամբ հաղորդէ ինքեան. վասն զի այն ժամանակը կաշառակերութիւնը հասարակական էր։

Մանուչար-խանը՝ ինչպէս վերը յիշեցինք, ամենայն օր յամախում էր միրզայ-Շաֆիի ատենը, և այժմ ինչպէս ներքինի և պետական անձն իրաւունք ունէր համարձակ եւուռմուռ անել նրա կանանոցը, և այնտեղ խօսել նրա հետ օր և իցկ գործի մասին։ Այս ասէպ ասէպ տեսութիւնից, նոքա այնքան ծանօթացան ու բարեկամացան, որ յետոյ ընտանեկան մտերմութեամբ սկսան վարուիլ միմեանց հետ, այս պատճառաւ և միրզայ-Շաֆին ինչ ինչ երեւելի գործեր կյանձնէր Մանուչարին, որ և ճշտութեամբ և անաչառութեամբ կկատարէր, և այնուհետեւ վերջինս որպէս թէ խնայելով նրա զառամեալ հասակին, ամենայն օր չարունակ կրգալիր դուրսը նրա ատենի մէջ, ունկնդիր կլինէր բողոքների, վէճերի և գանգատ ատենալացուքների և տալացուքների մասին, և յետոյ կը մանէր նրա կանանոցը կամ առանձնասենեակը, կհաղորդէր նրան՝ գործերի էութիւններն ու հանգամանքները. այնուհետեւ միրզայ-Շաֆին ինչ վճիռներ կտար լուրաքանչիւր գործին, նրա համեմատ՝ Մանուչարը հրամարակներ կամ հրամանագիրներ գրել կտար դուրսը՝ նրա գլխաւոր ատենադպրին, և կտանէր կներ-

կայացնէր դարձեալ միրզայ-Շաֆիին, որ եթէ իւր հրամայածին կամ ասածին և վճռին համեմատ էր, կը կրէր, կյանձնէր Մանուչար-խանին, որ ասնէ չահին կնքել տայ։ Ի հարկէ Մանուչարն այդ կատարում էր առանց որ և իցէ զոչաքաղութեան, որ այն ժամանակ հաղուագիւտ և օտարոտի էր, թէ չանենք հրաչք էր համարվում Իրանի մէջ։ Ցնայելով այդ յատկութեանը՝ Մանուչարը ամենեին ցոյց չէր տալի թէ ինքը որ և իցէ ազդեցութիւն ունի միրզա-Շաֆիի վերայ, ընդ հակառակն նա հրապարակաւ խոստովանում էր թէ «ես միրզա-Շաֆիի խոնարհ ծառան եմ, խոնարհ որդին եմ և այժմ նա իմ հայրացուն է»։

Ահա ասածիս ապացոյց. 1817 թուին Վրաստանի կուսակալ Երմոլովը դեսպանութեան պաշտօնով գալիս է Ֆաթ-Ալի-չահի մօտ, որն Սալթանիա ամարանոցումն էր։ Ամենայն կարգադրութիւնները դեսպան ընդունելու համար միրզայ-Շաֆին յանձնում է Մանուչար-խանին, և սա այնպէս փառահեղ կերպով է կարգադրում, որ ռուսները զարմանում են, ինչպէս և ակնառուես Բօրոզդինը նս վկայում է իւր ճանապարհորդութեան մէջ, և անուանում է Մանուչար-խանը պարտապետ։ Բայց վերջինս ամենայն տեղ յայտնապէս ասում էր թէ՝ այն ամենը միրզայ-Շաֆիի հնարածն ու մտացածներն էին. իսկ ինքը միայն նրա հեղինակութեան գործ դնողն է, այսու ամենայնիւ Երմոլովը գիտէր ով էր հեղինակը. վասնորոյ և կամեցաւ տեսութիւն անել և շնորհակալ լինել Մանուչար-խանիցը. բայց սա չդնաց նրան տեսնելու և ասպասարեց որ այն պատիւները որ նրա համար պատրաստուած էին, հեղինակութեամբ Պաղրատազէմի էր, նա կարող է իւր շնորհակալութիւնը մատուցանել նրան և ոչ իրեն։

Թուսաց կայսրուհիները Ելիզավետա Ալեքսէեվնան և Մարիա Ֆէօդորովնան պարգևներ էին ղրկած չահի դշխոյից դշխոյի համար, վասնորոյ Երմոլովը խնդրում է չահին, որ հրամայէ Մանուչար-խանին գայ իւր վրանը, ստանայ պարգևները ու ասնէ մատուցանէ դշխոյից դշխոյին, չահն էլ հրամայում է. բայց Մանուչարը կամ իւր պաշտօնին արժան չէ տեսնում, կամ թէ քաղաքականութեան յարմար չէ համարում գնալ դեսպանի կամ կուսակալի վրանը՝ որպէս մուրացկան. ուստի և ապասարում է դեսպանին թէ «Հաճեցէք կայսրուհիներու պարգևները չահի ատենի վրանը ղրկել. որպէս զի այնտեղից ցուցակով յանձնեն ինձ»։ Երմոլովը ծիծաղելով ասում է թէ «արդարև, խարամանկ պալատական է Մանուչար-խանը. հապա ինչ է կամենում ասել. չատ լաւ և իրաւացի է»։ Այդ կացայ ինչ է կամենում ասել. չատ լաւ և իրաւացի է»։ Այդ

պարգևները ստանալիս՝ Մանուչար-խանը հրամիրում է սա-զբաղանքն և մեկ քանի երեկի չանգաղաներ ևս։

Երմոլովը տարել էր երկու տեսակ պարգևներ։ Առաջին-ների վերաբ Ս-Պետերբուրգում գրուած է լինում թէ, որն ու

նրա արքանեակները այս մասին սաստիկ տարաձայնություններ և ազմուկներ հանեցին Թեհրանի մէջ, և գուցէ կվնասէին նոր սադրապետին և նրա պաշտպան Մանուչարին, եթէ յանկարծ մէկ վոսկ անցք չէր ծագել և չէր հեռացել վաճառը Թեհրանից։ Այսինքն, Դիլանցիներն եկած էին Թեհրան բողոքել չէին իրենց մարզպան Խոսրով-խանից, որ Մանուչարի պաշտպանութեան ներքոյ էր, և չէին կարողանում վերջնոյս երկիւղից ներկայանալով յայտնել որ և իցէ կեղծով իրենց գանգատները։ Այժմ վաճառը՝ կարողացաւ առաջնորդել նրանց և ներկայացնել չահին, որն որ նշանակից վաճառը գնալ Հայտ և քննել Դիլանցիների գանգատները։ Խոսրով-խանն ասում էր թէ, Մանուչար-խանը ինքը լռելեայն աշխատել էր որ չահն ուղարկէ քննիչ վաճառը, որպէս զի սա առժամանակ հեռանայ Թեհրանից։ Այդ նշանակությունը փոքր ինչ հանգստացրեց վերջնոյս և նորա արքանեակներին, վասն զի նոքա երևակայում էին թէ չահին յայտնի լինելով վաճառի թշնամությունը Մանուչար-խանի հետ, որպէս թէ գիտութիւնն է առաքում նրան, որ յանցաւոր կացուցանէ Խոսրովը և պաշտօնազուրկ անէ։ Ակնկալում էր Խոսրովը թէ Մանուչարը ինձ զոհեց, իրեն պաշտպանելու համար, լա գիտնալով որ ինքը կարող էր ինձ վերականգնացնել, բայց եթէ նա կործանուէր, ես չէի կարող նրան յարուցանել, ըստ որում նրա հակառակորդներն ինձանից աւելի հնարագէտ և խորամանկ էին։ Այսու ամենայնիւ Մանուչարը բոլորի մտ յայտնում էր իւր անբաւականությունը վաճառի Դիլան քննիչ դնալու համար, որպէս զի վաճառը մխիթարուէր ու գուցէ մոռանար իւր վրէժխնդրությունը։

Մինչև վաճառի Դիլանից վերադառնալը՝ մնում է Սադրապետ Հաջի-Մահամմէտ-Շիւսէյն-խանը, և Մանուչարը չասպում է նշանակել է տալիս սադրապետ նրա որդի Էմին-Ուդ-Դովլայ-Արդուլլահ-խանը, որ թուլությունից և անհոգությունից թողնում է բոլոր կառավարությունը Մանուչար-խանին։ Ամա այս ժամանակն էր որ անուանում էին Մանուչարը նրին։ Ամա այս ժամանակն էր որ՝ անուանում էին Մանուչարը սադրապետ Բէյրիր, այսինքն՝ անդրանիկ կամ մեծ. թէ վերջնոյս հակառակորդներն այսպիսի այլեալ կոչումներով և մինչ ջղներով աչխատում էին գրգռել Արդուլլայ-խանը ընդդէմ նրա, բայց վերջինս կամ չէր համարձակվում կամ երախտագիտությունից ստիպալ չէր կամենում չոչափել Մանուչարի գլուխին։ Ինքնին՝ ազդեցությունը, և կամ թէ հաւատի էր որ Մանուչարը, կամ հակառակությունն չի խարել իրեն, և կամ չի սպասացնել չասպում է լռում էր։ Այսու ամենայնիւ՝ սադրապետությունն ուստի և լռում էր։ Այսու ամենայնիւ՝ սադրապետությունն

տիտղոսը կրում էր Աբդուլլայ-խանը, բայց պաշտօնը կատարում էր Մանուչարը։

Մինչ այս՝ մինչ այն, վանքը վերազառնում է Գիրանից, բաւականին կաշառք ուտելէն և ժողովուրդը կողոպտելէն յետոյ, կատարելապէս հասած իւր նպատակին, յափրած և անզուսպ համարձակութիւնով, մինչև թէհրան հասնելը պարծենում էր թէ՝ մինչև տան օր պիտի գնանի հետ հաւասարացնի ոչ միայն սադրազէմը, այլև նրա պաշտպան Մանուչարը։ Իսկ Մանուչարը որպէս զգոյշ, շրջահայեաց և հեռատես պարտական, ի հարկէ լսում էր այդ ասուլիսը, բայց ոչ ինչ գրելով վանքի թէհրան հասնելից մէկ օր անցած Իրանի հասարակաւ սովորութեամբ նրա գալուստը շնորհաւորելու համար՝ առաքում է մէկ քանի խոնչ (ափսէ, տէփսի) քաղցրաւենիք, թէյ, շաքար և այլն, և ինքը մէկ քանի ժամից յետոյ այցելում է նրան։ Մանուչարը նկատելով վանքի փոխայցելութեանն, կրկին անգամ գնում է նրան տեսութիւն, որպէս թէ ինքն անկիչաւոր ոք է և ցանկանում է վաստակել նրա բարի գրութիւնը։ Վանքը նկատելով որ իւր ախոյեանը նրկուն է եղած, ինքն էլ մէկ օր թեթև այցելութիւն է փոխարինում, որպէս թէ ինքն ևս մտացութեան է տուել անցած անցքը։ Եւ այսպէս վանքն իւր երևակայութեամբ միամտանալով որ ոչ ոք ախոյեան և մրցող չունի, սկսում է խառնուիլ սադրազէմութեան վերաբերեալ գործերին, այնինքն իւր պալատումն ընդունում է դանգատողներ, բողոքարկներ, նոցա գործերին վերահասու լինում, հրովարտակներ է գրել տալիս, և առանց սադրազէմի կնքելոյն, ներկայացնում է շահին և կնքել տալիս։ Ի հարկէ նա՝ առանց օգուտ քաղելոյ բողոքաւորներից՝ ձեռնամուխ չէր լինում այսպիսի յանդուգն և ապօրինաւոր գործողութիւնների։ Միւս կողմից՝ ծագմամբ կաչաք և ազգական շահի Ալլահներար-խան՝ վերակոչեալ Աբդի-Կուլի՝ չկարողացաւ անտարբեր մնալ և չխառնուիլ սադրազէմութեան վերաբերեալ գործերի, քանզի նա ուելի պատանաւոր էր համարում իրեն սադրազէմութեան պաշտօնին, քան թէ մուսաները, ուստի նա ևս սկսեց հետեւել վանքին։ Զարմանալին այն էր, որ անարի շահը ոչ վանքին և ոչ Ալլահներին էր հրամայում կասել իւրանց ապօրինաւոր արարողութիւններից և ոչ էլ փոխում էր սադրազէմը, որպէս զի ուրիշ մէկը լինէր նրա տեղը, որ ճանաչէր իւր վրա սեմ պաշտօնն ու նրա իրաւունքները, և թոյլ չտար ուրիշներին խառնուել չփոթել այն գործոց ընթացքը։

Եւ այսպէս՝ բարձրագոյն դուռը բաժանուած էր երեք

կոզմնակցութեան, իսկ Մանուչար-խանը իւր բնական զգուշութեամբն ու խոհեմութեամբը երեքին հետ ևս հաշտ էր, ամենի հետ ևս խորհրդակից էր և տեղեակ բոլորի գաղտնիքներին. Նկատում էր որ նրանք ոչ թէ սէրութեան և ժողովուրդի, այլ իւրեանց անձնական օգտի համար էին աշխատում, ուստի և լռում էր նախազուշակելով, որ այսպիսի անուշիղղ, ապօրինաւոր գործերից չուտ թէ ուշ, նրանք առանձին առանձին կամ միասին պիտի խորտակուին, կործանուին. և որպէս զի ինքն էլ չմնայ նոցա փլատակների տակ, հեռի էր պահում ինքզինքը զօրաքաղաքութիւնից, որ այն ժամանակ պարսիկները զանազան կաշառակերութեան անուններ էին հնարել, որպէս զի իրենց արածը յանցանք չհամարուի զորօրինակ, փէշքէշ (ընծայ). հազկուլ կալէ մ. (գրչի վարձ). հազկուլ կաղէմ. (քայլելոյ վարձ. հազկուլ-սոխան (լեզուի վարձ) և այլն, և այլն.

Այս միջոցները Ասպասան մէկ երեսի գերդաստանի ազգականների մէջ, բազմամարդ գերեզի և հարիւրաւոր խանութներին մասին վէճ էր ծագած. Դատախազները՝ չատ անգամ եկած էին Թէհրան, բազմաթիւ սարդարաղէմին, չահին և մեծամեծներին, առաջնակարգ մուշթէհիդներին, բայց ոչինչ էին չանուած. Ի վերջոյ չանը դրամայել էր միրզայ-Շաֆի սարդարաղէմին (մինչ նա կենդանի էր) որ քննէ անաչառութեամբ և ներկայացնէ իրեն. Միրզայ-Շաֆին յանձնում է այս գործը Մանուչար-խանին, որ երկու հաւատարիմ մարդ նշանակէ, որպէս զի առաջնորդեն հակառակորդները այս ինչ Մուշթէհիդի մօտ, որ նա քննէ շարիաթով. և որ կողմը ճշմարիտ լինի, նրան վճռագիր տայ, և յետոյ ներկայացնէ չահին. Ցիշեալ Մուշթէհիդը՝ կալուածների Ասպասան լինելոյ համար՝ իւր կողմից մէկ մօլլայ է նշանակում, որ Մանուչարի ընտրած մարդկանց և դատախազների հետ գնան Ասպասան, և այս ինչ Մուշթէհիդի մօտ ինչ ինչ վկայականներ բարդացնեն, բերեն իւր մօտը, որ նրանց համեմատ ինքը վճռագիր տայ. բայց այդ մարդկանց բերած վկայագիրները անկատար լինելով՝ դարձեալ ետ է դառնում, որ նրանք կրկին գնան Ասպասան, կատարելագործեն և բերեն, երբ և դատախազները նշմարում են բարձր դրանը գոյացած երեք կոզմնակցութիւններ. ուստի իրենց բարեպատեհ միջոց գտնելով, մէկը մէկից, ի հարկէ գաղտնի, դիմում են նրանց, այսինքն մէկն Ալլահեար-խանին, իսկ միւսը — Վահաբին, և մեծամեծ կաշառքներ խոստանալով՝ ներ ստանան, որ ասել է թէ, հրամարակները, միմեանց

պէտք էին հակասական լինէին՝ առանց Մանուչարի Դիպուածով այնպէս է պատահում որ՝ այս հակասական հրովարտակները մէկ օրում գրուած են լինում և չորս կնքով կնքուած, Ասելի զարմանալին այն էր, որ երկու դատախազները մէկմէկից ծակուկ, փայտակ թղթատարներ վարձում, և մի օրում իւրաքանչիւրն իւր ստացած հրովարտակն ամփոփում է պահարանում և յանձնում իւր թղթատարին, որ տանէ Ասպահան և յանձնէ իւր ազգականին, որ յայտնէ այնտեղի մարդպանին և գործադրէ։ Դիպուածով էլ՝ այս երկու թղթատարները թէհրանից փոքր ինչ բացակայ, միմեանց հանդիպելով ու զրուցելով, ի միասին չարունակում են իւրեանց ճանապարհը։ Ի հարկէ սոքա անտեղեակ էին իւրեանց տարած պահարանների մէջ ամփոփուած նամակների պարունակութեանցը [1]։

Փահլեակների թէհրանից դուրս գալէն մէկ օր յետոյ Մանուչարը լսում է այս անցքը, և իսկոյն հաղորդում է չորին։ Շ...ն նա չէ հաւատում, ըստ որում ասում է, չատ ժամանակ է որ ես այդ վէճի մասին հրովարտակ չեմ կարդացած և մեստ էլ կարդացող չէ եղած։ Այսու ամենայնիւ չատպ տագնապով սուրհանդակներ են առաքում, և երրորդ թէ չորրորդ օրը վերադարձնում են փայտակ—թղթատարները, բացում են պահարանները և հրովարտակները, հանում առանձին առանձին պահարաններից, տեսնում են որ արդարև մէկ օրում գրած ու կնքուած է չորի կնքովը։

Թէև անկարելի է թողուլ այդպիսի խոշոր յանցանքն անպատիժ, սակայն թուլամորթ չորը չկարողացաւ պատժել այն երկու խիստ պետական անձնաւորութիւնները. վասն զի բոլոր պալատականները, չահանումը և քանի մի երեսի մօլլաներ թախանձանաք աղերսեցին, որ չորը չխայտառակէ այն երեսի պաչտօնատարները, այլ պատժէ միայն նոցա գրագիրները, որոնք, իբր թէ, սխալացրել էին իւրեանց մեծաւորները. վասնորոյ և տարագրեցին երկու գրագիրներն Քեսարբայլու։ Թէև ըստ երևութին, այդ անցքը վերջանում է ոչինչով, բայց վտամ հետևանք է ունենում, քանզի ըստ առաջարկութեան Մանուչար-խանի՝ կազմվում է բարձրագոյն դատարան, որ մինչև այդ ժամանակ անծանօթ էր պարսիկներին։

---

[1] «Ի վերջին աւուրս Փաթ-Ալիշա-շահի, ոմանք ի քաղքեալ աւագանւոյ գրանն՝ կնքեալ հրովարտակ հնարեալ առնուին յումեմ՝ որքան կաչառս և կարողանային և ապին նոցա . . . » Ազգասէր, Կալկաթա, 1846, 11 Սեպտեմբեր։ Բայց ես տեսած եմ որ Մահամմադ-շահի ժամանակ ևս այսպիսի օրինակներ եղան։

Մանուչար-խանը արդէն մերզայ-Շաֆիի ժամանակ այդ դիւանի նախագիծը ներկայացրած էր շահին, բայց պետականներն ու պալատականները նախագուշակելով իւրանց զրկուիլն անուղղակի արդիւնքներից, զանազան զժու

խամ արծաթի նման՝ կշռքի մէջ ածած՝ քաշելով էին մնմանց վճարում։ Եւ հրամարակներ հանեց, որպէս զի բացի թէհրանից, Ասպահանից և թաւրիզից, ուրիշ տեղ դրամատատութեան գործիքներ չլինին, և նրանց արդիւնքները ուղղակի մանուն գանձարանը։

Ուշադրութիւն դարձուց նաև, որ արդիւնական և խելացի մարդիկ անպաշտօն և անառոճիկ չմնան, սակայն մեղք որ դատարկաչրջիկ ամբոխի և ի զուր տեղը ռոճիկ ստացող մարդկանց խօսքերը չիողուցին որ այն ժամանակ գործադրուի Մանուչարի արած բարեկարգութիւնները, որով վերջինս վրհատութիւնից սկսեց սակաւ ազատել Բաղդադցոյն Գիլանը, և այս ի հարկէ անայլայլ չէր չանից։

Եւ որովհետև ստէպ ստէպ Գիլանցիների բողոքը հասնում է շահին, որն որոնում էր պետականների մէջ մէկ յաջող և կարգաւոր չընդունող մէկը գտնել և նշանակել այնտեղի մարզպան, վանուրոյ սադրագէմի խորհուրդովը Մանուչարխանը նշանակուեցաւ մարզպան։ Վերջինս համաձայնեցաւ այն պայմանաւ, որ չանը արքայորդիների մէկին իրան հետ ուղարկէ մարզպանի տիտղոսով, իսկ իրեն նշանակէ միայն բարեկարգիչ Գիլանի [1]։ Շահն ընդունեց Մանուչար-խանի առաջարկութիւնը և նշանակեց իւր պատանի որդի Կայեանճ-միրզան։ իսկ Մանուչար-խանը նրան դատարարիչ, գլխաւոր կառավարիչ և բարեկարգող Գիլանի։

1239 Հիջրին (1823) Մանուչար-խանը գնում է Դաշտ, որ Գիլանի գլխաւոր քաղաքն է, և անխոնջ փութով ու եռանդով ձեռնամուխ է լինում իւր պաշտօնին։ Այստեղ նա ցոյց է տալիս որ ինչպէս խիստ և անաչառ հրամանատար է, նոյնպէս և քաջ հմուտ է անտեսական կառավարութեան մէջ։ Ամենից առաջ՝ նա իւր ուշադրութիւնը դարձնում է, ըստ հրամանի շահի, բողոքաւորների խնդրանաց վերայ՝ թէ ճշմարիտ է արդեօք, որ հզոր և հարուստ կալուածատէրերն ու մելիքները կալառնելով ապօրինաւոր վճռագիրներ առած, ներկայացրած նախորդ մարզպանին, որն և ինչ գեղացիների և փոքր կալուածատէրերի հողերը, ջրերը և գիւղերը խլել տուել է նրանց, այսինքն հզոր և հարուստ կալուածատէրներին։ Այս մէկ փափուկ և նուրբ խնդիր էր, որը կարող էր

[1] Գիլանների պատմութիւնը բացի վերոյգրեալ տիտղոսներին աւելացնում է «Մանուչար-խան կուլամ Հայէլ ազամ»։ Կուլամ բառն այդ պատմութեան մէջ բացի այդտեղից ալ մի տեղ չէ յիշվում Մանուչարի անուան հետ, ինչպէս և Էրմէնի բառը։

փութով աղարակ Մանուչարի համար։ ու վարկը Վանորոյ նա կազմից մէկ դիւան, որ բաղկանում էր մէկ նախագահից և չորս անդամներից։ Որքա մերահասու եղան, և ինչ կարուած որ անիրաւութեամբ էր գրուած, վերադարձրին նախկին տէրերին։ Ամենուհետև արքայազունի հետ բաւականին հետևակ և հեծեալ զօրքով չուեց, գնաց Գիլանի արևելեան և հարաւային կողմերը, ուր մարզպանների թուլութիւնից դրացի լեռնականք ցեղերը՝ զորութեամբ և եւրազակութեամբ մնացած վիճակներ էին հասցրել այն խաղաղ բնակիչներին, որոնք մեսաքսաչիութեամբ էին զարապում։ Կալանաւորելով յանցաւորները՝ շրջայակաց առաքեց թէհրան, և մէկ քանին էլ խնդրեց, կախել տուեց այն տեղերանք, ուր յանցանքները կատարուած էին։ Եւ այսպէս գաւառները, գաւառակները խաղաղացնելից յետոյ վերադարձաւ Դաշտ, ուր վաճառականութիւնն ու առևտուրը՝ խոտով-խանի այնտեղից դուրս գնալից յետոյ՝ այնպէս խանգարուած էին, որ օտարաբարբարոցները, մանաւանդ Ռուսաց վաճառականներն ամէն իրանց ունները կտրել էին այնտեղից, և չատ քարաքաղի իրանց երկրագրոյ իրանց գրամները թաղել էին գետնի տակին ու չէին համարձակվում առևտուրով զբաղիլ։ վասն զի կայքի և կեանքի ապահովութիւն չկար օտարականների համար, քանի որ գողերն ու աւազակները չատացել էին։ Մանուչարը նոցա նից չատերը կալանաւորելով չուվանները, փոքրոցներում ու հրապարակներում կախել կամ խնդրել տուեց, փոխելով մին նոյն ժամանակ ոստիկանութեան բոլոր պաշտօնատարները։

Բայց որովհետև պարսիկները հակառակ էին նոցա, որք իրանց կրնաքէն չէին և առևտրական գործերում միչտ աչխատում էին վնասել նրանց, թէև Դաշտի մեսաքսի մեծ մասը վերջիններն էին գնում, այն էլ պատրաստի դրամով, և երկու երեք տարի էր՝ որ այն անկարգութիւնների մասին, հապա թէ մէկ երկու մարդ էր գալիս Դաշտ, այլ միչտ թաղրիզ էին գնում և ուղարկում այնտեղից Թիֆլիսի ճանապարհով Ռուսաստան, վանորոյ Մանուչար-խանը մէկ Առևտրական դիւան կազմեց, նախագահութեամբ մաքսապետի, և երկու մուսուլման և երկու ռուսաց հպատակ քրիստոնեայ անդամներից, որպէս զի այնուհետև ինչ առևտրական վէճեր պատահի՝ այնտեղ վճռուին. և վաճառականները չդիմեին կառավարիչների դրանը, և եթէ մէկն անբարական լինի այն դիւանի վճռից, ողոքի իրեն (Մանուչարին)։

Երբ այս համարը տարածուեցաւ և հասաւ չորս կողմի վաճառաշահ քաղաքներին, այնուհետև վաճառականները փու-

թացին գնացին մնծամեծ զումարներով Ռաշտ, և կենդանացրին այնտեղի մեռեալ առևտուրը, որով և դանձարանի արդիւնքն սկսաւ օր ըստ օրէ աւելնալ։ Լաւ մտիկ է գրիչս, որ մնչև Ռուսաց և Պարսից վերջին պատերազմը, երբ մեր ճրագները (գործակատարները) կվերադառնային Ռաշտից, ինչպէս հիացմամբ կպատմէին հօրս Ռաշտի առևտրական դիւանի մասին, նրա անաչառութեամբ և փութով գործեր քննելու համար, և թէ Մանուչար-խանն ու նրա ստորագրեալ պաշտօնեաները որպիսի պատուով էին ընդունում օտարականները և պաշտպանում նրանց պարսիկների հալածանքից։

Մանուչար-խանը սոցանով չրաւականացով, որպէս նաև ուրիշները քաջալերելու համար ոչ միայն երկիրցիներին, այլև Թիֆլիսեցի Մինաս Թօջայ-Մինասեանին, Եփրեմ Եփրեմեանին, Աւետիք Մանդինեանին և Աւետիք Ղազինեանին առանձին առանձին գրամագրութիւններ տուաւ, որպէս զի Պարսկաստանի բերքերն ու ձեռագործերը տանեն Ռուսաստան վաճառեն և այնտեղից ռուս ձեռքի արտադրութիւնները բերեն Պարսկաստան։ Դա հրաւիրեց Շիրազից, Բուշիրից, Խոյից և Լրզրումից իր հին ծանօթ հարուստ հայ վաճառականներին, որ գան կամ գործակատարներ ուղարկեն Ռաշտ, որ մնաքաս գնեն ու տանեն իւրանց երկիրներում վաճառեն։

Սոցանից յետոյ Մանուչարն իւր ուշադրութիւնը դարձրեց արքունական ընդարձակ բայց ամերակ գիւղերի վերայ, որոնց բնակիչները կառավարիչների անհոգութիւնից ցրուած էին, որով և անմարդաբնակ էին մնացած։ Դա հրաւիրեց հին բնակիչները, փոխ տալով նոցա սերմնացու, ընտանի անասուններ և գրամագլուխ, որպէս զի գան ժողովվին թիմնիք անեն և մնաքաս մշակեն։ Կային և ազքատ կալուածատէրներ, որոնք կարողութիւն չունէին մշակել իւրանց հողերը, նոցա ևս գրամագլուխներ բաժանեց, և առհասարակ քաջալերելու համար, ինքն էլ գիւղեր ու հողեր գնեց և բիւրաւոր թիմնիք անկեց։

1825 թուականի սկզբներում չարը լսում է, որ Ռուսաց ռազմութիւնը մտադիր է ուղարկել Թէհրան արտաքոյ կարգի դեսպան գնդապետ Մազարովիչը և նրա հետ Շամիր-խան Մելիք-Բէկզարեանցը, բանակցել Պեղամայ ծովակի մտ Բալըզլամայ ասացեալ արօտատեղի մասին, վասնորոյ հրովարտակով հրամայում է, որ Մանուչար-խանը չտալ տագնապով գայ Թէհրան, ի հարկէ նրա մասին խորհրդակցելու։ Մանուչարը հասնում է չահին Կազբին, որ գնում էր Յոմուջ-Բուլաղ, ուստի և նա չահի հետ ուղևորվում է այնտեղ և վերադառնում նրա

հետ թէհրան, ուստից չանը հրամարակ է գրում Ռաշտ՝ թէ բարեխօսութեամբ Մանուչար-խանի պարգեւեցի Գիլանի գիւղացիներին՝ հարկերից մնացած վաքսուն հազար թումանը, որ նրանք չէին կարողանում վճարել գանձարանին։ Գիւղերի բնակիչներից մօտ հազար մարդիկ համագումարվում են և Ռաշտեցիների հետ չանի, չանգազէ Լահեան-միրզայի և Մանուչար-խանի կեանքի երկարութեան համար աղօթում են առաջին և գլխաւոր մէջլիսում։

Մանուչար-խանը նկատում է թէհրան, որ իւր սահմանած բարձրագոյն գլուխը՝ անդամների կաշառակերութիւնից կորցրել է իւր առաջնայ յարգը, սկսում է փոփոխել անդամները և կրկին եանդով ձեռնամուխ է լինում, որ նրա վարկն ու յարգը վերականգնէ։ Մինոյն ժամանակ չուտով ձեռքն է առնում սաղրասազէութեան պաշտօնը և այնպիսի զարկ է տալիս գործոց ընթացքին, որ ամենքը զարմանում են, ինչպէս որ Ռուսաց դեսպանատան գործակատար Պացկնան 1825 Մայիսի 30-ին իւր պաշտօնական թղթակցութիւնների մէջ գրում է Անդրկովկասեան կուսակալ Երմոլովին [1]) և խորհուրդ է տալիս որ իւրանց հպատակների գործոց համար Երմոլովը թղթակցէ Մանուչար-խանի հետ, աւելացնելով որ թէև Ալլահեար-խանը սաղրասազէ է, բայց ամենայն ինչ կատարվում է Մանուչար-խանի խորհուրդով։

Պարսկաստանի և Ռուսաստանի մէջ եղած տարաձայնութեան համար Մանուչարը խորհուրդ է տալիս չանին չյուսալ Երևանի տարդարի և նրա եղբայր Հասան-խանի մեծաքանութիւններին և անհիմն խոստումներին, այլ լաւ է որ այն փոքրիկ արօտատեղին թողու Ռուսներին, քան թէ տեղիք տայ պատերազմի։ Շանը նախ համաձայնում է Մանուչարի տայ պատերազմի։ Շանը նախ համաձայնում է Մանուչարի կարծիքին, բայց յետոյ պարսկականների կեղծաւոր խորհուրդներից անճարանալով հրամայում է այդ մասին մէկ մանանոզով կազմել, ուր իւր ներկայութեամբ ազատորէն խօսեն, վիճեն, խորհեն և վճռեն։ Ժողովի անդամները բացի մէկից բոլորեքեան միաբերան գլուխորում են ընդդէմ Մանուչարի կարծիքին, երբ և չանն ասում է թէ՝ «Մանուչար-խան, մի կարծիր թէ Իրանն այնքան տկարացել և վատթարացել է, որ չկարողանայ յաղթել ձկնոբս ռուսներին, Ատուրցել է, որ չկարողանայ յաղթել ձկնոբս ռուսներին, Ատուրցել է, որ չկարողանայ յաղթել ձկնոբս ռուսներին։ Ամենայն կերպանք, կտրինք վրաստանին և քեզ այնտեղ վալի (փոխարքայ) կկարգենք»։ Մանուչարը պատասխանում է «Տիե-

[1]) Акты собр. Кавказ. Арх. т. VI, ч. II, стр. 208. 209, 314, 315.

զերքի Աղօթարան, Աստուած տայ որ չահնչահի հրամանը կատարուի, և ես ամենայն ինամի, այսու ամենայնիւ նրա ոտի փոշին արդ եմ անում (ասում եմ, յայտնում եմ), և խոպոպներս էլ առհաւատչեայ եմ դնում (բան որում ներքինիքը մտրուս չունին, որ նրա վերայ երդնուն), որ Յայսմ պատերազմը օգուտ չէ բերելու Իրանին, և եթէ Աստուած տայ օգուտ բերէ, խոպոպներս կարել կտամ հրապարակաւ։ Ժողովը վրդովում է պատերազմ. ուստի և տէրութիւնը գործը ձգում է մոլլաների վերայ, և առաջարկում է Մազարէվիչին դիմել մոլլաներին, որոնք և մեղմում են ընդունիլ նրան, և նրա հետ առմների դաշնակից լինիլ, այսինքն դաշն կապել։

Այնուհետև Մանուչարը որ և իցէ բան այդ պատերազմի մասին չէ արտաբերում, ոչ միայն չահի ատենում արքունիքի մէջ կամ արտաքոյ նորա, այլև իւր տանն անգամ, թէև պատերազմն սկսելէն յետոյ, երբ չահը հետզհետէ ուրախալիր թղթեր է ստանում և հրաւիրում պալատականներն ու մեծամեծները, ի թիւս որոց և Մանուչար-խանը, որպէս զի Աբբասմիրզայից և Երևանի սարդարից ստացած նամակներն ատենում կարդալիս, ամենեքեան ներկայ լինէին։ Ի հարկէ Մանուչարն այն լուրերի վերայ լուրջ համակրութիւն էր ցոյց տալիս, բայց աւագանին այլ կերպ էր մեկնում նրա համակրութիւնը, ասելով թէ, այն արտաքուստ ուրախակցութիւնը կեղծաւորութիւն է, և ոմանք էլ նրա քամահիլց կատակում էին և ծիծաղաչարժ զաւէշտներ էին յօրինում, որոնք և հասնում էին նրա ականջին, բայց նա այդ ամենը բանի տեղ չդնելով համբերում էր։

Շատ ժամանակ չէ անցնում և ահա հետզհետէ հասնում է թէՀրան կալանաւորված ռուս զօրականներ, մէկ քանի թընդանօթներ և զրօշակներ, նիզակների վերայ ցցուած գլուխներ, հայ գերիներ և ուղիներ, և իւրաքանչիւր անգամ, որ պէտք էր ներկայացնէին չահին, սա ես կանչել էր տալիս մեծամեծներին, անդրատեսաւ և Մանուչար-խանին, որպէս զի ականատես լինէին այն հանդիսին։ Մէկ անգամ, պատմում են, չահն ասում է թէ «Մանուչար-խան, այժմ զղում ես որ սխալուած էիր, Աստուծով չուտով Փէթրի (Պետերբուրգի) առնելու լուրն էլ քեզ կյայտնեմ։ վասնզոյ ընծաներ պատրաստէ Տիեզերքի Աղօթարանի համար»։ Մանուչարը պատասխանում է թէ «Տիեզերքի Աղօթարան, ես դարձեալ իմ կարծիքի վերայ հաստատ կամ, վասն զի տեսած եմ որ ռուսները սայլով նապաստակ էին բռնում»։ Այդ պատասխանը մինչև ցայսօր Իրանի մէջ կրկնվում է։ Այն օրը ներկայ եղողներից ոմանք,

որպէս և խոսրով-խանը պատմում էին թէ, Մանուչարը յեռոյ սարՏցած խոտաբանվում էր թէ «Այս կարի անզգուշութեամբ արտարերեցի չահի առենում այն բառերը, թէև չուտով զրդՏացի, բայց խօսքը թռել էր բերանիցս, և զարմացայ, որ չահը համբերեց այն կծու և կսկիծեցուցիչ առածիս, ուր և ոչինչ զայրացման նշան ցոյց չտուեցաւ»

Մինչ այս՝ մինչ այն, հասնում է Ամիր-խան սարդարի ՄազաթՏվից սպանուելու լուրը, որ Շահքօռի պատերազմի մէջ պատահեցաւ, և ինչպէս ասանք պատմում էին թէ, իբր սազբարազէնն այս բօթն խլոյն չէ հաղորդում չահին, բայց երբ Մանուչարը լսում է՝ գինքը հիւանդ է ձևացնում, և մէկ քանի օր չէ գնում արքունիք, իսկ երբ այդ բօթին հետևում է ԴեռնՏայի մօտ Արբաս-միրզայի խորտակուիլը դարձեալ ՄազաթՏվից, այնուհետև ի հարկէ սազբարազէնն էլ չէ կարողանում ծածկել, ուստի երկու պարտութեանց լուրը միասին է յայտնում չահին։ Շահը հրամայում է որ մէկ քանի երեսի և խեղացի անձինք, ի թիւս որոց և Մանուչարը ներկայանան ինքեանն, որոց նախ յայտնում է իւր զօրքի պարտութիւնը (թէև նոքա ամենքեանն նրանից առաջ էին լսած) և ապա խորհուրդ է հարցնում թէ՝ ինչ պէտք է արած։ Այդտեղ Մանուչարը տխուր կերպարանքով խորին լռութիւն է պահում. իսկ միւսները դարձեալ անամօթութեամբ սկսում են ապազայ անՏիմն յուսերով չողոքորթել չահի անտիրատութիւնը, Այդ օրերը լուր էր հասել թէ՝ Ռուսները մտադիր են պատերազմական նաւեր մուծանել Անզալի, վասնզոյ չահը հրովարտակով հրամայում է Մանուչարին չուտով տագնապով գնալ Ռաշտ, Անզալի նեղուցը ամրացնել և փոքրով վերադառնալ Թէհրան, վասն զի նրա անձնանուրութիւնը այս նեղ միջոցին ամենանարկուած է չահին։ Մանուչարն Ռաշտի մէջ չահի երկար ժամանակ չեղողելոյ մասին ամենը հաստատում էին, որ չահը կասկածում էր նրա հաւատարմութեան վերայ, իբր չահը կասկածում էր նրա հաւատարմութեան վերայ, վասնզոյ և հրովարտակում գրուած էր չուտով վերադառնալ, վասն զի Մանուչարը կարող էր միանալ Ռուսաց հետ, և գաւառանել Պարսից տէրութիւնը, և թէ, սրա համար էր, որ պատերազմի ժամանակամիջոցում պահեցին նրան թէհրան։

Պատմում էր խոսրով-խանը թէ՝ Մանուչարն իւր անհաւատարմութեան մասին ուրիշների առաջիսի վերայ չէր կարողանում անարարեր մնալ, ուստի և սաստիկ զայրացած՝ սիրար կտրած և յուզուած գնաց Ռաշտ, ուր կատարեալ լով իրեն տուած յանձնարարութիւնը, չուտով վերադարձաւ թէհրան։ Այնուհետև հասնում են Երևանի, Սարդարապատ և

*

Աբբասաղա բերդերի առնուելը, Հասան-խանի և այլոց գերի ընկնելը, որով և Մանուչար-խանը ճանապարհի յոգնութիւնն ու խոթութիւնը պատճառ բերելով չյաձախեց արքունիք։

Մանուչար-խանի հայ սատրապներները պատմում էին թէ, պատերազմի սկզբէն մինչև վերջը նա սաստիկ արգիլից իւր պալատում չգրուցել այդ առարկայի վերայ. հետևեալ հեռացրեց բոլոր հայ ծառաները, հրամայեց իւր մօտն ու քրոջ որդի միրզայ-Դաւիթ Մելիքանցին՝ չյաձախել եկեղեցի և չընդունել իւրեանց բնակարում օր և իցէ հայ։ Թոյլ չտուեց մօրը գնալ չարի կամ ուրիշների կանանց, այն ինչ նա սովորութիւն ունէր չաթաթը միանգամ գռնէ այցելել չարի տիկիններ։ Այս չայցելելու համար՝ երբեմն երբեմն տիկիններ ներքինիք կգային հարցնել Ոսկում խանումի առողջութիւնը և խնամել պատճառը թէ ինչի է ոտը կորել կանանցից։ իսկ նա պատճառ էր բերում իւր որդիի և իւր հիւանդութիւնը։

Երբ Թէհրան լուր է հասնում, թէ Ռուսներն առաջնում են անցնել Երասխ գետը, չարը հրամայում է Ղարա բաղցի ներքինի Իբրահիմին գնալ անպատճառ յարուցանել, բերել Մանուչար-խանը, թէև նա անկողնի մէջ ևս լինի։ Իբրահիմը վերադառնալով իւր բնական անվեհերութիւնամբ և համարձակութիւնամբ առանց օր և իցէ սեթևեթանքի՝ երկարօրէն պատմում է չահին Մանուչարի խռովելոյ պատճառը, ամենայնայնմանով և այն երեսի պատուհասների անուն ները, որոնք կատակելով վնասացրել էին նրան։ Շահը կարի մտադրութիւնամբ և հետաքրքրութիւնամբ լսելից յետոյ՝ հրամայում է իսկոյն ներկայացնել իրեն այն կատակող պատուհասները, որոնք մօտ տասը հոգի են լինում։ Այս լուրի վերայ բոլոր Թէհրանը վրդովվում է, վասն զի գիտէին որ չահը սրքան թոյլ և նորզամյտ բնութիւն ունի, այնքան էլ խիստ է և սաստիկ երբ զայրանայ, և նոքա անչուշտ կպատժուէին, եթէ սադրագէմն ու ուրիշները չդարեխոսէին. այսու ամենայնիւ չահը նոցա վերայ զայրանալէն, նախատելէն ու հայհոյելէն յետոյ՝ հրամայում է որ անպատճառ գնան Մանուչար-խանի պալատը, ներուին ինդրեն, սիրան առնեն և ներկայացնեն իրեն, ապա թէ ոչ՝ ասում է նա, այսօր չատ գլուխներ կանջատուին իւրեանց մարմնից։ Նոքա իսկոյն գընում են Մանուչարի պալատը, աղաչում, պաղատում և խնդրում ներել ինքեանց, և աղերսում միասին գնալ ներկայանալ չահին։ Մանուչարն ընդդէմ համեստութեան և նոցա պատուին է համարում միասին գնալը, ուստի և ասում է,

դուք գնացէք արքունիք, սպասեցէք ինձ, ես չուտ կուգամ և միասին կիներկայանանք չէին։

Կէս ժամից յետոյ ներկայանում են չէին. երբ և Մանուչարը խնդրում է, որ Տիեզերքի Աղօթարարը ներէ այն պաշտօնատարներին, որոնք ոչ թէ չարամտութեամբ, այլ միամտութեամբ կամ անգուշութեամբ են վարուած նրա պատուի և հաւատարմութեան հետ։ Շատն արձակում է նոցա անմնան և հրամայում է Մանուչարին մնալ իւր մօտ, որով վերջնոյս յարգը առաւել ևս բարձրանում է տէրութեան և ժողովրդի աչքում։

Արանից յետոյ Մանուչարը վերահասաւ լինելով Աւարպատականից ստացած պաշտօնական թղթակցութիւններից այնտեղի անցքերի մասին, խորհուրդ է տալիս չէին որ Արբաս-միրզան պատգամախօսութիւն ոկսի Թուսաց ընդհանուր զօրավար Պասկիէվիչ հետ հաշտութեան մասին։ մինչեւ ժամանակ անմիջապէս չէնը հրամայէ, որ նախ զորաժողով լինին հետի նահանգներում, զորօրինակ Կզլ, Քիրման, Խորասան և Ֆարսստան Երկրորդ մօլլաների բերանով քարոզել տայ Իրանի բոլոր մէշիթիների մէջ թէ՝ այդ պատերազմը կրօնական է (ջիհատ), ուրեմն ամենայն մուսուլման պարտաւոր է զինուորվիլ ընդդէմ հաւատի հակառակորդներին, և երրորդ՝ գրել ուղարկել Աբբաս-միրզային, որ քաջալերէ նահանգներով, մինչեւ ժամանակ մէկ քանի երեսէն և հարատար մօլլաներ ուղարկէ Աւարպատական խրախուսել և զգուշացնել ժողովուրդն ու զօրքը։

Երբ Աբբաս-միրզան հաղորդում է չէին թէ քո հրամանի համեմատ ընտրեցի պատգամաւոր Թաւրիզի Բէգլարբէգի Ֆաթ-Ալի-խանը և ուղարկեցի Պասկիէվի մօտ, բայց նա ինքն պատրաստ վերադարձաւ, չէն էլ այս նամակը տալիս է Մանուչարին, որ կարդալից յետոյ ասում է չէին այն երեսելի խօսքը, որ մինչեւ ցայսօր դառնութեամբ են յիշում խրանցիք. այսինքն թէ՝ «Աղօթարան Տիեզերքի, գրեցէք Նայիբ-Ուլ-Սուլթանին թէ՝ պատգամախօսութեան և քանակցութեան մէջ երբէք իսկական պարսիկ չիասնէ, վասն զի նիմ քո զրկած բէգ իսկական պարսիկ է, ասուները կարթեցնեն, և նրա պատգամաւորը գինեխում է, ասուներ կարթեցնեն, և նրա ծածուկ խորհուրդները զրուցել կասն. իսկ եթէ մոլեսրտի ծածուկ խորհուրդները զրուցել կասն. իսկ եթէ մոլեսրտի հետ կրոն է, այն ժամանակ չարիաթի կէտով ասուներ հետ կասավարուելով, կը զգուացնեն նրանց [1]), նոքա էլ կարճամարկաւավարուելով։

---

[1]) Մանուչար-խանը սարսափով կանգնում էր ասել թէ, պարսիկները պիղծ համարելով քրիստոնեաներին, պատգամաւորն էլ նրանց հետ չի տալ, ոչիդ հանգր

հեն պատգամաւորը ու չեն էլ ուզիլ յարակցութիւն ունենալ այնպիսի մարդի հետ, որ նրանցից գաղչում է. ուստի այդ պաշտօնի համար ես ամենից աւելի յարմար և յաջողակ եմ համարում Բէժան-խանը, բայց թերևս վերջինս բացակայ լինի կամ հիւանդ է, կամ թէ չկամենայ Աբբաս-միրզան նրան ուղարկել. ուրեմն թող ընտրէ այնպիսի դերի, որ յաջողակ լինի։ Շատ զանազան հրամանագրերով հրապարակ է գրում Աբբաս-միրզային, և լուսանցումն իւր ձեռքով ուելացնում թէ «ամենեին իսկական պարսիկ պատգամաւոր չուզարկեսց». Արդարև, Բէժան-խանի պատգամաւորութիւնը կատարելապէս արդիւնաւոր է լինում. վասն զի նա համոզում է Ռուսաց զօրավարը, որ Դէյմարդան քաղաքում տեսութիւն անէ Աբբաս-միրզայի հետ։ Այդ տեսութիւնից ծագեց Թիւրքմէնչայի դաշնագրութիւնը, որով Իրանը պարտաւորվեցաւ վճարել Ռուսաստանին տասը քուրուբ դրամ [1]։ Շատ գանձարանից դրամներ հանել, կշռել զատ զատ տոպրակներ լցնել և կնքել, յանձնեց Մանուչար-խանին։ Ամենք ասում էին թէ, իբր մէկ քուրուբ այն ժամանակ վճարելի գումարից պակաս լինելով Մանուչար-խանն իւր ստորագրութեամբն ու կնքով փոխառեց վաճառականներից և լրացրեց պակասորդը, այլը կէս քուրուբ էին ասում։ Որպէս և իցէ, այս քաջ գիտենք, որ նա Ռաչից հարիւր հազար թուման բերել տուեց Թիւրքմէնչայ, որ ուիթ քուրուբը լրացնէ.

Աբբաս-միրզան և Պասկեվիչը տակաւին Թիւրքմէնչայ էին որ Մանուչարն այս գումարը բերաւ և յանձնեց Ռուսաց պաշտօնատարներին։ Մանուչարը չէր ուզում ոչ միայն Պասկեվիչի, այլև որ և իցէ ռուս պաշտօնատարի հետ յարակցութիւն ունենալ, մինչև անգամ իւր երկրացի հայերի և վրացիների հետ. վասնորոյ Պասկեվիչը խնդրում է Աբբաս-միրզայից, որ նա հրամայէ Մանուչարին այցելել իրեն, երբ և Պասկեվիչը շնորհաւորում է Մանուչար-խանին Ռուսաց կայսեր շնորհելը Սպիտակ Արծուի առաջին կարգի ասպետութեան ժապաւէնը և ակնանակալ ասողը։

Երկու տէրութեանց դաշնագրութեան զօրութիւնով՝ Պարսկաստանը պարտաւորված էր վերադարձնել Ռուսաց հրպատակ գերիները։ Թէհրան գերիները վերադարձնելու համար

նեակը չի մանել, նրանից յետոյ պէտք է գնայ գուլպաներն ու բոլոր հագուստը՝ փոխէ, որ սրբուի և մաքրուի, որով և Ռուսների հակակրութիւնը կզօրացնէ։

[1]) Իւրաքանչիւր քուրուբը՝ հինգ հարիւր հազար թուման է Պարսից։

նշանակուած էին Մանուչարն ու Թեղլար-բէգը, որպէս զի ինչ գերի ցանկանար վերադառնալ իւր հայրենիքը, ներկայանար այդ երկու անձնաւորութիւններին, անցագիր ստանար նոցանից, որ ճանապարհներում ոչ ոք արգելութիւն չլիներ։ Եւ եթէ որ և իցէ պարսիկ գլանար ազատել իւր գերին, նոքա պարտաւոր էին ուժով խլել և ճանապարհ ձգել և կամ յանձնել գերին տիրոջը, որ եկել էր որսնել գտնել, և այլ այսպիսի կարգ և կանոններ էին սահմանած գերիների մասին։ Մինչև դեսպան Գրիբոյեդովի թէհրան գալը, որպէս և իցէ գործն ընթանում էր, բայց 1828 թուականի վերջերում, երբ յիշեալ դեսպանը թէհրան եկաւ, գործն ուրիշ ընթացք ու կերպարանք ստացաւ, ինչպէս մանրամասնաբար պատմած ենք ներքինի Աղայ-Եաղուբ Մարգարեանի կենսագրութեան մէջ, թէ ինչպէս չարաչար սպանուեցաւ դեսպանը, նրա մարդիկը, յիշեալ Մարգարեանն ու Մանուչար-խանի քրոջ որդի իշխան Մելիքովը, որում և նրա պատճառով կաթուածով վախճանեցաւ Մանուչարի մայր Ռանում խանումը։

Վերադիրեալ անցքից մէկ քանի ամիս անցած (1829) մեռաւ Մանուչար-խանի անողոքելի ստիպը՝ երևելի պետական անձն մի բոյ-Ալրդ ուլ-ա՛ն՝ Մոշթէմի-ուլ-Դաուլէն, որի վեհ պատուանունն Մոշթէմի-դ-Դաուլէ, այսինքն նեցուկ կամ հիմն տէրութեան, չանը չնորհեց Մանուչար-խանին, որպէս զի պահէ նա իւր նախկին պատուանունս Խ-Ազասի-Բաշի, այսինքն մարդպետան-մարդպետ։

Առաջիկայ տարին Ասպանան է գնում չանը, որին ուղեկից են լինում տէրութեան առաջնակարգ խոտոր երևելիները, նրանց մէջ լինում է նաև Մանուչար-խան Մոշթէմի-դ-Դաուլէն։ Կայարանների պատմութիւնն այդ երևելի անձնաւորների երկրորդ անգամ յիշում է Մանուչարը, որից յայտնվում է թէ նա՝ որ ասոնցան բարձրացել էր այդ ժամանակ, Շահն Ասպահանից վերադառնալիս գնաց Զանգան, նակ, Շահն Ասպահանից վերադառնալիս գնաց Զանգան, ուր Ռուսաց դեսպան զօրապետ իշխան (կնեազ) Պօլգորուկովն սպասում էր նրան, որի համար տէրութիւնն ամենաչքեղ պատրաստութիւն և ընդունելութիւն էր պատրաստած. վասն զի Գրիբոյեդովի տխուր անցքի համար թոսրով-մրրդան գնացել էլ Պետերբուրգ, հրապարակաւ կայսերից ներում էր խնդրել և վերադարձել Ռուսաց առաջին դեսպանը Պօլգորուկովն կամ էր. որս հրամանա չանի բոլոր մեծամեծներն այցելում էին, և չասյլ ու չբերդ հացկերութիւններ էին տալիս. բայց Մանուչար-խան Մոշթէմի-դ-Դաուլէն այդ այցելութիւններից և հանդէսներից հեռի էր պահում զինքը, պատրուակ բերելով և հանդէսներից հեռի էր պահում զինքը, պատրուակ բեր-

բերով թէ՝ ազատոր է իւր մօր և քեռորդի Մելիքովի համար, թէ, որպէս պատմած ենք, նա մէկտ երկիրը էր կրում Ռուսաց հետ յարակցութիւններից, որովհետև նրա հակառակորդներն այդ մասին բամբասում էին նրան, մանաւանդ որ նրա երկ եղբայր միրզայ-Աբրահամը գլխաւոր թարգման էր Անդրկովկասեան կուսակալների մօտ, վասնորոյ ամենաչնչին զրպարտութիւնը նրա վերայ ճշմարտանման էր երևում պարսիկների աչքում։

Բարոն Բոդին զօրապետը նշանակուեց Անդրկովկասեան կուսակալ, որ Թիֆլիս հասնելէն յետոյ (1832—1833) 1248 Հիջրին ուղարկեց իւր թարգման միրզայ-Աբրահամի ձեռքով չարի և նրա պարտականների համար ընծաներ, ինչպէս որ իւր նախորդները զրկած էին։ Այս ժամանակը Մօհամմէդ-Ուզդովլէն Ռաշտ լինելով ապստամբած էր, որ իւր եղբայրը իշխելէր իւր պարտում և տէրութիւնից ծախսի համար գրամ կամ սուրտաթ չտանայ, որպէս երկու տէրութեանց դաշնադրութեան մէջ գրուած էր թէ, գեսպանների մտքերը պէտք էր տէրութիւններից լինէին։ Շատը չսորհում է միրզայ-Իբրահիմին խանութեան պատուանուէր, և մէկ երեքի պաշտօնեայ էլ ուղեկցում է նրան, որ ինչպէս հիւրընկալ առաջնորդէ նրան մինչև Ռաշտ, ուր նա իւր եղբօր հետ տեսութիւն անէ, և այնտեղից տանէ հասցնէ Թավրիզի վրայով Ռուսաց սահմանագլուխը Հին-Ջուղայ։ Միրզայ-Իբրահիմ խանը կացու Թավրիզ տասն օր՝ փոքր եղբայրը Ազաալար-խանի տանը և ուղեորելիս Թիֆլիս, ես նա՝ գրիչս, նրա հետ միասին գնացի Հին-Ղախիջևան, որպէս զի 15 օր կարանթինում չկենայի ինչպէս և նա։

Թագաժառանգ Աբբաս-միրզան 1249 Հիջրին (1833) մեռաւ Խորասան, և նրա երկ որդի Մահամմէտ-միրզան, այնտեղ եղած բանակով վերադարձաւ Թէհրան։ Մինչև սրա հասնելը՝ չէր շուտով Ռաշտից բերել տուց Մօհէմմդ-Ուզդովլէն Թէհրան։ Ուրա ծածկարար երեք օր էր, որ օրը մէկ երկու ժամ միայնակ խորհրդակցում էին, ոչ որ չէր իմանում թէ ինչ է նրանց դիտաւորութիւնը։ Ի վերջոյ այդ լուրն է տարածվում, որ Մօհէմմդը պիտի մեծ հանդիսով ընդունէր Մահամմէտ-միրզան, ուստի և չէր նրան բերել էր, որ այն հանդիսի համար պէտք եղած կարգադրութիւնն անէ։ Ո՛րքան Մահամմէտ-միրզայի գալով Իրանի մայրաքաղաքը չբեղ և փառաւոր էր, որի նմանը դեռևներին ևս չէին արած, այնքան էլ այն լուրը, ժողովուրդի հետաքրքրութիւնը չէր համապատասխանում. վասն զի վերջին պարսիկը զգում էր, որ մէկ տարբերութիւն և անխորհրդաւոր անցք պիտի ծագի այդ կարգէ դուրս

ընդունելութեան տակից, որ իմացուեցաւ երեք օրից յետոյ, այսինքն, կազմուեցաւ չորի ծայրագոյն տանեանը, ինչպէս կկազմուի Ղ ա ֆ ա ղ ա ն, ուր հրաւիրեալ էին բոլոր քաղաքական և զինուորական ատիճանաւորները, մօլլաները, սէիդներն ու երեկի վաճառականները. մանաւանդ բոլոր աբքայազուններն, որոնց հետ էր և Մահամմէտ-միրզան Շահը դուրս է գալիս իւր առանձնատնեակից զգեստաւորված բոլոր իւր աբքայական փառաւոր թագովը, ականակուռ շղթերովը և աբքայական նշաններովը և բազմում գահի վերայ, և յայտնում է Մահամմէտ-միրզան թագաժառանգ տէրութեան, նրա հայր Աբբաս-միրզայի տեղը. Այդ նշանաւոր յայտարարութիւնը պատճառ եղաւ աբքայազունների մէջ մեծամեծ տարաձայնութիւնների, որոնք և միաբերան դատապարտում էին Մահմէտ-Ալի-Գաֆարը, առաջ բերելով թէ նա է խորհուրդ տուել շահին որ ընտրէ մէկ անտիրոջ և ապարդիւն երկուսայրդ և արհամարէ, մերժէ այսքան արքայազուններ, որոնք հասակով, արդիւնքով և քաջութեամբ գերազանց են քան զնա և այլն, և այլն. Ամենից աւելի անբաւական էր Աբբաս-միրզայի համամայր Ալի-շահը և Ջիլլի-սուլթան մականուանեալը, որն խրատի սովորութեամբ տալի իրաւունք ունէր թագաժառանգութեան, փութով բաղկացան պետականներից երկու հօր և ստուար կոչմնակցութիւններ, այսինքն Մահամմէտ-միրզայի կոչմնակցութեան գլխաւորներն էին Ալլահեար-խան Ա ս ֆ ի-Ա ղ-Դ ա վ լ է ն (որ քեռի էր Մահամմէտ-միրզային), Ադաքանի սրփահդար կուլամ Հիսէյն-խան և մեր Մանուչար-խան Մահմէտ-միրզայ-Դավլէն, իսկ Ջիլլի-սուլթանի կոչմնակցութեան գլխաւորներն էին Արզուլլա-խան Ի մ ի ն-Ա ղ-Դ ա վ լ է ն որ և սադրապետ էր, Միրզայ-թագի Ալի-աբաթցին, Միրզայ-ադայ-խան Լ է ղ ք էր Ն ո ռ ի ս ա ն, Բայց միւս աբքայորդիները գեռևս լռել էին, տածելով իւրեանց ազատայ յոյսը, և ներսը գեռևս լռել էին, տածելով իւրեանց ազատայ յոյսը, և այստեղ ամենեքեան յայտնի և ծածկաբար մրմնջում էին թէ «Այդ ամենը երեիայական խաղալիքներ են, երբ մեր հայր շահը կմեռնի, այն ժամանակ, ինչպէս մինչև յայսօր եղած է Իրանի մէջ, նա կժառանգէ թագաւորական գահը, ով որ քաջ է, ով որ պատերազմական հոգի ունի, և ով մարտի սաստիկ է պարտիզում յաղթող կհանդիսանայ»։ Ինչ և իցէ թագաւորական գահաքն ալեկոծեալ ծովի նման ծփում էր զանազան կարծիքներով և համոզմունքներով, որոնք չատով տարաձայնացան և բացակայ նահանգների մէջ, վասն զի անարդ-շահն, որպէս և էր, Իրանի բոլոր նահանգները, գաւառներն ու մինչև գաւառակները՝ բաժանել էր իւր որդիներին և թագաժառանգ գաւառակները՝

Ներքին, որոնք երբ լսեցին, զայրացան ու կատաղեցան, սկսեցին գրգռել և դրդել մոլլաներն ու սեիդները ընդդեմ նոր թագաժառանգին, անուանելով նրան անհաւատ, մոլորիչ, այսինքն հետևող քրիստոնեաներին, ձուինագրելս (բալը գրաչ) խոզի միս ուտող, գինեխում և այլն, և այլն, մինչեռն ժամանակ ուշացնում էին թէ, այդ ամենի հեղինակն է երբեմն քրիստոնեայ, և այժմ կեղծ մուսուլման Մանուչարը, որ մէկ տարի գրամով կվաճառէ բոլոր Պարսկաստանը և այլն, և այլն։

Մանուչարը քնած չէր, նրան յայտնի էին ամենայն տարաձայնութիւնները, ուստի և խորհուրդ տուեց չահին հրամայել նոր թագաժառանգին, որպէս կրտսեր հասակով, և մանաւանդ Զիլլի-սուլթանը հօրեղբայր է նորա, որ նա դնայ այցելէ իւր հօրեղբօրը, որպէս զի, աւելացրեց Մանուչարը, այդ հրդեհը շիջանի։ Շահը հրամայեց թագաժառանգին, որ Մանուչար-խանի առաջնորդութեամբ գնայ Զիլլի-սուլթանի պալատը՝ և այցելէ նրան։ Կարի չթող է եղած այս հանդէսը, բայց երկարութիւնից խուսանալով, այստեղ ասենք, որ այն օրը թագաւորական քաղաքում գտնուող բոլոր արքայազունները, ոստանիկ անձնաւորութիւնները, դիւանապան և քաղաքական աստիճանաւորները ներկայ են եղած հանդիսին։ Զիլլի-սուլթանը բազմած է եղած իւր մեծ եղբօրների հետ, իսկ կրտսերները՝ միւս բազմութեան հետ ոտի վերայ կանգնած են լինում, երբ և թագաժառանգն ու Մանուչար-խանը ներս են մտնում նրա դահլիճը, բոլոր բազմած արքայազունները ոտի վերայ են կանգնում, բացի Զիլլի-սուլթանից—Ալի-շահից։ Երրորդ օրը վերջինս, դարձեալ Մանուչարի առաջնորդութեամբ՝ գնում է իւր եղբորորդին այցելելու։ Ներկայ են լինում նոյնպէս բոլոր արքայազունները ու մեծամեծները, միայն զանազանութիւնը այն է լինում, որ թագաժառանգը ոտքի վերայ է կանգնում իւր հօրեղբօր համար և մէկ քանի քայլ առաջ է ընթանում, որի համար Ֆաթ-Ալի-շահը զսպում է Մահամմէտ-միրզայ թագաժառանգի համառութիւնն ու պարկեշտութիւնը։

Շատերը, ինչպէս և Մանուչար-խանը համոզուած էին, որ այդ այցելութիւններն անհետ կանեն հեռ. և նախանձը, ընդհակառակն չշունչ կար թէ, ոչ միայն թագաժառանգի, այլև նոյն իսկ շահի կեանքը վտանգի մէջ է։ Այդպիսի դատաճանութիւններն օտարտոի և անօրինակ յայտնութիւններ չէին խրատում, ուստի և տեսնում էր Մանուչար-խանը, որ այդ մէկ կայծ էր, որից կարելի է անշիջանելի հրդեհ բորբքի, և ինքն էլ նրան զոհ լինի, վատնոյ մտածեց մէկ ուրիշ հնարքի, այս-

ինքն, նա սոխպեց չանին, որ Տրամայէ Մահմմէտ-միրզային փոսեթով իւր բերած բանակովը չուէ, գնայ Ատրպատական, և ինքն էլ պատասականներով և խոնա երեկի մեծամենեներով ուզեցի Ասպահան, և անան Շերազ, և Թոնէ թէհրանում իւրեան տեղապահ Զիլլի-սուլթան Ալի-չանը, որպէս զի նախ թագաժառանգը հեռանալով, այդ սուլթանները հանդարտուին և նորա կողմնակիցներից չատերն էլ նրա՝ չանի հետ երթան. երկրորդ՝ չանը հետը տարած լինի այն երեսկիները, որոնք երկու հակառակ կողմնակցութեան գլխաւորներն են. երրորդ՝ փառատոյ և թեթևամիտ Ալի-չանը իւր նոր պաշտօնով առժամանակ հրապուրվելով, թերևս լռէ և լռեցնէ իւր կողմնակից չարախօսները, նա մանաւանդ՝ այդ կողմնակիցները հեռանալով թէհրանից իւրեանց յուշ և մտքը զբաղցնելով ճանապարհորդութիւնով կմոռանան այդ անցքի վերայ խօսել և զրպարտութիւններ հնարել. Չորրորդ Կրմանի և Ֆարսստանի մարզպաններ թերևս կտայ Ասպահան անվնաս հարկերի համար։

Ֆաթ-Ալի-չանն ընդունեց Մոհիմմադ-Կուլիի խորհուրդը և կատարեց, վանորոյ և վերջինս էլ չառաջեց գնաց Դաշտ, ուր կարող էր ապահովացնել իւր անձը։ Թորոմ-խան Կաթիմագանցն այդ անցքերը պատմելից յետոյ՝ աւելացրեց թէ՝ Մահուչար-խանը չատ լաւ էր ճանաչում Ֆաթ-Ալի-չանի յիսուսնաչափ որդիները, որոնց մէջը Մահամմէտ-միրզան, թէև արդարև պատերազմական անձն չէր, բայց ամենից աւելի արդարև պատերազմական անձն չէր, բայց ամենից աւելի համեստ, բարոյական և խաղաղասէր հոգի ունէր, նա մանաւանդ գիտէր, ինչպէս և թիւրքմէնչայի դաշնագրութիւնը կնքելիս, ներկայ էր, որ Ռուսներն ընդունել էին և պէտք է պաշտպանէին Աբբաս-միրզայի և նրա ժառանգի թագաժառանգութիւնը, որպէս զի և Պարսից չահութիւնը ժառանգական լինի. ուստի և ինքը Մահուչարն էլ աշխատում էր Մահամմէտ-միրզայի ապագայ ապարզը մաքրել, յստակացնել համամէտ-միրզայի ապագայ ապարզը մաքրել, յստակացնել և ոչնչացնել այն խոչընդոտներն ու արգելքներ, որոնք չանի մեռնելից յետոյ, անշուշտ պիտի լարուէին և պատրաստում էր նրա համար մէկ անարիւն սեղան, որ մարդկանց համար առանչին և մեծ փառքն է։

Ո՛րպէս և լինի՝ Մահամմէտ-միրզան թէհրանից գուրս եկաւ իւր բանակովը չատ փառաւոր հանդիսով և Մայլոի վերջերում եկաւ Թավրիզ ուր հաղիւ թէ չորս ամիս կացաւ և 14 Նոյեմբերի ետոյ Ֆաթ-Ալի-չանի մեռնելն Ասպահան, որ 9 Հոկտեմբերի 1834 թուին էր պատահել, որի ազգատ բոլոր Պարսկաստանը յուզուեց, խռովուեց և շփոթուեց, վասն զի չորս տեղ՝ չորս հակառակութիւն չաներ, իրանց ձագ ու ձուզի չորս տեղ՝ չորս հակառակութիւն չաներ, իրանց ձագ ու ձու-

զով և արքանեակներով թագ կապեցին և սկսեցին քարոզել զինքեանս՝ չան, այսինքն Թավրիզ—Մահամմէտ-միրզան, Շիրազ—Կասան-Ալի-միրզան՝ մականուանեալն Ֆարման-Ֆարմա, Աստարաբատ — Մահամմէտ-Կուլի-միրզայ՝ մականուանեալն Մուլք-Արա և Թէհրան—Ալի-շահ կամ Ալի-խան, ըստ պատմութեան կաղարներէ՝ մականուանեալն Զիլլի-սուլթան։ Ո՛վ ցանկանում է տեղեկանալ այդ անցքերին և ճանաչել պարսկերի իսկական բնաւորութիւնը, բաւական է կարդայ երեսնի հայկական Մեսրոպեա թարգմանեցի գրած «Պատմութիւն Պարսից գիրքը (երես 231—277)։

Ֆաթ-Ալի-շահը, որպէս ասացինք՝ տեղապահ էր կարգել Թէհրան Ալի-շահը (Զիլլի-սուլթան), որ լսելով իւր հօր մահուան լուրը, իսկոյն թագ է դնում իւր գլխին, և զինքը հրատարակում չան։ Բաց է անում գանձարանը բաշխում անդադար ազատներին և անազատներին և չափազանց վատնում, անմիջապէս հրովարտակներ է գրում մօլլաներին, կուսակալներին, նահանգապետներին և հրամանատարներին, մինչև անգամ և Մահամմէտ-միրզայ թագաժառանգի վերայ ևս, որ ճանաչի զինքն Իրանի չար։

Մահամմէտ-միրզայի վիճակն ամենից վատթարագոյն էր, վասն զի նոր հասած Թավրիզ, տակաւին անտեղեակ էր Աստրպատականի անտեսական կառավարութեան և արդիւնքին, ըստ որում տեսչութիւնն արդէն ժողոված և կամ վճարած էր զինուորական և քաղաքական պաշտօնատարներին և զօրքին, բացի սրանից նորա հետ խորասանից վերադարձած զօրքերը, որոնք երկու տարի էր որ ռուսիկ չէին տացել, և գրեթէ անկարելի էր նոցա կրկին ռուսիկ չվճարած՝ առաջնորդել, կամ պարզն ասած, բռնութեամբ վարել Թէհրան, իսկ Ռուսաց և Անգլիացւոց դեսպանները, յորդորում և սարսռում էին, որ նա չասպէ, գնայ Թէհրան, բազմէ իւր օրինաւոր գահի վերայ։ Մինչդեռ նա գրամի մասին մտայոյզ տատանմունքի մէջ էր Անգլիացւոց դեսպանը լսում է, որ Ռուսաց դեսպան Կոմս Սիմոնիչը խոստանում է մէկ քանի դուսդ Ռուսաց զօրք տայ, որ նրան ուղեկից լինի մինչև Թէհրան, վասնզոյ և նա, Անգլիացւոց դեսպանը խոստանում է թագաժառանգին մէկ քանի տասնեակ հազար թուման գրամ փոխ տայ, որպէս զի բաժանել զօրքին, չնայելով նոցա չատութեանն ու սակաւութեանը, դարձ գայ Թավրիզից, գնայ Թէհրան։ Այդ ստացեալ գրամով թագաժառանգը հարիւր թէ 2500 զօրականներով դարձ եկաւ Թավրիզից ծանրաբայլ և սին յուսով. գնայդ և իցէ յառաջանալով հասաւ Զեանդան, ուր ընդդէմ ակնա-

յութիւնն, յանկարծ նամակ է ստանում Խչ-Ագաթ Մանուչար-խան ՄաՀմէտ մը-Ալ-ԴաՀաղէ-ից (այսինքն սիւն տէրութիւնն), որով հնարաւորում է նրա շահութիւնը և յորդորում չսպասել, փութալ մանել ԹէՀրան, և թէ ինքն էլ երեք չորս օրից յետոյ դուրս է գալու Ռաշտից ութսուն հազար թուման դրամով [1]) և բանականին զօրքով, որ գայ հանէ նորան ճանապարՀին ուր և իցէ։ Միրզայ-Աղդուլ-Կասում Զաքիմզամը այդ նամակի պատճէնը գաղտփարել է տալիս և ուղարկում շատ մարզպանների, նահանգապետների և հրամանատարների։

Դժուարին չէ երեակայել թէ, ՄաՀմէտմիզի նամակն այնպիսի անձուկ ժամանակին ինչ հզօր և վսեմ ազդեցութիւն կունենար ոչ միայն շահացուի և նորա ազգատիպ բանակի վերայ, որ ապագայ յաւստ տածուելով ակամայ յառաջ էր խաղում, այլև նրանի ժողովուրդի և հրամանատարների վերայ։ Բոլոր կրանը ճանաչելով ՄաՀմէտմիզի խելացիութիւնը, հնարագիտութիւնն ու ամենանարուտա լինելը և թէ ինչ զորձի նա ձեռնամուխ լինի, անպատճառ կկատարէ, վանսրոյ և արքայացուի բոլոր կողմնակիցներն ու զօրքը քաջութիւն զգեցան, նրանց յոյսը կենդանացաւ, միտամանալով որ շահացուի ասոխները և հակառակորդները շատ թէ ուշ պիտի կործանան և կործանուին։

Շահացուն հասնում է Սուլթանիա ամբարնոցը, մէկ քանի բուսէից յետոյ, գեռևս ճանապարՀի կոչիկները չհանած, հասնում է և ՄաՀմէտմիզը քանական ձիաւորներով, ներկայանում է նրան և մատուցանում է մէկ հազար թուման ոսկեդրամ, յայտնելով թէ, այս գումարը բերել եմ քո զրպանի ծախսի համար,—երկնչելով որ մեացեալ խոստացած գումարը հետս բերէի, իսկ քառասուն հազար թումանը երկու կամ երեք օրից յետոյ կստանաք ձիաւոր զօրքի, և մնաց քառասուն հազարը՝ կստանաք՝ հետևակ թֆանգչի զօրքի հետ կազմրին կամ մէկ օթևան նրանից հեռի։ Արդէնեան ՄաՀմէտմիզն իւր հետ ծանրութիւն չէր բերած, վասնզոյ շահացուն հրամայում է նրան թէ, մինչև քո տան կարգ ու սարքը ժամանելը, գու թագաժառանգի հիւրն ես, և իշխացնում է նրան իւր վրաններումը։

Շահացուն հասնում է երրորդ օրը Թուռաէմ-դիլէ, ուր

---

[1]) Կաչարների պատմութիւնը յիշում է միայն 40 հազար թուման դրամը, որ ՄաՀմէտիզը հեռը բերեց իսկ միւս քառասուն հազար թումանը որ կարքին հասաւ, նրա համար լռում է։

երկու ժամից յետոյ՝ հասնում է. Մահմէտիդի բերած հեծեալ զօրքը քառասուն հազար թուամնով և զանազան հազուագիւտ ընծաներով որպէս չհանցուի, նոյնպէս և նրա դրան մեծամեծերի համար։ Աւելորդ է ասել թէ՝ բանակն ինչ սիրով առաջ կերթար նորեկ [1]) զօրքին և համակրական ասպնջականութեամբ կընդունէր նրան. որ դանդ էր բերում նորա համար։ Հետեւեալ օրը բանակը՝ սկսեալ մեծից մինչև վերջին սովական զօրականն ու քաղաքական պաշտօնատարները, իւրանց ոռմիները լրութեամբ ստանում են. վանսորոյ և այնուհետև քրիստոնէիներ վերանում է, յուսահատութիւնը տեղի է տալիս ուրախութեան, որով բանակն սկսում է չարունակել իւր ընթացքը բարեկարգութեամբ, և չհանցուն Մահմէտիզ-Ալդ-Գովլէի խորհուրդով մեծ վտանգութեամբ հրամարտակներ է գրում խրանի բոլոր կուսակալներին, մարզպաններին, նահանգապետներին և հրամանատարներին թէ՝ ինքը որպէս օրինաւոր ժառանգ չահութեան գահին, գնում է բարձրել գահի վերայ. ուստի հրամայում է նոցա չնեղանդիլ ինքնակոչ և հակառակորդ չահերին, և ով որ նրանց դրամ հատուցանէ կամ նրանց զօրքին արմտիք հայթայթէ, անշուշտ կպատժուի։ Եւ այսպէս այնուհետև ամենայն ինչ կատարվում էր միրզայ Աբդուլ-Գազուզ Կայիմզամի և Մահմէտիդի խորհրդովը։

Շահացուն կազմին մօտ բանակած էր, երբ Ռաշտից հասաւ և միւս քառասուն հազար թուամնը, 500 հեծեալ թֆանգչի զօրքով, առաջնորդութեամբ Աղալար-խանի մեծ եղբօր Մահմէտիդի։ Նորա երկրորդ օրը ժամանում է և խոսրով-խան Դայիմգանցը (ինչպէս և սոցա կենսագրութեան մէջ պատմած ենք), որ եկել էր Ալի-շահ Զիլլի-սուլթանի կողմից՝ որպէս պատգամախօս, որպէս դի ստիպէ, խրատէ և յորդորէ Մահամմէտ-միրզան, որ իւր երեսի ջրովը վերադառնայ թաւրիզ և բաւականանայ Ատրպատականի ընդարձակ երկրի կուսակալութեամբ։ Մանուչար-խանը երբ լսում է խոսրով-խանից թէ՝ շրանի մէջ անցած հանդամանքներն ու որպիսութիւնները, գնում է չհանցուի մօտ, գաղանի ասում, խօսում և լսում ու երաշխաւոր լինում, որ ի հեռուստ անտի հնարք գործ կածէ և կաղանաւորել կսայ թէ՝շրանի մէջ Զիլլիսուլթանը։ Հետեւեալ օրը խոսրով-խանն ուղարկում է թէ՝շրան

[1]) Այս բանկանում էր 2000 հեծելազօրքից, որոնց երիվարները, զրահները և ծախքն ցթէ՝շրան Մանուչար-խանի անձնական ծախքումն էր։ Պաշարների պատմութիւնը սոցա համար յիշում է. իսկ լսում է յետոյ եկած 500 հեծեալ թֆանգչի ասած զօրքի համար, ինչպէս և 40 հազար թուման նոր բերած գումարի համար։

իւր սոսրադրեալներից հաւատարիմ, խորհրդապահ և բան հասկացող մէկը, որ իրր թէ նրանից, Խոսրովից, նամակ է տանում Զիլլի-սուլթանին, հաղորդել նրան իւր խոսակցութիւնները Մահամմէտ-միրզայի հետ և նրա պատասխանները. բայց Մանուչարն ու Խոսրովը տալիս են գրատարին թերանացի պատուէրներ և հրահանգներ, զորս պարտ էր նա աւանդել Թէհրանի Բէգլար-բէգի Մահամմէտ-Բաղր-խանին Զիլլի-սուլթանն ու նրա արբանեակները կալանաւորելու համար. միևնոյն ժամանակ ծածկաբար յանձնում են գնացողին չահացուի ձեռագրով գրուած մէկ փոքրիկ նամակ Բէգլար-բէգի վերայ, որ եթէ կալանաւորէ ինքնակոչ չահը՝ մեծ պատուի ու փառքի կարժանանայ և այլն Բէգլար-բէգը կարի հնազանդութեամբ կատարելով Մանուչարի և Խոսրովի հրահանգները, կալանաւորում է Զիլլի-սուլթանը և հաղորդում չահացուին, և այնուհետև չահացուն չտապում է, գնում հասնում Թէհրան և իջևանում արտաքոյ պարսպի՝ Նիգարատան ասացեալ այգիի պալատում, և 9 Դեկտեմբերի 1834 ամի կատարում է թագադրութեան հանդէսը.

Բիչ ժամանակից կայիմդամն ուղարկում է Ալլահեարխանը Խորասան և առաքարկում է Մոհամմէդին գնալ Շիրազ և զսպել Ֆարման-Ֆարմա. բայց նա չէ ընդունում Մէկ քանի օրից յետոյ չահն ատենումը կրկին զիմում է Մոհամմէդին և ասում թէ, զու պէտք է գնաս Շիրազ. Նա ևս պատասխանում է թէ «Ցիեղերքի Աղօթարանն իւր կեանքի մեծ մասը պատերազմներում է անց կացրել, ապաքէն մէկն՝ որ ոչ զրադպտութիւն, ոչ զորագլխութիւն և ոչ սպարապետութիւն է արած, ինչպէս ես՝ քո խոնար ծառան, կարող է բանակ խաղացնել և ճակատամարտ մղել». Շահն իւր բնական պարզ և անկեղծ բնութեամբը կրկնում է թէ «Մոհամմդ-Ալի-Խովլէ, այսօր կայիմդամի հետ երկար խոսեցինք, խորհեցինք այդ առարկայի վերայ, դարձեալ քեզանից յարմար մէկը ներկայումս չունենք, ուրեմն անպատճառ պէտք է յանձնառու լինես». Մոհամմդն օրքան յամառում է, այնքան չահը տրիտնում, Մոհամմդն վերջապէս պատասխանում է թէ՝ «իմ ճակատագիրը անօրինել է, որ ոչքան չունչս բնանումս է, անմոռանալի մտերմութեամբ ծառայիմ Խրանի օրինաւոր գահանստնակալ մտերիմներին. ապաքէն երբ իմ տէրը հրամայում է, թէև գժոխք կաշեր

հրամայում է Կայիմզամին, որպէս զի կատարէ Մանուչար-խանի առաջարկութիւնները. Վերջինս կրկնում է «այս խնդիրս էլ ազատում եմ Տիեզերքի Աղօթարանը կատարէ, այս ինքն ինձ դնորհէ հանգուցեալ թագաժառանգի զաւակներից մէկը, թէև նա մանուկ կամ օրորոցի տղայ ևս լինի, միայն չունի, որպէս զի իմ ամենայն գործառնութիւնները նրա անունով լինեն»։

Առանից դուրս գալիս Մօնթէմիրը կռանում է և փսփսում Կայիմզամի ականջումը թէ «Թէհրանից իմ հեռանալը քո կործանման առաջին քայլն է լինելու»։ Վերջինս իրան չհասկանալու է դնում և սկսում է խնդրել, որ Մանուչար-խանը բացատրէ այդ հանելուկը. բայց սա միևնոյն է կրկնում, և այլ ոչինչ։ Խորով-խանը ասում էր թէ, Մանուչարը նախագուշակում է լինում մէկ նշան, բայց չէր հաւատում, որ Կայիմզամը մինչև այն աստիճան յիմարանայ։

Շահը Մանուչարի ընտրութեամբ հաստատում է մարզպան Ֆարստանի իւր եղբայր պատանի Ֆիրուզ-միրզան. իսկ թնդանօթաձիգ զօրքի գլխաւոր Նշանակում է Անգլիացի Արթուր-Հէնրի մականուանեալն Լինդի, որ ստորագրեալ լինի Մանուչար-խանին։

Մանուչար-խանը բանակով հասնում է Կում ուխտատեղին, ուր իսկոյն կալանաւորում է գշտեղատ Ալլահ-Վերդի-միրզան, այնուհետի հրամանատարը (որ Զիլլի-սուլթանից նշանակած էր) և շղթայակապ առաքում է Թէհրան, և նրա պաշտօնը տալիս է Կարագէօզլի Հաջի-Միր-Ալլան-խանին, և ինքը չուում, գնում հասնում է Բաչան, ուր բանակը երկու հատուած է բաժանուած. Մէկը յանձնում է Լինդիին, որ առաջնորդէ զայն յԱսպահան, և անտի դէպի Շիրազ. իսկ միւս հատուածը յանձնում է զօրավարութեան իւր եղբօրորդի Սուլէյման-խանին, որպէս զի Ֆիրուզ-միրզան և ինքը վերջին զօրաբաժնի հետ գնան Ազդաստանի ճանապարհով, Եզդի սանմանգլուխների մօտովը դէպի Շիրազ, և միանան միւս հատուածի հետ Արաղէն ասուած գաշտի վերայ։ Լինդին կարգեցաւ և Մուսիաբադի մէջն պատահում է Ֆարման-Ֆարմայի բանակին, առաջնորդութեամբ նրա եղբայր Սալա-ալ-սուլթանի, որն երևելի էր իւր ժամանակիցների մէջ քաջաբարութեամբ. բայց այսպէս նա սաստիկ խորտակուելով Լինդիի թնդանօթների գնդակներից, ինքը լինում է փախստական և նրա զօրքը ցիրուցան։ Չնայելով այս ճակատամարտի հաւանում է Մանուչար-խանը Լինդիին պայմանադրեալ Արաղէն գաշտում և միանալով նրա հետ, միասին չուում գնում են Շիրազ,

Այստեղ Մանուչար-խանը Ֆիրուզ-միրզայի բերանից և իր կնքովը չբջարեբակներ է առաքում Ֆարսստանի բոլոր ցեղապետներին և ռամուռներին թէ «Հանդերձի բանակով մենք չենք եկած ասպատակել և կողոպտել այն բարի և խաղաղասէր հպատակները, որոնք ընդդէմ իբրահիմ կամացը Ֆարման-Ֆարմայի և նրա սուրդրեակների բռնութիւնից ստիպեալ մինչև ցայսօր չեն եկած, որ իբրահիմ երկրպագութիւնը մատուցանէին օրինաւոր չահից նշանակեալ շահագայլն, այլ մենք եկած ենք ազատելու այն հոյ և հնազանդ հպատակները Ֆարման-Ֆարմայի բռնութիւնից, և մինչև տալու նրանց, որ դան իբրահիմ պարտաւորութիւնն այժմ կատարեն. ուստի և անտ յայտնում ենք որ ով գայ բուն բանակը և երկրպագութիւն անէ հանդերձի եղբօրը, երդվում ենք Տիեզերքի Ազօթարանի թագի վերայ, որ նրան նեղումն կը հնարվի. Դէմ ընդէս յայտնում ենք որ մենք սատկութիւնեարդելած ենք մեր զօրքերին, որպէս զի նրանք չհամարձակուին առանց փոդ վճարելոյ բռնութիւնամբ առնել գիւղացիներից, քաղաքացիներից, հանապարհների վերայ եղած պանդոկներից և այն մարդկանցից, որոնք ինչ և իցէ բան բերած լինին բանակի մէջ վաճառելոյ, թէ պաչարեղէն լինի, թէ արմտիք, թէ անասունների կեր և թէ հոմեղէն. ուստի և այժմ հրամայում ենք ձեզ՝ յայտնել ձեր սուրդրեալ ժողովրդեան, որ եթէ այսպիսի մէկ բռնութիւն ծագի, իսկոյն գանգատին գնդապետին, զօրագլխին և կամ զօրապետներին, որոնք պարտաւոր են համեմատ մեր հրամանին, ոչ միայն խլած բանի գինը կրկնապատիկ առնել և վճարել գանգատողին, այլև յանցաւորը խրատութեամբ պատժել»։

Այդ չբջարեբակների վերայ բոլոր ցեղապետները, նահապետները ու ռամուռաէրները սկսեցին դաս դաս յանձնել բուն բանակը, և իբրահիմ հպատակութիւնը յայտնել չահնազարի եղբօրը, յետ որոյ Ֆարման-Ֆարմա չկարողացաւ երկինի զօրաժողով մինել, Բանակը չքեղ հանդիսով մտաւ Շիրազ՝ առանց որ և իցէ դիմադրութեան. իսկ տեղացի մօլլաները, սէիդները, երեկիները, վանականները ու արհեստաւորները ընդունեցին Ֆիրուզ-միրզային որպէս արքայազուն և խաղաղութիւն բերող պատգամաւոր. իսկ անարի Ֆարման-Ֆարմա և նրա բերող պատգամաւոր՝

թիւն է, դուք թուզտանից (Հին Թուժտատան) սկսեալ մինչև Բուլիջատան տիրապետած էիք, ապաքէն այն ժամանակն ինչ արդեօք մէկ երեսի գործ գործեցիք, որ այդ նեղ և անձուկ յարկի մէջ այսուհետև կարողանաք կատարել։ Այժմ ասումեմ որ՝ եթէ Ցարկի դուռը բանալը դարձեալ ուշացնէք, ես պարտուած կլինիմ իմ թնդանօթների գնդակներով տապալել և հիմնայատակ անել այդ Ցարկը, որին ապաւնած էք։ Դուք ձեր փառքի գմբէթը մինչև ցայսօր երբէք չէք տեսած խոնարհացած, բայց այն ժամանակը տեսնելու էք հողի և մոխրի հետ հաւասարված, ուստի լաւ կհամարիմ, որ ես միայնակ գամ ձեր սպասը և օրինաւոր չարի կողմից ապահովացնեմ ձեզ ու մեր մէջ գործը խաղաղութեամբ անց կացնենք։» Ցարման-Ցարմա զիջանում է Մօհթէմիդի խաղաղասէր առաջարկութիւնը, բայց քաջաբազուկ և անձնապաստան Սուլթան-սայթանէն ասում է հզօրը թէ «Ալեի լաւ կլինի որ երբ նա ներկայանայ մեզ, դու նրան զրուցով զբաղեցնես, և այս մեր խաչատակութիւնների փոխարէն, իմ սուրի մէկ հարուածով ես նրան երկու կտոր անեմ, որովհետև եթէ նա մէջտեղից դուրս գայ, այնուհետև նրա բանակը կմնայ առանց զըխաւորի (բրնաւար) կամ կը ցրուի, կամ կանցնի մեր կողմը, և մենք էլ այն ժամանակ կտիրենք բանակի հրաղէններին ու թնդանօթներին»։ Ցարման-Ցարմա հաւանելով եզրոյ ասածներին, պատասխանում է «Այդ խորհուրդը բարի է, միայն թէ պիտի սպասես, մինչև ես նշանացի անեմ քեզ, որ դու սուրդ գործ դնես»։ Եւ այսպէս ժամ ու ժամանակ են նշանակում, որ Մանուչար-խանը գայ Ցարկը և նոցա հետ տեսութիւն անէ։

Մօհթէմիդը նշանակեալ ժամին պարսկական սովորութեամբ համեմատ իւր պաշտօնին ու կոչմանը՝ ձիաւորված և չրջապատված զինուորականների բազմութեամբ հասնում է Ցարկի դուռը [1])։ Բեղդապաշների գլխաւորին արքայազունները հրամայած են լինում, վասնզոյ և նա բացում է նրա, Մանուչարի առջեր Ցարկի գլխաւոր դուռը։ Մօհթէմիդը թէև խոստացել էր արքայազուններին միայնակ գնալ, բայց ընդհակառակն այժմ մէկ քանի նշանաւոր մարդիկներով ներս է մտնում բերդը, և բեղդապաշների գլխաւորի հետ ողջ և կարի մարդավարութեամբ վարուելով զբաղեցնում է նրան զանազան հարցերով ու պրուցներով ու յամր քայլ առ քայլ է

[1]) Պաշաների պատմութիւնն այս անցքը կարի համառօտութեամբ է պատմում իսկ ես գրում եմ ինչ որ լսած եմ ներկայ եղող սպաներից և նոյն իսկ Սիւլէյման-խանից։

ընթանում, վարելով իւր հետ և գլխաւորը, որի սառադրեալ բերդապահները կարծելով թէ արդէն հաշտութիւնը գոյացած է, Ցարիի գուռը չէն գոցում ու Մօնթէմիդի հետ եկած մարդիկը, որոնք նախ Ցարիի գուռքը մնացած, որպէս թէ հեռաբքրքրութիւնից սոխպեալ, առանց որ և իցէ կասկածանքի նշան տալոյ, սկսում են մէկ-մէկ, երկ-երկու, երեք-երեք, մինչև անգամ հինգ-հինգ մարդիկ ներս մտնել Ցարին և այս կողմն ու այն կողմը նայելոյ, իբր թէ հետաքրքրութիւնից սոխպեալ կամենում են տեսնել ներքնաբերդի մէջ եղած շինութիւնները։ Սոցա մէջ խառն են լինում և զինուորականներ, ծպտեալք ինչպէս սպասաւորներ, բայց և ներքուստ վերարկուի տակից զինուորեալք էին։ Այդպէսի Ցարիերի, այսինքն ներքնաբերդերի փողոցներն բաս մեծի մասին կոր, նեղ և ծուռումուռն են լինում. ուստի և ծպտեալները ցրվում են նրանց մէջը և գնում են հասնում այն կէտը, ուր էր արքայազունների պաշտար։ Իսկ Մօնթէմիդն, որպէս ասացինք, ծանրաքայլ ընթանալով ժամանակ է տալիս ծպտեալներին գալ, հասնել իրեն ու Ցարիը մտնել։ Մօնթէմիդն, արդէն կարգադրած է լինում, որ իւր սպասաւորներից տասնաչափ մարդ զրոյցներով զբաղեցնէին բերդապահ գունապահները, և եթէ վերջիններս կամենային գուռը գոցել, սպասաւորներն արդիլէին։ Մինչ այս մինչ այն, երկու գունդ զօրք գալիս են և կալանաւորում գունապահներն ու տիրում զրան։ Այդ կէտին էլ Մօնթէմիդը մտնում է այն գահլիճը, ուր երկու արքայազունները փառաւեղ բազմած՝ սպասում էին նրա գալստեանը։ Այդ ամենը Մօնթէմիդի տուած կարգադրութիւններն այնպէս շտապ տագնապով և ճշտութեամբ է կատարվում, որքան այս տողերը գրելը։

Մօնթէմիդի ներս մտնելն ու Ֆարման-Ֆարմայի երեսին նայելով զրուցելն ու ժամանակ չտալը նրան մէկ բառ արտասանել կամ նայել եղբօր երեսին՝ մէկ քանի վայրկեան է տևում, և ահա տկան թօխտել ծպտեալ զօրականները մտնում են այն գահլիճը, որանց Մօնթէմիդը հրամայում է որ նորա զատ զատ շրջապատեն արքայազունները և զինազուրկ անեն։ Ֆարման-Ֆարման յուշ է բերում նրան իւր հօր, այսինքն Ֆաթ-Ալի-շահի երախտիքը նրա վերայ, և նորա այժմ այնպիսի պատագ կերպով վարուիլը նրանց հետ։ Իսկ Մօնթէմիդը պատասխանում է թէ ես չեմ մոռացած և երբէք չպիտի մոռանամ ձեր հօր երախտիքը, և այսպէս որ անում եմ երախտագիտութիւնից սոխպեալ եմ անում, որպէս զի այն բարերարութիւնը կատարվի, և նրա բիս կտակն ու բաղձանքը լրութեամբ

թագը փոխանցուի նրա սերունդի վերայ, և ոչ թէ ներքին երկպառակութիւններից միչտ նրա սերունդը զրկուի Իրանի գահակալութեան իրաւունքից։ Զինի որոյ նա հրամայում է զօրականներին որ վարեն արքայազունները գէպի բանակ։ և հետեւեալ օրը յանձնում է նրանց (սարթիփ) զօրագլուխ Ֆարհանցի Մանսուր-խանին, որ նրանց տանէ իւր գունդովը հասցնէ թէհրան, և իջեցնէ իւր պալատի մէջ [1]։

Այդ արքայազունները կալանաւորելու լուրը երբ հասնում է թէհրան, չարը չատ ուրախանում է և հրամայում է ճրագավառութիւն անել այնտեղ և բոլոր Իրանի քաղաքներում. իսկ Թավրիզ երեք գիշեր չարունակեց այդ ճրագալուցութիւնը առ ի ապացուցանել իւրեան խորին զգացողութիւնը գէպի չարը՝ իւրեանց քաղաքացին։

Այնուհետև Մոհթէմիդն ամենից առաջ բարեկարգում է Ֆարաստանի անտառական տեսչութիւնը, վճարում է զօրքի ռոճիկները, ապահովացնում է ճանապարհները կարաւանների երթեւեկութեան համար, որ երկար ժամանակ լռած էին, որից և վաճառականները խրախուսելով վերակենդանացրին առևտրական չարաբերութիւնները, և յետոյ չկարողացաւ չդարձնել իւր ուշադրութիւնը նաև հերկի և խաչտարածութեան վերայ, որոնք այն երկրի արդիւնքի և հարստութեան աղբիւրներն էին. ով չգիտէ Շիրազի գերազանց ծխախոտի բարերոյր համն ու հոտը և կամ Շիրազի գառների մորթիի արժողութիւն ու գերազանցութիւնը։

Մոհթէմիդն օրսաց և կաչկանդած ուղարկեց թէհրան իւրեանց չարութեամբ երեւելի Մահամմէտ-Ալի-խան Կարգանդացին և միրզայ-Մահամմէտ-խան՝ Ֆրասայի ամենամեծատակար ցեղապետները, որոնք ի վաղուց հետէ չարաչար վարում էին այն կողմերի գիւղերի և կարաւանների հետ, բայց մնացել էին անպատիժ։ Դէյնպէս հետամուտ եղաւ Մահասանի ցեղի նահապետ երեւելի Վելի-խանին, որ չատ տարիներէ հետէ բարձրացրած ապստամբութեան դրօշակը՝ հարկ չէր վճարում և չէր հնազանդում թագի և անարի կուսակալներին, և որջացած էր Պօլ-Գօլարի, մանաւանդ Կարէ-սրմիր (սպիտակ բերդ) ասացեալ ամրոց բերդի մէջ. վասն զի ուանդութեամբ ասում էին թէ, իբր վերջինս շինուած է Իրանի գիւղացոյն Ռոստոմի

[1] Լուր է տարածվում թէ, նոցա թէհրան մտնելոյ օրը՝ զօրականները խլելու և թաղարարցնելու են զՖերման-Ֆերմա, վաճառոյ և Մահամմէտ-Հասէնը հրամայեալ է գրում Մանսուր-խանին՝ որ ճանապարհին կուրացնէ արքայազունները, և բերէ իջեցնէ Մոհթէմիդի պալատում։ Մանսուր խանը, ասում էին, գործիք չունենալով՝ թէհրուզի ծայրովն է կուրացնում նրանց։

ժամանակ. ուստի անմտալիի է ու անառիկ, և Վէլիֆ-խանը յուսալով այդ բերդին, համախմբել էր տասը հազար զոռ. պատերազմով և քաջասիրտ հնձեալ և հետեալ մարդիկ իբրեան ստորադրեալ վայրենի ցեղերից, այստեղ այնտեղ ելուզակութիւնով ապրում, կապում և կողոպտում էր կարաւաններ, գիւղացիների անասուններ և շատ անգամ մէկ ողջ գիւղի բնակիչները, և գնում էր որջանում յիշեալ բերդերի մէջ. վասնզոյց այժմ արքունիքն սկսեց սարսափ ունել երկիւղ կրել. վասն զի օր ըստ օրէ լուրը ստանկանում էր, որ Վէլիֆն մտադիր է յարձակուիլ Թագաւորանիստ քաղաքի վերայ, և ոչ միայն Մամասանի, այլև նրա դրացի ցեղերը. Վէլիֆին շահութեան տիրոջս են ընծայում. ուստի և վերջինս իրրև շահ էր զգեստաւորվում, և իբրև շահ առեան էր կազմում և այլն, և այլն։

Սուլէյման-խանը պատմում էր թէ «Մոֆիէմիրը սատիկ մտատանջուութեամբ ալեկոծեալ վրդովվում էր Վէլիֆ-խանի մասին, վասն զի եթէ համեմատ արքունիքի պատուէրներին իր սակաւաձեռն զօրքով խաղար գնար ապստամբի վերայ, պէտք էր թողնէր Շիրազը առանց զօրքի, այսու ամենայնիւ, ոչ թէ չէր կարող Վէլիֆի բազմաձեռն զօրախումբի հետ հանդամարտ մղել, այլև բարձրարերձ լեռների նեղ ու ծուռումուռ ձորերի և խիտ անտառների մէջով չէր կարող կանոնաւոր զօրքն իւր թնդանօթներով համախումբ շարժիլ, և թշնամին էլ այն ժամանակ կարող էր ամեն կողմից յարձակուիլ և վնասներ հասցնել բանակին։ Իսկ եթէ թէհրանից օժանդակ զօրք պահանջէր և ապաստ նրա գաղտանոց, զօրքը կյապաղէր և ապստամբն օր ըստ օրէ կզօրանար, մրացնելով իւր հետ բոլոր դրացի ցեղերը, որոնք նրա անիրաւ չէին կարողանում մերժել նրա, Վէլիֆի, հրաւէրը, և այնուհետև հետևանքն անբուժելի կլինէր, և իւր Մոֆիէմիրի, փաստաւոր արդիւնքն ու անունը կլինէր, և իւր Մոֆիէմիրի, փաստաւոր արդիւնքն ու անունը կանեմանային։ Այս պատճառաւ, ուրեմն ասում էր Սուլէյմանխանը թէ, Մոֆիէմիրը հոգւոյ անվրդով արիութեամբ, վարպետութեամբ (փոխանակ ասելոյ խորամանկութեամբ) կանգնաց, որ առանց արիւնհեղութեան այդ վեհ, միևնոյն ժամանակ վտանգաւոր գործը, գլուխ հանէ։»

Մոֆիէմիրը մէկ տարուայ փորձ փորձեց և բախտաւորութեամբ յաջողակ եղաւ։ Նա ուզարկեց մէկ պատուաւոր և երեսելի անձն պատգամաւոր՝ ասել Վէլիֆ-խանին թէ, այժմ, մեր ժամանակը, ի զուր է յուսալ այդպիսի բերդերի և ապրանքների առնելու, որի թնդանօթների առջևը չէ տարմիլ բնդդէմ թագաւորի։ որի թնդանօթների գլորումը, ուստի և նա, կարող տակալ վէմերն ու ապառաժների գլորումը։

որպէս քո գերդաստանի և քեզ իսկ բարեկամ, խորհուրդ եմ տալիս գաս, զլուխ իջեցնես չահնչահի եղբօրը, և ես երաշխաւոր կլինիմ, որ քո խոնարհելիս ու նրա եղբօր առնելուն քո անկեղծ զղջումը, չահնչահը կընդունի և կներէ քո անցեալ գնացեալ յանցանքներին և այլն։ Վէզիրն հրապուրված պատգամաւորի զրոյցներով ուղարկում է իւր սիրի Մահամմէտ-Բաղրէ-խանը ուզիր Մօհթէմիդի քովն, որը ներկայացնում է նրան Ֆիրուզ-միրզային, և սա կարի մարդասիրութեամբ և ազնիւ զրոյցներով ընդունելով նրան, հրամայում է Մօհթէմիդին, որ տանէ նրան իւր պալատում ամենայն պատուասիրութեամբ հիւրընկալէ։ Իրանի սովորութեամբ Մօհթէմիդի նման պաշտօնի տէր մարդոյ մօտ իջնելիս, ոչ միայն Մահամմէտ-Բաղրէն, այլև նրա առաքողի անուան և համբաւին մեծ յարգանք էր։ Ի հարկէ Մօհթէմիդն էլ նրան կարի մեծարանքով ասպրնջակալութեանէն և երկարօրէն խրատելէն ու յորդորանքէն յետոյ, յայտնում է Մահամմէտ-Բաղրէն թէ, մինչև քո հայրն անձամբ չգայ ներկայանալ Ֆիրուզ-միրզային, ես չեմ կարող հաւատ ընծայել նրա հաւատարմութեանը և բարեխօսել չահի առջեւը։ Այսու ամենայնիւ խոստանում եմ, որ երբ հայրդ գայ, առաւել ևս պատուով կընդունուի և պատուով ևս կվերադառնայ իւր տեղը։ Մահամմէտ-Բաղրէ-խանը վերադառնում է պատմել իւր հօրը։

Մօհթէմիդը մինչևոյն օրը՝ երբ Մահամմէտ-Բաղրը գալիս է Շիրազ, սուրհանդակ է ուղարկում թէհրան և գրում նրա գալստեան համար։ Շահը պատասխանում է թէ «Աչխատէ անպատճառ կալանաւորել Վէզիրն։ Նրա օրդուցն ոչինչ օգուտ չկայ»։

Վէզիր-խանը՝ կատարելապէս չհաւատալով Մօհթէմիդի խոստումներին, նախ՝ իւր աւարած մթերքներն ու ազիզը զրկում է որ գնեն Սպիտակ բերդում։ Երիրորդ ժողովում է Գոլ-Գոլաբի մէջ իւր ընտանիքն ու ընդհէնները, և ամրացնում է երկու բերդերն ևս, և ապա մի քանի հարիւր հետևորներով գնում է Շիրազ Մօհթէմիդի պալատում իջնելու համար։ Այր զօրապետները հեռանց տեսնում են որ Վէզիր-խանը գալիս է, զարմանալով ասում են Մօհթէմիդին թէ՝ «Ահա վայրենի դեն իւր ոտքովն է գալիս, որ ընկնի քո թակարդի մէջ»։ Մօհթէմիդն արդէն լսած էր Վէզիր-խանի նախապատրաստութիւններն ու երկու բերդերի ամրոցները։ Ուստի երբ նա ներկայանում է, հրամայում է կալանաւորել և բանտարկել։ Յետոյ Վէզիր-խանը անձամբ մնալով խոստանում է իւր անմատչելի կարծեցեալ Սպիտակ բերդը աւանդել մէկ

հատուած զօրքի այն պայմանով որ իրան էլ նրանց հետ ուղարկէ։ Մահթէմիզը նշանակում է Կազվինցի զօրագլուխ Մահամմէտ-Թայիբ-խանը, որ գնաց երկու հազար հետեւակ և հեծեալ զօրքով տիրապետել բերդին։ Իսկ Զաբանցոցի գնդապետ Հասան-Ալի-խանին և հեծելազօրքի գլխաւոր Ակիմ-խանին յանձնում է Վէլի-խանը, օրպէս զի զգոյշ կենան և թոյլ չտան փախչել ճանապարհին։ Եւ երբ նա իւր խոստումը լրացրեց, թոյլ տան ուզեցած տեղն երթալու։ Նոքա, արդարեւ, տիրապետում են բերդին, թողնում են նրա մէջ Զաբանցի հետեւակ զօրագունդը, և ինքեանք վեր են առնում Վէլի-խանը մէկ քանի հարիւր ձիաւորներով, որ տանեն, հասցնեն Նուր-բանդ ասացեալ բերդը, որ Վէլիի իշխանութեան տակ եղած բերդերից մէկն էր։ Նոքա բանակում են փարատխաչափ բացակայ այդ բերդից։ և զրոյցի մէջ Մահամմէտ-Թայիբ-խանը ասում է Վէլիին թէ, մենք չենք կարող ազատել քեզ, մինչև որ քո միւս բերդերն ու ամրոցները չանդես մեզ, ըստ որում Սպիտակ բերդի մէջ ոչ քոյ և ոչ այլոց ազատած, յափշտակած և կողոպտած մթերքն ու կայքը երևացին։ Այդ զրոյցի վերայ Վէլին երկրայում է և զգաստանում, վանոտոյ մտածում է մէկ հնարքով ազատուիլ նոցա ձեռքից։ Նա արդէն գիտէր, որ զօրագլուխն ու երկու գնդապետները անմնացն գիշեր սաստիկ արբենում են, վանոտոյ և ժամ ու ժամանակ է նշանակում, կարգադրում որ Նուր-Բանդ եղած իւր հեծելազօրքը պատրաստ կենան գիշերը և սպասեն իւր նշանին ու այն մթոցին յարձակուին արբեալներն և նոցա ստորադրեալ հեծելազօրքի վերայ և ցիրուցան անեն։ Այսպէս էլ լինում է, նա կալանաւորում է զօրագլուխն ու գնդապետները և դրաւում է նրանց ազիր։ Հետեւեալ օրը պատգամաւոր է ուղարկում Սպիտակ բերդը ասել բերդապահներին որ եթէ բերդը չյանձնեն իրեն, գլխատել կտայ կալանաւորներին։ Բերդը չյանձնեն իրեն, գլխատել կտայ կալանաւորներին։ Նոքա պատասխանում են թէ, մենք չենք անունով տիրած ենք այս բերդին, և առանց նրա հրամանի կամ նրա փոխանորդի, չենք կարող ազանդել քեզ։ Թէև գլխատել տաս կամ մաս մաս էլ անել տաս կալանաւորներդ։

Այդ լուրը հասնում է Շիրազ Մաշդէմիզին, որ նշանակում է Շուռ-բաբուլլայ-խանը, և նրա հետ Լինդիի փոխանորդ կում է Ֆաթ-Ալի-խանը, և նրա հետ Լինդիի փոխանորդ կում է Ֆաթ-Ալի-խանը, օրպէս զի գնան հանին և թնդանոթաձիգ Շի անգլիացին, օրպէս զի գնան հանին և թնդանոթաձիգ Շի անգլիացին։ Ամենայն ինչ ուղարկեցին Սպիտակ ամրոցի բերդապահներին ու քաջալերեցին նրանց, և եթէ պաշարուած լինին, ցրուեն պաշարողները։ Մի և նոյն ժամանակ աշխատեն ցրուել Վէլիի գլխին հաւաքուած զօրքն ու կալանաւորեն այն ապատանքը։

Նոքա երկու ամիս զեղերելով, անկարելի է լինում նրանց որպալ ապստամբը, վանտարոյ Մոհամէդիոը հետը առնելով Ֆիրուզ-միրզան, բանակով արշաւում է այն կողմերը, ուր որջացած էր Վէլի-խանը և զինի զանազան նեղութիւններին, հազիւ ձերբակալում են նրան և չդիմայակաց ուղարկում Թէհրան [1]։ Բայց նրա արբանեակները դարձեալ չեն դադարում, յարձակվում են զանազան տեղեր երիտեկի կարաւանների, խաղաղ աւանների, գիւղերի և շնչհաղող ցեղերի վերայ ու մեծամեծ վնասներ են տալիս նրանց, և փախչում ամրանում են անմատչելի լեռների վերայ ու ձորերի մէջ, ուստի Մոհամէդիոն այնուհետև ինչ ելուզակ և յուզկնաղար որ կալաւնաւորում էր՝ գլխատել էր տալիս կամ խեղդամահ անում։ Նայեց որ այդպիսի միջոցներով դարձեալ այդ վայրերի ժողովուրդը չէ զսպվում, սկսեց աւելի խստութեամբ կամ լաւ ասել, բարբարոսութեամբ վարուիլ նրանց ցեղապետների հետ, որոնք ծածկաբար սոլորցնում էին արբանեակներին գնալ յուզկնաղարութիւններ անել և բերած կողոպուտները բաժանել միասին։ Այս դիտաւորութեամբ Մոհամէդիոն էլ ցեղապետներ էր որսում և նրանց դիակներից և գլուխներից բանակի ճանապարհների վերայ բուրգեր էր կանգնացնել տալիս։ Եւ որովհետև այդ միջոցով ևս նոքա չզսպուեցան, սկսեց առաւել ևս խստութեամբ վարուիլ, այնպէս՝ որ երբ մարդ երեւակայում է, միայը խռովում է, այսինքն, խոշտանգում, խարում և ազգի ազգի անլսելի տանջանքներից յետոյ՝ ողջ ողջ մարդիկ էր այրել տալիս կամ թաղում, երբեմն յանցաւորը թաղում էր մինչև ուսերը, զատ էին թողում նրա գլուխը, և ապա մի ոչ էին քսում գլխին, երեսին, պարանոցին, որ ճանճերի և կրիաների խածանելից ատակէին։ Հրաշէկ բոլորշի օղամանեակ էին ազատցնում գլխի վերայ կամ կապարով լիքը գաւազանը եռացնելէն յետոյ՝ գլխի վերայ դնում։ Ակաւնատեսները պատմում էին թէ, դահիճներն անդամ քաջանում էին այդ պատիժներից, իսկ Մոհամէդիոն անասարքեր և սաստիկ դէմքով շատ անդամ հանդիսատես էր լինում Այդպիսի անզգայութիւն միայն նեղքինիները կարող են ունենալ։ Ի՞նչ և ի՞նչ ստէպ ստէպ անպատմելի պատիժներով նա հազիւ հազ կարողացաւ մաքրել այդ կողմերն ասպարեզներից։

---

[1] Պատմութիւն Պարսից Մ. Թադէոսեանց, Պալկոմա, 1846, երես 277։ Այս անցքը դարձեալ Թադէոսեանը նուիրում է իւր սիրելի անգլիացի Շիլդ։

Անմոռնալու ընդարձակ ասպարէզ բացուելով Մոնթէմիլի առջև՝ չարը նշանակեց նրան կուսակալ Ասպահանի, ուր մեծ խոնարհութեամբ կառավարելով ժողովուրդը, իր անձնանուէր ծառայութիւններովն ու անխոնջ գործունէութեամբը բոլոր Իրանի մէջ՝ չարից յետոյ առաջին անձը դարձաւ և նոյն փառքովը չարունակեց իր կեանքը, մինչև որ 1847-ին փետրվարի 9-ին (1263 Հիջրի) վախճանուեցաւ ու արքայավայել յուղարկաւորութեամբ թաղուեցաւ Ղում քաղաքի թագաւորական գերեզմանատան մէջ՝ Ֆաթ-Ալի-շահի դամբարանին կից։

Դրիչս թէ՛ Իրանից Ասպահան ուղեւորելիս՝ գնացի Ղում տեսնել այն երեւելի ուխտատեղին։ Այստեղ մէջիթի արեւելեան կողմում մէկ մատուռի մէջ թաղած է Ֆաթ-Ալի-շահը, և սորա մատուռին կից՝ միւս մատուռի մէջ—Մանուչար-խանը։ Վերջինս գերեզմանի վերայ ձգած էր մէկ լայն և հաստ թավրիզից բերած մարմարիոն՝ որի վերայ փռուած էր նորա մեծուշերտ Ասպահանի ձեռագործ գիպակ, և նրա վերայ չերտ չերտ եօթնգունեան Քիշմիրի խանկային շալ. ոտքի և անարի մօտ երկու Եւրոպայի ձեռագործէ արծաթէ մոմակալներ, այլն փռած էր մատուռի յատակի վերայ՝ մատուռի սարածութեամբ չորս Ֆաղանի ամենաշքեղ գորգեր։ Մատուռի պատերը ծեփած էին զոյնզգոյն ոսկեզօծ ձիւթեայ նկարներով։ Երկու մօլայ դամբարանի առջև ձախ կողմում մնկած՝ կարդան էին կարդում, որոց համար մշտենջենաւոր թաչակ է նշանակուած հանգուցելոյ կայքից։

Մոնթէմիլը թողեց երեքուկէս կամ չորս քուրուր դրամի կալուածներ, բացի ստանալիքներէն զանազան քաղաքներում և զանազան մարդկանցից. բայց նրա եղբօրորդիների և թեռորդի իշխան (կնեազ) Մելիքնանցի անտամանաձայնութեան համար ստանալիքները բոլորն էլ ոչնչացան։

Լ.

ՍՈՒԼԵՅՄԱՆ-ԽԱՆ ԱՇԱՄ-ՈՒԴ-ԴՈՎԼԷ ԷՆԻԿՕԼՕՓԵԱՆՑ։

Գաղջր է ինձ և ախորժելի կենսագիր լինել այնպիսի անձնաւորութեան, որպիսին է Սալտանն, կամ ինչպէս պարսիկներն իւրեանց պատմութեանց և հրովարտակների մէջ անուա-

նում են նրան—Սուլէյման-խան։ Այս անձը ոչ միայն Պարսկաստանի իւր ժամանակիցների մէջ առաջին հմուտ պատերազմական այրեանն և քաջ զօրավարն էր, այլև մինչև իւր մահուան վերջին կէտը՝ հաւատարիմ մնաց իւր կրօնին, եկեղեցիին և ազգին։ Նա պատմում էր թէ «Թիֆլիսը աւերելիս (1795 ամին Սեպտեմբերի 8) ես հազիւ թէ 12 կամ 13 տարեկան կլինէի, և չատ լաւ մտիս է, որ մայրս կարի թանկ գնով երկու երիվար հազիւ ձեռք բերեց, վաղ ձեց. մէկի վրայ նա ու Դաւրիէն եղբայրս հեծան. իսկ միւսի վերայ մեր ամենահարկաւոր և թեթև տան կայքից ընտրելով, բարձեցին. իսկ ինձ էլ բեռների վրէն դրին, փախանք գնացինք Դաւէթի այն կողմը Կովկասի սարերի մէջ ապաստանուեցանք, մեր մէկ ծանօթի տան մէջ։ Երբ վերադարձանք. գտանք մեր տան կայքը աւարած և տունը կիսաւէր. մայրս մէկ քանի կտոր ոսկեղէն, արծաթեղէն կամ քարեղէն զարդեր ունէր հետը տարած, վաճառեց կիսագնով, և վերանորոգեց տունն ու գնեց տան հարկաւոր կահ կարասիքը»։

Մէկ քանի տարիից յետոյ գալիս է պանդխտութիւնից Նրա հայր Միրզայ-Ռօստոմը, և տեսնում է երեք եղբայրները կամ սպանուած են Թիֆլիսը աւերելիս և կամ գերի ընկած և անյայտ են եղած. վանորայ իւր խորթ մօր թախանձելին սոխպեալ թողնում է իւր ընտանիքը՝ գնում Պարսկաստան, որ թերևս եղբօրներից մէկը, որ վերջին անգամը գերի էր վարուած Երևանի կռիւոմը Ապարան, որանէր, գանէր, ազատէր և վերադարձնէր Թիֆլիս։ Միրզայ-Ռօստոմն գնալից յետոյ Սօլօմանը 18—19 տարեկան ժամանակը մտնում է Նախ՝ Ռուսաց հետևակ զօրքի և ապա հեծելազօրաց մէջ, որով փոքր ժամանակից յետոյ ստանում է սպայութեան (օֆիցէրութեան) առաջին աստիճանը։

Այդ միջոցում հրաման է գալիս որ դրազոն հեծելազօրքը տեղափոխվի Ռուսաստան, անմիջաբար լուր է տարածվում թէ այնտեղ, այսինքն Ռուսաստան կտրիպեն վրաստանցի ծառայողները ռուսանալ. ուստի ինչպէս հայերից՝ նոյնպէս և վրացիներից չատերը հրաժեշտ են տալիս այդ գունդից։ Սուլէյման-խանը, պատմում էր թէ «ես մնացած էի երեքուած, վասն զի մօրս թաղման համար պարտքի տակ էի ընկած և հօրեղբայրներս չէին օգնում ինձ ժառանգական կարասիներին արդիւնքից։ Մայրս կենդանի ժամանակ ուզարկել էր Դաւրէն եղբայրս Թավրիզ, որ հօրս բերէ Թիֆլիս. բայց նոցանից ոչ մէկը չվերադարձաւ, և այնտեղի եկողներից բերանացի լսում էի՝ թէ Դաւրէնը գալիս է որ մօրս տանէ Թավրիզ։

Գուրգէնը եկաւ ու երբ տեսաւ իմ խնդձ դրութիւնը խորհուրդ տուաւ Պարսկաստան երթալ, ասելով թէ Աբբաս-միրզան բերել է տուել Լերոպայից զինուորական մարդիներ, և որովհետև դու լաւ տեղեակ ես հետևակ և հեծեալ զօրքի կրթութիւնաը, արի գնանք թավրիզ մեր հօր մօտ, և դու մաքր Պարսից ծառայութեան մէջ, ուր որպէս մարդիչ մեծ ոռճրի կըստանաս։ և այլն, և այլն.

Սուլէյմանխանը պատմում էր նաև թէ վերոյիշեալ ամրոցքան ճարտար, ճոխ և ճոռում լեզուով գովեց, գովաբանեց, որ ես ևս հրապուրուեցայ գնալ. բայց գիտէի որ առաջները անցագիր չեն տար ինձ, ըստ որում ստիճանաւոր էր, ուրեմն պէտք էր փախչէի, և մեր երկուսիս փախուստն էլ չատ վրատանգաւոր էր, վասն զի ոչ մէկիս յայտնի չէին զարտուղի ճանապարհները։ Ուստի դիմեցի իմ սրտակից և ծառայակից բարեկամ վրացի Դաւիթ Սագինանցին, որի եղբօրը լաւ յայտնի էին մեր փախչելոյ ճանապարհները։ Դաւիթը որ ինձանից աւելի երկիւղ էր կրում Ռուսաստան գնալէն և այնտեղ հաւատափոխ լինելէն, մեծ համաձայնութեամբ խոստացաւ հրապուրել և իւր կրտսեր եղբայր Զալն, որ միասին փախչենք։

Սօլոմոն և Դաւիթը 1811 թուի սկզբներում բարեկենդանին արձակուրդ են խնդրում իւրանց գնդապետից գնալ Թիֆլիս ազգականներին տեսութեան համար։ Գնդապետին յայտնի էր, որ այդ երիտասարդները չատ են սիրում մուչտեկաբ (բունդի կոխ), որ բարեկենդանի օրերը յանախ անգամ կլինէր, և կարծելով որ նոքա գնում են հաղորդակից լինել այդ կռիւներին, հրամայում է մտնել այն կռիւների մէջ, ըստ որում այժմ դուք սպայ էք, ուրեմն և ամօթ է ձեզ գռեհիկներից (մուժիկներից) ծեծ ուտել։ եթէ խօսք կասք կատարել հրամանս, արձակուրդ կտամ ձեզ գնալ։ Ի հարկէ նոքա էլ խոստանում են կատարել նորա հրամանը ու գնում են Թիֆլիս, և հետևեալ օրը գիշերով չորսն էլ միասին հետևակ, ցուրտ, ձմեռ եղանակին, գեղացիի չորեքով զուրս են գալիս ԼօՋօրի մօտով անց կենում, հասնում Աթաբեքաբ, ուսկից զարտուղի ճանապարհներով հասնում են Պիւտրի (Ալեքսանդրապօլ) գիւղը (այժմ քաղաք), չորս օր կենում են այնտեղ հանգստանալու համար, ապա դարձեալ չարտնակելով իւրանց ճանապարհը հասնում են Երևան, ուր Շիւսէյն-խան սարդարը լսելով որ նոքա փախստական սպաներ են, տանել է տալիս և յորդորում է մնալ Երևան, բայց նոքա չեն համաձայնում, ի վերջոյ պարգևում է նրանց մէկ մէկ ձի և հինգ հինգ թուման

դրամ, ուղեորում է մէկ ձիաւորի հետ, հանդերձ նամակով Թավրիզ Աբբաս-Միրզայի մօտ։ Իսկ Գուրգէնը արդէն ծանօթ լինելով Թավրիզի փողոցներին, ուղիղ առաջնորդում է նրանց իւր հօր տունը, ուր անծանօթ ծառաները նախ սառը կերպարանքով են ընդունում նրանց, բայց յետոյ իմանալով որ նրանցից երկուքը իրանց տիրոջ որդիքն են, ասում են թէ «ձեր հայրը տիւր է գնացած, շուտով կգայ։ Հրամեցէք սենեակում նստէք, մինչև նորա գալը»։ Սուլէյման-խանը պատմում էր թէ «ես, ինչ հարուած էր մեզ համար, երբ փոխանակ մեր հօր, ներս եկաւ մեր հօրեղբայր Աղալար-բէգը, մէկ քառանայի հետ, որն սկսեց «Հոգւոց» ասել մեզ մեր հօր մահուան օրթը տալու համար, որն մէկ քանի չարաթի առաջ վախճանուել էր։ Ես, ես յիմարս մտածում էի, թողեցի սպասելիքս, որ բախտաւորութեան առաջին քայլն էր, եկի այս օտար երիտիրը, ինչ պէտք է անեմ այստեղ, ուր գնամ, իմ բախտի կուռը կոտրուեց, փչուր փչուր եղաւ, սև սարսուռ և սուգ էր ինձ համար, փոշիմանեցի, բայց փոշիմանելոյ ժամանակն անցել էր»։

Աղալար-բէգը (որ յետոյ Աղալար-խան) ներկայացնում է նրանց թագաժառանգին, որ հնորհում է Սօլօմոնին և Գաւրիէլին սուլթանութեան (կապիտանութեան) աստիճան և զետեղում է Բրնադրան գունդի մէջ, յանձնելով որ կրթեն մէկ քանի աղջայազուններ և երեսելի գերդաստաններից սերած երիտասարդներ, հետեւաբար նրանց հետ մարզուի և Զալն։ իսկ Գաւրիէլը վամնելով մնայ Թավրիզ, գնում է թէհրան մուս օրեղբայր Մանուչար-խանի մօտ։ (Սորա ժամանակն Աղայ-Մանուչար էր գեռևս)։

Սօլօմոնը Թավրիզ մտած օրից զարմանալի կերպով փոխվում է, այսինքն, ըստ վկայելոյ աւագ քառանայ ծերունի Ցէր Յովհաննէսի և այլոց, Սօլօմոնը լինում է պարկեշտ երիտասարդ, ինքն իրան ճանաչող, ժամանակ և պաս պահող։ Նրա յորդորանքով մինչև իմ ժամանակս էլ Գաւրիէլ և Զալ Սադիսնանցիները կիրակէց կիրակի գալիս էին Հայոց եկեղեցին, նրանց հետ պահում էին մեծ պասը, կատարում էին նրանց հետ ծեսերը, և եթէ Վրացոյց քառանան ուշանում էր, նրանք խոստովանում էին և հաղորդվում Հայոց եկեղեցում, և ի վերջոյ Հայոց ծէսով էլ նրանք պսակուեցան և թաղուեցան, և նրանց որդիքն էլ հայ էին կիրառած։

Եւ այսպէս Սուլէյմանը Թավրիզի մէջ հետզհետէ յառաջ երթալով 1236 Հիջրի Շաւվալ լուսնին (1821 տարին) ստանում է եպիսկոպոսութեան (մայիրութեան) աստիճանը։

Այդ միջոցները պատերազմ է ծագում Պարսից և Ջաղ-
կաց մէջ, որով Սուլէյման-բէգն իւր գնդովը Քեաբքուրի և
Մուսուլի բանակի մէջ եղաւ. բայց զարմանալին այն է, որ
սրա անունը կամ որ և իցէ գործողութիւնը չէ յիշում Կա-
ջարների պատմութիւնը մինչև 1841 թիւը. երբ այնուհետև
նոյն պատմութիւնը հանդէս է գալիս ինքն նրան իբրև գո-
բրմաւոր այն բանակին, որ արշաւում էր Մանուչար-խանի հետ
նիրազ ինքնակոչ շահացեալ Ֆաթմա-Ֆաթմային դադարեցնելու
համար.

Ինչ և իցէ 1839—1840 թուին Սուլէյման-խանը տասը
ձիաւոր է ուղարկում Թավրիզ, որ իւր մեծ որդի միրզա-Ռեսա-
սմը տաներ Ասպահան. Այդ անակնկալ լուրը լսողները զա-
նազան մեկնութիւններ էին տալիս. բայց հրաւիրեալ ձիաւոր-
ներն ասում էին թէ, այնտեղ հետեւակ և թնդանօթաձիգ զօրքի
մարզիչ ֆրանկներ (Եւրոպացիներ) կան, խանը մտադիր է
յանձնել նրանց միրզա-Ռեսասմը, որպէս զի մարզուի նոցա
քովը զինուորական արուեստում, միանգամայն և ֆրանկերէն
կամ նեմեցերէն սովորէ, անմիջապէս և վարժուի պարսկերէն
և արաբերէն լեզուներով. իսկ Ռեսասմի մայր Մարիամ խա-
նումը մի օր պատահմամբ ասաց ինձ թէ Ռեսասմիս համար
երեք գրպանի գիր բանալ սուբ։ երկուսը գուշակեցին թէ
«Ֆալի մէջ երեւում է մէկ ճանապարհորդութիւն, որի հետեւանքը
բարի չէ գուշակվում». իսկ երրորդն ասելի պարզ գուշակեց
թէ «Ֆալումս երեւում է լիքը արիւնով մէկ կոնք, և նրա մէջը
նստած է մէկ գեղեցկատեսիլ երեխայ». Եւ որովհետև Մա-
րիամ խանումը չէր համարձակվում իւր ամուսնոյ խօսքը ան-
կատար թողուլ, ուստի մէկ կիրակի օր միրզա-Ռեսասմը ճա-
նապարհ ձգեցինք բարեկամաց մեծ բազմութեամբ դէպի թէհ-
րան, ուր չատ փառաւոր հանդիսով ընդունելեցաւ և արարո-
դապետի առաջնորդութեամբ իւր երեսելի տոհրաղրեալներով
ներկայացաւ շահին. թագաժառանգին, Հաջի-միրզա-Ազասիին
ուրիշ մեծամեծներին, և ամէն տեղ իւր խելացի խօսակցու-
թիւններովը մեծ յարգ ու վարկ ստացաւ, բայց մեղք որ քիչ
ժամանակէն հիւանդացաւ, օդափոխութեան համար կրկին
Ասպահան վերադարձաւ և 1843 թուականի Հոկտեմբերի 17-ին
իւր կենաց 21 տարեկան հասակին վախճանուեցաւ ու կարգէ
դուրս հանդիսով թաղուեցաւ.

Այդ տխուր անցքից երկար ժամանակ չանցած Սուլէյ-
ման-խանը վերադառնում է Շուշէէ՝ իւր պաշտօնը վարելու.
բայց լսելով, որ Մօնթէմիրը ծանր հիւանդ է, գալիս է Ասպա-
հան, առժամանակ կենում այնտեղ, և Մանուչար-խանի թա-

զուսկէն յետոյ երեք գունդ հետեւակ զօրքով դարձեալ գնում է Շուշաւար, վասն զի լուր էր տարածուած թէ, Բախտիարցիներն ու այն կողմի լեռնական ցեղերը մտադիր են ապըստամբել։

«Ազգասէր» օրագիրը, Կալկաթայ 1847 Հոկտեմբեր 23, թիւ 115, գրում է թէ «Մանուչար-խան-Մոհամմիդ-Գուլայի մահուան համար, մեծ եպարքոսը հրամանաւ չարի երեք քրիստոնի չալից խրլայ էր առաքել միրզայ-Գուրգէն-խանի, հնեազ Դաւիթ-Մելիքեանցի և սպարապետ Ալէքսան-խանի համար, վերջինս էր նախարար (վէզիր) Դասպիրայ և Մուհամադայ սահմանաց, առ ի տալ նոցա ազատութիւն։ Որովհետև Ալէքսան-խանն ասա չէր, վասնորոյ առաքեցաւ նորա լոգիին ի Դասպիր, Յունիս 10. Ջուղայ»։

Հետեւաբար նոյն օրագիրը մինոյն համարում, 19 Յուլիսի գարձեալ Ջուղայից, լուր ստացեալ գրում է Սուլէյման սարթիփ-խան և իշխան գաւառացն Դասպիրայ և Մուհամադայ, ոչ կարելով զդէմ ունել բուռն զօրութեան Վէլի-խանին պարտաւորեալ զամենայն ստացուածս իւր ի կաս ազատութեան նորա թողլով չու առնու դէպի Թէհրան, առ ի բազում հարկանել զնմանէ առ թագաւորն։ Ստացեալ Վէլի-խանն որ քանի ամաք յառաջ քան զայս էր իշխան գաւառացն, և կալեալ ի Մոհամմիդ-Գուլայէն կար արդիւնալ ի Սպահան՝ մինչ ցվախճան ստացեալ իշխանին։ Ի մեռանել նորա փախուստ առեալ գնայ ի Թէհրան, և անտի ի Դասպիր, ուր զօրաժողով լեալ՝ յանցեալ Ջուն ամսի յարձակի ի վերայ վերոյլեալ սարթիփ-խանին։ Կարծիք են ոմանց զի սա գաղտ ակնարկութեամբ Հաջի-միրզայ-Աղասի եպարքոսին է յարձակեալ ի վերայ սարթիփ-խանին։

Նոյն օրագիր և նոյն ամի Նոյեմբերի 6, թիւ 117, ասում է «Դասպիր. յարձակիլ Վէլի-խանին զօրաք Բախտիարցոց ի վերայ սարթիփ Սուլէյման-խանի հայկազունոյ՝ որ իշխէր կողմանց Դասպիրայ և Մուհամադայ՝ ապատասան անկանի սարթիփն ի տուն Շէյխ-Խայ դէպեալսի տեղւոյն։ Թուխալ-խան Լօռ յոգնութիւն հասանի նմա՝ ի Բեկոյր, ի վերայ հասանել Վէլի-խան, զօրք ամենայն ի կողմն նորա գնան. զարթիփն միայն հայ զօրակաւք գերծուցանեն ի ձեռաց ասոնցն՝ արութեամբ և հաւատարմութեամբ իւրեանց։ Սամսոնխան (առաւ ազգաւ) սպարապետ Պարսից՝ ելանէ կանոնաւոր զօրաք ի վերայ Բախտիարցոց կալանաւորել զՎէլի-խան, և զՍուլէյման-խան հաստատել յիշխանութեան Դասպիրայ և Մուհամադայ»։

Նույն օրագիրն 1848 ամի 15 և 20 Յունվարի առում է թէ, Ջուղայից նամակն, որ է 1847 ամի 18 Նոյեմբերի, գրած է թէ՝ «Մուլէյման-խան սարթիխն առա է, և սպասում է հրամարտակի չարի՝ վասն վերադարձութեան իշխանութեան իւրոյ ի վերայ Լօռաստանի»։

Նույն օրագիրն 25 Յունվարի 1849 ամի թէ՝ «18 Յունվարի անցեալ ամի գրում են Ջուղայէն, որ Պարսոմն սարթիխ-խանն ի Թէհրան ամուսնացեալ է ընդ օրիորդ դստեր Թուրաբ-խանի (Աղաբեկեան), և լսեմք զսմանէ թէ քաղաքապետ (նահանգապետ) Շուշտարայ լեալ՝ գալոց է յայտարկ մէջոցի առա առ ի գնալ ի Նպատակն իւր։ Ամենայն խանք Բախտիարաց և Լօռաց զէտանին ունին մերազնեայ իշխանին, երկնչին ի սմանէ առ ի խռովիլ զաչխարհն, եթէ ոչ երկարեսցի գալուստ նորա այսր, քաղաքիս չրջակայ սահմանք առանց ապատակութեան աւազակաց մնալով. վայելին ի խաղաղութեան»։ Եւ նույն ամի Նոյեմբերի 15, նույն օրագիրը կրկնում է. «գիր իմն ի Նոր-Ջուղայ յՕգոստոսի 5 թուով ասէ թէ «գերդաստան Սահամի-Գէոլլայ Մուլէյման-խանի Հայկազնոյ, որ մինչև ի կռուի և գժտութեան էր ընդ սանն կենաց Դարթի Մելիքանց՝ վասն գաղանի ժառանգութեանց հանգուցեալ Մանուչար-խանի՝ չուարար գնաց բնակիլ ի գիւղաքաղաքս Համադանայ կամ Շուշտարայ. օրք ընդ իշխանութեան կան նորա»։

«Ազգաստ» օրագրի վերջը յիշեալ յայտնութիւնները, զորօրինակ, երեք գունդով գնան Պարսոմն-խանի Շուշտէր, նրա խելայ ստանան. նախապար լինելն Դասպլայ և Մոնհամաց, Վէլի-խանի փախչելն և յարձակուելն Պարսոմն-խանի վերայ, սորա գալն Թէհրան, Սամիսան-խանի եկանելն զորք, ամենն էլ քաղաքական նշանակութիւններ ունին, այդեղաք ամենն էլ գրեալ են ինչպէս նրանք վերջացան. բայց «Պարսքերի պատմութիւն» գնոց առնելով նրանք ամենը, և սկսեալ 1841 թուից մինչև 1849 թիւը լռելով և ոչ ուրեք յիշելով Մուլէյման-խանի անուանը, և յանկարծ հանդէս է դուրս բերում նրան վասն մեծ տիզգսանէ «Սրնամ-Ուզ-Դաուլէ», այսինքն սուր տէրութեան. բայց առանց ասելոյ թէ, նա արդեաք անցեալ ժառայութիւններէ թէ ներկայի համար, և կամ երբ ստացաւ նա այդ երեսելի և վսեմ պատուանունը

1847 թուին երբ Ռուսաց և Անգլիացոց կողմից զորժակարներ գնացին Տաճկաստանի և Պարսկաստանի մէջ եղած վիճելի սահմանագլուխները քննելու. Ռուսաց գործակալ Զիվիճելի՝ այս ճանապարհորդութեան ժամանակը կարի հետաքրքրական օրագրութիւններ է գրում, որն ի լոյս ընծայեցաւ

նրա մահուանից յետոյ 1875-ին, Դորպատ մէջ շատ տեղ մեծ ակնածութիւնամբ է յիշվում Սուլէյման-խան Արամ-Ալի-Գոլիէի անունը. զարմանալի մի կողմ ասում է թէ «17 Յուլիսի 1849 ամին երբ առաջին անգամը պատահեցայ Սուլէյման-խանին, մեր այնտեղ եղած ժամանակն այն երեք նահանգների կառավարութիւնը Արամ-Ալի-Գոլիէի ձեռին էր, որ էր եղբորորդի Պարսկաստանի մէջ երբեմն երեկի Մանուչար-խան Մոմթազ-միր-Ալի-Գոլիէ Թիֆլիսեցի հայ Նիկոլայեւանց գերդաստանից սերուած և մեռած քրիստոնեայ» [1]։ Այլ ուրեք «ճշմարիտը խոստովանելով, թէ և թուզստանի, Լեռնստանի և Արաքստանի հրամանատար էր շահի հօրեղբայր Արտաշիր-միրզան, սակայն նրա իշխանութիւնը լոկ անուանական էր. իսկ ամենայն ինչ կենդրոնանում էր այն կողմերի սպարապետ Սալամն-խանի ձեռքում, որին և տեղապահ էր նրա որդի Զինանգիր-խանը։ Վերոյիշեալ նահանգների բնակիչները կարի մխուած են գէպի ազատութիւնն ու յուզհանութիւնը, բայց Սալամն-խանը իւր խոհեմ կառավարութեամբ զսպել էր նրանց։

Սուլէյման-խանի հաղորդումը բաւական պարզ էր. Հընդկաստանի զալանքարի թիկնոց, բաց փշատի գոյն կզգի զադաթից կապաց, վրէն հին Հայաստանի ազնուականների նման սպիտակ քաթանից գոտի, փիշմիրի ցեղնագոյն ծաղկանկար սաուէլից (շալից) առանց մազի կիսամուշտակ (քիւլաջայ) և ուսերի վերայ ձգած սև սաղ-դամնն սաւցեալ շալից անպաճոյճ վերարկու (ջուպպայ) մինչև կոճերը, և գլխին խուճուճ Բուխարայի փայլուն մորթից գոտկ։ Շատ հիացայ նրա հայերէն արտասանութեան վերայ, որ եթէ ուշադրութեամբ չլսէիր նրա երբեմն երբեմն ի տասի տեղ ի տասն արտասանելը, ինչպէս վրաստանի հայերն են արտասանում, կկարծէիր թէ նա ծնած է Թաւրիզ։

Հոկտեմբեր ամսին Շիմրանի ամարանոցից շատն իջաւ իւր արքունիքով Թէհրան. նրան հետեւեցաւ և մեծունի դասը, ինչպէս նաև Սուլէյման-խանը։ Սորա աչքացաւն օր ըստ օրէ աստիճանում էր, և Դեկտեմբերի սկզբներում նա չկարողացաւ նայիլ լուսի վերայ կամ մարդ ճանաչել։

Նրա խօսելոյ եղանդը հետզհետէ պակասում էր և կորցնում էր ուտելոյ ճաշակը. բայց նրա դէմքի վերայ մահուան հետք չէր նշմարվում, այլն չէր նմանում այն հիւանդներին, որոնք փոքրոգութեամբ մեռ ու վախ կանեն, կը ոռնան և ան-

[1]) Путевой журналъ С. И. Чарикова, 1849 — 1852 г. С.-Петербургъ 1875, стр. 80.

հանգստութեամբ չուռումուռ կուգան նստած տեղը կամ անկողնի մէջ, այլ սա իւր վերնաթարի կազմուածքովը անվերջութեամբ կար։ Յունվարի մէկին 1853 թուին նա հրամայեց մարդ չընդունել. բայց թէպէտ մէկը խիստ հարկաւոր գործ ունենայ, պատուիրեց նա առաջնորդել նրան Ջհանգիր-խանին և Նարիման-խանի մօտ։ Այնուհետև մէկ շաբաթ չանցած նա հետզհետէ, տկարացաւ և 18 Յունվարի լուսադէմին խաղաղութեամբ աւանդեց իւր հոգին։

Այն օրը շատերի խօսակցութեան գլխաւոր նիւթը հանգուցեալ մահը, նրա ողորմելութիւններն ու հաւատարիմ ծառայութիւններն են լինում։ Պատանեաց այն օրերը սարդարաքէմ ու զինուորական պաշտօնեաների գլխաւոր Ազիզխանը հիւանդ էին հարբուխով, տանից չէին դուրս գալիս, վատնորոյ չէր թիկնապահներից մէկն ուղարկեց Դրանց ասելու, որ հանգուցեալը յուզարկաւորութիւնը լինի չքեղ հանդիսով, ինչպէս վայել է առաջին կարգի զինուորական սպարապետի, որովհետև նա ծառայել է երեք շահերի և ինձ իսկ. և թէ սկսեալ սուլթանից (կայսրանից) մինչև ամենաարժէք քաղաքական գործերի մէջ ծառայողներն ևս պարտաւոր են ներկայ լինել յուզարկաւորութեան, նոյնպէս գրչի տէր (տնաբ կալէմ) սկսած աւագ գրագիրներից մինչև ամենաարժէք քաղաքական գործերի մէջ ծառայողներն ևս պարտաւոր են յուզարկաւորել։

Մէկ քանի պաբսիկ սպաներ երեսի գերդաստաններից, որոնք Կերասպ եղած էին, անձնամատոյց եղան յուզարկաւորութեան կարգ ու կանոնի վերայ հսկել։ Յունվարի 19 էր, հետզհետէ բոլոր թէհրանի մէջ գտնուած երեսիները համագումարուեցան Մօսթէմիդ-Ալդ-Դովլէ Մանուչար-խանի պալատում (որ բնակվում էր հանգուցեալը) որ մերձ էր Դովլաթի ասած բերդի դրանը, յետ կոյս արքունիքի։ Այնտեղից մինչև Հայոց եկեղեցին, որ Կազվինի բերդի դրան թաղի մէջն է, կլինէր մէկուկէս վերստ իւր ծառումուռ փոզոցները հաշուելով։ Հայերի կարաւանսարէի մեծ դուռը, նրա խանութները, բոլորը զոցուած էին այսօր, և նոքա ներկայ էին յուզարկաւորութեան։ Մեռելատանից, այսինքն Մօսթէմիդի պալատից մինչև եկեղեցին, փոզոցների երկու կողմում երկու գունդ զօրակներ շարքով կանգնած էին հրացաններով, որոնց մէջովը տխուր հանդէսը պիտի անցնէր։ Ամենից առաջ գնում էին երկու թնդանօթներ իրանց ռազմական մթերներով, և ապա երաժշտութեան նուագածուները, նոցա քամակին երկու գունդ հետեակ զօրք և կէս գունդ հեծելազօրք։ Սոցանից յետոյ տա-

նում էին սեազգեաց, ականակուռ սարերով թամրած վեց երիվարներ, որոնց վերայ յարմարացրած էին հանգուցելոյ հագած չորերիցն և նոցա վերայ մէկ մէկ, երկու երկու նրա կրած զէնքերը, զոբօրնակ թուրեր, հրացաններ, ատրճանակներ, վահաններ, երկաթապատ գրաստներ, նիզակներ և այլն, և այլն։ Բարձանչիւր երիվարի երասանակից, աջ և ահեակ, բռնած էին սեազգեաց, կուրծքերը բաց հանգուցելոյ սպասաւորները, ծառաներն ու ընդոծիններն։ Եւ ապա չորս զինուորական ատրճանաւորներ, որոնք կրում էին սև թաւիշէ բարձիկներ, որոնց վերայ զետեղուած էին հանգուցելոյ ստացած չքանշաններն ու ասպետական նշանները զանազան ժապաւէններով։ Այնուհետև գնում էին թէհրանի և վանակ գիւղի եկեղեցիների զգեստաւորված և գլխիրաց քահանաներ, մերձքան ժամաչափով տիրացուներ և զարդի երեխաներ, բուրվառով, խաչով, խաչվառով, քչոցներով և կերոններով, քաղցրաձայն երգելով «Աչխարհ ամենայն» երգը Սոցա քահանիցը սեազգեաց զինուորական ատրճանաւորները կրում էին սև թաւիշով պատած զագարը, և ապա երեսի անձնաւորութիւնները, որանց կենդրոնում քայլում էին թխազգեաց միրզայ-Գուրգէն, Ջէնգիր և Ղարիման խաները։ Այն ինչ Այք ասած մէջնաբերդից զուրս եկաւ հանդէսը, մերձեցաւ չուկաներին, նուագածուներն ձայնի վերայ զուրս թափուեցան մեծ բազմութիւն մուսուլման վաճառականների, խանութպաններ, արհեստաւորների և այլոց, հանդիսատես լինելոյ համար այդպիսի յուզարկաւորութեան, որպիսին երբէք հանդիսատես չէր եղած թէհրանը։

Պարսիկների աւելի հետաքրքրութեան արժանացրեց էր մեր եկեղեցական դասի շուրջառները։ Ժամաչափիները, խաչ, խաչվառն ու բուրվառը, ցորեկով վառած կերոնները, մանաւանդ երեխաների ներդաշնակ բարձրաձայն և ոգեբերական երգեցողութիւնը և բոլոր եկեղեցական դասի գլխարաց յուզարկաւորութիւնը։ Շատ ծեր և երեսի մարդիկ թողնելով զագարը, շտապ տարնապով, երեսուն, քառասուն քայլաչափ առաջանում էին և հաւասարվում եկեղեցական դասին, որպէս զի աւելի լաւ լսեն երգեցողութիւնը։ Սարդարազէմ միրզայ Աղայ խանի որդի միրզայ Դաւիթ Նիզամ-ուլ-մուլքն, որի ամուսինն էր չարի քոյրը, և հազիւ թէ 20—21 տարեկան լինէր, հարցրեց ինձանից թէ հարեւանը ձեր կողմերում ես այսպէս վառաւոր կլինի երեսի մարդանց յուզարկաւորութիւնը։ Ես պատասխանեցի թէ հայտնի մէկ մեծ վառաւորութիւն չկայ, մեր մէջ որանից տասն անգամ վառաւորա-

գոյն է լինումն։ Նա վերակրկնեց «մեր մէջ երբէք այդպէս հանդէս չէ եղած. այս առաջին անգամն է որ մեր ծերերը, ես իսկ երիտասարդ եմ, տեսնում են այս հանդէսը, ինձ չատ զուարթ է գալիս. զուարթ ուրախ է պատմում ձեր հանգուցեալները քան թէ մենք՝ մուսուլմաններս—մեր հանգուցեալները»։

Հանդիսաւոր պատարագից յետոյ հանգուցելոյ մարմնը թաղեցին եկեղեցիի գաւթի հիւսիսային կողմում, երբ և զինուորականները երեք անգամ հրացաններ արձակեցին և յետոյ գնացին. իսկ հիւրերը, այսինքն այցելու մահմէտականները խնդրեցին Ազայ-Կուրգէն-խանի և հանգուցելոյ որդւոց ժողովեցան հանգուցեալ Թուրար-խան Լաւաքլիանի տունը, ուր խմեցին սուրջ և խորհրդակ ծխեցին ու գնացին. իսկ հայերը գնացին մինոյն տան մէկ քանի սենեակներում, որտեղ մատակարարեցին կարի հարուստ ժամանց։ Մահմէտականները չատ էին զարմանում, որ հանգուցելոյ դիակը զգեստաւորուած, ամփոփուած թաւիշով և ոսկեթել ժապաւէններով բեռնած զագաղին մէջ իջուցին գերեզման և ապա թաղեցին, վասն զի նրանք թաղում են միայն սպիտակ կըտաւով պատանած բոլորովին պարզութեամբ, և չատ անգամ էլ առանց զագաղի։

Հետեւեալ օրը, այսինքն Յունվարի 20, սաղարաղէմը հիւանդ հիւանդ եկաւ հանգուցելոյ եղբօր և որդիների գլխաւոր ջանքի համար, անմիջապէս և ներուն խնդրեց որ երեկ ինքը ներկայ չէր, և ուզարկել էր իւր որդի Նիզամ-Ալէ-Մուլքն, և պատմեց չատ չատ ափսոսալը այնպիսի երեկի սպարապետ կորցնելուն համար, և թէ չատը մեծ համարուն էր տածում հանգուցելոյ մասին, և եթէ քանի օր էր չէի ներկայացել չատին, այսօր որ գնացի իսկոյն հարցրեց, գնացել ես արդեօք Սրհամ-Ալէ-Գովլէի թաղմանը կամ գլխաւոր ջանքի, և եթէ չես գնացել, անպատճառ այժմ գնա։ Որա գնալից մէկ ժամ յետոյ՝ եկաւ Ազիզ-խան Աշուգան բաշին (որ յետոյ սարդար քիւլլի), որ նոյնպէս ներուն խնդրելով ասաց «ես պարտաւոր եմ գնալ նրա գերեզմանի վերայ ներուն խնդրել, վասն զի ես չատ պարտաւորութիւններ ունիմ հանգուցելոյն, ես երբէք չեմ մոռանալ նրա երախտիքը, ես նրա գունդումն սուլթան (կապիտան) եմ եղած. ինչոյ դիմեց դէպի ինձ և ասաց, ասա՝ բարեկամ, կարելի է որ վաղը առաւօտեան ուղեկից լինիք բարեկամ, կարելի է որ վաղը առաւօտեան ուղեկից լինիք ինձ և առաջնորդէք հանգուցելոյ գերեզմանը, իմ սուրբ պարտաւորութիւնս կատարելու համար» ի հարկէ ես էլ խոստացայ ու գնացի։

Եօթներորդ օրը՝ 25 Յունվար ամսոյ, Ազիզ-խանը բե-

րեց չարի կողմից երեք թանկագին խիլաթներ, որ սգաւորների թխազգեաց հագուստները փոխէ։ Մերզայ-Դուրգէն, Զհանգիր և Դարման խաները, չարի շորոշած խիլաթները հագնելից յետոյ առաջնորդութեամբ Ազիզ-խանի գնացին ներկայացան շահին, որ մեծ շորջք ցոյց տալով յորդորել և խրատել էր, որ նրանք աշխատեն նմանել իւրեանց հօրը և այլն։ Սգաւորները շահի տունից ուղիղ եկին եկեղեցի, այն ինչ պատարագն սկսել էր, և ապա պատարագից յետոյ մեծ բազմութեամբ գնացին հանգուցելոյ գերեզմանի վերայ կատարեցին հոգեհանգստի կարգը, և այնտեղից մտան դարձեալ Թուրխանի տունը, ուր պատրաստած էին թիֆիլսցիների սովորութեամբ հաւրը սեղան։ ասացեալ ճոխ հացկերութիւն։

Ընդհանուր նկատմամբ Պարսկաստանի տերութեան ծառայող հայերից, Սուլէյման-խանի կեանքը նրա ժամանակակիցների մէջ նշանաւոր է, որն ունէր իւր բազմատեսակ վիպասանական առարկաներ, և որոնք կարող էր շատ դաս տարգմանց բարոյական օրինակ լինել, եթէ չ'ոչնչանային իմ գրած նրա կեանքի լիակատար ծանօթութիւնները։ Թերևս ժամանակը լրացնէ այդ թերութիւնը, արտահանելով հանգուցելոյ որդիների ձեռքն եղած գրաւոր ապացուցութիւններից։ Ամենայն ուշիմ ընթերցող կարող է ի մէջ առնուել այս մեր հիւսուածներից ևս թէ՝ Սուլէյման-խան Սրհամ-Լոդ-Դօվլէն ինչ երկաթեայ համբերութիւնք և կեանք ունէր, և ինչ խոնարհութեամբ պէտք էր վարէր այն ազգի մէջ իւր ծառայութիւնը, որ մեծ քրիստոնեայ, և այն էլ բարեպաշտ քրիստոնեայ և ազգասէր հայ, անմիջապէս և իւր անստգիտ վարքով, հաւատարմութեամբ և փայլուն արդիւնքով և քաջութեամբ կարողանար արժանանալ այն վեսիր տիզդասին, այսինքն հաւատերութեան կամ հանգ տերութեան տիզդասին, որ մինչև այն ժամանակը Պարսից տերութիւնը չէր շորոշած ոչ թէ մէկ քրիստոնէի, այլև նոյն իսկ պարսկին համանման պատուանունը։ Լուսդ, որ ոլորան նրա կեանքի արևելքը յայտնի է մեզ, այնքան էլ անյայտ է նրա միջօրէն ու արևմուտքը։

ԼԷ

ՍԼԹ-ԽԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԱՄ ԾԱՏՈՒՐ

Յաւելով եմ ասում, որ երբեմն այս տարօրինակ անձը իմ մօտիկ ծանօթներից մէկն էր, այնքան նրա կենսագրութիւնից փոքր տեղեկութիւններ կարող եմ հաղորդել ընթերցողներիս. որովհետև նրա մեծ որդի Գասուբ-խանը իմ գրասուենը ոչնչանալն յետոյ, միշտ խոստանում էր ինձ հայթհայթել հիմնաւոր տեղեկութիւններ այն հրամարանքներից և հրամանագրերից, որոնք նրա հայրը ժամանակ առ ժամանակ ստացել էր Ֆաթ-Ալի և Մահմմադ շահերից, և կամ Թագաժառանգ Աբբաս-Միրզայից, և որոնք մնացել էին նրա մօտ, բայց տարաբախտութեամբ նա չկատարեց իւր խոստումները. նա մահացաւ 1874 թուին, երբ ես Թաւրիզ էի, այսօր վաղը ձգելով զանց արեց, և երբ ես եկի Թիֆլիս՝ դարձեալ նամակով խնդրեցի, դարձեալ չկամեցաւ կատարել իմ խնդիրը, ուստի և այժմ ես պարտաւորվում եմ այստեղ ասել այն, ինչ որ ականատես եմ եղած, և կամ ինչ որ Ալի-խանի բերանից լսածներիցս մնացել են մտքումս.

Ալի կամ Ալիքը ծնած էր Բուշէր իւր համնատ ծնողներից. նրա հայրը իւր տասներեք կամ տասնչորս տարեկան հասակին ուղարկում է Շղոկասան, որ նա սնդլիերէն սովորի, և մինչև իւր ուսումն աւարտելը մնայ իւր անեղբօջ մօտ. Ալիքը չաւարտած իւր ուսումը, նրա հայրը որդուց տանը. Ալիքը չաւարտած իւր ուսումը, նրա հայրը Բուշիր մեռնում է. իսկ նրա քեռին մէկ քանի ժամանակից յետոյ մեռնում է և վախճանվում Ալիքի հօրից մնացած անմախանձելի դրամագլուխը լինելով նրա քեռի մօտ, այն էլ կորչում է, ուստի և ստրանի երիտասարդ Ալիքը մնալով անկարում է, ուստի և ստրանի երիտասարդ Ալիքը մնալով անզարապան և առանց ասպնջականի, դուրս է գալիս ուսումնարանից, մտնում է խիստ չափաւոր ռոճիկով մէկ անդլիացի վաճառականի գրասենը առնուազ ստորելու համար.

Մինչև ներկայ դարիս առաջին քառորդը Պարսկաստան եկող դեսպան ինդլիզները կը նշանավէին Արևելեան Շղոկասանի բնակութիւնից. վանորոյ և նոքա կոչվին Բուշիրի տանի բնակութիւնից. վանորոյ և նոքա կոչվին Բուշիրի

վրայով, ճանապարհի կարճութեան և անվտանգ լինելոյ համար։ Այս դարի սկզբներում առաջին Նապոլէոնի կռիւների ժամանակ՝ մէկ երեսի ինգլիզի դեսպան Պարսկաստան գալու ժամանակ՝ որոնում է մէկ թարգման, որ ինգլիզերէն և պարսկերէն լեզուների տեղեակ լինի։ Այդ պաշտօնը վիճակվում է երիտասարդ Ալէքիկին։ Դեսպանը մինչև թէհրան հասնելը, սովորում է Ալէքիկից պարսկերէն փոքր ի չատ խօսելը, վասնզոյ մէկ տարիից յետոյ նա գրել է տալիս Ալէքիկին ի թիւս կուսակ տասած դեսպանատան սուրհանդակների, որ պէտք էր իւր առմիկը ստանար դեսպանատան գանձարանից։ Այն ժամանակ կուսակները մեծ հաւատարմութիւն և վարկ ունէին դեսպանատան մէջ, անմիջապէս և Պարսից տէրութեան առջեւ։ վասն զի դեսպանատունը կդանձնէր նրանց ամենայն պաշտօնական թղթակցութիւնները (ի հարկէ մեծ պահարանի մէջ ժողոված և կնքած տէրութեան կնքով), որ տանէին Բուշիր կամ թէ Տրապիզոն եղած ինգլիզների հիւպատոսին, և վերջիններից նոյնպէս կատանային պաշտօնական թղթերը, կրերէին կդանձնէին նրանց դեսպանին կամ հիւպատոսին, անմիջապէս և Պարսից տէրութիւնն էլ իւրաքանչիւր անգամին հրովարտակ կտար, որ ճանապարհներին ամենայն տեղ ձիեր ու ձիաւորներ տային ուղեկցել նրանց առանց վրատանցի։ մինչոյն ժամանակն էլ նոյն տէրութիւնը կհաւատար նրանց իւր պաշտօնական թղթերը՝ տանել, յանձնել պրտա. սամաններում իւրեանց գործակատարներին։

Շատ լաւ կյիշեմ երբ 1822 թէ 1823 թուին Ալէքիկը՝ Ալէքիրէգ պատանուանով եկաւ Թիֆլիս, ի հարկէ կամ չանի կամ ինգլիզի դեսպանի թղթակցութիւններով, որ գնաց Ս.-Պետերբուրգ կամ Վարշավի վրայովն Լեհոց, երբ և իջևանեց անգլիացւոց դեսպանատան երբեմն գանձապետ Յարութիւնխան Աշինեանի թէ Օշինեանի որդիի տանը. և երբ հայրս հրաւիրեց նրան մեր տունը հացկերոյթման համար, և ի պատիւ նրա մեր քոյր հիւրեր ևս հրաւիրուեցան։ Բայց մտիս չէ նրա վերադառնալը. արդեօք Թիֆլիսի վրայէն գնաց թէ ուրիշ ճանապարհով վերադարձաւ Թէհրան։ Այդ անցքից հաշիւ թէ մէկ կամ երկու տարի անց էր կացել, որ նա կրկին եկաւ Թիֆլիս, նոյնպէս իջաւ Օշինենց տանը։ Այս անգամը նա 15 օր կացաւ այնտեղ, վասն զի Կովկասեան լեռան ճանապարհը կապ էր։ Մեր գործակատարը Թաւրիզից նրա հետ ուղարկել էր մէկ կապոց մեծ գումարի մարգարիտ, վասնզոյ եկած օրը՝ երեկոյին եկաւ մեր տունը և հետը բերեց այդ առանդը յանձնել հօրս։ Դիշերները գրեթէ ամենայն օր մեր

տունը կուգար, կհարցնէր, կտեղեկանար հօրիցս առնուազն մասին, կերթար չուկան ապրանքներուն նմուշներ կառնէր ու կրերէր կհարցնէր հօրս թէ քանի քաշ է լմնում սրա թասը, քանիսով կարելի է գնել կամ վաճառել, օրտեղից էք ստանում, ինչքան ճանապարհի ծախս ունի, ինչ մաքս, ինչ ճանապարհով էք փոդն ուղարկում Թուրաստան կամ Եւրոպա և այլն, և այլն։ Հայրս չիմանալով նրա նպատակը, ծիծաղում էր և ասում թէ դու բէկ ես, ծառայութեան մարդ ես, ինչ կանես գոցա գները, ճանապարհները, փոդերն ուղարկելը և այլն, և այլն։ Ակթ-բէգը այս անգամ նշանուեց Թիֆլիս մէկ օրիորդի հետ, և խոստացաւ վերադառնալիս պսակուել ու հետը տանել նրան Թավրիզ կամ Թէհրան. բայց նա այնուհետև էլ չեկաւ Թիֆլիս, կարծեմ Կ.-Պոլսոյ և Տրապիզոնի վրայովն էր վերադարձել Թավրիզ. իսկ օրիորդը վեց տարի տանը նստելից յետոյ՝ ամուսնացաւ ուրիշի հետ։

Արդեօք սրանից առաջ թէ յետոյ է լինում Ակթ-բէգի հրաժեշտ տալն Ինգիլզի դեսպանատան ծառայութիւնից և մտնելը Պարսից ծառայութիւն. այս լաւ մտիս չէ, այլ լաւ յիշում եմ, որ նա մէկ անգամ գնացել էր Պարսից դեսպանի հետ Լենդոն։ Ինչպէս պատմութիւնը յիշում է մէկ դեսպան, որը գնացել է Անգլիա 1233 ու վերադարձել է 1235 Հիջրի (1819—1821 թուին) որ երեք տարի է տեւել նրա գնալն ու վերադառնալը։ Արդեօք Ակթ-բէգն այդ դեսպանի հետ է գնացել թարգմանի պաշտօնով, թէ յետոյ է պատահել. նրա գնալը լսել էի նրանից. բայց երբ, այժմ լաւ մտիս չէ, միայն գիտեմ որ գնալով մէկ դեսպանի հետ, նա շատ մեծամեծների հետ ծանօթանում է Լենդոն, և վերջիններիս մէջնորդութեամբ ծանօթանում է և հարաւաս վաճառականների հետ Ինքը՝ Ակթ-բէգը կպատմէր թէ, ես տեսնում էի Պարսկաստան լաւ հանքեր կան, բայց մշակներ չկային. վատնուում էր հաստ Լենդոն, առաջին գործս այն եղաւ, որ փորք ի շատ հանքաբանութիւն սովորիմ և վարպետներ բերեմ Պարսկաստան հանքեր մշակելու։ Բայց երբ մէջտեղս եղաւ հանքաբանութեան ուսանելը և տեսաց որ մեծ դրամագլուխ կուզէ, որ նուիրեան ուսանելը և տեսաց որ մեծ դրամագլուխ կուզէ, որ ես չունէի, ուստի միտքս դրի նախ մէկ առևտրական ընկերութիւն գոյացնել, դրամ վաստակել և ապա ձեռնամուխ լինել հանքաբանութեան. որով և սկսեցի հարուստ առևտրականներ մերձենալ և նրանց ցոյց տալ, որ մեծ վաստակ կան տեղերն մերձենալ և նրանց ցոյց տալ, որ մեծ վաստակ կլինի Ինգլիզի ձեռագործներ ուղարկել Պարսկաստան։ Այդ կլինի Ինգլիզի ձեռագործներ ուղարկել Պարսկաստան։ Այդ առևտրական տեղերը այնպիսի հարցեր առաջարկեցին ինձ, որոնց չկարողացայ պատասխանել. ուստի երբ վերադարձայ

Պարսկաստան, հետամուտ եղայ տեղեկանալ բոլոր նրանց հարցերին և գրել, որպէս զի միւսանգամ հարցնելիս կարողանայի պատասխանել նոցա։ Այսպէս էլ եղաւ։ Թուլաց և Տաճկաց պատերազմը վերջանալից յետոյ դարձեալ գնացի Լօնդոն, ուսկից քիչ ժամանակէն բանակներն ապրանքով վերադարձայ Պարսկաստան, Տրապիզոնի վրայով, որն որ մինչև այն ժամանակ անծանօթ էր տեղացի վաճառականներին, վասն զի նրանք ցամաքով կերթային Զմիւռնիա և ցամաքով կտանէին իւրեանց գնած ապրանքն Եդրդում և այնտեղից Թավրիզ։

Թուլաց տէրութիւնը մինչեռդուխտամբ կուսակալ Երմոլովի հնարել էր Անդրկովկասեան վաճառականներին տրանզիտ, որ Եւրոպայի ձեռագործները հինգ առ հարիւրն մաքս վճարելով բերէին Թիֆլիս և այնտեղից անմաքս ուղարկէին Պարսկաստան։ Այդ արտօնութիւնը վերջացաւ 1830-ին, երբ Եւրոպայի, և առաւել ևս Ինգլիզի ձեռագործները որպէս Թիֆլիս, նոյնպէս և Թավրիզ չատ թանկացան։ Յանկարծ Թիֆլիս լուր տարածուեց թէ՝ մէկ հայ Սէթ-խան անունով (այժմ ստացել էր նա խանութեան տիտղոս) նոր ճանապարհ է բաց արել Տրապիզոնովը, վասնզոյց հայրս և երեք էլ ուրիշ վաճառականներ համաձայնեցան, մարդիկ ուղարկեցին Լիպսիկայ, ապրանք գնեցին և ճամբեցին Թրիեստ և այնտեղից Տրապիզոն, որ իւրաքանչիւրն ստանայ նոանից իւր ապրանքի հակերը։ Այնպէս ժամանակ գնացինք, որ բեռնաբարձ ձիեր չգտանք. ուստի մինչև 2500 բեռնաբարձ ձիեր տարանք մեզ հետ որ մեր բեռները բարձնէք։ Այդ ժամանակ (1832 թուին) տեսայ Տրապիզոնի նաւահանգստում մէկ նաւ, որ կրում էր անունս «Սէթ-խան» որ Լօնդոնից ապրանք էր բերել Սէթ-խանի համար և բարձուրմ էր Թավրիզից առաքած Սէթ-խանից Ռաշտի մետաքս և երկու հատ երեսի նեղոգներ, որ նա ուղարկում էր Լօնդոն մէկ երեսի զուբքի համար, ինչպէս և նաւավարն ասաց մեզ։ Վերադարձեալ թուի վերջերում ևս հասայ Թավրիզ, արդարև, Սէթ-խանը մեծ գումարներ էր վատաւել, և մեծ էլ հաւատարմութիւն ունէր պարսիկ վաճառականների մոտ։ այսու ամենայնիւ չգիտեմ երբ էր նա ստացել խանութեան տիտղոսը։ Մէկ կողմից նա առևտուրով էր պարապում, միւս կողմից հաշվում էր թագաժառանգ Աբբաս-միրզայի մոտ ինչպէս մէկ պաշտօնատար, վասն զի ամենայն օր նա կերթար բարձրագոյն զուարճ և կներկայանար Աբբաս-միրզային։

Այդ միջոցում հասան Լօնդոնից երկու հանրաբան ինգլիզներ և մոտ քսան յոյներ Գիմուշխանից, որ պղնձի, արճճի

և արծաթի հանք մշակեն, վասն զի տէրութիւնը չնորհել էր նրան Ալէք-խանին քսան տարի ժամանակաւ մշակել առանց վճարելոյ որ և իցէ հարկ։ Մինչև հանք գտնելը Ալէք-խանը մեծամեծ գումարներ ծախսեց, վասն զի մէկտեղ առաւ մեռաղ կար, անտառ չկար, ուր որ անտառ կար, թէև մեռաղ ես կար այնտեղ, բայց չորս կողմէ բնակիչներն էին վայրենի, գող, աւազակ, առիւծուչտ մարդիկ, վասնզոյ նա պարտաւոր էր նրանց մեծամեծներին առատ պարգևներ, ընծաներ տալ, որ նոքա պաշտպանէին հանքում մշակողների կեանքն ու արտադրած մետաղը։ Այդ ծախսերը մօտ երկու թէ երեք տարի կրեց նա, մինչև ի վերջոյ կարողացաւ գտնել «Դարագաղի Հասանովի» ասուած ձորում հանք, ուր և անտառն առատ էր, այսու ամենայնիւ Ալէք-խանի առատաձեռնութիւնը չափազանց էր, այնպէս որ ստիպում էր նրան մինչև չնայրութիւն [1]), վերիվայր տապալից նրա ամենայն ձեռնարկութիւններն ու նպատակը։ Վասն զի նա դրաղուած լինելով իր հանքային խառն գործերով, չկարողացաւ ժամանակին ապրանք բերել տալ Լենդոնից և կամ բերել տուած դրամներն ուղարկել։ Նոյնպէս Պարսկաստանում ժամանակաւ գնած մետաքսերի դրամներն վճարել, վասնզոյ օր ըստ օրվ նա կորցրեց իւր վարկը, տէրութիւնից նպաստ խնդրեց, չկարողացաւ ստանալ, ի վերջոյ թշուառ վիճակում մահանալեցաւ թվականը 1845 թուին, և թողեց երեք զաւակ, որոց երկուսը մեռան, իսկ երրորդը՝ ամենից մեծը, այսինքն Պատուր-խանը,—կայ, ու ծառայում է արտաքին գործոց տեսչութեան մէջ։

Ապաքէն թէև Ալէք-խանի կեանքի վերջին օրերը թէ բաղդի բերմունքից և թէ չնայրութիւնից վատ անցան, այսու ամենայնիւ նա գործունեայ և հնարագէտ էր։ Նա խրանի մէջ երեսի համար ստացաւ, և նա կրկին ոտի վրայ կանգնեցէր, եթէ Աբբաս-միրզան կենդանի լինէր։ Վասն զի սա գնահատում էր Ալէք-խանի յատկութիւնները։ Սա ախտաւոր էր մա-

---

[1]) «Հայոցդի Ալէք-խան Լուսաւոր-ասաւրութեան տեղ բաւական են ծառայեցեալ, սա մեծագիտ փոր ի շատ հնարաբանութիւն ապարելով՝ ինչ ի պարտկաստան, և աբբասի հրամանքն արժանի լինելով նոր ելքաց հնար պղծեցեալ ոչ միւր պարգևական գիւղում ի Մրեանայ գաւառն Ընդարտանան հանդեպ, բայց կրակի նիւթն տեղն փոքր գտանելով, ոչ ի կողմն դարդարելոյ, տեղւոյ անտառանին չատ գոլով ոգեղեղ սորա ոչ պիտի բանականին պղծեցեալ հանել և բնաբոր թեղանօթի թափել, այլև տակի (փոխանակ տանելոյ արծաթի) պիտան, որով կարողացաւ մին ուրեմանայ և լաստն մուրել։ Եթէ այս ծախի պարագաւ անձին մեծագործութեանց չեռ կցորդեալ չլիներ ոչ միւն ասորի ազգանի շաւալութեան, իւր արշեանն պիտի իւր ոգոյց յուսահանական ժամանակ գուիթի համարվէր։» «Ազգասէր», Կոլկոթա, 1815, Դեկտեմբեր 6, թիւ. 17

ծանել իւր հայրենիքի մէջ արգիւնաւոր արհեստները. այս պատճառաւ դրամով, պարգևով, ատիճանով և տիտղոսներով խրախուսում էր օտարազգիները, որպէս զի գան նորա լուսաւորեն կրթեն պարսիկները, որոնք կրօնամոլութիւնից սոփեալ մինչև ցայսօր ևս իրանք չեն կարողանում մէկ քայլ առաջ երթալ, որ և իցէ արհեստ ընդգրկել, բայց թոյլ էլ չեն տալիս որ ուրիշները նրանց առաջնորդեն դէպի լուսաւորութիւն. Արրաս-միրզան մեռաւ, նրա ամենայն ձեռնարկութիւնները խափանվեցան և վատթարացան, ինչպէս և Ակթ-խանի հանքը օր ըստ օրվ խանգարուեցաւ, և վերջնոյս մահուանից յետոյ, ամբութիւնը խլեց նրա ժառանգներից և պարտատէրներից (թէև ըստ մեծի մասին հայեր էին, յորոց մէկն էլ ես էի. ինձ մերձ հինգ հազար թուման էր պարտ) և տուեց պարսիկներին, որոնք հետզհետէ խանգարեցին և գրեթէ անհետ արին.

Ակթ-խանը բնական խելացի էր և առողջ դատողութիւն ունէր, նրա Շիրազի պարսկերէն արտաբերութեան վերայ պարսիկները կնախանձէին, այնքան էլ անգիրերէնում ճոխ և ճարտարախօս էր, որ Անգլիացիք կխոստովանէին թէ, նրա արտասանութիւնը չէ կարելի ասել որ այլազգի արտասանութիւն է, իսկ նրա հայերէնն աւելի մօտ էր Հին Զուռզացիների արտաբերութեանը. Նա կհաղնուէր պարսկական տարազով, որ շատ յարմար էր գալիս նրա բարակ, երկար հասակին և գեղեցիկ դէմքին, մանաւանդ նրա մէջակ երկար մօրուքին, որ անդադար կը քերքերէ ձախ ձեռքի մատներովը.

Ռուսաց դեսպաններն ու հիւպատոսները, նոյնպէս և պաշտօնատարները չէին սիրում Ակթ-խանը, պատճառ բերելով թէ՝ իբր 1826 և 1827 թուականներին՝ վերջին Ռուսաց և Պարսից պատերազմի ժամանակ պատգամախօս է գնացել կ.-Պոլիս Պարսից ամբութիւնն կողմից ու գրգռել Ղաճիրները որ պատերազմեն Ռուսաց հետ. բայց թէ այս լուրը ճշմարտութեան կողմանէ որքան արժէք ունի, ես չեմ կարող գնահատել, վասն զի չնայելով իմ հետազօտութեանը՝ ոչ մի յիշատակի արժանի տեղեկութիւն չգտայ.

Լ.Բ.

ՄԻՐԶԱՅ-ՖԱՌՈՒԹ ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ

Անցեալ դարի վերջերում կամ ներկայ տարիս սկիզբները Պարսկաստանի յուզուած ժամանակ՝ Ադրպատականի հայերը անընդհատ ենթարկուած էին գերեվարութեան և ապատակութեան, ինչպէս որ յաճախ անգամ կրկնած եմ։ Ի չարս նոցա՝ Ղարաբաղի Ջարրայիլ մահալի (վիճակի) Ակթաղուա գիւղի ափնումը որթաբած երեխաները ժողովուած խաղալոյ ժամանակ՝ յանկարծ մէկ քանի պարսիկ ձիաւորներ լեռան միւս կողմից յարձակվում են նրանց վերայ, շտապ տագնապով հազիւ թէ մէկ երեխայ բռնում են, վեր քաշում դնում մէկի երիվարի գաւակի վերայ փախցնում տանում։ Այս երեխան լինում է մեր առարկայ Ֆառուխը, նոյն գիւղացի Մինասի որդին, որի մկրտութեան անունը լինում է Յարութիւն։ Գերեվարները իւրեանց որսը տանում են իւրեանց բանակը և անուանում նրան Ֆառուխ։

Ֆառուխը կպատմէր թէ հայնքան երեխայ էի, և հազիւ թէ 7 կամ 8 տարեկան լինէի, որ չէի հասկանում թէ ինչի այնպէս գողութեամբ տարան ինձ, և ինչ ասել է գերի։ Թէպէտ գերեվարները ինձ աւելի լաւ կերակուրներ և մրրգեղէններ էին տալիս, բայց ես գրեթէ ոչ մի համակրութիւն չէի զգում դէպի նոցա, ուստի և շատ անգամ լաց էի ընում ու աշխատում էի գուցէ գալ նրանց վրանից և գնալ։ բայց ուր,— ես ես չէի հասկանում։ Վաճառուեցայ թէ ընծայեցայ երեք անգամ մինչև թէհրան հասնելս, ուր տարան ինձ մէկ հոյակապ պալատ, որի նմանը երբէք չէի տեսած, և ներկայացրին մէկ մարդոյ, որի առջեր շատ սպասաւորներ էին կանգնած։ Մէկ քանի բոպէից յետոյ՝ երկու սև անհագատեսիլ մարդիկ կամեցան առաջնորդել ինձ մէկ ուրիշ գաւիթ։ ես նոցա ինձ անընտել կերպարանքից զզուելով և երկնչելով յամառեցայ չհետևիլ նրանց։ վանողոյ նրանք քաշ տալով տարին ինձ և ես սկսեցի գոռալ։ գոչել և լաւ։ նրանք չնայելով իմ կամակորութեանը հասցրին մէկ ուրիշ գաւիթ, ուր մէկ քանի ինձ հասակակից աղջիկներ և մանուկներ առին ինձ խափշիկ ներ-

քինիների ճանկերից, առաջնորդեցին մէկ մեծ ընդարձակ, ոսկեզօծ և չքեղ կահ-կարասիքով զարդարուած դահլիճ, ուր ժողովուած էին մօտ տասը փառաւոր հագնուած տիկիններ և օրիորդներ, որոնք իմանալով որ իմ լացի ու աղաղակի պատճառն էր վախենալս այն սերերից, իսկոյն հրամայեցին նոցա հեռանալ, և զուրս գնալ այն սենեակից։ Ամենահետեւ տիկինների մէկը շտապով զուրս եկաւ, և վերադարձաւ ձեռին մէկ ափսէով չոր մրդեղէն ու շաքարեղէն, դրեց իմ առջեւ, և փոքրիկ երեխաները հրաւիրեցին ինձ ուտել։

Երկու տարուայ մէջ Ֆառռուխը սովորում է վարժ խօսել պարսկերէն, երբ և կանանոցի զուրսի բանտումը սարքում են մէկ սենեակ, ուր Ֆառռուխն ու երեք նրա հասակակից մանուկները և երկու աղջիկներ մէնակ սկսում են պարսկերէն կարդալ ու գրել սովորիլ մօլլայից։ Այդ մօլլան հասկացնում է Ֆառռուխին, որ նա գերի (արդ—եսիր) է կաջար Ամիրխանի, այսինքն տան տիրոջ, և նրա աշակերտակիցներն ու աշակերտուհիները զաւակներն են։ Վանոբոյ նա պարտաւոր է նրանց հետ յարգանքով վարուիլ, և թէ՝ Ֆառռուխը թէ որ կամենում է ազատուիլ գերութիւնից պիտի աշխատի ուսանիլ և լաւ գրչի տէր ելնիլ եւ այլն։ այս պատճառաւ և վերջինս գիշեր ցերեկ աշխատում է կատարելագործել իւր ուսումը, որով նա տասնեմեկ տարեկան լինելից յետոյ դուրս է գալիս այդ ուսումնարանից և շարունակում է իւր ուսումը Ամիրխանի դրագիրների մօտ, միեւնոյն ժամանակ և թղթակցութիւն ու հաշուետուութիւն է սովորում, մինչև 20 տարեկան դառնալը, երբ և Ամիրխանն իւր կալուածների կառավարչութիւնը յանձնում է նրան։

Ռուսաց և Պարսից վերջին պատերազմի ժամանակ, այսինքն 1826 թուին Ամիրխանը, որ արդէն սարդարութեան պաշտօն էր ստացած, նրան յանձնուած բանակի գլխին նշանակում է առաջապահ զօրաց վերայ զօրավար, և հետը բերում է Մերզայ-Ֆառռուխը զօրքի (մրատՁի) համարակալ, որպէս զի այս զօրախումբը իրաւոյ Վարարաղի կողմերը դէպի Թիֆլիս։

Այնուհետեւ Ամիրխան սարդարը հրամանատարութեամբ Մահամմէտ-Միրզայ պատանի որդուոյ թագաժառանգի իւր զօրախումբով անցնում է Երասխ գետը, մտնում Վարարաղի Ռուսաց հողը, այնտեղի բնակիչների գիւղերն այրում, ասերում, ապատակում և բնակիչները գերում, մինչև հասնում է Զանգէզի գիւղը, ուր թագուած էր իշխան (ինանդ) Մադաթովի հայրը։ Այնտեղ Աբբաս-Միրզայի հրամանաւ, նրա գե-

բեղմանը փորել է տալիս. նրա փտած դիակը ձգել է տալիս նախ ՝ ների առջեւը և երբ տեսնում է որ նրանք չեն ուզում, հրամայում է այրել և փոշին քամու տալ։ Ֆառռուխը պատմում էր թէ, այն օրից ես մէկ աւելի խորին տեսութիւն և առանձին զգուանք զգացի դէպի պարսիկները, որ մինչև ցայսօր չեմ կարողանում սրտէս անէծս առնել, վասն զի անօրինակ խժութիւն էր այդ արարմունքը։

Այդ անզուսպ և սանձակոտոր զօրախումբը մինչեւ մեղնութեամբ յառաջ է խաղում մինչև Դանձակ (Գանձակայ կամ ըստ Ռուսաց Եղիսաւետպոլ) և այնտեղից Շամքոր, ուր պատահում է իշխան Մադաթովին։ Այստեղ պատերազմի ժամանակ սպանվում է Ամիրխան սարդարը, և նրա զօրախումբը վախով լցուած՝ ցրվում, փախչում է, Նրանց մէջը լինում է և միրզայ-Ֆառռուխը, որ յետոյ չէ կարողանում փախչել գնալ իւր ծնողաց մօտ Աթաղուտ, վասն զի ոչա ես վախից այլ և այլ տեղեր էին փախած, և գիւղն ըստ ամենայնի գատարկացած էր։

Այնուհետեւ Ամիրխանի պաշտօնը վարում է Ջամանխանը, որի հրամանատարութեան տակ գտնվում է և Ֆառռուխն իւր պաշտօնովը։ Քիչ ժամանակից Ռուսաց և Պարսից հաշտութիւնը կայանում է և գիւղերի բնակիչները վերադառնում են իւրեանց տեղերը, ինչպէս նաև Աթաղուտցիները։ Ֆառռուխի և Ջաման-խանի մէջ ծագում է գժտութիւն, ուստի և առաջինը մէկ օր հեռնում է մէկ պատուական ձի, հրացանը ձգում է ուսը՝ որսորդութեան պատրուակաւ, միայնակ դուրս է գալիս բանակատեղից, փոքր ինչ հեռանալէն յետոյ ճանապարհը ծռում է, քշում, գնում է հասնում խուզաֆիրի կամուրջը և այնտեղից իւրեանց գիւղը։

Փոքր մի ջոցից յետոյ միրզայ-Ֆառռուխը գալիս է Շուշի, որ է բերդաքաղաքը Ղարաբաղի, սկսում է փոքր ի չատէ աուսերէն կարդալ և խօսել սովորել, և մանում է ռէալութեան ծառայութիւնը, որպէս դրատար թարգման պարսից լեզուի, իւր վերայ ունենալով իւր բարերար Ամիրխանի տանմանունը, ուստի և տարագրվում է այնուհետեւ Ամիրխանեան։

Այդ միջոցում գալիս են Շուշի գերմանացի միսիոնարներ՝ քարոզիչներ, հիմնում են այնտեղ ուսումնարան, և ընդունում են միրզայ-Ֆառռուխը վարժապետ պարսից լեզուի, Սորանից Գիդրիխ, Զարեմայ, Ջուն և միւս գերմանացի միսիոնարները սովորում են պարսկերէն, և ասում են իրր թէ Անգլիացի Գլենն Ֆառռուխի օգնականութեամբ լինի թարգմանած Աստուածաշունչը պարսկերէն։ 1830 թուին երբ ես Շուշի

ծանօթացայ Ֆառուսի հետ, նա շատ բաներ էր պատմել ինձ, բայց ես մոռացել եմ, և ինչ որ այստեղ գրեցի, նրա ասածներից, պատմածներից էին մնացել մտքիս։ Նա քաղցրախօս ու բարոյական առակախօս էր, և տարաղէպ վէպեր կասէր։ Ժողովուրդի մէջ կամ հացկերութեան հանդէսում, եթէ նա ներկայ լինէր, հանդիսականները կաչխատէին նրան խօսեցնել և լսել նրա բերանից զանազան առակներ և տարաղէպ անցքեր։ Նա մահանալուց 1855 թուին մրսօնարները լսելով նրա մահը 1858-ին տանել տուին նորա Աորահամ մակ որդին Շվէյցարիա, ուր իւր ուսումը աւարտելից յետոյ գնաց Կ.-Պոլիս քարոզչութեան պաշտօնով, և ապա 1874 թուին եկաւ Թաւրիզ, որպէս պաստոր ամերիկեաններին, ուր չը-կարողացաւ իւր դերը խաղալ, գնաց Ալիքսանդրապոլ, որպէս զի այնտեղի Հայոց ուսումնարանում վարժապետ լինի գերմաներէն լեզուի։ Այստեղ ես հայերը լսելով որ նա կրօնափոխ է եղած՝ չընդունեցին, ուստի նա գնաց Թիֆլիս, ուր գերմանացի գաղթականների զաւակներում վարժապետ նշանակուեցաւ և նրանց եկեղեցումը քարոզիչ եղաւ։



Վ. ԵՐՋ.



ՍԽԱԼԱՆՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
25	37	Սբրոհդարբ	Սբփոհդարբ.
32	9	գնա	գնալ
39	14	կենդրն	կոյքն.
»	40	տասարկ	դասարկ
41	23	իմս	նմա.
86	38	մարդոց	մարդոյ.
93	33	ան չուտ	անչուտ.
94	34	վոյրացած	վայրոյած.
96	3	վանեալ	հանեալ
135	23	Սարասաթ	Սարասատ.
152	37	երեք	երկու
156	25	անապատում	անապատում.
166	12	մանակած	բանակված
172	2	Ամփիթր	Ամքիտր.
176	16	սարանգութեան	սարհանգութեան.
187	20	հաստատում	հաստատում մ
193	10	գասրգաթիւն	գաս-բարխաութիւն.
»	38	մագեալք	մաշեալք.
202	9	կատարում է	կատարում.
239	3	մեռաս թագրիգի մէջ	մեռաս թէհրան
251	26	բոր	հարեգրոր
254	2	է	է ս զարկում.
273	21	եղած	իջած.
275	14	նորանից	նորանից.
284	32	Սբհոռ	Սբհոմ.
300	27	յիսնել	չլինել.
304	14	սանամաներ	սամանը
»	40	Ամ-ջոս	Ամ-ջոզ
305	6	երկրագործութեան	երկրագործութեամբ
315	41	յիսուն թուման	թուման.
316	4	և յիսուն	և յիսուն.
319	4	որ որ	որ որ.

ԳԼՈՒԽՆԵՐԻ ՑԱՆԿԸ

		Երես.
1.	Խաչափ-խան, ազգային Ազգասաեան.	1 — 30
2.	Մուսա կամ Մոմսա-խան խաչիր-բալի.	30 — 33
3.	Խաչափ-խան խաչիր-բալի	33 — 44
4.	Զաֆրաբ-խան Շահրիար և կամ Նազլի	44 — 46
5.	Զաֆրաբ-խան Վարդ Պատրիկեանց և կամ Պար-Վարդեանց	47 52
6	Մելիք-Մաշեան (Մելիքլու